ՑՈՒՇԻԿՔ

ՀԱՑՐԵՆԵԱՑ ՀԱՑՈՑ

ՑՈՒՇԻԿՔ

ՀԱՑՐԵՆԵԱՑ ՀԱՑՈՑ

Ի Հ. ՂԵՒՈՆԴԷ Մ. ԱԼԻՇԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա.



Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՑԿՈՑ

—

1869

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԸ ԿԱՄ ԳԱՌՆԻ

ՅՈՒՇԻԿՔ

ՀԱՑՐԻՆԵԱՑ ՀԱՑՈՑ

Ս.

ՆԱԽԱԲԱՆ

ԱՌ ՀԱՑԿԱԿ

ՀԱՑՐԻՆԻՔ... Այն քիչ անուններէն մէկն է այս՝ զոր գրելէ ամօթ է բացատրել բարեկիրթ և զգօն անձի մը. թէ և չքլլայ շատգէտ կամ բանիբուն. գրելէ մոքէն առաջ սիրտն կու հանի, կ'ըմբռնէ, կ'իմանայ զայս. կ'իմանայ զայն նաև երբ չիկրնար քիչ բառով կամ խօսքով բացատրել. մանաւանդ ուր քաղաքական և բարոյական առաւելութիւնք՝ ասոր իմաստն այլ այլայլած կամ զանազանած ըլլան։

Արարածոց մէջ՝ որոնց հետ կ'ապրի՝ մարդուս ամենէն յատուկ միանգամայն և ազնիւ հիրքն է միաք կամ բանականութիւն. որ կ'ուզէ ըմբռնել, ճանչնալ, գտնել. իր ծանօթութեանց գլխաւոր առարկայն այլ է նախ ինքն և իր նմանիքը. — մարդկութիւնը։ Այս ինչպէս շուտով մը կ'իմանայ որ ինքն իբրև մարդ ամէն մարդու հաւասարակից է, բայց ամենքն այլ իրմէ զատ զատ մարդիկ են, այլ

պէս այլ շատ մը կու Հանչնայ կ'ընալ կ'ուրշէ անոնցմէ բաղմութիւն մը մարդկան՝ որք նման են իրենց այն ամէն բաներով՝ որով որ ուրիշներու չեն նմանիր։ Եւ ահա կու Հանչնայ զազգս. և անոնց մէջ իր համազգին. և երկրիս բնակութեան վերայ ասոր բռնած տեղն այլ Հայրենիք։ Բնական է մարդուս փնտռել և սիրել զՀայրենիս։

Ո՞ւր է Հայրենիքն։ Կայ ազգ որ'ի սկզբանէ պատմական ժամանակաց՝ երկրիս նոյն կողմը ճնացեր կեցեր է. այսինքն իր հարքն և նախահարքն որդիէ որդի մինչև նոյն երկրին վերայ ծներ աներ մեռեր են. անոնց ձեռագործ յիշատակաց մէջ և մարմնոց նշխարացը քով կու բնակին մինչև ցայսօր իրենց վերջին ծնունդքն այլ. – կան ալ՝ որ ուրիշ տեղ ծներ են, և հիմայ ուրիշ տեղ կ'ապրին, և գուցէ ուրիշ տեղ մ'այլ պիտի մեռնին. իրենց որբանքն և գերեզմանքն հեռաւոր լերանց և դաշտաց վերայ ձգուած են, որոց միջոց՝ ուրիշ ազգաց աւելի իրարու մօտիկ որորոցք և գերեզմանք կան. նման մեր Եփրատ գետոյն՝ որ Սեւ ծովէն հազիւ աստիճան մը հեռու Բարձր Հայոց գագաթներէն կու բղխէ, դէպ յարեւմուտք և հարաւ վազելով՝ գրեթէ նոյնչափ կու մտնայ Միջերկրական ծովուն Հայոց ծոցը, և գարձեալ անկից այլ ճամբան փոխելով՝ դէպ յարեւելս հարաւախառն՝ կ'երթայ կու թափի 'ի հեռաւոր ծոցն Պարսից 'ի ծով Հնդկաց։ Գուցէ այսպիսի ազգաց դժուր ըլլայ Հայրենիքը ճշդելը։

Սակայն ո՞վ կայ՝ որ որչափ այլ պանդուխտ տալուադիր և թափառական ըլլայ՝ չունենայ իր սկզբանը Հաստատուն կէտ մը։ Երկրիս ծայրէն'ի ծայրը տէզափոխիկ օդաչու և ծովագնաց թռչունք անգամ, արագիլն և կռունկ և ծիծառունք և ասպք, ունեցեր են տեղիկ մը բունիկ մը, թէ աշնարակի մը ծայր, թէ երդիքի մէկ խորշը, թէ

պատի մը հնչիւն մէջ. թէ բարձրացած ծառայ մը գտագոր, և թէ վազուկ կամ անշարժ ջրի մը ե-ղերք. այն է իրենց հայրենիքն. ուր՝ յետ ոչխար-հաշիւնիկ և օգտակարիկ տարագնացութեանց՝ կու-գան նորածին ընտանեաց, և իրենց ախորժելի եղանակին մէջ երկրորդ անգամ ուրախ կեանք մը կ'անցընեն։ Ա՛սրգս ալ՝ որ չիգիտեր իր կենաց վերջին կէտը, ուր գագրին և ուր ընկնալն, գիտէ գոնէ իր սկզբնաւորութիւնը։ Կան որք գժբաղ-գաբար ծնողք ճանչցած չըլլան, բայց կու ճանչ-նան ծնելական տեղը, քաղաքը, գիղը. այն է իրենց հայրենիքը, և անոր հետ՝ նոյն օրինքով վա-րուած տեղուանքն, եթէ ընդարձակ և եթէ ոչ։ Կան, ո՛չ խիզճութիւն մարդկութեան, կան որ չեն իմացեր չեն զգացեր թէ՝ ծնողի մը ծոց, համ-բոյր և գգուանք, չեն անուն տեսոյ կաթով՝ որոյ արեւամբն ծնած են, չեն ճաշակած մոր մը քաղ-ցրութիւն. նոքայր մը իրենց ձեռքին չէ բռնած, և քոյր մը ցիրունք չէ գրկած. սակայն և այնպիսիք ճանչցած և զգացած են զսէր և զքաղցրութիւն հայրենեաց՝ որ համատարած և անյիշաչար ծնողքի պէս կ'ընդունի կու գգուէ ամեն համազգի և համա-լեզու։ Տեսեր եմ իրեն ծագման անծանօթ երի-տասարդն այլ՝ որ իրեն փառք և հաճոյք կու տե-պէր պաշտպանել և մեռնիլ իսկ պաշտպանելով այն երկիրը՝ ուր ծներ ուր սներ էր, և ուր իրեն լեզուակից և կրօնակից նմանեաց հետ կ'ապրեր։

Ո՛չ, ինչպէս քաղցր նշած է անոր գարձը՝ յետ բազմամեայ ղինուորութեան, հեռի և տարբեր քաղաքաց և բերդից մէջ, և երբեմն յետ օտար աշխարհներ այլ մտնելու բանակաց և պատերազ-մաց մէջ, յետ զանազան դիպուածներէ և վը-տանգներէ անցնելու. — կամ անոր՝ որ տեսնի խա-զաղական բաղդի հանգիստելով՝ կամ ուսմանց կամ վաճառաշահութեան կամ ծառայութեան պատ-

ՀԱՌԱՒ, Կ'ԵՐԹԱՅ ՀԵՌԱՒՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐ, ՁԱՆԱՁԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԲԱՐՔԵՐ, ԼԵՁՈՒՆԵՐ ԿՈՒ ՏԵՍՆԷ ԵՒ ԿՈՒ ՍՏԱՆԱՅ, ԵՒ ԹԷ ԱՅՍՊԻՍԻ ԹԷ ՆԻՒԹԱԿԱՆ ՇԱՀԵՐՈՒ ԾՐԱՐՆԵՐԸ ԿՈՒ ԲԵՐԷ ԱՅՆ ՔԱՂՔԻՆ ԿԱՄ ԳԵՂԻՆ ՄԷՋ՝ ՈՒՐ ԻՐ ԿԵՆԱՑ ԱՄՆԷՆ ԱՌՋԻ ՏԱՐԻՆԵՐԸ ԵՒ ԴԻՊՈՒԱԾՆԵՐԸ ԱՆՑԱԾ ԵՆ։ Ի՞ՆՉ ԱՔԱՆՉԵԼԻ Կ'ԵՐԵՒԻՆ ԱՅՆ ՔԱՂՔԻՆ ԱՅՆ ԳԵՂԻՆ ՀԻՆ ԵՒ ՄԾԾ ՇԷՆՔԵՐԸ. ԻՐ ԶՈՒԱՐՃՈՒԹԵԱՆ ԴԱՇՏԵՐԸ ԵՒ ԲԼՐԻԿՆԵՐԸ. ԻՐ ԽԱՂՈՒՑ ԵՒ ԻՐ ՓՈՔՐԻԿ ՀԱՍԱԿԱԿՑԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏԵՂՈՒԱՆՔԸ. ԱՅՆ ՍՐԲԱԶԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԱՆՆԵՐԸ՝ ՈՒՐ ԻՐ ԾԱՆՕԹԻՑ ԵՒ ԸՆԿԵՐԱՑ ՀԵՏ Կ'ԵՐԹԱՐ՝ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՈՆ ՄԸ, ՀԱՆԴԷՍ ՄԸ, ԱՍՈՐՔ ՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԵՒ ԶՈՒԱՐՃՈՒԹԵԱՄԲ ՈՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՄԲ ԳԱՌՆԱԼՈՒ։ Ի՞ՆՉ ԾԱՆՐԱԳԻՆ ՇԷՆՔ Է ԱՅՆ ՇԷՆՔԸ, ԱՅՆ ՍՈՒՆԸ՝ ՈՒՐ ԱՆԵՐ ՈՒ ՄԵԾՑԵՐ ԷՐ, ԵՒ ՄԱՆԱՒԱՆԳ ԱՅՆ՝ ՈՒՐ ՈՐ ԾՆԵՐ ԷՐ։... Ո՛Հ, ԱՇԽԱՐՀԻՍ ՄԷՋ ԱՆԿԷ ՅԱՆԿԱԼԻ ԱՆԿԻՒՆ ԿՐՆԱՅ ԸԼԼԱԼ. — ԵՒ ՍՏԱՒԵԼ՝ ԵԹԷ ՀԱՆՉՑԱԾ ԱՅԼ ԸԼԼԱՅ ՀՈՆ ԻՐԵՆ ԾՆՈՂՔ ԵՒ ՀԱՐԱԶԱՏՆԵՐ. — ԵՒ ԵՍ ՍՏԱՒԵԼ՝ ԵԹԷ ԳԵՌ ՅՈՅՍ ՈՒՆԵՆԱՅ ԶԱՆՈՆՔ ՆՈՐԷՆ ՏԵՍՆԵԼՈՒ. — ՀԱՊԱ ԹԷ ԵՒ ԳԵՌ ՍՈՒՆԸ ՉԳԱԾԱԾ՝ ԳՈՆԷ ԱՅՆ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ, ԱՅՆ ԾՆՈՂՔԸ՝ ՈՐ ԵԼԵՐ ԶԻՆՔԸ ԳԻՄՈՒՈՐԵԼՈՒ ԵԿԵՐ ԵՆ, ԵՒ ԻԲՐԵՒ ԶԻՐԱՐ ԳՐԿԵՐՆՈՒՆ ՎՐԱՅ ՍՏԱԾ՝ ԿՈՒ ԲԵՐԵՆ ԻՐԵՆՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԱՍՏԱՐԱՆԻՆ ԿԱՄ ՍԵՂԱՆԻՆ ԵՂԵՐՔԸ։... ՀՈՍ ՄԻԱՅՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԽՆԱՄԵԿԱՆ ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՉԷ. ՀԱՅՐԵՆԱՑ ԶԳԱՑՈՒՄՆ ԵՒ ՍԷՐ ԱՅԼ ԿԱՅ ՀՈՍ, ՈՐ ԳՐԵԹԷ ՈՉ ԱՊԱԿԱՍ ԶԳԱՅԼԻ ԵՒ ԱՖՈՐԺ Կ'ԸԼԼԱՅ՝ ՆԱԵՒ ԵԹԷ ԿԻՆԳՈՒՆԷ ՅԻՇԱՏԱԿԱՑ ՏԱՆԼ՝ ՄԻԱՅՆ ԱՆԿԻՆԴԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ԳՈՆԵՐ. ՄԱՆԱՒԱՆԳ ԵԹԷ ՍՆՈՆՑ ՄԷՋ ԸԼԼԱՅ ԵՒ ԱՅՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ՝ ՈՐ ՄԻՋՈՑ Մ'ԷԿԵՆԱՑ ԵՒ ՄՈՆՈՒ. ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ. — ԳԵՐԵԶՄԱՆ ՄԸ։ — ԱՆՇՈՒՇՏ, ԵԹԷ ԿՈՐՍՈՒԱԾ ԿԱՄ ԱՊԱՀՈՒԱԾ ԸԼԼԱՐ, ԲԱՅՑ ԵՒ ԿԱՐԵԼԻ ԸԼԼԱՐ ՍՈՐԿՈՎ ԳՈՆԵԼՈՒ ԵՒ

գնելու, բարեկիրթ սիրտն 'ի պանդխտութենէ դարձած՝ ստացուածքին կէսն այլ կու տար ստանալու համար սիրելւոյն և ընտանւոյն գերեզմանը։... Կրնար արդեօք այնպէս անկիրք անկրօնք կարծրակուռ սիրտ մը գտուիլ՝ որ ըսէ. Ի՞նչ կ'ընես, ով երիտասարդ, մինչդեռ բաղդ աշխարհիս իր զարմանալեաց և ակնկալեաց դուռը կու բանայ քեզի, դու այդ բաղդին օժանդակ ստակդ այդպէս զուր կու վատնես, երկու կանգուն կոչտ հող մը, և քանի մը չոր ու պժգալի ոսկորներ գնելու, որոց վրայ չիկրնար մէկն նայիլ առանց զզուանաց։... Աղօթենք, Հայկակ, որ այդպիսի ձայն մը քու և նմանեացդ ակընջին երբեք չհասնի։ — Եղած անցած մարդկութեան ամենէն խրոշաալի թոզած յիշատակն և նշխարն՝ արդարև իր մարմնոյն մնացորդն է. սակայն և քան զայն անգին, ցանկալի և սրբազան բան չկայ երկրիս վրայ՝ այն մարմնոյն հաղորդակից կամ արենակից ներկայ մարդու մը համար. և որչափ սիրելի են այն նշխարքն՝ այնքան և զանոնք պահող սենդն, հողավայրն, գերեզմանն. ըլլայ հոյակապ մահարձանք շիրիմ մը, ըլլայ պարզ քար մը, կամ թէ բնաւ անքար տափակ հողն, քանի մը ծաղկով, կամ լոկ կանաչ խոտով պատած, և երկնաշուրիկ փայտով՝ սև խաչով մը նշանուած։ — Ինչդեան տեղն կամ տնիկն, և նախնեաց գերեզմանն՝ մարդուս երկու հաւիկ կէտերն են, որոց մէկուն վրայ պէտք է կեցընէ կարկինը՝ այն սիրան՝ որ կ'ուզէ ծրագրել սահման մը իրեն հայրենեացը, եթէ չիգիտեր ուրիշ սահման։

Կանգնելիս արդարև կարճ ընթացք մ'է երկու իրեանատանց միջոց. առջինն՝ օրոց, երկրորդն հողոց. կամ թէ կրնայ ըսուիլ՝ Ծնարան և Գնարան։ Սակայն մարդ միթէ միայն ծնանելու և մեռնելու համար եկած է յաշխարհ։ — Ոչ. մարդս

խոհուն և գործուն էակ է. թէ և քիչ բան կըրնայ ընել և քիչ միջոցի մէջ, մէկ իրեւան մը ընթանալու չափ. – բայց այդ միջոցն, այդ ընթացքն, և մանաւանդ այդ գործքն է զհայրենիս բովանդակող։ Եթէ գործն չըլլար՝ ոչ ծննդեան և ոչ մահու յիշատակք այնպէս սիրելի և սրտալի կ'ըլլային մարդկան. կամ ըրած գործքերնուն կամ յուսացուած ընելի գործոցն համար է՝ որ այնպէս սիրելի և ցանկալի են մեզ յիշատակք և գրեզմանք հանգուցելոց։ Ուրեմն թէ և հայրենեաց կէտք և կենդրոնք կ'երևին այդ ծնարանքն և քնարանքն, սակայն անոնցմով կ'ենթադրուի գործոց յիշատակն, որ է բարոյական կեանք և մարդու և ազգի, որով և հայրենեաց իսկ։ Ուրեմն աւելի կերպով մը հոն են հայրենիք՝ ուր որ մեր արիւնակիցք և լեզուակիցք գործեր են. եթէ ծննդեան և մահուան՝ գիպուածական և կերպով մ'ակամայ յիշատակարանքն իսկ այնքան սիրելի կ'ըլլան, որքան աւելի քննելի և փնտռելի են կենաց յիշատակարանքն՝ ուր ալ որ գործուած ըլլան, եթէ 'ի սեփական և եթէ յօտար երկրի։ Ինչպէս զի կրնայ ըլլալ որ մէկն քաղքի մը մէջ ծնած և մէկէն փոխադրուած ըլլայ ուրիշ տեղ մը, հոն ապրած և գործած. յետոյ ուրիշ քաղաք մ'երթալով՝ հոն այլ մեռած. այսպէս այլ կրնան գտուիլ ժողովուրդք՝ որ երկրէ մը ծագեր են, հիմայ ուրիշ երկրի մէջ կու բնակին. բայց իրենց և իրենց նահապետաց միջին սերունդքն այլ շատ երկայն ատեն՝ ուրիշ երկիր մը բնակած ըլլան. այս միջին երկիրս կրնայ աւելի իրաւամբք մ'իրենց հայրենիք ըսուիլ. կամ ինչպէս սովորութիւն է ասանկ ատենից մէջ անուանել՝ էրիւրդ հայրենիք։ Սայդ է որ ուր երկրորդ և երրորդ հայրենիք ըլլան՝ կրնայ սիրան տարակուսիլ և տարուբերիլ. սակայն և այն ատեն հոն կու հանդիպի՝ ուր որ աւելի գործոց յիշատակ գտնէ։

Ո՛րչափ փափագելի, որչափ բարեբաստիկ և անոնց վիճակն՝ որ մեկ աչքով կու տեսնեն իրենց իշխանին երկու հանգոյցներն ալ. ծնարանը և քը նարանը, հանդերձ միջոցովն՝ որ կրնար ըսուիլ Գործարան։ Ո՛րչափ բարեբաղդ է, կ'ըսեմ, այն ազգն՝ որ 'ի սկզբանէ 'ի վեր իր համալսարանաց ներկրին մէջն և կեցեր. անկէց դուրս տեղ չիգտներ իր նահապետաց ծնարանը, և հոն կու տեսնէ անոնց քնարանը. ինչպէս առանձին մարդ մը՝ որ բնակի այն տունը՝ ուր իր հայրն և պապքն այլ բնակեր են, և պատրաստէ իր մարմնոյն վերջին հանգստարանը հոն՝ ուր որ այն հայրերն և պապերն այլ կու հանդչին գարերով. ուր իրենց վրայ հովանացեալ ծառոյն փոքրիկ տերևոց նման՝ որդիք զորդիս փոխանակելով քանի մը կամ շատ ցեղեր իրարու ետևէ ընկեր մնացեր են։ Կրնանք նախանձելի սեպել երկրիս վրայ այդպիսի ազգի մը բաղդը, որ կու յայտնէ թէ կամ օտար բռնութիւններէ ազատ է մնացեր, կամ մանաւանդ՝ կրցեր է զինքը պաշտպանել անոնցմէ. իրեն նախնեաց աւանդը պահեր է անոնց նշխարացը քովհայրենեաց զգացումն պէտք է որ շատ զօրաւոր ըլլայ այն ազգին վրայ, ինչու որ աչքոնին այլ կու տեսնէ անոնց յիշատակարանները, կու պատի անոնց չափած ասպարիզին մէջ, կու գործէ հոն՝ ուր անոնք գործեցին.— իր կենդրոնն և սահմանքն յայտնի են. հայրենեաց ամեն տեսակ իմաստքն այլ ամփոփուած են մեկ գծով բոլորած սահմանի մէջ. գիծ մը՝ որ եռանկեան մը պէս կու միացնէ իր և իր նախնեաց ծնարանին, քնարանին և գործարանին կէտերը։ Կրնայ այնպիսին չցիտնալ իր ազգաբանութիւնը, իր հարց կարգաւ յաջորդութիւնը. բայց գիտէ որ հազար տարիով այլ առաջ իր նախահայրն՝ այն երկրին մէջ բնակեր է. հոն և նոքա իր բոլոր ազգատոհմին նահապետն կամ ազ-

գասպեան այլ. և ինչպէս հիմայ իր համազգի ընկերներն են՝ որ այդ գեղեցիկը կու մշակեն, այսպէս երկայն գարերով այլ առաջ՝ նոյն արիւն և նոյն լեզուն ունող ընկերակիցքն՝ նոյն հողէն նոյնպէս իրենց սնունդ կու հանեն և 'ի նոյն հող կու դառնան եղեր. — գիտէ որ այն մեծամեծ ծառերն՝ որոնց տակ քանի մը հասակ զիրար յաջորդելով նստեր են, իրեն նախահարց տնկածներն են, որոնք նոյնպէս իրենց նախնեաց հինաւուրց ձեռաբընկոց տակ խաղցեր և հանգչեր են. — այն ապառաժ լեռներն՝ իրենց կողերէն ընծայեր են իր քաղքին և աշխարհին ամենէն հին շէնքերուն նիւթն այլ, որոց ճարտարապետական ձևն և արժանագրութիւնք՝ դեռ իր հիմակուան ոճն և լեզուն կու յիշեցնեն. — այն հին կամուրջը՝ վայրենի ձորակի մը վրայ ձգուած՝ իր գեղին քանի մը երջանիկ նահապետաց ձգածն է. — այն մեծամեծ և հասարակաց կրօնից շէնքերն՝ իր նախնեաց բարեպաշտութեան և մեծագործութեան յիշատակներն են. — այն բարձր և քանդակազարդ կամարքն և կոթողքն՝ իրեն նախնեաց քաջութեան ցուցակքն են և յորդորքն անոնց նմանելու. — այն գաչաներն՝ ուր երբեմն պատերազմաց դրօշք բարձրացան և երբեմն ընկան իրենց դրօշակրաց և անոնց եռանէն գացողաց հետ, ուր երբեմն յաղթութեան թմբուկքն բոմբեցին, երբեմն յաղթուելու և եռք քաշուելու սրտակոր փողն հնչեց. այն ամենն այլ իր նախնեաց թէ արեամբք թէ քրտամբք ոռոգուած են։ Այն թնեայ հոն և ևթէ լայ՝ անցեալ յիշատակաց համեմատ, խնամուն այլ՝ լացն այլ՝ ոչ միայն սիրով են, այլ և փառաք. վասն զի քաջութեամբ կռուիլն և պաշտպանելն աւելի արժանաւոր է՝ քան յաղթող գտուիլն. միշտ փառք ու պարծանք է իր երկիրն և իր ազգը սեփական լեզուաւ և օրինաք պահելն. — ու-

ենենալ յատուկ և բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարութիւն մը, ծէս մը, և յիշատակարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարենան ըսել դէջ. այս կատարեալ հայրենիք է, երկրիս ո՛ր կողմն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ։

Բ

Այս վերջի անգրադարձ մտածութիւնս այլ ըրի. Հայկակ. յիշեցընելու համար մեծ ինգիր մը կամ խմասա մը, որ կու զանազանէ զհայրենիս, որով և զհայրենասէրս, ըստ բնական դրից երկրին։ Իրաւ է որ ով որ վերը յիշած յատկութեանց համար կրնայ Իմ ըսել երկրին, անոր համար միշտ գեղեցիկ է հայրենիքն. սակայն երբ մէկն, մանաւանդ երրորդ անձ մը, երկու երկիր իրարու հետ բաղդատէ իբրև բնաշնին և բանաքնին, ՝ի հարկէ կերպ կերպ զանազանութիւններ կու գըտնէ անոնց մէջ, և ըստ այնմ անունց բնակչաց բնաւորութիւնն այլ յարմարած. իրենց բնական կազմուածքէն սկսեալ մինչև՝ ի բարոյականն բերմունս. և ըստ կերպարանաց ու հանգամանաց երկրին՝ անոր վրայ ունեցած սէրն կամ համարումն այլ կը կերպաւորուին։ Ցայտնի է ամենուն թէ ինչ ազդեցութիւն ունին Կլիմայք՝ տեղացեաց վրայ. ինչպէս՝ սառուցիկ տապ կամ ցուրտ երկրի բնակիչք՝ տկար և ջըլատեալ կ՚ըլլան. ինչպէս՝ բարեխառն կլիմայից բնակիչք՝ աւելի բարեկեցիկք, բարեբնոյթք և կիրթք. չափաւոր ցրաւութեան տակ եղողք՝ աւելի ժիր կ՚ըլլան. չափաւոր տաքութեան տակ եղողքն այլ՝ աւելի վեհարթ և ըզբօսասէր, ինչպէս Փաղդիացին. միգամած երկրի բնակիչք՝ իրենց վերուց վրայ այլ միգային քօղ

մը կ'երևցընեն, մեկամաղձ և ծանրաբարոյ կ'ելլան, ինչպէս Անգլիացին և Հոլանտացին։ Այսպէս և գուցէ այլ ազգի, երկրին կազմուածքն և դիրքն ունին ազատութիւն'ի վերայ բնակչացն։ Թաթարստանի ծովանման չոր անապատաց բնակիչքն, և Եւրոպիոյ կամ Ամերիկոյ հարաւային կողմանց բարեբոյս դաշտաց բնակիչքն՝ հարկ է որ տարբեր բնաւորութիւն ունենան. մէկն միշտ գետինը փորելով հոն կենայ, մէկայլն անդադար ելերկ ու մերկ երկրին վրայ սահելով անցնի կամ ման գայ իր հօտերով և երամակներով անոնց ճարակ գտնելու համար. մէկն անաստուն և չինասէր, մէկայլն անաստուն և չինասէր։ — Զուիցերայց լեռնաշատ և շնչաշատ և նկարակերպ բարձանց և հովտաց բնակիչն՝'ի հարկէ ստիպք է զմայլի իր հայրենեաց բնական գեղեցկութեան վրայ, որ ամենէն սիրուր եղանակի մէջ այլ իր շնորհքն ունի, որչափ ևս աւելի լաւ եղանակին մէջ. զարմանք չէ ուրեմն որ երբ տարութեան մէջ իր ազգային երգը լսէ և հայրենեաց պատկերը իր վառվռուն գոյներովը նկարուի մտացն առջև, բոլոր սրտով թռուցեալ ելնէ և գրիլիէ հիւանդանայ և հալի հայրենեացը կարօտով։ Ցունաց և Իտալացւոց այնչափ գերազանցութեան'ի գեղարուեստս՝ առաջին վարպետ եղած է իրենց հայրենի երկրին բնութիւնն. բարեխառն կլիմայն, գալարբուսաբերութիւնն, զանազանութիւն կամ ելևէջք դրեց, և ծոմն. — ծոմն, այն ծեր և ալէզարդ մեծ վարժապետն՝ որ իր ահեղ ձայներէն սաւելի՝ իր կերպ ու կերպ ծփանքն ցամաքին կերպ ու կերպ ափանց և ծոցից վրայ, շատ զարմանալի բաներ ազդած է և կ'ազդէ Ցունի մը, Վենետիկցւոյ մը, Անգլիացւոյ մը, Բրեսանի մը, և որ և է ազգի՝ որոյ երկիրն բաղդաւոր եղեր է գտնել իր եղերաց չափաւոր մաս մը մեհկաձև կամ ողկոնաձև տարա-

ծելու՝ ի խալ՝ ի կոիս կապուտակ կոհակներուն։ Ժողովուրդ մը որ ունի հլուանդաններ՝ դիտելու այն անապատ ալեաց զբօսանքը, և անոնց երեսին հովով կամ հրով հրուած եկող և գացող քալուկ տունները՝ (նաւերը) աշխարհքէ աշխարհք հեռաւոր կողմերու լուրեր և բերքեր տարուբերելով, այնպիսի ժողովուրդ՝ չիկրնար ապուշ մէկ մ՚ըլլալ։ Բայց եթէ ծուն բոլորովին ծրագրելով զԱնգղիա՝ կու տայ անոր բնակչաց ծովագնացութեան պատիւն և գոռոզութիւն, կամ Ցունաստանի կղզեաց մէջ կոտրտուելով՝ կու տայ անոր բնակչաց աչխոյժ և ժրութիւն, միանգամայն և պարծիլ մը իրենց ափանց վրայ. գեղեցիկ և հովանաւոր դաշտերն այլ, բարձր բարձր և զով լեռներն այլ՝ կու տան իրենց բնակչաց ոչ պակաս զուարճութիւն և պարծանք։ Ինչուան ժայռոտ տեղերու բնակիչքն՝ այն բնութեան ամենէն անարուեստ կերպարանաց վրայ այլ կու գտնեն զարմանալի ձևեր և տեսքեր, որով կու զմայլին և կու պարծին իրենց հայրենեաց վրայ։... Բայց գուցէ չեն այլ կրնար ծածկել՝ այն չոր ու խոժոռ արաբածաց առթած կերպ մը չոր տպաւորութիւնն այլ՝ որ իրենց բարուց և շարժմանց վրայ կ՚ազդուի։

Եթէ այսպիսի գիրք երկրի՝ զոր բնութիւնն մեծայն իր անզգայ ձեռքերով ձևացուցեր է, այսքան ազդեցութիւն ունին ազգաց բարուց և ըզգացման վրայ, ո՞րքան ևս առաւել զօրաւոր և զանազան կ՚ըլլան հայրենեաց ազդեցութիւնք՝ ի ժողովուրդս՝ որոց երկրին վրայ բնականին հետ ձեռագործ և պատմական յիշատակարանք այլ երևին ցեղուցեղ։ Երբոր մէկն օրերով քալելով համազգեաց երկրի մը սահմանաց մէջ՝ տեսնէ լերանց և բլրոց վրայ հնացեալ և երբեմն կիսաւեր բերդեր և դղեակներ, հաստատամուր պարսպով քաղաքներ, հին և մեծ պալատներ, բանուկ Համ-

բաներ և կամուրջներ, մեծամեծ հասարակաց շէնքեր, փայլուն կամ մամուռապատ կամարներ, իրենց տակ թաղուածներուն պէս հնացեալ գեղեցիկներ, հանդերձ նոր և պայծառ շէնքերով, և ժամանակին զարգացման համեմատ օգտակար և շահաւէտ գործարաններ, կրթարաններ, ժողովարաններ, հանդիսի և զբօսանաց տեղեր, քաղաքական և զինուորական հրապարակներ, և այլն, և այլն. և այս ամենուն համար կարենայ ըսել թէ Իմ համարիւն և համալեզու նախնեացս ձեռագործք են, որոց ոմանց վրայէն երկայն դարեր այլ անցեր են, և գուցէ հազարաւոր տարիներու յիշատակարանք այլ կան անոնց մէջ. ի՞նչպէս սիրտն կ'ուռի կ'ընդլայնի, կու բարձրանայ, կու խաղայ և կու հանդչի ծոցին մէջ. ի՞նչ օրինաւոր պարծանք և գրեթէ հպարտութեամբ մը կրնայ ըսել՝ թէ ատոնք իմ հայրենեացս են, սակայ իմ հայրենիքս է. և թէ յանյիշատակ ժամանակաց հետէ միշտ մեր ազգն այս երկրիս և այս շէնքերուս տակ բնակեր է. ասիկայ մեր հայրենական կալուածն է, զոր սեփական օրինաք և քաղաքավարութեամբ պահեր են նախնիքս իր հին սահմանաց մէջ, 'ի միջի ուրիշ սահմանաց և ազգաց. — Ո՛հ, արդարև ասիկայ կատարեալ և նախանձելի հայրենիք է. ասիկայ ընդարձակ հասարակաց բնիկ տուն մ'է, որ ամեն համազգի մարդու մասնաւոր տուները իր մէջ կու բովանդակէ. ասիկայ ամեն կերպ զօրաւոր սեր և զմայլումն կ'ազդէ բնակչին վրայ. այդ է որ զգացուցեր և ազդեր է այն ամենայն հրաշալի հայրենասիրութեան կրքերը, այն աշխատութիւնները, համբերութիւնները, քաջութիւնները, և ինչուան կենանուէր զոհերը, երբեմն միայնակ, երբեմն ընկերակցաբ և երբեմն բովանդակ բանակներով. զոր հուշակեր են պատմիչք, քերդողք և ճարտար ա-

բուհատաւորք. և որոց վրայ կու զարմանան ընթերցողք և լսողք՝ նաև յետ երկար դարուց անցնելու, և կու պարծին անոնց յետին համազգի թոռանց թոռունքն սյլ։... Աշխարհք չիկրնար այսուհետև մոռնալ 3000 տարուան Տրոյիոյ առման դէպքը, և ոչ 2400 տարուան Սալամինայ և Թերմոպիլէի յիշատակները, որոց վրայ միշտ պիտի պարծի ուրշափ ատեն որ գտուի Յոյն մը։ Այսպիսի յիշատակք երկրաւոր յաւիտենականութիւն մ՚են, ազգու և սիրուն։ Ասոնց նման քիչ շատ ուրիշ ազգեր ալ ունին իրենց սնփական և սիրուն յիշատակներ, որ իրենց տևողութեան հետ պիտի հնանան, և աւելի քան զգինի և զբարեկամութիւն հնացեալ՝ հին տխորժ յիշատակքն զօրաւոր և քաջագր են մարդկան, և հասարակաց հաւասար վայելելի ամեն ժամանակ։... Ո՚հ, երբ այսպիսի յիշատակաց վրայ շարժի գրիչն, չիկրնար գոնէ կայծեր չցատքեցընել. պատմիչն յանկարծ վիպասան կ՚ըլլայ, բանաստեղծ՝ բանաստեղծ։ Հայրենեաց հրնդէն հոսանքէն չհալող սիրան՝ շատ ապառաժ շատ ապառաժ շատ այլանգակ և այլանիւթ պիտի ըլլայ։... Վայ այդպիսի հրեշին. երկիր կու հալածէ զանիկայ, երկինք չիկրնար ընդունիլ սիրտ մը՝ որ այնքան կարծր գտուած ըլլայ երկրի վրայ. անհնար է որ հայրենասեաց մը և լոկ անհայրենասէր մը՝ առաքինի ըլլայ, թող թէ սուրբ։ Երկնից պատգամ է՝ թէ ընկերը չսիրողն՝ չիկրնար զԱստուած սիրել. հապա բոլոր ընկերները բովանդակող հայրենիքը՝ չսիրողն՝ ինչպէս սիրէ ամեն սիրոյ կենդրոն և շտեմարան հանդերձեալ բնակարանն մաքուր հոգւոց։...

Գ

Բայց բաւական պարտեցանք կարծեմ. Հայկակ, հայրենիք քննելու և տեսնելու. գտնենք փընտռենք մեր սեփական հայրենիքն այլ։ — Մթեթ չը-կայ մեկ Հայ հայրենի՛ մ՚այլ. միթէ չունի՞ Հայն իր Հայաստանը։... Ո՞ւր է այս հայրենիքս, ո՞ւր է այն աշխարհն։... Ինչ գիւրին և ինչ գժար պատասխանի. ո՛րչափ քաղցր և որչափ դառն յիշատակք։ Եթէ առաջին տեսութեամբ ամեն մարդու ծընած, անած, ապրած տեղն իրեն հայրենիք սեպեմք, ո՛րչափ օտար և իրարմէ հեռու տեղուանք պիտի ըլլան Հայոց հայրենիքն։ Եւրոպայի արևելեան եզերքներէն մինչև յովկիական Ճեռաւ կըզզին, Նեզոսի ափունքներէն մինչև՝ ի Վոլգայի բերանը, անձմեռն Մէջագետաց խորերէն մինչև յանամառն Ֆինլանտիոյ գաշտերը՝ կու գտուին, կու բնակին Հայ ընտանիք և ընկերութիւնք։ — Ո՞ւր է անոնց հայրենիքն. միթէ ամեն մէկուն իր ծնընդեան տե՞ղն է՝ որ այնքան կու տարբերի մէկալներուն ծննդեան տեղէն՝ որչափ ասենէն աննման աշխարհք իրարմէ. ինչպէս կրնան Հայք մեկ հայրենիք մ՚ունենալ։... Պէտք է որ այդքան ցրուած և ցանուած համազգիքը միայն գաղթական սեպնք, օտարատունկ բոյսեր և ոչ բնիկ։ Ազգին հայրենիքը փնտռելու է այն տեղուանքը՝ ուր առելի բազմութիւն և իրարու մօտ կու բնակին. թէպէտ այս այլ մեր ազգին համար շատ գիւրին ճամբայ չէ. որովհետև բաւական մօտիկ բնակութեամբ այլ՝ գնա շատ ընդարձակ և անհուն երկրի երես սփռած կու տեսնեմք մեր ազգը. որ չէր կրնար այնքան տեղ բռնել իր համալեզու և համարիւն անհատներովը. բայց միթէ ըլլար Զինաց

պէս բազմածին աշնցեալ ազգ մը. վասն զի գրեթէ Պարսից ծոցէն սկսեալ՝ ի հարաւոյ արևելից՝ 10–20 ասպիճան աշխարհագրական լայնութեամբ ինչուան յԱդրիական ծով ձգուած երկիրներու մէջ գէպ՝ ի հիւսիս արևմտից՝ ցանցառ կամ խիտ բնակութեամբ կ՚երևին մեր համազգիք. երբեմն նեղ և երբեմն լայն՝ բայց գրեթէ անընդհատ գօտւոյ մը պէս։ Սակայն այս գեռ շատ ընդարձակ մթնոցին երկու ծայրերն այլ թողլով, (ուր աւելի ցանցառ և ցրուած է հայութիւնն), պէտք է մէջտեղուանքն՝ (ուր աւելի խիտ և մօտիկ է բնակութիւնին) փնտռենք մեր հայրենիքը. և յիրաւի կու տեսնեմք որ ազգերնուս բազմութիւնն կու բնակի վերին Եփրատ գետոյն երկու կողմերը. աջ՝ կամ արևմտեան կողմէն՝ մինչև Անիս (Գըզըլբրմաք) գետոյն եզերքը. ձախ կողմէն՝ կամ արևելքէն՝ մինչև՝ ի Կուր գետ, կամ այլ անգին մինչև՝ ի Կասպից ծով. հիւսիսէն այլ մինչև՝ ի Կովկաս, հարաւէն մինչև յանապատն Միջագետաց։ Այս վերջի միջոցս այլ գեռ բաւական ընդարձակ է մեր ազգին համար, ոչ միայն ըստ հիմակուան վիճակին, այլ և ըստ հինաւունի. ուրեմն եթէ ասոր այլ չորս սահմաններն ամփոփեմք՝ կրնամք տեսնել չափաւոր երկիր մը՝ յիշեալ գետոյն (Եփրատայ) երկու կողմը, որոց մէկն (աջակողմեանն) ըլլայ Փոքր Հայք, միւսն Մեծ Հայք. ասոնք, և մանաւանդ նաքինս այս է բուն Հայաստան. հոն է մեր հայրենիքն. թէ և այսօրուան օրս, աւաղ, ամենն աշխարհացոյցք այս մեզի ցանկալի անուամբ չեն նշանակեր այն երկիրը, այլ անոր քանի մը նահանգաց և գաւառաց անուամբք, կամ նոր և օտար անուններով։

Թողլով պատճառները և դէպքերը քննելու կամ յիշելու, վկայնք որ ազգերնուս մեկ մեծ մաս մը հիմայ իր բնիկ և ուխտական հայրենեաց

սահմաններին. դուրս տեղ կու բնակի կամ հաստատուած է. բայց գեռ մեծագոյն մասը մ'իր նախնեաց բնիկ երկրին մէջ է, որ է Մեծ Հայք. կամ անոր շատ մօտ տեղ, ինչպէս են Փոքր Հայք, Կովկաս և Միջագետք. այս եռքինս թէ և հեռագոյն քան զբուն Փոքր Հայս, բայց աւելի Հայկական հայրենի երկիր դարձեր է. վասն զի հոս աւելի կենդրոնացեր է Հայութիւնն իր սեփական օրինաքն, տիրութեամբն, լեզուաւ և սեփական յատկութեամբք, որոց նշանք կու մնան իր ձեռագործ և ձեռագիր ազգային յիշատակարանն։

Դ

Ազգային յիշատակարանք. ասոնք են բնիկ նշանք հայրենեաց. ասոնք են իւրաքանչիւր ազգի հայրենեաց ամենէն յայտնի, ամենէն ազգու և զօրաւոր արձանագրութիւնք, միանգամայն և ամենէն սիրելի և սրտառուչ բաներ երկրիս վրայ։ Կրնամք ուրեմն մենք Հայքս այլ, յետ արտասուելու մեր անցեալ կամ կորուսեալ երկայն ինքնակացութեանը և բազմակերպ յիշատակաց վրայ, (որք 3000 տարի մը հանդիպեցան այն մի և նոյն երկրին վրայ՝ զոր բնիկք և օտարք միշտ կ'անուանէին Հայաստան և Արմենիա), կրնամք, կ'ըսեմ, գեռ հիմայ այլ միխիթարուիլ՝ որ այս ցան և ցիր ազգերնուս գոնէ կէսն գեռ իր հին և ամենահին հարանց հողուն վրայ կու բնակի, կու բանի, և կու հանգչի, անոնց նշխարեալ ոսկերաց քով իրենեարն այլ աւանդելով. — և կրնայ գեռ յետ այնքան ապատակութեանց և աւերանաց՝ որ թերևս ամեն աշխարհ աւելի իր երկրին վրայ եղան, կրնայ գեռ իր նախնի տիրագլուխ նախնեաց հնագնալ և կիսաքանդ յիշատակարանները տեսնել. — կրնայ ճանչնալ այն տեղուանքը՝ ուր

իր համարիւն և համալեզու առաքինեաց և քա-
ջաց գործք և արդիւնքն կատարեցան, որք 'ի դիր
անցան և գարուց 'ի դար կու պատմին և պիտի
պատմին։ Արնամբ և մենք հեռաւորքս և մերձա-
ւորք՝ մխիթարուիլ և օգտուիլ այն յիշատակա-
բաններով և յիշատակներով, զոր ենթէ ժամա-
նակն մեկ կողմէն կու ջանայ աւելի հնացընել և
մոռացընել, մեկ այլ կողմէն դիւրութիւնք նոյն
ժամանակի, արուեստք, գիտութիւնք, ջանք և
կրթութիւն՝ աւելի կու յայտնեն, կու նորոգեն,
կենդանացընեն։ Ջանունք փնտռելով և քննելով՝
կու ստիպուինք անգամ մ'այլ վկայել մեր անա-
ջառ պատմագիր հետ (Խորենա. Ա. գ.), որ թէ-
պէտ և հիմայ փոքր ազգ մ'ենք, տկար և օտարի
իշխանութեան տակ ընկած, «սակայն բազում
» գործք արութեան գտանին գործեալ և 'ի մե-
» ջում աշխարհիս »։ Գործք արութեան են՝ քա-
ջութիւն հոգւոյ և սրտի և մեռաց. սրդիւնք ա-
ռաքինութեան և կորշութեան։

Այո, այո. հայրենեաց սիրենէն զգօր հրապոյր-
քըն են այսպիսի գործոց յիշատակք, ենթէ անոնց
նիւթական յուշարարքն կամ արձանքն մնացած
ըլլան և ենթէ չըլլան. ասոնք են տեսարանին գըլ-
խաւոր պատկերքն։ Եւ ենթէ այն պատկերաց հետ
ենթակայքն և շրջանակքն այլ համեմատ և գեղե-
ցիկ ըլլան՝ 'ի հարկէ բոլոր տեսարանն այլ աւելի
գեղեցիկ կ'երևի. այսինքն, ենթէ այն գործոց հետ՝
տեղն ու գիրքն այլ 'ի բնէ վայելուչ ըլլան՝ հայ-
րենիք կրկին քաջագր և ցանկալի կ'ըլլայ։ — Արդ
այս տեսութեամբ այլ՝ մեր հայրենիքն Հայաս-
տան՝ կրնայ շատ շնախանձելի ուրիշ աշխարհաց, այլ
և շատերու նախանձելի ըլլալ. վասն զի բնութիւնն
կամ տէրն բնութեան՝ շատ գեղեցկութեամբ և
հարստութեամբ զարդարեր է զայն. զոր օր մը
յատուկ համառօտ բնագրութեամբ մը կ'ուզեմ

քեզի նկարագրել. Հայկակ։ Իսկ եթէ այս բնական և ազգային տեսարանաց չեռ նկատանք մեր հայրենեաց վրայ համաշխարհական երևոյթներ այլ. այսինքն անանկ գէպքեր, որ կամ բոլոր աշխարհիս կամ շատ ազգաց պատմութեանն այլ կու վերաբերին, կարծեմ թէ քիչ երկիր կրնայ մեր հայրենեաց հետ բաղդատուիլ, և կամ ոչ մէկն այլ հաւասարիլ այն երկրին, ուր հասարակաց կամ հաւանագոյն ծանօթութիւնն՝ կ'ընդունի զգրաբերը, այսինքն մարգկութեան ծագումը. — սապանին հանգստեան տեղը, այսինքն երկրորդ անգամ մարգկութեան ծագիլ և ծաւալիլը. — աշնցեալ մարգկութեան առաջին անգամ ցրուիլն անկէց, և գարձեալ ի Բաբելոնէ ցրուելոց շատերուն նորէն կամ բնակարան կամ անցարան և իբրև կարաւանատուն մ'ըլլալն. կրնամք ըսել թէ հիմակուան զարմանալի Եւրոպիոյ մեծ մասն այլ Հայաստանէն անցեր է. անոր ազգաց շատ նահապետքն կամ գաղթականաց գլխաւորք՝ մեր աշխարհքէն ելեր կամ անցեր են յարևմուտս և ոմանք գէպ ի հիւսիս։ Այո, Հայկակ, գարձեալ կու կրկնեմ, որ թէ բնական, թէ ազգային և թէ համաշխարհական տեսութեամբք՝ շատ նշանաւոր երկիր մ'է Հայաստան. և ըստ այսմ տեսութեան՝ կերպով մ'եռապատիկ կ'ընդարձակի մեր հայրենիքն, որ արդէն իսկ բաւական ընդարձակ էր թէ իր սահմաններուն և թէ մեր պատմական տեսութեամբն, որ կու տեսնէն հին ազգաց պատմութեան հետ. և իր ինքնագլխութիւնը կամ երկրաբերութիւնը կորուսանելու երկար միջոցն այլ՝ գեռ փոքրագոյն մաս մ'է հայութեան կենաց ի վերայ երկրի։ Սակայն այս ամենս՝ անգամ մ'այլ կու հաստատեն՝ թէ շատ գործք եղած են ի Հայաստան, շատ յիշատակներ պիտի ունենայ մեր հայրենիքն։...

ԱՌ ՀԱՅԿԱԿ

Ն

Արդ ինչ պիտի ըլլայ ուրեմն, ով Հայկակ, այնքան գործոց և յիշատակաց գիմաց այս իմ քեզի ընծայածս – ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐՄՆՆԱՑ ՀԱՅՈՑ։ Եթէ գիպուածոց բազմութեան հետ համեմատեմք, արդարև հազարէն մէկ բիւրէն երկուք են. եթէ գործոց գերազանցութեան հետ, կուփութամ վկայելու՝ որ և յայսմ մասին ամենէն քիչ կամ ցանկալի բաներն չեն այս քանի մը տասնեակ պատմածքս, զոր ըստ գիպաց ինձ կամ ըստ աւուր պատշաճի՝ յիշեր եմ. և եթէ զրուցուածքս ոճոյն և ձևոյն նայիս, այն այլ շատ հեզ ըստ զանազան աւուրց կրից կամ սխորժից ըսած եմ, առանց աւելի արժանաւոր ոճի և ձևի մը մոցընելու ըսածս. մանաւանդ որ 'ի սկզբան չէի մտածեր առանձին գրքով մ'ամփոփելու և հրատարակելու. և առուել որ մեր ազգական լեզուով խօսած եմ, որ թէ և քեզի աւելի դիւրահասկանալի և սխորժելի է, Հայկակ, բայց ինծի՝ որ աւելի խոր զգացեր եմ հայրենեաց կիրքը՝ քան թէ բացատրեր, – ինծի՝ որ զպատմութիւն հնութեան մէջ յուզեղով՝ մեր նախնիքը մեզմէ շատ աւելի մեծահասակ տեսեր եմ, – ինծի, իմ զգացմանս՝ արդարև այս աշխարհիկ լեզուս՝ շատ պզտիկ շատ ցած շատ անբաւական եկած է. ըսեմ նաև՝ թէ և շատ օտարացեալ և այլազգացեալ 'ի բնիկ հայկական ոճոյ, որ ամենէն աւելի հաճոյն էր ինծի. այնպէս կ'երևի ինծի՝ թէ մեծ կրակ մը փառատ քուրջերով ծրարել կ'ուզեմ, երբ այն իմ հին և սրբազան հայրենեաց հրեղէն յիշատակները՝ այսպիսի խնդճուկ լեզուով կ'աւանդեմ. թողով իր վսեմական գրոց լեզուն։

Սակայն այս խօսքերս իսկ կու յայտնեն՝ որ իմ սրտիս զուարճութիւնէն աւելի քու և քու նմանեացդ օգուտը գիտեր եմ, Հայկակ. եթէ կարենայի և ուզենայի Նարեկացւոյ Թռուցիկ և հրաթափ լեզուով մը վիպասանել, գուցէ քիչ մ'աւելի սիրտս կու զովանար կու հանգչէր. բայց անշուշտ առ այժմ քիչերու հասկանալի պիտի ըլլայի, և շատերու անօգուտ. եթէ կրնամ գեռ յուսալ՝ որ գոնէ քիչերու այլ օգտակար ըլլամ, ինչպէս որ փափագեցայ այս քանի մը պարապոյ ժամերուս զբոսքը հրատարակելով. որով երբեմն ուզեր էի այն հայրենեաց սրբազան զգացման մեծ վառարանէն մէկ երկու կայծեր թափել՝ ի սիրտ քո, Հայկակ, և քեզի նման հայազգի համբակաց։ Եւ ասոր համար՝ որպէս զի չկարծուիմ թէ մեր հին և մեծ հայրենեաց զանազան անցքերը ուզած ըլլամ բովանդակել գրքուկով մը, չհամարձակեցայ զանունք յիշատակք անգամ անուանել, այլ միայն Ցուշիկ։ Ցուշիկք միայն են ասոնք՝ համեմատութեամբ յիշատակաց շատութեան և մեծութեան. Ցուշիկք են նաև նկատմամբ այն յուսոյ և փափագանաց՝ որ կու պահանջէին երկար և ճոխարար իւսիլ և լսել անոնց վրայոք, որոցմէ՝ ժամանակն անտոյգ՝ և ինծի համար արդէն յառաջացեալ՝ թերևս պիտի չժողու որ քեզի կարենամ աւանդել աւելի կատարեալ բան մը՝ քան սոյն այս անկատար ՑՈՒՇԻԿՔ ՀԱՅՐՍՆՆԱՑ ՀԱՅՈՑ։

Բ

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Արդ որովհետև կ'ուզես, Հայկակ, որ Երբեմն Ամերուան իրիկուանները ախորժաբեր կարմիր կրակարանին քով, և Երբեմն լաւ հղանակին՝ ցորեկը ժուռ գալով բաց օդոյ և բնութեան մէջ, մեր Հայ հայրենեաց գիպուածոց և հանգամանաց մէկ քանին յիշենք. Երբեմն ըստ աւուր պատշաճի, այսինքն օրուան տարեգարձ յիշատակը պատմելով, և Երբեմն ըստ կամաց և հաճոյից ընտրելով նիւթ մը. հարկաւոր կու սեպեմ այս առաջին անգամ մեր հայրենեաց բնախօսութիւն մ'ընել. 'ի հարկէ մեր երկոյեան ժամերուն համեմատ՝ համառօտելով և ամփոփելով անանկ Ներկարագիր մը՝ որ կրնար շատ յերկարիլ. եթէ մենք այլ աւելի երկար ժամանակ ունենայինք՝ մեր աշխարհին անցեալ պատմութիւնը և ներկայ բնութիւնը քննելու։

ԲՆԱԲՈՍՈՒԹԻՒՆ

Ա.

Մեր Հայաստան աշխարհին ընդհանուր կերպարանքը շատ նշանաւոր երևոյթներ կ'ընծայեն մեզի, Հայկակ. և մեկ խօսքով ըսելով, Հայաստան ընդդիմականներու երկիր մ'է գերազանց աստիճանի, որք քիչ ազդեցութիւն չեն ըներ իր բնակչաց բարուցը վրայ։ Աշխարհագրական դրիցը պատճառաւ՝ Հայաստանի կլիմանէ ամենաբարեխառն, ամենաքաղցր, հաւասար Իտալիոյ, Յունաստանի, Սպանիոյ, Ասորեան կղզեաց. բայց ունի իրաստաշունչ ցուրտ՝ բևեռային շրջանակաց նման, և հեզնուցիչ տաք՝ արևագարձից։ Եւ այս հակառակաց պատճառն է իր դրից բարձրութիւնը ծովու երեսէն։ Վասն զի մինչ մեկ կողմանէ Եւրոպիոյ շատ լերանց բարձրաբերձ գագաթունքն չեն հասնիր այն բազմամարդ ու մշակեալ տափից բարձրութեանը, ուակից Եփրատ, Տիգրիս, Կուր և Արածանի սկիզբն կ'առնուն իրենց արծաթափայլ ջրոցը. և մինչ Սեմբլենի, Կենիսոսի, Ս. Գոթարտոսի համբաւաւոր լեռնանցքն ստորև են Սևանայ լճին ջրոց կապուտակ երեսէն, որուն շրջակայքն հարիւրաւոր գիւղօրէք միշտ բազմամարդ բնակչօք լի են. միւս կողմանէ քանի մը մասունք մեր հայրենեաց՝ ոչ միայն կ'ինչնեն հարթ հաւասար մինչև ծովուն մակերևոյթը, այլ նաև ստորև են քան զայն. ինչպէս Կասպից ծովուն ափունքն, ուր կը խառնուի Հայաստանի բնական մակարդակն՝ 25 մեղր ցած են քան զմակերևոյթ Սևաւ ծովու և Ովկիանու։ Ակնէ առաջ կու գան այն հակադիմութիւնքն և այն փոխադարձ խաղերն երկու հակառակ եղանակաց. որոնց մեկն՝ երբեմն կը հալեցունէ, կ'ըսեն, իր հրացայտ ճա-

ուղայինելովը Տիգրանակերտի գմբեթեայց կապարը, մինչեւ մեկալն վեց սմիս կը սփռէ իր սպիտակ պատանքը երկրին մեծագոյն մասին երեսը, և կ'իջնցունէ զուգախառնութիւնը 26՝՝ Ռ. գրոյին վար։ Այսպիսի սաւն կարաւաններն հեսերնին կ'առնուն թանձր մուշտակներ, կարելու անցնելու համար ձեան ու սառուցի խաւերուն տակ պնդացած լճերը ու գետերը, որով չեն զանազանուիր ձորն 'ի գաշտէն։ Երբեմնիկ են այն յանդուգն հանապարհորդներն՝ եթէ կարենան ազատիլ հիւսերէն և ձեան փոթորիկներէն, որ շատ անգամ կը թաղեն ամբողջ կարաւաններ։ Այսպիսի գիպաց մէջ փրկութեան վերջին յոյսն, ըստ վկայութեան Սարաբանի, էր երկայն ձող մը, զոր ձեան տակ թաղուած թշուառն կը ջանար ցցելու իր սառնեղէն բանտին կամարէն դուրս՝ իբրեւ նշան բաբախուն կենացը, որ ազատարարի մը կը սպասէր։ Այս կերպով ազատեցաւ արքայն Սանատրուկ երեխայութեան առեն, յետ մնալու երեք օր սանտուին գիրկը կապուած ձիւնեղէն բանտին մէջ. իր թոռն, Տիրան, թշուառագոյն քան զինքն, հոն կորսընցուց կեանքը յետ թաղաւորելու 20 տարի։ Օգտակար ճիգն էր և պատուաւոր պաշտօն մը՝ մեր արշակունի թագաւորաց առեն՝ արքունի ոստիկանութիւնն ձեռնց, յորմէ կ'առնուր իր անունը մեր ազնուական ընտանեացը և կամ նախարարութեանց մէկն, և կ'ըսուէր Զիւռեան։ Ճանապարհորդաց ապահովութեանն համար պանդոկներ կամ կայանք կը հաստատուէին յաճախեալ և վտանգաւոր ճանապարհաց և անցից վրայ. ինչպէս են, բաց յոյլոց, Իսահվայի ձորոյն Խաչերը. ընդ մէջ Բաղիշու և Խլաթայ։ Այս հայեան յիշեն. ինչպէս կ'առնուանէ մեծն Ոսկեբերան, որ անձամբ փորձեց անոր խստութիւնը, շատ անգամ այն տուաւ աշ-

իարդնակոբոյ. և ասակ Լ.դած է. հին պատմչաց և քերդողաց մէջ. Փանենոփոնէն սկսեալ մինչև 'ի բիւզանդացի ժամանակագիրներն։ Մեր օրերն ընապատում ձնանագարհորդք ստուգեցին որ Էրզիրումի ձմեռն սաեի նուազ խիստ չէ՝ քան մեծին Ս. Բեռնարդոսի լերան ձմեռը, թէպէտ և առաջնոյն աշխարհագրական լայնութիւնն 5 աստիճան նուազ է, և բացարձակ բարձրութիւնն ալ 500 մեդր նուազ է քան զհռչակաւոր վանքն Ալպեայց։ Դարձեալ Ակուռոյ ձմեռն, 39 աստիճան լայնութեան տակ, և 1760 մեդր բարձրութեամբ, հաւասար է Հիւսիսային-Դլխոյն ձմերան՝ ստուգեալ գօտւոյն տակ՝ Եւրոպայի ծայրը։ Երևան, մայրաքաղաքն Իրուս Հայաստանի՝ ամառն տուների մէջ ջերմութիւնն եղեր է 30° Ի. ձմեռն իջեր է անգամ մ'ինչուան 40° Ի. զբոյէն վար. այսպիսի տարբերութիւն մը մը հաշիւ թէ ստուգեալ գօտւոյն մէջ, Կրէնլանտի կղզին կը տեսնուի. ընդդիմակ մը որ գրեթէ ուրիշ տեղ չտեսնուիր։

Այս ընդդիմակութիւնս աւելի զգալի կ'ըլլայ երբ նկատենք մեր հայրենեաց երկրին ամայի երեսը՝ տարեայն այն ժամանակը, երբ այն լեռներէն անդին՝ որ զինքը կը բաժնեն Պոնտոսէն, նարընջենիներն անուշահոտութեամբ կը բուրեն բաց օդուն մէջ 'ի Տրապիզոն, զոր արդէն ողջուներ է ծիծառներուկն, Հայաստանի վրայէն անցնելով՝ ուռանց հոն ոչ կոխելու. մինչեռ ուրիշ կողմ մը՝ ցածագոյն լերանց ոչքը, Մուսուլ, սառոյց կը ծածխեն, տաղկոցուցիչ ջերմութիւնը բարեխառնելու հաւանար։ Եւ սակայն Պոնտոսի մայրաքաղաքէն մինչև Ասորեստանի մայրաքաղաքը, Հայաստանի տարածութիւնն՝ ուղիղ գծով՝ չառաւելուր քան 6-700 հազարամեդր. այնպէս որ շոգեկառք մը կրնայ կարել այս միջոցս արեւուն ծա-

գուսանն մինչև մուտքը, և կ'ունենայ Ճամբորդն առաւօտ մը գարնան, միջօրէ մը ձմերան և երեկոյ մ'ամարան։ Հաւանօրէն գուն այս զբօսական ճանապարհորդութեանս ձեռք չես զարներ. Հայկակ. չես ուզեր մի և նոյն օրուան մէջ իրեք այլ և այլ եղանակ ունենալ, մանաւանդ երկրորդը։ Այդ ինչ խառաչուն երկիր է, պիտի ըսես, այդ ինչ թշուառ հայրենիք է եղեր մեր Հայաստանն։ Ա՛հ, երբ սիրելի ըլլան հայրենիք, ամեն եղանակներն ալ գեղեցիկ կ'ըլլան, և վայրենագոյն բնութիւնն անգամ կը քաղցրանայ բարեկիրթ սրտի մը։ Ի վերայ այսր ամենայնի ես շատ եւրոպացի կը Ճանչնամ՝ Բարիզու և Լոնտրայի բնակիչներին, վաճառականներ և հիւպատներ, որ գժուարաւ կը թողուն Էրզիռումի բնակութիւնին յԵւրոպա վերադառնալու համար. թէպէտ և կը տեսնեն որ ջուրը կը սառի հոն նոյն իսկ իւեցգեռնի արևադարձին գիշերը. բայց այն չորս կամ հինգ ամիսները, որ երկու ձմերանց մէջ կ'ընկնին, վերադաս կը համարին քան զբոլորը ասրին ուրիշ կլիմայի տակ։

Օդոյն առաձգութիւնն ու զուարթիւնն և անոր հոսանաց զովութիւնն, ջրոց յատակութիւնն, բուսաբերութեան առատութիւնն ու պայծառութիւնն, և այս կերպով մը օգապարկ երկրիս արգասեաց համեղութիւնն, կազմեցին զՀայաստան տեղի զբօսանաց և ամարաստան աշխարհակալացն Ասիոյ և իրեն մերձաւոր թագաւորաց, սկսեալ 'ի Շամիրամայ մինչև ցկուսակալս անգրակովկասային գաւառաց Ռուսաց։ Վանայ բերդն, որ սեպագեալ ժայռի մը գլուխը կանգնուած է, հարիւրաւոր ոտք բարձր է ստորակայ լեռնագաշտակէն, ան ալ աւելի քան զ5100 ոտք բարձր է ծովու երեսէն, այն բնութեան և արուեստից հրաշալիքն, — առաջին հանգրուան հաճոյից և ա-

մարտաւոն եղաւ այն աշխարհակալ թագուհւոյն, որուն անունը ինչուան այս օրս կը կրէ, այն անունը[1] որ շատոնց մոռացուելեան մէջ թաղուած է Խարբերդի և Նկրատանայ աւերակացը տակ։

Իսկ մեր թագաւորներն պէտք չունէին իրենց ձմերոցն օտարներու քով փնտռելու։ Մուշանայ ընդարձակ դաշտն կամ անապատը, զոր կը կարէն ու կ'անցնին Սրասխ և Կուր, իրարու հետ խառնուելէն թէ առաջ և թէ ետև, ամեն ժամանակ ձմեռը մեր հայրենեաց կենդանիներուն ապաստանարան եղեր է։ Ամառն խոպան անապատ մ'է, և արեւէն այրած խոտերուն տակ կը պահէ խորամանկ օձեր, որոնցմէ Պոմպէի բանակն աւելի նեղութիւն կրեց՝ քան թէ Ասիոյ բոլոր թշնամիներէն. ամառուընէ գէպ'ի ձմեռն՝ աղօտատեղի և ճշմարիտ ասպատան կը փոխուի։ Այն վերջին եղանակին մէջ՝ հապիւ թէ թափանցիկ բարակ ձիւն մը կը նստի. Մուշան կը շէնայ օդոց այն գեղեցիկ եպիկուրեաններէն, (թռչուններէ), որոնց սաւեւոր տեղափոխութիւնքն կը հիացուցանեն զերկրագործ և զնմատասէր։ Այս խաղաղասէր թռչնոց ցեղէն բոլորովին տարբեր և օտար ցեղ մը՝ միջին գարուն՝ այս ընդարձակ միայնութեանցս տիրելով, ծածկեց զանոնք պատերազմասէր հրոսներով, որ եկեր էին Ջիհունէ և Սաքսարակ անդին եղած անապատներէն. Մողոլաց անհամար բանակներն, առաջնորդ ունենալով զՁուրմաղուն և Շուլաղուն, հոն ձմեռն իրենց ձիերը ու բանակները կը վարժեցընէին արիւնհեղութեան և աւարառութեան, զոր'ի գործ կը գնէին գարնան, բոլոր շրջակայ երկիրներուն մէջ։ Անոնց արիւնարբու գլխաւորներն, երբ տա-

[1] Շաֆրամակերտ աւ.կ'ըսուի վրան։

քերը կը հանդիպին, Ալատաղի զովացիկ բարձրերը կ'ապաւինէին, որ Այրարատայ պարուն լեռ մ'է, և վրան Ապուղա-զան մեծաձախ գլեակ մը շինեց, քաղաքի մը չափ ընդարձակ, որուն աւերակներն թիւրան հիմա անայցելու մնացեր են ճանապարհորդներէն, ինչպէս գիրքն ալ անծանօթ է հիմակուան անուանի արևելագէտներէն՝ որք Մողոլաց պատմութիւնը գրեցին։

Բ

Արարատայ այն լերանց պարն՝ զոր հիմա յիշեցի, բոլոր Հայաստանը երկու կը բաժնէ, թափելով իր ջրերը մէկ կողմէն Սեքսինեան և Կասպիական ծովերուն, միւս կողմէն՝ Միջերկրական ծովը ու պարսկային ծոցը։ Այս շղթայն — կցուելով լերանց այն ընդարձակ գօտւոյն հետ՝ որ ծայրէ ծայր կը շրջապատէ հորիզոնաբար զբովանդակն Ասիա, սկսեալ Զինաց և Հնդկաց եզերքէն մինչև փոքր Ասիոյ եզերքը, ու կը ձգուի մինչև արևելեան Եւրոպա, — այս հայկական պարը կամ՝ շղթայն, հանդերձ իր լեռնամոյթներովը, նոր ժամանակաց առաջին բնակատուն Հումպոլթ կու սեպէ իբր կենդրոն ծանրութեան բոլոր հին աշխարհի։ Սակայն այս շղթայն, ինչպէս ուրիշ Հայաստանի շղթաներն ալ, որոշ չիծրագրուիր նման անթափանցելի պատուարացն Կովկասու, շարունակ կատարացն Անտիայց, Հիմալայայ, և Ապենինեանց. և ոչ իսկ Տաւրոսի վեհ տեսքն ունի։ Հայաստան ունի շատ մը երկրորդական շղթաներ ճիւղիցն Կովկասու, Տաւրոսի և Այրարատայ, որ կ'ընդհատին շատ հեղ լեռնակոյտներէ, ցցուեալ առանձնակ սարերէ, որք շատ տարբեր կերպով վեհ են իրենց ձևովը, բացարձակ բարձրու-

թեամբն և իրենց տարածմամբը. և իրաւամբ է որ նոր աշխարհագրաց հայրն, Ռիթդէր, կը կոչէ մեր հայրենիքը Լեռնոտեան[1]. Արդարև ուրիշ կերպ չէրնար Հայաստան եթէ գիտուի ընդ մէջ գաշտացն Միջագետաց, Ասուանից և Վրաց, ընդ մէջ Սեաւ ծովուն և Կասպիական ծովուն. ուր լեռնագաշտն կ'ամփոփուի ուրիշ քան զ'2000 մեգր հանգերձ լեռներով, որոնց բացարձակ բարձրութիւնն է մինչև 5000 մեգր։ Այս լեռնագաշտս բարձրագոյն կէտն Մասիս, կամ Մեծն Այրարատ, կ'առաւելու բարձրութեամբ իր 500 մեգր քան զԱպիտակ լեռն[2], և երբեք կոզմանէ առանձնացեալ՝ կը բարձրանայ իրեն հակայ լերանց 4000 մեգր Եբրատայ գաշտէն վեր. ցուցընելով փառաւորապէս ինչուան 50 փարսախ հեռուն իր ալեւոր գլուխը. ապիտակ քօղն՝ որ մշանջենապէս կը ծածկէ զայն, ընդգծման երևոյթ մը կը ներկայացնէ իր սև կողերուն հետ՝ երբոր անոնք իրենց ձմեռնային ծածկոյթը ձգեն։

Դիտելու արժանի զարմանալիքներէն մին է գարձեալ մեր երկրին մէջ մշանջենաւոր ձեռնց բարձրութիւնն, որ բաց 'ի Մասիսէն և ուրիշ քանի մը բարձունքներէ, ամբողջ տարին չեն գիտեր։ Այդ սառնեղէն գիծն հայկական լերանց առանձնակ տարերուն վրայ չինչնար 'ի վայր քան զ4000 մեգր, և գոմիներուն վրայ քան զ3500։ Իրաւունք ունէր ուրեմն լատին բանաստեղծն (Ո-րատիոս) զարմանալու որ

Եւ ոչ 'ի տարս լերանց Հայոց
... Գազ թանձրամած կայ միշտ անլոյծ
Չհամարելոր ընթացս ամաց։ —

Ինչպիսի՞ զարմանալի ընդգծման երևոյթ կ'ըն-

1 Գերմ. Berg-insel. 2 Mont-Blanc.

ծայնն ուրեմն մեր հայրենիքն ընդ մէջ սարուոյն երիս ծայրերուն ու միջին ամիսներուն. թէ՛ զանազանութիւն ընդ մէջ համաստաբար տարածութեան և տէրտերական կանոնաւորութեան՝ որ չուսով մը տալիներն տեղ կը փնտրէ։

Բայց թէ՛ինչպէս կ՚անհետանան արդեօք այդ ձեռն և տառուցի տարտարութիւն կոյսերն. ուր արդեօք կ՚ամբարին այնքան անգաւ ջուրեր։ Անտարակոյս պէտք էին բոլոր մեր երկրին երեսը ողողել, ուռեցնել ու փնտրտնել, եթէ նախախնամութիւնն առաջուց անոր կորնթարդ գիրքը մը տուած չլլար, կմբռնէ վահանի մը պէս զետեղելով շորս միջերկրական ծովուց միջոց. ուր կը թափին այդ չրոց մեծամեծ քամուքն և կը ձևացընեն առաջակոզմեան Ասիոյ մեծագոյն գետերը։ Բայց՝ ի երկրին ընդարձակ կորութիւնէն՝ գետոց յատակքն ալ շատ խոր են, և ոմանք թնչուան հարիւրաւոր ոտք բարձր տիտանք ունին իրենց թուխ ալիքներուն վերև. այս պատճառաւ է որ շատ մեծ ու փոքր գետեր Սև կը կոչուին։ Բայց այդ տարեւոր ջրհեղեղը չէր բաւեր երկրին արբուցմանը, եթէ մշակողաց երկայնամիտ վաստակն բազմաթիւ ջրանցքներ և ջրոց ընդունարաններ չբանար, և շարժուն ցանց մը չձևացուներ իր մարգացն ու անգաստանացը եզերքը։ Պէտք է ճանչնանք ուրեմն որ մեր նախնիքն, առանց ներկայ գարուս դիւրութիւններն ունենալու՝ շատ ճարտար էին ջրաբաշխական աբուեսան մէջ։ Զորոց խառնիներուն մէջ թմրած ջուրն՝ ոչ միայն նեղ ժայռերու մէջէն ճամբայ բանալով կ՚ընթանար անխոնջ երկրագործին քրտանց ձեռնտու ըլլալու, այլ և երբեմն ուռելի գժուարին և օձապտոյտ ճամբաներով՝ սուր և տեղաձև բլուրներու և ժայռերու գագաթը կը բարձրանար, ձևացընելու ասպան մը ժայռերու մէջ փորուած՝ բանտարի և կամ բանտարկի մը

ընկճուած հպատակի մը ամրոցին մէջ։ Ուրիշ առեղ ալ տարբեր վախճանի համար խոր գետեր-ու տակէն գետնափոր ուղիներ կը բանային. օ-րինակի համար Անի. բուն Հայաստանի եղքի մայ-բաքաղաքն, Լոնարայէն 800 տարի առաջ ալ ու-նէր ստորգետնայ ջրանցքը։ Այդ ջրաբաշխական մեծագործութիւնքն հաւատաքը մ'են թէ կարող էին ուրեմն զանոնք շինողներն նաև մեծամեծ ջրոց հոսանքները քարաշէն կամարներով ալ սանձել, կ'ուզեմ ըսել կամուրջներով. այնչափ բազմա-թիւ էին կամուրջներն՝ որ մէջէն գարու մեր ազ-գային երգիչներէն մէկն կ'երգնուր, « Ա՛յ քարա-բաշէն կամուրջնի »։ Բայց սակայն շատ դիւրին գործ մը չէր ճարտարապետին՝ մէկմէկու միացը-նել անանկ երկար ափունք, որոնց մէջէն կ'արշա-ւէին սրընթաց և զայրագին գետեր. վկայ է Վիր-գիլեայ գեղեցիկ տողն,

Ի կամրջոց ըմբոստան Սրասխ։

Փուտ տեղը ջանացին Աղեքսանդր և Օգոստոս ինք-նակալներն սանձահարել այդ ամէհի գետը. ու-րիշ ինքնակալ մը աւելի երջանիկ սեպեց զինքը՝ անոր վրայ գէթ առժամանակեայ կամուրջ մը ձգելով. և ահա մէկէն ուրիշ շղղորդ բանա-ստեղծ մ'ալ (Սատգիոս) երգեց.

Լատինական կամրջոց արդ հրլու Սրասխ։

Բայց այդ զայրագին գետն, արհամարհելով կայ-սերական ձեռագործներն՝ իր ալեացը ներքև ընկ-ճեց զանոնք, մինչեւ հեզիկ և ուժաթափ եօթ-նակամար մեծ կամրջի մը կամարաց տակէն կ'անց-նի, որոյ հիմունքը հաստատ հովիւ մը ձգեց։ Հո-վուի կամուրջն (Զոպան-գեօփրիւ) Հայաստանի և անոր ջրջակայքը մէջ առակ եղած է։ Թողլով ուրիշները, յիշեմ մէկ կամուրջ մ'ալ միայն,

Զորոփոր գաւառին մէջ, միակամար քարաշէն. զոր այրի Թագուհի մը իր ծաղիկ հասակին մէջ կանգնել տուաւ 'ի յիշատակ իւր Թագաշուք վախճանեալ ամուսնոյն Աբասայ, խոր հեղեղատի մը վրայ ձգելով, իբրև խորհրդաւոր նշան միութեան երկուց սրտից, երկուց աշխարհաց և երկուց հանգիպակաց կենաց. կամրջին ստորոտը խաչարձանի մը վրայ գրոշմել տալով իր սիրոյն և կենդանի հաւատոց նշանակը։ Զի կրնար հայրենասէր մը յանցանելն այս (կը համարձակիմ ըսելու) հրաշակերտ կամրջէն, չտալ տխուր տեսիլ մը թէ այն սրտաբշուռ ալեացը վրայ՝ որ միշտ կը Թողուն և միշտ կը ծածկեն իրենց հունը, Թէ այդ արձանագրութեանը վրայ՝ որ քրիստոնէական յուսոյ նշանին տակ անեղծ պահուած է, և Թէ այն մարմաւոր կրկին վանքերուն վրայ, Հաղբատայ և Սանահնի, Հայաստանին միջին գարուց Ս. Դիոնեսիոսն ու Ս. Պօղոսը[1], ուր կը հանգչին աւելի քան զ40 պատկազարդ գլուխք ընդ պարկեշտասուն Թագուհւոյն Նանայի, որ է հիմնադիրն կամրջոյս. բարեբաղդաբար ժամանակն, որ մարդէս աւելի խնայել գիտէ, անարատ պահած է մեզի 700 տարուընէ 'ի վեր՝ այդ միանգամայն հայրենական և կրօնական յիշատակարանը[2]։... Բայց այս ի՞նչ է, մի՞Թէ այդ փրփրաղէզ

1 Saint-Denis Բարիզու և Saint-Paul Լոնտրայի։

2 Այս է արձանագրին. «Կամաւն Աստուծոյ ես Նանա 'ի յազգէ Բագրատունեաց դուստր մեծին Սարգսի, քոյր Զաքարէի և Իվանէի, կին Աբասայ Թագաւորին՝ որ վախճանեցաւ կիսաւրեայ, խաւարեցոյց զիս. կանգնեցի զիսալս. չինեցի զկամուրջս. յիշատակ նմա և զիս։ Թարինձ, ծնողաց և եղբարց իմոց։ Որք երկրպագէք՝ յիշեցէք 'ի Քրիստոս»։

Խաչին վերևն ալ գրած էր. «Նշան Քրիստոսի, լեր բարեխաւս իշխանաց յազգէ Բագրատունեաց»։ Աբասա

ալեաց ներքեւ ծածկուած յուշիկապարիկ մը կայ՝ որ կը հրապուրէ զիս ներթէս գուրս արշաւելու։ Ա՛հ, Հայկակ, քնչ աւելի զօրաւոր, աւելի յարփշաակիչ և աւելի սրբանուէր բան կայ, քան բնութեան և կրօնից զուգայարմամբ ներդաշնակութիւնն, հանգերձ հայրենեաց յիշատակներուն և ցաւերուն։...

Հայասաանեայց ջրաբաշխութեան վրայ խօսք չինքած՝ անշուշտ անդրադարձութիւն մ՚ըրէր, որ երկրին զարգացեալ դիրքն, լերանց բարձրութիւնն, ուղղեալ և հեղեղաց առատութիւնն, և հաճմատաբար անոնց ընթացից կարճութիւնն՝ պէտք էին որ ջրվէժներ և հոսանքներ գործէին. և յիրաւի մեր գետոց անուններն իսկ, ինչպէս Եփրատ, Տիգրիս, Ճորոխ՝ իրենց երագ ընթացքէն առնուած են. առաջինն՝ անուանի է իր վտեմակերպ քարավազ թափուածքովն՝ ընթացիցը վերջերը, որ հիմայ Ռուսիոյ ինքնակալութեան հարաւագոյն մասին վրայ է, և անոր ամենամեծ գետերն իսկ այդպիսի ոգանչելի և միանգամայն զարհուրելի երևոյթ մը չունին. վասն զի այդ վիհերուն և մեծամեծ ժայռերուն մէջեն իրեն անցք մը բանալու համար, պէտք եղած է որ երկրաշարժն ամբողջ Մեծ լեռը հիմն՝ ի վեր տապալէ, և թողու մեր ազգային գետոյն թաւալիլ գահավիժաբար, իբրև փրփրերախ և սանձարձակ երիվար մը։ Այդ ժայռերուն յամառ գիմակալութիւնը ընդդէմ Արասխայ զայրագին յորձանաց՝ տեսանելով մեծն Շահ-Աբաս, կ՚ըսէր քովինները. Ահա մեզի օրինակ թշնամեաց գիմակալի-

այս թագաւոր Հայաստանի արևելեան հիւսիսային կողման գաւառի մը վրայ՝ մեռաւ 19 տարեան, երբեմն զաւակ մը թողով՝ ի Կանայէ, որ իր տեղ թագաւորեց յետոյ, և կոչուեր Աղասրթան։

լու. որուն՝ Ալյ, պատասխանեցին, ուէր ապրայ, երբոր այդպիսի զորաւոր նեցուկներ ըլլան. ցուցնելով իրեն ապառաժ գետափունքը՝ զոր ջուրն կը ծեծէր։ — Եփրատա, սուրբ գրոց գետերուն պարագլուխը, որուն ակունքը 9000 ոտք բարձր են, Կարնոյ Մաղկի լեռնէն սկսելով, 300էն աւելի քարաւազ ունի, 12 փարսախ միջոց Մեծ և Փոքր Հայոց միջոցով։ Ասոր արևելեան օժանդակին՝ Արածանի, Մշոյ անուանի Ս. Կարապետ ուխտատեղւոյն մօտ՝ բոլորովին միաձոյլ կը թափի բարձրէն, և անկմանը ձայնէն տեղն ալ կուրկուտ կը կոչուի։ — Վերջապէս Ճորոխ Հայաստանեան գետն, քան զառաջիններն աւելի կարճ և երագ ընթացքով, լիճ մը կարելով անցնելով՝ կատարեալ ջրվէժ մը կը ձևանայ, և ինչպէս կը վկայէ գերմանացի բնագէտին մը, որ աշխարհիս երկք գլխաւոր մասերուն յայց եկած և զորմանալիքը գիտած է, բաց՝ ի Նիակարայի ջրվէժէն՝ գեղեցկութեան կողմանէ ուրիշ մը մերինին չի հասնիր։ — Կ'ուզես հիմա այդպիսի գետոյ մը վրայ նաւարկութիւն փորձել. մաղր նաւակ մը Արգուինէն, որ Լազիստանի սահմանակից քաղաք է, ինչուան գետոյն բերանները՝ 'ի Պաթում, 6 կամ 7 ժամուան մէջ կրնաս իջնել. կ'ուզես դարձեալ Պաթումէն յԱրգուին դառնալ. նոյն եղանակով 6 կամ 7 օրուան մէջ կը հասնիս. — կը տեսնաս որ գետոյն յատակն շատ զառիվայր է, իսկ հոսանքն աւելի շատ երագ։ Ուսան մեծ բան մը պէտք չէ յուսալ Հայաստանի գետոց նաւարկութենէն. թէպէտ և բաւական մեծութեամբ նաւակներ՝ Կուրը և Երասխը կարելով անոնց խառնուրդին վերջ ալ կ'անցնին։

Սակայն Յունաց պատմահայրն մեզի կը ծանուցանէ, թէ իր ժամանակն Հայք՝ Եփրատայ վրայ կէս բարբարոս՝ բայց հանձարեղ նաւարկու-

թիւն մը կ'ընէին. իրենց երկրին և օտարին բեր-
քերը կը տանէին, մանաւանդ տեսակ մը արմա-
ւի գինի, բոլորաձև նաւակներով, որոնց կմախքը
կամ ներսի կողմը ուռենայ ճիւղերով և դուրսը
մորթով պատած էր. և ինչուան 3000 տաղանդ[1]
կրնային վերցնել։ Գետոյն հոսանացը թողլով՝
շիտակ Բաբելոն կը հասնէին. խակ դարձը ցամա-
քով կ'ընէին, այս կերպով. նաւակաց հաստա-
տուն մասերը կը ծախէին, խակ մորթը՝ հետեր-
նին նաւակով բերած իշոց վրայ դնելով. կը դառ-
նային իրենց նաւահանգիստը, որ անշուշտ չէր
նմաներ Մարսիլիոյ։ Թերևս քիչի ծիծաղելի ե-
րևի այս բանս, բայց աղուսաբանն Ներոդոտ՝ այդ
նաւարկութիւնը՝ Ասորեստանի մայրաքաղաքէն
եկաւ՝ բոլոր այն աշխարհին զարմանալիքներէն վեր
կը համարեր։

Գ

Հիմա ջրերը մեկդի թողլով՝ մնաւնանք հողուն,
փութանք հասնիլ անգործարան արարածոց. և
երկրաբանական կազմութեանց բազմամանուած
պատկերը ձգելով՝ քանանք աւելի նշանաւոր ու
օգտակարագոյն նիւթերը ու տարերքը քննել. և
նախ սկսինք 'ի վաղուց ծանուցեալ ներկական ու
հողային հանքերէն։ Ո՞ր գեղագործ չյարգեր Հայ-
կաւը, որ կարմրագոյն հող մ'է, Լեմնոսի կաւուա
հողուն նման. և երկուքն ալ հիմա իր անուամբն
կը կոչուին. որոյ նման կաւ մը կայ և 'ի Գաղղիա
Լուսա գետոյն երկու ափանցը վրայ, 'ի Պլուա և
'ի Սոմիւր։ Ո՞ր պատկերահանին ծանօթ չէ Հայոց
հողը, այն կարմիր ներկը՝ որ որմնանկարուց խառ-
նըրդոց մէջ կը մտնէ։ Թէ նկարիչք և թէ գեղա-

1 Իբր 100,000 քիլոկրամ։

գործք կը յարգեն Հայոց տրը՝ Թէոփիլոսաստեայ օ-
բերէն'ի վեր, իր գեղեցիկ կապոյտ գոյնովը Հանչ-
ցուած, և երբեմն գոնազմի հետ չփոթուած. որ
և երբեմն իւղոտ և շիկակարմիր կ'ըլլայ։ Դար-
ձեալ հռովմայեցի նկարչաց ծանօթ էր Արդենոմ
ըսուած հայէն կապոյտ և ճերմակ ներկն, որով
իրենց պալատներուն պատերը կը զարդարէին, և
որոյ լեռան վեց ֆրանգ կ'արժէր։ Իրենց անուա-
նի քանդակագործքն՝ Սուսերամարտիկը ու Պել-
վեդերէի Ապոլոնը յղկելու համար, Նաքսոսի-
նէն աւելի Հայաստանի յղկաքարը (cotes) կը
գործածէին, որ նաև մարգարիտներն ու ազնիւ
քարերը յղկելու կը ծառայէր։ Իսկ միւս գոգէն,
այսինքն յեռանկեաքարն Հայոց՝ Նաքսոսինէն սառ-
ռին կը սեպուէր։ — Հիներուն ծանօթ էր Հայա-
ստանի ուրիշ կարծր քար մ'ալ, որ հրկաթէն
աւելի զօրաւոր նիւթերով՝ կնքոց դրոշմը կ'ընդ-
ունէր։ — Նախնիք կը գործածէին նաև հայկա-
կան ՈՒԼՄԾԻՆԸ Crysocolla armeniaca, որ Մա-
կեդոնիոյ ու Կիպրոսի մէջ ելածէն աւելի ընտիր
էր. բայց ափսոս որ հիմա անհետացած է, և չգիտ-
ցուիր ուր գտնուիլը. բայց կարծեմ թէ տեսակ
մը արջասպ էր, և նոյնն՝ ինչ որ Արաբացիք մեր
աշխարհին անուամբը Պորէր-էրմենիէ կ'ըսէին։
Դարձեալ ուրիշ տեսակ մ'ալ կը հանէին, Պո-
ր-էրէրմանի անուամբ, զոր մեր բժիշկներն հի-
մակուան Օլթիի վիճակին մէջ կը դասեն, (Ո-Խ-
տեղի արջասպ)։ Մեր երկիրն այս տեսակ բերոց զա-
նազանութեամբ այնչափ հարուստ է, որ շատ
երկայն կ'ըլլայ մանրամասն խօսիլ անոնց վրայ.
այս միայն բաւական կը սեպեմ ըսել որ Հայա-
ստան ճոխ է նաև ամեն ազգ կաւերով, մետաղ-
ներով ու պազլեղով, որ Դիոսկորիտեայ [1] ալ ծա-

[1] Բժիշկ և բնագէտ Անաւարզեցի՝ քիչ առաջ քան զԺա-
մանակ Քրիստոսի։

նօթ էր. մանաւանդ ամէն տեսակ ու ամէն չեռվ ազ խիստ տաստ էր գտնուի։ Կազբոյ և Նախիջևանու ազգանունքն՝ Նոյի որդւոց ժամանակին՝ ի վեր էր բանին։ Բարձր Հայոց երկու գաւառներն՝ ազի անունը էր կրին, Դարան-ազի ու Մանան-ազի, որոնց ազգանունքն ամենուն ծանօթ են։ Բրիչ մերձակայ նահանգաց գաւառներ ալ նոյնպէս ազի անունովք կ'ըսուին Մարգ-ազի, Աղօրի, Աղուից ձոր և Աղիովիտ, ուր ազբերք, վտանգներ և ազի լեռներ բազմաթիւ են։ Բայց թէ արդեօք ասանք ազոցմէ կամ սկզբնաւոր ծովու մը քաշուելէն, եթէ երկրիս հին կազմուածներէ կամ հրաբուղխներէ մնացած են. ասոր լուծումը էր թողում երկրաբանից։

Դիւրավտ հանքաց մէջ ծանօթագոյնն է Մը ծամիրը որ գեռ Աբրագածու ծայրերը ասկեգոյն կու փայլեցնէ. սև և ճերմակ Նարը, Կոգոյնին կամ քարածիւթը. որոնց հետ պէտք է յիշատակել նաև Վանայ մօտ եկեղեցեաց մեկուն մէջ քարէ մը եկած եղը, որ հաւասարի ստուգուած բան է։ — Հանքային ածխոյ նշանները տեսնուած են ընդ մէջ լերանց Բարձր Հայոց և Այրարատայ. և յայտնի գտուած Տայոց Ուխտիք (Օլթի) գաւառին մէջ։ Մեր նախնի աշխարհագիրք էր յիշատակեն այս լերանց մեկուն մէջ. Երզիսուտայ հրաբուային արևելեան կողմը. նաւթի հետ մեկտեղ ուրիշ երկու նիւթեր ալ. որք մեզի անծանօթ են, բայց կարծեմ թէ հրային հանքեր են. էր յանձնեմ մեր հայրենակցաց քննել այն տեղերն և մեզի ծանօթացնել թէ ինչ են Զիլն ու Սալիք. որոց մէկն գուցէ ըլլայ նոյն ինքն հանքային ածուխն։ Անոնց խնամոց կ'աւանդեմ նաև որոշել Վանայիը. զոր չատք ժայռի բիւրեղի տեղ կ'ասնուն։

Իսկ աղնիւ քարանց նկատմամբ. մեր նախնիք

Արարատիններդը յարգի կը համարին, առանց ո-
րոշ տեղերը նշանակելու. այլք կը յիշատակեն
յատկապէս, Թորգոմ գնացոյն եղերքն, որ Կասպից ծո-
վը կը թափէր։ Մովսէս՝ սուտակն և ակն գահա-
նակը կը յիշէ Եվիլատայ եգեմական երկիրը, Փի-
սոնի եղերքը, որ ըստ մեզ է Ճորոխ, և Եվիլատն՝
Խալիբ մեր, ըստ Ցունաց ընտիր մատենագրաց՝
Խալիբ։ Զմոռնանք նաև Արածանւոյ ազբերա-
կանց մօտիկ Տիատիրի վանաց ձեւացուցած գե-
ղեցիկ և բոլորաձև ուլունքն այլ։

Իսկ հատարակ քարանց կողմանէ Հայոց լե-
ռինքն անսպառելի հանքք են. նոյն ինքն մեծն
Մասիս միակատար սև պորփիւր քար մ'է, կա-
տարը ձերմակ փաթեթ պատած, որ անշուշտ իր
հինգ հազարամեայ ուղղահայեաց բարձրութեամ-
բեն շատ աւելի վանմութիւն մ'ունի, քան Շամի-
բրամայ մեր լեռներէն կտրած կոթողը, զոր Ասիոյ
մայրաքաղաքին կեդրոնը կանգնեց, իբրև հին
եօթն հրաշալեաց մեկը։ Այս քարանց քանի մի
կտոր կրնան տեսնուիլ և 'ի Բարիզ Լուվրի գեղ-
եցարկ սրահներուն մէջ, զարմանալի քանդակ-
ներով և աւելի զարմանալի արձանագրութեամբ
ծածկուած։ Բարեբարն և Նինուէ մեծաւ մասամբ
մեր երկրին բնիկ հարստութիւններովն կանգ-
նուեցան ու զարգարուեցան. յայտ է թէ ինքն
ալ զուրկ չէր այդպիսի շինուածներէ։ Թէ և ու-
րիշներէն աւելի ապրշակուած ալ է, սակայն
գեռ ինչուան երկաթ հազար մեգը բարձր լերանց
գագաթան վրայ ալ բեւեռագիր արձաններ ունի։
Խոզաբ՝ մեր երկրին քարահատից երկաթապա-
տում ցուցակովը շինարարեանելու համար, այս-
չափ միայն ըսեմ որ հայ հողուն տիրող քարերն
են պորփիւր և պազալտ։ Այս յետին Սևանայ
լճին մնաւորը Գառնոյ խորաձորին մէջ հարիւր
մեգը բարձրութեամբ կոթողներ ձեւացուցած է.

որ իրաւունքնէ մոգական և վսեմ տեսարան մը կ'ընծայեն, արժանաւոր մեծոգի սիրարժակաց հոկայ. հասակ Թագաւորին Տրդատայ, որ վախէն և անդընդոց վրայ երկընցած սարտասափի մը ծայրը շքեղ հովանոց մը կանգնեց, 'ի վայելս Հայոց Օ. րիորդին, իր սիրական քրոջը, « Ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ »[1]. վրան տասուիրեք դար անցնելէն նաև գեղանաշարժով մը կործանեցաւ. բայց իր մնացորդներն, գրեթէ ամբողջ կեցած՝ կը հաւատան մեզի՝ որ այդ դաստակերտն Ցուն. նատանի և Հռովմայ ընտիր կերտուածոց վերջինն էր։ — Այս բնութեան և միանգամայն աղուեսաի կառուցած հոյակապ արձաններուն անմիջապէս մօտ՝ ուրիշ մ'ալ կայ, որ առջիններուն այդ երկու գերազանց առաւելութիւններէն զատ, կրօնից յիշատակարանն ալ ունի վրան. և է մեկ, կամ թէ լաւ ևս ըսել եօթն եկեղեցի և ներքսափոր քարակուռ մատուռներ. որոց խոր միջնութեան մէջ ծածկուած մնաց երկար դարեր այն յանգուգն գեղարդն, որ մեր Փրկչին կողը պատռեց[2]։

Կը գտնուին 'ի Հայաստան նաև, թէ և քիչ տեղ, մարմարիոն, ալաբաստր և բիւրեղ։ Բայց իր քարահատից բազմակերպ տեսակներն իր հարաբերչիկ բերքերն են, որոնք Այրարատայ հազարաւոր եկեղեցեաց շինութեանը գործածուած են, և որոնցմէ դեռ կանգուն են մնացած քանի մը հարիւր, ոմանք ամբողջ՝ ոմանք կիսակործան, տան, տաններնիք գարերէ 'ի վեր. ժամանակ՝ փոխանակ մաշելու այս դեղին, սև, դորշ և գոյնզգոյն քարերը, կարծես թէ աւ աւելի կարծրացուցեր է։ Բոլոր Անիի և իրեն շրջակայքը մեծա.

1 Խորենացի Բ. Ղ։
2 Աստոր համար կ'ըսուի Գեղարդայ կամ Այրի վանք։

մեծ չէնքերը այս քարերէն շինուած են. կան այն-
պիսի եկեղեցիք, որոնց շինութեան մէջ ափ մը
կիր գործածուած չէ. թէպէտ և դիւրին էր այն-
քան կրային լեռներէն շաղախ շինել. բայց այս-
պիսի շինուածոց քարերը իրարու կապելու հա-
մար՝ երկաթի կամ կապարեայ ճանկեր և թի-
թեղներ կը գործածէին, և երբեմն զասոնք ալ
զանց կ'ընէին։

Այս տեսակ քարերն բնականաբար իրենց ծը-
նունդը մոքերնիս կը բերեն. այն սարսափելի տի-
տանները որոնք երկրիս կողերը պատռելով մեկ-
մեկ ծխաղունչ լեռ ձևանալով կանգնեցան կե-
ցան։ Այն մարած հրաբուղխներուն համար կ'ը-
սեմ, որոնց մնացորդներն, ինչպէս նաև հանքային
ջրոց առատութիւնն, մեր երկրին բնական կազ-
մութեան մեկնչանաւոր կերպարանքը կ'ընծայեն.
և չեմ գիտեր թէ կա՞յ արդեօք ուրիշ աշխարհք
մը՝ որ մերոյն պէս տակն ու վրայ հերկուած ըլ-
լայ այն պղտորոնական ուժէն՝ որ այդ վիթխարի
և ահաւոր եղելութիւնները գրոշմած է իր վրայ։ Դաղ-
ղիոյ Օվէռնեի մէջ Տօմի մարած հրաբուղխները,
գաճաճներ են այն երեք չորս հազար մեդր բար-
ձրութեամբ հսկաներուն քով, որոնք թէ և չի-
ջած են՝ բայց զօրութիւننին աւելի թմրած է
քան թէ կորած բոլորովին. և իրենց ըրած աւեր-
մանց հետքը, որ շատ երկար ատենուան բան չեն,
անարատ պահած են։ Մեր աշխարհքին մեկ զար-
մանալի ընդդիմերևոյթն ալ այս է, որ եթէ պատ-
մագրաբար նայելու ըլլանք՝ երկրիս ամենէն հին
մասն է, և մարդուն բնիկ գաւառն. իսկ թէ որ
երկրաբանօրէն քննենք՝ նորագոյն կազմուածնե-
րէն մեկն է. և վերջի ժամանակներուն մէջ շատ
մեծ խլրտմունք և փոփոխութիւն կրած է։ Հրա-
բուղխներէն բաղմաց բռնկիլը պատմական դարէ
վերջը հանդիպած է. ինչուան կան ոմանք որ հա-

զար հինգ հարիւրէն, երկու հազար տարիէ վեր չէն եկեր. և մինչև ցարդ յայտնի կը տեսնուին լուսոյի գունագոյն հեղեղներն, որոնք անշնչոնի օձերու պես ոլորուած են այն հրաբղխից բերանացեալ վէրին բոլորտիքը ու տարածեալ։ Նոյն իսկ իրենց վրայի թեփը, (եթէ ներեն ինծի երկրաբանք այսպէս ըսելու), ամենեին կորուսած չէ իրեն հին փայլմունքը, և մամուռն գեռ վրան քոս չէ կապած։ Մեր նախնիք աւանդութեամբ գիտէին Մեծ լերան փլլիլը, և Աւագ Մասեաց կողը մշնաչափ մը երկայն բացուած խոր պատառուածքը։ Այն գժոխաձև վիհն չէ թէ միայն մեր ազգային քերթողները ապշեցուցեր էր իր ահարկուութեամբը, հապա Պայոլնի և Սուիտի նմաններն ալ։ վասն զի այս Ապոլոնի որդւոց աչքերն, որ քան զերկրաբանիցն աւելի թափանցանց ու հեռատես են, գուշակեցին թէ Մասեաց ծոցը գեռ մեծ եռացմունք կան. որ և յիրաւի իսկ 1840ին յանկարծ դուրս պռաթիկաց արձակելովծուխի սև ալիքներ, շաղախ, քարեր ու ջուր, և բոլոր Այրարատայ գաշտը գոլոյցներովն։ Անշուշտ այդ միջոցին այն սրբազան գագաթանց վերայէն հեռացեր էր հրեշտակն Փնոյ, ուր որ մեր գարուս արձակարանից համերան, Մարութիւնաց երգիչն (Շագուպրիան) ազուռաբար հաներ կեցուցեր էր զնա։ Վանայ լճին արևմտեան գին եղող լերանց մէկուն վերջին հրգեհումը 1441ին կը յիշատակուի. իսկ Սիփան, որ նոյն լճին հիւսիսակողմը վսեմ կանգնեալ գրեթէ չորս հազար մետրէ աւելի բարձր ցցուած է, գեռ ծծմբախառն թեթև շոգի մը կ'արձակէ. — արևելեան կողմը՝ Վարագ, օտար չէ պզուռուռնական կազմուածքէ. իսկ լճին հարաւակողմը գեռ այս տեսակ նշաններ ստուգուած չեն 'ի ճանապարհորդաց. բայց ծ գարուն վերջերը այդ կողմերը բնակող Հրդ-

նաւոր մը, Գրիգոր Նարեկացին, Հայաստանի Ս. Բենեդիկտոսը, իր տաղերէն մէկուն մէջ հրաբղխային բարբարքման աղօտ նկարագրութիւն մը կ'ելրեցնէ. «Լերինաթինդ խոր վիհ 'ի վեր, ծագքին » 'ի նոյն շատապ յորձանից. Հրակոծ լերանց ան» ձկին 'ի տապ բոցն 'ի ծաւալ ծով խոր հերձաւ. » Ճապաղ Ճեպով գարձ նոյն 'ի գարձ խաղայր » փուլթայր 'ի տեսանել»[1]։ Արդէն մեր նախնիք Գրիգոսոսի Թուականին առաջին տարիները այս լերանց մէկուն վրայ կը Ճանչնային «տուն կրա» կի, անյագ հրոյ, անգոգաբ այրման տաստա» ծոցն, և քարինս հոսեալ յանկն յորդաբուքս » ազբերն... քանզի վառէին զկրակն՝ քայրն, և » զաղբիւրն՝ եղբայրն»։ Թերևս վասն պայծառութեանն կրակը այլաբանելով 'ի քայր։ Ուրիշ կողմանէ գիտանք որ աս ծովակիս ջրերը առելի լեղի են քան թէ աղի. մանաւանդ եղերքները անանկ խառնուած են բորակային բաղադրութեամբ՝ որ կաւաւերը լուալու կը գործածեն։ Իսկ Սեւանայ լճին՝ բնաւ տարակոյս չկայ հրաբղխային կազմութեանը վրայ. կրնանք ըսել թէ հրաբղխի խառնարանաց մեծագոյնն է, սեպտեմբեր և կոնաձև քարաբեռներով շրջապատած, որոնցմէ տասնութերկուքէն աւելին իրենց տառանձին բաժանները ունին ջրով լեցուած կամ պարապ։ Առանց եռին կը բարձրանայ գէպ 'ի արևմուտք վիմխարին Արագած (ռասիոբէն Ալաեզ), բոլորովին զատ առանձնակ, և Հայաստանի լեռներուն ամենէն լայնանիստը և ստոյգ շափուածներուն մէջ բարձրագոյնն՝ Մասիսէն վերը, որուն հետ, ըստ Ոսիգգերայ աշխարհագրին գեղեցիկ մատուցութեանը, կը ձևացնէ մեծ գրան մը երկու կամարակալները, ուսկից կ'անցնին Գան-

[1] Տես Ջրոյրհնեաց։

գիսի եզերքներէն դէպ 'ի Պոնտոս ու Կովկաս Ճա-
նապարհորդող ամենայն կարաւանք։ Արագածու
կատարը չորս գագաթ Ճղքուած ու ցցուած է,
որոնք իր խառնարանէն եզերքը գիտակ կեցած
են, և պայծառ ծծումբ ունին կողերնուն վրայ։
Կ'երևի թէ Փրիսատոսի թուականին առջի գարե-
րուն մէջ դեռ ասոր պատռուածքներէն ծուխ
կը ցնդէր. վասն զի ԺԴ դարու դիւրահաւատ մա-
տենագիրներէն ոմանք կը պատմեն թէ լերան խո-
րը քարանձաւ մը կայ, ուր մեր Լուսաւորիչն
մատուռ մը շիներ ու կանթեղ մը կախած է, որ
ինչուան 'ի կատարած ոչխարհիս վառ պիտի մը-
նայ։ — Մատերս բրուսիացի Ճանապարհորդ մը
Հայաստան հիւսիսէն հարաւ քալելու առնը,
երբք գիշեր եաւէ եռա տեսեր է Այրարատայ
լերանց վրայ ցոլացեալ լոյս մը. տեղացիք ասի-
կայ սնապեր են հաւատի նշան մը գեռնաշարժի
Պարսկահայոց մէջ, և յիրաւի նոյն օրերը Դա-
վրէժ շարժ կ'ըլլայ։ Այն նահանգը որուն շնոր-
հատանն է այս քաղաքս, միշտ Ախրպատական ա-
նունը կրած է, որ կը նշանակէ գեղի կամ ման
հրոյ, և ունի, ուրիշ լեռներէն զատ, Սաւալանի
հրաբղխային սեպուհը, որ գրեթէ Սպիտակ-լերան
չափ բարձր է։ — Բայց Հայաստանի և բոլոր յա-
ռաջակողմն Ասիոյ մէջ ամենէն կենդանի հրաբղ-
խի զօրութիւն և նշան ունեցող լեռն է Թոնդրեկ
(գուցէ Թոնրակ կամ Թոնդրակ ըստ Նախնեաց)
իբր 10,000 ոտք բարձր, Պայէզիտ քաղաքէն երեք
կամ չորս փարսախ հեռի դէպ 'ի Վանայ ծովը.
որուն գագաթը ամենևին նման է Վեսուվի, բա-
ժակը շատ ընդարձակ և խոր, յատակը մեծամեծ
քարինք և բիւրղացեալ ծծումբ, և շատ տեղէն
անգադար ջրային և ծծմբային գոլորշիք կ'ելլան։
Լերան մէկ կողմը կայ ուրիշ բաժակ մ'այլ չրա-
լեց. և անոր մօտ տեղէ մը մեծ չրշմամբ աղբիւ-

բաբար շոգի կ'ելնէ, ուր կ'երթան բժշկութեան համար։ Աւելի զարմանալի յատկութիւն մ'ալ է (Նարեկացւոյն բառով ըսելով) Սերինթիոնդ որոտմունքը, որ լերան փորէն կու լսուի երբեմն երբեմն, և Ամերիկայի Անտեսայց հրաբղխից (դրոտիպոս, պոռոչիւն) ըսուած ձայներուն կու նմանի։ Ռուսք և Օսմանեանք իրենց վերջին պատերազմին առեն՝ Գայէզիտու երկու կողմը բանակած, գիշեր մը յանկարծ որոտմունք լսելով՝ կարծեցին Մինթանօգից ձայն, և մեկէն զինուած իրարու դէմ ելան. ինչուան որ իմացան բնութեան գաղտնիքը։

Փանիք վանք և ահաւոր պէտք էր ըլլար Հայաստանի երևոյթը քանի մը հազար տարի առաջ, երբ ներքին ծովերով ակօսեալ, յառաջակոզմեան Ասիոյ բարձրագոյն տափարակին վրայ անկուած հարիւրաւոր հակայ հրաբուղխներէն, իբրև բնութեան լապտերներէ, բարկաձայթ քոցեր կը ծաւալէր այն նորածին ժողովուրդներու վրայ, որ դեռ անտոյգ քայլերնին շարժել կու սկսէին դէպ 'ի անծանօթ երկիրներ։

Դ

Անցնինք հիմա այս կնճռոտ կերպարանքներէն՝ անոնց բուն ծոցը. բայց ես չեմ ուզեր, Հայկակ, Գիսիգոնի երկաթանուագ հարուածներովը քեզի Գլուտոնի մթինգաղանիքները ցուցընել. չեմուզեր և ոչ իսկ կրնամ դիմացդ դնել ինչ որ բնութիւնն ծածկած է իրեն ալուցը մէջ, ուսկից աշխատասէր իմաստունն՝ հաւասար համբերութեամբ և ճարտարութեամբ ճոխացած՝ խոզովակի մը ձեռքով խաւարային անդունդներէն դուրս կը հանէ կը մղէ պիտանի ջուրը։ Միայն Հայաստանի մե-

տարական հարատևութեանը վրայ քիչ մը կ'տա-
զնեմ խօսիլ, և հոս ալ նշանաւոր երևոյթ մը պի-
տի տեսնենք։ Սկսինք սամնէն յարգի հրահալելի
նիւթէն։

Զարմանալի բան մ'է որ սամն մեռաղէ առաջ
յիշատակուած է ոսկի աշխարհս առաջին մա-
սունին մէջ։ Առատաձաւնէ գիրք Եւրատայ
ազնիւ ոսկին փիւռնի ափանցը վրայ կը ցուցնեն,
որ է Եգիպտայ առաջին գետը, զոր կ'անուանենք
Ճորոխ. այս գետոյս պատատ երկիրն է, ինչպէս
առաջ յիշեցի, մեր Խազարիոն և Ցունաց Խալիբա
քատը. և թէ որ հիմա չի գտուիր հոն ոսկի, մի
զարմանար. վասն զի Մովսէսի և մեր օրերուն մէջ
3400 տարիէն աւելի անցեր է. բայց անատրա-
կոյս կը յիշես Արգոնաւորդները՝ որ Մովսեսէն
երեք կամ չորս դար եաքը այս կողմերս եկան տա-
ճի գնալը յափշտակելու, զոր ես ալ կը հասկը-
նամ ոսկեհանք. կը յիշես նաև որ քանի մը դար
վերջը բանտատեղծներուն հայրն՝ արծաթաճոխ
Ալիւրեայ Ալիզոնները մէջ կը բերէ, զոր հիմա-
կուան հեղինակք կ'իմանան Արճենոխլիթ (Ճա-
նիկ) և բուն Խալիբը (Խազարիք). այս բառս յա-
նարէն կը նշանակէ հանք (երկաթի) և հանքե-
բուն վրայ աշխատողները։ Մինչև հիմա գեռ արծ-
աթ կը հանեն հոն Կիւմիւշխանէի (Արծաթա-
հանք) և Խալիբայ մէջ, որ է մեր Սպերը և Սարա-
բոնի Սիրիւդին։ Այս երկիրս իր ոսկեհանքովը
ծանօթ էր նաև մեծին Աղեքսանդրի ժամանակ,
որ մարդ ղրկեց հոն ոսկւոյն համար, բայց տեղ-
ւոյն բնակիչներն վրանին վազելով ազատեցին։
Համանապէս Ջ դարուն մէջ այն կողմերը Փառ-
գի ոսկեհանքը հակառակութեան առիթ էր Սա-
սանեանց և Բիւզանդիոնց մէջ։ ԺԷ դարուն Ճա-
նապարհորդներէն մեկն կ'աւանդէ մեզի, որ նոյն
իսկ օսմանեան կառավարութեան ատեն ալ, Սպե-

րի ասկեհանքն կը բանէին, և հողը լրով լցուն-
լուն համար՝ հարկեցան թողլու։ Նոր տաճարս
քանի մը երկրաքաններ ստուգեցին որ Կարնոյ
լեռներուն կազմուածքնեմն են Ալպայի լերանց,
և չատրակուսեցան որ հանքեր ալ պիտի ունե-
նան, բայց ատելի չգտնուեցին։ Թիշելու է որ Կար-
նոյ գլխաւոր գեղերէն մէկն Արծուի կ'ըսուի։ —
Մ'ներ հինգերորդ դարու ազգային պատմիչք կը խօ-
սին Արարատայ ասկեհանքերուն վրայ, առանց
տեղը ցուցնելու։ — Հայաստանի Կուր գետով
ոռոգուած հիւսիսային արևելեան կողմը, գտեր
են Ռուս վերակացուք թէ հանքաց և թէ գետաց
մէջ ասկւոյ քանակներ։ Այս տեղերուն աշխար-
հագրական անուանց մէջ ալ շատ կան ասկի նշա-
նակաց։ Նոյնը հաստատեցին նաև արևմտեան
Հայաստանի հանքերն. զոր օրինակ, անցեալ գա-
րուն ակիրը, Ոգգէրի Ճանապարհորդութեան
ժամանակ, Արղանայի մէջ ասկի ալ կը հանէին։
— Արգէն յիշած արծաթահանքերնուս վրայ
ուսուցանենք Աղրպատականի և Գիւրտիստանի
մէջ յայտնուած հանքերը, որոնք բանուած չեն։
Մահադի խալիֆային առէն (775-785), ժամա-
նակակից պատմագիր մը կը վկայէ որ Հայաստա-
նի մէջ գտուած արծաթի լեռներ գտնուած են,
բայց որոշ տեղը չի նշանակեր։ — Առատ են 'ի
Հայս ոսկի հանքերն, մանաւանդ Գուգարաց աշ-
խարհին մէջ, որ Գուգայ և Մագուգայ նախնական
երկիրն է, վերին Կուրի հոսանաց վրայ. բովան-
դակ լերանց շարք մը Գնյահանք անունը կը կրեն,
և գործաւորներ միշտ կը բռնին. նոյնպէս կը գրա-
նուի ոսկինձ 'ի Գարապաղ, Արզնի, Սպեր, և Մո-
կաց գաւառը 'ի հարաւակողմն Վանայ լճին։ Եր-
իմն ատելի առատ է և զանազան տեսակ, մանա-
ւանդ հարաւային Հայաստանի մէջ. յիշեալ լճին
արևմտեան հարաւակողմը կայ Երիմակոպ և Կա-

դարձեալ ըսուած լեռն։ — Կապարէն զատ Հայաստան կ'ընծայէ կամ կ'ընծայէր ոսկի, գիրեղ, զոսի, անոփ, և այլն։

Ն

Դառնանք հիմայ քննելու մեր երկրին երեսը և գործարանաւոր արարածները։ Երկրին ձեւակերպութիւնն և կլիմայն, ինչպէս որ տեսանք, մեզի բարգաւաճ բուսաբերութեան մը յոյս չենք տար, մանաւանդ մեծամեծ և թաւ ծառերու։ Պոնտոսէն՝ ի Պարսկաստան գնացող Ճամբուն վրայ գրեթէ բնաւ չի տեսներ անտառ մը կամ բարձր ծառեր, այլ թուփեր, մացառներ և հազիւ ուրեք քանի մը ծառ մեկուսի։ Բասեն՝ Արարատայ մեծագոյն գաւառն՝ ուր Արտաշատ կը սկսի իր ընթացքը, 'ի հնուց Անթոյտ կ'անուանէր. բնակիչք երկրին՝ փայտի տեղ իրենց տան վառելիքը անասնոց աւելորդքը կը հոգան. բայց տուներնին ալ սովորաբար կէս սառներկրեայ ըլլալով՝ բլրի մը կամ բարձրագիր գետնի մը կող թաղուած, ցերեկն կ'ապահովին։ Քսենոփոնի տուած նկարագրութիւնն այս տներուն վրայ՝ յետ 23 դարուց հիմա ալ կը ստուգուի։ Շիտակը խոստովանելով, փայտի պակասութիւնն ոչ այնքան բնութեան՝ որքան բնակչաց անհոգութենէն է. վասն զի նոյն հեղինակն և Կ. Կուրտիոս և այլք կը յիշեն ծառոտ լեռներ և տափեր՝ նոյն Արտաշատ գեղեցիկ հովտին մէջ, զոր Հռովմայեցիք հաւանելով կը կոչէին Արտենեան դաշտեր (Campi Araxeni) և անկէ բարեբոյս չէին գտներ Ասիոյ մէջ. այնչափ մըշակութիւնն մեր նախնեաց առեն կրնար կոկեալ շոկեալ զանհարթութիւնս բնութեան, եթէ այս գեղեցիկ դաշտաս Արարչին՝ կրնայ անհարթու-

լիւն մ՚ունենալ։ Հիմա ալ կը գտնուին անտառք ՚ի Հայաստան. և այդ Անփայտ Բասենոյ մօտ՝ Սօղանլուս լեռներն 20-25 փարսախ երկայն տեղ ծածկուած են պէս պէս տեսակ եղևնեաք, սոշենք և թեղջիւք, յորոց ոչ միայն բնակիչք կողմանցն, այլ և պետութիւնք Օսմանեանց և Ռուսաց փայտ կը կորզեն ՚ի պէտս շինութեան ամրոցաց, որ Հայաստանի մէջ իրարու դէմ կանգնած են. (վասն զի Դ դարէն ՚ի վեր աշխարհնիս ոչքաւ. ի բազդ մը ունեցեր է՝ ըլլալու միջասահման, կռուատեղի և որս երկու նախանձորդ և դիմամարտ տիրապետաց)։ Այս լեռներէն կորեց Հուլաղուղանի որդին իր Ապաղա բերդին հիմնարկութեան նիւթերը։ — Սօղանլուի արևմտեան կողմն են մայրևոր լերինքն Տայոց, (Դաւդ Հելլենաց) որք կռուեցան ընդ գնդին տասն հազար Ցունաց, որոց առաջնորդ էր Սոկրատայ բարեկամն Քսենոփոն։ — Արևելեան կողմն, մեր Սիսական և Արցախ աշխարհներն մայրուտ և մացառուտ են, որոյ համար ալ հիմա Գոչա-գաղ կ՚ըսուին. (Լեռնաց Աչ-դաղ ալ նոյնպէս իմաստ մ՚ընծայէ)։ Արևմտեան կողմն՝ Բարձր Հայոց և Մոփաց միջոց շատ անտառներ կան, նաև կաղնեաց և ընկուզենեաց։ Իսկ հարաւակողմն մեր երկրին, Տիգրիսի հովին և Վանայ պարտատիին միջոց, մանաւանդ այս եպքինիս հարաւային և արևմտեան կողմերն, այնքան անտառուտ է, մինչև մեր նախնիք Փայտ-ալիւսիկ կ՚անուանէին Տիգրիսի և Վանայ անջրպետող լեռնավայր սահմանը։ Նոր Ճանապարհորդք այդ անտառաց մէջ գտան տեսակ տեսակ կաղնի ծառեր, որ ինչուան հիմայ անծանօթ էին Եւրոպէացւոց, և բերին իրենց երկիրը տնկելու։ Այս անտառներէն կու գայ ազնուագոյն Դիլիոն և Դաւդէն, զոր օգոց մեղր կ՚անուանեն կամ մանանայ. և անկէ՝ Տարօնոյ երկիրն, որ է այժմեան

Մշոյ գաւառն, Մեղրարուքն կ'ըսուէր։ — Ա-յրարատեան լերանց վրայ Թխաենեաց պուրակներ կան ինչուան 7800 ոտք բարձր տեղեր, և գիհի ծառեր ինչուան 8200 ոտք բարձրութեան վրայ. իսկ Թփաւոր ծառեր՝ ամէն աւելի բարձր կը գտնուին. մինչդեռ յՍուրոպէ որ և է ասոյնձանի տակ՝ այդչափ բարձր տեղ ամենևին ծառ չգտնուիր։ — Գուգարաց երկիրն մեր նահանգաց ամենէն հիւսիսագոյնն, ամենէն ալ ծառոտ և շատաբոյսն է, իր խորանիստ գրեթէ համար, Կուրայ գեղեցիկ պարաշովին մէջ. կարմիր և ճերմակ կնճիթք կ'ուտեն հոն ընդ կաղնի, հացի, պաղի, և պէսպէս եղեսն ծառոց։ Մեր ե գարու օրինակագիր հեղինակն աշխարհագրութեան՝ կը յիշէ հոն ասոյնի ծառն և հաճարածառ ալ։ Նոյն հեղինակն (Մովսէս Խորենացի) կը յիշէ Արարատայ մայրաքաղաքին, Արմաւիրայ, վանմանան ասոյնները, որոց տերևոց ասուիւնն՝ հմայից ազգուն էր մեր նախահարց. մեր առեններս կարծուեցաւ թէ այդ ծառերուն մեծամեծ կոնձերը յայտնուեցան հողուն տակ՝ այն տեղուանք, ուր երբեմն կը մնանար Արասխ, որ աւելի յետնեղուկ քան ըզժամանակն՝ յետ քառասուն դարուց փոխեր է իր ալեաց ընթացքը և հեռացեր 'ի քնակարանէ որդւոցն Հայկայ։ Այս տեսակ ասոյներէն գեռ հատ մը կենդանի է և ամբողջ հրապարակի մը կէս կը ծածկէ յՈրդուատ, հին քաղաք՝ մօտ քարավաշէն Արասխայ. բուն գեռնէն երկու մեգր վեր տան մեգր չբձրանար ունի։ Կրնայ կարծուիլ թէ արևելեան ասոյն սեփհական ըլլայ Հայաստանի. յայտնի է որ Հռովմայեցիք մտուցին այս ծառը յարևմուտս։

Այս աշխարհակալ ազգին վրայ ընկնալով խօսքերնիս, յարմար կը սեպեմ յիշել հոս, որ իրենց աշխարհակալութեանը լաւագոյն ատացուած-

ներէն մէկն էր օտար երկրի բերքերն ընտանեցնել։ Հայաստան ընծայեց անոնց ուրիշ բոյսերէ զատ զՄիրանն, որ դեռ Իտալիոյ մէջ իր անուամբն արդէնիկա կ'ըսուի. և լատիներէն malus armeniaca (մալուս արմենիակա), այսինքն հայկական խնձոր. որ կ'երևայ թէ նոյնն է զոր Պլինիոս սալորոց մէջ կը դասէ, և անուշահոտութեանը համար նախագաս 'ի սալորս։ Ի՞նչ ըսենք Հայոց Խնձորոյն համար, որ այնպէս անուանի էր Արաբացւոց մէջ, մինչև իրենց բանաստեղծներէն մէկն՝ արշալուսոյ մեկհատիկ նմանութիւն կը գտնէր օրիորդ մը՝ հայկական խնձոր խածած։ — Ընդհանրապէս սովորական համեղ պտուղք առատ են մեր երկիրը, և ամեն տեսակն ալ կը գտնուի, բաց 'ի Թզոյ և 'ի Հիմապաղոյ. սակայն ասոնք այլ հարաւային և ցած կողմեր անծանօթ չեն։

Իսկ մահացուաց ամբրոսիան օշարակ առուղ ծառն. — որթն՝ առաւել քան զհասարակաց կարծիս կը յաջողի 'ի Հայաստան. որովհետև բուսաբերութեան սահմանագիծն շատ բարձր է 'ի Հայս, երկիրն կը բերէ աղէկ խաղող, որոյ և առաջին հայրենիքն ալ եղաւ յետնեղեղին։ Ընտասխայ պարահովտին մէջ ընտիր այգիներ կան. և Երևանայ գինին նարինջագոյն, քաղցր և մշկահոտ՝ Սպանիոյ, Ունկարիոյ և Պուրկոնեայ լաւագոյն գինեաց հաւասար կը սեպուի։ Անվարժից խրատ կու տամ Գանձակայ գինին շատ չփորձել. որ թէ և անուշահամ՝ սաստիկ զօրաւոր և գլխահար է. իսկ Գարապաղի գինիներն անոյշ և գրեթէ եղոտ են։ Տապանակիր լերան վրայ, յԱկոռի 4000 ոտք բարձր տեղ մը, յանյիշատակ ժամանակաց՝ այգի կը մշակէին 'ի յիշատակ այգեգործութեան Նոյի. այն լերան բլրոց մէկն հին տեսեն Գինոյ բլուր կ'անուաներ, վասակ մ'ալ Գինեգոյն գէր։ Վանայ պարատապին ալ ինչուան 1700

մեգը բարձրութեան վրայ գեռ այդքիներ ունի որ երկայնոգլխոյլ խաղող կու տան, բայց չեն համազ ինչպէս Արարատայն։ Կարնոյ բարձրաւանդակին ոչ այդի ունի և ոչ պտուղ. որոնց պակասութիւնը կը լեցնէ իրեն Ճորոխայ հովտին Թորթում վիճակն. բայց անոնց փոխարէն կը բերէ ալնիւարմանիք. իսկ Սեւանայ պարարտափն աւելի բարձրագոյն ըլլալով՝ ասոնցմէ ալ զուրկ է։ — Ցորենն ընդհանրապէս ընտիր է, և կայ մեծամասնակ մը, որ և շատ կոչուն կամ առաջիդ խլմար կու տայ։ Ո՞ր ազգային պատմագէտ չի յիշեր «արգաւանդ և բերրի... Շիրակայ ամբարքն»։ Ուրիշ անասակ արմանիք ալ լաւ և առատ են։ Իսկ բանջարեղէնք և խաւարտք, թերևս ամեն տեղէ աւելի պտուղական և բազմատեսակ. 300 տեսակէն աւելի կը համրուին բնիկ տեղական անուանքք։

Հայկական Փլորայն շատ հոգ չունենալով պարտիզաց և ջերմանոցաց, աւելի վայրենի ու խոպան տեղուանք կը սիրէ. իր լեռնային բուսաբերութիւնն պէտք է բուսասիրաց համար շատ հետաքննելի ըլլայ։ Վերջին սահման բուսաբերութեան 'ի Հայս 4000 մեդրէն աւելի վեր է. անկէց ալ բարձր՝ միայն մեծին Մասեաց վրայ կը գտնուին գեղասաղիկ (aster pulchellus), մինամիրդ քնքոյշ (astragalus mollis), կանթեղնիկ քարաբոյս (campanula saxatilis) և այլն։ Հրաչակաւոր բուսաբանն Իգոն Դուանիֆոր՝ որ ան. ցեալ դարուն սկիզբները կը ճանապարհորդէր 'ի Հայաստան, չէր գժուարիր գրախօսին նշանները տեսնել 'ի Կարին և յԷջմիածին. այնքան զմայլած էր այն կոզմերուն հարուստ և գեղեցիկ բուսաբերութեան վրայ։ Հիմակուան բուսաբանք և շրջապայիկք թէպէտ և այդչափ չեն զմայլիր, բայց ամենայն ալ չեն։ Ասոնց նշանած ծաղկանց

մէջ, չեմ գիտեր ո՞ր ցեղին մէջ գտանելու է Աղիւ-
բոյ-ալի՝ ըսուած գեղեցիկ ծաղիկն փոքր և վար-
գաձև, և այնպիսի վառվռուն թանձր կարմիր
գունով՝ որուն նման մը չեն գտած ականատես
վկայք. թերևս աւելի գիւրին հնարք մը գտած է
մեր միջին գարու գուսանաց մէկն, իր սիրելւոյն
նմանցընելով այդ ծաղիկը.

« Ա՛յ աղբերաց արուն՝
Որ բուսար մէջ քարերուն,
Աչուիդ 'ի նարկիզ նըման,
Մէկն 'ի քուն ու մէկն արթուն »։

Ինչպէս անուանն և երգիչն կը յայտնեն՝ այս ծա-
զիկս սովորաբար կը գտնուի աղբերաց եզերք քա-
րերու տորեր. և անշուշտ եթէ ծանօթ ըլլար 'ի-
ներուն՝ Ովիդիոսի այլակերպութեանց գեղեցկա-
գոյն նիւթ մը կ'աւելցընէր։

Պէտք չէ մոռնալ նաև խոտերը և բժշկական
բոյսերը. զոր Հայաստան կ'ընծայէ, և հին ատեն
աւելի ալ առատապէս կ'ընծայէր գեղագործաց.
գրեթէ բոլոր Գալենոսի և Իպուքրատի գործոց
մէջ յիշուած և հայերէն թարգմանուած բոյսերն՝
իրենց բնիկ ազգային անուններն ունին մեր լե-
զուին մէջ. ըսել է որ մեր երկրին մէջ ալ ծանօթ
էին։ Ի զբօսանս բանասիրաց յիշենք զՄանրագորն
և զՓէնոնա, որոնց՝ հայկական Նակուլատակայ հե-
ռևոգն՝ զարմանալի յատկութիւններ և կիրառ-
բանք կ'ընծայեն։ Զմոռնանք հռչակաւոր Համա-
պրամն կամ Համոդիտան ալ[1], որոյ ցօղունն 12

1 Ըստ բժշկարանաց՝ Համոդիտան կը գտնուի 'ի Ղա-
ռան՝ Հասանգալէի մօտ, և 'ի Սուրմաբ։ Հուի ամսոյն
23ին կը բուսնի և կիթոց (քաղցց) ամսոյն 27ին կ'անցնի. որ
ըստ անշարժ տարուոյ ալնան և Ամրան մէջտեղ է. բայց որովհետև
ցուլի տանուտէրութեան ատեն փնտռուիլ կը հրամայէ, մայիսի մէջ պիտի ըլլայ ծաղիկին։

ձիւզ կը բաժնուի կ'ըսէին. և ծաղիկներն զանազան գոյն ունին մէկմէկէ պայծառ. այս բոյսս քարտաս լերանց սորերը ծածկուիլ կը սիրէր, և որոշեալ օր մը կը յայտնուէր գիշերանց լուսնի լուսով. շատ սեսակ զօրութիւն ունէր, ինչուան սրբամտութիւն ալ կը պարգևէր. և հեղինակ մը վկայեր է պարզմտութեամբ թէ այս բոյսս «գլատայ, և չարն փորձեցի. երանի՜ է նմա որ զբարին գործէ»։ — Հռովմայեցիք Հայաստանէն և Պարսկաստանէն մեծ փափագով և ուսկուոյ կշիռքով կը գնէին լաբրիոլ կոչած բոյսը, որ հաւանօրէն է ոգան ըստ մեզ, և անոր խէժն՝ անգոյնոտ, թէ և չարահոտ. գուցէ և հայկական ազնիւ խաղնդեղն ըլլայ։

Մեր երկրին անուանի և անծանօթ բուսոց մէջ յիշենք ազգայնոց՝ փնտռելու հայոխան ընոյզ բուսածը, որուն կուռքը Ալֆաթներուն օրացուցին մէջ նշանակուած էր յունիս ամսուն, և կ'ըսուէր թէ ձիթապտղոյ նման է. (միթէ փշատին է, որ շատ հասարակ և սեփհական է Հայաստանի, կամ ծուռաղենին)։ — Յեսին կարգ բուսեղինաց Խոտ և Սէջ անուանի են 'ի Հայս վասն ընդարձակ մարգաց և արօտից, որ տարուէ տարի կը սնուցանեն միլիոնաւոր ոչխարներ, և կը ղրկեն աւելի դէպ 'ի հարաւ և յարևմուտս մինչև 'ի Սատամպօլ։ Այս մարմանդքս և արօտքս հազարաւոր տարիներէ 'ի վեր կը քաղեն կը բերեն 'ի Հայաստան բազմութիւն հովուաց շրջակայ կողմերու և վրանաշուն տոհմեր շատ հեռու աշխարհքներէ։ — Խոտերու մէջ գտանիք սեսակ մը «էդ հայկական (բիմբրինելլա, pimprenelle), կամ մանաւանդ Հաղնաց-մատանիկ (dactylus litoralis) որ կը սնուցանէ ամենէն ընտիր և ամենէն հին ճանչցուած «ոդն խորհրդ», հուլակեալ իր շառավիղլ գունոնքն, որով թագաւորաց ծիրա-

նիք և հրովարտակք կը ներկուէին, զոր կը յիշէ և Դիոսկորիտէս։ Արաբացիք իրենց տիրապետութեան առեն այս որդը կամ կարմիրը մուցին յԵւրոպա. հիմա Ռուսք անկէ շահ կը քաշեն. և գեռ Էջմիածնի կաթուղիկոսաց կոնդակներն կը գրուին այս Արարատայ նշանաւոր բերքով, որուն նմանը յԵւրոպա կը գտնուի միայն 'ի Լեհս, և յԱմերիկա՝ 'ի Մեխիկոյ. ուրիշ ամեն ցեղ որդերն կարմրոյ (որոց յիսունի չափ տեսակ կայ) շատ արժէք չունին։

Զ

Այս զզուելի որդը մեզի առաջնորդ առնելով՝ բուսական ցեղապետութենէն անցնելու 'ի կենդանականն, բնականապէս նախ իր կարգին կուգամք. և անտարակոյս կրնամք գտնել Հայաստանի մէջ քանի մը նորատեսակ միջատներ և մանաւանդ պատենաթև ցեղէն։ Գերմանացի բնագէտ Ճոնապարտորդ[1] մը հազարաւորներ ժողոված է ատոնցմէ և իր աշխարհին զանազան բնապատմութեան հաւաքարաններու բաժներ է։ Իր հայրենակցաց մէկն այլ[2] Հայոց արևելեան նահանգաց մէջ կը նշանակէ տեսակ մը մեծ ճպռան, որ իր ճռռողմամբը կրնար մրցիլ Թէոկրիտեայ արնգափողից հետ։ — Այս կարգի կենդանեկաց թագուհին Մեղուն, կ'ընծայէ մասնաւորապէս յԱյրարատ և 'ի հարաւակողման գաւառս՝ իր պատուական վաստակը, որ մեր երկրին գլխաւոր վաճառոց թուակից է։ — Շերամ որդոյ դարմանն

1 Վ՚ոկնեբ։
2 Գ՚ոլենագի։

չատ հին չէ մեր երկրին մէջ. հիմա կը յաջողի Կազբիականին մօտ գտուածաց մէջ։

Ուրիշ և բարձրագոյն կարգ մը կենդանեաց, Զկանց, արժանի է մտադրութեան, թէ և մեր աշխարհն շատ քիչ կամ թէ բնաւ չունի ծովեզերք։ Լոտին (Saumon) մարգալիտի մեծութեամբ՝ Կազբից ծովէն գալով վեր կ'ելլէ Երասխայ և Կուրի մէջ, և այնքան առատ՝ որ միայն ձուերը կը հանեն ապիւ ապկիթ (փովէր) շինելու համար, և միսը կը թափեն։ Հայաստանի ամենէն հասարակ և ծանօթ ձուկն է Կարմրախայտ, որ ամեն գետաց ապրերականց մէջ կը վխտայ, և թնչուան Եփրատայ 9000 ոտք բարձր ականց մէջ, 'ի Կարին։ Սրասխ կը բերէ երկայնաձև Ճանտը, և Թանձրամարմին Լոտը, որ Եփրատայ և մանաւանդ Արածանւոյ մէջ շատ վիթխարի մեծութեամբ կը գտուի և նշանդ կ'անուանի, իբրև կէտ ձուկն։ Նոյն տեսակէն կարծուի թէ գտուին Հաչակայ փոքր լճին մէջ, որ շատ ձկնոտ է. մինչդեռ անոր մօտ՝ Վանայ ագի ծովը՝ որ մեծագոյն է քան զամենայն ծովակս յատաջակողմեան Ասիոյ, և անոր համար կոչուի Ծով Աղթամարայ (յանուն գլխաւոր կղզւոյն), միայն մէկ տեսակ բնակիչ ունի, պզտիկ ձուկ մը, փոռէր. որ պատուական սընունդ կ'ըլլայ և չոչարեր վաճառ մը, վասն զի աղած և չորցուցած կը զրկեն չորս կողմի գաւառները, 'ի Փրդաստան և 'ի Պարսկաստան [1]։ Սևանայ անոյշ ծովակն որ փոքր է քան զԱղթամարայն և բարձր քան զայն (6800 ոտք յերեսաց ծովու), ըստ աւանդութեան բնակիչց եղբերացն՝ 13 տեսակ ձուկն ունի։ — Ուրիշ լճակ մը այրա-

[1] Հաւանելի է որ Ցոյնք աղած ձկան (և մսի ալ) փոռէր անունը կուտան. τάριχος, փոռէրիոս. որ և է աղածն ալ փոռէրիսն կոչեն։

բաղեան լերանց պարուն սարքոսը, Կոգայովի չամքն, որ հիմա Պուլգ-ինոլ կը կոչուի ձկանց առատութեամբն, տարեկան միլիոն մը ֆրանգի չափ կրնայ տալ. անոր համար Ռուսաց և Օսմանեանց յեսին սահմանաչափութեան առեն՝ վիճի առիթ մը եղաւ։

Հիմա Թոքով ձկնասիրաց քաղաք Հայաստանի գետերուն մէջ այն մահահամ սև ձուկը՝ զոր կը յիշէ հին պատմիչն Կաղեսիոս. կ'ուզէի որ մեր տեղաշինք այլ մը տային 'ի վերայ բովանդակ ջրոց՝ որ Հայաստանի մեծ և փոքր լճերը կը ձևացընեն, և իրեն նշանաւոր կերպարանք մ'այլ կուտան։ Աղթամարայ ծովին չհեռացած՝ պէտք է գիտել Ուրմայ լիմն կամ Կապուտան ծովը, որ առաջինէն աւելի երկայն է, թերևս աւելի այլ ընդարձակ։ Այս երկք յիշեալ մեծամեծ լճաց հետ չորրորդ մ'այլ՝ Մովսէս Հիւսիսոյ՝ որ հիմա Զըրէ-ինոլ կ'ըսուի, յարևմտեան հիւսիսակողմն Հայոց, մեր երկրին երեսաց վրայ՝ արտանկիւն մը կը ձևացընէ, և կենդրոնին կան երկուասանեակ մը մանր լճակաց։ Յարևմտակողմն հարաւոյ՝ բաց 'ի Մուշ (Կէօլճիւկ) լճէն, կայ բազմութիւն լճակաց այն լեռներուն վրայ՝ որ ասոնց պատճառաւ Գինոլ կը կոչուին։ — Հայոց մեծ ու փոքր քարանիւ չափ լճերուն միահամուռ տարածութիւնն կը բնայ 10,000 հեկտար հաշուիլ։ Ընդհանրապէս այս լճերուն ափունքն նուազեալ բուսաբերութեամբ, գրեթէ զանազանութեամբն և վսեմական տեսարաններով գերազանցեն քան զլիճս Զուիցերիոց. բայց ասնոնք գեղեցիկ և վառվռուն տեսարանն իրենց թեւաւոր բնակիչներն են։

Թերևս չկայ երկիր մը որ այնքան բազմաթիւ և բազմազան ջրային թռչուններ ունենայ, ինչպէս Հայոց լճերն և մօրերն։ Այս եղբի տեսակ ջրլեզիկ մէջ անուանի է Կարնոյ լճին

կամ մօր և ծով (սալլէֆ). որոյ թռչնոց հաւ-
կիթներն բաւական էին շրջակայ գիղերու բը-
նակիչները կերակրելու, ըստ վկայութեան մեծի
պատմչին մերոյ, որ կարծեմ քեզի չափազանցու-
թիւն մը կ'երևնայ. բայց ինչ պիտի ըսես տեղ-
ւոյն անդղիական հիւպատոսարանին և վաճառա-
կան գործատանց զբօսասէր պարոններուն վկայ-
ութեանը, որք կը հաւատան թէ տարւոյն կեն-
դանաբեր եղանակին մէջ շամբին բոլորտիքն մին-
չև բաւական հեռու միջոց՝ գրեթէ անընդհատ կը
ծածկուին հաւեղջուց երամներով. մինչև համար-
ձակ չիպգնացութեան արգել ըլլալ։ Այս գաշ-
տիս մէջ (Կարնոյ) համրած են աւելի քան 200
տեսակ թռչնոց, շատն ջրային։ Գրեթէ բովան-
դակ թռչնական ցեղից չորսին երիքն հանդիպուած
են 'ի Հայս, մանաւանդ բարձրասրունք, մաշկո-
տունք, ճնճղկաց ցեղքն, և գիշահաւք. այս եռքի
ցեղիս մէջ արժանի են յիշման լուսուն, որ է
գառնակեր մեծ անգղն (գանգոս), և Սպերոյ ու
Արտաստայ բազէք, որ շատ հնարաւոր են յոր-
տալ իրենց գասակիցները. ազէկ վարժածներն
ինչուան 200 ֆրանգ կ'արժեն։

Որսոյ կամ վայրի հաւուց մէջ նշանելի են մեծ
կաքաւն՝ նման հնդկայնոյն, և ուրիշ տեսակք
կաքաւուց. սարսարնկք (bécasse, ժէդիէվէ), ա-
քար (bécassine), աքլոր (râle), թանձր (out-
arde), սալամբ (francolin), հաստարակ փա-
սիան և լոր։ Ջրահաւուց մէջ զանազան տեսակք
վայրենի սագի, բադի և կարապի, հաւալուսն
կամ ջրխոտեան, արօր (morillon), հոզամագ (har-
le), որոր (mouette), և ջնորոր, լուղնկ (plon-
geon), տեսակ տեսակ տառեղանց (héron) և
ծիծառանց ջրայնոց. ցեծ կամ քաջահաւ կանաչ
և սեաւ (ibis). և երկու աշխարհածանօթ պան-
դուխտքն, կռունկ և արագիլ. որք ինչպէս առ օ-

տարս՝ այսպէս և 'ի Հայս մասնաւոր պատիւ ունէին[1]։

Մեր հին Թագաւորք բաց յընդհանուր որսապետէն (Որսապետան արքունի) ունէին և հաւորաւթեան վերակացու և Թռչնապահս, և Թերևս առանք էին Հանունիք. ոչ սակաւ առհմք և ցեղապետք Թռչուններէ առած էին իրենց անունն, ինչպէս Արծրունիք, Բազէակալք, Կարապունիք, Աղաւնունիք, Կռունիք, և այլն. և այս Թռչունները կամ ոչ և կամ պատակերին դրօշներու վրայ կրէին ազգային առնից մէջ, որոց սկիզբն շատ հին է, Թերևս ոմանցը ելնէ մինչև 'ի ջրհեղեղ։ Այս մեծ պատահարս երկրիս ուրիշ կողմը այնքան զգալի այլայլութիւն և պատմութեան մէջ յիշատակ չէ Թողած՝ ինչպէս մեր աշխարհը. և արդեաք այս Թռչնոց հեղուկ բնակարաններէն ոմանք՝ զոր յիշեցինք, մնացորդ չեն այն մեծ հեղեղմանն, որ քիչ շատ հողագնային օրէնքները այլափոխեց։ Սառրին Կուրայ ողողակքն, Երասխայ հովտին մրրանիստ հողակարգքն՝ բաւականապէս չեն ցուցներ թէ առեն մը (որ երկրաբանօրէն շատ հին չէ) ներէիդաց[2] իշխանութեան տակ էին. և իրենց բրածոյ ժամակաց մնացորդքն, որոց կենդանի նմանիքն գեռ գտուին կասպիական ծովու մէջ, չեն կարծեցներ արդեաք թէ երբեմն ծով մը կ'երկրնցներ իր ծաւալծփիկ բազուկները առուրիշ ծով մը՝ այն երկրին վրայէն, որ յետոյ եղաւ խանձարուրք մուսկուութեան և հայրենիք

1 Գոնի մը հայ ջրհաւուց անուանք ալ յիշենք և իրենք ալ որ գիտուն մեզի ծանուցանեն. Շեսի, Ալկասուկ, Արտաւազդահաս, Յոհաննահաս. ուրիշ ցեղերէ, Դեզհուկ, Զարկոչ, Սանդրոսոպոպ, Զիսկան, Խիւ, Ճղարդ, Կռաստ, Դաւն, Ապանիկ, Կուռաբ, Կասաբ, Կասակ, և այլն։

2 Ջրոց պահապան լեռներուանք, կամ Ջուրք։

Հայուքեան։ Հայկակ, ես ոչ երկրագէա եմ և ոչ հաւագէա, բայց կը հաւանիմ թէ այդքան բազմութիւն եռակենցաղ կենդանեացդ (թռչնոց) որք մեր երկրին բարձրաւանդակ ուսազանաց վրայ ոգեւոր են, ոչ միայն ընապատմութեան ուսումնական ապացոյց մ'են, այլ և յիւրացուցիչ ըմբռնելի և սահեղծագործութեան։

Է

Դառնանք առ ուրիշ գոս մը կենդանեաց։ Սեռք հայկական քառոտանեաց նախայիշեալ գոսին պէս բազմատեսակ չեն. երկրին կլիմայն այլ այս բանս կ'իմացընէ։ Բայց այսպէս ըլլալով՝ դեռ ոչ շատ հին ժամանակ գտուէին 'ի Հայս ամենէն կատարեալ գազանք ալ. ոմ ոչ յիշէ Վիրգիլիոսի գեղեցիկ տողը[1],

> «Եւ վագրերքս հայկականս՝ ուսոյց Դոփնիս ընծել կառաց»։

կամ Սիդոնիոսի ըսածը[2].

> «Ընդ վագրաբեր Նըպատայ կապարձաւոր արտորայս»։

Դուանքիոր այլ Մասիս լերանց պատառուած.

1 Ե. Հովուերգութիւն։

2 Բ. Եդ. Սիդոնիոսի եպիսկոպոսի Գլերմոնց 'ի Ե գրքոյն։— Ըստ յոն և լատին հեղինակաց Նպատա լեռն ոչ է մեր ընդ Նպատան Բաղրեւանդայ, այլ կամ Պինդոս լերինք և կամ հայկական Տաւրոսի պարն. որոց բնակիչք ըստ մեաց Սիդոնիոսի քաջ ազեղնաւորք՝ վագր կապարձանին ուսերին գտրեան կը պատէին։

ներուն մէջ տեսեր է Լեփրը։ Իսկ կենդանեաց թագաւորը, առիւծը կու յիշէ՝ ի Հայս Աչեսիոս[3], և մեր պատմիչքն Դ և Ե դարուց, և ուրիշ մ՝այլ որ ծ դարուն սկիզբները կ՝ապրէր։ Ընչուիսն և յոլովն ինչուան հիմա կը գտնուին։ Թողուցեալ յիշել ուրիշ գազանները, և գազանամարտ գազանը, այսինքն ընձը, որուն ցեղէն կան մեծամեծ և ուժով տեսակք. լմոնանք միայն երկայնամազ խոտն Վանայ, որ Անկիւրիոյ կատուէն վար չի մնար, և Ճերմակ ու սեսատուան ոտիքը, զոր Լատինք տրմինիս կոչէին (փառանկը էրմն, hérmine, Italք՝ արմելլինա), և այդու կոչմամբ կ՝իմացընէին թէ որ երկրի առին ու մուռցին յԵւրոպա։

Ընտանի անասունք բարեբաղդաբար շատ բազմաթիւ են՝ ի Հայս. վերը յիշեցինք ոչխարաց առատութիւնը. նախրէից ցեղին մէջ գոնէ բնիկ կ՝երևի Հայաստանի, որովհետև իր եղը յատկապէս մոգով կ՝ըսուի, որ ամենայն ջրբոստանեաց եղը կու նշանակէ հատարակօրէն։ — Ցրեղորդն կամ որոյ կենդանիք սեւեր սառատ են. հնագոյն դարերէ՝ ի վեր՝ ջրջաբնակ խիստք և ազնուականք կու գային ամեն տարի՝ ի Հայաստան՝ ի կրթութիւն և՝ ի զբօսանս օրաց, տար գտանին տեսակ տեսակ վիճք, այծեմուռնք և եղջերուք. որոց կարօտով կու բաղձայր նաև մահուան անկողնին մէջ՝ Արտաշէս, մեր հեթանոս թագաւորաց մեկն, և հառաչէր. «Ո՞ » տայր ինձ գնուխ ծխանի և զառաւօտն նաւա- » տարդի, զվազելն եղանց և զվազելն էրզէրոյ. » մեք վաղ հարուաք և թմբկի հարկանեաք »։ Ցիշենք զնէրսէս այլ, որ ինչուան հիմա Ալբարատայ մէջ և նոյն իսկ Մասեաց սարոյը կը գտնուի, Թամբարաց մշակած բրնձի անգերը աւրջաբերելով. և երագավաղ ոչխարը (իշավայրի) որ հա-

3 Ամիտոյ բժիշկ Ցոյն կամ Հայ, ՝ի վերջ Դ դարու։

լածեալ յԱրտաւազդայ՝ յորդւոյն Արտաշիսի, զինքը եւ զԷն ձգեց ինչուան նոյն աշխարհածաւալ լերան վիհը. ուր, ըստ առասպելեաց, թըշուառ թագաւորն՝ Քաջաց ձեռքով կապկպած, կու ջանայ կոտրելու իր երկաթի շղթաները, զոր անգագար լիզելով մաշեցընեն իր հաւատարիմ շուներն. մուզ կու մնայ որ քարկաճոյթ թագաւորն ազատած ցատքէ այդ մթագին քարայրէն դուրս՝ բոլոր աշխարհքս աւրելու. բայց գարբնաց կռաններուն և ուրիշ գործաւորաց գործեաց ձայնն՝ նորէն կու հասաբցընեն իր մաշած շղթաները։

Դրասաեզին կենդանիք հոչակուած են նաև մարգարէի մը բերնով, իր Տիւրոսի գէմ ըրած սպառնալից ձայնարկութեանը մէջ. «Ի առնէ » Փորգոմայ ձիովք և հեծելովք և ջորւովք լցին » զվաճառս քո »։ Եզեկիէլ (ԻԷ. 14) չի յիշեր ուրիշ ցեղակից գրաստ մ'ալ, աւելի պզտիկ և աւելի անպարծ, բայց ոչ պակաս պիտանի, մանաւանդ 'ի լեռնոտ երկիրներ, ինչպէս է մեր Մոկաց աշխարհն, որոյ իրեք գաւառք Իշոց անուամբ կը կոչուին։ Իսկ մեկալ կէս արուեստահար կենդանին, ջորին՝ բնականապէս աւելի յորդի էր. մանաւանդ Ճերմակ ջորին, զոր արևու զոհ ընելու և թագաւորաց ծառայութեան համար կ'ընտրէին. ինչուան նաև թագաւորաց յուղարկաւորութեան համար այլ զոյն գործածէին. մեծին Տրդատայ ոսկեզօծ դագաղը կրող կառքն՝ Ճերմակ ջորիներէ լծուած էր։ (Ճերմակն, գերազոյն գունոց սեպուած, մեր թագաւորաց մահուան հանգիսին մէջ այլ մանէր. այս հանդէսներուն վերջինը առնաւ Խարիզ՝ յամին 1393ին յետին Հայոց թագաւորին, զ Լէոնին մայրամբ և թագմամբը. իր դագաղաց մայիսն՝ այլ Ճերմակ բեռնեց էր. իր ծառանին՝ ալ Ճերմակ հագուած,

տարին իջուցին զնա Կեղեսանենանց եկեղեցւոյն ներքնայատակ տապանատունը)։

Իսայ ահաւադիկ գրաստական ցեղին Թագաւորն, զոր ամենէն պերճախօս բնապատում[1] անուանեց «գեղեցկագոյն 'ի ստացուածս մարդկան», և զոր մեր ազգային արուեստին կամ Վաստակոց գրոց հեղինակն կոչէ, «Ամեռ Թագաւորաց և պարիսպ ամրութեան հեծելոցաց, յողեաՀարող Թշնամեաց և նաւահանգիստս ճանապարհորդաց, հալածիչ գաւառաց, դղրդեցուցիչ քաղաքաց և լայնացուցիչ սինոռաց»։ Իսայ ո՞վ է առաջին կարիՀն՝ որ այդ գեղեցիկ ստացուածն ըրաւ։ Զեմ հարցներ Ցովբայ. եԹէ «Ի՞ՈՒ ազգուցեր ձիոյ զօրութիւն, և զգեցուցեր զահ ընդ պարանոցաւ նորա». այլ կու հարցնեմ, ոչ առանց քիչ մի պարծենալու. ո՞վ է որ ամենէն առաջ կրցաւ սանձ անցընել այն կենդանւոյն, որ երբեմն փորատող հրաբուխ կու դառնայ, երբեմն քծնող ընկերակից։ — Մեր պատմութիւնն, (եԹէ կ'ուզես աւանդութիւն սեպել, եԹէ կ'ուզես խորհրդաբանութիւն, ինչ այլ կ'ուզես սեպէ), մեր պատմութիւնն կ'ըսէ, Թէ աշխարհքիս առաջին պատերազմին մէջ, յետ խառնակութեան լեզուաց, մեր ազգին նահապետն և զօրավարն, Հայկն, ձիաւոր պատերազմող այլ ունէր ընդդէմ Ռելայ. ասիկայ այլ յաղԹուած և մեռած՝ յաղԹողին ձեռքը Թողուց ձիոց, ջրեաց և ուղտուց երամակներ։ Զին եղած է և է իսկ հիմա ալ Հայաստանի ամենէն նշանաւոր բերրոց մէկն, և իր փառաց գործիք մը. մեր ազգային զինուորութեան ոյժն գլխաւորապէս հեծելոցը վրայ էր. Արամ Հայկայ սերնդոց մէջ ամենէն հզօրն, ժամանակակից Նինոսի, 40,000 հեծեւա-

[1] Պլի. Փոն։

կաց հետ 2000 ձիաւոր ունէր. ժամանակն փո-
խեց այս հանգամանութիւնը. 12 կամ 14 դար
վերջը՝ Հայաստան կրնար, ըստ վիճակութեան Ե-
զնիկեանի, իր պէտքը լեցնելէն զատ՝ ինչուան Տիգ-
րանի վաճառականներուն ալ զրկել 3ի և 3իաւոր,
երկուքն այլ անուանիք՝ ի հին ժամանակս։ Նոյն
մարգարէն ուրիշ խօսքով մը գրեթէ զմեզ կ'ա-
պահովէ թէ Աստուածաշնչեայց բանակը յաղթու-
թեան առնողը Հայոց հեծելազունդն էր։ Հայ
3իաւորը Ճոկատեցան Տրովոյ գաշտերուն մէջ
ծերունւոյն Պրիամու վերջին որդւոց հետ՝ ընդ-
դեմ հոմերական քաջաց Յունաստանի։ Ա.քեմե-
նեան (Պարսից) սիեզերակալութեան առեն՝
Հայաստան կու զրկէր թագաւորաց թագաւորին
ամեն տարի միհրական ասնին 20,000 3ի, որ ընտ-
րելագոյն սեղուէին քան զՊարսից և զՄա-
դաց. և 80,000էն աւելի նժոյգք տարւոյն յար-
մար եղանակին կը ժողովէին Սուզանու գաշտե-
րուն մէջ։ Մեր թագաւորաց մէջ ամենէն աշխար-
հակալն և ամենէն գօրաւոր և հպարտ, Տիգրան,
ըստ բանից օտար պատմչաց ինչուան 150,000
3իաւոր ունէր, զատ 17,000 բոլոր պատուականնե-
րէ, այսինքն 3ի և 3իաւոր բոլորովին զրահով
ծածկեալ. զոր պատմիչ մը կը նմանեցնէ զրա-
համորթ կոկորդիլոսի։ Արձակ գաշտի մէջ՝ այս
ապառազէնքս ճարտար առաջնորդի մը ձեռք՝ գրե-
թէ անյաղթելիք էին, բայց նեղ տեղուանք՝ թէ ի-
բենք իրենց արդելք և թէ իրենց եռեալ շարուած
գնդերուն. այսպէս Տիգրանայ բիւրաւորներն ընկ-
ճուեցան զարնուեցան Լուկուլլոսի լեգէոնարէն,
որ հնարագիտութեամբ զանոնք թերմոպիլեան
նեղուցի մը մէջ փակեց։ Հիմա Փիւրատէրն որ
Հայոց ժառանգութիւնը կը վայելեն և կը վա-
նեն, տարուէ տարի 50,000էն աւելի 3ի կը վա-
ճառեն Պարսից և Օսմանեանց։ — Հայկական և.

րիվարին, հին սահեն սամնէն սաւելի ծանօթ եղած է՝ երևի, յետ սահիկ (արարատցի) ձիոյ. մեկ հին և անանուն յոյն հեղինակ մը՝ նկարագրութիւն մը ընելով ձիոց՝ ըստ աշխարհաց, նախ և առաջ կը յիշէ հայկական երիվարը, և կը ճանչնայ զայն բաւական յաղթանդամ և շատ ուժով, ոգնալոյն և պնդակող. և Ցովբայ ձիոյն պէս սասաիկ խրը-խընջացող։ Հայկական երիվարին հետ կը յիշէ զփռիւգացին. և այս երկու ձիոց ազգէն սերած կը համարի գալմատացի երիվարը։ Ինչուան հիմա այլ հայկական ձին թերևս նախապատիւն է յետ արարատցի և անգղիացի ձիոց. յիրաւի չունի ոչ սասնոյ հասակը և ոչ վայելուչ ձևը, սաւելի պզտիկ և սաւելի թանձրամիս է, բայց երագութեամբ անանցնի վար չի մնար, և անանցնի սաւելի պատուական է վարժութեամբն ելլելու և իջնելու լեռնոտ և անհարթ երկիրներ. պատերազմական գաշտին վրայ որ և է ցեղ ձիու դէմ կրնայ ելլել. և իր աչքերէն ցաղրած կրպրանման սև կրակը սեանոզն՝ կարծէ թէ կռուող կենդանեաց մէջ գաղանագոյնն է։ Ինիկ հայկական ցեղից մէջ Խնուսի ձին սամնէն գեղեցիկն է. կը կարծուի այլ որ նիշա անուանն, որով կ'անուանէին Ցոյնք լաւ ձիաբեր երկիր մը, այս սեղուոյս անունէն ծագած է, կամ Նժոյգ անուանէն։ — Հիւսիսային Հայոց երիվարքն ալ լաւ, ուժով և աղուոր են. այնպէս որ անոնց սամնէն հասարակներն այլ, կ'ըսէ գերմանացի բնագէտ ճանապարհորդ մը, կրնան Շգուդկարտի արքունի սիսառոց լաւագոյն ձիերուն կարգը դրուիլ, և իրաւ այլ կու տայ յԵւրոպա մացընելու Էրզիրումի, Տրապիզոնի և և Դրեսսոի ճամբով։

Ինութիւնն որ այսպիսի գեղեցիկ կենդանի մը ընծայեր էր երկրին, անոր սասցուին այլ հանճար տուաւ զանիկայ ազէկ վարժեցընելու և ա-

ուելի ազէկ այլ ՝ի գործ ածելու. ՀԻԱԳԱՐՄԱՆՈՒ-ԹԵԱՆ արուեստան շատ կատարելագործած էր մեր նախնեաց օրերը. որուն կրնան վկայ ըլլալ քանի մը լատին հնգինակաց բանք, և մեացորդք ազգային Հիագարմանութեան գրուածոց, որոց մէջ մանրամասն անգամաբանութիւն կայ Հիոյ։ Իսկ Հիոյ գործածութիւնն, Հայոց ազնուակա-նաց և պատանեաց զբօսանք, ցուցանք և պարծանք մ՝էր. մեր իշխանաց կարիճ զօրավարաց մէկն, քաջակորովն Պուշեղ, հացկերութի մը առեն գաւազանութեամբ ապաննուելով, վերջի շունչը տալու առեն կը ցաւէր կ՝ողբար որ չկրցաւ մեռնելու իր ձերմակ երիվարին վրայ, որ այնքան անգամ տարեր էր զինքը յաղթութեան. գուռզ թագաւորն Շապուհ որ այս կարիճ զօրավարին Հեռքէն այլ սրտէն այլ յաղթուեր էր, հրամմեր էր որ քարի վրայ քանդակեն անոր պատկերը ձերմակին վրայ հեծած, և իր խնջոյից տաճարին մէջ կանգնեն, զոր տեսնալով՝ արևուն դէմի խմեր, Ապրի՛ ձերմակաձին, ըսելով։ Շատ առեն չէ որ գտնուեցաւ ուրիշ քանդակ մ՝այլ մեր երկրին վերջին սահմաններուն վրայ, նոյն քաջակորովը կերպարանելով իր ձերմակին վրայ, թէ և գտնող ճանապարհորդն չիճանչցաւ իր գիւ-ը։... Բայց մեր ձերմակն, մեր պիգասոսքն[1] ըզ-մեզ շատ հեռու կը թողուցինն. բաւական ըլլայ այսչափ տեղեկութիւն թէ իրենց համար և թէ բոլոր մեր երկրին գործարանաւոր և անգործ-ման արարածոց։

[1] Ըստ առասպելաց Յունաց թեւաւոր Հի Պերսէոսի դիցային։

ՀՈՑԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Ը

Շնորհակալ ըլլանք ուրեմն բնութեան, որ այսքան պարգևներով հարստացուցեր է մեր երկիրը. և առաւել փառք տանք տիրոջն բնութեան, որ այդ պարգևները վայելել և յարգել տուաւ երկրին հանճարամիտ բնակչին, որ ի սկզբանց ժամանակի գիտցաւ ճարտարութեամբ օգուտ հանել անոնցմէ, և օտարաց այլ սփռել, հեռաւոր աշխարհքներու բերքերը իրարու պսակելով։ Հայն տմեն առեն եղած է վաստակասէր մշակ իր երկրին մէջ. ժիր վաճառական գուրսի երկիրներ, զգօն գործակալ ազգաց՝ որ զիրար չէին ճանչնար. և փոխանակեր է գրական և զարուեստական բերս աշխարհաց՝ որ իրարմէ հեռու էին շատ միջօրէական ժամերով։ Հայն բոլոր երկրիս երեսը կը պտըտէր, կը սովրէր զանազան ժողովրդոց՝ որոց լեզուն կ'ըլլար, և ամեն տեղ միտ գնելով կը սովրէր շահ և ճարտարութիւն։ Իրեն համար օտար երկիր չկար և չկայ. և ամենայն ազգք իրմէ յիշատակ մ'ունին։ Թէ որ լուսաւորութեամբ քննուի ազգաց շուրջ կամ բաժանման պատմութիւնն, ինչպէս որ Ս. Գիրք մեզի կը ներկայացընէն, յայտնապէս կ'երևի որ Ասիոյ հիւսիսային և արևմտեան կողմերն և բոլոր Եւրոպա իրենց բնակիչքն առած են այն գաղթականներէն որ ելան կամ անցան ի Հայաստանէ, յառաջ և յետ իր Հայաստան կոչուելուն։ Թէպէտ և հիմակուան քննագնատութիւնն տարբեր կարծիք ունի լեզուաց ծագման և ածանցման վրայոյ, սակայն արժան է յիշելու, որ թէ ժողովրդեանը համար, թէ անոր լեզուին համար չկայ երկիր մը՝ որ մեր երկրին հաւասար այնքան

բազդաւորութեանց և նմանութեանց ասիլ եղած ըլլայ։ Սկսեալ յԵրուսաղէմ, 'ի Սարաքոնէ և յԵւ-սաբիայ՝ հարցուր ամեն լեզուագիտաց և բանա-սիրաց, որպիսիք են Աքուլուիոս, Շուարց, Գո-չար, Կալմէտ, Հերվաս, Լաքրոզ, Վիսդն, Լայպ-նից, Լբայրիկանս, Շրեքտէր, Հէերբն, Ճ. Ուի-ղիէմ, Անդրէաս, Բուլլաս, Գլաբրոթ, Ասիլուանկ, Գոր, Բոդ, Բնդերման, Վինոքիման, Կաղգե-ռեր, Նիպուր, և այլն, թէ որ լեզուին նմանա-կից է հայերէնն։ Ամենքն միկամիկ կերպ պատաս-խան կու տան, հայերէնին մերձաւոր և ազգակից սեպելով զփռիւգացին, սասրին, բաբելոնացին, քաղդէացին, հրեայն, Թաթարը, կովկասեան-թուրքը, խազարը, պարթևը, փէհլէւին, զան-գիկը, հնդկաստանացին, մարապարացին, հին յոյնը կամ պելասգեանը, եգիպտացին և զպտին, կելտը և ուէլսը, ինչուան պիգմէացին, ֆինը և սիպերիացին։ Արդ 'ի վերայ այս ամե-նայն խառնափնդորութեան վէճին՝ ուսկից կ'ու-զեն հանել զհայերէնը, մանաւանդ թէ հայերենէն հանել այս վիճը, 'ի վերայ այս ամենայն աւելի կամ պակաս ծուռ կարծեաց, պէտք է որ այդ վէճին խորը ճշմարիտ և սկզբնական բան մ'ըլլայ, ապա թէ ոչ անկարելի կ'ըլլայ հասկընալ թէ ին-չո՞ւ և ինչպէս այդքան ծանր և գիտուն անձանց գլուխք պտըտեր են այդ վէճին վրայ։ Այս այլ պէտք է լաւ գիտնալ, որ եթէ Ս. Գիրք, պատ-միչք և աւանդութիւնք կու ցուցընեն մեզի զՀայաս-տան իբրև սերմնարան մը ազգաց և ցեղից, նոյն Հայաստան զարմանալի ընդդիմակութեամբ մը հիւրընկալ և օթևան եղած է զանազան ազգաց գաղթականներու, ինչպէս են ասորեստանեայն, քաղդէացին, հնդիկն, հրեայն, քանանացի, սկիւ-թացի, կովկասեան, իմեսաղացի, յոյն, մար, պարսիկ, և ինչուան չին այլ։ Այս ամեն առհմք

նախ քիչ կամ շատ տաեն մը իրենց օրէնքը և լեզուն զուտ պահելով. յետ քսան և հինգ դարուց խառնուեցան և ընկղմեցան ամբողջ ազգին և լեզուին մէջ. այսինքն հայերէնին, որ 'ի հարկէ ինքն ալ անոնցմէ փոփոխութիւն կրեց և անոնց բերքերուն հարստացաւ։

Քրիստոնէական կրօնքն սրբազան և անգրժելի ըրաւ երկայն դարուց աշխատանքը. և այդքան տարբեր տարերքներէ ձևացուց մեկ ազգ մը, որ 'ի սկիզբն Դ դարու կը պարունակէր անընդմէջ երկիր մը հիմակուան Փռանկստանի սահմաններէն ընդարձակ, և բաժանեալ 'ի 20 նախարարութիւնս կամ պայազատական աշխարհս, որք բաժանէին 'ի 620 գաւառս, և ասոնք այլ 'ի հարկէ 40,000 գեղ մ'ունէին, որոց պահպանութեան համար սովորաբար 120,000 զօրականք կային, և հոգևոր հսկողութեան համար աւելի քան 200 եպիսկոպոս։ Այս դարէս ետև՝ 1500 տարուան միջոց մը բոլորովին այլափոխեց մեր երկրին օրէնքը և երևոյթը, որ կրեց բազդին ամեն հարուածքը և խաղերը։ Նոր ժողովուրդք եկան գրաւեցին զՀայաստան, ուր հիմա այլ կ'երևան որոշակի. վասն զի կրօնքն և լեզուն անթափանցելի պարիսպ մը ձգելով մէջերնին՝ օտարականին թողուցին Հայաստանին գեղեցիկը, պահելով միշտ տեղացւոյն՝ իր սիրելի հայրենիքը։ Ասանկով, թէ և հեռացեալ, թէ և հալածեալ իր բնիկ երկրէն, Հայն իրեն հետ կրէ իր թերութիւնը. և կը մշակէ զՀայրենիս իր հարուստ լեզուին մէջ, կը յարգէ զայն իր կրօնից մէջ, կ'ուսանի՝ անոր յիշատակաց մէջ, և կը պաշտէ զայն իր սրտին մէջ։ Այս հայրենասիրութիւնս 'ի բաց թողլով ոմանց մոլորիլը և ոմանց անհոգութիւնը, առաջնորդեց անցուց Հայոց ազգը 44 դարու միջոց՝ ամեն տեսակ դիպուածէ, բնութեան և քաղաքականութեան յե-

զափոխութիւններէ, ընդ մէջ ազգաց՝ որ իրմէ վերջը ծնան և իրմէ առաջ մեռան։

Դարձուր դարձեալ անգամ մ՝այլ աչքդ այդ լեռնակղզի երկրին վրայ, որ կը բարձրանայ՝ի մէջ Եւքսինեան և Կասպիական ծովուց, Պարսկային ծոցոյն և Միջերկրականին, որոց մէջ թափէ զալիս Փիսոնի, Աղիւսեայ և Իռիսայ, Կուրի և Սրասխայ, Տիգրիսի և Եփրատայ, Գիւռամի և Կիւղնոսի. փնտռէ առանց ամայի աւերակ ափանց վրայ ազգաց և ազանց գոռոզ մայրաքաղաքները, և ըսէ ինձ. ո՞ւր են Նինուէ և Բաբելոն, Սելևկիա և Տիզբոն և Սամոսատ. մանաւանդ թէ ըսէ, ո՞ւր են առանց կանգնոզքն, այն հզօր և անուանի ժողովուրդքն հին դարերու, Քաղդէացիք, Ասորեստանեայք, Մարք, Պարթևք, Կապադովկեցիք, Սիլիկիացիք, Լիւդացիք, Կարքեդոնացիք և ուրիշ շատեր։ Հարցու մեկ հինաւուրց մարդու մը, որ անոնց ամենէն ուժով, ծաղկեալ և յաջող ժամանակը տարբերով, կը նշմարէր անոնց կործանումն այլ. հարցու Սզեկիելի, ո՞ւր են այդ ազգերն « որք արկանէին զահ իւրեանց՝ի վերայ երկրին կենդանութեան »։ Ա՛ւաղ. ահա կը ցուցընէ մեզի երկրիս խորը, անգունդը, ահաւոր լիճ մը, ոչնչութեան տեղ մը և կ՝ըսէ. « Անդ Ասուր և ամենայն ժողովք նորա, » ամենեքին վիրաւորք... շուրջ զշիրմաքն նորա... » Անդ Սլամ և ամենայն զօրութիւն նորա շուրջ » զգիրեզմանաւ նորա... անդ առաւն Մոսոք և » Թուբէլ և ամենայն զօրութիւնք նոցա շուրջ զգի» րեզմանաւ նորա... անդ Եդովմ և ամենայն թա» գաւորք իւր և ամենայն իշխանք նորա... և նո» քա ընդ վիրաւորս ննջեցին ընդ իկեալսն՝ի խոր» խորատ »։... Դադրէ՝ի սպառնալեացդ, դու ժաւուր մարդարէ. միթէ պիտի յանդգնիս ըսելու այլ, թէ « Անդ ամենայն իշխանք հիւսիսոյ,

» և ամենեքեանն ողբա զօրավարքն Ասորեստանուոյն,
» իշխեալք վերաւորք հանդերձ ահիւն զօրութեամբ
» իւրեանց... և տարան զտանջանս իւրեանց ընդ
» իշխեալսն 'ի խորխորատ »։ Զեն տեսաներ, որ ինչ-
պէս այն ալիքներն՝ որ տեսան այդ ազգերը իրենց
ափանց վրայ, կը կորսուին խառնուին անկուշտ
ծովուն մէջ, մինչդեռ իրենց ազգիւրներն անդա-
դար կը բղխեն նոյն բարձրաւանդակներէն, այս-
պէս և ազգն Հայոց, որ ունէր իր երկիրը այդ աղ-
բերակաց մէջ, հոն կու կենայ դեռ, մինչդեռ մեկ-
այլ ազգերն ոչնչացեր են 'ի վերապն ժամանա-
կի։ Հիմա սովրէ մեզմէ, ո՛վ մարգարէ, վասն զի
մենք առանց քօղոյ կը տեսնենք ինչ որ դու 24
դարու թանձրութենէն կը տեսնէիր. մեզմէ սո-
վրէ. այդ իշխանքդ հիւսիսոյ և արևելից, այդ զօ-
րավարքդ Ասորեստանուոյն ո՛չ մեռան ինչպէս Ա-
սուրն և Սլամ. այլ ողջացան, ապրեցան որոյ հա-
րուածներէն. գերեզմանն չկրցաւ կլանել իր ա-
մեն փափագածը. և Հայն մինակ մնացած քու
համրած ժամանակակից ազգերէդ, ինքնին կը
հսկէ իր նախնեաց գերեզմանին և իր յետնոց ո-
րորոցին քով։ Հայն՝ ժողովուրդ աշխուասիրա,
ժողովուրդ հիւրընկալ, ժողովուրդ հաւատացեալ,
շատ ժողովրդոց օգտակար եղաւ. և եթէ երբեմն
իրեւ պատերազմող՝ նիզակակցելով Փուղայ և
Սաղմանասարայ 'ի դերութիւն քշեց կիսրայէլ,
գոնէ պաշտպանեց այլ ղանոնք իր գետափանց
վրայ և 'ի բարձունս Ամանայ (կամ Ռեմանայ [1]).
և թէ դաշնակից ըլլալով Նաբուքոդոնոսորի, գե-
րի վարեց զիշխանս Յուդայ, սակայն պատուեց
այլ զանոնք իր իշխաններէն աւելի. վասն զի ճանչ-
ցաւ թէ անոնք Դաւթի և Սողոմոնի որդիք են, և
անոնց ձեռքով կ'ընդունէր գլխին ճառագայթա-

1 Ամովս. Դ. 3.

ձև Թագը, զոր յետոյ նոյն իսկ իր գերեզմն գլուխը դրաւ. և եթէ սոխպեց երբեմն (ինքն այլ ըսոխպեալ ըլլալով) զորդիս և զդստերս Սաղեմայ՝ բաբելական ուռենեաց ներքև արտասուաթաց քնարներու վրայ երգել Սիոնի սազմանները, սակայն խուլ չեղաւ Աստուծոյ ձայնին՝ որ ուրիշ մարգարէի մը բերնով կ'ըսէր իրեն. «Զատուէր » տուք յինէն այրարատեան Թագաւորութեան- » ցըն և ազգանազան գնդին. կանգնեցէք զնովաւ » (զԻսրաելընիւ) նշանակալս, եկէք 'ի վերայ... » երիվարք, իբրև զբազմութիւն մարախոյ [1] ». և փուԹաց վազեց Աստուծոյ օծելոյն, և իր նիզակակցին հետ (Կիւրոսի), և յետ եօԹանասուն տարւոյ՝ իր գերեաց շղԹաները քակելով. ինքնին առաջնորդեց տարաւ զՍաղաԹիէլ և անոր ժառանգները և անցուց Հայաստանի և Միջագետաց սահմաններէն. և ոչ անիլնաս պահելով Թշնամի ժողովրդոց միջէն հասուց 'ի Պաղեստին [2].

Հայաստան ինքնին նախախնամեալ երկիր մ'էր, և սիրելի բարձրելոյն, ուր շատ կանուխ յայտնեցաւ. և պէտք է որ ամենայն ազգ որ իր ծագումը գնառէ՝ գառնայ այդ երկրին նայի։ Նգեմայ հետքը գտնելու ապահովագոյն ճամբայն է Հայաստան։ Ինքն ընծայեց Աստուծոյ իր օրհնեալ կուռը, և ընդունեցաւ անոր ձեռքէն զհայրն և զմայրս մարդկութեան. ինքն ընծայեց ասոնց այլ ինչ որ պէտք էր իրենց պահպանութեան, իրենց սիրոյն և զգջմանը համար. ինքն եղաւ խանձարուրը առաջին ծնածին և գերեզման առաջին մեռնողին. ինքն բարձրացուց Արարատայ գագաթը միւսանգամ ընդունելու ջրհեղեղէն ազատած մարդկութեան մեկ հատիկ առնը. և այդ

[1] Երեմիա, ԾԱ. 27։
[2] Թովմա Արծրունի ըստ Մար Իսայայ։

իրեն հիւր եղած մեկիկ ընտանիքով երկրորդ անգամ բոլոր երկիրս մարգարեական ըրաւ։ Ինքն կերակրեց առաջին նահապետները, և անոնց հաւատքը անխառն պահեց երկար տեսն. Աբրահամ ինքնին նոր հայրն հաւատոց՝ իրմէ ծագած է, վասն զի իր հայրենիքն՝ Ուր Քաղդէացւոց՝ հիմա կը ճանչցուի Հայոց յետին պատուարներուն մէջ, լերանցն Կորդուաց, որ Մեծ Հայոց տասն եւհինգ աշխարհաց մեկն է։ Վերջապէս, ինքն, ըստ բարեպաշտիկ աւանդութեան, կ'ապաստէր ըզՑիսուս՝ առաքելոց գլխաւորին հետ՝ որ զգուշանայ ի նենգութենէ Հրէից, և գայ իր Թագաւորին, Արքարու հետ՝ ապաստանի յԵդեսիա։ Ինքն ընդունեցաւ ուրիշներէ աւելի առաքեալներ և աշակերտներ և ընծայեց անոնց զառաջին կոյս վերկայուհին, նոյն իսկ իր Թագաւորին դուստրը, զոր կ'ախորժեմ անուանել քոյր Աբելի. վասն զի ողջա են նախավկայք, մեկն նախնական աշխարհի, մեկայլն նորաստեղծեալ աշխարհի. մեկն զոհեալ իր եղբօրմէն՝ մեկայլն իւր հօրմէն. մի ստուգածային ողբերգութիւն։ Նոյն ինքն Հայաստան յետ իրեք դար անանալու, գարձեալ յառաջ քան զուրիշ ազգեր՝ բոլոր ժողովուրդովք ընդունեցաւ զքրիստոնէական կրօնս և պահեց միշտ. և որ զարմանալին է և ծանր ընդդիմութեան մը. քրիստոնէութեան առաջին պատուարն ըլլալով՝ ամենէն եղբի պատուարն այլ է երկրիս արեւելակողմը. վասն զի այդ կողմն՝ Հայաստանի մէջօրէն անգին քրիստոնեայ երկիր չկայ, բաց ի գազթականներէ կամ քարոզչաց ձեռքով նորագարձներէ, որք կրնան նորատունկք ըսուիլ ի մէջ հեթանոսաց։ Ասեն մը իբրև կղզի մ'էր, հիմայ իբրև թերակղզի մը քրիստոնէութեան այլահաւատ կրօնից մէջ։

Այս Հիմարիտ կրօնից զգացմամբ, այս գերա-

գոյն զգացմամբն է՝ որ Հայաստան ոչ միայն կըրցաւ մնալ և դիմանալ իր ինքնագլխութիւնը կորսընցընելէն վերջն այլ. հապա նաև կրցաւ ամենէն դժուար գործ մ՝այլ գործել. այսինքն համաձայնել իրարու զլահանդրութիւն երկուց աշխարհաց՝ որոց մէջ դրեր է զինքը նախախնամութիւնն. և եթէ երբեմն այս բարակ և դժուարին պարառուց մէջ պակսած է, աւելի ինքզինքը խաբած է քան զուրիշները։ Ապա և ոչ առանց արդեանց վաստըկեր է զյարգ և հմարմունք և վստահութիւն տիրող և ահմանակից ազգերուն. ինքն առաւել է զօրք և կարիճ զօրավարներ Սասանեանց և Բիւզանդացւոց. և իր ճարտարագոյն որդիքները բազմացուցեր է իրրև ինքնակալ Կոստանդիանոսի գահուն վրայ, և փոխարքայ Եգիպտոսի և Հնդկաստանի տիրապետաց քով. զանազան հնարքներով Արաբացւոյն սուրը բթացուցեր է, և իրեն սովրեցուցեր քանի մը օգտակար արուեստներ. որոնց հետ ճարտարապետութեան ոճ մ՝այլ, որ քիչ մը ձևափոխեալ ուրիշ հեռաւոր աշխարհաց մէջ այլ մտաւ. Եվրոպա անգամ առանց իմանալու առեր է զայն։ Հայաստան Կոփրեստոսի Թաչակրաց նիզակակից եղած զԵրուսաղէմ առաւ. Հուլաղունի Նեստոզաց գաշնակից՝ զՊաղտատ առաւ։ Ոչ սակաւ պաշտօնեաներ և քաջանշան զօրավարներ ընծայեց օսմանեան, ռուս և պարսիկ տէրութեանց, որոց իշխանութեան տակ հիմայ բաժնուած է երկիրն։ Իր ճարտարարուեստ գաղթականաց ձեռք շատ օգտակար ծառայութիւն ըրած է Ռուսաց, Լեհաց, Աւստրիոյ և Դանուբեան իշխանութեանց, և իր վաճառականներովն՝ միջին դարու Խաչլիոյ ամեն տէրութեանց, Սպանիոյ, Հոլանտիոյ և քանի մը տէրութեանց այլ՝ որ հիմա Փռանկաց մեծ տէրութեան մասն են։ Այս եաքինիս մայրաքա-

զաքն իսկ. արևմտից Բարիզոն, մեկ Հայու մը երախտապարտ է իր ամենէն շատ յանձնուած ընկերութեան տեղւոյն սկզբնաւորութեանը համար. Բարիզու մէջ առաջին քաղաքականը բացուեցաւ յամին 1672 Սէն-Ժերմէնի տօնավաճառին մէջ և Դպրոցի ըսուած գեղատապին վրայ (Quai de l'Ecole), 'ի Հեռն Յարութիւն կամ Բասգալ անուան, երկրորդն ալ Ստեփան անուն մէկ մը, որք երկուքն այլ Հայ էին. անշուշտ իրենք չէին նախատեսած թէ իրենց Հեռնարկութիւնն զարգանալով՝ որչափ բարիք կամ չարիք կարենայ պիտի բերել. բայց մենք կրնանք յուսալու՝ որ այդ նորութեան համար իրենց շնորհակալութեան յիշատակարան մը ընծայեն զբօսասէրք։

Իսկ ինչի աւելի նախամեծար և ախորժելի է նկատել այն լուսաւոր նշանները՝ զորս Հայաստան իր հորիզոնէն դուրս այլ սփռած և գրած էր երկնից այն կողմերը՝ որոնց տակ իր որդիքն ապաստանարան մը կու գտնէին. և կու սիրեմ պատուել Օռլէանի սահմանին մէջ զՍ. Գրիգոր ալքեպիսկոպոս Հայոց Նիկոպոլսոյ 'ի ԺԴ դարու, հիմայ պաշտպան Բիբլիվիէի. — 'ի Գոմին՝ (Commines) զՍ. Խրիսոլ (Ոսկի, Chryseuil), տեղւոյն պաշտպանը, զոր աւանդութիւնն սեպէ աշակերտ Բարիզու Մ. Դիոնիսիոսին և կու ճանչնայ Հայ. — 'ի Ֆոնդէն՝ 'ի հայրենիս Ս. Բեռնարդոսի՝ պաշտպան տեղւոյն զՍ. Ամբրոսիանոս. — 'ի Կանա՝ (Պելճիոյ) զՍ. Մակար, պաշտպան տեղւոյն և Հայ եպիսկոպոս ԺԴ դարու. — 'ի Մանգուա՝ զՍ. Սիմեոն, վերնոյն ժամանակակից. — 'ի Լուգգա՝ զՍ. Զաւէն կամ Դաւիթ (S. Davino). — յԱնգոնա՝ զՍ. Կիրակոս. — 'ի Պատուա՝ զՍ. Փիլիպոս եպիսկոպոս յ'Ր դարու, և այլն. որոց ամենքն այլ հայազգի կու ճանաչուին։... Բայց, ափսոս, որ

հոս չէ յարմար ուղղ՝ հայկական Ոլիմպոսի սրբազան բարձունքը Թռչցնելու։

Փուլեամ ուրեմն, Հայկակ բովանդակելու այս հայկական բնագրութեան համառօտ պատկերը. յուսամ որ այս չափովս այլ իմացուի, որ մեր ազգն եղեռ և քաղաքական պատմութեան մէջ առաջին գործերը չէ գործած, բայց և շատ մեծ գործոց մասնակից եղած է. ազգ մը՝ որ սկսեալ՝ի Նոյէ գրեթէ անընդհատ ինչուան հիմայ կը համրէ 2500 ազգատոհմ, իբրև նախարար, Թագաւոր կամ կաթողիկոս, որոց հետ կապուած են իւր աւանդութիւններն, և անով նաև բոլոր ժամանակագրութեան յիշատակք. այսպիսի ազգ՝ արժանի է մտադրութեան և քննութեան, Թէ իր բնիկ որդւոցն և Թէ ամեն մարդու՝ որ բարեկամ է ճշմարիտ փիլիսոփայութեան։ Ես չեմ վախնար ըսելու, Թէ Հայաստան մէկ որոշեալ վիճակ կամ նպատակ մը ունեցեր է յառաջ քան զայլ ազգեր. և որ աւելի հարկաւոր է գիտնալու, դեռ այդ վիճակն լմնցած չէ։ Գաղտնիք մը չէ ըսածս, և ոչ խորհրդաւոր բան մը, այլ հեռացեալ հաւանութիւն մը Հայ մտաց, Թէ դեռ գործ մ՝ունի կատարելու երկրիս վրայ. բարեբաստիկ գործ մը։ Այսն բան լմնցած չէ իրեն համար. դուռ մը պիտի բացուի իրեն համար առեն մը... որ շատ այլ հեռու չէ, ինչպէս որ կարծեմ. այդ դուռն երկար ժամանակ կրկին կրկին կղպած փակած լմնայ պիտի. արդէն զօրաւոր բանալիքներ կը տեսնեմ, և համարձակութեամբ կ՝ուզեմ ցուցընել. չըլլայ Թէ վախնաս,... մեր երջանկութեան ապագայ բանալիքն, այդ այնքան երկար ժամանակէ վեր բաղձացեալ բանալիքն, այդ բանալիքն՝ է դասախարակութիւն։ Դասախարակութիւն հայրենասիրական. հայրենասիրութիւն յնցեալ՝ի վերայ իմաստասիրութեան, և սա հիմնեալ՝ի վերայ

սուրբ կրոնից։ Առանց այս կապակցութեան չկայ կատարեալ կրթութիւն, չկայ քաղաքականութիւն, չկայ մարդ կատարեալ։ Ընկերական պարտքերը լաւ կատարելու համար՝ մարդս կարօտ է հայրենական ներշնչման մը. և որպէս զի հայրենասիրութիւնն չմոլորի և յետ չմնայ, պէտք է որ առաջնորդ ունենայ զիմաստութիւն, նեցուկ՝ ըղձութեան, և պատկ՝ գյաւիտենականն ճշմարտութիւն։

Թ

Ո՛վ Հայկակ, ո՛վ Հայ պատանիք, աղէկ քաղաքացի ըլլալու համար՝ պէտք է քննել և սովրիլ զհայրենիս։ Այս է առաջին ուսումն յետ ուսման հանդերձեալ կենաց։ Քննեցէք և սովրեցէք ուրեմն այդ ազգիս և բարեբեր Հայաստանը, իրրև հայրենիք ձեր և դայեակ ամենայն աշխարհի. — քննեցէք այդոր բնակազմութիւնը, քննեցէք այդոր բարոյականը. քննեցէք այդոր բարգաւաճումը 'ի հարուստ լեզուին, որ ապահով գրականի մ'է բազմատեսակ արկածներով հընձուած գրականութեանը. — քննեցէք զայն վերջապէս՝ իր կրօնից զբաւութեանը, և իր ծիսից վայելչութիւնը մեջ։ Այդ քննութիւնքդ, այդ ուսմունքդ յորդոր ըլլան ձեզի սաւելի քան զաւելի յարգելու զհայրենիս և մշակելու զայն՝ ըստ ամենայն նշանակութեան բանիս։ Վասն զի այս իսկ է առաջին պատուէր Արարչին՝ տրուած առ հայրն մարդկութեան, և տրուած բուն իսկ մեր երկրին մեջ. ԳՈՐԾԵԼ ՋՆՆ ԵՒ ԳԱՀԵԼ[1]։

1 Ծննդ. Բ. 15։

Գ

ՀԱՑԿԱՑ ԵՐԶԱՆ

ՏՕՄԱՐ ԵՒ ԹՈՒԱԿԱՆ ՀԻՆ ՀԱՑՈՑ

ՀԱՑԱԴԻՐ

Ա

Մեր հայրենեաց համառօտ բնախօսութիւնն ըրած առնենք՝ յիշեցի. Հայկակ. որ ամեն քննողի բնական և ախորժելի է գիտնալ պատմութեանց հանդիսարանը. այսինքն հանդիսած կամ պատմուած բաներուն ուր տեղ եղած ըլլալն. որ է ըսել՝ աշխարհագրական տեղեկութիւն մը. թէ բնական և թէ քաղաքական. Ինանսիրին առաջին բնառածն է Ինդը. Ինչ եղած ըլլալը. որ է լոկ Պատմութիւն. երկրորդ բնառածն է Ուրը. ուր տեղ. աշխարհիս ուր կողմն եղած ըլլալն. և այս է Աշխարհագրութիւն. երրորդ բնառելիքն այլ է Էրէբը. այսինքն պատմելոց ուր տեղն. ուր տարի հանդիսած ըլլալն. և այս է Ժամանակագրութիւն. զոր և ալ դոփմոՒԷան կ'անուանեն գիտուն. առանց որոյ մութ կու մնայ պատմութիւնն. Եթէ երկրաբանութիւն և աշխարհագրութիւն կարևոր են պատմութեան նկարուց՝

իբրև ենթակայ և յատակ մը, ժամանակագրութիւնն այլ իբրև լոյս և պայծառութիւն տեսարանին՝ հարկաւոր է։ — Մեր ամենէն ցանկալի և պիտանի պատմիչն՝ Մովսէս Խորենացի՝ իրաւամբք կ'ըսէ. «Ոչ է պատմութիւն ճշմարիտ՝ առանց » ժամանակագրութեան ». բայց դժբաղդաբար ոչ ինքն և ոչ շատք 'ի պատմիչաց մերոց, մանաւանդ հիներ, հաստատ և յայտնի ժամանակագրութիւն մը բռնած և յիշած չեն իրենց պատմութեան մէջ. միայն երբեմն այս կամ այն թագաւորի և կայսեր տէրութեան տարիներուն կու յարմարցընեն իրենց պատմած դիպուածները. և որովհետև այն թագաւորութեանց սկիզբն այլ ծանօթ թուականի մը վրայ չեն դրած՝ դարձեալ տարակուսելի կու մնայ ըսածնին. մանաւանդ որ թագաւորաց տէրութեան սկիզբն՝ շատ կու զանազանի ըստ այլեւայլ հաշուոյ պատմիչաց. միով բանիւ բարեկարգ և հաստատուն ժամանակագրութիւն մը չկայ մեր հին պատմիչաց մէջ. որով պատմութեան դիպուածներն այլ անհաստատ կու մնան։

Ժամանակագրութեան պակասութիւնն կու յայտնէ տումարի այլ պակասութիւն կամ խառնակութիւն. և յիրաւի, ազգերնիս եթէ հնուց 'ի վեր ունեցած է իրեն յատուկ տումար՝ որով և ժամանակաչափութիւն մը, (ինչպէս վերջը պիտի տեսնենք), սակայն դրացի և տիրող և զանազան ազգաց օրինաց և վարչութեան տակ ընկնալով, կամ գոնէ անոնց հետ սերտ յարաբերութիւն ունենալով՝ ստիպուեր է իր տումարը և տարիները անոնց յարմարցընել. երբեմն Խաթիլայցւոց կամ Ներոնասարայ թուականը վարելով, երբեմն Յունաց կամ Աղեքսանդրի կամ Ասորւոց ըսուածը, երբեմն Պարսիցը, երբեմն Հռովմայեցւոց, յետոյ Կ.Պոլսի կամ եկեղեցական թուա-

կանը, և այլն. մինչև որ այս ամեն ազգաց մեր-
ձաւոր և հարկաւոր ազգ.ցութիւնէն քիչ շատ
ազատելով, և բաբեբազգութեամբ յառաջ քան
զծագումն Հագարացւոց Թուականին (հիճրէթ),
'ի կէս 2 դարու՝ եկեղեցական ոճէն կարգը հաս-
տատելու սարքուած՝ կարգաւորեց իր բնիկ տու-
մարը. և անոր հետ մէկտեղ ժամանակաչափու-
թիւնն ալ. տումարին նորոգած տարիէն, կամ
Փրիստոսի 532 տարիէն՝ սկսելով Թուական մը,
որ կ'ըսուի Հայոց Խառնան կամ Մեծ Խառնան, և
Խորվոյին Խառնան կամ Գարեն. այս Թուականս
է որ անկէ ետև 'ի պատմչաց և 'ի բոլոր ազգէն
գործածուելով՝ կու շարունակուի մինչև հիմայ։
Բայց այս այլ յայտնի է որ եաքի երկու դարե-
րուս մէջ՝ ազգերնիս թէ բնակութեամբ և թէ
ծանօթութեամբ աւելի մօտենալով արևմտեան
ազգաց, ըստ հասարակաց սովորութեան՝ Փրիս-
տոսի Թուականը և յուլեան տումարը կու բա-
նեցընէ, առանց Թողլու իր եկեղեցական տումա-
րը. և Թուականին շարունակութիւնը յօրսցոյցս,
'ի ձնկատս գրոց և 'ի կոնդակս, և ասոնց նման
առիթներու մէջ։ Այս Թուականիս սկիզբը գիտ-
նալէն ետև՝ գիւրին է անոր տարիներով պատ-
մուած գէպքերը համեմատել Փրիստոսի կամ ու-
րիշ Թուականի հետ։ Միայն թէ Փրիստոսի Թը-
ուականն յուլեան տումարաւ է յարևելս. յարև-
մուտս՝ անոր նորոգութեամբն՝ որ կ'ըսուի Գրիգո-
րեան կամ Նոր տոմար. հիմայ ասոնց զանազանու-
թիւնն այս է՝ որ նորն (որ և Լատինաց կ'ըսուի)
12 օր կու կանխէ քան զյուլեանն (որ և հին կ'ը-
սուի). ասոր յանուարի մէկն՝ Լատինաց կամ
նորոյն 13 է։

Ակդէն գիտես, Հայկակ, որ մեր Հայոց Թը-
ուականն ոչ նոր և ոչ հին տումարին տարին ու-
նի (ոչ գրիգորեան և ոչ յուլեան), որք սոյգ

արեգակնային տարիով են, այսինքն 365 օր 5 ժամ, 49'. ըսել է որ 365 օրէ զատ՝ տարուոյն վրայ վեց ժամի չափ յաւելուածն այլ 'ի հաշիւ կ'առնուն, որ և վրայէ վրայ՝ չորս տարուոյ միջոց 24 ժամի կու մնաննայ, որով օր մ'այլ կ'ու ունենայ. և ահա յուլիան և նոր տումարն՝ իրենց Թուականին ամեն չորրորդ տարին 366 օր կու համրեն, և նախնի տարի կ'անուանեն, մեկայլ երեք տարիներն ալ 365 օր և հասարակ տարի։ Իսկ Հայոց Թուականն նահանջ չունի, այլ ամեն տարիներն այլ հասարակ տարի են, բնական օրուան չափով, այսինքն տարին միշտ 365 օր կը համրէ. որով յայտնապէս ուրիշ հին ազգացնման՝ սխալ և շարժական է իր տարին և Թուականն ալ։ Սխալ է, վասն զի արևուն կամ երկրիս շրջաններուն չի յարմարիր, պակաս կու գայ. ամեն տարիէն 5 ժամ 49' պակաս հաշուելով՝ դարերու մէջ արեգակնային շրջանը մեծապէս կարձնցուցած կ'ըլլայ. անանկ որ երբոր երկիրս 1460 անգամ արևուն վրայ կու պտտի ստուգիւ՝ ըստ յուլիան և նոր տումարի, հինն կամ հայն՝ 1461 պիտի համրէ. կամ Թէ ուրիշ կերպով ըսեմ, երբ հայն և լատինն այս տարիս մեկտեղ սկսելու ըլլան՝ իրենց տարեգլուխը նոյն ամսոյն նոյն օրը սեպելով, յետ 1460 անգամ երկրիս շրջապատութեան զարեգակամբ՝ լատինն կամ նոր տումարն նոյնքան տարի կ'ունենայ, իսկ հայն մեկ տարի մ'աւելի. որովհետև իրեն տարին քանի մը ժամ կարճ է. իրարանցիւր տարիէ Թողուած ժամերն՝ ամեն չորս տարուան մէջ օր մը կու կազմեն, 1460 տարուան մէջ ամբողջ 365 օր կու գումարեն. հայն այս 365 օրն ալ՝ (որ իր տարուոյն սովորական չափն է) կ'աւելցնէ Թուականին վրայ նոր Թուով մը. իսկ լատինացին այս 365 օրը ցրուած ըլլալով ամեն չորս տարուան վրայ (փետրուարի ետևը օր մ'ա-

.ելցընելով) 'ի հարկէ 1461 համբելու տեղ՝ 1460 պիտի համրէ։ — Արդ յայտնի է որ այս հին տարեւոյն կարգուելթիւնն՝ թուականին շարքը կ'աւելցընէ. որուն աւելի պայծառ օրինակ է մահմետականաց տարին՝ որ ալ աւելի կարգ է, լուսնական ըլլալով. այսինքն լուսնի 12 անգամ փոփոխուելթիւնն համրելով, որ կու գուժարին 355 օր, և արեգակնային շրջանէն 10 կամ 11 օր պակաս տարի մը կ'ունենան, որով իրենց թուականն (հիճրէթն) շուտով կ'ածի. մեր 97 տարուան ծերն՝ ըստ Տաճկաց լման 100 տարուան կ'ըլլայ, և իրենց երկարակեացներն՝ մեր չափով քիչ մը կու կարձընան։ — Արդ ինչպէս որ այս լուսնական տարին պակաս և յայտնի սխալ է՝ ելթէ համեմատենք երկրիս բոլորմանը արեւուն վրայօք. այսպէս այլ Հայոց տուժարին տարին (թէ և պակաս սխալ), վասն զի կ'ընդունի արեգակնային տարի՝ բայց ճիշդ չափովը չընդունիր. պակաս կու հաշուէ։

Ոչ միայն սխալ ըսի այլ և շարժական կ'ըլլայ տարին։ Անն քիչ շատ երկինքը և երկիրը դիտող ազգք և մարդիկ, երկրագործք անգամ, և մանաւանդ ատոնք, հնուց 'ի վեր ճանչցեր են արեւուն տարեկան շրջանը, և անոր երկու անգամ գիշերահաւասարը և երկու անգամ կացքը կամ դարձքը, ցորեկուան և գիշերուան ժամուց երկարելթեամբը և կարճուելթեամբը. երբոր այս բաներս՝ որոնց կեռ կ'ըսենք ուսումնական լեզուաւ՝ ուզենամք հաստատել ամսոց օրերուն վրայ (ինչպէս որ 'ի սկզբանէ հաստատուած են 'ի դիտողաց կամ յաստղաբաշխից), յուլիան կամ նոր տուժար բաներընդունողին՝ միշտ նոյն ամսոյն նոյն օրը կու հանդիպին այն կէտերն, իսկ Հայոց տուժարին՝ չորս տարին հեգ մը օր մ'առաջ կու հանդիպին. ինչպէս, ելթէ յաժին Քրիստոսի (1870) գալնանամուտն

կամ գարնանային գիշերահաւասարն իր մեհեկան ամսոյն 26ին կու հանդիպէր, ինչպէս որ նաև 1868ի, 1869ի, 1871ին, յամին 1872 մեհեկանի 25ին կը հանդիպի, 1876ին մեհեկանի 24ին, և այսպէս կարգաւ. վասն զի չորս տարին հեղ մը նահանջ չընելով, օր մը չաւելցընելով, իր ամիսներուն օրերն առաջ կ'անցնին, և չեն միաբանիր արեգականային կէտերուն. այնպէս որ 1460 տարուան մէջ այս կէտերը Հայոց տարւոյն ամսոց ամեն մէկ օրերուն ալ հանդիպած կ'ըլլան կարգաւ. կէտերն տեղերնին կու մնան, բայց ամսուն օրերն անոնց վրայ կու փոփոխուին։ Ահա այս է ըրդոլան ըսուիլն մեր տուամարին. և որովհետև մեր ամիսներն և տարին միշտ (չորս տարին հեղ մը) առաջ կ'անցնին քան գյուլեան կամ նոր տուամարը, անոր համար այլ մեր տուամարն կամ տարին կ'ըսուի յառաջխաղաց։

Բայց եթէ միայն այս փոփոխութիւնս ըլլար մեր և նոր տուամարին տարբերութիւնն՝ մեծաս կամ պակասութիւն մը չէր ըսելն, թէ գարնանամուտն մեհեկանի 25ին է կամ 30ին, կամ նաւասարդի 5ին, և այլն. անունն կը փոխուէր, իրն նոյն կու մնար։ Սակայն մեծ մեծաս և շփոթութիւն կ'ըլլայ այդով. վասն զի ամեն տուամար հաստատուած է երկու մեծ և գլխաւոր բանի համար. մէկն երկրիս կու վերաբերի, մէկայլն երկնից. ասիկայ մարդուս կրօնից կամ ապագայ կենաց, անիկայ՝ երկրաւոր կենաց և ապրուստին համար. մէկով երկրագործութիւն կու կանոնաւորի, մէկայլով կրօնական պարտք և կարգք։ Երկրագործին համար հարկ չէ որ ամիսն այսպէս կամ այնպէս սնուանի, կամ՝ այսչափ և այնչափ թուով օրեր ունենայ, այլ հարկաւոր է որ այն օրերն, կամ թէ տարւոյն իւրաքանչիւր օր այլ՝ արեգականային շրջանին մէկ որոշ կէտն մը վրայ հաստատուած ըլ-

լայ. վարուցանի, նաւարկութեան, և ուրիշ շատ բանի համար՝ հարկաւոր է արեւուն շրջանը գիտնալ. թէ որ ամսոյն որ օրը կ'ելլայ գարնանամուտ, երբ հովոց և ձեան եղանակներն, երբ զով օրեր, և այլն. որ ըստ այնմ իւրաքանչիւր բնական արուեստաւոր իրենց գործը շարկեն, և կատարուի կենցաղական անհեռութիւնն՝ իր յարմար և հարկաւոր ժամանակին. և ինչպէս մէկ օրուան գործոց անհեռութիւնն կու չափուի ժամացուցի մը վրայ, այսպէս այլ ամբողջ տարեկան ժամացոյց կամ օրացոյց պէտք է։ Արդ այս ժամուց և ժամանակաց կէտերը՝ միայն երկինք նայելով չի կըրնար գտնել. ամեն արուեստաւոր. շատ քիչերն կան որ կարենան արեգակնային շրջանին փոփոխութիւնները չափել և ճշդել. հարկ էր որ հասարակաց համար այն փոփոխութիւններն, այն կէտերն՝ տումարի վրայ աւնուին, այսինքն քաղաքական տարուոյ ամսոց օրերուն վրայ համրուին. և ըստուի թէ այս ամսոյս այս օրս՝ արեգակն՝ երկնից (կամ կենդանակամարին) շրջանակին այս որոշեալ կէտն է, այն օր՝ այն կէտը. և թէ՝ երբ արևն այն կէտին վրայն է՝ այն օր ցորեկն այսչափ ժամ, գիշերն այսչափ ժամ կ'ելլայ, և տաքութիւնն ու ցրտութիւնն (ընդհանրապէս) այսչափ աւելի կամ պակաս։ Արդ այսպէս հանելու և ըսելու համար՝ հարկ է անշուշտ որ այս օրս կամ այն օրն այլ իրենց յատուկ անուններն ունենան. և ասոնք են ամիսն և իրենց (աւուրց) քանիերորդքն. — ուրեմն հարկ ալ է որ ինչպէս իր արեգակնային շրջանին կէտերն հաստատուն են ('ի կենդանակամարին)՝ նոյնպէս տումարին վրայ այլ հաստատուն ելլան. այսինքն տումարին կամ ամսոց ամեն մէկ օրն՝ արևու շրջանին մէկ մէկ կէտին հետ հաստատ կապուած ելլայ. և այն աստեղն հաստատ և անշարժ կ'ելլայ և կ'ըսուի տու-

մարն և օրերուն երկայնութիւնն. ապա թէ ոչ՝ ոչ միայն շարժուն այլ և չփոթ. եղանակք տարւոյ և օրերուն չափն (կարճութիւն կամ երկայնութիւն) որոշ անուն և նշանակ մը չեն ունենար. կամ աւելի պարզ ըսելով, ամիսներն և իրենց օրերն ամենևին բան մը չեն նշանակեր, բաց՝ ի թուէն. վասն զի գարնանամուտն՝ որ հիմայ մեհեկանի կամ արեգի մէջ կու գայ, առեն մ՝ալ ահկի ամիսը կու գայ, առեն մը քաղոցի, և այլն. ամեն կէտ ամեն ամոյ ամեն օրուան կու հանդիպին զանազան տարիներ։ Ասով երկրագործաց և նմանեաց արուեստից չփոթութիւն կ՝ըլլայ, որ օր ընելիքնին չեն գիտնար. և ինքն իրեն հարկ կ՝ըլլայ որ հաստատուն տուամար կամ օրացոյց մը բնտրուէն։

Նոյնպէս եկեղեցական տարին այլ հաստատուն տուամար մը կ՝ուզէ անհրաժեշտ. վասն զի ինքն այլ երկրագործի և ատաղաբաշխի պէս, և այլ աւելի, տարւոյն ամեն մէկ օրը իմանալի երկնից մէկ մէկ կէտին՝ այսինքն յիշատակի հետ՝ կապած է. և գարձեալ կ՝ուզէ որ այն կէտերն այլ արեգակնային կէտերուն յարմարցընէ, որպէս զի անմոռաց և անչփոթ կարգաւ կատարէ իր գործը։ Ասոր գլխաւոր պատճառն այլ բնական և յայտնի է. որովհետև իր յիշատակներն ըստ մեծի մասին երկրիս վրայ և որոշեալ օր մը հանդիպած են, կ՝ուզէ որ ամեն տարի նոյն արեգակնային հաստատուն օրուան մէջ հանդիպածը՝ գարձեալ նոյն օրը՝ նոյն կէտին անփոփոխ կատարէ։ Օրինակի համար. տեառն մերոյ Քրիստոսի մարդեղութեան օրը, կամ Ծնունդը, կամ Քառասնօրեայ՝ ի տաճար գալը, կամ Տիրամոր ծնունդը, Ընծայումը, Վերափոխումը, կամ Առաքելոց և Լուսաւորչոյ նահատակութեան և մահուան օրերը՝ ճիշդ նոյն եղանակին նոյն օրերուն կատարէ։ Այդ եթէ այս

յիշատակներս մեր Հայոց անհասատատ ոսմարին օրերուն վրայ հասատատէր և ըստ այնմ ասնէր, ի՞նչ կ'ըլլար. — օր մը Մեռունգը ձմեռուան խորը կու ասնէինք, օր մ'այլ ամառուան տաքերուն։ Վերափոխումը՝ մէկ մը շնկան օրերը, մէկ մը ձիներու մէջ. ըստ այսմ ամեն ասնէր և յիշատակներ այլ անդադար և անպատճառ կու փոփոխէին։

Ոչ ոք յանձն կ'առնու այս բանս. տեղ մը և ե. կեղեցի մ'այլ չկայ՝ որ յանձն առած ըլլան։ Ասել է որ շարժուն և անհասատատ տումար ունեցողք այլ՝ այս բանիս համար հասատատուն կերպ մը տումար մը բնառած և ընդունած են. նոյնպէս այլ երկրագործութեան և ուրիշ կարևոր արուեստից և քաղաքական կարգաց և հանգիսից համար՝ պէտք է որ հասատատուն տումար մ'այլ ունեցած ըլլան այն ամեն ազգք և ժողովուրդք՝ որք չափաւոր քաղաքականութիւն և կրթութիւն մ'ունեցեր են, ինչպէս մեր Հայոց ազգն այլ՝ շատ գարերէ առաջ։ Ուրեմն մեր ազգն այլ իր շարժուն քաղաքական տումարէն զատ՝ անշարժ, հասատատուն և հին տումար մ'ունեցեր է. տումար մը կրօնական, երկրագործական և քաղաքավարական, որով և հասատատ ժամանակագրութիւն մը։

Ահա այս տումարս և ասոր սկիզբը, և մեր ժամանակաչափութեան կամ թուականին հասատատուն և հին կէտը՝ կ'ուզեմ գտնել և ցուցընել քեզի այսօր, Հայկակ։

Բ

Եկեղեցական կարգաց նկատմամբ՝ հասատատուն տումարի պէտքն միանգամայն հասատատութիւնն՝ արդէն ծանօթ էր քեզի, և գիտէիր որ մենք մեր շարժական տարիին զատ՝ եկեղեցւոյ համար ունիմք անշարժ յուլիան տումար մ'այլ՝ որ Յայտ.

սաստիպ կ'ըսուի, այս տօնական կամ սրբագիր գրոց մէջ գործածուած ըլլալուն համար. հոն տարուոյն ամէն մէկ օրուան վրայ հաստատուած են տօնք սրբոց և տէրունականք, ըստ օրինակի Յունաց և Լատինաց, և միշտ անշարժ կու մնան տօնք, նահանջ այլ ընելով, աւելեաց 6 օրիրուն վրայ վեցերորդ մ'այլ դնելով ամէն չորս տարի, (փոխանակ փետրուարի վերջը)։ Ահա ուրեմն ունինք եղեր հաստատուն տարի մ'այլ. սակայն այս Յայսմաւուրաց կարգաւորութիւնն շատ հին չէ. Ժգ դարուն մէջ շինուած են մեր հիմայ ունեցած Յայսմաւուրքն։ Բայց տօնները այսպէս հաստատուն աւուրց վրայ բաժնող և կարգաւորողն՝ դար և կէս այլ առաջ եղած է, մեծ գիտնական և սոփեստէն Յովհաննէս Սարկաւագ վարդապետն. որ յամին 1116 նորոգեց տումարը, և այս հաստատ կերպը դրաւ. նոր թուական մ'այլ սկսելով Քրիստոսի 1084 տարիէն, որ ըսուեցաւ Փոքր կամ Մեծ։ և էր Հայոց թուականին 533 տարին. վասն զի այն տարի՝ ըմբնցեր էր հինգհարիւրեակ ըսուած 532 տարուան շրջանն, սկսուած մեր մեծ թուականին հետ (յամին Քրիստոսի 532). և երբ նորէն տօնից շփոթութիւն կ'ըլլար, Սարկաւագ՝ մանր և յատակ քննութեամբ տումար մը գրեց, ցուցուց սխալմանց պատճառը և. հարկաւորութիւնը նոր և անփոփոխ դասաւորութեան տօնից, զոր և ըրաւ. և այնուհետև գործածելի եղաւ, և իր անուամբ կոչեցաւ Սարկաւագիր։ Իր, կամ Յայսմաւուրաց հաստատուն տարին կու սկսի 'ի 11 օգոստոսի (ըստ հին տումարի, ըստ նոր տումարի հիմայ 23ին). այս տարեդլխին օրուան պատճառը քիչ մը վերը կու տեսնենք։

Յառաջ քան զՍարկաւագ ի՞նչպէս կու վարէին եկեղեցականք. – յայտնի է որ հինգհարիւրեակ

կամ 532 տարուան շրջանով, որով ամեն եկեղեցիք այլ կու վարէին. — սակայն գիւրութեան համար միշտ կու վայլէր պարզ հաստատուն տուամար մ'ունենալն, զոր մեր առաջին տուամարագիրքն՝ Ներսէս կաթուղիկոսի տաւն, յամին 553, չէին դրած. բայց անկարելի էր որ իրենք այլ չունենային՝ թէ և անկատար՝ մէկ որոշ կանոն մը, կամ քանի մը հաստատուն օրներ. անկարելի էր որ իրենցմէ դար մ'առաջ եղած Թարգմանիչք մեր և անոնց աստուածաշնորհ առաջնորդքն Սահակ և Մեսրովպ, ամեն ազգաց գիտութեամբ հմտացեալքն՝ կարգաւոր տուամար մը չունենային, գոնէ եկեղեցւոյ մէջ։ Եւ յիրաւի կու գտնեմք որ, ա. կան հին տօնացոյցներ կամ հին կարգաւորութիւն տօնից՝ զոր Ս. Սահակ գասաւորած է, ըստ վկայութեան նախնեաց, որոց մէջ երկու կերպ գասաւորութիւն կայ. մէկ մը ըստ ամսոց Յունաց կամ Լատինացւոց, այսինքն մասն մի տօնից՝ յուլիան տուամարին ամսոց վրայ հաստատուած, մաս մ'այլ հին Հայոց ամսոց վրայ. և ինչպէս առաջինք՝ այսպէս ասոնք այլ անշարժ են, և ասոնց տարեգլուխն (կամ առաջին ամիսն նաւասարդ) այլ՝ Սարկաւագայ պէս օգոստոսէն կու սկսի. ըսել է որ Սարկաւագ այլ Ս. Սահակայ հեռաւեր է։ — Բ. Ս. Սահակայ աշակերտաց Թարգմանած գրոց մէջ քանի մը տեղ յոյն կամ եբրայեցի հաստատուն օրերուն գիմաց՝ Հայոց ամսոց օրեր գրուած են, ըսելով, «որ է հայերէն» այս ինչ ամիս և այս քանիներորդ օր ամսոյն։ Արդ եթէ հաստատուն հայ տարի մը չենթադրէին՝ չէին կրնար այնպէս ըսել. և հաստատուն տարի մ'ենթադրելնին յայտնի է անով՝ որ այն յուլիան տուամարի պատշաճեցուցած օրերնին՝ կամ Ճիշդ Սարկաւագաթիր կարգին, կամ Յայտնութեանց տարեւոյն օրերուն կու համաձայնին, կամ

անանց մօտ։ Անոնց մօտ ըսածս այս է. մեր նախ-
նիք երբեմն Յունաց կամ Ասորւոց գրքեր թարգ-
մանելու առեն՝ ամսոց օրերուն համեմատութիւ-
թիւնը դիւրացընելու համար ուրիշ ձար չեն գը-
տած, բայց եթէ միացընել մեր և անոնց ամսոց
սկիզբները, այսինքն առջի օրերը. այսպէս, արե-
գի, մարտի և նիսանի մէկերը մէկտեղ սկսելով,
նաւասարդի, օգոստոսի և իլուլի մէկերը մէկտեղ.
և այլն [1]։ — գ. Երբեմն ալ մեր նախնիք փոխա-
նակ արեգի՝ նաւասարդը զուգած են ընդ մարտի
և նիսանի։ Ասել է ուրեմն՝ որ Սարկաւագէն 700
տարի առաջ այլ՝ մեր գրոց թարգմանութեան ա-
ռեն՝ նոյն օրինակով հաստատուն հայ տարի մը
կու ճանչցուէր՝ շարժականէն կամ քաղաքակա-
նէն զատ։

Կու մնայ գիտնալ թէ հապա յառաջ քան զՍ. Սահակ՝ իր նախորդ և հաւասարութիւն հայրա-
պետքն, մինչև 'ի Ս. Լուսաւորիչն, թէ տումար
կու բանեցընէին եկեղեցւոյ տօնից. կամ անկէ ա-
ռաջ՝ Տրդատ հայրենասէր մեծ թագաւորն, իր
Արշակունի նախնիքն, և անոնցմէ առաջ մեր բը-
նիկ Հայկազունքն՝ թէ ինչպէս կու տօնէին իրենց ազ-
գային տօնները, զոր 'ի հարկէ ունէին. և արդէն
գիտենք անոնց մէկ քանին, ինչպէս Նաւասար-
դաց կամ Ամանորայ (նոր տարւոյ) տօները, Ա-
տրազկան տօնը, Վարդավառի տօնը, և այլն. որոնք
իրենց առաջին ամսոյն (նաւասարդի) մէջ կու
կատարուէին, ծառոց ծաղկանց և ջուր ցանելու

1 Օրինակ մը. Յառաջաբանն Աւաքելական կանոնաց կ'ըսէ. «Յաքն 339 իշխանութեան Յունաց.. որ օր լրս
» էր մարդոց ամսոյ, յաւուր միաշաբաթոջ, որ է կատա-
» րուն Պենտակոստէից»։ Թուականն է Աղեքսանդրի,
կամ Սելևկիացւոց 311 տարին, Քրիստոսի 30 թուականն.
Հոգեգալստեան կիրակին լրս յունիսի։

կամ ջրոց մէջ լողալու խաղերով. – գիտենք այլ որ Հայաստանի մէջ այսպիսի խաղեր՝ տարուոյն միայն քանի մ՚ամսոց մէջ կրնան կատարուիլ, երկրին երկարատև ցրտութեանը համար. – անկարելի էր որ այն տօնելն շարժական տարուոյ օրերու վրայ կապուէին, և յայտնի այլ է հաստատուն օրերու վրայ գրուած ըլլալնին. իրենց տարեգլուխն և նաւասարդն այլ՝ յուլիան տարուոյ օգոստոսի 11ին էր։ Եւ որովհետև անառարակոյս գիտենք որ քաղաքական շարժուն տարին այլ մի և նոյն հայկական 12 ամիսներով և աւելեաց հինգ օրերով կու բաներ. հարկ է ըսել թէ ուրիշ հին գիտուն ազգաց պէս երկու տարի ունէին, մէկն քաղաքական, միւսն սրբազան՝ որ էր հաստատուն. և անառարակոյս ասոր սկիզբն էր հինգ ամսով մ՚առաջ, տրէգ ամսէն սկսելով, որուն անունն՝ կու նշանակէ զարև. և կու սկսի բուն արեգակնային ըսուելու վայելուչ օրէն, այսինքն գարնանամուտէն (յ՚9-21 մարտի). և ասով այլ նաւասարդի գլուխն կամ քաղաքական տարեմուտն՝ նոյնպէս Ծիշդ օգոստոսի 11ին (23ի) կու հանդիպի։

Գ

Տարին գարնանամտին օրը սկսելն (ինչպէս որ Հրեայք և Պարսիկք այլ կ՚ընէին իրենց կրօնական կարգաց համար՝) շատ վայելուչ և բնական է, և մեծ պատիւ կ՚ընէ անոր՝ որ զայս նախ գըտաւ և գրաւ. եթէ ըլլայ Մովսէս մարգարէն՝ ըստ Հրէից, և եթէ ըլլայ Իրմէ աւ հին մէկը՝ զոր Հայք իրենց ազգին այլ, տուտարին այլ, ամենայն պարծանաց այլ հնագոյն և նահապետ կու Ճանչնան։ Այս ինչու քաղաքական օրինաց նաւասարդն՝ օգոստոսի 11ին ըլլայ գլուխ տարուոյ և աշխարհաժողով տօնիս. անանկ օր մը՝ յորում արեգակ-

նային շրջանին մէջ նշանաւոր կէտ և հանդիպումմը չկայ։ Ո՞վ էր գրած այս կարգը, զոր մեր Ս. Թարգմանիչք այլ բաներ են, Սարկաւագն այլ, Յայսմաւուրք այլ պահեր են. և որ մեծն է՝ Հայոց մեծ Թուականը հաստատողն այլ նոյնպէս անփոփոխ Թողեր են. վասն զի իրենց տումարը նորոգելուն և Թուականը կարգելու տարին՝ ամենևին չգպան տարեգլխոյն, որ այն տարի յուլիսի 11ին կու հանդիպէր, այսինքն Հայոց քաղաքական շարժուն տարւոյ գլուխն կամ նաւասարդն՝ Քրիստոսի 552 Թուականին՝ կու սկսէր ի 11 յուլիսի։ — Արդ Թէ որ իրենցմէ, և նաև մեր Թարգմանիչներէն առաջ Հայ տօմարագիր մը բնտռենք, ասոնցմէ 300 տարի վեր եղնելու է, մեր բազմահանդէս ր Արտաշիսի օրերը. վասն զի Թէպէտ մեր Արշակունեաց նախահայրն Վաղարշակ՝ շատ գեղեցիկ կարգեր և սովորութիւններ հաստատեր էր ի Հայս, կ'ըսէ Խորենացին (Բ. ԽԹ.) բայց չէր գրած «զաբաթուց և զամսոց» և զտարեաց բոլորմանց» դիտնական և օրինաւոր կարգ մը. այլ «այս ամենայն յօրինի յտ» ւուրս Արտաշիսի»։ Ասոր Թոռն այլ Վաղարշ կարգեց նաւասարդի նոր տարւոյ տօնները աշխարհախուռմբ հանդիսիւ կատարել ի Բագրեւանդ, իր հօրեղբօր Մաժան քրմապետին գերեզմանին և բագնին քովերը [1]. բայց ոչ սա և ոչ իր պապն Արտաշէս՝ չեն Հայոց բնիկ տուումարը և ազգային տօնը կարգադրողքն. մանաւանդ Թէ Արտաշէս կերպով մը խափանած կ'երևի Հայկազանց կարգադրութիւնը, Թէ և աւելի կանոնաւոր տուումար մը մտցընելով. որ էր անշուշտ յուլեան տուումարը, առնելով ի Հռովմայեցւոց. վասն զի գիտեմք ի պատմութենէ՝ որ առաջին ինքն եղաւ Հռով-

1 Խորեն. Բ. ԿԶ։

մայնցուց հարկատու. իր առեն կայսրն Տրայիանոս՝ զՆայասատան Հռովմայեցւոց ինքնակալութեան գաւառ անպեց. (թէ և քանի մը տարի եւ քը Ադրիանոս կայսր՝ նորէն կէս ազատ թողուց). այն առեններեր նաև Կապպադովկացիք՝ (որոնց հին ազգարն և ամսոց անուանքն մնացեր են Պարսից և Հայոց) ընդուներ էին Հռովմայեցւոց տումարը. ըսել է որ Արտաշիսի ըրած տումարի կարգադրութիւնն այլ. ի 122 թուին Քրիստոսի. էր Հռովմայեցւոց տումարին համաձայնութիւն մը, թողով ըստ մասին հին Հայկազանց կարգը և ժամանակաչափութիւնը։ Այս բանիս վկայ կ'ելլայ հնախոյզ և բազմահմուտ Սարկաւագն մեր, որ կ'ըսէ, թէ « հաւասարապէս ի հին ամ Քրիստոսի » աւարտ առ Թոռոնն Հայոյ ». թուականին աւարտիլն՝ ոչ լմընալ՝ այլ ի հարկէ գադրիլ իմանալու է. իսկ Հայկայ թուական ըսածն այն է՝ զոր աւելի յարմարապէս յետոյ կ'անուանէ ՀԱՑԿԱՑ ՇՐՋԱՆ. որ և մեր անշարժ և շարժուն տարիներուն և հին և հնագոյն տումարին ծանօթութեան պատճառ և առիթ պիտի ելլայ հոս։

Վերը յիշեցի որ մեր թէ շարժուն և թէ անշարժ տարւոյն սկիզբն կամ նաւասարդի գլուխն կ'ընկնայ յուլիան տումարին օգոստոսի 11ին (նոր տումարի 23). այս բանս մեկէն կ'իմացընէ որ առեն մ'եղած է որ երկու տեսակ տարիներն այլ նոյն մեկ օրն սկսած են, երկուքին նաւասարդքն այլ ի 11 օգոստոսի են եղեր, և երեք տարի միաբան երթալով՝ չորրորդ տարին շարժուն կամ քաղաքական տարին՝ սկսեր է ի 10 օգոստ. յետ չորս տարւոյ այլ՝ յ'9 օգոստ. և այսպէս ամեն չորս տարի օր մ'առաջ սկսելով՝ հեռացեր և կանխեր է քան զանշարժ տարին։ Արդ ըսինք որ Հայոց տումարին սկզբնաւորութեան տարին (552 Քրիստոսի) նաւասարդի մեկն ի յուլիսի 11ին էր, Հիշդ

ամիս մը կամ 31 օր առաջ քան զանշարժ տարին. ըսել է որ 31 անգամ նահանջ չընելով չորս տարին հեզ մը՝ այսպէս յառաջացեր էր քաղաքական տարին. արդ 4 անգամ 31 տարին կուգումարեն 124 տարի. ըսել է թէ տումարին նորոգութենէն 124 տարի առաջ թէ կրօնական և թէ քաղաքական տարին նոյն օգոստոսի 11ին սկըսած են, որ էր Քրիստոսի 428 տարին. (վասն զի 124—552=428)։

Ա՛լ աւելի վերը յիշեցի որ մի և նոյն ամսոյն օրն՝ արեգակնային կամ երկնից նոյն և մի որոշ կէտին հանդիպելու համար՝ պէտք է 1461 անհաստատ և 1460 հաստատ տարի. ուրեմն որպէս զի Հայոց երկու նաւասարդքն՝ կամ երկու տարեգլուխքն այլ իրարու հանդիպին, մի և նոյն օրը սկսին, պէտք է որ 1460 նահանջաւոր կամ 1461 աննահանջ տարի անցնի. կամ աւելի ուստուգապէս ըսելով 1460 տարեկան շրջան մը։ Արդ ինչպէս քիչ մ՝առաջ տեսանք՝ մեր այս երկու տարակ տարիներուն զուգաւորութիւնն եղած էր 'ի թուին Քրիստոսի 428 (11 օգոստ.). անկէ ետև գեռ չէ հանդիպած, բայց մօտ է հանդիպելու՝ յամին 1888. որով կու լրանայ շրջան մ՝այլ (1460 ամաց) մեր թարգմանչաց օրէն մինչև 'ի մեզ. իսկ անկէ (428էն) առջի 1460 ամայ շրջանն սկսած էր յամին 1032 նախ քան զթուականն Քրիստոսի. անկէ առջի շրջանն այլ բնականապէս (1460 տարի աչ առաջ) յամին 2492 նախ քան զթիւ Քրիստոսի։ Ահա այս շրջանս է ԵՐՋԱՆ ՀԱՑԿԱՑ, և այն Քրիստոսի թուականէն առաջ 2492 տարին՝ է ԹՈՒԱԿԱՆՆ ՀԱՑԿԱՑ, որ և կրնայ ըսուիլ արժանապէս՝ ստուգագոյն և փաստաւորագոյն ՀԻՆ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՑՈՑ, և սկիզբն ժամանակագրութեան. որոյ սկիզբէն մինչև հիմայ (Քրիստոսի 1870 թուականին) կ՝ըլլայ 4362 տարի։ Այս է

տարիք Հայոց ազգիս մինչև հիմայ, որուն նման հաստատ Թուականով՝ բաց ի Հրէից, Զինաց և ի Հնդկաց՝ հիմայ չկայ ուրիշ հին ազգ մը։

Դ

Բայց այս պարծանքս կամ գիտութիւնս ապացուցանելու համար նաև օտարաց առջև, պէտք է հաստատենք քանի մը փաստերով և աւանդութեամբք այլ. ի վերայ երկու փաստիցն զոր հիմայ յիշեցի. այսինքն, մէկ մ՚որ մեր երկու տեսակ տարիներուն զուգաւորութեան սկիզբն՝ կու հանդիպէր ի 1032 ամն նախ քան զՔրիստոս. և զի ազգերնուս հնութիւնն՝ յայտնի է թէ Քրիստոսէ 1032 տարիէն աւելի առաջ է, ապա անկէ առջի հանդիպութեանը տանելու է, որ է 2492ն։ Եւ երկրորդ՝ որ յայտնապէս Սարկաւագ վարդապետ հին տումարներէ և պատմութիւններէ քննելով հանչցեր, վկայեր և յայտներ էր այս Հայոց Շրջան։

Ուրեմն մեր Թուականին և շրջանին սկիզբը գտնելու համար, քննենք թէ ինչու արդեօք Հայոց նոր տարին 11–23 օգոստոսի հաստատուած է. և ինչու Հայկայ շրջանն սկսաւ 2492 տարի Քրիստոսէ առաջ. վասն զի ոչ աստեղաբաշխական պարագայ մը և ոչ նոր եղանակ մը կու հանդիպին տարուոյն այն օրուանը վրայ. պէտք է ուրեմն ասոր պատճառը բնտռել պատմական դիպաց մէջ։ Եւ նախ օտարազգեաց մէջ բնտրելով ի հին պատմութեան, կու գտնենք իրաւացնէ Եգիպտացւոց մէջ (որ և միանակ կրնան հնութեամբ Հայոց հետ մրցիլ, և որոնց հետ դեռ ուրիշ շատ նմանութիւններ ունին՝ որ դեռ լաւ ապացուցուած չեն), կու գտնենք որ այն Նեղոսի ափանց բնակիչքն՝

իրենց այն բարերուղիս գեղոյն հարսանեաց տա-
րեկան հանդէսը՝ արդարև աշնանային գիշերահա-
ւասարէն ամիս մը առաջ կու կատարէին, որ է
Հիշդ 11–23 օգոստոսի, Հայոց տարեգլխին օրը։
Մեր ազգն ալ այս տարեգլխին հանդէսներուն
մէջ, կու տոնախմբէր հեթանոսութեան գարե-
րուն մէջ ջրհեղեղին յիշատակը, ինչպէս ինչուան
մեր օրերն ալ կու կատարուին՝ ջրի խաղերով և
աղաւնի թռցընելով 'ի տոնի Վարդավառին կամ
այլակերպութեան Քրիստոսի. վասն զի մեր սուրբ
հարք օգոստոս ամսոյն Եին հաստատած էին այս
տոնը, նոր տարիէն հինգ օր ետև. և նոյն օրը մեր
հեթանոս նախնիք նուիրած էին իրենց Աստղիկ
գիցուհւոյն. իսկ տարւոյն սկիզբն՝ ունէր իր առ-
անձին աստուածը։ Բայց թէպէտ և այս երկու
տոներն՝ եգիպտական և հայկական՝ թէ օրերուն
յարմարութեամբը և թէ յիշատակաց՝ յարաբե-
րութիւն մ'ունէին իրարու հետ, 'ի վերայ այսր
ամենայնի այս երկու հին ազգաց շրջաններն մեկ-
մեկու չէին հաւեմատիր, այսինքն նոյն օրը չէին
սկսիր ուշմիննար։ Այսպէս զուտ՝ այն հանդիսից տո-
նախմբութիւններն չեն ապացուցաներ օրուան ըն-
տրութեան պատճառը. վասն զի այն օրն չի միտ-
բանիր ոչ ջրհեղեղին սկզբանը և ոչ վերջանալուն
հետ, և ոչ Նեղոսին ջրոցն աճմանը կամ նուազ-
մանը, և ոչ Շնիկ աստղ արեգակնային ամբարձ-
մանը հետ. ապա ուրեմն ուրիշ պատճառ պէտք
է բնառել, թէ մեր Հայկայ շրջանին և թէ իր առ-
ջի օրուան համար։

Բայց նախ կարճ մը պարզեմ, Հայկակ, այս աս-
տեղաբաշխական յիշատակութիւնս. վասն զի ա-
մեն ստոյգ առումար և ժամանակի չափ՝ աստեղաց
շարժմամբք և շրջանաք կ'ըլլայ, Հայկայ շրջանն
այլ ծանօթ նաև ուրիշ ազգաց՝ ուսումնապէս կ'ը-
սուի Շնիան շրջան, կամ ըստ Եգիպտացւոց Սոթիս-

ման շրջան. իրենք Սոթիս կ'անուանէին Շնիկ աստղը, որ Շուն համաստեղութեանց մէջ է և Փոքր Շուն այլ կ'ըսուի, և քանզամենայն աստեղ պայծառագոյն է։ Իրենց երկրագործութեան համար ամենահարկաւոր էր գիտնալ Նեղոս գետոյն աճելու և նուազելու օրերը, սկիզբը և վերջը. և գիտելով գտան՝ որ աճման սկիզբն կ'ըլլար ամառնային արևագարձին առեն, և գտած առեննին Շնիկ աստեղ երևնալն այլ արևուն ելնելէն առաջ, (որ ուսումնապէս ուղիղ-ելոյն ամբոյժն կ'ըսուի) նոյն օրերուն հանդիպեցաւ. ուրեմն այն օրն իրենց տարեգլուխ դրին. բայց որովհետև իրենք ալ մեզի պէս քաղաքականօրէն շարժուն տարի կու գործածէին, որով ամենայն ոտնք և երկրագործութեան կարգեր կու փոփոխուին. հաստատ կրօնական և գիտնական տարի մ'այլ դրին աստեղաբաշխական քննութեամբք, և ճանչցան 1460 տարուան շրջանը. իրենց երկու տեսակ տարիներուն սկիզբն այլ կու զուգաւորէր Շնկան երևնալուն, արևագարձին և Նեղոսի ամբարձման հանդիպած մի և նոյն օրը։ Այս է Սոթիական կամ Շնկան շրջանն։ — Խառնանք հիմայ մեր յիշատակաց։

Մեր հին ատմարագիրք և Ցայսմաւուրք կ'ըսեն, թէ յետ խառնակութեան լեզուաց ամեն նահապետ կամ ազգապետ Բաբելոնէն գառնալով այն երկիրը ուսկից ելեր էր, կամ ուր որ կ'երթար գրաւելու, պատուիրեց իր հետևողացը որ առնխմբեն հայրենիքը մոռնալուն տարեգարձը։ Մեր Հայկ նահապետն ալ, կ'ըսեն, մեռաւ Այրարատ աշխարհքը կամ իր Թորգոմայ հօրը բնակած երկիրը՝ օգոստոսի 11–23ին, և հրամայեց որ նոյն օրը տարւոյն սկիզբն սեպուի։ Կու հաստատեն գարձեալ, թէ այս գիւցազնս առաջին և տարեցոյց տալու իր նորածին ազգին, զոր

և կու պահէ մեր ազգն մասամբ անփոփոխ, ինչպէս որ իրեն աւանդուեցաւ այն նախնական գաղիրուն մէջ։

Այս է ահա մեր մէջը օգոստոսի 11ին ամին պատճառն։ Երկրորդ և աւելի ստոյգ պատճառն է՝ Հայկայ գարձէն քիչ տարի վերջը՝ Բելայ յաղթութիւնն և սպանումն (որ եղաւ յամի 2492 Փրիստոսէ առաջ), ինչպէս որ ցուցուց հասարակ հայկական թուականին անընդհատ յաջորդութիւնն։ Մեր պատմութեան ժամանակագրութիւնն ալ (որ գժբաղդաբար բաւական ճոխ չէ այս հին ժամանակաց վրայոք), կ'ընծայէ մեզի թուական մը՝ Հայկայ թուականին ցուցածին մօտ։ Յովհաննէս կաթուղիկոս 'ի Հայկայ ցՎաղարշակ 2295 տարի կու գնէ. անկէ այլ մինչև 'ի Փրիստոս 149 տարի. գումարն է 2444, որով միայն 48 տարի պակաս կ'ելլայ քան զմեր թուականս (2492). բայց եթէ Հայկայ մահը սեպեմք կաթուղիկոսին յիշածը՝ կրնայ մերինին հետ ճիշդ համաձայնիլ։ Մեր խընդրոյն համար աւելի պիտանին այս է, որ հին օտար ժամանակագրութիւն ալ ամենայն ճշդութեամբ կու համաձայնի Հայկայ թուականին հետ. վասն զի Աֆրիկանոս և Եւսեբիոս իրենց մանրամասն թիւերովը Բելայ թագաւորութեան վերջը կու նշանակեն վերոյիշեալ 2492 տարին Փրիստոսէ առաջ[1]։ Այս համաձայնութիւնքս Հայկական թուականին՝ օտար ժամանակագրաց տուած թը-

1 Ասոնք Նինոսի թագաւորութեան տարին կու գնեն յ'2058նախ քան զՔրիստոս. անկէ այլ առաջ մինչև 'ի մահ Բելայ երկու լոր թագաւորաց կու գնեն՝ Արբացուց և Քազդեացուց, 440 տարի և 8 ամիս թագաւորած, իրենց տարիովը՝ որ էր 360 օր. որով 440 տարի և ութ ամիսն՝ կ'ելլայ 435 տարի և 5 ամիս. արդ 435 + 2057 = 2492. որ է մեր Հայկայ թուականն։

ւականին հետ, և վկայութիւնք մեր ասմարագրաց և Յայսմաւուրաց, կարծեմ բաւականապէս իրաւունք կու տան մեզի առանց տարակուսի ընդունելու Հայկայ շրջանին և մեր ազգութեան սկիզբը՝ Փրիսատոսէ առաջ 2492 տարին. և մեր ազգային գերագոյն տօնին համար՝ սգոստոսի 11-23ը. որ այդ Հայկայ թուականին առաջին տարին՝ կու հանդիպի չորեքշաբթի օր մը. որ և հաւանօրէն տարուէ տարի տօնելի օր մ՝ եղաւ Հայկազանց. և կըրնամք ընդունիլ մեր պատմչաց երկիւղած աւանդութիւնը, որք Հայկայ գործոց մէջ դիւցազնական քաջութենէ վեր բան մ՝ալ կու գիտեն, – կրօնական գիմադրութիւն մը, ազատութիւն մը 'ի բռնութենէ առաջին կառավարչին, կամ անոր՝ որ Աստուծոյ վայլած պատիւը և պաշտօնն՝ իր անձին կու սեպիանէր։ Ասոր համար այս տօնական օրս և հանդէսս պէտք է մեզի կրկնապատիկ սըրբազան և սիրելի ըլլայ։

Առաջին շրջանն Հայկայ լրացաւ Դաւիթ մարգարէի թագաւորութեան և մեր Պերճ (Բ) Հայկազին ազգապետութեանը ժամանակ, յամին (1032 նախ քան զՓրիսատոս)։ Իսկ երկրորդ շրջանն լրացաւ՝ զարմանալի հանդիպումներամբ՝ այն մեզի համար շատ ցաւալի տարին, յորում կերպով մը նաև ազգերնուս միանձնաքար ինքնակացութիւնն այլ լրացաւ ընկաւ, – յամին Փրիսատոսի 428, – ուրբաթ օր մը։ Այն սև տարին (428) էր որ մեր վերջի թագաւորն Արտաշէս Արշակունի՝ թագէն զրկուեցաւ, և Հայք իրենց ազգային միապետէն. այն տարիէն 'ի վեր Հայաստան երկու մեծ տէրութեանց մէջ բաժնուեցաւ (Յունաց և Պարսից), և ազգն երկու տերանց ծառայ կամ հպատակ եղաւ. և որ աւելի շատ զարմանալի է, անկէ վերջը ամբողջ Գ շրջան մ՝այլ լրանալու մօտ է (վասն զի 1442 տարին անցեր է), և

ազգերունիս միշտ նոյնպէս մնացեր է՝ երկու կամ իրենք մեծ տէրութեանց մէջ բաժնուած, թէպէտ և հազար ու մէկ քաղաքական փոփոխութիւնք և տիրապետութիւնք եղած են այս երկոյն 14 ու կէս դարուց մէջ թէ՛ի Հայաստան, և թէ իր մօտ աշխարհաց մէջ։ Այս Դ շրջանս՝ յորում եմք, սկըսած է շաբաթ օր մը. և պիտի լրանայ քիչ տարիներէ ետև՝ յամին 1888. յորում օգոստոսի 11-ջին հինգշաբթի օր մը պիտի սկսի Դ շրջանն. զոր ամենայն սրտով կու մաղթեմ քեզի, Հայկակ, և ամենայն քու ժամանակակից ազգայնոց՝ որ երջանիկ սկզբնաւորութեամբ ըլլայ, և օգտակար միաւորութեամբ մը բոլոր Հայազգեաց։

Ցետ այսչափ վկայութեանց աւանդութեան և պատմութեան և ազգային և օտար ժամանակագրութեան, զոր 40 դարէ՛ի վեր ամբողջ ազգ մը ընդուներ է, և հաստատեր են մեր հռչակաւոր մատենագիրներն և եկեղեցական Հարք, ոչէոք չէ վոյնլուչ սեպել, ընդունիլ և ուսնամիրել այսպիսի յիշատակ մը, ուսն մը, որ է Հայկայ. կամ յանդգնութիւն և անտեղութիւն չէ առասպել սեպել այն ամեն բաներ՝ որ պատմական ժամանակաց սովորական շրջանէն վեր կ'ելլէ. մանաւանդ երբ այնպիսի հին ժողովրդեան մը վրայ է խնդիրն՝ որուն պէտք է դիմել ամեն ժողովուրդ որ իր ծագումը բնաւէ, այսինքն մարդկութեան հայրենիքը. Նդեմայ երկիրը։ Ծխաելէն, չհաւանելէն դիւրին բան չկայ. բայց չկայ նաև աւելի դժուարին բան մը՝ քան զերաւամբք ծխաելը։ Իսկ ես կու հաւանիմ տեսանել, (նաև յանձն առնլով ամենէն անաչառ քննութիւնն ալ) մեր հայրենեաց մէջ յետ Ադամայ և յետ Նոյի՝ Հայկ մը, և կ'ուրախանամ իր հանդիսին վրայ, որուն չեմ ալ վոխնար հլաւիրելու բոլոր յաբեթական ցեղին սերունդները, որոնք այն հին ժամանակը չունէին

այնպիսի երևելի գլուխ մը կամ ներկայացուցիչ մը՝ ինչպէս էր մեր Հայկն։

Սակայն մի կարծեր, Հայկակ, թէ ինչ որ պատմութիւն կամ աւանդութիւն կու զրուցեն մեր Հայկայ վրայ, ամենն ալ կ'ուզեմ հաւատալի սեպել։ Անտարակոյս է որ Հայոց ազգն ունէր գլուխ մը կամ նահապետ մը՝ ժամանակակից Բելայ, Բաբելոնի աշտարակին շինութեան առեն, և այս շէնքին կործանմանէն վերջը՝ եկաւ ապաւինեցաւ Այրարատայ երկիրը, որ անկէ ետև իր անուամբը կոչուեցաւ։ Իր անունը, ըստ վրայ Հատոս, մեր մէջ կ'ըսուի Հատկ, որ ըստ քերականական կանոնի ընդունելի՝ Հա միավանկ բառին նուազականն կրնայ սեպուիլ. այս անուամբ կը ճանչնամք մենք մեր ազգը, և ոչ Արմեն կամ Արամեան, ինչպէս որ օտարազգիք կ'ըսեն։ Երբեմն մեր նահապետին անունն վերջագիր յօդովմը կը գրուի Հայկն, մանաւանդ երբոր զՄրիսն նշանակէ, վասն զի այսպէս կոչուած է այս համաստեղութիւնս՝ մեր սուրբ Դրոց և եկեղեցւոյ սուրբ և իմաստուն հարց գլուխածոց մէջ. որք հարկաւ առով ազգային հին աւանդութեան մը կու հետևէին, ուսկից հաւանական է որ Ցոյնք հնարած ըլլան իրենց Արիոնի առասպելները. ենթէ հարկ սեպելու ըլլանք որ այս երկու ազգերն (Հոյք և Ցոյնք) մեկը մեկալեն առած ըլլայ այդ աւանդութիւնը։ Եթէ կարծիք Ժողովրդական և ենթէ Հայաստանի վիպասանից շողոքորդութիւն, այս համաստեղութեան լոյսն նոր պայծառութիւն մը կու տայ Հայկայ իրական էութեանը վրայ. այս էութիւնս հաստատապէս կու ստուգուի շատ մը աշխարհագրական անուններով այլ, որոնց սկիզբն 'ի պատմութենէ և յաւանդութենէ կ'ընծայուին մեր գիւցազին։

Մանաւորապէս Վանայ հոչակաւոր բարձրա-

ւանդակին վրայ կը գտնուին այս հին տեղուան-
քը, պայծառացած Հայոց նահապետէն, որուն
զաւակներն պահեցին երկայն ժամանակ, գրե-
թէ 120 ծնունդ որդւոց որդի յաջորդելով՝ այն
անունները, և նաև երկրին առաջին շէնքերուն
ծնացորդները, որոնց մէջ հաստատած են ինչուան
հիմայ իրենց ընտանի բնակութիւնները։ Այս
բարձրաւանդակս արուեստով և բնութեամբ զար-
մանալի, աւելի գեղեցկացած է յաւերժ յիշա-
տակաց արժանի Հայկայ գործքերով, որ դեռ կը
հնչեն պատմութեամբ և աւանդութեամբ անուա-
նի եղած շէնքերու ծնացորդաց մէջ. ինչպէս են
նախ և առաջ ամրոցք գաւառաներ՝ որք լեռին
հիւսիսային և արևմտեան կողմը կը պատեն, որոց
մէկն կ'անուանի Հայկայ մէկ որդւոյն անուամբը
(Խոռ) Խոռխոռունիք, և միւսն իր թոռանը ա-
նուամբ (Բազ) Բզնունիք, ուսկից և լեռն կո-
չուեցաւ ծով Բզնունեաց։ Եռքը՝ Նէբրոթ-Լեռն.
տեղացիք կ'աւանդեն թէ Նէբրովթ ուզեր է լե-
բան գագաթը պալատ մը շինել, որ կործաներ է
վրէժինդիր կայծակներով. և ընկղմեր է լերան
վրայ բացուած վիհերու մէջ։ Այս լերան ոտքէն
դէպ 'ի հարաւային կողմը կը տեսնուի երկայն
շարք մը մեծամեծ ժայռերու զոր ռամիկն կ'ա-
նուանէ Ոգոյ Քարեր. վասն զի կ'ըսեն թէ Նէ-
բրովթայ ուղտերն են սոնք, որ լեռին եզերքէն
աւազ կը կրէին պալատին կամ բերդին շինու-
թեանը համար, և Աստուծոյ բարկութիւնն զա-
նոնք 'ի քար դարձուց. և հաւանօրէն լերան հրա-
բուխի սասակութենէն փրթած կամ ժայթքած
քարեր են։ Լեռին հարաւային կողմը Եպոս-
իոն բարձր լեռը կայ ջրերուն մէջ երկընցած,
հին սաւնէ 'ի վեր ճանչցուած իր երկաթի և կա-
պարի հանքերուն. ասոր հարաւային կողմը մին-
չև հիմայ Բէլ-, այսինքն Բելայ (որ է Նէբրովթ)

անուամբ գեղ մը կայ. աւանդութիւնն կ'ըսէ թէ այս հակային գիակը հոն իջուցին։ ԼՃին նոյն կողմը, բայց աւելի գէպ յարևելք ՏՀՂ գեղը կայ, ուր ըստ տեղական աւանդութեան, հակային մարմնոյն մէջէն Հայկայ արձակած նետը քաշեցին, և բացուած ծակէն արևուն Հառագայթներն կողմէ կողմ շողալով կը թափանցէին։ Քառասունէն աւելի ջուրեր, առաւել կամ պակաս երկայն ընթացքով՝ կը թափին ԼՃին մէջ. ասոնց ամենէն մեծն է Հորգոմայ գետը, որ հիմայ Խաշապ կամ Անգլայ գետ (ԼինՃք-չայ) կ'ըսուի, որուն ագբիւրներն թէպէտ և գտնուած չեն, այլ յայտնի է որ արևելեան կողմէն կու գայ և ԼՃին հարաւային արևելեան անկիւնը կը թափի. գեղի մը քովէն՝ ուսկից իր անունը կ'առնու՝ Հորգոմ։ Այս գետոյս լայն և ընդարձակ ձորը (որուն մէջ գետ ՄՕՀԷն աւելի հայաբնակ գեղեր կան՝ հին Հայկական անուններին պահած են. և քանի մը հատին վրայ կ'երևան խոր հնութեան նշանք Հայկայ ժամանակէն 'ի վեր), այս ձորս կը կրէ ամենէն սիրուելի և ամենէն սրբազան անունը բոլոր աշխարհի մը՝ որ գրեթէ Պաղեստին չափ ընդարձակ է, և կը կոչուի ՀԱՅՈՑ ՁՈՐ. անուն պարզ, միանգամայն և այնչափ վսեմ՝ ուսկից աւելին չէր կրնար տալ նորածին ազգի մը առաջնորդն և հայրն, որ առնսաւ այն հեռաւոր սահմաններուն մէջ իր կըտրիճ զուակները և թոռները պատերազմիլ իր քովը, աշխարհիս ամենէն ահարկու թշնամւոյն դէմ, սպասնելք զնա և վասաբերիլ առաջին յաղթութիւնը, որ և միանգամայն ամենէն օրինաւոր, ամենէն փառաւոր և ամենէն պիտանին եղաւ։ Այս զուտ հայկական ձորն 'ի վեր երթալով պատերազմական գաւշին կենդրոնը կը հասնինք. և ամենէն պատուելի յիշատակարաններու՝ որ են իրենք ...կիր կամ իրենք չենք ժամանակակիցք և համա-

նունք՝ հանդիպած գեղքերուն. նախ Հայ (Թէք) գեղն՝ ուսկից որ ժորն ալ իր անունը կ'առնու, մեր յազթող գիւղացին շինեց, նոյն իսկ պատերազմի ճակատին վրայ։ Անկից քիչ մը հեռու, գեղ 'ի հարաւ՝ Խրատաքալէն գեղը, որուն համար աւանդութիւնն կ'ըսէ, թէ հոս տեղս Աստուած երևցաւ Հայկայ, օրհնեց անոր աղեղը՝ որ եղաւ իրեն գործիք փառաց, իսկ իր հակառակորդին համար՝ զէնք մահու։ Պատմութիւնն կը ճանչնայ զՀայկ առաջին և ամենէն քաջ աղեղնաւոր։ Այս երկու գեղերուն մէջ կը գտնուի գերագոյնն յիշատակարանաց, այսինքն ՀԱՅԿԱՑ ՈՍԿԻՆ. ամեն կողմէ զատուած բլուրի մը գագաթան վրայ, և իբր հրաշքով մը դաշտին մէջէն բարձրացած. այս բլրոյն բոլոր կատարին երկայնութեան վրայ կը տեսնուի կործանած բերդի մը պարիսպ, որուն գետ իրեք կամ չորս կարգ մեծամեծ քարերն կը մնան, կիկլոպեան շինութեամբ մը, թէպէտ և կը գտնուին տաշածոյ քարեր այլ։ Երջանպատին մէջտեղը քարաժայռին մէջ խոռոչ մը կուտեսնուի, որ հաւանաբար ջրհորի տեղ փորուած է։ Եւրոպացի ճանապարհորդներէն դեռ ոչ ոք մօտեցեր է այս հնութեան տունին տեղւոյն՝ որ մարգկային յիշատակարանաց առաջին երեսին վրայ նշանուած է. օտարական մը չէ լսած այն խարհրդաւոր արձագանգքն՝ որ կը հնչէ Հայկայ գիւղաշնական ձայնը մինչև յետին որդւոցը ականջը։ Մարդ կը կարծէ թէ աստուածային արհաւիրք մը կը տարածուին հոն նախատահմանեալ ազգի մը սրբազան ծագմանը վրայ, և հանդարտ հոգի մը կու պարտի՝ այն ազգին նախահարցը ուրուականներուն հովանացեալ հովտին մէջ։ Ինչ ցնչ են այդ որոյցին և այդ ազնիւ և կարիճ ժողովրդեան աղբերակաց քով. — ՊԵՐԵԶՄԱՆՑ. և կրնամ ըսել մուտք և կորուստք խռովարար և

անգամ ժողովրդեան մ՚ալ։ Այն բլուրին ոտքը, ուր ինկաւ Թել իր ահեղ պատերազմողներուն, իր 60 հսկաներուն, հոն Հայկն իրենց վերջի բնակութիւնը փորեց, և անուանեց Գերեզմանք։

Իսկ ինքն կը կարծուի որ քիչ մը ժամանակ ալ բնակած ըլլայ Վան քաղքին քով. վասն զի այս քաղաքիս ընդարձակ պարտէզներուն և այգեստաններուն մէջ, որ գեղ՚ի արևելեան կողմը կը տարածուին, Հայոց անուամբ տեղ մը կայ, մօտ այն քարաժայռ բլրին՝ ուր շատոնց գտուած էին ձեռագործ այրեր և բեհեռաքանդակ արձանագրութիւններ. իսկ նորերս այս բլուրին ոտքը փորելով գտան մեծայարգ հնութիւններ, մեռելէ սամաններ՝ նոյնպէս բեհեռագիր ձեռերով, ոսկեզօծ կուռքեր, և նաև ձոյլ ոսկի գործուածներ, խեցեղէն անօթներ՝ անսովոր բազագրութեամբ, որոնց մէջ գտնուեցան սերմանիք սովորականէն աւելի մեծ հատերով, որոնց գոչելով փոշի դարձան։ Վանայ բարձրաւանդակին ծայրը, և իր արևելեան կողմը ձեռացընող լերանց պատուարին մէջ՝ որ հին ատեն Ջարասպ կամ Ջակրոս լերինք կ՚ըսուէին, կայ և Գեղեղն լեռը, որ պարսկերէն ըսել է կապոյտ սիւն կամ արձան, և 9,000 ոտք բարձր է, որուն քովէն հին ժամանակէ՝ ի վեր Ճամբայ մը բացուած է Հայաստանէն Պարսկաստան անցնելու. լերան գագաթը յիշատակարան մ՚ալ կայ բեհեռաքանդակ գրերով, և իր ոտքը կամ քովը գեղ մը՝ Հայ անուամբ, զոր ասորի մատենագիրք այլ յիշած են։

Բայց այս ամենայն տեղերս՝ որ մեր Դիւցազնին անունը կը կրեն, չէին իր հաստատուն բնակութիւնն, կամ սիրայաժար տեղերը և իր սիրական աթոռը. այս եռաքինս ուրիշ բարձրաւանդակ երկրի մը վրայ հաստատեց Հայաստանի կենդրոնին մօտ, և ոչ հեռու Արածանիէն (այսինքն հիմա-

կուան Մուրատ չայ գետոյն ակրիւրներէն, որ է արևելեան Եփրատ)։ Հայկ այս գաշտին այնպիսի անուն մը տուաւ, որ մեկալներց պէս լաւ յարմարած է, այսինքն անուանեց ՀԱՐԳ։ որպէս զի ցուցնէ թէ հոն հաստատեցան անոնք, որք Հայոց ազգին հայր եղան։ հոն տեղս տաւան մ'ալ չինեց, որուն հարկաւ իր անունը տուաւ, այսինքն է ՀԱՅԱՏԵՆ։ Գոնե գերմանացի ճանապարհորդը կը յիշէ այս գաշտիս մէջ (որ հիմայ Խնուս կը կոչուի) գեղ մը Հայկ կամ Փայկ անուամբ։

Ն

Կարծեմ, թէ այսչափ նիւթական յիշատակարաններ բաւական են հաստատելու Հայկայ էութիւնը, և հաւաստելու իր շրջանը և թուականը, հանդերձ առաջ ըսած պատճառներուս։ որովք մեր մեկ հին հեղինակ մը կու համարձակի զՀայկն հնագոյն քան զՄովսէս մարգարէ՝ տուամարագիր անուանել։ աւանդութիւնն այլ կ'աւելցընէ թէ Հայոց ամսոց անուանքն իր որդւոց և գաւառաց անուանքն ըլլան։ — գուցէ ըլլան ոմանք, բայց յայտնապէս բոլորն այլ չեն։ Սակայն պարծանք է իրեն, կամ իրեն յաջորդաց՝ և այդ Հայոց Շրջանը և Թուականը ճանչնալ, գնել և պահելը։ — պարծանք և պատիւ է մեր իմաստասէր Սարգաւագայ այլ՝ այս հին յիշատակս յարուցանելը Հայկէն 3600 տարի եաւ, և ցուցընել որ մեզի ծանօթագոյն Հայոց տուամար և թուական ըսուածէն առաջ՝ կար հնագոյն տուամար մը և հաստատ տարի մը Հայոց, որ կ'ըսուի հին գոմար Հայոց։ և այս բանիս համար Յովհաննէս Գառնեցի՝ մերձաւոր ժամանակաւ Սարգաւագայ՝ կ'ըսէ ասոր վրայոք։ «Այն՝ որ զգոմարն երևեցոյց զհին Հայն»։

Ահա այս հին Հային տումարին հաստատ ամսոցը վրայ էր որ շարեց մեր առաջին ասնակարգն՝ անմահանունն Ս. Սահակ՝ Հայոց եկեղեցւոյն սեփական սաղմերը, զատ ի Ցունաց առածներէն՝ զոր ըստ լատին ամսոց օրերուն գրաւ, անոր համար մեր ազգային ամսոց չարած սաղմերն ըստուեցան ՀԱՅԱԴԻՐ։ Այս անունս է որ երբեմն ես այլ կու բանեցընեմ քեզի պատմելու առանս մեր հին յիշատակները, զանոնք դնելով իրենց հանգիպած օրը ըստ հաստատուն տումարի։ Այս հին հայ տումարս կամ Հայադիրն անշուշտ պահուած էր ազգերնուս կրօնական և գիտնական գործոց մէջ. բայց ժողովուրդն քաղաքականօրէն շարժուն հասարակ տարիով կ'երթար. զոր մեր թարգմանիչք այլ ի հարկէ չէին կրնար փոխել. բայց նորոգողքն տումարի յամին 553 կրնային գոնէ եկեղեցւոյ սաղմերը անշարժ տումարի վրայ հաստատել, և չբրին, անոր համար յոմանց շատ կու մեղադրուին։ Վերջապէս Սարկաւագ վարդապետ, ինչպէս ի սկզբան ըսի, այս հաստատուն կանոնը գրաւ սրբոց սաղմից համար, գոնէ յիշելու զանոնք այն օրերը՝ յորում հաստատուն տումարն ունող ազգք կու յիշեն. այս իր Սուլ-գրիր խուգը հրատարակեց յամին 1116, թէ և անկէ առաջ այլ տումարի վրայ բաներ գրեր էր։

Արդ այս է, Հայկակ, մեր նահապետին անուամբ յիշեալ և յիշելի Հայոց Շէրեան, և Փոսֆան Հայոց, զոր թերևս արժանի էր մեզի գործածել՝ աւելի քան զսովորական պակասաւոր թուականն մեր. որով և ամեն ազգաց ժամանակագրութիւնն այլ դիւրաւ կրնայինք չափել և համեմատել մեր ազգին ժամանակաց հետ։

Դ.

ՅԱՆՈՒԱՐԻ 6 Ի ՀԱՅՍ

Տարուոյն առաջին ամիսն՝ մեր կիսագնային վերայ, գրեթէ ամէն տեղ ըստ կերպարանաց բնութեան սիրուր է, քիչ շատ ձմեռն ըլլալով. զոր միայն քաղաքական և եկեղեցական անոնք կու միխթարեն և յիշատակք անցելոց կու զրօսեցընեն։ Այս ամիս մեր Հայաստան աշխարհին երեսն այլ ամենէն սգակերպ և ծանր երևոյթներէն մէկը կ'ընծայէ, գրեթէ բոլորովին ձիւնով և սառամանեօք ծածկուած. ձմեռն հոն իր աթոռոյն վրայ անշարժ կ'երևի. կամ բուքերով երկինք երկիր մրրկելով, կամ թէ և պարզ ընէ՝ անանկ չոր և բարակ ցուրտ մը կու տարածէ օդուն մէջ, որ կարծես թէ տրև՝ իր պայծառութիւնը միայն պահեր և կրակը մարեր է։ Հապա գիշերը. երբ չորցած սառնապատ ծառոց միջէն սարսռալի օձասուլիկ պախրցին կամ արևելեան հովն, գոգաւոր ձորակներու մէջ որոտալով այն երկայն վայերը վայերը լսեցընէ։.. Գոցեցէք գոցեցէք դուռն ու երդիք, ամէն ճեղք ու ծակերիք։ Ա՛հ, ի՞նչ քաղցր է, Հայկակ, շորուիլ նստիլ ամրածածուկ ճեղուան մը տակ, (թէ և հողէ ըլլայ, կարմրաբոց փռան կամ թոնրի մը եզերք, և 14-15 ժամ երկայն գիշերուան քառորդ մաս մը անցեալ դիպուածոց, և մանաւանդ հայրենեաց,

ամսոյն նոյնաթիւ օրերուն մէջ հանդիպած բա-
ները զրուցելով վիպասանելով անցընել։ Ո՛րչափ
ցանկալի էր մեզի այլ եկեղեցականին հետ քաղա-
քական և ազգային Յոյսոսոոոր կամ Հայոցիր մ՚ու-
նենալ. առաւօտը զայն կալոդալ, իրիկունը ասով
զբօսնուլ կրակին բոլորտիքը։

Յանուար ամսոյս մէջ գիշեր մը և օր մը կայ,
զոր Հայն գրեթէ ամեն ազգէ աւելի մեծարան-
գէս կ՚անցընէ, և չի կրնար ատոնց մէջ արգիլեալ
մնալ. այն օր ձմեռ չկայ. փոթորիկը կու թողու,
ձիւն բուք կ՚արշամարշէ, գուրս կ՚ելլէ, կու փու-
թայ յեկեղեցի. Աստուծոյ տունը կա-
տարելու. և եռանդեամբ ցատքռտելով թզաչափ
թանձր սաւերն անգամ կու կոտրտէ, թմրած
պաղած ջուրը կ՚արթընցընէ, մէջը կու մտնէ՝
քրիստոսանիշ խաչին կնքահայր ըլլալու։

Այդ մեծ տունին օրը սովորական հանդէսներէն
զատ՝ շատ նշանաւոր դէպք այլ հանդիպած են
մեր նախնեաց ատեն. որոց մէկ քանին յիշենք
այս իրիկուն մեր ընտանի կրակարանին եղերքը
բոլորած, թոզլով վիպասանից զանոնք բանաստեղ-
ծելու, և գուսանաց՝ երգելու։ Յիշելու դէպքե-
րէս շատն հանդիպած է մեզմէ 800 և աւելի տա-
րի առաջ. ԺԱ դարուն երկրորդ քառորդին, մեր
Պետրոս կաթողիկոսին օրերը. որ այն դէպքե-
րուն գլխաւորին պատճառաւ՝ Գէորգայ ըսուն-
ցաւ. և թէպէտ քիչ մը չափէն աւելի ազգասէրք
և չափէն պակաս յունասէրք այլասլեր են եպա-
ծին պատմութիւնը, բայց անհիմն չերևիր իր
պարզ և հին վկայութեանը մէջ։ Եթէ Պետրոս
կաթողիկոսի աչն հրաշագործ չէր, իր ձեռքը ե-
զած խաչն իրմէ առաջ այլ շատ հրաշքներ ցու-
ցեր էր. մնաք կու սիրեմք Պետրոսի պերճախօսիկ
շարականները, բայց չենք կրնար գովել իր պեր-
ճասէր հնարքները, որովք եկեղեցիին աւելի քա-

զաքական տեսութեանց մէջ սնուն թողած է։ Իր քառասնամեայ հոգևոր տիրութեան առաջին տարիները՝ Անի թագաւորական քաղաքին մէջ կու նստէր, և երկրորդ թագաւորի մը պէս փառք կու փայլէր, 500 մեծ գեղեցիկ տէր ըլլալով, և հայրապետանոցին մէջ կամ իր հետ քանի մը վարդապետ, 12 եպիսկոպոս, 60 կրօնաւոր քահանայ և 500 աշխարհիկ երէց պահելով։ Իսկ իշխանութեանը տակ կային 500 եպիսկոպոս կամ թեմ, որ թէ և չուիզանց երևի, գոնէ եղածին կրկինէն աւելի չէ։ Ընդդիմակ բանն այս է, որ որչափ այն Հայոց կաթուղիկոսն իշխանաւէր կ'երևար, ժամանակակից թագաւորն այլ՝ Յովհաննէս—Սմբատ՝ իմաստասէր էր. երկուքն այլ խորագէտ, որով երբեմն համաձայն՝ երբեմն հակառակք իրարու։... Բայց ինչ պէտք է մեզի հիմա ծաղկած և վաճառաշահ մայրաքաղաքի մը մեծերուն քաղաքական գաղտնիքը քննել. մինչդեռ չորս դին համբաւ կու հնչէ՝ թէ մեծազօր կայսրն Վասիլ Կ. Պօլսէն ելեր և շատ զօրօք կու գայ 'ի Պոնտոս. կ'անցնի 'ի Տայս, Վրաց թագաւորէն պահանջելու այն երկիրները՝ զոր Դաւիթ կիւրապաղատն Տայոց՝ թողեր էր կայսեր, և Վրացին կորզեր էր։ Շրջակայ թագաւորք և ազատագլուխ իշխանք վախով կամ պատուով կու փութան կայսեր առջև. մեր բագրատունի թագաւորն Յովհաննէս-Սմբատ, ոչ այնքան թանձրամտութեանն համար կու դանդաղի և չի շարժիր, որչափ մեծամտութեամբն չուզեր Հայոց իշխանութեանց մէջ իր նախապատիւ ոսթառը նուաստացընել, և իր գրացի մանրիկ թագաւորաց նմանիլ. բայց՝ անոնցմէ, և ինչուան իր եղբօրմէն, և այլ աւելի կայսեր սպառնալից յօնէն համբաւէն կասկածելով, իր տեղ անոր երեսը պատուելու կ'ուղարկէ զՊետրոս կաթուղիկոս։ Սա իր և-

կեղեցական հնութեանց և սպասաւորաց հետ՝ արքունի գրան մարդիկ և զինուորական գունդ առած, իբրև երկիմագետն իշխանապետ մը՝ կ'ելլէ կայսեր գիմաց, անոր ձեռքը՝ 'ի Պոնտոս. և ըստ արժանւոյն պատուելով և պատուելելով, կու հրաւիրուի մերձակայ Աստուածայայտնութեան տունին օր չորրորդեանց հանգիստը կատարել. ըստ ոմանց Ճորոխ գետոյն վրայ, այլ հաւանօրէն ըստ այլոց՝ Տրապիզոնի գետակին վրայ։ Յետ ազօթից և օրհնութեանց՝ երբ միւռոնը կու թափէ 'ի ջուրն՝ և մէջը կու ձգէ այն խաչը՝ որ մեռեալ ունէր 'ի բուն փրկչական խաչէն, և 'ի Ս. Սեղբեստրոսէ ընծայուած էր առ Լուսաւորիչն մեր, յանկարծ ջրէն լուսոյ ցնցուղք կու ծագին, 'ի զարմանս ամենեցուն և 'ի մասնաւոր պարծանս Հայոց։ Այս է պարզ և ստուգագոյն պատմութիւնն՝ զոր ժամանակակից Արիստակէս Լաստիվերտեցի պատմէ, և իրմէ առած Վարդան և այլք. որք ոչ քաղաքը յիշեն և ոչ գետոյն անունը, և ոչ ասոր ջրոց յետս 'ի վեր դառնալը, ինչպէս կ'ըսեն Կիրակոս և այլք։ Վանայ Վարագայ վանքը պարբերոն առած է հոն Պետրոս կաթողիկոսի գերեզմանը այս արձանագրութեամբ. « Թ.Ի ԴՃՀԱ։ ԱՑՍ Ի » ՀԱՆԳԻՍՏ ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ. ՈՐ » Ի ՏՐԱՊԻԶՈՆ ԶԳԵՏՆ ՀՐՈՒ ԱՐԳԵԼՈՑ ԱՌԱՋԻ ՎԱ » ՍԻԼ ԱՐՔԱՑԻ »։ Այս արձանագիրս կաթողիկոսին մահուան ժամանակակից չէ. վասն զի ինքն այդ թուականէն շատ տարի վերջը վախճանեցաւ 'ի Սերատոիա, և հոն այլ 'ի Ս. Նշան վանս կայ անոր գերեզմանն. ըսել է որ նշխարաց մեկ մասն փոխադրուեր է 'ի Վարագ, ուր երբեմն նստեր, և գերեզմանին վրայ գրուեր է ջրօրհնեաց հրաշիկ թուականն, որ և է ստուգիւ 471 (ԴՃՀԱ) Հայոց թուականն (1022 23 ամ Քրիստոսի). թուականը այսպէս կու համեմատուի. բայց Ճորոխ

(կարգա Ճորոխ) գլուխը չեմք կրնար Տրապիզոնի մոռեցընել. վասն զի լեռներով զատուած և շատ հեռու են իրարմէ. ուրեմն յայտնի սխալ կայ ատոր մէջ, և վերջին ժամանակի տրձանագրութիւն մ'է։ Զայն այլ թղթով հանգերձ յօդուածոյ պատմութեամբք, կարդամք գլխաւոր գիպուածին մէկ Ճոխաբան գրուած նկարագրութիւնը, որոյ հեղինակն մեր ծանօթ պատմիչներէն չէ, և քիչ մը Ճամարտակող և Ճակատամարտաղ է։

« Եւ գնացեալ կաթուղիկոսն առ կայսրն 'ի
» Տրապիզոն, ունելով ընդ իւր եպիսկոպոսունս
» երկոտասան և եօթանասուն քահանայս յաթե-
» զայից. և երկու բանիբուն վարդապետս, զբազմ-
» իմաստն զՅովսէփ Հրնդուցն, և զքաջն և զան-
» յաղթն զԿոզեռն Յովհաննէս. այլ և 'ի զինուո-
» րական գասէն և յաւագաց արս երիք հարիւր։
» Եւ առեալ 'ի Թագաւորական տանէն գունձս
» ոսկւոյ և արծաթոյ, ձիս և ջորիս։ Զոր տեսեալ
» ինքնակալն Վասիլ զՏէր Պետրոս հայրապետն՝
» յոյժ ուրախացաւ. քանզի հմտութեամբ առուքի-
» նութեան նորա և վարուց սրբութեան՝ հոսեալ
» էր յաւանջագոյն առ Թագաւորն։ Վասն զի էր
» աքանչելի այր, լի ամենայն բարի մասամբ, և ու-
» նէր շնորհ իմն աստուածական բժշկելոյ զախ-
» տաժիսս և հալածելոյ զդեւս։ Վասն որոյ և Վա-
» սիլ գերագոյն մեծարեաց զնա քան զամենայն
» պատրիարքունս Յունաց. և լրջմտութեամբ ըն-
» կալաւ զբերեալ ընծայս նորա. և մեծաշուք
» փառաք պատիւ արարեալ եպիսկոպոսացն և
» ազատացն՝ որ ընդ նմա էին։... Եւ 'ի նոյն ա-
» ւուրսն եհաս ասն ծննդեանն և յայտնութեանն
» Քրիստոսի. և եղ ամենայն զօրքն խրոմք և քա-
» հանայիք յօրհնել զՏուրն։ Կոչեաց և զկոմս
» զիկոսն Հայոց Իւրայնոք 'ի յեկեղեցին. և հրա-

» մայեաց զի նախ Տէր Աստուած օրհնեսցէ զքուրն,
» և ապա Յայնք։ Եւ յորժամ օրհնեաց և էարկ
» Տէր Աստուած զմեռանն 'ի քուրն, և զինի սուրբ
» խաղոյն հարկանէր երեք անգամ զսուրբ խաչն 'ի
» գետն. և ահա հուր սասակապէս բոցագոյն ծի-
» բանածաւալ փայլատակեաց 'ի խաչէն, և ի-
» բրև զաղեղն որ յամպս գնի ցոլացեալ՝ խորան
» առնոյր 'ի վերայ գետոյն. և որպէս զորահա-
» ատաճար Աստուծոյ 'ի մէջ առեալ ունէր զամ-
» ենեսեան զարս և զկանայս. և շող լուսոյն բակ
» առեալ պարփակէր զբազմութիւն ամբոխին
» ընդ ինքեսմբ։ Եւ լուսաւորեցան գէմք մարդ-
» կան առ հասարակ որպէս զվարդ կարմիր. և
» լոյս ելանէր 'ի խաչէն իբրև զյորդահոս քուրս
» որ բղխեն յաղբերաց։ Իսկ սուրբ խաչն երևէր
» 'ի ձեռն կաթողիկոսին որպէս բոց վառեալ լու-
» սավ. և 'ի լուսոյ անտի երկին երկին հատանէր
» խաչաձև ըստ չափոյ խաչին, և խաղայր 'ի վե-
» րայ քուրցն իբրև զթռչուն սլացեալ որիշ որիշ
» 'ի միմեանց. և հոտ անուշութեան ընդոյր զամ-
» ենեսեան։ Իսկ բազմութեան ժողովոյն զահի հա-
» րեալ կային և ազազակէին և ասէին, Տէր ողոր-
» մա։ Եւ մինչդեռ նոքա ազօթէին, ժողովեցաւ
» լոյսն միագունդ, և երիցս անգամ եհար զքուր
» գետոյն և ամփոփեցաւ լոյսն 'ի ծոց խաչին. և
» քուր գետոյն զետեղեալ 'ի կրունկն գառնայր և
» զառ 'ի կոյս արգելաւ վայր մի։ Յայնժամ զար-
» հուրեալ ամբոխին և բազմութիւնն անգեալ
» յերկիր գոչային։ Եւ սուրբ խաչիս սեառնա-
» գրեաց կաթողիկոսն երիցս անգամ զգետն և ա-
» սաց. Տեսին զքեզ քուրք Աստուած, տեսին զք-
» քեզ քուրք և երկեան, խորք խռովեցան. և տե-
» սին ամենայն ծագք երկրի զփրկութիւն քո, և
» ժողովուրդք զսքանչելիս սուրբ նշանի քո։ Եւ
» արդ որպէս 'ի ձեռն սուրբ խաչիս քո եկաց

» ջուր գետոյս կանգուն, գնասցէ գարձեալ յընդ-
» թացս իւր որպէս յառաջն։ Եւ ապա գարձաւ
» գետն 'ի տեղի իւր, և խաղացեալ գնայր որպէս
» յերէկն և յեռանդն։ Յայնժամ Թագաւորն Վա-
» սիլ և ամենայն զօրք նորա անկան առ ոտս երա-
» նելի սուրբ կաթողիկոսին Պետրոսի. և մեծա-
» գոչ հառաչանաք համբուրէին զսուրբ նշանն և
» արկանէին զօրհնեալ ջուրն 'ի վերայ գագա-
» թանց իւրեանց։ Իսկ Թագաւորն Վասիլ գնէր
» զԹագն 'ի գետքնն. և հրամայէր Տէր Պետրոսին
» արկանել ափունք իւրով զջուրն օրհնեալ 'ի վե-
» րայ գլխոյն իւրոյ։ Եւ առեալ կայսրն զգետար-
» գել սուրբ նշանն 'ի ձեռս իւր և անյապաքար
» համբուրէր զնա, և նովաւ կնքէր զամենայն ըզ-
» գայարանս իւր. նոյնպէս և մեծարապօլիսն և ա-
» մենայն ժողովուրդքն՝ եռափփաք համբուրիւ
» ողջագուրէին զամենայազգի սուրբ նշանն և զայլ
» կաթողիկոսին. և 'ի համբուրելն զսուրբ նշանն՝
» բազմաց լինէր առողջութիւն։ Եւ մինչև օրն առ-
» ռաժամեցաւ՝ ոչ աւարառեցաւ համբոյրն ժողո-
» վրդեանն 'ի բազմութենէ ամբոխին »։

Պետրոս կաթուղիկոս այս հանգէսը և գեսպա-
նութիւնը կատարելէն ետև՝ գարձաւ յԱնի. բայց
երկար ատեն հոն չմնաց. Թագաւորին և իր մեջ
տարաձայնութիւն ընկաւ. Յովհաննէս մերժեց
զնա 'ի կաթողիկոսական աթոռոյն, և տեղը դրաւ
զԻԷոսկորոս Սանահնի վանաց և Լեմին արքե-
պիսկոպոս առաջնորդը. որ հարկաւ քիչերուն
ընդունելի եղաւ. անոր համար սոսկեցաւ Թա-
գաւորն նորէն զՊետրոս գարձընել տալ յա-
թոռը, միջնորդութեամբ Յովսեփայ Աղուանից
կաթողիկոսի. որուն հետ 4000 էկեղեցականք այլ
ժողովքի եկան յԱնի, և Թագաւորն ու կաթո-
ղիկոս հաշտեցան։ Այս հանգէսն այլ մասամբ
Աստուածայայտնութեան տօնին եղաւ. և երբ

հակաթոռ կամ բանագաուռալ կաթողիկոսն Դէոս-
կորոս՝ աւուր պատշաճ ոսանը կու կատարէր, քա-
նի մը յանդուգն անձինք գլխէն քօղը պատռեցին,
որ կաթողիկոսութեան նշան էր, և գարձուցին
զինքը իր վանքը, ուր և յօժարութեամբ գնաց-
րայց այդ անարգանաց հարուածը շատ ծանր էր
իրեն. քիչ ատենէն սրտատուած մեռաւ. յոմանց
իբրև բռնաբարող՝ գատափիճեալ, և յոմանց իբ-
րև ակամայ յանձնառու՝ արդարացեալ, և իր ՀԸԳ-
նասէր բարուցը և գիտութեանը համար պա-
տուեալ։

Դարձեալ յետ ինն տարւոյ (1045) նոյն ինքն
Պետրոս կաթուղիկոս՝ Ջրօրհնեաց հանդէսը կա-
տարեց ուրիշ խառն տեսարաններով 'ի Կարին
գաւառի. որ հիմակուան Էրզիրում քաղաքէն
զատ՝ անուանի և հարուստ քաղաքաւան մ'այլ
ունէր, Արծն ըսուած, Կարնոյ գաշտին մէջէն
անցնող եփրատական Սև ջրոյն աջ կողմը, շամ-
բին (Սաղբգ) մօտ, որ հարիւրաւոր եկեղեցիներ
ունէր և վաճառականութեան բարեաք լցեալ էր.
և մեր պատմչու գիպուածէն իրեք չորս տարի
եան այրելով և աւրելով 'ի Թուրքաց՝ հիմա թող-
ված է իր անուան և նշխարաց յիշատակ՝ Գարա-
արզ և Վաղաւեր գեղերը. ուր թերևս հնախոյզք
գեռ կարենան գտնել հետաքննութեան արժանի
բաներ։ Պետրոսի երկրորդ անգամ կաթողիկոս
նստելէն մինչև այս նոր հանդիսին ստկաւաթիւ
տարիներուն միջոց՝ Հայաստան շատ յեղափո-
խութիւններ տեսեր էր. Յովհաննէս Թագաւորն
մեռած, որդին Գագիկ Թագաւորութենէ զրկած,
Անի մայրաքաղաքն 'ի ձեռս Յունաց անցեր, Թա-
գաւորազունք եղեր 'ի Փոքր Հայս գացեր էին.
իսկ ինքն Պետրոս որ Անոյ վաճառման կամակից
էր՝ նստեր էր հոն առաջին փառաքն, և քաղքին
'ներ յոյն քաղաքապետին այլ պատիւ կընդու-

նէր։ Ասով բուն քաղաքացիաց այնչափ հաճոյ չէր ըլլար. քիչ առեն Ցունաց այլ կասկածելի եղաւ. և երբ նոր քաղաքապետ եկաւ՝ կոյսեր հրամանաւ զինքը քշեց անկէ և հրամեց երթալու նստելու յԱրծն Կարնոյ. ուր և վերը յիշեալ տարին մեծաւ հանդիսիւ կատարեց Զրօրհնեաց հանդէսը Եփրատայ նորընծայ վտակաց մէջ։ Երբ խաչալուայ ընելու պատն հասաւ և կարիքն պատրաստուէին նետուելու 'ի ջուր, տաճիկ մ'այլ ուզեց անոնց հետևիլ. կաթուղիկոսն հասկրցընել տուաւ անոր՝ թէ այդ բանը քրիստոնէից միայն կու պատշաճի իբրև կրօնական հանդէս մը. տաճիկն այլ իմացուց որ ինքն այլ քրիստոնեայ ըլլալու և մկրտուելու համար կ'ուզէր մտնել 'ի ջուրն. և հաւանութեամբ կաթուղիկոսին մտաւ։ Այն առեն միւռոնակիր փոքրուորն՝ ապակեայ շիշը ձեռացը վրայ զարնելով կոտրեց և թափեց թէ ջրին և թէ նորահաւատին վրայ, երկուքը մեկէն կնքելով. բայց շիշը կոտրելու առեն ապակւոյ կտոր մը ձեռքը վիրաւորելով իւղը, ջուրը և արիւնը մէկտեղ խառնեց։ Այս բանս, կ'ըսէ ժամանակագիրն, անյաջող դիպուածի մը գուշակութիւն սեպեց հանդիսատես ժողովուրդն. մանաւանդ երբ իրօք այլ հանդիպեցաւ։ Վասն զի երբ յետ հանդիսին կաթուղիկոսն նստեր էր 'ի սեղան, յանկարծ կայսերական հրամանաւ մարդիկ եկան զինքը վերուցին, տարին Թաղաոյ-տունն ը-տուած գիւղին բերդը, որ հիմա Գաղատուիճ կ'ըսուի, և երկու գեղ է, մեծ և փոքր, Կարնոյ և Թաղեաց միջատահման։ Նոյնպէս քիչ առեն Զեարոսի քեռորդին և յաջորդը, Թաչիին այլ՝ բռնեցին և ուրիշ բերդ մ'արգիլեցին. յետոյ զերկուքն ալ 'ի Կոստանդնուպօլիս խաւրեցին։

Այս դիպուածէս եօթն կամ ութ տարի ետև (1052)՝ նոյն կաթուղիկոսին օրը, բայց ոչ իր

ներկայութեանը, նոյն մեծ ազգին խիզման գիշեր ցաւալի գիպուած մը հանդիպեցաւ՝ ի Կարս քաղաքի, որ Արծին նման վաճառականութեամբ հարստացեր էր, և Անիի պէս առանձին Թագաւորաց մայրաքաղաք էր քիչ մ՚առաջ. մինչդեռ պաշտօնասէրք գիշերային ժամերգութիւնը կատարէին, և ամենեին թշնամւոյ կասկած մը չկար, և անոր համար քաղաքապահ զօրքն այլ անզգոյշ էին, ազգին զբաղած, Թուրքաց Տօղրուլբէկ սուլտանին հօրեղբօրորդւոյն ապստամբ Գուգուլմուշին Թափառական ասպատակներն՝ ձմերային սովալուկ գայլոց պէս մտան՝ ի քաղաք, և սրբազան ու ազգային հանդէսները յարցունք և յարիւն դարձուցին. ուն և եկեղեցի ողբաց և մահու տեղ եղան. ով որ կրցաւ քաղաքին ամուր բերդը փախչիլ՝ ազատեցաւ. մնացեալոց շատն ջարդուեցաւ, ամենքն կողոպտեցան իրենց սեպհականութիւններէն. հարստութեամբ լցուած քաղաքն աւեր դարձաւ. վասն զի անզգամ կողոպտիչքն ինչպէս աւազակորէն մտան՝ այնպէս ելլելն այլ բաւական չսպասելով՝ կրակ այլ տուին, և եռանեն սև ծուխը վկայ թողուցին իրենց գազանութեանը։ Բայց Կարս իր ամուր բերդին պատճառաւ բազդաւոր գըտնուեցաւ քան զԱրծն, նորէն նորոգուելով. սակայն նոյն պատճառաւն այլ աւելի շատ անգամ պատերազմի հարուածներ և մեծ նեղութիւններ կրեց, ինչուան մեր օրերը, (1855)։

Թշնամիք գիտելով և գիտնալով որ Հայք յանուարի վեցին մեծ տօնախմբութեան պատճառաւ տուներնէն տեղերնէն կը հեռանան, շատ անգամ նոյն օրը վազած են անոնց վրայ, և ազգերնուս մեծագոյն տօնն՝ ի սուգ դարձուցեր են, օրհնեալ ջուրն այլ յարիւն. մինչև ազգային աւակ եղեր է ըսել. «Աստուած պահէ

Յայտնութիւնի հեծելէն.
Վարդավառի հեղեղէն»։

Բայց մենք թողլով հիմա այս տխուր տեսարան-
ները, քիչ մ՚այլ ուրախ դիպուածներ տեսնենք.
փոխադրենք ուրիշ հայ աշխարհք մը, անցնենք
դարուկէս ժամանակ, երթանք 'ի Կիլիկիա, մեր
վերջի թագակալ ցեղին հանգէսներուն ներկայ
ըլլալու, նոյն այս սրբազան օրը, զոր թերևս ա-
ւելի քան զԻսագրատուինիս պայծառապէս տօնէին
Ռուբինեանք. վասն զի առջիններուն կորուսած
թագը՝ իրենց գլուխը գրուեցաւ յետ իբր 160
ամաց՝ յայտնութեան տօնին օր, յամին 1198, 'ի
ներկայութեան նուիրակաց զանազան ազգաց։
Այս ազգաշունչ փառաց նորոգութիւնն՝ արդիւնք
է քաջութեան, ճարտարութեան, նաև արդար
փառասիրութեան Լեւոնի, որ ըստ կարգի պայա-
ղատաց՝ Բ է այդ անուամբ, և ըստ կարգի թագա-
ւորաց Ա կ՚ըսուի։ Իր նախորդքը սովորաբար Պա-
ղան և երբեմն սեբաստոս կամ մարգիզ կ՚ըսուէին,
կամ մեծ իշխանք, և Լերանց իշխեցող. որովհետև
առաջ Փոխուգիոյ և Իսաւրիոյ լերանց, յետոյ Կի-
լիկիոյ լերանց և դաշտաց սկսան տիրել. Լեւոնի
պապուն եղբօր և նախորդին՝ քաջին Բ Թորոսի
անուամբ այլ՝ Թորոսի Էրիէ կոչուեցաւ իր վիճակն.
իսկ այս Լեւոնս իր պապուն՝ Ա Լեւոնի կործանած
անունը կանգնելով՝ իր տիրած երկիրն ալ Լեւոնի
Էրիէ անուանել տուաւ։ Քաջութեամբ և խորա-
մանկութեամբ շրջակայ իշխանաց ահաւոր և պատ-
կառելի ըլլալով և եւրոպացի մարձաւոր իշխանաց
տիրելի և օգնական, համարձակեցաւ Անգլիանաց
Փրեսերիկոս կայսրէն թագաւորութեան թագ ու-
զել, երբ կայսրն իր երկիրը եկաւ 'ի Սելևկիա
քաղաք, ուր փութացաւ Լեւոն խաւրել ընդ ա-
ռաջ նորա զկաթողիկոսն և զՍ. Ներսէս Լամբրո-
նացին. գժբաղդաբար ծերունի կայսրն հոն ան-
զգուշաբար գետոյն մէջ լուացուելով խեղդեցաւ,
և թագադրութեան խոստումը անկատար մնաց։

Բայց Լևոն դարձեալ խնդրեց զնոյն անոր յաջորդող որդիէն, յՄերիկոս կայսրէ, և նաև 'ի սրբազան պապէն Կելեստինոսէ. որք քանի մը պայմանս պահանջելով 'ի Լևոնէ ('ի նշան հաւատակցութեան և միաբանութեան՝) խաւրեցին իրեն փափագած պերճափայլ թագը, և առիւծանիշ դրօշ մը. յամին 1197, 'ի ձեռն Կոնրադոսի ծիրանազգեաց արքեպիսկոպոսին Մայենցայ. որոյ ընդ առաջ խաւրեց Լևոն՝ իր խնամին և քարտուղարը՝ Յովհաննէս Սսոյ արքեպիսկոպոսը։ Յաջորդ նոր տարին 'ի տանի Խառուածայայանութեան՝ ժողովեցան 'ի Ս. Սոֆիա եկեղեցի Տարսոնի, և մեծաւ հանդիսիւ թագաւորեցուցին ըզ-Լևոն 'ի վերայ Հայոց. օծողն էր Գրիգոր Ապիրատ կաթողիկոսն, թագաբերն՝ վերոյիշեալ լատին եպիսկոպոսն՝ իսկ հանդիսատեսքն՝ գնդապետք կամ պայլք արևմտեան տէրութեանց և վաճառականից հասարակապետութեանց, կրօնակարգ ասպետք, պատրիարքն Ասորւոց Անտիոքայ, մետրապոլիտն Յունաց, Երուսաղեմի Հայոց եպիսկոպոսապետն, վեց մեծաթոռ արքեպիսկոպոսք, տասն եպիսկոպոսք Կիւլիկիոյ, բազմաթիւ վանահարք, վարդապետք և քահանայք. իսկ յաշխարհականաց յիսունի չափ բերդատէր հայ իշխանք (որոնց անունքն և բերդերքը կու համրէ Սըմբատ գունդստապլ պատմիչ՝ Լևոնի քեռասուն որդին), և. ուրիշ լատինացի իշխանք Անտիոքայ և Կիպրոսի տէրութեանց։ Հանդիսին փառքն Լևոնի համբաւն ընդարձակեց. Պաղեստայ խալիֆայն և Կոստանդնուպօլսոյ կայսրն իրենց կողմանէ այլ թագ խաւրեցին. իսկ Լևոնի երկրին չորս կողմը եղող իշխանք, ըստ բանի Սմբատայ գունդստապլի՝ «ամենուն ճանապարհաւ հեռու» յիշեին զանուն թագաւորին Լևոնի, և անուանս՝ «գոզային»։

Մեծին Լևոնի թոռն Ի Լևոն թագաւորն այլ, յետ 74 ամեայ, նոյն քաղաքին և նոյն եկեղեցւոյն մէջ նոյն ոտնին օրը յանէն առաւ թագաւոր օծուելու. և հանդիսին հոչակող առենաբան եղաւ իր քարտուղարն Վահրամ Բարուն վարդապետ։ Թագաւորք մեր և ժողովուրդք՝ իրենց մեծագոյն հանդիսի օր սեպէին այն օրը՝ յորում Քրիստոսի երկք անօրինական մեծ և փառաւոր յիշատակները ոտնէին, թէ սրբազան թէ արտաքին հանդիսիւ։

Անշուշտ ախորժելի պիտի ըլլայ այս հանդիսից մէկ նկարագիրը լսել ականատես օտարազգիէ մը, որ Ա Լևոնի թագաւորութեան երեքտասաներորդ տարին հանդիսացաւ իրեն և ուսնին. այս անձն է Վիլլէպրանտ օլէնպուրկեան, Հաննովէրի Հիլտէսհայմ՝ քաղաքին կանոնիկոս վարդապետն, որ 1211 թուականին Ճանապարհորդելով յարևելս՝ եկաւ ի Կիլիկիա, և երկու ամսոյ չափ հիւրընկալութիւն գտաւ մեր թագաւորէն, զոր նախ տեսաւ ի Տարսոն, և յետոյ ի Սիս. որոյ համար կ'ըսէ. «Այս քաղաքս տէր թագաւորին » մայրաքաղաքն է. բնակիչքն անթիւ և հարուստ, » բայց պարիսպ չունի, ոնոր համար կրնայի ա- » ռեալի քաղաքաւան կոչել քան թէ բուն քա- » ղաք, թէ որ Հայոց արքեպիսկոպոսարանը չու- » նենար. նաև Ցոյնք հոն պատրիարք ունին։ Ա- » կայն ունի ամուր բերդ մը լերան գագաթը, ո- » րոյ ոտքէն կուգայ քաղաքը ասոնց ճանապարհ » գար ի վայր տարածուելով...։ Քրօրնեաց հան- » գէսը Հայք այս կերպով կատարեն. ոտնէն 12 » օր առաջ, զոր մենք (լատինք) խնամոտմով և կե- » ռուխուսմամբ կ'անցուցինք, անոնք ի պատիւ ա- » նին՝ ապաշխարութեամբ և պահոք անցուցին, » հրաժարելով ի ձկանէ, ի գինւոյ և ի ձի- » թոյ. իսկ բուն խաչման օրը բոլորովին ծոմապա-

» հուլմնամբ կեցան, որպէս զի յետ վերջալու-
» սոյն պատարագը մատուցանեն. և բոլոր այն
» գիշերը աստուածային պաշտամամբք անցու-
» ցին։ Իսկ երկրորդ օրը Քրիստոսի Ծննդեան տո-
» նը կու կատարեն, ըսելով թէ Քրիստոս նոյն
» օրը ծնաւ, և յետ 30 տարուոյ գարձեալ նոյն
» օրը մկրտեցաւ։ Աստուծոյն ամենեքն փուլթային
» քաղքին մօտ գետոյն եզերքը երթալու, ուր որ
» թագաւոր տէրն այլ կ'երթար, այսպիսի կար-
» գաւ։ Ինքն թագաւորն բարձրահասակ ձիու մը
» վրայ հեծած էր. իր քովէն կ'երթային Ալեման
» ասպետաց կարգապետն, Սելևկիոյ Հիւրընկալ
» ասպետաց բերդապետն, իրենց կրօնակից հա-
» զար ընկերներով. յետոյ գայր տէրն Ռուբէն,
» փոքր թագաւորն, (Լևոնի եղբօր դստեր որ-
» դին), զոր ինքնակալն Ոլիոն՝ 'ի խնդրոյ մեծ
» թագաւորին՝թագով պսակել տուեր էր. ասոր
» եռևէն կու գային իր երկրին աշնուականներն,
» և բազմութիւն զօրականաց գեղեցկազարդ հա-
» գուած. որոց ճորտերն ամեն մեկուն գրօշնե-
» րը և վառերը մեռուրնին բարձրացուցած, և
» անոնց սարած ձիերուն սանձին բռնած՝ մեծ
» թագաւորին առջևէն կ'երթային։ Իրեն և ա-
» սոնց խումբին միջէն կու վազվռտէին բազմու-
» թիւն զինակիր փայտկաց, իբրև անձնապահք
» թագաւորին. իսկ բազմութիւն ժողովրդեանն
» չորս կողմէն կ'ողջունէր զնա սաստկաձայն ա-
» զազակաւ, ՍՈՒՐԲ ԹԱԳԱՒՈՐ։ Այսպիսի մեծ
» հանդիսիւ թագաւորն կու գար իշնելու իրեն
» համար գետոյն եզերքը կանգնած վրանին տակ։
» Իրմէ ետև կու գային Յոյնք և իրենց պատրիար-
» քը՝ հետևակք, շատ սրբազան սպասներով. և
» այնչափ փողերու և ուրիշ երաժշտական նուա-
» գարանաց ձայն ձգեր էին, որ աւելի հանգէս
» մը՝ քան թափօր մը կու ձևանար։ Ամոնք այլ

» իրենց որոշուած տեղը՝ գետեզերքը կու սպա-
» սէին ուրիշներուն։ Յետոյ գային Հայոց եկեղե-
» ցւոյն ուխտն, մկրտելու խաչը բերելով և վայել-
» չապէս յառաջելով՝ իրենց արքեպիսկոպոսին
» հետ. որոնց խոնարհական կերպը և վայելչա-
» կարգ թափորը՝ շատ աւելի պիտի գովէի, եթէ
» մէկ երկայնամորուք քահանայ մը (ասով՝ նը-
» մանուրիշներուն), դժբաղդաբար չիոթուեան
» պատճառ չըլլար. վասն զի ասիկայ վերոյիշեալ
» գետոյն խառնուող պզտիկ վտակէ մը անցնելու
» առեն՝ ոտքին մէկ կօշիկը կորսընցուց, և ջրին ընդ-
» թացքէն ազատելու համար անզգուշութեամբ
» աշխատելովը՝ եպիսկոպոսին և ուրիշներու անց-
» նելուն արգելք եղաւ. թէ որ մէկն այսպիսի
» անհոգութիւն մ՚ընէր 'ի Հիլէսհայմ թափորի
» առեն, սաստիկ յանդիմանութիւն կ՚առնուր։
» Ասոնք այլ վերոյիշեալ գետոյն եզերքը՝ իրենց
» տեղը բռնեցին կեցան։ Երբոր բոլոր թափորն
» մէկտեղ եկաւ, սկսան սաղմէն երգել. և ին-
» չուան կուրծքերնին իջած օգուտոյց կծկի [1] նը-
» մանի երկայն մորուքներնուն շարժելն կ՚իմա-
» ցուէր՝ որ ազէկ ոյժ կու տային յունարէն և
» հայերէն աւետարաններ և ընթերցուածներ
» կարդալու առեն. և այն կերպարանալ Յոր-
» գանանը օրհնելով՝ բերած խաչերնին մէջը մկըր-
» տեցին, և աջ կողմէն աղաւնի մը թռուցին։
» Այն առեն մէկն՝ իշու վրայ հեծած՝ գետոյն մէջ
» մտնալով և կանգուն կենալով՝ շաքարաձայն [2]

1 Այս արևելեան երկայն մորուաց վրայ զարմացող անմորուս վարդապետան՝ նմանեցընէ զանոնք plenaria բուսած բանի մը, զոր սուտգիւ չեմ հասկընար ինչ է։

2 Հեղինակն կ՚ըսէ՝ շաքարացեալ կոկորդով, zuccherato gurgite։ Մեր մթնոլորտեան գուսանաց մէկն կ՚երգէ.

Ոլբուլն եկաւ ղափրիրան։ — Տես երես 200։

» կոկորդով կանչեց, Կէ՞ր Ութաստր մեր յաւիտեան.
» և դարձեալ, Օրհնեցէք Նախախնամութիւն տիրոջ ա-
» մենայն ոստիս երիտասարդներ. և երբ ամենքն միաբա-
» բան անոր պատասխանելով՝ Ամէն կու կանչէին,
» ինքն երդաստան ջրին մէջ կու թաղուրկէր.
» որ և ծիծաղելու պատճառ եղաւ շատերու։ Յե-
» տոյ թագաւորն և ուրիշներն այլ այն ջրով ի-
» րենք զերենք ցողեցին. իսկ Աստրիք մերկացած
» կու լուացուէին անոր մէջ։

» Այս տարարողութիւնս լմընալէն ետև՝ եկե-
» զեցականք իրենց վանքը քաշուեցան, իսկ թա-
» գաւորն և զինուորականք փութացան գէպ 'ի
» գաշտերը. և պալատական երիվարները վազը-
» նելով և նիզակներ նետելով՝ զինուորական խա-
» ղեր ըրին. և բոլոր օրը մեծ ուրախութեամբ
» անցուցին։ Երկրորդ օրը ամենքն իրենց տեղը
» դարձան։

» Այս այլ գիտցէք, որ տէր թագաւորն՝ այդ
» (Սիս) քաղաքին քով իրեն զբօսանաց պարտէզ
» մը պատրաստեր է, որուն աքանչելի փափկու-
» թիւնները նկարագրելն՝ կու խոստովանիմ որ
» կարողութենէս վեր է։ Տօնը կատարելէն և տէր
» թագաւորէն հրաման առնելէն ետև, որ զմեզ
» շատ մեծապէս պատուեց, եկանք Նաւարզա
» (Անաւարզա) ամուր բերդը... որոյ անուամբ
» թագաւորն իր նշանը Նաւարզա կու հագնէր»...։

Այսպիսի հանգէսներ՝ եթէ չկարենան այլ ժամ-
ուան սառամանիքը բոլորովին հալեցընել, գոնէ
գունագոյն ծիածաններ կու ձգեն վրանին։

Ն

ՉԱՊԵԼ

† 22 Յունուարի, 1252.

Եւ գու զաչքս տակաւին, մատաղ բամբիշն, առ
քեզ գերեա,
Նազելիդ Չապէլ, միայն Թագաւորեալ Հայոց
գլխոյդ,
Ոչ զերկրի սոսկ եւ եթ, այլ եւ զերկնից աչս եւ
ըզսիրտ,
Խլտաբղեալ ի գեղ ոգւոյդ եւ գիրդ մարմնոյդ.
եւ զքոյսդ գու
Ցերկրի՝ Հեթմոյ միայն, եւ ի յերկինս՝ Աստու-
ծոյ տաս։

ՀԱՅԿ. ԺԶ. 1069–73։

Չապել անուն՝ որ հիմայ շատ մերազգի ընտա-
նեաց մէջ անուշութեամբ կու լսուի, աւելի ա-
նոյշ յիշատակներէ առաջ եկած է, և Թերևս ա-
ւելի քան ուրիշ ազգաց՝ մեզի նուիրական եղած.
կան անոնց մէջ այլ Իկապել Թագուհիք, բայց
գուցէ ոչ մի այնքան սիրելի և պաշտելի՝ որքան
մերս Չապել, ժամանակակից և նման մաքրու-
թեամբ վարուց՝ իր անուանակցին Ս. Իկապելի՝
քրոջ Ս. Լուդվիկ Թագաւորին Փռանկաց։ Չա-

պէլ առաջին է այս անուամբ[1] 'ի մէջ ազգակցայն. առաջին բարձր թագաւորական պատուոյն, և առաջին գեղեցիկ վարուքն և սրբութեամբ. հրաշակաւոր՝ նաև քաղաքական կենաց դիպուածովք։ Սա ինչպէս մէկ հատիկ Տիգրանուհի 'ի մէջ հայկազուն թագուհեաց մերոց, մէկ հատիկ Սաթինիկ կամ Ս. Աշխէն Արշակունեաց մէջ, կամ Կատրամիդէ և Խոսրովանոյշ 'ի Բագրատունիս, Իուբինեան հարստութեան մէջ այլ մէկ հատիկ Զապել թագուհի. մանաւանդ թէ բոլոր մեր ազգին պայազատաց մէջ՝ սա մէկիկ թագաժառանգ աշխարհատիկին նշաւ. ոչ թագաւորի կին ըլլալովն՝ կոչեցաւ թագուհի, այլ իր ամուսինն իրմէ կոչեցաւ թագաւոր։ Իրմէ առաջ՝ օտար պատմիչք կու յիշեն, (և գրածն այլ կու վկայէ) որ Սրատոյ անուամբ Հայոց իշխեցող թագուհի մը եղած է. Փրիատոսի յաշխարհ գալուն տարինները. Խարև կին և քոյր Տիգրանի, բայց անունն և համբաւն իսկ անծանօթ է մնացեր իր ազգին։

II.

Զապել իր տկար սեռով, փափուկ հասակաւն, հեզուկ սրտովն, նոր թագաւորութեամբ ձեռացեալ ազգի մը՝ կէս ինքնագլուխ և պայազատօրէն վարող բերդատէր իշխանները միացընելու, և Հայոց. մանաւանդ այնպիսի ժամանակի Հայոց ազգավար ըլլալու. գրեթէ անկարելի անձ մը և բան մը կ'ներևէր. և սակայն վերին ազգախնամ անուշութիւնն, փորձ և կորիճ իշխանի մը (Կոս-

[1] Կայ մեր և Ո Զապել թագուհի. կին Օլնի թագաւորի. քոյր Ամուրեայ Լիւզինեան (Կիպրոսի թագաւորոյն), որ վախճանեցաւ յամի 1310։

տանդնի) քաջաքաղքաքաքութիւն, և մեծ ու հաստակաց երախտաւոր ու պատկառելի թագաւորի մը (Լևոնի) կամք, որ իր դեռաբոյս դստրիկը կտակաւ տիկին կարգեց իր 34 տարի արեան քրտամբք խնամեալ ազգին և քսանամեայ պայծառացեալ թագաւորութեանն, կարողացուցին այս բանս. և եղաւ Զապել առիթ հանդստեան Հայոց նորաթագ հարքստութեանը, որպէս և իր անարատ վարքովն՝ ըստ անուանն ստուգաբանութեան՝ Անոյշ հոնգիոտ (Էլի-սաբէթ՝ հրէարէն)։ Մեր պատմութեան, և մասնաւորապէս Իուրինեանց միջոց, Զապել ազնիւ և գեղեցիկ գոհար մ'երևցաւ, բարձր գլխոյ և բարձր բաղդի մը սահմանուած. և իբրև այսպիսի գոհար, (ևթէ կըրնամ ըսել, լուսափայլ՝ դեռ չբանուած իսկ, դեռ նոր գտուած) անկարելի այլ էր որ բազմոյ բաղձալի, ակնուներելի և հակառակելի չըլլար. և կըրնայ քաղաքական մտոք յարմարուիլ Զապելի վերայ՝ ինչ որ թէ նոյն թէ սրբազան մտոք ըսաւ մեր հոգերգակ հայրապետն՝ Հռիփսիմէի համար.

«Ի վերայ միոյ պատուական մարգարտի
Խաղացին ցընծալով ամենայն (հնթանուք).
Արևամուտք՝ յարևելս ընթացեալ հասին
Փարոզել յայանապէս ըղձանազ տեսութիւնն։
Լբան թագաւորք եւ լըցան խնդութեամբ.
Ոլորալ յանձն առին ըզգաղանի մեծութիւնն.
Պարգեւել իրերաց խոսանային բանիւք.
Եւ ծածուկ հընարիւք՝ գոզանալ ի միմեանց»։

Զապելի այսպիսի բաղդի ենթակայ ըլլալը իմանալու համար՝ բաւական չէ գիտնալն որ Հայոց առաջին և անուանի թագաւորի մը դուստր է, և ոչ թէ միամոր դուստր այլ, կամ հրաատարակեալ ժառանգ Լևոնի. այլ հարկաւոր է և գիտնալն թէ ինչպէս այսպիսի մեծ ժառանգութեան սահ-

մանեցաւ, և թնչպէս հասաւ 'ի նոյն։ Իր մեծ-
սիրտ հեռատես և խորագէտ հօրն գլխաւոր հո-
գոց և գործոց մեկն էր այս. Լևոն՝ ոչ միայն Ռու-
բինեան թագաւորութեան հեղինակն եղաւ, այլ
և պահող, զօրացընող ու հաչակող հայրենի սե-
րութեանը. յորում և յաջողեցաւ անհուն ջան-
քով, կարգաւորութեամբ, երկայնմտութեամբ և բա-
րակ քաղաքագիտութեամբ մը, որով գիրազան-
ցեց քան զամենայն Հայպետս. և քան զլաս
յազգապետաց օտարաց։ Գիտես, Հայկակ, որ
իր նախորդքն ամբողջ դար մը ոչչափ աշխատե-
ցան իրենց բոյնը հաստատելու Տորոսի ժայռե-
րուն վրայ, պաշտպանելով 'ի Ցունաց և 'ի Սել-
ջուկեանց. ոչչափ կռուեցան՝ յաղթուելով այլ
յաղթելով այլ. գիտես, որ իր հայրն՝ Սահակա-
նէ՝ Ցունաց կրակով եռացուցած կաթսայի մը
մէջ խաշեցաւ (յամ 1164-1165). գիտես, որ իր
հօրեղբօր (Թորոսի) որդին՝ Բ. Ռուբէն մանու-
կը, տէրութեան օրինաւոր ժառանգը՝ չարաչար
սպաննեցին՝ Հայոց տունը քանդել փափագողք.
գիտես, որ իր միւս հօրեղբայրն Մլէհ՝ Հայոց նա-
խարարնք և անանուն անպտամ մ'էր և բռնութեամբ
յանիրաւի տիրեց կամ նուաճեց աշխարհքը, իբ-
րև տասն տարի. մինչև յետ անոր մահուն կրցաւ
Լևոնի անդրանիկ եղբայրն Ռուբէն Գ. պայ-
ծառանալ Հայոց պարոնութիւնը (1175). բայց ա-
պահով մնալու համար կարօտ էր եղբօրը (Լևո-
նի) օգնականութեան։ Սա ազատեց զՌուբէն Ան-
տիոքայ դքսին ձեռքէն, որ խաբէութեամբ բռներ
և բանտեր էր զնա. անոր համար Ռուբէն կրկին
երախտապարտ առ Լևոն, իր տարաժամ հիւան-
դութեամբ ծանրացած տաճն՝ կրօնաւորելով, ա-
նոր թողուց տիրական աթոռը (1186), և անոր
հետ՝ արժանաւոր խրատներ տուաւ՝ չվստահա-
նալու մեծամտութեամբ իր քաջութեանը և հան-

ճարոյն վրայ, այլ և մեծ խոհեմութեամբ և բարեպաշտութեամբ քաղաքավարելու։ Զանազ Լևոն այս ամենն ձիրքերը յարմարցընելու իրարու. և գժուար պարագայից մէջ շատ անգամ յաջողեցաւ քան թէ սխալեցաւ։

Բ

Առաջին գժուարութիւնն 'ի սկզբան սէրութեանն և գրեթէ մինչև 'ի վերջն այլ, իր գրակից և համազօր Անտիոքայ դքսին կողմն էր, որ ինչպէս իր եղբայրը գաւառանեց՝ այսպէս իրեն այլ կու գարանէր. երկայն խաղեր խաղաց Լևոն անոր հետ. և եթէ Եւրոպացւոց դաշնակցութեան ու երախտեաց պարտքը չունենար, և մանաւանդ պատկառանքն 'ի սրբազան գահէն Հռովմայ, որոյ միջնորդութեամբ այլ իր թագը և իր գրոչն ընդուներ էր, թերևս բոլորովին զինուորական ուժովը վարուէր Անտիոքացւոց հետ. բայց հարկ էր երբեմն ուժէն աւելի խորագիտութեամբ վարուիլ։ Այսու մտօք Լևոնի առաջին խաղն կամ հնարքն եղաւ ինամենալն իր նախանձորդին կամ թշնամւոյն հետ, որ էր դուքսն Պեմունդ գ. որոյ աներձագին դուստրը՝ Իզաբելը՝ առաւ 'ի կնութիւն (1189). իսկ անոր (Պեմունդի) անգրանիկ որդւոյն Ռայիմոնտի կամ Ռեմունդի՝ կին առաւ (1195) իր եղբօր (Ռուբինի) դուստրը՝ Ալիծ, (որ այրի մնացեր էր 'ի Հեթմոյ Սասանեցւոյ), և ասոնցմէ (յԱլիծայ և 'ի Ռեմունդէ) ծնաւ (1196) Ռեմունտ—Ռուբէն Բրբինն, որ պիտի ըլլար օրինաւորապէս ժառանգ դքսութեան Անտիոքայ. և մայրենի արեամբն՝ անկասկած և բարեկամ պիտի պահէր զՀայաստան։ Բայց երբ ասոր հայրն Ռայիմոնտ տարաժամ մե-

աաւ (1200) և իր հնգամեայ որդին անուանեցաւ կոմս, անոր հօրեղբայրն Գեմոնդ Դ. յաջողաց. կեց՝ ոչ միայն անոր իշխանութիւնը, այլ և իր խաչած և ապշած հօրը սիթո

. (ապշութեանն համար le Bambo կ'անուանէին զնա)։ Բայց իրաւունքն և Լեւոն՝ վանեցին զՆայրանենդ գահակերը, և գարձուցին ծերը յամիոն. իսկ երբ սաքիչ աաեանէն բնական մահուամբ մեռաւ (1201), որդին (Գեմոնդ Դ) նորէն իշխանութիւնը ձեռք ձգեց ընդդէմ իրաւանց Ռուբենի–Ռեմոնեայ։ Անա այս բանիս համար գրեթէ քսան տարի հակառակութիւն և կռիւ էր Լեւոնի և Գեմոնդի մէջ, և Անտիոքայ դքսութիւնն տակն ու վրայ եղաւ. իրեք չորս անգամ առաւ Լեւոն զԱնտիոք և նստուց իր եղբօր թոռը. Անտիոքացիք երկպառակած՝ ոմանք Լեւոնի՝ ոմանք Գեմոնդի կուսակից կ'ըլլային. Լատինք բնականապէս աւելի այս եղբինիս կողմն էին, վասնզի որ չըլլայ թէ բոլոր Երկիրն այլ Հայոց թագաւորին իշխանութեան տակ անցնի. մանաւանդ որ Լեւոն արու զաւակ չունենալով՝ զԻուրէն անուաներ էր իրեն յաջորդ, և թագով այլ պսակեր էր զնա (1210)։ Լատինք մեծ օգնութիւն գտան իրենց Հռովմայ սրբազան քահանայապետը. և թէ անոր նամակք ու նուիրակք, թէ պատրիարգք Անտիոքայ և Սրուսաղէմի, թէ ժողովքով յԱնտիոք, և թէ բանագրանօք կու բռնադատէին զԼեւոն թողու զԱնտիոք 'ի Գեմոնդ. Լեւոն այլ գեղանենրով և նամակներով և իշխանական ուժով երկար տարիներ դիմացաւ, իր իրաւունքը և դաշնադրութիւնը պաշտպանելով. ինչուան որ ուրիշներն այլ ճանչցան զԻուրէն օրինաւոր ժառանգ դքսութեան, և բանագրանքը վերուցին 'ի Լեւոնէ։ Այս բաներս գոնէ համառօտիւ դարկ է գիտնալ, լաւ հասկնալու համար Ջապելի ապագայ բաղ-

գը, որ կերպով մը այս անախորժեան խնդիրներէն ծագեցաւ։

Լևոն թէ իր ըրած ամուսնութեամբն և թէ Ռուբէնը որդեգրելովը՝ որչափ որ Անտիոքայ մերձաւորեցաւ, այնչափ այլ եկեղեցիները իրեն զզուելի եղաւ այս մերձաւորութիւնը. և ամենէն աւելի իր կինն եղաւ իր սրտին վիշտ, զոր թերևս աւելի քաղաքական տեսութեամբք՝ քան սրտին փափագանքն առեր էր. և չէր այլ ունեցած իրմէ իրեն նման կարիճ զաւակ մը, ժառանգ իր այնքան աշխատանաց գտած և պահած թագին. բայց դեռ նախախնամութեան կամաց վարելով, և Ռուբէնը իրեն յաջորդ ընտրելով՝ գոհութեամբ կ'ապրեր։ Սակայն երբ յետ իբր քսան տարուոյ (1206) կենակցութեանն՝ ծանր ամրասատանութիւն լսեց թագուհւոյն վրայոյ հաւատարիմ անձէ, թերևս իր ազնուական չափէն այլ աւելի դուրս ելնելով և պատժելով զկինն՝ բանտարգել ըրաւ 'ի Վահկա բերդի. և անկէ ունեցած մատղաշ աղջիկը՝ յանձնեց իր մորը՝ Իրիմա տիկնոջ, որ դեռ ողջ էր, և որոյ անուամբ կոչեր էր դուստրն այլ։ Մեր պատմիչք զսա միայն յիշեն զաւակ Լևոնի. բայց օտարք անուանեն նաև զՍտեփանիա՝ կամ Եսքեֆեմ (Estéphémie) դուստրն այլ զոր տուաւ 'ի կնութիւն քաջին Յովհաննու Պրիենայ՝ Երուսաղեմի թագապահին կամ թագաւորին։ Իզաբելի վերջն ինչ եղաւ՝ անյայտ է. հաւանօրէն քանի մը տարիէն մեռաւ յարգելանին. և Լևոն երկրորդ ամուսնութիւն ըրաւ, երթալով 'ի Կիպրոս առ (թագաւորն Հիւկ') որդին Ամաւրեայ, և առնելով (1210) 'ի կնութիւն, հաւանութեամբ Ս. Պապին[1] ասոր մատաղ օրիորդը՝ Սիպիլ, որ էր

1 Բայնալտի։ Յարմ յայտ է որ առաջին կինն մեռած էր, և ոչ որպէս ՀԷն 'ի մերայոց կ'ըսէ, զոյն թողլով՝ դա առաւ։

ըստ մեր ժամանակագրին (Սմբատայ) «Կին ի մասսուն և համեստ»։ Ակէ՝ Լևոնի ծերութեան ծիրանի ծաղիկ ընծայեցաւ մեկհատիկ աղջիկ մը, Ջոցելի. յամի 1216։

Դ

Ջոցելի իր ծերունի հօրը խոնարհած արևուն յանկարծափայլ լոյս մը, նոր յոյս մը բերաւ։ Լևոն նոյն տարին արդէն անգամ մ՚այլ Անտիոքայ տիրեր և հաստատեր էր հոն զԻուբէն. բայց երբ նա նորէն հալածուած ՝ի Զեմուենգայ՝ գիմեց առ հայրագիր և պաշտպանն իւր, Լևոն՝ արդէն ձանձրացեալ, ծերացեալ և հիւանդ, յայտնի տեսնելով որ եթէ Ռուբէն ինքն իրեն կարող չէ աթոռը պահելու, անով Հայոց գահուն այլ ծնաստաբեր պիտի ըլլայ, ոչ միայն վերջի անգամ (1219) չօգնեց անոր, այլ և մերժեց իր աթոռոյն յաջորդութենէն այլ. կտակը փոխեց, և իր սատցուածոց ու թագին ժառանգ անուանեց, (եւրոպական օրինաց հետևելով) իր նորընծայ Ջոցելի գտարիկը, իբրև նախախնամութենէ պարգևեալ պայազատ մը։ Իր վերջի տարիները՝ երբ ձեռքի և ոտքի յօգացաւութեամբ տանջուելով՝ չէր կըրնար կատարել իր քառասուն տարի ըրած առիւծական արշաւանքները, և ոչ արծուի պէս հանկերը ձգել լեռնէ լեռ, բերդէ բերդ, իր ընգարձակած երկրին սահմանակից հակառակորդաց վրայ, գեռ երբեմն մունչալովք կը վախցնէր զանոնք. զորքն ու զօրավարները կու զրկէր կամ յօգնութիւն նեղելոց և կարօտելոց, կամ ՝ի հալածել զԼիչնամին. և եթէ սա զօրացեալ՝ զիրենները քշէր ու վռանգէր, Լևոն երկաթի տեղ ոսկի սփռելով՝ կու հեռացընէր վռանգաւոր մերձաւորը և կ՚ա-

զառեր իր գերեալ զորքն և իշխանները։ Այսպես այլ ըրաւ յամի 1217, երբ Իկոնիոնի Ազզէտին Քէյքաւուս սուլտանն պաշարեց զԿապան բերդն, և գերեց Լևոնի գլխաւոր զօրավարները, որ էին մեծ իշխանն և պայլն Սիր Առան, և Կոստանդին գունդստապլ (ստարաստեռ), իր (Լևոնի) քեռւոյն որդին՝ Պատեռան բերդին տէրն, 'ի ցեղէ Հեթմանց[1]։ Լևոն գերեթափ ընելով զԱռան և զԿոստանդին՝ բոլորովին երախտապարտ և անձնանուէր ըրաւ զանոնք. «զի լաւ է թագաւորի» ազէկ ճորտ պահել՝ քան զայլ հարստութիւն»[2]։

Այսպիսի ազէկ և հաւատարիմ ճորտելու վերայ վստահացեալ և զանոնք իր զաւկին խնամակալ կարգելով՝ իր դեռակայծ գստեր լոյսը պայծառացեալ կու տեսնէր. և իր ծանրսցած սևցած թևերուն վրայ թրթռացընելով այն ճերմակ փափուկ ձագը՝ կու յուսար թէ անով նորոգուի իր արծուային մանկութիւնն այլ. անով կարենայ կամ նոր որսեր ընել կամ հինները պահել։ Միայն կու մնար անոր արժանաւոր վարուժնակ մը գտնել, արժանաւոր լծակից մը. որ թէ իր, թէ անոր. և թէ Հայոց բաղդը հաստատէ։ Բայց Զապել շատ դեռաբուսիկ էր. Լևոնի յօդացաւն այլ էր յուսացըներ զանիկա չափահաս տեսնելու. սակայն անոր համար այլ աւելի կու հոգար կու մտածէր. և իր անգին գոհարը (դուստրը) գգուելով, միտքը պալատէ պալատ, արքունիքէ արքունիք կ'ելլեր, Զապելի փեսայ

1 Առաջին Հեթում Սևաստոսի որդին Սմբատ՝ պապ էր թէ Լևոնի թէ այս Կոստանդինի, մէկուն՝ (Լևոնի) իր Ռիթա տղկուն, մէկայլին՝ (Կոստանդինի) իր Վասակ որդուոջ. ուրեմն Լևոն և Կոստանդին հաստիրակք էին, իրենց զաւակքն այլ (Զապել և Հեթում) լծակիցք եղան յետոյ։

2 Սմբատ Պատմ.։

մը. Հայոց իշխան և իրեն գահակալ մը գտնելու. մինչդեռ այն հոգած մասց վրայ և յօգնած ձիոաց մէջ՝ Զապէլ անոգ և անգէտ կու ծաղկէր կու ծիծաղէր, կու բացուէր գոցուէր, ժայռերու և հեզեզաց եզերք բուսած նուռնուֆարի մը նման։

Սուլտանին 'ի Կիւլիկիա ասպատակած տարին՝ (1217) յԵրուսաղիոյ բազմութիւն Խաչակիր զօրաց եկան նորէն զԵրուսաղէմ ազատելու, յեռ երանամեայ գերութեանն 'ի Սալահէտտինայ. Լեւոն անձամբ չկարենալով երթալ՝ զօրք տուաւ իր անանդագին՝ Կիպրոսի Հիւկ թագաւորին, որ և գնաց 'ի Թափոր և 'ի Պաղեստինս, և Խաչակրաց կանոնաց հասած գնդից հետ քաջութեամբ գործ տեսաւ։ Այս յառաջապահ գնդից գլխաւորն և ամենէն կորովի իշխանն՝ էր Մաճառաց թագաւորն Անդրէաս Բ. որ մեծ համբաւ այլ հանեց. բայց իր երկրին շփոթութեանը համար՝ ստիպուեցաւ շուտով հոն փութալու. 'ի գարձին եկաւ յԱնտիոք, (որ այս ատենս այլ Ռուբենի ձեռքն եղած կ'երևի)։ Լեւոն՝ որ ամեն բան կու գիտէր կ'իմանար, հաւատարիմ դեսպան մը խաւրեց առ Անդրէաս, և դաշամբք խօսեցան որ անոր համանուն որդին Անդրէասը՝ պատկեն Զապէլի հետ. թէպէտ և դեռ երկուքն այլ բաւական տարիք չունէին. վասն զի Անդրէաս այլ հազիւ 8 տարուան կրնար ըլլալ։ Ունկարաց հին արևելեան արիւնը յարմարագոյն սեպեց Լեւոն իրենին հետ խառնել. անոնց թագաւորին այլ ուրիշ հարկոյ անանկալ օժիտ չէր կրնար ըլլալ՝ իր որդւոյն համար, զոր յանկարծ Հայոց թագաւոր պիտի տնանէր։ Այս բանիս համար Անդրէաս գոհութեամբ թուղթ մը գրեց ('ի մարտի 1219 տարւոյ) առ պապն Ենորիոս, իմացընելով Լեւոնի հետ ըլլած խնամիութիւնը, և անօրի-

նուէն ինդրելով որդւոյն համար, միանգամայն և ազաչելով որ ինքն քահանայապետն յանձնէ զնա Տաճարական և Հիւրընկալ առաքեալոց՝ իբ. նամակալ ըլլալու ազային՝ յետ մահուան Լեւոնի։

Բայց այս գործս չյաջողեցաւ. վասն զի Լեւոն շուտով մեռաւ նոյն տարին (1219). և Անդրէաս թագաւորն զբաղած էր 'ի Կալիցիա՝ հոն թագաւորեցընելու իր երկրորդ որդին. և ինչուան որ հոս բաները ուղղեց, Հայք ուրիշ ընկեր գտան Զապելի. մանաւանդ Անդրէաս այլ Վենետիկցի օրիորդ մ'առնելու բաղդ ունեցաւ։ Այսպէս զուր եղաւ Զապելի առաջին փափագողին ակնկալութիւնը. թէպէտ և կ'երևի՝ թէ Լեւոն այլ նոյոյնաւով մեռաւ, նորէն յանձնելով զՋապել՝ կա՝ թուղիկոսին և իր հաւատարիմ իշխանաց, և գրեր խաւորապէս Առանին, զոր և պայլ դրեր էր. այսինքն իրր ինամակալ աէրութեանն և հայրապետութեան (ատթարէկ) իր գեռահասակ ժառանգին։

Դ

Զապելի ինամակալութեան տակ եղած ժամանակն՝ որ եօթն ութ տարի քշեց, շատ գժուարաւորութեան եղաւ, և իրեն փոքրիկ սրտին այլ ոչ փոքր վիշեր և ցաւեր բերաւ. որոց առաջինն եղաւ կորուսանելն իր հայրապետը, որուն ձեռքէն հազիւ վարժեր էր ծնողական ինամք ընդունիլ։ Առան պայլ օր մը Սսայ Ս. Պարսամ եկեղեցին երթալու ատեն շատ չբանուկ ճամբէ մը, Իսմայելացւոց կամ Հաչիշի աւազակաց սրի տակ ընկաւ. որոց սատանայական պաշտօնն էր յանկարծ հանկիլ իշխողաց վրայ և սպաննել։ Առան՝ Լեւոնի հազարապետն և երբեմն սպարապետն ըլլալով՝ անշուշտ այլազգեաց ատելի էր։ Իշխանք

Հայոց անոր առեզ հաւանեցան պայլ ճանչնալու Լևոնի համբիրակը, զԿոստանդին գունդապետին, զոր արդէն երկրորդ խնամակալ գրեր էր Լևոն. այս անձս որ 50 տարւոյ չափ Ռուբինեան տէրութեան նեցուկ և գրեթէ կառավոր եղաւ, այս ժամանակիս ամենէն նշանաւոր անձն էր, ամենայն բարեմասնութեամբք. և յետ Լևոնի մեծի՝ առաջին մեծ մարդ կրնայ ըսուիլ բոլոր մնացեալ տէրութեան ժամանակին. ցեղով, ինչպէս առաջ յիշեցի, ի Հեթմեանց էր, որ թշնամիք էին Ռուբինեան տանը. բայց սա ցեղին կրսեր ճիւղէն էր, որոյ ռնդրանիկն՝ Տարսոնի և Լամբրոնի տէր ըլլալով՝ հակառակ էր Ռուբինեանց. իսկ այս ճիւղս Պապեռոնի և ուրիշ բերդերու ժառանգ՝ Լևոնի հօր հետ խնամութեամբ՝ միաբան և հաւասարիմ եղաւ Ռուբինեանց. Կոստանդնի անձնական արդիւնքն այլ հասուց զինքը այս բարձր աստիճանին, ուր կրցաւ այլ ամուր և փառաւոր կենալ հնարագէտ խելքովն, զօրութեամբն և բարեկիրթ որդւոց օգնութեամբ։ Այսպիսի զօրաւոր և բանգէտ անձի մը դէմ կենալ կամ հնարել՝ շատ դժուար էր. և ով որ փորձեց՝ մեծապէս ձլնասեցաւ. և նախ Բրինձն Ռուբէն–Ռեմոնա։

Սա հալածուած յԱնտիոքայ, մերժուած իր բազմերախտ մեծ քեռիէն, մինչև տարակուսեալ կու մտածէր՝ վրայ հասաւ Լևոնի և յետոյ Աստանայ մահն. Ռուբէն՝ մեկ իշխանութենէ զբրկուած՝ աչքը երկուքի գարձուց, որոց առնոք իրաւունք այլ կրնար յուսալ. իսկ հիմայ թէ ոչ զօրութեամբ հին կտակին Լևոնի՝ գոնէ ազգականութեամբն և խնամութեամբ, (վասն զի Զապելի մօրքոյրն էր իր կինն այլ) և Հայոց ու Լատինաց լեզուին և սովորութեան վարժութեամբն՝ վստահացաւ խնդրելու Հայոց թագաւորութիւնը։ Բայց Լևոնի կամքն և Կոստանդնի վախն հե-

ռացուցին զնա. սակայն տարաբաղդ Երիտասարդն՝ չէր կրնար շուտով մոռնալ որ տասն տարի առաջ Լևոնի հետ Թագակից և Միակից՝ Հայոց հանդիսական տօնից հաղորդ կ'ըլլար. և շատեր կային՝ որ ոչ միայն զինքը ճանչցեր էին յաջորդ Լևոնի, այլ Թերևս և հիմայ այլ չհակառակէին. այն առեն՝ դեռ պատանեակ, հիմայ իբր 25 տարուան կորիզ ասպետ մը, Հայոց և Անտիոքայ և Խաչակրաց նշաններով զարդարուած, իր ամենէն վառվռուն և յուսացին կենաց առեն, չէր կրնար այնպիսի մեծ փափագէ մը յետ դարձընել սիրտը. խնդրանքք չկրցածը՝ ուզեց փորձել ուրիշ հնարքով, նաև զինուց զօրութեամբ։

Այն առեն (1219-20) Խաչակիրք առաջնորդութեամբ Յովհաննու Պրիենայ՝ Երուսաղեմի Թագաւորին՝ եկեր պաշարեր և առեր էին զՏամիատ. հոն էր Պապին նուիրակն այլ՝ Պելագիոս ծիրանաւորն, որ իբրև փոխանորդ քահանայապետին՝ կ'ուզէր Խաչակրաց գլուխ այլ սեպուիլ և հրամայել։ Աստ դիմեց Ռուքէն, և գտաւ օգնութիւն սատակի և զօրաց. Խաչակիրք Տամիատայ առմամբ հպարտացած և շիտացած անհոգ կեցեր էին. գիւրին էր ասոնցմէ ժողովել գունդ մը բաղդախնդրաց, և նոր տեղի մը ձեռք ձգել։ Այսպէս այլ եղաւ. Ռուքէն յանկարծուց գնդովն եկաւ 'ի Կիլիկիա, մտաւ 'ի Տարսոն, և առանց ընդդիմութիւն գտնելու հոն, (ուր որ միշտ Լևոնի ցեղին հետ սերտ բարեկամութիւն չէր եղած), իշխեց ինքզինքը Հայոց Թագաժառանգ ունուանել, և գտաւ կուսակից այլ զինքն այնպէս ճանչցընելու։ Ակէ քաջալերուած՝ առաջ անցաւ՝ ձեռք ձգելու ուրիշ քաղաքաց և Լևոնի Թագին վրայ. բայց զգաստան Կոստանդին հաւատարիմ գնդով մը յանկարծ վրան հասաւ՝ Մամեստիոյ կողմերը. անոր կուսակիցներէն քարդեց ցրուեց.

զինքն այլ բանից բերաւ իրեն ապաստան կար-
ծած Տարսոն քաղաքը, և շղթայակապ բանտարգել ըրաւ։ Փշուառ երիտասարդն անյոյս ի Հայոց և յԱնտիոքայ, գեռ կու յուսար Խաչակրաց և Փանանայապետին օգնութեանը. և սա յիրաւի հայրարար խնամելով և ճանչնալով զնա օրինաւոր տէր Անտիոքայ՝ գրով յանձնեց առ նախայիշեալ նուիրակն, որ հոգ տանի անոր ազատութեան, և անօգնական չթողու անոր կինը և երկու աղջիկները. նուիրակն կրցած ջանքն ըրաւ, եղովից զԱնտիոքայ բռնաւոր դուքսը, և Տաճարական ասպետաց յանձնեց առնուլ քաղաքը. որով թերևս յոյս ըլլար Ռուբենի գոնէ նորէն հոն դառնալու. բայց նա ոգբերգական վախճան մ'ունեցաւ. բանտին, և աւելի սրտին նեղութենէն՝ երկու իրեք տարիէն՝ իր գալար աբևուին ու ամեն յոյսերուն մարեցաւ, մեռաւ[1]։— Հայոց թագն իրեն համար չէր, և ոչ այլ իրեն պէս ուրիշ մերժածաւանգ ակնկալուի մը, թէ և աւելի այլ արժանաւոր անձն։

Այս երկրորդ կամ երրորդ (յետ Անդրէի և Ռուբենի) ակնկալուն՝ եղաւ նախայիշեալ թագաւորն Սրուսաղիմի Յովհաննէս Պրիէն, պատճառաւ կնոջն խնամութեան. այս կարիճ, ըզգօն և արդէն տարիքն առած մարդն, որ մեծ անուն ունէր Սէրոպացւոց առջև, և գեռ նոր Տաճիազն առնելով՝ այլ աւելի հռչակուած էր, իր ժամանակին բաղդախնդիր, նաև բաղդակորոյս և բաղդազիւռ գլխաւոր անձն այլ կրնայ ըսուիլ. և ըստ այսմ՝ քաջութիւնն և ուրիշ ձիրքերն կու մնային։ Լսելով Լևոնի մահը և Ռու-

1 Ըստ ոմանց պատերազմի մէջ բռնուած առեն ի Տարսոն բերուելով՝ սպաննուեցաւ, կամ ի Մարձբրերդ բանտակալ մեռաւ։

բենի հանգիպածը, իրեն յարմար տեսնց ժառանգութիւնը. այս մտքով եկաւ Տամիոդէն եկաւ 'ի Զաղոմայիս (Աքքեա), ու պահանջեց Հայոց Թագը։ Այսպիսի մեծ և զօրաւոր անձի դէմ կենալն դիւրին չէր. բայց որովհետև կնոջն իրաւամբք եկեր էր, Կոստանդին այլ նովին իրաւամբ պահանջեց իրմէ՝ որ զկինը՝ (որ էր հմտահայր քոյր Զապելի) հետը բերէ։ Յովհաննէս դարձաւ իր կարծեցեալ Թագաժառանգին, և հիւանդ գտաւ զնա, որ և քիչ ատենէ մեռաւ. 13 օր վերջը իր մեկհատիկ չորս տարուան մանչ զաւակն այլ մեռաւ։ Սրբազան քահանայապետն Ոնորիոս այլ խրատ և բանադրանք գրեց Յովհաննու՝ եթէ Հայոց հետ պատերազմի անոնց Թագաւոր ըլլալու համար։ Ամեն կողմէ Յովհաննէսի հայկական ակնկալութիւնն փճացաւ. անոր վրայ շատ չանցաւ՝ Երուսաղեմի Թագաւորութիւնն այլ կորուս, և անոնց տեղ դարձաւ Կոստանդնուպօլսոյ կայսրութիւնը (1231), ու յունական Թագով միմիթարուած մեռաւ (1237)։

Ն

Զապել՝ առանց իր գիտնալուն այս յափշտակիչներէն ազատելով, սկսաւ էր որ շուտով ապահովուէր նոր ակնկալութիւնէ - և թէպէտ Կոստանդին ամենայն սրտիթեւութեամբ կու հակէր, բայց երկար տարիներ այլ անխռով ծնողաց չէր յուսար. ուստի Զապելի չափահաս տարիքին չկարենալով ապաստել, գոնէ խնամատարութիւնը ունենալով, երբ եօթն տարեկան եղաւ՝ 'ի ժողով կանչեց ազգին գլխաւոր իշխանները, պաշտօնեայքը, զօրապետները և եկեղեցականքը, և ըսաւ, (ըստ պատմելոյ իր որդւոյն՝ Սմբատայ սպարապետի

և ժամանակագրի) «Պարոնայք. գուք գիտէք թէ
» յինչ նեղութեան գտի զաչխարհս, ու զմեր
» Պարոնին (Լևոնի) յեռամեայքն. ու Աստու-
» ծով ինչու՛ի յայս բերի. ու մեր Պարոնի գուսա-
» րքս՝ կարգման եղաւ. ամենդ թատպիրուեցէք
» (պատրաստուեցէք) որ մեզ Պարոն բերեմք.
» զի ես ուզեմ որ իմ տան և իմ որդւոցն անգոր-
» ութիւն առնեմ». այսինքն, Զապելի փեսայ
մը բերեմք՝ որ ես պայլութեան հոգէն ազատած՝
իմ տունս հոգամ։ «Նա ամենն թատպիրուեցան
» շատ օրեր. և հայնց պատեհեցին (պատշաճեա-
» սան՝) որ քան յայլ տեղաց՝ բերեն պարոն Ա-
» լոզին զԱնտաքայ Իրենէին որդին՝ զՖիլիպն. զի՛ի
» մօտս է, և լաւ կարէ օգնել մեզ՝ ի մեր ամենն
» կարիք»։ — Այս Անտիոքայ Իրինէն կամ Իշ-
խանն էր Ծանօթ Պեմունդ (կամ ըստ ոմանց Բե-
մունդ) Դ. Շիլ կամ մթականի կոչուած[1] (Le
Borgne), որ այնչափ վիճից պատճառ եղաւ ընդ
Լևոնի և իր եղբօր Թոռին Իուրբենի. ի վերայ այսր
ամենայնի մեր պարոնայքն շատ օրէր մատածելով՝
քան զամենքն պատեհ գտան իրենց պարոն բերել-
լու անոր Երրորդ որդին՝ Փիլիպոսը, որ իբրև 17
տարուան պատանի մ՝էր. և արդէն մեր կողմանէ
խնամի էր Հայոց և տեղեակ անոնց սովորութենց.
կու յուսային որ իր հօր և հանգուցեալ անիրոջ
մէջ անցածները գիտնալով՝ իրենց վրայ երախտա-
պարտ ըլլայ. և հլու հաւատարիմ մնայ իր նոր
հայրենեաց օրինաց։ Այս բանս ապահովելու հա-
մար՝ հաւատարմութեան խօսք և երդումն այլ
պահանջեցին իրմէ. «Իերին՝ի պոման (պայման)
» որ հայէնալ ՝ենայր. — ՝էլ՝էղեցին և ղեղանն հայ-
» նալ գոնէր. և զամենն մարդ յիւր իրաւունքն

[1] Արդեօք ան՝ նշանակութեամբ Ալոզ կամ Ալօզ կու
չէ ինա մեր պատմիչն. թէ այլ պատճառաւ՝ չեմ գիտեր։

» պահէր »։ Այսինքն, եկեղեցական և արքունական հանգէոնները՝ հայկական ծխով վարէ, և զամենքն իրենց իշխանութեան և իրաւանց մէջ պահէ։ Ապա (1222) մեծ հանդիսիւ պսակեցին անոր հետ զօրիորդն Զապէլ, որ իբրև քոյրասարան փեսային և Թագուհի Հայոց և միսիթար սպասնի՝ չորս տարի այլ հօրը արքունի գարպասին և առագաստին մէջ կու ծեմէր, դեռ իր խնամակալ և հայրանախանձ Հայ իշխանաց հսկողութեան տակ. և շատ բարեբաղդ եղաւ ընտիր գաստիարակներ ունենալու Թէ յիւրոցն և Թէ 'ի Ֆրանկաց, միտքը և հոգին կրթելու. և իր բարձր վիճակին յարմար սատացաւ 'ի կուսական հասակին՝ սիրտ մայրենի, ազգասաց և կարօտելոց համար, ճաշակ և սէր իմաստութեան և գիտութեանց, և ամենէն աւելի՝ բարեպաշտութիւն, համեստութիւն և աստուածսիրութիւն։ Աշխարհն՝ իրեն տիկնութեան, փեսայն՝ հարանութեան, երկինք՝ ազգին մայրութեան կու պատրաստէին զնա. ինքն գեռ արտաքին փառաց անհմուտ՝ միայն պարկեշտութիւնը գիտէր գեղեցկագոյն զարդ. և կարծէր Թէ այնպէս կուսախառն կենսակցութեամբ ապահով պիտի մնայ իր պսակակցին հետ։

Բայց Թէ իր և Թէ հասարակաց կարծիքն խաբուեցաւ։ Փեսայն Փիլիպ յառաջ քան առ հարսն՝ անարժան դառնեցաւ առ աշխարհն՝ որոյ Թագուհի պատկուեր է։ Առջի իրեք տարին վախով և զգուշութեամբ, բազաքավարելով՝ երբ ուժովցաւ քըստանամուն եռանդով և համարձակութեամբ, սկսաւ ինքն իր իսկայով վարուիլ, մանաւանդ Թէ հօրը խնկցուն. որ ոչ այնքան որդեսիրութեամբ՝ որքան շահասիրութեամբ՝ պղտորեց անոր միտքը. և սկսաւ սա պազիլ Հայոց սովորութենէն, և « իւր հօրն Թապարով կ'ուզէր որ ձգէր զՀայոց » զամենն իշխանքն. և յիւրոցն գնէր ». Հայ պաշ-

տանէից առ՝ Փրանկ մացընել, եկեղեցւոյն և սի-
ղանին ծէսը փոխել. Սիսէն աւելի Անտիոքայ մո-
ռանալ։ Ինչանէք խրատեցին զնա, բայց նա իր հօր-
մէն մոլորած՝ ոչ միայն ճամբէն չդարձաւ, այլ և
գաղտուկ հօրը խաւրեց Հայոց արքունի զարդերը,
և մանաւանդ Լեւոնի մեծատաս շինած պալատա-
ն վրանը, զոր մեծ հանդիսի օրեր կու կանգնէին։
Նա ոչ այնքան երդմունքէն՝ որքան Հայոց վրէժ-
խնդրութենէն վախելով՝ ուզեց ինք զինքն այլ
փախցընել իր հայրենիքը։ Գաղտուկ զՋապել
հետն առած ճամբայ ելեր և հասեր էր ի Փիլ
Համարընոյ՝ Ջահան կամ Ճինուն գետոյն քով։
Կոստանդին կարիճ զինուորներով հասաւ նուէն.
գիշերանց դարանելով պաշարեց զբերդը, և ներս
մտաւ անկարծելի ատեն. մինչդեռ յօգնութիւն,
քուն և սեր մեծագոյն խաղաղութեան և երջան-
կութեան մէջ կու կարծեցնէին ծաղկահասակ ա-
մուսինքը, յանկարծ զամենն այլ ընդհատեց,
խռովեց, հալածեց. — և ի՜նչ անդարմանական հա-
լածանք. — երկաթեղէն ձեռք առագաստին մի-
ջէն յափշտակեց զՓիլիպ, երբ զարհուրեալ և
կիսամեռիկ լծակիցն Ջապել՝ գոչելով լալով,
և երեսները ցըտելով՝ հազիւ կրցաւ կանչել «Վայ
» ուր, վայ տէր». ձեռուընները գէպ ի գրկէն
փրթած փինային կարկառելով. մինչդեռ անգութ
յափշտակողքն՝ անոնց կաթոգին կապերը խոպան
կտրելով՝ յանկաւորաց կապանք տրկեցին ըզ-
Փիլիպ, և խուլ ականջով՝ ելան քշեցին զնա
մինչև ի Սիս, ուր ելքերդարգել ըրին, իբրև մատ-
նիչ ազգային խլաւանց և երդմնազանց։ Լուր
խաւրեցին Անտիոքայ Իրնէին այլ՝ որ յետ գար-
ձընէ Հայոց գունդը, և զորդին ազատէ. իսկ շիլ
և շուար հայրն՝ Հայոց ոսկւոյ և արծաթին հետ
կու կշռեր որդւոյն սերը։ Առջի բերան, քիչ մ՚այլ
վախէն լռեց. որ ջրլայ թէ Հայք դեռ կրկին տա-

քուԹեան մէջ ըլլալով անոր կենացն այլ ինչաս հասցընեն. առեն անցնելէ եւս գեսպաններ ալա-չաւորներ խաւրեց որ գոնէ միայն արձրկեն, իրեն խաւրեն որդին, խոստանալով բոլորովին հրաժա-րելու յիրաւանց Թագաւորութեանն Հայոց։ Ի՞նչ դժուարակնձիռն և ողբերգական խնդիր. Թագէն հրաժարելն Թերևս ըլլար դիւրին, բայց ինչպէս հրաժարիր Զապելի սրուէն, որ և ան-խարդախ սիրեր իր վարուժանը։ Նրկու տարուց չափ տևեց այս խղձալի վիճակն. Պեմունդ տես-նելով որ պետպանութեամբ բանն առաջ չ'երթար, անձամբ եկաւ 'ի Համուռն, աղաչելու զկը-խանս Հայոց, զկնանելով զանոնք գոհ ընելու և փրկանաւորելու Թշուառ զաւակը։ Հայք չկըր-ցան չէ ըսէ՝ Թող տուին որ մարդ ղրկէ իմացը-նելու որդւոյն։ Ափսո՜ս, շատ ուշ. կամ՝ ննգու-Թիւն[1] կամ սրտնեղութիւն արդէն ազատեր էին զՓիլիպ... 'ի կենաց։ Պատգամաւորքն լուր բե-րին Թէ գնա նոր՝ քանի մը (տասն) օր առաջ Փիլիպոսի գալար արևն բանտին մԹութեան և տխրութեան մէջ մարեր էր (1226). 'ի պատիժ՝ իրմէ աւելի՝ իր անզգաստ հօրը, 'ի վրէժ ազգային հայենակ իրաւանց, բայց և 'ի փուշ փափուկ սրտին Զապելի։ Զապել հիմայ զարգացեալ՝ սկը-սեր էր զգալ իր վիճակը և պարաքները. աչքին գիմաց սարսափելով տեսնար էր իր կողակիցը՝ զի-ննալ և զայրացեալ մարդկան ձեռք ընկած. եԹէ ազգին իրաւանց գպչողին չէր կրնար պատշաղան կենալ, միԹէ իր կենակցին և Թագակցին բարե-խօս ըլլալու իրաւունք չունէր։ Կ'իմանար՝ որ իր տակաւ հասակն խաղալիկ կ'ըլլայ բազդին և շատե-րու բաղդի. բայց գնա ամեն փափագումն այլ չկա-

1 Ոմանք ըսին Թէ Թունով եղեր էր մահն։

բենալով իր ազատնոյ սահմանէն վերս Թուչիլ՝ լոիկ սիրտը գրած կու գտգրէր։

Զ

Ազգանախանձ պարոնայքն Հայոց՝ երկրորդ անգամ պայլ գրին զԿոստանդին, որ փուլթացաւ Փիլիպպոսի կողմնակից իշխանները ցրուելեւ անոնցմէ 28, կամ ըստ ոմանց 70 հոգի բռնեց, կամ սպաննեց կամ վռընեց կամ նուաստեց։ Տարի մ՚այլ արթնութեամբ կառավարելէն եւս, իր անուանակից Կոստանդին կաթուղիկոսը և մեծ իշխաններէն մէկ քանին հաւանեցուց՝ որ Զապելը հրամայեցնէ իր որդւոց մէկուն. որպէս զի ինքն այլ հայրաբար պաշտպանելով՝ ամեն փորձանքէ ազատ պահէ զԹագն և զԹագուհին Հայոց։ Եթէ փառասիրութենէ ազատ այլ չէր այս խորհուրդս, սակայն իրմէ արժանաւոր մարդ այլ չկար Զապելի սկեսրայր ըլլալու. ոչ ոք իշխեց ձայն հանելու, և ոչ ոք յեռոյ զքաջացաւ։ Ինքն Լեւոնի համշիրակ, որդիքն այլ նոյնպէս էին Զապելի, և գրեթէ մէկտեղ մեծցած. ասոնցմէ փեսայացուն էր ՀԵԹՈՒՄ, երրորդ որդին Կոստանդնի, իբրև 15 տարեկան[1], «Մանուկ տիզք, առոյգ մարմնով և գեղեցիկ տեսանելով». ըստ ասելոյ ժամանակակից պատմչին, (Կիրակոսի), և ըստ ականատեսին (Վարդանայ) «մեծահոգի և հանճարեղ պատանեակ, որ էր անձնեայ և Թիկնեղ և գեղեցկագիտակ երիտասարդ»։

Այս վայելուչ և հաճոյական ձիրքերն՝ եթէ օտարաց անտարակոյս գրաւ մ՚էին աշխարհքին խաղաղութեանը և իրենց տիկնոջ երջանկութեա-

1 Իբ անդրանիկ եղբայրն Սմբատ ծնած էր յամին 1208։

նը, սակայն Զապելի մեծ և զգայուն սրտէն չի կրցան խլել Փիլիպի փուչը. որչափ այլ երախտաւոր ճանչնար իր կրկին անգամ հայրագլուխ եղած Կոստանդինը՝ Զապել կ'իմանար որ ոչ միայն անոր թեւոց տակն է՝ այլ կերպով մը և ճանկերուն. և այս ճանկերը շատ սուր և արիւնոտ կ'երևէին իրեն. Հեթում այլ սիրուն ձագ մ'էր, բայց բազէի կամ արծուոյ ձագ։ Զապել՝ որսերէ զբաղուած՝ անխոով խաղաղութեան բոյնի մը կուփափաքէր. կ'ուզէր մէկ ուժով մը զինքը բազէի և արծուոյ չհասած բարձրութեան ծոցը ձգել, ու մնաք բարով ըսել թէ հարանութեան և թէ թագաւորութեան պատկին. որոյ համար պատճառած կու տեպէր երկու կարիճներուն (Լիուբենի և Փիլիպի) իրեն մէկմէկ մերձաւորներուն՝ կարճ օրով ու սև ոգով ցաւալի մահերը։ Մտածածը մեծ և յօժար, բայց 'ի գործ դնելն էր դժար. պայլ, պարոն, իշխանք և եպիսկոպոսք կու յորդորէին զնա 'ի կենակցութիւն Հեթմոյ և 'ի տիկնութիւն. ինքն իբրև անօգնական աղաւնեակ և որոջ՝ մնչէր մայէր, լայր ու լռէր։ — Կամայ ա-կամայ նշանելով զնա ընդ պատանւոյն (1226), թողուցին որ ժամանակն այլ յորդորէ զսիրտ դշխոյին, և ապա մեծահանդէս կատարեն թագ-օրհնէքը։

Այն միջոցին սրբասէր աղաւնին սրտին միամտութեան հետ հոգւոյ խորագիտութիւն միացընելով՝ ուզեց որ երթայ մայրը տեսնէ. թողուցին իշխանքն. յուսալով որ սիրտն այլ հանգչի և մխիթարուած դառնայ։ Մայրն՝ Իզապել՝ կամ իր կամօք, կամ Հայոց զգուշութեամբն քաջուեր էր 'ի Սելևկիա Իսաւրիոյ, և իր փրանկ ազգականաց քով կու կենար։ Այս ամուր բերդաքաղաքն՝ որ Կիւլիկիոյ արևմտեան սահմանածայրն էր, Լեոն տուեր էր Լատինացի Հիւրընկալ ասպե-

ասաց, որոնք մեծ պատուով և սպասաւորութիւն ընդուներ և կու պահէին զայրի դշխոյն Լեւոնի. հիմայ անոր ժառանգ դուստրն այլ աւելի պատուով ընդունեցան. մանաւանդ երբ իմացան որ աղջիկ թագուհին չուզէր անկէ և մօրմէն բաժնուիլ, կամ՝ անոր և ազգականացը խրատուն, կամ՝ իր կամքն. և աւելի կու փափագի վանք մը քաշուիլ՝ քան արքունեաց մէջ նազել։ Ինչպէս գանները ամրացուցին։ Կոստանդին զայս լսելուն՝ մէկէն զօրքերը ժողովեց, հուսաւ պաշարեց քաղաքը. քաղաքապետն կամ դշխաւորն ասպետաց՝ Ֆրէր (Եղբայր) Պերդրան՝ իր ասպետաց կորընդուութեան և բերդին ամրութեան վրայ վստահացած՝ դէմ կեցաւ Հայոց. Կոստանդին չուզելով երկայն պաշարմամբ վատնգի ձգել բաղդը, ըսպասնացաւ Պերդրանայ՝ որ եթէ շուտով չտայ զՀապէլ, մէկէն պիտի երթայ Իկոնիոնի Ալայէտէրն սուլտանին հետ դաշնակցելու, և անոր զօրքերն այլ առած՝ գալ բնաջինջ ընելու ասպետաց տունը առեղ։ Պերդրան մէկ կողմէ վախնալով սպառնալիքէն, մէկալ կողմէն այլ իր և իրեններուն պատուոյն և քաջութեան նախատինք սեպելով քաղաքը մատնել հակառակորդին, և անկէ աւելի՝ իր հիւրերը, հոն ապաւինեալ թագուհիները, ասպետական հնարագիտութեամբ մը պատասխանեց Կոստանդեայ, թէ մենք ոչ կ'ուզենք ձեր դէմ կենալ ու քաղաքս պաշտպանել, և ոչ այլ կրնանք մատնել. վասն զի բարեյիշատակ Լեւոն թագաւորն մեզի տուած է, և հոս են իր կինն և դուստրն՝ ձեր թագաժառանգն, և հոս կ'ուզեն մնալ. ինչպէս կրնանք մենք համարձակիլ մեր բարերարները և մեզի դիմողները ձեր ձեռքը տալ իրենց կամաց դէմ. ուրեմն թողուցէք մեզի՝ որ մենք մեր կամքը դուրս ելլենք բերդէն, և դուք դիտցածնիդ ըրէք։ Այս պայմանաւ

ասպետքն իրենց պատուոյն եկան. Թոզուցին ըզ-Սելևկիա. Կոստանդին նորին ձեռք ձգեց մորը բռնէն բռնած ձագի պէս՝ Զապելը, և հրաւիրեց 'ի ազնուութիւն և 'ի մայրութիւն Հայոց։

Է

Այլ չկարացաւ Զապել ընդդիմանալ Հայոց. և Կոստանդնի ու Հեթմոյ ինդրածին. իմացաւ Աստուծոյ կամքը, և յանձնելով զինքը անոր նախախնամութեան, իր ազգին հաւատարմութեան, պայլին պաշտպանութեանը, և փեսային սիրոյն, պատկեցաւ 'ի հարսն Հեթմոյ և 'ի Թագուհի Հայոց, եկեղեցական և քաղաքական մեծ հանդիսով և հաստատեցաւ հաճութեամբ և ուրախութեամբ. որոց մանակից ըրաւ Կոստանդին՝ ('ի հաստատութիւն աշխարհին և իր զաւակին) այն ազգերը կամ այն թագաւորները՝ որոնց հետ յարաբերութիւն մ'ունէին Հայք։ 'Իրենց առ արքայն Փահանայատեան, առ կայսրն Ալամանաց, դաշնակցեցաւ ընդ սուլտանին Իկոնիոնի. ուրուրեան պաշտօնները յանձնեց արժանաւորաց։ Իր անդրանիկը (Սմբատ) սպարապետ գրաւ, մէկ որդին այլ (Լեւոն) մարշալ կամ խնամ ռազմարուեստ, իսկ ինքն անուանեցաւ Աբսահայր և Ամոթ դարձ. և թէ իր թագաւորդ տանը և հարսին, թէ բոլոր աշխարհին խորհրդատու, և ամենահաս օգնական ու կառավարիչ եղաւ քառասուն տարուոյ չափ՝ ցիսոր ծերութիւն († 1263). Հեթմոյ և Զապելի Թոզլով աւելի փառք և վայելքը, իրեն վրայ տուաւ հոգ և աշխատութիւնը. և այսպէս հշմարտեցաւ իր որդւոյն ըսածը, թէ հարիւրապատիկ փոխարինեց Լեւոնի՝ զինքն ազատելուն 'ի կապանաց սուլտանին, անոր գտաւ տասնակ

հայրութիւն և հաղարպետութիւն ընելով. և ճանչնալով միշտ զնա ժառանգ թագաւորութեան Հայոց և տիկին։ Այսպէս այլ ազգն՝ թէ և թագաւոր կոչէր զՀեթում, բայց նախապատիւ կու ճանաչէր զթագուհին Զապել, նոյնպէս և յետագայք. գոնէ մինչ անոր մահը և Հեթմոյ մինակ մնալը. ինչպէս որ այն մօտ առեններ գրուած յիշատակագիրք ոմանք առանց իսկ Հեթմոյ՝ կ'ըսեն. «ի թագաւորութեան Հայոց Լեւոնի, որդւոյ » Զապել թագուհւոյն, դստեր Լեւոնի թագաւո- » ւոյ »։ կամ ինչպէս Յովհան Սրբնկացի զատ- » լով կ'ըսէ՝ վասն նոյն Լեւոնի (Գ), « որդւոյ ի- » մաստուն արքային Հեթմոյ՝ հօր, և մօր՝ Զա- » պելի տէր ոգեհոգոյ »։ և Վահրամ՝ ի շարս թա- գաւորաց զՋապել միայն յիշէ։

Նոյն ինքն Հեթում՝ ինչպէս որ կ'երևի, իր ա- նուամբ կարած գրամներուն վրայ՝ Զապելը իր աջակողմը կեցած կու գրուէր, բարձրաձող խաչ մը հաւասար բռնելով, և արքունի գաւազան. որ (եթէ չեմ սխալիր) երբեմն միայն Զապելի ձեռքը կ'երևի. (գրամին եզերքն այլ գրուած է Կոստանդին Ախոթոյ է. միւս կողմն՝ առանց մը խաչակիր, նշան Լեւոնի տան, զոր պահեց և Հեթում և իր պայազատքն, եզերքը իրենց անունը գրելով, ինչպէս ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ։

Մեր երկայնաշար թագաւորաց պատմութեան մէջ ամենէն ցանկալի և գեղեցիկ մասերէն մէկն է Հեթմոյ թագաւորութիւնն, (որ մեծ մասամբ այս օրուան յիշատակէս գուրս է), և շատ երջանիկներէն մէկն, գոնէ երկու թագակցաց կենակցութեան առեն։ Հեթում՝ որ երբեմն իբրև ըզքոյր դդուեր էր զՋապել իր հօր պայլութեան առեն, և հիմայ իբրև հարսն լծակից ունէր, պա-

1 Յիշատակարան Գերբականին։

տուէր զնա և իբրև տիկին և իր թագին պատ-
ճառ։ Զապել որ իր առաջին տարաբաղդ ամուս-
նոյն կուսախառն սէրը և ցաւը չէր կրցած ջնջել
իր փափուկ սրտէն, շատ տարիներ (իբրև 8 կամ
9) չուզեց նոր առագաստը վայելել. մինչև երկար
փորձով տեսնելով Հեթմոյ զդոստութիւնը և
բարեպաշտութիւնը, յօժարութեամբ կ'ուզէր
անոր թագաւոր հաշակուիլն։ Կուսութիւն քան
զամուսնութիւն նախապատիւ սիրելի էր իրեն,
բայց վերջապէս հաւանեցաւ բոլոր տէրութեան մը
փափագին և օգտին. սիրեց նոր ամուսինը. նա-
խախնամութիւնն այլ օրհնեց իրենց սէրը և պտղա-
բեր ըրաւ։ Զապել 11 ամեայ էր պսակուած առեն
և իբր 36 ամեայ բոլորեց կենաց պսակը. իրենց թա-
գակցութիւնն եղաւ յամին 1226, իսկ անդրա-
նիկ որդին յիշուի իբրև տասն տարի վերջը։ Ութ
զաւակ ընծայեց, երիք մանչ և հինգ աղջիկ. ա-
ռաջին՝ Լևոն (Գ) թագաւոր. Բ, Թորոս. Գ, Ռո-
բէն որ շատ չապրեցաւ երկրիս վրայ. (գտեր ըքն)
Դ. Ֆիլիպ, որ Սիգոն քաղաքին գաղղիացի իշխա-
նին՝ Յուլիանու Իպլինեան՝ կին եղաւ. Ե, Ալիտ՝
կին Գեմոնդայ Զ, Անտիոքայ բրնձին. Զ, Ռիթա՝
կին Սարուանդիքար բերդին տիրոջ, (զոր արևմը-
տեայք Sire de la Roche անուանեն). Է, Մա-
րիամ՝ կին Կիտայ Իպլինեան (Guy d'Ibelin) գաղ-
ղիացի սենէշալին Կիպրոսի (sénéchal). Ը, Իզ-
դել. իր մոր և մամուն անուանակից, որ շուտով
թռաւ յերկինք [1]։

1 Վահրամ քարտուղար Լևոնի (Գ) որդւոյ Զապելի, և
հին ցեղագրին Փրանկ՝ երաշխաւոր են այս ութ զաւա-
կաց. սխալին որք ինքերորդ մ'այլ աւելցնեն Օշին ա-
նուամբ. ևս առաւել որք տասներորդ դուստր մ'այլ ան-
անուն։

Ը

Զաւակաց զարգացման և գաստիարակութեան խնամքը չկատած, Զապել՝ իր տիկնութեան առաջին տարիներն, ինչպէս Ֆիլիպի առեն այլ, իր անձնական կրթութեանը կու պարապէր, մանաւոր սիրով և յօժարութեամբ բարեգործութեց և ուսման, հեռանելով իր հօրը փափագանաց և օրինակին, և ջանակից դառնելով իր փեսայն. երկուքն այլ իրենց աստիճանին կարեւոր փառք և պատուաձ կու անպէին զգիտութիւնս, մանաւանդ ուսուրբ գրոց. գրասիրաց և գիտնոց ձեռնտու կ'ըլլային. կու պատուէին, ընտանեբար կ'ընդունէին, հարցընէին, և իրենց համար գրել տային։

Սրբ մեծանուն վարդապետն (և պատմիչն) Վարդան Արևելցի նկատ 'ի Կիւլիկիա՝ կաթուղիկոսին քով, Հեթում և Զապել մեծ պատիւ ցուցին իրեն, և իբրև աշակերտք՝ 'ի սուրբ գրոց և 'ի քերականութենէ խնդիրներ կու հարցընէին. որոց պարզ և ժամանակին գիւրահասկանալի լեզուովն պատասխան և մեկնութիւն գրած է Վարդան. մեկուն մէջ կ'ըսէ առ Հեթում, յիշելով զԹագուհին. « Այժմ հայնց արա՝ իմ Վարդան, » ուսկաւ մի աշխատեա ('ի կարգալն). քո սակաւ » աշխատիլն՝ առաւել է քան զայլոց շատն... Եւ » զոգի իմ տառապեալ և տկար յիշեսցես, որ » զքեզ սիրէ առաւել քան զասել... Հայց աղա- » չեմ զպարզմիտ (ազէտ) մարդ և զառաքինի՝ » մի հարցանել (այս գժուար խնդիրները), որ » չամաչեն. զի (և) ես նախահոգութեամբ գրե- » ցի. և թէ առժամայն զիս հարցանեն՝ և ես գը- » տանիմ տկարացեալ. վասն որոյ մի մեղադիր » ինձ ժամուն (առժամայն, մեկէն) չգտանողացն

» զաեսութիւն բանին։ Եւ ես գիտեմ որ այս չէ
» թագաւորական իրք, (գրած գիրքն) այլ ոս-
» կէգիր պիտէր և ճարտար գրչի. ես շատ պատ-
» ճառ ունէի՝ որ խափանէր զիս յայս ձեռնարկ-
» ութենէս... բայց սիրոմն հրաշագործիւ յաղ-
» թահարեալ եղեն պատճառքն. և որպէս տե-
» սանէք՝ եղև. թէ կամիս՝ դիւրին է տալ փոխել
» յալէկն (մաքուր օրինակիլ), որ հեշտ կարդ-
» այք. և թող Գրիգորէան փոխէ, որ բան չկո-
» ղընչի։ Բայց իմ կամ է որ իմ մատանց սատարն՝
» մնայ առ ձեզ. ո՛ գիտէ թէ աւելի շնորհուր[1] լի-
» նի ձեզ, վասն յուսոյն իմոյ որ առ Տէր, և սի-
» րոյն՝ որ առ ձեզ. զի այնց (այնպիսի) ճառ և
» պատմութիւն չէ՝ որ շատ աշխատանք տանին,
» և ապա բան գտանեն. թէ թուղթ մի կարդաս
» ժամուն կամ երկուք՝ գտանես յոլով խորհուր-
» դս։ Եւ Աստուծով՝ տղայահասակ և մանք և
» աչքք զօրաւոր էք. և 'ի միանգամ կարդալն սա-
» կաւ ինչ աշխատիք, և յայլն՝ անհոգ լինիք։ Եւ
» զի արտայ և արտայոհի 'ի միում մարմնի տեսանի,
» և հասարակ է հոգևորն և մարմնաւորն, թէ
» Աստուծով իրք մի օգուտ լինի 'ի գրեալոցդ կամ
» մխիթարութիւն՝ երկուցդ (այլ) լիցի։ Եւ
» զակնդ բազմագոյն և պայծառ՝ որ պատկէ զձեզ
» յաւիտեան (գիրքն), թող Փոգաւի պահէ,
» և 'ի պիտոյ ժամն՝ առնոյք 'ի նմանէ. և նմա
» հրամայէ Պօղոս հարցանել զձեզ և զպատեհն
» ծանուցանել. և պարտական են, ասէ, ապրե-
» ցուցանել զիրեարս՝ առն և կնոջ։ Եւ զերկո-
» սինդ ապրեցուսցէ Տէր Յիսուս կենդանութիւնն
» ձեր՝ 'ի խնամս Հօր և 'ի գութ Հոգւոյն սրբոյ.
» յոտոգուն աննդեան գալարարձակ տնկաբող-
» բոլշ շառաւէղեալ ոստոցդ. ծիրանոծին գրոյցդ.

1 Շնորհաւոր, «աղ-ջլ»։

» 'ի գիրկս Սիոնի որրոյ. 'ի կատարումն պատկ-
» ման հայակոյտ ազնուական ազգաց և ազանց,
» առհմից ազատաց. ազատեցուցիչք՝ արեանա-
» ռու զարմից, լծագիրք և բեռնաբարձողք, կո-
» րացուցիչք օտար ազգաց. 'ի փառս փառաւոր
» և պաշտեցեալ Աստուածութեանն »։

Զապելի ձեռնտուութեանն առ ուսումնասէրս՝ գնդ.ցիկ վկայ և պատուղ մ'այլ է իր որդւոյն (գ. Լևոնի) քարտուղարն՝ Վահրամ վարդապետ. որ և ինքնին ըստ իր սիրոյ թագաւոր օծման օրը առնեաբանելով մայր եկեղեցւոյն մէջ. « Եբանէ-
» լն Զադել Բագրատին, որոյ ոզորմութեանն և ա-
» ռատ պարգևացն որ առ աստուծոյնն՝ պատուղ
» է մերս նուաստութիւն, և ևս ինքագոնէ քան
» զմեզ. ընդ որում՝ զանձառ բարութիւնն ըն-
» կալցի փոխարէն »։ Որով կ'իմացընէ Վահրամ թէ Զապել կամ իր մանաւոր ծախքովն դաստիարակել տուեր էր զնա և անոր նմաններ, կամ պատճառ եղեր՝ ազգուններաց դպրութեան մէջ մտցընելու զնա։

Զապելի աւելի ևս հռչակեալ, գովեալ և օրհնեալ արդիւնքն՝ իր գթած և կարեկից սրտին արդասիք՝ ոզորմութեան գործքերն էին, որք և առանձնական բարեպաշտութեան գործոց քով՝ իր պայծառ հոգւոյն արտաքին ճառագայթներն կըրնային ըսուիլ։ Ժամանակակից պատմիչ մը[1] կ'ըսէ. « Ցոյժ բարեպաշտ էր կինն այն և ողջախոհ. սի-
» րող ամենայն երկիւղածաց Աստուծոյ, և ազ-
» տասէր. պահաք և աղօթիւք հանապազ ՀՐԳ-
» նէր »։ Իսկ 'ի թագուհւոյն բարերարեալ առեն-ադպիրն՝ իր ոտանաւոր գրած Լուսինեանց պատմութեան մէջ այլ կու դրուատէ զնա այսպէս.

1 Կիրակոս։

«Սա առաւել բարեպաշտեալ
Եւ հաւատովքն բարձրացեալ.
Սիրով յԱստուած էր միացեալ
Եւ յերկիւղ Տեառն խրատեալ.
Բալի գործովք էր զարդարեալ,
Եւ աղօթիւքն միշտ մաքրեալ.
Զխոնարհութեան զարդ ըզգեցեալ,
Զպարկեշտութիւն նախապատուեալ։»

Ոչ միայն անթիւ ողորմութեան գործքեր լուիկ և անցողաբար ըրաւ Զապել, այլ և երկարատև ծնայուն յիշատակներ թողուց. որոց գլխաւոր կարծեմք զյիշեալն ի գրոց Հէտանոցն Սոյ, զոր կանգնեց յամին 1241. և իր ծիրանածին զաւակներէն աւելի, եթէ կրնամ ըսել, գթով կու խնամեր զհիւանդս. ոչ միայն առատ ռոճկաւ՝ զոր իր զարդերէն և անցաւոր զբօսանքներէն կորելով՝ կապեր էր անոնց, այլ և անձամբ այցելութեամբ և ձեռաք դարմանելով, ըստ Խոսրովանուշայ բարեպաշտ գչխոյի Բուգրատունեաց։ Այս բանին ամենէն մերձաւոր և սրտակից վկայ է ինքնին իր փեսայն Հեթում Թագաւոր, որ իր մեկ պարգևագրին մէջ՝ գրեթէ Զապելի մահուան տարին գրած, այսպէս կ՚ըսէ. «Եւ կոզակիցս Զապել » Թագուհի, որ տառապանաց հոգոյ կրօնաւորս » և հիւանդս»։ Անշուշտ բոլոր Ռուբինեանց ազգութեան առեն անչինչ ծնացեր էր այս Զապելի գթութեան յիշատակարանն, թէ և Սիս քաղաքն շատ հեղ թշնամեաց և կրակի մատնուեցաւ. խակ յետ բոլորովին ազգութեան վերցուելուն և քաղաքին աւերման, և ամենայն արքունի յիշատակաց մոռացութեան, Զապելի քնաղ սրբոյն յիշատակին այս մեկ փոքրիկ յայտարար նշոյլն՝ յանկարծ յետ 600 բազմադէպ տարիներու՝ մեր օրերս յերևան ելաւ, (1833) Սոյ հի-

մակուան կաթուղիկոսարանէն մղան մը հեռու արևելեան կողմէն, հողու տակ մնացած սրբատաշ վէմ մը. զոր թէպէտ փճացուց մոլեռանգն նախանձ այլակրօնից, բայց բարեբաղդաբար վերայի արձանագիրն մնաց օրինակուած. և էր այսպիսի.

ԿԱՑԱՐԵՑԱՒ
ՑԱՐՄԱՐՈՒՄՆ ԵՒՆՈՒԱԵՈՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՍ
ԳՐԻՍՏՈՍԱՍԻՐ ԹԱԳՈՒՀԻՈՑ ՋԱԳԵԼԻ
Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՈՂ.

Ցուսալի է որ ազգերնուս երախտագէտ պատկառանքն և սէրն առ յետին գերահռչակ մայրն և տիկին իւրեանց՝ Զապել, չուշանայ անոր ուրիշ յիշատակ այլ յերևան հանել, 'ի փառս անցելոցն և 'ի մխիթար մնացելոցս։

Թ

Բայց Զապելի ամենէն մեծ և գովելի շնորհքն՝ իր սրբասէր և երկիւղած կենցաղավարութիւնն էր, զոր այնպէս զմայլելով յիշեն ամենայն ակնառուքն և մերձաւորք ժամանակաւ, ինչպէս քիչ մ'առաջ լսեցիք. որոց մէկն այլ համառօտիւ կոչէ զնա «Ամենագով Բագուհին Զապել». միւս մը՝ «զգուշակենցաղ Թագուհի և ըստ Աստուծոյ » քաջաքավարեալ». ուրիշ մ'այլ՝ թէ «Աստուածահաճոյ կենաց կային 'ի Գրիսատոս» (ընդ Հեթմոյ)։ Իր բոլոր հոգն իրեքի գարձընելով՝ առանց իրարմէ բաժնելու. 'ի խնամս մայրական և տիկնական, (որոց համար իմացաւ իր կոչումը, և թէ անկէ հրաժարելն՝ իր աշխարհքին մեծամեծ չփոթութեանց և կռուոց պատճառ պիտի ըլլար) 'ի խնամս ազգատաց և կարօտելոց, և 'ի

խնամն ներքին մարդոյն, իր հոգւոյն. զոր և յարքունիս և 'ի լծակցութեան առն թագաւորի' իբրև 'ի կուսասանի ամօթխածութեամբ և համեստութեամբ զորդարէր. և բազմաբոլորով զաւակացն՝ միանգամայն գորովի մայր և արթուն դաստիարակ էր։ Եւ այնքան պարտուց և պատշաճից մէջ՝ երբ մինակ ըլլար յարքունիս (շատ հեղ Հեթմոյ պատերազմի կամ ուրիշ գործոց համար հեռանալովն), յառանձնութեան պալատանն ճգնէր գոհոյ և աղօթից։ Բայց իր աստուածասէր և մարդասէր սրտին միշտ բաւական չէր ըլլար առանձնակեաց սրբութիւնն. շատ հեղ պալատէն դուրս կ'ելնէր՝ թէ իբրև յայտնի թագուհի և թէ իբրև ծածկեալ անծանօթ անձ մը, երթալ վանքը՝ ուր որ բարեպաշտութիւն և ողորմածութիւն կրնային տանիլ։ Կ'երթար երբեմն իր սիրելի զբօսարանը, իր դաստակերտ թէատրոնը՝ լսելու սրտառուչ ձայներ. կ'երթար իր Հիւանդանոցը և Աղքատանոցը. կամ ուրիշ հիւանդանոցներ և առանձին տուներ, ուր այլ որ լսէր թէ հիւանդ մը կամ երեսէ ընկած մը կայ, կամ կարօտ մը թէ մարմնաւոր թէ հոգևոր դարմաններու։...

Կու յիշեմ զմեծ և դիւցազնաբար կայսրն Օգոստոս, որ իմաստութեան այլ պատուոյ՝ շատ հեղ կու հրաւիրէր իր առանձին սեղանին կցորդ՝ իր ժամանակին երկու մեծ բանաստեղծքը. Վիրգիլիոս և Ովրատիոս. ասոնց մէկն, կ'ըսեն, շնչաւորութեան նեղութիւն ունենալով՝ սաստիկ հեկեկալու ձայն կու հանէր. մէկայլն՝ սչքը ճպռտա՝ սաստիկ արտասունք կաթէր. Օգոստոս կու ծիծաղէր ու կ'ըսէր. «Ստեալ կամ ես ընդ մէջ արտասուաց և հառաչանաց»։ — Վիրգիլիոս կը լուիդ, ով սիրելի՛ սեբաստոս Օգոստոս, որոյ մեծութեանդ արքաներն և կամարներն 'ի

Տիբերիսէ մինչև ի Սանգարիս [1] գետ կանգուն են, որ Անկիւրիոյ յիշատակարանիդ մէջ յիշեա Հայոց թագաւոր մը դնելդ այլ. տես, (եթէ կրնան տեսնել այն աչքերն՝ որ 14 տարի մէկտեղ ապրելով՝ չտեսան զերկնից և զերկրի լոյսն՝ Քրիստոս) տես զՀայոց թագուհիս այս, որ Քրիստոսի խաչին նըշանաւ թագը կապեր և բարձրացուցեր է. տես ով մեծդ և ամենամեծդ յերկրի, տես այս փոքրիկ դշխոյս Կիւլիկիոյ, թէպէտի արտասուաց և հառաչանաց մէջ նստեալ կայ, և կու սիրէ ներսիկ ընդ երկար. լսեցիր գու այլ այսպիսի հեկեկանք մը. սրբեցիր այսպիսի արտասուք մը. ներսամբ երբեք ընդ մէջ հեծուութեան հիւանդաց և արտասուաց աղքատաց։ Տես.— մինչ տեսնէք հոս զՀապել. ինչպէս ոմանց առատապէս ստակ. ըզգեստ և գեղ բաշխէ. ոմանց անձամբ այլ ծառայէ, սփոփէ, մխիթարէ. — ինչպէս, շատերը՝ աւելի առատ ու քաղցր սրտով և բերնով կու յորդորէ հոգինին հոգալու. հին եկեղեցւոյ զգաստ այրեաց և սարկաւագուհեաց նման՝ կու սովրեցնէ ոգիատաց զկանոնս և հրամանս հաւատոց. կու սիրեցընէ անհոգներու՝ եկեղեցւոյ սուրբ խորհուրդները. կու յիշեցընէ իրենց անցեալ վարքը. ի զբաղջումն կու շարժէ խիստ կամ աղաստ սրտերը. խոստովանել կու տայ մեղքերնին և սուրբ հաղորդութեամբ զօրացընել հոգինին. և այսպէս զոմանս մարմնով բժշկէ, զոմանս այլ հոգւով յաւիտեան հանգչեցընէ։ Իսկ այնպիսի տեսլուանք՝ ուր որ պատշաճողութիւնն կամ սաեանն չեն թողուր իրեն երթալ, իր հաւատարմաց մէկը կու զրկէ՝ նոյն ինամք և հոգը մատուցանելու։ Ցաւելէ այս բաներուս մէջ կու ճանչնար զինքն՝ թագուհի և մայր աղքի։

[1] Զէքարիա-սու. Անկիւրիոյ քովէն անցնող գետն։

Երբեմն այլ իր որոին վերաթռիչ կրակէն վառուած ու վարուած՝ կ'ելնէր գաղտուկ հաւատաւորի մը պէս, գլուխը քօղով ծածկած ու 'ի գետին խոնարհած, հոգւով քան թէ աչքով տեսնելով զՇամբան. կու փուլթար կ'երթար ուխտաւորներաց և վանորէից դրանց քով աղօթքի կենալու. մանաւանդ ուր որ լսէր թէ սուրբ անձ մը կայ, ոչ միայն հոն անոր մօտ փափագէր հասնիլ, այլ և կ'ուզէր նոյն Շամբէն երթալ, նոյն հոյն ու քարգ կոխել՝ զոր սրբազանն կոխած էր։ Փանք լուռ և անչփոթ ժամեր, քանի՛ մութ ու ցուրտ գիշերներ, լուսնկայ կամ անլուսին երկինք՝ տեսան մեր ջերմեռանդն ուխտաւորը՝ անծանօթ և անմարգաձայն Շամբուն վրայ. ոչ ձմրան ձիւն ու բուք, ոչ աորոսական ցուրտ պախրցին, ոչ հողմակոծ ծառերուն և ջրերուն մրմռալն, գազանաց մռնչիւն ու կանչելն, և ոչ յանկարծ դարաձորի մը և իր առաջին պայլը սպաննող աւազակին պատահելու վախն, կրնան արգիլել զսրբասէր թագուհին։ Իբրև այն հրաշալի հարան տիեզերական փիսային խանդակաթ՝ կու լսէր անոր ծածուկ ձայնը. «Ե՛կ 'ի Լիբանանէ (՝ի քո պալատանէ) հարսն. եկ այսր 'ի Լիբանանէ. եկեսցես և անցցես 'ի գլխոյ հաւատոյ, 'ի կատարէ Սանիրայ և Հերմոնի, 'ի մայրեաց առիւծուց և 'ի լերանց ընծուց». և կ'անցնէր կ'երթար իբրև զաղաւնին միակ կատարեալ և գեղեցիկ՝ կենալու սրբութեան տաճարաց դրանգեանց ներքև. անձայն լռիկ աղօթքով՝ սրտանալու 'ի սէր հոգւոյն տիրոջը, և սրտացընելու զնա իր մաքուր սիրոյն։ Երբեմն այլ Շամբուն վրայ կանգ առնելով, հազիւ վանաց և եկեղեցեաց դրանց մօտեցած՝ կ'ընկնէր 'ի ծունկս, կու պագնէր սրբազանից կոխած գետինը, կու թրջէր մարգարտակաթ արտասուքը. կու քսէր գալար գէմքերը այն կրկին սբ-

բեալ հոգին ու կաւոյն վրայ. անով կու չթէր շպարէր թագաւորին Հայոց իր պայծառ հոգւոյն գրսի հայելին։ Այս էին սիրելագոյն զարդարանք և գեղեցրանք և զբօսանք Զապելի։

Այսպիսի դէմք, այսպիսի սիրտ, այսպիսի հոգի՝ ի՞նչ կերպով կրնար երևիլ աշխարհային և թագաւորական հանդիսից մէջ։ — Ինչպէս որ կու վայլէր սուրբ և զգաստ գլխոյի մը. որ իր ամեն պարտքը և պաշտօնը գիտելով՝ չէր պակսեր և ի ոչնից և յընկերութենից, անունց նոր վայելչութիւն մ՚աւելցընելով իր չափաւորութեամբ և պարկեշտութեամբը. և ինչպէս արքունի ծիրանեաց վերարկուք չէին կրնար խափանել իրենց ներքևէն հագած խոշոր և խայթող զգեստը, և ոչ այլ շնորհագեղ թափանցիկ ժպիտն՝ հոգւոյն զբաղարթութեան ճառագայթը. ասա էր զինքը աւելի պատկառելի ընծայողը՝ քան իր ծաղկած հասակն և ծանրագին թագն։ Ոչ ոք երբէք լսեց այն շրթունքներէն աւելորդ խօսք կամ կատակ մը, և ոչ ձայնով ծիծաղ մը փրթաւ բերանէն. ծանրիկ լրջութիւնն՝ բնական ձև և գոյն կ՚երևէին իր կերպարանացը։

Ժ

Բաներուս բարերաղդաբար վկայ ունիմք. Հայկակ, ժամանակակից յիշատակագիրներ, բայց գժբաղդաբար՝ այսչափիս միայն. ուր էր թէ աւելի ըլլային կամ մեզի հասնէին այսպիսի յիշատակք, և այլ աւելի բաներ պատմած ըլլային Զապելի վրայ. գուցէ մեր միջէն այլ եղեր Մոնգալանպէր մը մանրամասնաբար գրելու Հայոց արքակենցաղ գլխոյին վարքը, որպէս նա Ունկարացի գլխոյին և Զապելին (Եզիսաբեթի)։... Այս

յիշատակը՝ որ յանկարծ բերնէս ելաւ, կու սաիպէ զիս, Հայկակ, խորհրդածութիւն մ՚այլ ընելու և ցուցընելու զարմանալի և վերնախնամ հանդիպակցութիւններ այս երկու թագուհեաց մէջ, որ թերևս դեռ դիտուած չեն և կ՚արժեն մատաղրութեան։ — Երկուքն այլ համանուանք. երկուքն այլ ժամանակակիցք, դշխոյն Կիւլիկիոյ և դշխոյն Փուրինկիոյ. ասիկա՝ իբրև տասն տարի յառաջ ծնած քան զմերն, 20 տարի այլ անկէ առաջ բոլորեց կեանքը. նա երկու երկվեցեակ տարի ապրելով, մերս՝ երկք։ Երկուքն այլ չորս տարեկան էին՝ երբ իրենց վիճակին տիրուհի սահմանուեցան. երկուքն այլ նոյն մէկ տարուան մէջ (1221-2) պսակուեցան. Զապէլ ընդ Ֆիլիպի, Եղիսաբեթ ընդ Լուդվիկ Հերմանայ գաւառատեառն (Լանտգրաֆի)։ Բայց մեծագոյն և հրաշախառն հանդիպումն այս է, որ տունն մը՝ քանի մը տարի սահմանուած էր՝ որ այս երկու լեռնաբնակ հաւբալներս իրարու քոյր ըլլային. Փուրինկիա և Կիւլիկիա սխրալի կերպով զիրար ողջունեցին։ Եղիսաբեթ՝ դուստր է այն Անդրէասի և քոյր այն Անդրէասի՝ որոց մէկն Զապելի այր, միւսն սկեսրայր պիտի ըլլային. և եթէ անունք չեղան, եթէ Զապել չեղաւ կողսկից կրսեր Անդրէի, և եթէ երկու սրբաձեմ աղաւնիքն չեղան թևակիցք մէկ թառի, մէկ սեղանի, մէկ խորանի քով, եթէ Ունկարաց սուրբ օրիորդն երիցուքեամբ հասակին չգրկեց ու գգուեց զօրիորդն Հայոց, և ոչ սա բազկիկ բոլորելով անոր նազելի վզէն կախուեցաւ. սակայն երկնաւոր բաղդն զուգեց գրեց ըրաւ զանոնք քոյրակից, գործակից, հոգեկից։ Ինչ մասնաւոր առաքինութիւն և գործ տեսանք Զապելի վրայ, զնոյն պատմեն և Եղիսաբեթի վրայ. երկուքն այլ նոյնպէս սրբասէր, աշխարհատեաց, պահեցող, աղօթող, աղքատասէր, հիւանդա-

պան։ Զապել վանից և եկեղեցեաց դրանց քով կ'աղօթէր. Սղիսաբեթ երբ իր պալատին մատրան դուռը գոց գտնելու ըլլար՝ դուրսը ծունկ դրած կ'աղօթէր. — Զապել իր մայրաքաղաքին՝ Սոյ մէջ՝ հիւանդանոցը շինեց, որ ուզած առեն հրթայ դարմանէ ցաւագարները. Սղիսաբեթ իր Մարբուրկի ապարանից սառրոսը շինեց հիւանդանոց մը, նոյնպէս խնամք տանելու։ Երկուքին տմուսինքն այլ տեսնելով իրենց ընկերին բարեպաշտութիւնը՝ թողուցին համարձակ և գործակից այլ եղան անոնց առաքինի գործոց։— Երկուքն այլ գրեթէ նոյն մէկ տարուան միջոց (1225-6) իրենց երկրաւոր մեծ կորուստն ըրին, Զապել ըզՖիլիպ, Սղիսաբեթ զՀերման. սա 20 տարուան երեք զաւակօք այրի մնացած՝ իր անարժագին գրգռութեամբը՝ իրրև տէրութեան գանձը վատնող (առ աղքատս), հալածեցաւ յարքունեաց, և իրրև անաշխարհիկ պանդուխտ վարած մնաց մեծ չարակրութեամբ և աւելի մեծ ու սրտառուչ համբերութեամբ. մինչև հալածողն անգամ զգաստանալով՝ նորէն դարձուց զՖիլիպն յարքունիս. բայց նա իր զաւակաց վիճակն ապահովացընելէն ետև՝ քաշուեցաւ պալատէն դուրս առանձին տնակի մը մէջ, և միանձնական գնաստ հագնելով (Ս. Փրանկիսկոսի երրորդական կարգին), քիչ առենէն մեծ ճգնութեամբ և սրբութեամբ կնքեց կեանքը (19 նոյեմբ. 1231), և քանի մը տարիէն (1235) դասեցաւ և յեկեղեցւոյ 'ի կարգս սրբոց։ Այս վրայոց և հալածանաց՝ կերպով մը կրնայ համեմատուիլ նոյն առեն Զապելի դուռը՝ Ֆիլիպի սպանման վրայ, առանձնանալի 'ի Սեալ կիս, և բռնի բերուիլն 'ի Սիս յընկերութիւն Հեթումայ։ Եւ եթէ սա այլ Հերմանայ պէս վարամեռ ըլլար՝ անտարակոյս է որ Զապել այլ Սղիսաբեթի միանձնական կեանքն կ'ընտրէր, ո-

րուն արդէն այնչափ փափագեր էր յառաջ քան զպսակիլն ընդ Հ.Ելիմոյ։ — Նախախնամութիւնն այսչափ սահմանեց երկրի վրայ նմանակցութիւն այս երկու թագուհեաց, որոց անշուշտ աւելի մեծ է նմանութիւնն յերկինս. ուր՝ թէպէտ քանի մը տարի ուշ և աւելի ապրելով, բայց դեռ շուտ և անկատար կենաք՝ Թռաւ և Զապել առ զուգակից անուանն, բաղդին և հոգւոյն. թողլով անմիջիթար յերկրի իր երկրաւոր զուգակից և թագակիցը, անկէց ունեցած զաւակները, (որոնց ոմանք դեռ հաղիւ իրենց մօր կաթը և սիրոյն մեղրը Հաչակեր էին) և բոլոր զինքը պատուող և պաշտող աշխարհը։

ԺԱ

Արդեօք դիպուածական ցաւ մը, թէ իր փափուկ սրտին հին հարուածէն բուսած վէրքն, թէ մանաւանդ սաստիկ փափագն առ լաւագոյն երանաւէտ կեանս, իր արդէն գեղեցիկ կեանքը փութացուցին 'ի գեղեցկագոյն վախճան, առ 'ի փոխել յամենագեղեցիկ կենդանութիւն։ — Ո՛հ. քանի՜ քաղցր և անոյշ էր այն հոգւոյ հրաւէրքն՝ որ եկաւ իրեն ('ի 22 յանուարի 1862ի). — Ձայն ցանկալի երկնաւոր և անմահ փեսային, որուն հարանացեալ է ամենայն մաքուր և մաքրասէր հոգի. — վասն զի ինչո՞ւ է հոգին՝ եթէ ոչ առ միանալ իր ստեղծողին հետ. — Ձայն Քրիստոսի Աստուծոյ, զոր ոչ միայն հոգւոյն անշուշտ անյօդ ականջին իմացաւ Զապել, այլ և զգալի կերպով մը լսելով՝ անպատմելի ուրախութեամբ իմացուց իրեն քոյնն եզով և իբրև հիւանդի նայողներուն, թէ ահա լսեմ ձայն՝ որ կանչէ զիս. Ն՛է ոզանի իմ, Է՛է Լոգարէաւ իմ, Է՛է Գրէեալ իմ. և այս

խօսքս իրրև վերջին բարով ձեաք ըսելով մերձակայիցն, հոգին՝ հոգւոյն փափագողաց հետ խառնուեցաւ, թողլով յերկրի քմծիծաղ ու պայծառ՝ այլ անշարժ մարմին մը, 'ի տուգ և 'ի սէր հասարակաց։...

« Իսկ Թագուհին զկնոջն աւանդեալ
Ու 'ի կէտ կոչմանքն ժամանեալ.
Զայն 'ի յերկնից ըզնա կոչեալ,
Զոր իւր ունկամբն յայտնի լսեալ,
Ն՛կ աղաւնի՛ իմ, ասացեալ,
Ն՛կ սիրելի՛ իմ կատարեալ։
Իսկ նա յորժամ զայս ձայն լսեալ
Զբարթագին սրտիւ բերկրեալ,
Տնալնամբ կերպին զբարձացեալ
Եւ 'ի հոգին իւր ցընծացեալ.
Մերձակայիցքն զայս ազդեալ,
Եւ ընդ պատմելն՝ իսկոյն փոխեալ.
Զհոգին 'ի ձեռս Տեառն աւանդեալ,
Զխեցին ունայն՝ յերկրի թողեալ։
Զոր քահանայքն ակումբ առեալ
Զնա օրհնութեան հողոյ տրեալ։
Արդ թագուհին յերկրէ ելեալ
Եւ առ Փրիսատոս վերափոխեալ։»

Այսպիսւոյ բարւոյ և բարեբարի, սրբակեաց և սիրելւոյ թագուհւոյ, հարսին և մեր մահ՝ որչափ ցաւալի և սգալի եղած է կենակցին, զաւակացն, մերձաւորաց, պաշտօնեից և բոլոր աշխարհին, ազատաց և ռամկաց, տղքատաց և հիւանդաց, կրօնաւորաց և զինաւորաց, քեզի գիւրագոյն է հասկանալ, ինձի աւելորդ ըսելն։ Հայկակ. աւելորդ սեպեմ և խառնել զքեզ անոր երկարաշար յուղարկաւորաց մէջ, յոր կրնամք եկած սեպել զբովանդակ Միւլիկիա և զմեան Ամպլոսի և Անտիոքայ. եկեղեցական, քաղաքական

և զինուորական խմբերով. որոց մէջ չէմ այլ կըրնար գոնէ պարզած պատկառանքը մատնանիշ ընել՝ երկու զանազան ձևով բարձրապատիւ ալևոր գլուխներ, երկու նահապետքն Հայոց, երկու անուանակիցքն, Կոստանդին կաթուղիկոս և Կոստանդին արքահայր, խնամակալք և գաստիարակք Թագուհւոյն և հայրաբար սիրողք. որք իրրև երկու մեծամեծ մայրիք մրրկաշարժ անառաի մը՝ իրենց դիմաց իրենցմէ շատ գալար և ծաղկաբողբոջ միջաբեկեալ ծառին վրայ ծռած՝ գողգոջուն ճիւղերով կ'ողբրին կ'երերան։ Բայց գարձընենք աչուընիս իրեն գիլ ու գալար բարակ բարուոնակներէն, որոց անդրանիկն (Լևոն) դեռ հազիւ 16 տարեկան է. գարձընենք մանուանգ այն փափուկ անկոյն նեցուկ ու նշդարիկ եղող արքայազնոյ նման պանծալի՝ բայց հիմակ քակեալ մենացեալ և կորացեալ Թագաւորէն... Հեթում՝ այն օրերն մեծ պատրաստութեան մէջ էր, հարկաւորաբար երթալու առ Մանգու խաքանն Թաթարաց՝ յաշխարհ հեռի։ Զապելի յանկարծ յանդարձ աշխարհ երթալն՝ այնքան խոր և արժանաւոր սգով պատեց զայրեացեալ Թագաւորն, որ երկու տարի չկարցաւ հեռանալ սեւ սենեկէն, ապա թէ գնաց։

Հեթում՝ ոչ կենակից և Թագակից միայն էր Զապելի, այլ և անարգել գործակից անոր սըրտին բարի բերմանց. և եթէ իր արքունի անհրաժեշտ պարտքն և 'ի մօրէ որբացեալ զաւակներուն հոգն՝ չպատուիրէր, թերևս աւելի շուտով թողուր ինքն այլ Թագը, և առանձնակեաց հոգեկեաց մ'ըլլար. ինչպէս որ ըրաւ այլ վերջը, յետ տնոլսաւորելու իր դստերքը՝ և Թագը Թողլու (յամին 1269) առ անդրանիկն Լևոն։ Եւ սա իր ցանկալի և ցաւալի մօրն անմուսաց յիշատակը կերպով մը կենդանացընելու համար՝ իր իրեք և-

րեց գաւերքն անուանեց Զապլուն, Զապել. Սի-
պիլ։

Զապել թագուհւոյ մահացու նշխարքը անմա-
հութեան մաղթանք և անուան յուսոնին պատե-
լով ու կնքելով՝ հանգուցին 'ի տապանատուն
Ռուբինեան պայազատաց, 'ի վանքն Դրազարկ,
ուր նախ հանգչեր էր տեղւոյն շինողն Թորոս Ա,
թոռն Ա և մեծ Ռուբինի. և իրմէ ետքն իրեն ցե-
ղէն շատ պարոնայք և պարուհիք. և ուր յետ
19 տարւոյ (1270) հանգուցին թագուհւոյն քով
իր թագակից և կողակիցն այլ, թէ իրրև արքայ
Հեթում և թէ իրրև Նղբայր—Տակոր. որ և Զա-
պելի պէս բազդ ունեցաւ օտար տուրբ թագաւո-
րի մը հանգիստակից ըլլալու։

Իրենց երախտագէտ և սիրանուէր որդիքն և
պայազատք՝ արքունի արբապատում Յայսմաւուր-
քաց մէջ նշանակեցին Հեթմոյ հանգստեան օրը
(28 հոկտեմբերի), և այս օրս (22 յանուարի)
Զապելի պաշտելի յիշատակը. զոր 'ի կեանս և 'ի
մահուն՝ ճանաչողք և մերձագայք՝ սորէ[1] անուա-
նէին. ինչպէս որ Հեթմեանց[2] յիշատակն այլ՝ ոչ
միայն մեր այլ և լատին միանձանց՝ հին ժամա-
գրոց ոմանց մէջ անցած է երանելեաց կոչմամբ։
Սրանք էր ազգիս այլ, եթէ՝ ինչպէս շատ արժա-
նաւորաց յիշատակն անմահացուցեր է, զոմանցն
այլ նորէն արթընցընէր։ Իսկ քեզ, Հայկակ, ան-
շուշտ ախորժելի կ'ըլլայ, քու ընտանեաց և մեր-

1 Այսպէս գովութեամբ անուանէ զնա և ժամանակա-
կից ու բարեկամ Հեթմոյ՝ Սորբի պատմիչն Պուլղարաց։
2 Թէ Հեթում Ա, Թէ իր թոռն Հեթում Բ, և թէ
իր եղբօր որդին Հեթում Պատմիչ տեր Կոռիկոսոյ, ի-
րենք այլ կրօնաւորած են 'ի վանս Լատինաց՝ 'ի Հռոմ, 'ի
Նիկիոս և 'ի Փրանկաստան. որոց վերջն յիշ մը կու ը-
փոխեն իրարու հետ արեմտեայ պատմիչք։

ժաւորաց մէջի մասազաշ Զապելեաց ծանօթացը-նել՝ իբրև իրենց նախընթաց օրինակ համեստու-թեան և իմաստութեան ու պաշտպան մեր ազ-գին վերջի պայազատութեան մէջ ամենէն անուա-նի, պատուելի, սիրելի և սրբենի եղած թագու-հին [1] Զագեալ։

1 Ցեռ Զապելի՝ նու նորա առաջին թագուհին Հայոց՝ կին Գ Լեւոնի՝ կիսուն՝ որ է նիս Անանա (Ֆիրիս-Անանա) գուսար Լամբրոնի տիրոջն, իր սկեսրին բարեպաշտու-թեան համար բռնեց, և աւելի բազմաթիւ գաւակաց մայր ըլլալէն ետև՝ կրօնաւորեալ մեռաւ (23 յուլիսի 1285), մեծ համբաւով որբոկան վարուց. սա կոչուեր և թիւանի, այսինքն թէոֆանիա։ — Ղեղնպէս գովութեամբ յիշ-ուակուին՝ իր քոյրն Մարիան (3 գեկտ.) — իր երեք վերջ-ին յիշեալ Զապել անուն դուստրքն. իր տալն Ֆիգ.— Դ Կոս-տանդին թագաւորի մայրն Մարիան տիկինն (27 յուլիս). — և վերջին թագուհին Հայոց Մարիան, կին Զ Լեւոնի, և իր դուստրն Փինա. — Նախ յիշուած Ռ Զապել՝ կինն Օլին թագաւորի (3 մայիս)։

9.

ԳԵՐԵԴԱՐՁ Գ ԼԵՒՈՆԻ

6 փետրուար — 1289 *.

Վասանք երեկոյեան խարոյկը. բոլորինք հայրենի կրակարանին եղերքը. 'ի Կիւլիկիա. յարքունիս Թագաւորին Հեթմոյ. Հեթում (այս անունը կրողաց մէջ ամենէն անուանի և սիրելի անձն) Հեթում Ա. յաջորդ մեծին Լեւոնի. ինքնին հրաւէր կու տայ, և քան զուրիշ սարքիներ սեղանի արտարանքք. իր հաւատարիմ հպատակացն և պարոնայցն. գալու ժողովելու բազմութեամբ, և Խառաւանդայանութեան մեծ ուրախութիւնը կատարելու։ Կու փութան իշխանք և պարոնայք՝ ապահովցնել իրենց ամուր բերդերը և իշնել լեռներէն. ելնել պարապատուս քաղաքներէն և ժողովիլ 'ի Մսիս։... Եւ ինչո՞ւ ոչ 'ի Սիս. յաթոռն Թագաւորաց։ — Մի հարցընէք։ — Պարոնայքն գալու և անցնելու առեն՝ կու նային մէկ մը այն մայրաքաղաքին կողմը, և գեռ եգիպտական սև ծխոյն նշանը սեանելով. գլուխնին շարժե-

* Ս. յ Թուականս է մահուան Լեւոնի. գերութիւնն Լուսաւորի 1266 տարւոյ, գերեցարէն 'ի 1268։

լով՝ երեսնին խաչակնքելով կու փոխեն ճամբանին. թէ և շատ դժար կու գայ իրենց յառաջելն, վախնալով Թագաւորին տխրամած դէմքը տեսնել. սակայն մէկ մ՚այլ իրենց հրաւէրքի Թուղթերուն վրայ նայելով, և տեսնելով անոնց արքունի կարմիրկապ կնիքը՝ սիրտ կ՚առնուն, և կու մտնեն՝ի Մսիս. որոշեալ օրը՝ նախ քան զաւոնն կու ներկայանան միաբան, բարևել և շնորհաւորել Թագաւորին զնոր տարին և զաւագ տօնքը։

Սիրով և պատուով կ՚ընդունի զնոսա Թագաւորն. և փոխարէն ողջոյններ տալով՝ կու հրամմէ որ նստին. և նախ ինքն կու բազմի ծանրութիւն իր գահը։ Ո՛հ. որչափ այլայլոխուեր է Թագաւորին դէմքն քան զանցեալ տարին։ Տարի մը միայն կըրնար այդքան աւելցընել հաղիւ վաթսնամեայ գըլխոյն ալիքը, որ ոսկի պսակին տակէն կախուած՝ իր սպիտակ արքունի բեհեզեայ քղամդին կու խառնուին. և երկընցած դէմքն այլ այն գլխուն դեղին Թագին կու նմանցընեն։ Ո՛րչափ տարբեր էր այդ դէմքն այն Հեթում Թագաւորի ոսկեհատիկ վառվռուն կերպարանքէն, երբ այդպիսի հանդիսական օր մը բարձր գահուն վրայ եկած տեսն, Կիւլիկիոյ ամենէն ազնիւ ծնունդն՝ տիկնաց տիկին Զապել, գուստրն մեծին Լեւոնի, անոր սէր կողմը կու բազմէր, այն իր կենակից և Թագակից դշխոյն. գահուն բոլորը բռնէին իր հինգ վեհակերպ մեծապատիւ եղբարքն, Սմբատ գունդըստապլն՝ հին Հայկազանց և Վարդանանց նախանձորդ՝ սպարապետն Հայոց, Լեւոն՝ մեծ մարաջախտն, Լիկոս՝ գայլանուն կորիւն, Բարսեղ՝ վանմափսլ արքեպիսկոպոսն և առաջնորդ Դրազարկու, և Յովհաննէս՝ երիտասարդ արքեպիսկոպոսն Մամեստիոյ և առաջնորդ Արքակաղնոյ. գահուն ստորոտը Սողոմոնի սուտ առիւծներուն տեղ՝ երկու եռանգուն կրակոտ կորիւնք կենային՝ Լեւոն և

Թորոս Թագաւորդիք. և իբրև ամենուն հովանի՝ Թագաւորին ձախ կողմը նստէր փառօք իր ջոջգլուխ արքայազնայրն՝ Սողոմն Կոստանդին, աբրահամեան ծերունին[1]։

Այդ յիշեալ մեծափայլ և մեծազօր արքունական սիւներն՝ այսօր խորտակած կ'երևին ժամանակի օրէնքէն. միայն ամենէն կրտսեր արքայ-եղբայրն Յովհաննէս արքեպիսկոպոս՝ մէկդին բազմէր, մէկալ դին այլ ամենէն մեծն՝ ծերունազարդ սպարապետն Սմբատ, ոսկեկոթ Թրին վրայ կրոթնած, երբեմն երբեմն Թաւ Թաւ յունելուն տակէն երկու խոր կայծակներ պոռացընելով։ Թագաւորին գլուխն այլ ծանրացեալ կ'երևի գրեթէ կէս դար կրած Թագն. հն երկայն և բազմափորձ տարիներ պէսպէս գոհար քարերու պէս շարուած էին անոր վրան. որչափ զանազան տեղուանք, որչափ զանազան անձանց մէջ կանգներ էր Հեթում այն գլուխը. որքան երկայն և տարեւոր Համբաներ ընելով՝ Ափրիկիոյ գոնարէն մինչև Թաթարստանի խորագոյն անտառները՝ աղգին և տանը համար քրտնելով, կիմանայր հիմա պատկին ծանրութիւնը։ Եւ Թերևս անկէ եաև փափագելի էր իրեն հանգչեցընել այն յոգնած գլուխը, ըլլար նաև սև քարի մը վրայ։... Բայց արտին վրայ այլ կայ ծանրութիւն մը, և շատ մեծ ծանրութիւն. ինչուան որ զայն չեթեթացընէ, իրեն համար մահն անգամ անհանգիստ է։...

Ասոնք մեր մտածութիւններն չեն. այլ այն բազմախումբ պարոններուն՝ որք բազմեր են Թագաւորին դիմաց։ Իսկ Հեթում իբրև Թեթև քնէ մը Թօթռուելով գլուխը, և ծանուկ կրակով մը վառելով աչուքները՝ կու գարձընէ հոն եղող իշխանաց վրայ, և յետոյ կու հրամէ սենեկապան

[1] Այսպէս կ'անուանէ զնա իր որդին Յովհաննէս։

սպասաւորաց՝ որ պակասներն այլ կանչեն և նը-
ստեցընեն. իսկ սպասաւորք կարդէն պակաս չգրա-
նելով՝ կ'իմացընեն որ ամենքն այլ հոն են։ Թա-
գաւորն նորէն աչք դարձընելով՝ կու տեսնէ, թէ
ոչ շատ, այլ մեծ պակաս. կու հրամմէ կու սոխ-
պէ որ զանոնք այլ կանչեն։ Սպասաւորք չփոթած
կու նային կու համրեն, պակաս չեն գտներ, և
վախով մտաենալով կ'ըսեն, Սուրբ Թագաւոր, ա-
մենքն հոս են։ Թագաւորն ներշանայ. սպասաւորք
իրար կ'անցնին, իշխանաց կու դառնան. ասոնք
այլ կ'ապահովցնեն զԹագաւորը, թէ Սուրբ Թա-
գաւոր, ամենքն այլ որոց հրաւէրք և պատուէր
խաւրեցիք, հոս են, պակաս չկայ պարոններէս։
Այն առեն Թագաւորն անդամ մ'այլ սրափայլ
աչքերը չորս դին դարձընելով, և բարկացեալ՝
այլ մարմրած և հեծկլտած ձայնով կանչէ. Եթէ
ամենքն հոս են, ո՞ւր են հապա պարոնաց պա-
րոնքն, Լեւոն և Թորոս...։

Լեւոն և Թորոս. երկու կրակէ նետերու պէս
Թռան այս անուանքս Թագաւոր հօր մը բերնէն,
և ընաց ողջ սիրտ մը. իշխան, պարոն, եպիսկո-
պոս, ձիաւոր, սպասաւոր, ամենքն վիրաւորի
հառաչանք մը փրցնելով կու սկսին լալ վայել,
երկինք երկիր նայիլ. բոլոր արքունական առեանն
նոր մեռած անդրանիկ զաւկի մը սգասենեակ դար-
ձաւ. Թագաւորն ծածկեց հայրական դէմքն իր
սպիտակ բեհեզին տակ. և մէկն չէր համարձա-
կեր մտենալ. բան մը ըսել, մխիթարանք մը տալ.
պարոնաց գլուխն 'ի գետին կորացեալ, վարդա-
պետաց և եպիսկոպոսաց շրթունքն դողով համ-
բացեալ, կ'ուզէին որ եղածն երազ ելլար. և թէ
չէր կարելի անկէ հեռանալու՝ գոնէ անզգայ ըլ-
լալու։ — Բայց մվ կրնայ անզգայ ըլլալ, երբ ձիա-
ւորաց պարծանքն՝ զուարթունն Թորոս՝ դեռ իր
չորեքամսեայ գերեզմանին մէջ սև սև վէրքերուն

նշաններով ահեղ գիւցազին նման պատկած կ'երևէր գիմացնին... և երբ լուսագէմ Թագաժառանգն Լևոն՝ բարբարոս Պէյպարս սուլտանին սև բերդին մէջ շղթայակապ տանջուէր։ Անվախ Սմբատ անգամ, հօրեղբայր սիրուն և կարիճ կոբեանցն, ձեռքը Թրին, Թևն 'ի գահ Թագաւորին կոթընած՝ արտասուալիափ աչքերը վերուցած առեն՝ կարծուէր Թէ մեկէն պիտի ցատքէ և արքունի նիզակներէն մեկը կորզած՝ վազէ երթայ Ս'սրայ սուլդանին գահը կոխէ, և իր եղբօրորդին՝ պարոն Լևոնը, յափշտակէ բերէ հօրը գիրկը։ Իսկ երբ գլուխը Թօքնուելով նորէն դէպ 'ի կուրծքը կ'իջնցներ, կարծուէր Թէ աշխարհք անցեր է Հայոց տանն համար։ և ամենքն այլ գլխակոր մընային։... Փանտր սուգ մը պատեր էր Հեթմոյ արքունիքը։ արևելք և արևմուտք, Փաթար զանէն և սրբազան Պապէն եկած մխիթարութեան գրերն անգամ՝ չէին փարատած զայն։...

Ի՞նչպէս եկաւ այն սև սուգն, ինչպէս եղաւ այս չար գիպուածն։ — Գիտես Հայկակ, որ Կիւլիկիա Թէ և ամուր երկիր, բայց այլազգի տերութիւններու գրացի էր, որք կ'ուզէին յափշտակել այն պատուական աշխարհը։ Փագաւորք Հայոց երբեմն բարեկամութեամբ, երբեմն զէնքով կու զգուշանային անոնցմէ։ որոց զօրաւորագոյնն՝ Իկոնիոյ սուլդանն, շատ հեզ Լևոնի և Հեթմոյ հետ կռուեր էր, երբեմն մեկն երբեմն մեկայն յաղթելով։ բոլորովին ապահովութեան համար՝ Հեթում նախ իր եղբայրը՝ Սմբատը՝ ղրկեց առ զանն Փաթարաց, յետոյ ինքնին գնաց առ Ապաղա զան, և երկք չորս տարի ուշացաւ յօտարութեան։ մեծազօր և ահարկու Հէլակիւ զանէն սարսափուեցաւ նիզակակից ըլլալ անոր, Արաբացոց և Փուրքաց դէմ շատ պատերազմներ ընել, և Բաղդատ առնուլ, ու բոլոր Պարսից, Միջագե-

տաց, Ասորեստանի, Հայոց և Ասորւոց իշխան-
ները նուաճել. որով իր սահմաններն այլ ազատ
և հանգիստ մնացին շատ տարի. ուրիշ զօրաւոր
թշնամի չկար, բայց միայն Մարայ սուլդանն, որ
հեռուէն կու սպառնար. իսկ Հնթում մէկ կողմն
երկիրը պարիսպներով և բերդով ամրացուցեր,
մէկայլ կողմէն Թաթարաց օգնութեան վրայ
վստահացեր էր, և այլ աւելի իր խորագէտ հօրը
խրատուց և եղբօրը քաջակռիւ բազկին վրայ։
Բազդատ առնելու առեն Եգիպտոսի սուլդանին
կողմանէ այլ մարդ կար հոն, օգնական խալիֆա-
յին. ասոնցմէ երկուքն կրցան փախչիլ. մէկն էր
Ֆունտուքտար [1] Պիբարս, չափաւոր տարիքը
առած, մէկ այլն երիտասարդ մը Սանգոր էլ-Աշ-
քար (չէկ կամ կարմիր բազոյ) անուամբ, որ ի-
րեն պէս կարիճ վազուկ մի մը ունէր. և տեսնել-
լով ընկերին թէ հասակը թէ գեղ մին՝ վախցաւ
թէ գերի ընկնի սպաննուի. սոխպեց որ իր ձիուն
վրայ հեծնի և փախչի։ Թէ որ ես գերի ընկնիմ,
կ'ըսէր, տղայութեանս խնայելով՝ զիս չեն սպան-
ներ. քու պարտքդ ըլլայ ազատել զիս։ Եւ նման
այնպէս եղաւ. կարմիր բազոյն բռնուեցաւ, Պիբ-
արս պրծաւ և հասաւ յԵգիպտոս. յորդորեց
անոր Քուդգուզ սուլդանը՝ Թաթարաց դէմ պա-
տերազմ բանալու. և պատերազմին մէջ այլ շատ
քաջութիւն ըրաւ, անոր համար վարձք ուզեց
Հալէպի կուսակալութիւնը. և երբ սուլդանն չտը-
ւաւ, Պիբարս համախոհութեամբ քանի մը իշ-

[1] Մեր պատմիչք անուանեն զոյ Պանդուխտար կամ
Ֆնդուխտար. որ բնիկ անուն չէ, այլ մականուն է, առած
իր տիրոջէն. և տէրն այլ իր եղած տրքունեաց մէջ պաշ-
տօն ուներ իշխանին գնտակ տալու խաղի առեն. այս պաշ-
տօնէին կ'ըսէին Ֆունտուքտար։ Թերևս այս անուան հա-
մար Լեւոնի գերութեան երգիչն, որ վերջը պիտի յիշենք,
գնտակի խաղալը յիշէ։

խօսքս իրրև վերջին բարով ձեռք ըսելով մերձակայիցն, հոգին՝ հոգւոյն փափագողաց հետ խառնուեցաւ, Թողլով յերկրի քմծիծաղ ու պայծառ՝ այլ անշարժ մարմին մը, 'ի սուգ և 'ի սէր հասարակաց։...

« Իսկ Թագուհին զկնանս աւանդեալ
Ու 'ի կէտ կոչմանէն ժամանեալ.
Զայն 'ի յերկնից ընդ կոչեալ,
Զոր իւր ունկամբն յայտնի լսեալ,
Ե՛կ աղաւնի՛ իմ, ասացեալ,
Ե՛կ սիրելի՛ իմ կատարեալ։
Իսկ նա յորժամ զայս ձայն լսեալ
Զբարթագին սրտիւ բերկրեալ,
Տեսլեամբ կերպին զբարձացեալ
Եւ 'ի հոգին իւր ցընծացեալ.
Մերձակայիցն զայս ազդեալ,
Եւ ընդ պատմելն՝ իսկոյն փոխեալ.
Զհոգին 'ի ձեռս Տեառն աւանդեալ,
Զխնդին ունայն՝ յերկրի Թողեալ։
Զոր քահանայքն ակուռ առեալ
Զնա օրհնութեան հողոյ սրբեալ։
Այրդ Թագուհին յերկրէ ելեալ
Եւ առ Քրիստոս վերափոխեալ։»

Այսպիսւոյ բարւոյ և բարերարի, սրբակեաց և սիրելւոյ Թագուհւոյ, հարսին և մօր մահ՝ որչափ ցաւալի և սգալի եղած է կենակցին, զաւակացն, մերձաւորաց, պաշտօնեից և բոլոր աշխարհին, ազատաց և ռամկաց, ազքատաց և հիւանդաց, կրօնաւորաց և զինաւորաց, քեզի գիւրագոյն է հասկանալ, ինծի աւելորդ ըսելն, Հայկակ. աւելորդ սեպեմ և խառնել զքեզ անոր երկարաշար յուղարկաւորաց մէջ, յոր կրնամք եկած սեպել զրովանդակ Միւլլիկիա և զմեան Ակպոսի և Անտիոքայ, եկեղեցական, քաղաքական

և զինուորական խմբերով. որոց մէջ չեմ այլ կըրնար գոնէ պաղած պատկառանքը մատանիշ չընել՝ երկու զանազան ձևով բարձրապատիւ ալևոր գլուխներ, երկու նահապետքն Հայոց, երկու անուանակիցքն, Կոստանդին կաթուղիկոս և Կոստանդին արքահայր, խնամակալք և գաստիարակք Թագուհւոյն և հայրաբար սիրողք. որք իրրև երկու մեծամեծ մայրիք մրրկաշարժ անտառի մը՝ իրենց դիմաց իրենցմէ շատ գալլոր և ծաղկաբողբոջ միջաբեկեալ ծառին վրայ ծռած՝ գողգոջուն ճիւղերով կ'ողբին կ'երերան։ Բայց գարձընենք աչուընիս իրեն դիմ ու գալլոր բարակ բարուներկներէն, որոց անդրանիկն (Լևոն) դեռ հազիւ 16 տարեկան է. գարձընենք մանուանդ այն փափուկ անկոյն ենցուկ ու ենչդարիկ եղող արքակալնոյ նման պանծալի՝ բայց հիմակ քակեալ մենացեալ և կորացեալ Թագաւորէն... Հեթում՝ այն օրերն մեծ պատրաստութեան մէջ էր, հարկաւորաբար երթալու առ Մանգու խան՝ թաթարաց՝ յաշխարհ հեռի։ Զապելի յանկարծ յանդարձ աշխարհ երթալն՝ այնքան խոր և արժանաւոր սգով պատեց զայրիացեալ Թագաւորն, որ երկու տարի չկարցաւ հեռանալ սեւ սենեկէն, ապա թէ գնաց։

Հեթում՝ ոչ կենտակից և Թագակից միայն էր Զապելի, այլ և անարգել գործակից անոր սըրտին բարի բերմանց. և եթէ իր արքունի անհրաժեշտ պարտքն և 'ի մօրէ որբացեալ զաւակներուն հոգն՝ չպատուիրէր, թերևս աւելի շուտով թողուր ինքն այլ Թագը, և առանձնակեաց հոգեկեաց մ'ըլլար. ինչպէս որ ըրաւ այլ վերջը, յետ տնկաւորելու իր դստերքը՝ և Թագը թողլու (յամին 1269) առ անդրանիկն Լևոն։ Եւ սա իր ցանկալի և ցաւալի մօրն անմոռաց յիշատակը կերպով մը կենդանացընելու համար՝ իր իրեք ն-

րեց գաւերքն անուանեց Զապլուն, Զապել, Սիպիլ։

Զապել թագուհւոյ մահացու նշխարքը անմահութեան մաղթանք և անուան յուսոնին պատելով ու կնքելով՝ հանգուցին 'ի տապանատունն Ռուբինեան պայազատաց, 'ի վանքն Դրազարկ, ուր նախ հանգչեր էր տեղւոյն շինողն Թորոս Ա, Թոռն Ա և մեծ Ռուբինի. և իրմէ ետքն իրեն ցեղէն շատ պարոնայք և պարոնուհիք. և ուր յետ 19 տարւոյ (1270) հանգուցին Թագուհւոյն քով իր Թագակից և կողակիցն այլ, Թէ իրրև արքայ Հեթում և Թէ իրրև Նղբայր—Մակար. որ և Զապելի պէս բաղդ ունեցաւ օտար սուրբ Թագաւորի մը հանդիպակից ըլլալու։

Իրենց երախտագէտ և սիրանուէր որդիքն և պայազատք՝ արքունի արքապատում Յայսմաւուրաց մէջ նշանակեցին Հեթմոյ հանգստեան օրը (28 հոկտեմբերի), և այս օրս (22 յանուարի) Զապելի պաշտելի յիշատակը. զոր 'ի կեանս և 'ի մահուն՝ ճանաչողք և մերձագայք՝ սորբ[1] անուանէին. ինչպէս որ Հեթմեանց[2] յիշատակն այլ՝ ոչ միայն մեր այլ և լատին միանձանց՝ հին ժամագրոց ոմանց մէջ անցած է երանելեաց կոչմամբ։ Սրանի՛ էր ազգիս այլ. եթէ՝ ինչպէս շատ արժանաւորաց յիշատակն անմահացուցեր է, զոմանցն այլ նորէն արթընցրներ։ Իսկ քեզ, Հայկակ, անշուշտ ախորժելի կ'ըլլայ, քու ընտանեաց և մեր-

1 Այսպէս գովութեամբ անուանէ զնա և ժամանակակից ու բարեկամ Հեթմոյ՝ Աստրի պատմիչն Ապուլֆարաճ։

2 Թէ Հեթում Ա, Թէ իր Թոռն Հեթում Բ, և Թէ իր եղբօր որդին Հեթում Պատմիչ տէր Կոստիկոսոյ, իրենք այլ կրօնաւորած են 'ի վանս Լատինաց՝ 'ի Հռոմ, 'ի Կիպրոս և 'ի Փրանկաստան. որոց վերջն քիչ մը կու ջրփոխեն իրարու հետ արևմտեայ պատմիչք։

ձաւորաց մինչի մասազաշ Զապելեաց ծանօթացը-նել՝ իրրև իրենց նախընթաց օրինակ հաստատու-թեան և իմաստութեան ու պաշտպան մեր ազ-գին վերջի պայազատութեան մէջ ամենէն անուա-նի, պատուելի, սիրելի և սրբենի եղած թագու-հին [1] ՋԱՊԵԼ։

1 Ցե՛ս Զապելի՝ նաև նորա առաջին թագուհին Հայոց՝ կին Դ Լեւոնի՝ կիսա՛ն՝ որ է Էին Անա (Գիրիս-Անա) գուստր Լամբրոնի տիրոջ, իր սկեսրին բարեպաշտու-թեան համար բանց, և ունելի բազմաթիւ գուակաց մայր ըլլալն ետեւ՝ կրնաւորեալ մեռաւ (28 յուլիսի 1285), մեծ հանրաւորական վարուց. սա կոչուէր և Թեոդոնի, այսինքն Թէոֆանիա։ — Նոյնպէս գովութեամբ յիշա-տակուին՝ իր քոյրն Մարիան (3 դեկտ.) — իր երեք վերա-յիշեալ Զապել անուն դստերքն. իր տան Ֆիլիպ. — Դ Լեւոն-անդին թագաւորի մայրն Մարիան տիկինն (27 յուլիս). — և վերջին թագուհին Հայոց Մարիան, կին Զ Լեւոնի, և իր գուստրն Փինա. — նախ յիշուած Բ Զապել՝ կինն Օշին թագաւորի (3 մայիս)։

9.

ԳԵՐԵԳԱՐՁ Գ ԼԵՒՈՆԻ

6 փետրուար — 1289 *.

Վառենք երեկոյեան խարոյկը. բոլորինք հայրենի կրակարանին եզերքը, 'ի Կիլիկիս, յարքունիս Թագաւորին Հեթում։ Հեթում (այս անունը կրողաց մէջ ամենէն անուանի և սիրելի անէն) Հեթում Ա. յաջորդ մեծին Լեւոնի, ինքնէն հրաւէր կու տայ, և քան զուրիշ տարիներ աւելի արտորանքը. իր հաւատարիմ հպատակացն և պարոնայցն. գալու ժողովելու բազմութեամբ, և Խառնածայայանութեան մեծ ասնը կատարելու։ Կու փութան իշխանք և պարոնայք՝ ապահովցնել իրենց ամուր բերդերը և թշնել լեռներէն, ելնել պարապատ քաղաքներէն և ժողովիլ 'ի Մսիս։... Եւ ինչո՞ ոչ 'ի Սիս, յաթոռն Թագաւորաց։ — Մի՛ հարցընէք։ — Պարոնայքն գալու և անցնելու ատեն՝ կու նային մէկ մը այն մայրաքաղաքին կողմը, և դեռ եգիպտական սև ծխոյն նշանը տեսնելով, գլուխնին շարժե-

* Այս թուականս և մահուան Լեւոնի. գերութիւնն և զաւ յոգոստոսի 1266 տարւոյ, գերեցարն 'ի 1268։

լով՝ երեանին խաչակնքելով կու փոխեն Ճամբանին. Թէ և շատ դժար կու գայ իրենց յառաջնին, վախնալով Թագաւորին տխրամած դէմքը տեսնել. սակայն մէկ մ'այլ իրենց հրաւէրքի Թուղթերուն վրայ նայելով, և տեսնելով անոնց արքունի կարմիրկապ կնիքը՝ սիրտ կ'առնուն, և կու մտնեն'ի Մսիս. որոշեալ օրը՝ նախ քան զաւոնն կու ներկայանան միաբան, բարևել և շնորհաւորել Թագաւորին զնոր տարին և զաւագ տօները։

Սիրով և պատուով կ'ընդունի զնոսա Թագաւորն. և փոխարէն ողջոյններ տալով՝ կու հրամմէր նստին. և նախ ինքն կու բազմի ծանրութիւն իր գահը։ Ո՛հ. որչափ այլափոխուեր է Թագաւորին դէմքն քան զանցեալ տարին։ Տարի մը միայն կըրնար այդքան աւելցընել հազիւ վաթսնամեայ գըլխոյն աշխը, որ ոսկի պսակին տակէն կախուած՝ իր սպիտակ արքունի բեհեզեայ քղամդին կու խառնուին. և երկընցած դէմքն այլ այն գլխուն գեղին Թագին կու նմանցընէն։ Ո՛րչափ տարբեր էր այդ դէմքն այն Հեթում Թագաւորի ոսկեհատիկ վառվռուն կերպարանքէն, երբ այգպիսի հանդիսական օր մը բարձր գահուն վրայ եկած ատեն, Եփրիկիոյ ամենէն ազնիւ ծնունդն՝ տիկնաց տիկին Զապել, գուստրն մեծին Լևոնի, անոր տոչ կողմը կու բազմեր, այն իր կենակից և Թագակից գշխոյն. գահուն բոլորը բռնէին իր հինգ վեհակերպ մեծապատիւ եղբարքն, Սմբատ գունդըստապլն՝ հին Հայկազանց և Վարդանանց նախանձորդ՝ սպարապետն Հայոց, Լևոն՝ մեծ մարաջախտըն, Լիկոս՝ գայլանուն կորիւնն, Բարսեղ՝ վանմափայլ արքեպիսկոպոսն և առաջնորդ Իրազարկու, և Յովհաննէս՝ երիտասարդ արքեպիսկոպոսն Մամեստիոյ և առաջնորդ Արքակաղնոյ. գահուն ստորոտը Սողոմոնի սուտ առիւծներուն տեղ՝ երկու եռանգուն կրակոտ կորիւնք կենային՝ Լևոն և

Թորոս Թագաւորդիք. և իրրև ամենուն հովանի՝ Թագաւորին ձախ կողմը նստեր փառաք իր ջոջգլուխ արքայազներն՝ Սոզոմն Կոստանդին, արքաշամեան ծերունին[1].

Այդ յիշեալ մեծափայլ և մեծազօր արքունական սիւներն՝ այսօր խորտակած կ'երևին ժամանակի օրէնքէն. միայն ամենէն կրտսեր արքայ-եղբայրն Յովհաննէս արքեպիսկոպոս՝ մէկդին բազմեր, մէկալ դին այլ ամենէն մեծն՝ ծերունազարդ սպարապետն Սմբատ, ոսկէկոթ Թրին վրայ կրթնած, երբեմն երբեմն Թաւ Թաւ յուներուն տակէն երկու խոր կայծակներ պորտացընելով։ Թագաւորին գլուխն այլ ծանրացեալ կ'երևի գրեթէ կէս դար կրած Թագէն. 43 երկայն և բազմափորձ տարիներ պէսպէս գոհար քարերու պէս շարուած էին անոր վրան. որչափ զանազան տեղուանք, որչափ զանազան անձանց մէջ կանգներ էր Հեթումն այն գլուխը. որքան երկայն և տարեւոր ճամբաներ ընելով՝ Կիւլիկիոյ գունարէն մինչև Թաթարստանի խորագոյն անապատները՝ ազգին և տանը համար քրտնելով, կիմանայր հիմա պատկին ծանրութիւնը։ Նա Թերևս անկէ եաև փափագելի էր իրեն հանգչեցընել այն յոգնած գլուխը. ըլլար նաև սև քարի մը վրայ։... Բայց արտին վրայ այլ կայ ծանրութիւն մը, և շատ մեծ ծանրութիւն. ինչուան որ զայն չթեթևցընէ, իրեն համար մահն անգամ անհանգիստ է։...

Ասոնք մեր մտածութիւններն չեն. այլ այն բազմախուռմբ պարոններուն՝ որք բազմեր են Թագաւորին դիմաց։ Իսկ Հեթումն իբրև Թեթև քնէ մը Թօթռուելով գլուխը, և ծածուկ կրակով մը վառելով աչուքները՝ կու գարձընէ հան եղող իշխանաց վրայ, և յետոյ կու հրամէ սենեկապան

[1] Այսպէս կ'անուանէ զնա իր որդին Յովհաննէս։

սպասաւորաց՝ որ պակասներն այլ կանչեն և նըշանեցընեն. իսկ սպասաւորք կարդէն պակաս չգրտնելով՝ կ'իմացընեն որ ամենքն. այլ հոն են։ Թագաւորն նորէն աչք դարձընելով՝ կու տեսնէ, թէ ոչ շատ, այլ մեծ պակաս. կու հրամմէ կու ասի. պէ որ զտնուք այլ կանչեն։ Սպասաւորք չփոթած կու նային կու համրեն, պակաս չեն գտներ, և վախով մտատենալով կ'ըսեն, Սուրբ Թագաւոր, ամենքն հոս են։ Թագաւորն ներանայ. սպասաւորք իրար կ'անցնին, իշխանաց կու դառնան. ասոնք այլ կ'ապահովցնեն զԹագաւորը, թէ Սուրբ Թագաւոր, ամենքն այլ որոց հրաւէրք և պատուէր խաւրեցիք, հոս են, պակաս չկայ պարոններէս։ Այն ատեն Թագաւորն անդամ մ'այլ սրափայլ աչքերը չորս դին դարձընելով, և բարկացեալ՝ այլ մարմրած և հեծկլտած ձայնով կանչէ. Եթէ ամենքն հոս են, ուր են հապա պարոնաց պարոնքն, Լեւոն և Թորոս...։

Լեւոն և Թորոս. երկու կրակէ նետերու պէս թռան այս անուանքս Թագաւոր հօր մը բերանէն, և շնաց ողջ սիրտ մը. իշխան, պարոն, եպիսկոպոս, ձիաւոր, սպասաւոր, ամենքն վիրաւորի հառաչանք մը փրցնելով կու սկսին լալ վայել, երկինք երկիր նայիլ. բոլոր արքունական առեւանն նոր մեռած սնդրանիկ զաւկի մը սգասենեակ դարձաւ. Թագաւորն ծածկեց հայրական դէմքն իր սպիտակ բեհեզին տակ. և մէկն չէր համարձակեր մտենալ. բան մը ըսել, մխիթարանք մը տալ. պարոնաց գլուխն 'ի գետին կորացեալ, վարդապետաց և եպիսկոպոսաց շրթունքն դողով համբացեալ, կ'ուզէին որ եղածն երազ ելլար. և թէ չէր կարելի անկէ հեռանալու՝ գոնէ անզգայ ըլլալու։ — Բայց ո՞վ կրնայ անզգայ ըլլալ, երբ ձիաւորաց պարծանքն՝ զաւարթունն Թորոս՝ գետ իր չորեքամեայ գերեզմանին մէջ սև սև վէրքերուն

նշաններով ահեղ գիւցազին նման պատկած կ'երևէր գիմացնին... և երբ լուսադէմ թագաժառանգն Լևոն՝ բարբարոս Պէյպարս սուլտանին սև բերդին մէջ շղթայակապ առնջուէր։ Անվախ Սմբատն անգամ, հօրեղբայր սիրուն և կարիճ կորեանցն, ձեռքը թրին, թևն 'ի գահ թագաւորին կոթընած՝ ալտասուաթափ աչքերը վերուցած առնն՝ կարծուէր թէ մեկէն պիտի ցատքէ և արքունի նիզակներէն մեկը կորզած՝ վազէ երթայ Սարայ սուլդանին գահը կոխէ, և իր եղբօրորդին՝ պարոն Լևոնը, յափշտակէ բերէ հօրը գիրկը։ Իսկ երբ գլուխը թօթուելով նորէն դէպ 'ի կուրծքը կ'իջնցներ, կարծուէր թէ աշխարհք անցեր է Հայոց առնն համար։ և ամենքն այլ գլխակոր մընային։... Թանձր սուգ մը պատեր էր Հեթմոյ արքունիքը։ արևելք և արևմուտք, Թաթար զանէն և սրբազան Պատէն եկած մխիթարութեան գրերն անգամ՝ չէին փարատած զայն։...

Ի՞նչպէս եկաւ այն սև սուգն, ինչպէս եղաւ այս չար գիպուածն։ — Գիտես Հայկակ, որ Կիւլիկիա թէ և ամուր երկիր, բայց այլազգի տերութիւններու գրացի էր, որք կ'ուզէին յափշտակել այն պատուական աշխարհը։ Թագաւորք Հայոց երբեմն բարեկամութեամբ, երբեմն զէնքով կուզուշանային անոնցմէ։ որոց զօրաւորագոյնն՝ Իկոնիոյ սուլդանն, շատ հեղ Լևոնի և Հեթմոյ հետ կռուեր էր, երբեմն մէկն երբեմն մէկայլն յաղթելով։ բոլորովին ապահովութեան համար՝ Հեթում նախ իր եղբայրը՝ Սմբատը՝ ղրկեց առ զանն Թաթարաց, յետոյ ինքնին գնաց առ Ապաղա ղան, և երկք չորս տարի ուշացաւ յետարութեան։ մեծազօր և ահարկու Հէլակիւ ղանէն սաստիկ նիզակակից ըլլալ անոր, Արաբացոց և Թուրքաց դէմ շատ պատերազմներ ընել, և Բաղդատ առնուլ, ու բոլոր Պարսից, Միջագե-

տաց, Աստրեսատանի, Հայոց և Ասորւոց իշխան-ները նուաճել. որով իր սահմաններն այլ ազատ և հանգիստ մնացին շատ տարի. ուրիշ զօրաւոր թշնամի չկար, բայց միայն Մարայ սուլդանն, որ հեռուէն կու սպառնար. իսկ Հեթում մեկ կողմեն երկիրը պարիսպներով և բերդով ամրացուցեր, մեկայլ կողմեն Թաթարաց օգնութեան վրայ վստահացեր էր, և այլ աւելի իր խորագէտ հօրը խրատուց և եղբօրը քաջակռիւ բազկին վրայ։ Բազդատ առնելու առեն Սգիպտոսի սուլդանին կողմանէ այլ մարդ կար հոն, օգնական խալիֆային. ասոնցմէ երկուքն կրցան փախչիլ. մեկն էր Ֆունտուքտար[1] Պիյպարս, չափաւոր տարիքը առած, մեկ այլն երիտասարդ մը Սանգոր էլ-Աշքար (չէկ կամ կարմիր բազայ) անուամբ, որ իրեն պէս կարիճ վազուկ մի մը ունէր. և տեսնելով ընկերին թէ հասակը թէ գէշ մին՝ վախցաւ թէ գերի ընկնի սպաննուի. սոսկեց որ իր միւսն վրայ հեծնի և փախչի։ Թէ որ ես գերի ընկնիմ, կ'ըսէր, ազայութեանս խնայելով՝ զիս չեն սպաններ. քու պարտքդ ըլլայ ազատել զիս։ Նա նման այնպէս եղաւ. կարմիր բազայն բռնուեցաւ, Պիյպարս պրծաւ և հասաւ յԵգիպտոս. յորդորեց անոր Ֆուդդուզ սուլդանը՝ Թաթարաց դէմ պատերազմ լսնալու. և պատերազմին մէջ այլ շատ քաջութիւն ըրաւ, ինոր համար վարձք ուզեց Հալէպի կուսակալու թիւնը. և երբ սուլդանն չտրաւաւ, Պիյպարս համախոհութեամբ քանի մը իշ-

[1] Մեր պատմիչք անուանեն զսա Պանդուխտար կամ Փնդուխտար. որ բնիկ անուն չէ, այլ մականուն է, առած իր տիրոջմէն. և տէրն այլ իր եղած արքունեաց մէջ պաշտօն ունէր իշխանին գնաակ տալու խաղի առեն. այս պաշտօնէին կ'ըսէին Ֆունտուքտար։ Թերևս այս անուան համար Լեւոնի գերութեան երգիչն, որ վերջը պիտի յիշենք, գնաակի խաղալը յիշէ։

խանաց սպանեց զնա և տեղը անցաւ (1260ին)։ Անկէ ետև գլխաւոր մատուցութիւնն էր վրէժ առնուլ՝ի Թաթարաց և անոնց օգնականներէն. յարմար տուին այլ գտաւ Հէլակիւ և Պերքայի[1] մեծ զանազանութեան ազգային կռիւները. որոնցմէ յաղթուող և փախչողները կ՚ընդունէր իր քով։ Ասոր համար Հէլակիւ պատուիրեց Հեթումոյ՝ իր նիզակակցին, որ Եգիպտոսի սուլթանին վրայ յարձակի։

Հեթում խորագիտութեամբ նախ Իկոնիոյ սուլթանին հետ դաշնագրութիւն ըրաւ (1262), յետոյ վազեց Այնթապայ վրայ. բայց Պիպարս առաջուց իմանալով ըլլալիքը՝ շատ զօրք խաւրեց խափանեց Հեթումոյ խորհուրդը. այն տեղն Հեթում քանի մը հարիւր մարդ այլ՝ի Թաթարաց առնելով և 150 ասպետ անտիոքացի, մտաւ Ասորւոց երկիրը. բայց ցուրտէն տոխպուեցաւ յետ քաշուիլ. մանաւանդ որ Պիպարս կու գար իր երկրին սահմանները կոխելու։ Անկէ ետև սկսան մեկմեկու դէմ պատերազմուիլ սուլթանն Մսրայ և Թագաւորն Հայոց, և զիրար հնազանդութեան կանչել. թէ և իրարմէ կու վախէին. բայց երբ Հէլակիւ՝ պաշտպանն Հեթումոյ և քրիստոնէից՝ մեռաւ (՝ի սկիզբն 1265 տարւոյ), Պիպարս սկըսաւ համարձակ յառաջ գալ։ Նախ խաչակրաց ձեռքէն առուս ամուր քաղաքները. վերջը պահանջեց՝ի Հեթումոյ՝ որ Ասորւոց գեղները ազատեցողու իր մարդկանց անցնելու, չարգիլէ իր երկրէն ցորեն բերելու, և նաև իրեն հարկ տայ։ Հեթում պատասխան չտուաւ անոր. թէ և դէմ կենալու չէր համարձակեր, բայց և ոչ այլ դաշնագրութիւն ընել, Թաթարներէն ակնածելով. վասն զի թշնամիք էին Եգիպտացւոց։ Ահա այս-

[1] Երկուքն ալ Ճինկիզխանի թոռներէն են։

պիսի գժտար գէպքեր կան վարչութեան մէջ, որ փոքր տէրութեանց (ինչպէս էր Կիւլիկեցւոց) հնարքը անհնար կ'ընեն։ Պէյպարսայ ուզածն այլ այս էր. հրաման առուաւ Համագի էջ Մանսուր իշխանին և Գալավուն զօրավարին և ուրիշներու, (որոց մէկը Սմբատ կ'անուանեն մեր պատմիչք), յարձակիլ 'ի Կիւլիկիա. ուր և մտան օգոստոս ամսոյն սկիզբները 1266ին։ Հեթում առաջուց լեռները բերդերով և պահապաններով ամրացուցեր էր. և Եգիպտացւոց շարժմունքը լսելուն պէս՝ ունեցած զօրքը տուաւ իր երկու կարիճ կորիւններուն, Թոգաժառանգ Լեւոնի՝ որ այն ատեն երեսնամեայ էր, և քաջ ձիաթափ Փորոսի՝ որ աւելի ծաղկահասակ էր, և երկուքն միատեղ քանի մը տարի առաջ (1260) ասպետ կարգեր էր. պատուիրեց անոնց որ Ծովեզերքի և Լերանց միջոցը՝ Աղեքսանդրիոյ (Իսքէնտէրունի) քովի բռնակապանը պահեն։ Իսկ ինքն՝ իրմէ աղէկ դեսպան չգտնելով՝ սիրտ 'ի բերան առած փութացաւ պզտի գնդով մը գնաց Թաթարաց զօրապետին, որ Էլպօստանի և Կոկիսոնի մէջ տեղ բանակեր էր. և օգնութիւն խնդրեց շուտով. բայց ուշչափ ազաչեց, մօտակայ վոանգը առաջ դրաւ, որչափ որ իր անգին զաւակացը վրայ կատկածոտ հօր մը սիրտ կրնար խօսիլ և ջանալ, տնօգուտ եղաւ. Թաթարն յամառեալ կ'ըսէր թէ առանց հրամանի Էջզանին՝ Ապաղայի՝ չեմ կրնար մարդ տալ։ Ուրիշ ճար չկար, պէտք էր սուրհանդակ խաւրել զանին՝ և խաւրեց. բայց սուրհանդակն այլ պէտք էր կամ հայր ըլլալ կամ թաչուն, որ քիչ օրուան մէջ կարենայ կտրել բոլոր Փոքր և Մեծ Հայոց լայնութիւնը, և սրանալ ինչուան Մազանդարանի մօտերը, ուր գտուէր զանն, հրամանն առնուլ և բերել Թաթար զօրապետին։ Արդեօք սպասէ Հեթում

սուրհանդակին դառնալուն. բայց միթէ անգութ և Հարբաբ թշնամին այլ անչարժ կու սպասէ իր տեղը. — որդեօք դառնայ թռչի՝ յօգնութիւն զաւակընելուն. — բայց եթէ ինքն անկէ հեռանայ՝ թաթարներն թերևս տեղերնէն այլ չեն շարժիր օգնութեան գալու։ Այս դժուարութիւնս առջինէն ծանր էր. հարկ էր Հեթմոյ հոն սպասել 15 աւուր չափ. բայց իր քաշած երկայն համբերութիւնը՝ ո՞վ կրնայ չափել. ո՞վ կրնայ կշռել որոնն ալէկոծութիւնը այնպիսի տաեն, որ յիրաւի բաւական էր Հեթմոյ, թէ և սև այլ ըլլային՝ մազերը Հերմրկցընել. և օրուան տեղ՝ տարի մը ծանրացընել հասակին վրայ։

Իսկ թագաւորդիքն ինչ կ'ընեն։ Ամառուան ամենէն տաք օրերուն, որ Կիւլիկիոյ քարուտ կողերէն կրակ կու ըզխեն դաշտերուն վրայ, մինչդեռ մերմակայ վանքեր Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը հոչակէին լեռնէ լեռ ձորէ ձոր, իրենք հոն կեցեր այրելով մրկելով կու սպասէին հօրերնուն, և թշնամւոյն. և եաքինս աւելի շուտ հասաւ չկարծած կողմերէն։ Իրենց կռթնած լերանց վրայ Հեթում աշտարակներ կանգներ և պահապան դրեր էր զգուշութեան. և ոչ ոք կարծէր թէ մեկն այնպիսի տեղէ անցնելու փորձ փորձէ. բայց Պիսպարս իր զօրաց 15-20 օր միայն միջոց կարիր էր Կիւլիկիա տապատակելու և կրցածնուն չափ աւերելու. ալէաք էր որ ամեն ջանք ընէին. և ահա յանկարծ Իոքէնտէրունի լեռներուն գլխէն, սև մրրկի պէս սկսան վար թափիլ Սգիպատոսի հնոցանման տաք օդուն վարժող Փէօլէմէններ. որ լցին վարի դաշտը։ Հայք (ինչպէս շատ հեղ այսպիսի տաեն կու հանդիպի) յանկարծութենէն շփոթած իրար անցան. տասն և երկու մեծ իշխան կար մէջերնին, ոմանք զարնուեցան, ոմանք փախան, ոմանք բռնուեցան. հոն էր և սր-

քայ-եղբայրը գունդապետն Սմբատ և իր կորիզ զաւակներն Լեւոն և Հեթում. հոն իր մեկ եղբայրն այլ (Լիկոս), որ նոյնպէս իր Թագաւոր եղբօր որդւոցը պաշտպանութեան համար պատերազմելով փառաք ընկաւ զէնքն 'ի ձեռքը. իսկ Սմբատայ այս փառքս չտրուեցաւ այս անգամ, այլ պահուած էր ուրիշ պատերազմի. իսկ հիմա պէտք էր Հայոց բանակին մնացորդը՝ բոլորովին կոտորածէն ապրեցընել։ Ի՞նչ ջանք չբրաւ արդեաք այն առիւծ դարձած սոսկալի սպարապետն՝ իր եղբօր կորիւնները ազատելու, որոնք հոն իրմէ աւելի իրենց հօր պատուէրքին, և անկէ այլ աւելի՝ իրենց քաջասրտութեանը ուզեցին լսել։ Սմբատ չէր գիտեր՝ մնացեալ զօրաց առաջնորդել, թէ անոնց քովը կենալ. եթէ անոնց յամառ քաջութեանը նայելով քովերնին կենար, անշուշտ Հայոց բանակէն մարդ մը պիտի չազատէր. ապա՝ մեկ մը մնացեալ իշխանորդիները և զօրքը ապահովապէս ետ կու քաշէր, մեկ մ'այլ արքայորդւոց կու վազէր։ — Բայց որո՞ւն հանի. Լեւոն՝ Սարուանդի քաջ բերդին ոստը կեցեր. Թորոս իրմէ շատ հեռու կու կռուէր. Լեւոն կու ջանայ հօրեղբօրն հետ պաշտպանել իրեններուն, Թորոս անգադար առաջ առաջ կու նետուի իր բարձրապինչ բարձրափռինչ ձիովը, կու զարնէ կու կոտրէ զթշնամին։ Մենք Իլիոնի դաշտը չենք տեսած, և ոչ Զնկտոր՝ Տրովայ պարիսպներէն դուրս Աքիլլիսի դէմ պատրաստուած, և ոչ ասնոր ծերունի հօրն և մօր և կնոջ աղաչանքը լսած, զինքը այն սոսկալի հսկային անյաղթելի զէնքերէն յետ կիցընելու. բայց Թորոսի համար կրնար պակաս ըսել Հայ Հոմեր մը, եթէ Հոմերի կէս հոգին այլ ունենար։ Քանի մը հաւատարիմ զինակիրներով միայն մահու չքնաղակի մը մէջ ցատքըտելով իր բարձրավիզ ձիուն և սեաւ փսիթորկի

պէս չորս գի մրրկելով՝ բոլոր ծաղկեալ երփեա-
սարգուլթեան ուժովը, կէս գունդ մը ձեւացընէր.
վահանը թոզած՝ թուր ու նիզակ էր շարժածը,
որոնց հարուածէն՝ անառաւահար փայտից պէս
անթիւք փռուեցան բոլորտիքը. ինչուան տասն
հազար եգիպտացի սպաննեցին, կ'ըսեն, այն օր
այդպիսի կարիճ Հայք։ Թորոս գեռ աչուըներ-
արիւն գարձած՝ ամեն գի արիւն կու տեսնէր, ա-
րիւն կու հանէր, առաւած և առաւած վէրքը չիմա-
նալով. շատերն իրեն յորդոր և ձայն տուին. Հե-
ռիք է, Թագաւորորդի, յետ գարձիր. բայց ոչ մէ-
կուն այլ չլսեց. չլսեց անչուշտ մերձաւոր ընտա-
նեաց գթոյն, և ոչ իսկ հեռաւոր հօր մը ծածուկ
ձայնին. «Շատ է ազնիւ որդեակ իմ Թորոս, Թո-
» րոս՝ գարձիր այս անգամ, մինչև գայ հայրդ այլ
» և մեկտեղ վրէժ առնուք»։ Չլսեց այն ձայնե-
րուն. այլ այն մարդակուտոր սև անտառին մէջ
մինակ մնացած բարձրաձաղկ ծառոյ մը պէս՝ գեռ
ճռնչալով չէր գադրեր իր հարուածներէն, մինչև
բազմութիւն սուսերաւոր թշնամեաց երթալով
մօտենային, և շատ անգամ հարցընէին. Սոսկալի
կարիճ, ո՞վ ես դու, ի՞նչ կ'ուզես. քու բոլոր բա-
նակիդ չերծածն՝ գո՞ն միայն կ'ուզես ընել. ձգէ
անկուշտ զէնքերդ և եկու տարէ քաջի պէս մեր
ձեռքը։ Թորոս՝ միայն զանոնք զարնելով պատաս-
խան կու տար. մինչև քանի մը անգամ անձնա-
տուր ըլլալու յորդորելէն և օգուտ չըլլալէն ետև՝
կատղած սուսերաւորքն մօտեցան պատեցին այն
մէկ հատիկ վարսաւոր ծառը, ձիաւոր նահատա-
կը, որ գրեթէ անոնց բազմութենէն խղդուելով՝
և իրմէ առաջ վիրաւորած ձիուն կոնքկէն վայր
ընկնալով կոտրած նիզակին վրայ երես 'ի վայր
փռուեցաւ երկայն, յետին անգամ հայրենեաց
հողը համբուրելու շնչակտուր շրթունքովը։...
Պողպատողք արիւնլուսայ զրահիցն՝ իմացան, բայց

ափսոս, քիչ մ'ուշ, որ Հայոց Թագաւորին որդին է եղեր կարիձն այն. ապա թէ ոչ՝ գուցէ աստուածորդի այլ կարծուէր գիւցաւիպ Թորոսն այն։ Ոչ պակաս անկէ քաջութեամբ կռուէր և Լեւոն. նոյնպէս կռուեցան և իրենց հօր ելբօրորդիքն, Սմբատայ կորիւնքն. որոնց մէկին այլ մեաւ, մէկայլքն՝ Լեւոնի և իր հաւատարիմ ծառաերուն հետ՝ գերի ընկան Թշնամեաց ձեռքը։

Ո՞վ կրնայ պատմել անգութ Պիյպարսայ ուրախութիւնը՝ երբ դիմացը հանեցին զանոնք, յետ 20 օր Կիւլիկիոյ մէկ մասը աւրելէն և այրելէն և մայրաքաղաքն այլ կողոպտելէն, Թագաւորաց գերեզմանները քակելէն և գանձերը պարպելէն, (որոց միայն մէկ ամանէն 60,000 կաղմիր (ոսկի) հաներ էին), գառնալով անբաւ աւարով, մինչև մէկ եզ մը երկու դրամի կու ծախէին։...

Իսկ Հեթում մինչև ցերը կ'ուշանայ. մանաւանդ թէ մինչև ցերը կու գանդալին Թաթարք... Ահա կու գառնայ սուլթանդակն Սպասող դանէն՝ բերելով առ զօրավարն Թաթարաց հրաման օգնելու Հայոց։ Հեթում Թաթար դունդը առած՝ գացածէն աւելի շուտով կու կարէ սրելով երկայն ճամբան. կու մանէ իր երկիրը... Լեռանի լռութիւն և օտար աղաղակ. սև նշաններ, աւերակաց փոշի, այրածներու ծուխք, ամեն բան իրեն կ'իմացընեն. դեռ կու տեսնէ Եգիպտացոց վերջամնացները՝ որք իրմէ երկու օր առաջ ելեր էին երկրէն, և դեռ կու լսէ անոնց քամահանքը և աչխարհին հառաչանքը. կ'իմանայ, կու զգայ Լեւոնի գերութիւնը, Թորոսի մահը։...

Եթէ ամեն բանէ վեր կրօնքի ոյժը չգար Հեթում, չեմ գիտեր արդեօք ինչ կ'ելլար կամ ինչ կ'ընէր. բայց այս ուժով միայն սիրտը բռնելով, և այլ ամեն բան թողլով, գլուխը կու դարձընէ դէպ իր քաջայիչատակ աներոջ չինած վանք.

քը, և հոն այն մեծ թագաւորին (Լևոնի) գերեզ-
մանին վրայ ընկնալով և սուրբ վանականաց հո-
գեխօս մխիթարանքը լսելով՝ հազիւ կրնայ քիչ
մը զսպել զինքը. « Բայց զսիրտն (կ'ըսէ ականա-
» տես պատմիչն [1]) ինքն և Աստուած միայն գի-
» տէին թէ որպիսի՞ կրակով լցեալ էր. զի ոչ տե-
» սանէր զայնպիսի գեղեցկապատկեր և զծաղկա-
» լից որդիսն՝ իւր առաջի իւր. ոչ յերեկոյ և ոչ
» 'ի վաղիւն, և ոչ 'ի ժամ ճաշոյն՝ յուսալ և ըմ-
» պել. և ընդ միտ ածեալ զանմխիթար աղէտս
» գեղեցիկ որդւոցն, զԹորոսի գեղեցիկ պատկերն
» և զվայելուչ հասակն՝ որ 'ի սրոյ բաժանեցաւ
» յանողորմ և արեանարբու անօրինացն, նոյն-
» պէս և զԼևոնի ահիւ և անգոհիւ լինելն 'ի մէջ
» այլազգեացն 'ի ծառայութիւն. զայս ամենայն
» զմտաւ ածեալ բարեպաշտ թագաւորն Հայոց,
» այրէր անհնարին կրակով. և գալարէր տալիքն
» յաղագս սիրոյ որդւոցն որ ոչ տեսանէր՝ և թա-
» ւալէր ընդ երկիր անմխիթար սգով, բայց գալա-
» և 'ի ծածուկ »։ Ուրիշ ծեր պատմիչ մ'այլ [2],
ծունօթ Հեթմոյ, իր համաշխարհական պատմու-
թիւնը լմանցընելու առեն՝ լսելով իր եղբայրն
հիւրընկալ իշխանազանց սև գոյժը, դողդոջուն
գրչովը վերջին թղթոյն վրայ կ'աւելցընէ այս գէպ-
քը այլ. « Իլուխ և խոց անողջանալի կոտորե-
» լոցն՝ Թորոս արքայորդին, գեղեցիկ ծաղիկ, 'ի
» մատաղ հասակի մերժ 'ի փթթիթս մարուաց. վը-
» կայեալ յամենայն բերանոյ՝ անպակաս 'ի բո-
» վանդակ բարոյ, և կուսութեամբ շոնմարա-
» նեալ 'ի ծրարս շնորհացն Աստուծոյ, որ յօժա-
» րութեամբ եւ դիմեալ 'ի պսակն արեան. քան-
» զի հարցեալ զոմն՝ ոչ եւ զանուն հօրն, զի կե-
» նդանի գերեալ՝ մի լիցի աւելի բեռն հօրն և աշ-

[1] Մաղաքիա արեղայ։ [2] Վարդան։

» խարՀին, ընդ անդրանիկ եղբօրն՝ Լեւոնի, պատ-
» կելոյ և հրաւիրելոյ յաթոռ թագաւորութեանն
» առ կենդանի հօրն։ Քանզի նա ևղև գլուխ գերե-
» լոցն մեր, և հուր աղէկէզ լերդաչարչար և սըր-
» տակուռ ուշխարհիս մեր և ազգիս, որ կամք
» ընչարգել և յերերման։ Հասանէ՛ ձեռն վերին՝
» որ ետարն ցասմամբ, նոյնբժշկէ ողորմութեամբ,
» ածելով զմնծաբաց խոցն, առնելով գերեդարձ՝
» (Լեւոնի) զոր տարան ընդ այլն, հնգետասան
» օր յամելով յաշխարհն, և ընելով աղէտիւք ըզ-
» նոսա իրգք, և զմեզ խոցոտիչ համբաւոնի »։
Եւ կու վերջացընէ պատմութիւնը յիշելով Կոս-
տանդին ծեր կաթուղիկոսին սգաւոր մահը, որ
գրեթէ 80 տարի նստաւ յաթոռն, և չդիմացաւ
Հեթմոյ որդւոց ցաւալից դիպուածին, որոց կրն-
քահայրն այլ էր. « Որ և Ճաշակեաց իսկ և. 'ի
» թանձրացեալ և զմուսեալ վերջնոյ լեղոյն՝ մերձ
» 'ի կատար կենացն՝ տեառնաբար զդղրդումն թա-
» գաւորութեանն մերոյ. զսուր և զգերութիւն
» իւրական ծննդեան և սննդեան աշխարհին, մը-
» տեալ 'ի փորձ հնոցի գեհենահոտ հրոյն բոր-
» բոքման. ձեռասուն արքայորդեացն կորսեան,
» որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա, և
» արարին տագնապել սահման [1] ընչոյն, բորբո-
» քելով զծարաւ լուծման յոքնաթախիծ կեն-
» ցաղոյս։ Զոր տեսեալ Յիսուսին իւրոյ և Ա-
» տուծոյ, ընդ Լազարու հանէ տրտաքոյ այպքան
» գժնդակ կրիցս՝ յանպատուն »։

Բայց Հեթմոյ դառնակսկիծ ծարաւը չկրցան բոլորովին մարել Ականց անապատին բազմաքուղիս աղբիւրներն. այլ հազիւ զովացած՝ յիշեց միանգամայն թագաւորութիւնը և հայրութիւնը. ձեռքը սրտին վրայ դրաւ, և հեռը բերած թաթար

1 Յորինակին «տիդեան»։

անօգուտ և անկիրթ զօրքերը արձակելով՝ գարձուց աչուքները իր կէս անապատացեալ երկրէն. փութացաւ գնաց առ զանն Ապազա, պատմեց աշխարհքին և սրտին հարուածները. խնդրեց աւելի մեծ գունդ մը զօրաց օգնութեան. հասարակաց թշնամւոյն (Եգիպտացւոց) վրէժը պահանջելու. բայց զանն իր մերձաւոր թշնամեաց հետ զբաղած՝ այս խնդիրքը անկատար թողուց։

Անկէ անյետ գարձած առեն էր՝ որ Հեթում ուրիշ ճար մը մտածելով կանչեց իշխանները Ջրօրհնեաց ոտնին առթիւ, և որդւոցը յիշատակաւ՝ անոնց սիրաը և քիչ մ՚այլ խղճերնին ճրմլեց. վասն զի բաւական սիրասէր չգտանուեցան թէ պատերազմին առեն և թէ անկէ ետև [1]. անոր համար այլ հիմա չէին համարձակեր բան մը խօսիլ. մինչև նախ թագաւորն երեսը և բերանը բացաւ, և իշխանաց և վարդապետաց լուռ ուրատսուացն այլ շնորհակալելով՝ միսիթարեց զանոնք որոցմէ պէտք էր ինքն միսիթարուիլ. զԹորոս վարդանանց պատակակից սեպելով զԼևոն՝ համբերող նախարարացն՝ ի գրան Ցաղկերտի. և աւելի կ՚ընտրեմ, կ՚ըսէր, ասոնց այսպէս ըլլալն, քան թէ անոնց ազատութեամբ ձեր և ձերիններուն կորըստեան պատճառ ըլլալն. « Ինձ լաւ է Լևոնի ծառայութիւնն, և Թորոս իւր արեամբն ՝ի վերոյ քրիստոնէից սպանած, քան ես այս ամենն երկրիս և ձեր արեանդ և խղճիդ սիրացած »։ Այս մեծահոգի խօսքերն սիրտ տուին վարդապետաց և իշխանաց՝ փոխադարձ միսիթարութիւն տալու թագաւորին, թէ և անոր առուգն գրէն ցուցածէն հազար անգամ աւելի էր։ Եւ այսպէս կէս միսիթարեալ կէս սգահար՝ կատարեցին յայտնութեան և ջրօրհնեաց հանդէսները, որչափ կա-

[1] Այսպէս կու մեզադրէ զանոնք Մատթէոս պատմիչ։

րելի էր. և գարձեան նորէն թագաւորը բարեբ-
լու, և միթարելու։ Ակէ վստահութիւն առնը-
լով Հեթում, յայտնեց բերնով այլ ինչ որ սիր-
ը կ՚աղաղակէր, Լեւոնի ազատութեան հնարքը.
գեռ ողջ էր Լեւոն, և գերութեան միջէն այլ հա-
ւատարիմ ձեռքով ու զարմանալի սրտապնդու-
թեամբ իմաց կու տար իրենցերուն, որ ամուր
կենան Եգիպտացւոյն դէմ։ Իսկ իսրագէան Ֆուն-
տուքտար Ճարտար հաւորսի նման՝ այնպիսի շա-
հաւոր որս մը ողջ կու պահէր, անով իր ուրիշ
փափագածները որսալու համար. և յետ քիչ մը
վախցընելու և յանդիմանելու, յիշեցընելով հօրը
սրհամարհական հրաւէրքը՝ որ զինքը 'ի ծառա-
յութիւն կանչէր, հիմա տեսար, կ՚ըսէր, ով որո՞ւ
եղաւ ծառայ. հրամեց որ տանին Գասիրէ քա-
ղաքին անուանի Լեռնաբերդին (Քոլատ-էլ-Ճեդէլ)
մէջ բանտեն, բայց առանց չարչարելու. ինչուան
հրաման այլ տուաւ անոր՝ Երուսաղէմ ուխտի
երթալու. և երբեմն ազատութիւն այլ կու տար
դուրս հանելու զգուշութեամբ։ Ահա այս դէպքն
է որ այն ժամանակներուն մօտ մեր բանաստեղ-
ծից մէկն երգեր է։

Աւա՜ղ ըզԼէոնն ասեմ,
Որ Տաճկաց գուռն ընկել գերի։
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս,
Սուրբ խաչն օգնական Լէոնիս ու ամենուս։
Սուլտանն ի մօտան [1] ելել
Իր ոսկի գունան կու խաղայ։ — Իմ լուս, և այլն։
Խաղաց ի Լէոնն երեսս.
«Ա՛ռ խաղա՛ ու տուր տատայիդ»։
«Լէոն, դու տաճիկ լինիս,
»Ես ու իմ տատաս քէ [2] գերի»։

1 Ի հրապարակ կամ խաղոյ տեղ։ 2 Քանզ։

Լէոնն ի բերդին նըստեալ
Դաստառակն աչքին ու կու լար.
«Փէրվանա՝ [1] որ ի Սիս կ'երթաս՝
«Դուն խապար տանիս պապայիս»։
Ոնց որ պապն ալ զան լըսեց
Շատ հեծեալ քաջեց ներամով.
Նկաւ ի սուլդանն եկաւ,
Շատ գեսեր եհան արընեց.
Իսա. [2] զիր Լեւոն որդին
Ու հասաւ սըրտին մուրատին։
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.
Սուրբ խաչն օգնական Լէոնիս ու ամենուս։

Ազնիւ և քաջ երգիչ, որ կու համարձակիս թագաւորիդ պատերազմաւ շատ արեան գետեր հանել տալ, և յափշտակելով որդին՝ հանիլ որդին մորոգին. իրաւ այս էր Հեթումոյ մտածութիւնն, բայց բաւական ոյժ չունէր այնպիսի թշնամւոյ դէմ։ Իշխանքն այլ ասոր տեղ խորհրդակից կ'ըլլային՝ որ փրկանք տալով ազատէ զորդին. և իրենցմէ բան տալով կ'ուզէին խզձերնին սրբել։ Բայց Հեթում երկու նախանձորդաց մէջ էր. մէկ կողմէն Եգիպտացւոց, մէկայլ կողմէն Թաթարաց. թշնամութենէն աւելի դժար էր բարեկամութիւնն կամ դաշնագրութիւնն, կամ փրկանք տալն. և եթէ այնպէս ազատէր որդին՝ կրնար դարձեալ կորսնցընել բոլոր աշխարհովը՝ Թաթարաց ձեռքով։ Նախանձն ինչ չարիք չըներ. Հեթումի քան տարուան համարձակութիւնն և խօսք անցընելն մեծ ղանից քով, շատ անհաւատ իշխանաց ծանր եկեր էր, և սկսեր էին համբաւել թէ Հեթմոյ բարեկամութիւնն կասկածելի է, անիկայ ծածուկ Մարայ սուլդանին պաշտակից

1 Ո՛վ կարաւան։ 2 Իսա. առաւ։

է։ Այս բանը իմանալով զանին քով գտնուած Մեծ Հայոց ազնիւ ճշմարիտ ազգասէր իշխանք՝ ծածուկ գրերով իմացուցին Հեթումոյ. և որչափ այլ եղած գիպուածոց համար ցաւակից կ'ըլլային, դեռ կու համարձակէին ըսելու, թէ Սուրբ Թագաւոր, աւելի լաւ է մեկ որդւոյդ մահն, և միւսոյն գերութիւնն, քան քու և բոլոր ազգիդ, զօրաք և եկեղեցեաք կոտորած և աւերածն. զդոյշ կեցիր, չըլլայ թէ Եգիպտացւոյն կէս աւերակ առնն մ'այլ ատա. ապա թէ ոչ՝ անհաւատից խօսքը ճշմարտած կ'երևիս, աշխարհդ կու փճացըննես, զմեզ այլ ամօթ և մահապարտ կ'ընես։

Այսպէս գժուարութեամբք պաշարեալ Հեթում, թէ թագաւորութիւնը կ'ուզէր ապրեցընել և թէ որդին. աւելի յայտնի թշնամւոյն վերայ վստահացաւ, քան կասկածոտ բարեկամին (Թաթարին). և ծածուկ դեսպաններ ղրկելով Պիպարսայ՝ հարցուց թէ ինչ կ'ուզէ Լեւոնի ազատութեան փոխարէն։ Պիպարս պահանջեց ամոր սիրելւոյն տեղ՝ իր սիրելւոյն ազատութիւնը, այն Կարմիր բազայն՝ որ դեռ Թաթարաց քով էր. երկրորդ, այն բերդերը՝ զոր Թաթարաց օգնութեամբ իրմէ առեր էր Հեթում՝ ետ դարձընել։ Հեթում դարձեալ ծերութիւնը և յօգնութիւնը մոռնալով գնաց Ապաղա զանին, և գանգատելով Պիպարսայ վրայ՝ իմացուց անոր պահանջմունքն այլ. Ապաղա մեկէն յանձն չառաւ թողուլ զԱնգօրն. բայց Հեթում յետ դարձին 'ի Կիւլիկիա՝ եղբօրորդւոցը մեկը խաբեց առ զանն, և վերջապէս բերել տուաւ զանիկայ. որ և ինքնին գրեց առ Պիպարս և իմացուց Հեթումոյ ձեռօք ազատին 'ի Թաթարաց։

Այս ժամանակներս Պիպարս ելեր եկեր էր Անտիոքը պաշարելու և քրիստոնէից ձեռքէն առնելու, և առաւ այլ։ Հոն իմացուց Հեթում որ

պատրաստ էր խաւրելու իրեն իր բարեկամը. բայց անոր հնա ուզած բերդերը տալու կու գըժարէր։ Այն առեն Պիպարս իրեն գրեց. «Լաւ մտածէ, Թագաւոր, թէ որ դու քու որդիդ և Թագաժառանգդ ազատելու համար այդչափ կու դժուարիս, միթէ ես այլ չեմ կրնար աւելի խստանալ իմ բարեկամիս վրայ, որուն հնա աչենակցութիւն այլ չունիմ. ինչ որ կ'ուզես ըրէ Սօնդորը. բայց գիտցիր որ մեր հաշտութիւնը աւրոզ դու կ'ըլլա, և ես ասկէ դառնալու առեն՝ կու գամ վրդ»։ Այս սպառնալիքէն հաւ այլ ուշանալու և որոշելու բան չէր մնար. Հեթում յանձն առաւ պայմանները, և Անտիոքայ մէջ գաշնագրութիւն մ'ըրին, և երկու կողմն խաւրեցին խնդրուածները. հանդերձ ընծայիւք։

Ցետ քան և երկու ամսոց դարձաւ գերեալն Լեան 'ի Սիւլիկիա, և հնաը իր հօրեղբօրորդին և իրենց Ճորտերը։ Հեթում բոլոր իշխաններուն և աշխարհագուսար հանդիսիւ՝ օրով Ճամբայ ելգ առաջ գնաց որդւոյն, որ անկէ հաւ իրեն քանի մը որդիէ աւելի կ'արժէր։ Արքեպ ծեր նահապետն Ցակոբայ՝ Ցովսեփայ ոգի ըլլալն լսելով Եգիպտոս երթալ և ուրախանալն, թէ Հեթմոյ իր Եգիպտոսէ ենոյն իսկ Ցովսեփայ գրուած բանէն[1] ելած եկած որդւոյն տեսութեամբ՝ փոխագարձ ուրախութիւն աւելի էր. ես չեմ գիտեր, և ոչ ոք գիտէ. և ոչ իսկ այն իրարու պըլլուած երկու սրտերն, որ կու զգան և չափը չեն գիտեր։... Երբ մտան 'ի Տարսոն Թագաւորական քաղաքն, ամէն կողմէ ժողոված վանականք և աշխարհականք եկան յուրախակցութիւն. և երբ մտան յարքունիս, առաջին հանդիպողն եղաւ անշուշտ ծաղկահասակ պարկեշտ կին մը՝ ըն-

1 Այսպէս կ'ուզեն պատմիչք մեր։

ծայելով իր հետ 'ի համբոյր Լեւոնի՝ իրենց բազմապատուշ սիրոյն երկուանախընծայ երախայրիքը՝ հեզանազիկ Զապլուանը, և Թագի պայազատ Յ-ամեայ Հեթումիկը[1], զոր այն սև պատերազմին քիչ առաջ 'ի լոյս ընծայեր էր մայրն, Կեռան՝ սիկնաց սիկին՝ դուստր իշխանին Լամբրոնի։

Այսպէս Հեթում հասնելով ըստ երգչին՝ ոչ-գին մարգարին, տարինելով փափագած ուրիշ մեկ կամքն այլ ուզեց կատարել. 46 տարի գլուխը ծանրացած Թագը՝ դնել 'ի գլուխ Լեւոնի, և երթալ հանգչիլ յաւիտենականութեան նախափունքը, միայնարան մը։ Լեւոն հրաժարեցաւ լալով, աղաչեց զհայրը, որ չստիպէ զինքն իր կենդանութեան առեն անոր աթոռը նստիլ. բայց հօրը յոգնութիւնն և ներքին փափագն աւելի սաստիկ էր. անշուշտ հեռուէն ձայն մ'այլ կու լսէր սա փութալու, զոր ուրիշներն չէին հասկընար։

Յաջորդ տարին գարձեալ և վերջին անգամ երկայն ճանապարհորդութիւն մ'ըրաւ առ զանն Պապազ, նախ շնորհակալելով Լեւոնի ազատութեան պատճառ ըլլալուն. և երկրորդ իր հրաժարելու և անոր Թագաւորութեան հրաման և հրավարտակ ուզելով. զոր և առաւ, փութացաւ եկաւ յարքունիս, ժողով ըրաւ և կամայ ակամայ բռնադատեց զԼեւոն յանձն առնուլ իշխանութիւնը, եթէ և իր Թոռան Թագը դնել չէր ուզեր իր կենդանութեան առեն։ Միրանեաց ու բեհեզին հետ Թօթաւելով ամեն աշխարհական հոգ և մտածմունք, անկէ ետև վանքեր և անապատներ կու պաշտէր, երկրորդ և անանց Թագաւորութեան մը պատրաստուելու. որոյ համար Ճգնողական զգեստով այլ զարդարուած և անունը Մոյսէս գրած, կու սպասէր հանգիրձեալ հրաւի-

1 Հեթում Բ Թագաժառանգն. որ և կրտնաւոր եղաւ։

բակին, որ և չուշացաւ. վերջ մը փուԹացուց ըզմահը (28 հոկտ. 1270), և հասուց զինքը իր փափագած և անխոռով հանգստեանը. ԹողլՈՎ զմարմինն իր սիրելի Դրազարկ վանաց մէջ՝ սիրելագոյն անձին քով, իր սրբակենցաղ կենակցին Զոռէ ԹագուհՈՒՈՅՆ, որ իբրև քսան տարի իրմէ առաջ հոն արդարոց քունը կու վայելէր։

Լևոն Բ յետ երկայն և ծանր սգոյ, ազաչելով և սփիոփելով իր բոլոր աշխարհքին և յօտար Թագաւորաց և դրացեաց, հազիւ յանձն առաւ հօրը ԹագՆ 'ի գլուխ գնել. և անոր նման պէս-պէս դիպուածներու և կրից մէջ Թագաւորելով, նոյնպէս սիրելի եղաւ ազգին և պատուելի օտարաց. մանաւոր փոյԹ և սէր ունելով եկեղեցեաց և վանաց և գրագիտաց, որոց առատապէս նուէրք կու տար, ոչ իր երկրին մէջ միայն, այլ և 'ի Մեծ Հայս և 'ի գաղԹականս յԻտալիա. ուր և Բերուձիա քաղաքին Հայոց եկեղեցւոյն նուիրած ՀաՀոց գիրքը՝ իր ընծայագրովը կայ մինչև ցայժմ։

Լևոնի ԹագաւորուԹեանը հինգերորդ տարին՝ իր գերող Եգիպտացւոց հետ պատերազմելով և վռնտելով, վերջապէս յաղԹական պատերազմն դարձած՝ իրմէ Երիտասարդ ՀիէՆ վիրաւորուելով, մեծաւ փառաք մեռաւ ծերունի սպարապետն՝ հօրեղբայր Թագաւորին՝ Սմբատ (1276), յետ մահուան ամենայն համամայր եղբարցն, որոց անդրանիկն էր։ Իսկ Լևոն յետ քսանամեայ ԹագաւորուԹեան վախճանեցաւ ('ի 6 փետր. 1289). որոյ քաղաքավարուԹեան ամենայն դիպուածնեՐը պատմելու համար՝ ինչուան 'ի լոյս հսկելն այլ չիքաւեր։... Բայց արդէն մեր հսկման կանԹեղինն կու կածկրտայ, և կրակարանս 'ի մոխիր կու դառնայ։ — Դիչեր բարի։...

Լ

ՍԿԻԶԲՆ ՏԱՐՈՑ

ՆԻ

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ Ի ՀԱՑՍ

Մարտի 9–21

Ահաւասիկ Մարտ ամիս, որուն սպասեցինք՝ ջորս ցուրտ և երկայն ամիսներ. բոլոր բնութիւն կու հառաչէր կու կանչէր զմարտ. ոչ իբրև տարուոյ գեղեցկագոյն ամիսը, այլ պատճառ մեծաւոր գեղեցկութեանց. ոչ իբրև զապրիլ դալար, կամ գունաւոր իբրև զմայիս, ծաղկազարդ և պտղացոյց, այլ այդ ամենայն շնորհաց նշան տուող. և ծնող մանկագոյն և զուարթագոյն եղանակի տարուոյն, — գարնան։ Փարուոնն դեռ եկած տիրած չէ, այլ ահա կու դայ և յառաջէ, և ձմեռն երթայ և հեռանայ։ Մեր կրակարանին ժամերն կու կարճնան. առաւօտն կու կանիսէ, իրիկունն կ'ուշանայ։ Ցորեկն աճելով՝ իր թագաւորին (արեգական) ճառագայթներովը կու զարդարի. օգն կու զգայ և կու պահէ զտաքութիւն. կու զգան ջուր և հող. ցաքած, սեւցած, պնդացած երկիրն՝ ձմեռուան ցիւնը և նլեամը կու հալեցընէ և կակղանայ. և ահա հինգ վեց ամիս իր

ծոցը թողեալ թաղեալ սերմանք, թմրեալ թոռմեալ առանք՝ ծայր արձրկեն, կանաչն կ'ընծայուի, կարմիր կու գայ, ծաղիկ կ'երևի։

Իրաւ գեռ մեր բարձրագիր աշխարհին ամեն տափերն այլ իրենց կերպարանքը չեն փոխեր, և այս շնորհքներն չերևիր վրանին. գեռ ձիւն և սառն յամառեալ կու բռնեն զսար ու ձոր, բայց ամենեին անզգայ այլ չեն. ալևոր ժայռերն սկըսին սև խայծ առնուլ. հոգն թէ և ոչ գալար՝ գոնէ կու յայտնէ զինքն և կու ջանայ թօշնուել վերայի ձերմակ թանձրութիւնը։ Մեր հիւսիսային խորհրդավիճակներն, ևս առաւել արևելեան և հարաւոյ եզերքն՝ կ'առնուն բարեխառն կլիմայից հաւասար գարնան գոյն և շնորհք. որք արդէն մեր գրացեաց և մեր գէպ 'ի հարաւ գաղթական եղբարց երկիրներուն վրայ համարձակ կու փայլին, և զուարթաղեալ բնակիչքը 'ի գործ և 'ի ըզբօսանս հանեն։ Ահա թագաւոր ամրոջ երգաձայնն այլ Երուսաղեմն կու գայ.

Հա՛ մըտաք յամիս մարտին.
Պառերն ամենայն ծաղկին.
Հատրն գայր գարնանային
Լոյսն եկնէ Հայոց զատկին։...

Մենք՝ թէ ծաղիկը և թէ լոյսն ամենուն հաւասար մաղթելով՝ լսենք ուրիշ ճարտարագոյն երգչի և բազմարուեստ անձի մ՝այլ որ Տիգրանակերտի կողմերէն կ'երգէ. նոյնպէս մարտի ծաղկանց հետ խառնելով զատկին յիշատակը.

Մարտն կու գայր ծաղկներով,
Երկնից հաւերքն կարգալով,
Հրեշտակապետք փառաց տալով.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Գարկ արևգակն ծագեցաւ.
Սատիկ ձրներն հալեցաւ.

ԵՒ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

Գառն ու մաքին ընծայեցաւ.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Ամպ ու երկինքքն խիստ գոռաց,
Ողորմութեան ցօղն ցօղաց,
Ծով ու գետերքն խիստ ծըփաց.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Աղքերակունքքն յորդորին
Ծառ ու ճըղերքն զարդարին.
Խոտ անասունքքն կերակրին.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Մարգապէս է գառեր մեղուն,
Ծողվեր ծաղկին ի լեռներուն.
Ոչ վախենայ ի մեռելուն,
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Գիւղկիւղ ղումրին՝ առաւօտուն
Նկեր դարձեր վարդին հոտուն,
Գանկատ կ'առնէր նա ի հողմոյն,
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Կաքաւն գայր սարէ ի սար
Կարկաչելով ի ձորն ի վայր,
Զատուած օրհնէր ինքն անդադար.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Հաւ ու ձագերն հաւասարական
Սաղմոս ասեն նոքա լըման,
Աղաղակեն առ տէր միայն.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Դաշտ ու սարերքն նորոգին
Եւ գերդ նոր հարսքն զարդարին,
Ի յԱստուծոյ փառաւորին,
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Քար արտասուս բղխէ ըզքուր,
Որպէս ըզծով եղեւ ազբիւր.
Վարդ ու ծաղիկն է համասփիւռ.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Երուսաղէմ քաղաքն այսօր,
Աչխարհս ի հոն երլծան յուսով.

Սուրբ Յարութիւն լեցվի լուսով.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Հայ ու Հոռոմն խաչապաշտ
Ամեն բոպիկ ու գլխիբաց
Ուրախանան լուսոյն գիմաց.
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Տէրըն տացէ խաղաղութիւն
Եւ աշխարհի ուրախութիւն.
Հոռոմն կու գայ անմահութիւն,
Յորժամ Հայոց զատիկն գայր։
Իմաստասէրք ուրախանան
Եւ ասաբնվորքս լիանան,
Ամեն մեզաց ձեռք լուանան,
Յորժամ Հայոց զատիկն գայր։

Եւրոպիոյ մէջ այլ կան աշխարհք՝ ուր գարնան գալը հանդիսիւ կատարեն զատկի օրերը. բնութեան և ընորհաց հաճոյագոյն երկու յիշատակները յիրար զուգելով. զգարուն և զզատիկ. ինչպէս մեր երգիչն այլ. որ է ըստ ոմանց [1] արքեպիսկոպոսն Ամդայ. Մկրտիչ Նաղաշ. Թերևս մեր ամենէն նշանաւոր և ճարտար անձն ծն գարուն մէջ։ Ինքն հայկական Միջագետաց ծնունդ և հոգևոր տէր բազմաթիւ վիճակաց այն կողմերուն՝ Հայաստանի շատ գաւառներէն առաջ կու տեսնէր գարնան բերքը. և մեզի հետ կ՚ողջունէր այս օրերս, և մեզմէ առաջ այլ՝ բաբելական կամ լալական ուռենեաց երկայն երկայն խարտեաշ խոպոպները. ընկակին տերևները. լորոյն (tilleul) կարմիր բողբոջները. հոն արդէն պարկեշտ մանուշակն կապոյտ աչուքները բացեր է իր անխնամ մենարանէն. անուշիկ հոտ մը խառնելով

1 Ասելի հաւանական է թէ հեղինակն ըլլայ Մ՝ուրատ Իսկոր ՀԷկն։

անուշիկ հովի մը. և եթէ ասպատակող գնդի մը վերջանաց զօրաց նման՝ յանկարծ բարբառոս հով մը չփչէ, օրէ օր բուսաբերութիւնն կու յառաջէ, և գրեթէ դիտող աչք մը չիկրնար հասնիլ անոր շուտ շուտ զարգանալուն։

Արդ անտարակոյս բնութիւնն կու նորոգուի, ծերացեալ տարին կու վերջանայ, կամ նորէն մանկանայ. ուղանակաց և ժամանակաց սկիզբն գարձեր է։ Արժան էր որ այս բնութեան նորոգութեան եղանակին՝ սկսէին ժողովուրդք իրենց քաղաքական տարին, և գարնան գիշերահաւասարին կարգել իրենց կաղանդը կամ խնգարար նուիրամակը։ Ցայսմ մասին շատ խնդրք և իրաւամբք գործէին հին ժողովուրդք, որոց առջև մեք ծաղկեալ նոր ժողովուրդքս՝ անտեղութեամբ ան. յարմար միջոցէ մը կու սկսիմք մեր տարին, (Յմեռնային արևագարձէն 10 կամ 20 օր վերջը, 1 յունուարի)։ Այն հին ազգերէն մինակ գրիչ շատ ան. փոփոխ մնացած Հրեայն՝ մինչև ցայսօր իր սրբազան տարին կու սկսի գարնան հետ. միայն թէ տարին արևու հետ համեմատելու առեն՝ ամիսներն այլ լուսնի հետ կ'ուզէ յարմարցընել, որով ոչ Զիւդ և ոչ միշտ գարնան հետ կու սկսի տարին։ Բարեբաղդաբար, յայսմ իր հետ և իրմէ հին ազգ մ՝ այլ կայ՝ որ նոյնպէս իր հին սրբազան տարեմուտը հաւասարմութեամբ կու նշանակէ իր տօմարին մէջ, և մինչև ցարդ միշտ արժանապէս կու սկսի այդ տարին՝ երբ արևն անոր և իր սիրական Ոոյ աստեղատունը մտնէ, որ է ըսել սոյն օրս գարնանամտի, (9 մարտի կամ 21 ըստ նոր տօմ.)։ Այս ազգս՝ որ յայսմ մասին աւելի քան զՀոռոմն և զՀելլէնս՝ իմաստասէր մանաւանդ թէ Զիմարասէր գտնուեր է, և այս գիւտը պահեր է՝ թերևս յանգէտս օտարաց, Հայ ազգն է. որոյ համար իրաւամբ պարծելով իր հին հեղինակաց

մէկն, անոր աստուածատուր ձրից մէկը սեպե-
լով իր ասմարն այլ, կ'ըսէ համարձակապէս, թէ
Աստուծմէ առին « զատմարն, անդ Մովսէս, ասա
» ՀՈՑԿՆ յառաջ քան զնա »։ Հայոց քաղաքա-
կան սովորական տարին այլ, ըստ ամենայն հին ազ-
գաց (որոց ամիսն ոչ երբէք աստեղաբաշխն կ'ըն-
լայ) շարժական և փոփոխական էր, նահանջ չը-
նելով. այլ սրբազան տարին՝ հաստատուն է. ո-
րոյ սկիզբն ոչ ըստ քաղաքական տարւոյ, Նա-
ւասարդ ամիսն է, լատինաց օգոստոսի 11-23ին հաս-
տատեալ անշարժապէս, այլ բուն արեւ ամիսն,
ԱՐԵԳ։ Ինչ օրացոյցդ և նայէ, կու տեսնես որ Ա-
րեգ ամիսն Խույի տանուտէրութեան հետ կու
սկսի, որ է կէսն գարնանային գիշերահաւասա-
րի. և ուրախութեամբ պարծէ նախնեացդ վրայ,
որ այս գեղեցիկ բնական ճշմարտութիւնը անփո-
փոխ պահելով յաւուրց ջրհեղեղին՝ հասուցեր
են մինչև 'ի մեզ, և մեզմով օտարաց, առեալ ի-
րենց գերադիւցազն նախահօրմէն, 'ի Հայկէն. որ
ոչ միայն ճարտար շարժիչ էր աղեղան, այլ և
թուոց և չափուց։ Միանգամայն և ցաւէ որ չի՛մք
կրնար գեռ 'ի գործ գնել և զուգել այս հին ասմարը նորոյն հետ և վարել։ Քաղաքական տարւոյ
սկզբան հանդիսից, այսինքն Նաւասարդին, փոքր
'ի շատէ տեղեկութիւն ունիմք. այլ կրօնական
տարւոյն և Արեգին սկզբան հանդէսներն՝ Հայ-
կազանց խորհրդապահ քրմարանաց հետ ծած-
կուած են մեզմէ։ Շատ է գիտելն և տեսանելն՝ որ
իմաստութեամբ գարնան սկզբան հետ Արեգին
սկիզբն այլ զուգած և նշանակած է Հայադիրն։

Բ

Նոյն Հայադիրն յափշտակելով զմեզ 'ի հնութիւն ժամանակաց, ներելի կ'ընէ թողլու այսօր նորագոյն յիշատակները, և հնութենէ հնութիւն ելնել 'ի վեր քան զարեգն և զսկիզբն հայկական ամսոց, և կու նշանակէ այսօր յիշատակ մ'այլ, որ ոչ մեր հիմկու աշխարհիս գարուց մէջն է, և ոչ այլ անկէ առաջնին, այլ երկու աշխարհաց միջոցն կրնայ ըսուիլ. նախաջրհեղեան և յետջրհեղեան աշխարհքները միացընող կամրջոյն վրայ. որ է ծեր նաւողին՝ Նոյի՝ տապանն։ Սուրբ գրոց հետ հաշուելով անոր 'ի տապանը մտնելուն օրը, ըստ սրբազան ամսոց Եբրայեցւոց (և ոչ ըստ քաղաքականին՝ որպէս ոմանք կ'ընեն) ջրհեղեղին գալը և գադրիլը, տապանին նստիլը 'ի լերինս Արարատայ, պատուհանին բացուիլը, և այլն, այս օրուանս կու հանդիպի տապանին ձեղուան բացուիլն, այսինքն վրայի ծածքին։ Տապանին 'ի լերինս Հայոց նստելէն ինչուան լերանց գլուխներուն ջրէն դուրս երևնալը՝ երկու ամիս անցաւ, յորմէ գուշակուի տապանին մեծութիւնն և բարձրութիւնն. յետ 40 աւուրց բացուեցաւ անոր պատուհանն, վասն զի ջուրն անկէ այլ վայր իջեր էր. և իբր յետ ամսոյ մը, այս եղանակաց նորոգութեան օրը՝ բացին արգելականքն տապանին վերնածածքը, և իբրև տան գարպասներու կամ դիտանոցի վրայ ելնելով՝ տեսան «զի նուազեալ» էր ջուրն յերեսաց երկրի». նուազեալ էր այլ ոչ ցամաքեալ բոլորովին. վասն զի ասոր համար դեռ երկու ամիս այլ պէտք եղաւ։ Ի՞նչ հիանալի և սրատեսուչ տեսարան։ Այն լերանց կողն՝ որոց տափի մը վրայ նստեր էր տապանն, կ'արդի-

լէր համարձակ տեսութիւնը՝ 'ի պատուհանէն. անոր համար Նոյ կու տեսնուէր թռչուններ արձակելով անոնց դառնալ գալէն կամ չդառնալէն իմանալ ջրոց ցածութիւնը և երկրին ցամքելուն չափը։ Իսկ հիմա իր 30 – կանգնեայ նաւատան դիտանոցին վրայ ելած՝ իր համբերող ընտանեօքը, կու տեսնէ այն ամրակերտ ընդարձակ նաւը ծովային բերդի մը պէս ամենաբարձր լեռնատափից միջոց նստած. որոց եռևէն՝ դէպ յարևելս, յարևմուտս և 'ի հիւսիս դառնալով՝ Հայաստանի աւելի կամ պակաս բարձր լեռներն կ'երևին. ոմանք ամենևին ելերկ ու մերկ նոր ջրէ դուրս ելած ի նման. ոմանք քանի մը ամսական արևու տաքութեամբ սկսած իրը աղուամազով մը ծածկուիլ բարակ կանաչութեամբ, որոց վրայ ծիրանափայլ ծիծաղի արեգակն 'ի խոյի աստեղատունէն. անոնց մէջ այլ կ'երևին խորատորք և հովիտք, և քանի մի դաշտք՝ իբրև աշնան վերջին արօրած պատրաստած սերմնացան և անբոյս սև արտեր։ Իսկ հարաւային կողմէն կ'երևին ծովածաւալ դաշտք և անապատք Միջագետաց և Ասորեստանի, որ յիրաւի դեռ, թէ ոչ ծովու՝ գոնէ ՀահՃի պէս կու ծածանին, և տեղ տեղ ցամքած, տեղ տեղ ջրածածուկ, արևուն զարնուածքներէն իբրև փռած հայլիներ կու ցոլանան։ Երկու ամիս Նոյեանք տապանին ելդիքէն կու դիտուն այս տեսարանը, մանաւանդ թէ միշտ փոփոխեալ տեսարան մը, ջրոյն օր ըստ օրէ քաշուելովն, և արևուն օր ըստ սրէ տաքնալով՝ և այն դաշտաց վրայ տեղ տեղ երևցած տխրալի դէմքերը, աւերեալ աշխարհի և խզդուած հասակաց և գեղեցկութեանց մնացորդները բոլորովին քայքայելով, ծածկելով. և թողլով միայն (տխրագոյն մնացորդ) ջոր ու ՃերմակՃ ոսկորներ, այն հնչամոլ փսփսուկներուն, և այն յանդուգն հսկաներուն՝

որք կարծեցին թէ միայն երկրիս վրայ է մարդուս վիճակն. և անիծեալք յերկնից՝ երկրէս այլ դուրս 'ի ծոց անդնդացեալ ծովուն ծածկեցան, կերակուր կիթից և վիշապաց. հազիւ թողլով սակաւ ինչ նշխարքնին ծովէն փոխած՝ իրենց հին բնակարանաց քով. որոց հիմունքն անգամ տակնուվրայ եղած հողուն հետ խառնուած կորած են։ Եւ երկիր երկրորդ անգամ կ'երևի « աներևոյթ և ան- » պատրաստ » անապատ մը ամայի, անմարդաձայն, անկենդանի. յորոյ վրայ հազիւ իբրև պըզտի շարժուն գծեր կամ բծեր՝ տապանին պատուհանէն արձակուած թռչուններն թափառելով կ'անցնին՝ դագար կամ բոյն մը փնտռելու։...

Գ

Ո՛րչափ տարբեր էր այս երևոյթս երկրի՝ այն առաջին սկզբնական անպատրաստ վիճակէն եղած և նորակերտ զարդարածէն. երբ ձայնն և մատն արարչապետին՝ հինգ աստուածային օրուան մէջ՝ գործելով և ներգործելով, փոխեց զտարերս երկրի 'ի բոյս և 'ի կենդանիս, պատրաստելով 'ի վայելս գերագոյն արարածոյ մը՝ զոր անոնցմէ եռև պիտի ստեղծեր. և որոյ այսօր իսկ յիշատակ է ըստ Հայադիր կարգի՝ գալոնանամի և բացման տապանին հետ. այսինքն Արարչագործութեան, որոյ սկիզբն յ'17 ամսոյս նշանակի և վերջն 'ի 22, ստեղծմամբ մարդոյն։...

Սրեղծո՜ն մարդոյ. — ի՜նչ մեծ և արժանաւոր յիշատակ. ոչ այնքան հնութեամբ, որքան հիացմամբ մտաց և քննութեամբ։ Ո՞վ կրնայ անտարբեր կենալ երբ իրեն ծագմանը, և առաջին ծագման ինդիր մը ընկնայ 'ի միտքը։

Շատ հիւլ լեռնադաշտակի մը վրայ վայրի

կաղնին տնանալով. ինչուան հարիւր տարի բարձրութեամբ, որուն տերևազարդ թևերուն բոլորտիքն 3-600 և աւելի տարի կու շրջապատեն, և շքին տակ հովիւ մը բոլոր իր հօտիւն կ'տապատանի, և որոյ կոթենած բունն՝ պապուն պապուն այլ յենարան և հովանի եղած է. հիանալով այդ հին ու նոր հսկայ հասակին վրայ, որ ինչուան եօթ ութ հարիւր նոր գարնան ծիծաղեր և նոր ամերանց գիմացեր է, զարմացմամբ հարցեր ենք. Ուսկից և ինչպէս առաջ եկած է. — և ուելի զարմացմամբ լսեր ենք՝ թէ պզտի խոզակէ մը, բլթաշլափ կաղինէ մը առաջ եկած է այդ ահեղ հսկահասակ բուսականնահսկան։ Հապա այդ կաղինն. — այն այլ ասոր նման և ասկէ առաջ հսկայ ծառէ մը. — այն հին կորած վերցուած ծառն այլ ուրիշ խոզակէ մը. և այսպէս մէկմէկէ։ Վերջապէս, մանաւանդ թէ սկզբնապէս, ամենէն առաջ որն էր, կաղինն թէ կաղինն, ծառն թէ կուան. կամ որ նոյն է՝ ըստ բիւրբայ փիլիսոփայից, հաւն թէ հաւկիթն։ Իրենց խնդիրքն և քննութիւնք գեռ այս մեծ հարցման պատասխանը չեն կրցած տալ. և գեռ հաւերը թոցընելով՝ հաւկիթները գլորցընելով առաջ կ'երթան։ — Մենք հաւանեալ և հաւատացեալ ենք մովսիսական աստուածաշունչ գրոց պատմութեան, որ ամենէն առաջ մեզի ցուցընէ զարիզերս՝ իբրև ամենածրար ձու մը սահզծուած յանժամանակէն Աստուծոյ. որոյ Հոգին՝ իբրև հոլաթև համասփիւռ հաւ մը՝ գրգռայր 'ի վերայ անդնդաւպատոյտ տարուբերած տարերացն, իր կամքով և հրամանաւ կոչելով և կոչելով 'ի զանազան ձև ու բնութիւն. որով միանգամայն կերպացաւ կաղինն առանց կաղինի և հաւն առանց հաւկրթի։

Մեր սկիզբն այլ այս կանոնով եղաւ, բայց

ազնուագոյն կերպով. մեր ազնիւ քնութեան համեմատ։ Ա՛վ՝ ի հաւատացեալոց՝ իր կրօնական և պատմական ուսմանց սկիզբը չէ լսած չէ սովրած. բայց անգամ մ՝այլ հրաշալի նախամարգարէին գլուխը, և կարդա քու սկզբանդ սկզբնաւորութիւնը, մարդոյն ստեղծագործութիւնը։

Եթէ ուզես, մատագ վրայ հեծած՝ Թոքր մին չև քու հայրենիքդ, եդեմական սահմաններդ. և դեռ դրախտին մէջ չիմացած՝ անկէ դուրս և քիչ մը հեռու (բայց մի մինչև՝ ի Դամասկոս)[1], ընտրէ գարտատափ կամ ձորավայր մը. դիցուք թէ ըլլայ մեր հին Սրմանց, (թերևս և Սերմանց) լեռներուն մէջ, որ հիմա Գինկէօլ կ՝ըսուին. և անկէ վերանալով պատմական ժամանակաց սկիզբը, տես նկատէ հոն իջած՝ յառաջ քան՝ ի Սինա, և յառաջ քան՝ ի Փորեբ՝ մէկ մեծ թեւեթև ուշարժուն բրգան պէս բան մը, իբրև ամպով, ծխով, լուսով, բիւրեղով շաղուած. որոյ միջէն կարծես տեսնել մարդկային կերպարանաց ուրուական մը, որ ծիրանի գօտւոյ նման ընդարձակ գիրկ ու թեւեր շարժելով, և իր ստորոտը եղած կաւային հողի կոշտ մը քրքրելով յիւրաւի քեզի մեզի նման նիւթական կերպարանք մը վեր կու կանգնէ։ Առջի ստեղծուածներէն տարբեր և ազնուագոյն կենդանւոյ մը կաղապար կ՝երևի աստիկոյ. հազիւ երկու թաթով գետինը կոխած, ուղղաձիգ կու վերանայ երկնադիտակ բոլորակ գլխով. երկու կողմէն թեւեր արձրկած, ոչ թռչելու յարմար, այլ իբրև փարելու իրեն նմանւոյ մը հետ, կամ թէ նոյն իսկ իրեն ստեղծողին՝ երբ ճանչնայ զայն։ Տե-

1 Վասն զի ամենք զԱդամ՝ ի Դամասկոս ստեղծուած կ՝ըսեն. և անկից, կ՝ըսէ մէկն, Աստուած մեռոյը Ադամայ ճակատին վրայ գրած՝ քլեց քանի մը ժամուան մէջ հասուց յԱյրարատ։

սածնիս դեռ անկասար կաղապար մ՚է. անշարժ, անյարդ, անզարդ պատկեր մը, բայց Աստուծոյ պատկեր ըլլալ գուշակուի. կաւակերտ կորմրտակերտ արձան մը, որ կարծես թէ ներսէն կենդանանալու ոչխատելով՝ մանր քրտան կայլակներ հու թորէ բոլոր զանդուածէն դուրս, զոր երեկոյեան զովագին հողմիկն կամաց կամաց ցամքեցընելով կու ձերմկցընէ, կ՚ամփոփէ. և իրրև հեռուէն մոտեցընելով աչքիդ՝ հնազհեռ յայտնապոյն կու ցուցընէ մարդկային կերպարանք. նախ եգիպտական արձան մը կարծես զայն, վերջը կովկասեան կերտուած մը, յետոյ մոմէ մարդ մը. հիմա բուն մարդ ըսել չըսել չես գիտեր, վասն զի բան մ՚է, բայց ոչ կենդանի և ոչ մեռեալ, ոչ՝ լքուն և ոչ ալթուն. այլ այնպիսի՝ որ ոչ անուն ունի և ոչ ձիշդ պատկեր մը՝ մեր հիմակուան գաղափարաց մէջ, Իսկ հրաշագործ Ճարտարապետն՝ իրը թէ պահ մը կիսկատար թողլով իր ամենէն զարմանալի շինքը՝ կու գիտէ անոր չափակցութիւնը, և ծանրութեամբ ու մտածմամբ կ՚ուզէ այդ կաւեղէն պատկերին ազդել ողորկութիւն, գոյն, շարժուն, շունչ, կեանք, զգացումն, բան և հոգի. և այս ամէն ըսածներս՝ իր դիտելուն և հաճելուն տաեն՝ կ՚ազդին, կ՚երևին իր ձեռակերտին վրայ։... Տես, ի՞նչ շուտ շուտ այդոր արտաքին երևոյթն կակլած կոկած սկսաւ փոյլիլ, հեազհեռ մոմագոյն, մոխրագոյն, շուշանագոյն, ծիրանեգոյն, վերջապէս մարմնագոյն. և այնքան բարակ ու փափուկ, որպէս թէ թափանցիկ մաշկ մը միայն ծածկէր ներքին զարմանալի մեքենայն, և իրրև ապակւոյ մը տակէ յուցընէր կապուտաթեալ ջղեր և երակներ։... Ահա յանկարծ բոլորակ գլխէն ինչուան ուսերը ընդուեցան արձրկեցան գունդ գունդ խոպ խոպ փուռնջեր, բայց իբրև պղնձի անգրիի մը վրայ՝ անշարժ են. աղօտ ալօտ

արշալուսէ մը ծագած առաւօտու պէս յանկարծ կ'երևին բարակ թարթափք և յունից կամարք, որոց ներքևը երկու մարգարտափայլ դոգք կան, մէջ տեղուանքն սև ագամանդ. — անշուշտ ճանչցայ աչքերը. բայց անոնք զքեզ չեն ճանաչեր, քեզի չեն նայիր, չեն շարժիր. սառնամած լը-ճակներ են, ծածկուած ակունք են, որ կ'ուզեն լոյս առնուլ և լոյս տալ։... Սղեցի՛ ուրեմն լոյսն, անհամբերութեամբ կանչես. եղեցի՛ լոյս 'ի վերայ այդ աքանչելի դասակերպիդ. եղեցի դա կենդանի պատկեր Աստուծոյ։... Սև աչս եղև լոյսն կենդանի։ — Կու տեսնես, անդրին մարդ կ'ըլլայ. կ'ըլլայ ըսելու չմնար, կաւէ կալապարն՝ Ադամ եղաւ։ Ի՞նչպէս եղաւ, ուսկից եկաւ այն ճառագայթն, այն գոյներն, այն շարժումն.... Դեռ վայրկեան մը, բոպիկ մը, պիկ մ'առաջ պատկեր էր, հիմա անձն է։ Վասն զի հրաշագործն՝ աստուածային երագութեանովը դպաւ այդոր ճակտին, և մէկէն արձանին մանրանուրն սկսան շարժիլ։ Դիտէ դա գանգուր գլխակներն՝ ինչպէս բարդ բարդ կու ծփան. նայէ դա շիկորակ շրթանց շարժմունքը, դա զմրուխտէ աչաց հրեղէն թաւալմունքը. երկիրորշեայ ոնգանց բարակ շնչառութիւնը, դա գեղեցիկ գլխոյն հեզիկ պտոյտքը. դա ջաջուռ թևոց թափ տալը. դա դուրթ տուող ոտից դոփիւնը, որ ոչ միայն անդրին 'ի պատուանդանէն կարեցին, այլ բոլոր անձին ներքին ազդուածքէն ուժ առած՝ այնպէս սաստկութեամբ մը գետնին թունդ կու տան, որ օդապարիկ գունատէն աւելի շլայ և բարձր պիտի ցատքէր յերկնից միջոց, թէ որ դեռ ճակտին վրայ գրուած չըլլար մասն աստուածային. որ իբրև ամէնի երիվար մը՝ սանձով, կամ ծիրով հողմով զինուած պատրաստ նաւ մը՝ խարսիով, դեռ բռներ է զայն. բայց այնպէս մը կ'երևի՝ թէ հա-

զիւ և ոչ ընդ երկար կրնայ համբերել բռնաւածն։

Իսկ աստուածպետականն յետին հաճութեան ժպիտ մ՚այլ տալով, իր անքննելի ծոցէն կու փչէ նորաշէն պատակերին վրայ շունչ մ՚այլ. շունչ բանական, անմեռ և անապական, որով բոլորովին կ՚ըլլայ կու կատարուի մարդն. և հաղորդ աստուածային զօրութեան, աստուածային երջանկութեամբ մը ճանչնալով ինք զինքը, ինչպէս և ուսաք ըլլալն, փառքամայն աչքով և շրթամբք, թևոք և ծնգոք, սրտիւ և բանիւ և հոգւով կու կանչէ՝ ԱՍՏՈՒԱ՚Ծ ԻՄ։

Ը.

ԲԱԴՐԻԱՆԴԱՅ ԿՈՒԻՆ

25 Ապրիլի 775.

«Յակունս Եփրատայ, 'ի Ծաղկաձորդ վայել. » չութիւնն », քան զրբազան երգչին, 'ի Ծմակս Մաղկոտան և 'ի բարձրաւանգին Խագրևանդայ, հրաւիրեն զմեզ այսօր հայադիր յիշատակք։ Ի՞նչ գեղեցիկ հովիտ, մանաւանդ թէ ինչ ընդարձակ դաշտ՝ լցեալ զարդուք բուսաբերութեան. զոր կուսանուցանեն հարիւրաւոր ականակիտ վտակք, իջնելով 'ի կողից այրարատեան լեռնաշարից և Աղթամարայ պարապափին. որք ամեն կողմանէ շրջապատեալ ձևացքնեն այս ձուաձև և տաշտանման հովիտս, իբրև 90 մղոն երկայն արևելքէ յարևմուտք, և 30 մղոն լայն 'ի հիւսիսոյ ընդ հարաւ. և ժողովելով 'ի գոգավայրն և խառնելով ընդ գլխաւոր վտակին՝ կու գեատան կ'ելլան պայծառն Արծանի, որ է արևելեան օժանդակ և զուգակից եղեմաբուղխն Եփրատայ, որ 'ի Բարձր Հայոց 'ի գագաթէն Կարնոյ կ'իջնէ, և երկուքն այլ 'ի համանուն Մաղկի լեռներէ։ Եթէ այս մեծ տաշտաձևիս հարաւային շրթունքն, այսինքն Ապահունեաց (Մէլազկերտ) և Մաղկոտան (Խամուր, Տիատին) լերինքն՝ ձեղքուելով անցք մը չտային Արածանւոյ, անշուշտ գեղեցիկ և քան

զԱղթամար ընդարձակ ծովալիճ մը կ'ըլլար Բաղրևանդ. և թերևս երբեմն այնպէս այլ եղած ըլլալը ստուգեն մեզի երկրաբանք։... Բայց դու, Հայկակ, դու հոս գուցէ աւելի ծաղկահան կ'ուզես ըլլալ քան երկրաբան. այս հովիտներուս մէջ մտած առենդ՝ Շահապիվանը կու փնտռես. մեր հին նախնեաց հետ կու փափագիս նաւասարդի աշխարհախուզմը հանդէսները կատարել. բայց գեռ իրենք չորս ամիս կայ այն ատենները. ուրիշ անգամ այլ կու գամք 'ի Բաղրևանդ, որ ոչ սակաւ յիշատակներ ունի։... Բայց քանի մը ամսէ ետև ամառուան տաքուն՝ հիմկու ծաղկանց գաղարութիւնը չեմք գտներ. թէ և այն առենն այլ ունի իր լեռնարուսիկ գոյնզգոյն ծաղկներն։

Հիմայ գարնան ծաղկունքն ծածանին փնջիկ փընջիկ, թռչունք ձայնեն մանրամանիկք, ջրերն կրկըլան զովիկ զովիկ. ուր էր թէ աղգային գուսանակ մ'այլ երգեր մեզի զգարուն։ — Զեն պակսեր գարուն երգող Հայ գուսանք, ձեռնաւորք և մշակք, սրբամօրուս պաշտօնեայք, պատրիարքք և կաթողիկոսք անգամ. այսքան զգալի և շօշափելի բնութեան և վայրաց գեղեցկութիւնն՝ գրեթէ հարկաւ երգիչ և բանաստեղծ ըրած է զանոնք, գոնէ գարուն գովելու համար. բայց Կոստանդին Երզնկացին, իսկաշնորհ, իսկատիպ գուսան ՆԵՕ տարուան, յանձն չառնուր ասանկ դրսէն գրգռալ քերդող ըլլալն, այլ տեսիլք տեսնելով, լոյս տեսնելով առեր է այդ շնորհքը.

« Այնպէս որ, կ'ըսէ, ես ի յիմ խօսից շարեալն զարմացայ »։

Եւ այսպէս կ'երգէ զգարուն.

Մեծ գոհութիւն, հարիւր հազար,
Մեզ աւետիք է նոր հասել.

ԿՌԻԻՆ

Եւ մեզ շնորհք յերկնաւորէն
Յերկնից յերկիրս ի մեզ հոսել։
Երկիր էր լի մուժն եւ մշուր,
Սառն էր կապել եւ պաղ ու քար.
Հանց որ չկար բոյս մի գալար.
Հիմի՝ ինք նոր է զարդարել։
Զամենն բանդ էր եւ խաւար.
Գարուն նշաս ու նոր բահար [1],
Ի հաւ ի մէնջ գիշերն աւար.
Զի արեգակն է մեզ ծագել։
Երկիրս է մայր աննըմանի,
Զինչ գեղեցիկ իւք՝ ծընանի,
Շատ բարութիւնք յինչ սընանի.
Հանց որ փոքին գեղեցկացել։
Երբոյր տնչեց հողմըն հարաւ՝
Զինչ արտասուքիւն՝ յերկրէ տարաւ.
Հանց որ չըկայ տեղ մի ծարաւ.
Ամենն են բարութեամբ լցել։
Հէջ որոտաց ամպ ցօղաբեր.
Կամար կապի յերկինս ի վեր.
Հոսէ յերկիր ահեղ գետեր.
Հաւասար զերկիր են արբուցել։
Ի հարատանիք սիրելեաց.
Ի ցընծութիւն պտղաբերաց.
Գոյնըզգոյնով ցեղք ի ցեղաց
Տակուանք զերկիր են զարդարել։
Ծովքն դըրուրդ առնու սիրով.
Խաղան վազուանք յերկիր ու ի ծով.
Ակուանքա յորդոր դան պաղ ու հով՝
Եւ ի քարէն յառաջ բղխել։
Ահեղ գոչեն գետերս յոլով
Ցոլդ ի լերուանքս ի վայր գալով.
Դան մեն ի մեն ծաւալելով.
Սիրով ի ծովն երես դըրել։

[1] Եղանակ տարւոյ։

Խաղան Լեղունք եւ այծեմունք,
Ինչուան ի դաշտ ույաղրիւրակունք.
Արեւվայրիք եւ անասունք
Ի կապանաց են արձակեալ։
Հաւերքն դան քաղցրը ձայնով
Միծեան ի հետ սաղմոսելով.
Գայ արտուտիկն կարդալով,
Զառաւօտուն է բարբառեալ։
Ամուսն առնուն եւ ծընանին
Հաւք ու գազանք ուերկվայրին։
Զագաք հաւերտ ելնեն պարին,
Ի են միարան երամ կապեալ։
Մաղկունքն գան եւ ժողովին
Ի բուրաստան ուի բաղչանին.
Մէկ մի մըտեալ ի մէջ ծովին[1],
Տեսն է դեղին ոյներեր կացեալ։
Բլբուլն ելհաս շոքաբերեան,
Ուեւտարեր մեծ յարութեան.
Վարդին ելհալ կոնանչ վերան
Որ գայ բազմի զերդ հուր վառեալ։....

Երբ բլբուլն և վարդի խօսք բացուի՝ երգն շատ կ'երկընայ. ապրիլ Կոստանդին՝ մեր երգիչն. բայց հիմա հանգչի քնարն, հանգչին ծաղկունքն այլ. վասն զի յանկարծահաս հովու մը պէս օրուանս յիշատակն կ'անցնի հովահաս, և կ'այլագունէ զգայլուն։ Դաշտիս երկու ծայրերին կուլսուի իւոր դղրդիւն մը, ոռնաձայն մը, աչեղ չընկոց մը. լիրանց գլուխն փոշիխառն ամպեր կ'ելնեն, ամոնց մէջէն ձերմակ փայլակներ. արեւմուտքին ելկածն դիմացի արեւուն ճառագայթներովը վառվռուած արծաթէ հեղեղ մը կունանի, որ Խարբ Հայոց գարնրէն փութափոյթ թնդալով.

1 Դեղին լուլան կամ նունուֆար ըսին։

կու թագի հոս. արևելեան կողմէն եկածն ազիւ-
սագործաց հնոցէն ելած սեւ ծուխներու պէս կու-
ծառանայ ու կուցածնայ... Ասոնք յիրար ջմ-
ռեցած՝ մնք մտեռնանք պատմութեան ճամբով-
անցնինք հազարով տարիներ, այսօրուան ամսա-
կէտին հետ զուգենք տարեկէտն այլ, Քրիստո-
սի 776 թուականն։

Այս նշանակեալ տարիս՝ վերջին տարի է կե-
նաց և իշխանութեան երկու մեծ ինքնակալաց,
որք մէջերնին բաժնած են արևելքի բաղդը կամ
գժբաղդութիւնը։ Մէկն է Կոստանդին կայսրն,
անուանի իր պատկերամարտութեամբ և մոլու-
թեամբ, որոց յարմար ստացած գարշելի անու-
նը՝ պահէ մինչև ցայսօր, Կ-ԷՐՆԻՄ. (.....)։
Գուլկարաց և պատկերաց հետ կռուելէն՝ առեն
չունէր արևելք հոգալու և պաշտպանելու հպա-
տակները, որոց մէջ սեպուհէին և մասն մի Հայոց։
Իսկ մեկայլն է Էպուռաճաֆար Ապա-Ալլահ Ի-
Մանսուր, զոր պատմիչք մեր Ջաֆր անուանեն,
խալիֆայ Արաբացւոց, որ ամիրապետութեան
հին աթոռը փոխադրեց 'ի Նորոգեաղն Բաղդատ
(763), և Կոբրոնիմոսի թուլութիւնը տեսնելով
իր բռնութիւնը տարածեց ինչուան 'ի Պիւզանկիա,
որով Մեծ և Փոքր-Հայք այլ ընկան իր ընչա-
քաղցութեան և անգթութեանց տակ. որոց հա-
մար շատ մեղադրուած է բնիկ և օտար պատմիչ-
ներէ. վասն զի համառօտ ըսելով, իր 21 տարուան
ու 4 ամսուան իշխանութեան առեն Վեց հարիւր
հազար մարդ ջարգեալ սպաննել տուաւ, կ'ըսեն.
որոց մէջ անշուշտ քանի մը բիւր այլ ազգակից
պէտք է ողբալ։ Այգպիսի ամիրապետ մը ունող
ամիրայք՝ անկէ գթասիրտ չէին կրնար ըլլալ։ Իր
իշխանութեան առեն Հայաստանի ոստիկանաց
մէջ (վասն զի այսպէս կ'անուանէին յԱրաբա-
ցւոց եկեալ կուսակալքն) ամենէն գլխաւորն է

Աբգլա. եգբայր համանուն նախորդ ամիրապետին, որ ընդհանուր Պարսից և Հայոց կողմանց մեծ կողմնակալ էր. և ուրիշ կամաւոր հրամաններին զատ՝ այս այլ գրաւ իր հպատակացը, որ մօրուքնին ածիլեն, և գլուխնին կանգուն ու ֆէս բարձր խոյր մը դնեն. այս և ասոր նման պատուէրքներով կու գային 'ի Հայս ոստիկանք և հարկահանք. (ինչպէս Սուլէման, Զալեհ, Լիուհ, Մուսէ, Մուհամմէտ, Նզիտ, Պէքիր՝ Ռաքար ըստ մերս պատմչաց)- որք այնչափ կեղեքեցին աշխարհնիս, մինչև շատերն փախչելով գետնի տակ և քարայրներու մէջ պահուըտէին։ Ժամանակին հոգեւոր տէրն՝ Տրդատ կաթողիկոս, և Հայոց ազգային հոգաբարձուն Սահակ բագրատունի՝ շատ անգամ բողոքեցին Աբգլայի- իսկ նա ոստիկանները կու փոխէր, բանուոր թիւնը կու թողուր։ Այսպէս յետ վերոյիշեալ Նզիտաց և Պէքիրաց՝ խաւրեց (770) զՀասան-Իպն-Փանդապա (որդի Կահադբայ՝ ըստ մերոցս), որ հնաը բերաւ խորասան-պարսիկ անկարգ գունդ մը, որոց ըրած չարութիւններէն քանի մը յիշելով ժամանակակից և ականատես պատմիչն (Ալեոնդ), զգուշալով կ'ըսէ. «պատմել ոչ կարեմք զպղէտիցն պատմութիւնս. մեք այլ այնպէս ընեմք, որ արցունքով չիթօշնին ապրիլի ծաղկներն։... Բայց ինչ ընէ խեղճ ժողովուրդն, որ ունեցածը բռնանան հարկահանաց տալէն ետև՝ չունեցածն այլ տալու համար կու ծեծուի, կու կախուի, սաստկալ ջրից մէջ կու ձգուի. ինչ ընէ հին հայութեան մնացած զինուորութիւնն, որ իր եղբարց գառն հեծութիւնը կու լսէ. ինչ ընեն Խրամի և Նախջուանի եկեղեցեաց մէջ այրած նախարարներէն մնացեալ ճիւռ իշխաններն՝ որ իրենց սեփական պայազատութիւնը այսպէս տակն ու վրայ կու տեսնեն. ինչ ընեն մանաւանդ մեծատիրտ Մա-

միկոնեանքն՝ Արտաւազդ և Մուշեղ, որդիք Հը-
մայեկայ և Հրահատայ. միթէ վիրաւորեալ ա-
ռիւծուց նման միայն մռնչէն իրենց աչաց առջև
անապատացեալ հայրենեաց վրայ։ — Չէ, այսպէս
չբրին. այլ յուսահատութեան մռունչ մը մռնչե-
լով զայրագին սրտիւ, իրենց սրտակցաց ու պա-
տուակցաց ձայն տուին. որք, ըստ ասելոյ պատ-
մչին, «եդին զոգի՛ի ձեռին իւրեանց, և ձեռնա-
» մուխ եղեն յիրս՝ զոր ոչ կարէին վճարել, վասն
» զի նուազունք էին. այլ սակայն լաւ համարեալ
» զմահ քաջութեամբ՝ քան զկեանս վատանգա-
» ւոր, ձեռնամուխ եղեն»։ Նախ եռանդունն Ար-
տաւազդ, անվախ, բայց և ոչ առանց խորամանկութեան իրեն հին նախնոյն՝ Գայլ-Վահանայ, յանգգնօրէն գնաց՝ ի մայրաքաղաքն Հայոց՝ ի Դուին, ուր արաբացի ոստիկանին փոխանորդ զօրավար մը նստէր, և գրեթէ անոր աչաց առջև իր սակաւաթիւ գունդը ժողովելով՝ սկսաւ զինքը զրահել պատերազմական պատրաստութեամբ, համբաւելով՝ թէ թշնամեաց դէմ պիտի երթայ։ Արաբացի զօրավարը՝ իրենցմէ հաւատարիմ կարծելով զնա, միանգամայն և շուշելով իրենք զիրենք վատանգել, թերևս օգնեցին այլ զինքը զինելու. և իբրև յառաջամարտիկ գունդ բանակի՝ թողուցին իրենցմէ զատուելու։ Արտաւազդ մեկ մ'որ խաբուած բանակին բազմութենէն դուրս ելաւ, մեկէն վազեց գէպ՝ ի հիւսիս՝ Շիրակ գաւառ, անկէ. Վրաց ամուր և ազատ կողմերը երթալու. այն առեն այս գաւառս դեռ իր Անի բերդը իշխանանիստ չէր ըրած, այլ կ'երևի թէ հիմակուան Ռուսաց իշխանանիստն և ամուր բերդաքաղաքն Կիւմրի՝ էր գլխաւոր աւան մը, ուր անիրաւ հարկահան մը նստէր։ Արտաւազդ անոր շատ անիրաւութենէն թերևս ոչ շատ պակաս անիրաւութեամբ մը վրէժ պանջնց. ըս-

պաննեց. և ժողովեալ սուակներրը յափշտակելով՝ գնաց Վրաց կողմը, միարանեալ իշխանազանց հետ մեկտեղ։ Արաբացւոց աչքերն բացուեցան. մեկէն նախնի ոստիկաններէն մեկը զօրապետ դնելով և իրենց ծառայութեան մէջ եղող Հայոց սպարապետ Սմբատն այլ մեկ տեղ առած՝ Արտաւազդայ եռեւէն ընկան, ինչուան Ախլցխայի կողմերը յարձակելով. բայց հազիւ քանի մը կատր բան կրցան աւարել, և յետ դարձան. վասն զի Արտաւազդեանք ինչուան Եգեբացւոց երկիրը (Ահարա) գացին, և այն տեղւոյն ու մօտի Վրաց գաւառաց տիրեցին։ Իսկ Իպն-Քահդապա ոստիկանն՝ ուրիշ բան չկրցաւ ընել, բայց եթէ առջի անգութ հնարքը բանեցընել. այսինքն՝ գարձեալ ամեն գի հարկահաններ ղրկել. որք պժգալի պիծակներու պէս ելան ժողովրդեան մեացեալ վաստակը ուղեծուծը քամելու. բայց այս անգամ շատ չյաջողեցան։ Վասն զի եթէ Արտաւազդ հեռու էր, մօտ էր Սուրեն. որ նախ իր երկիրներուն մէջ մտածները հալածեց, և բռնութիւն ընողներն այլ բռնաբար սրով գատեց. և պահ մը իր ընտանիքը Սրասխաձորոյ մօտ Արտագերից ամուր բերդը ապահովցընելով, ելաւ անկէ 60 կրոնի առած հեռը, մտաւ այս մեր եղած Բագրեւանդայ գաւառը, ուր Էպու-Մահուր՝ փոխանակ հեզարար ծաղիկ քաղելու՝ բռնաբար հարկ կուպահանջէր. զնա այլ անոր մարդիկներն այլ կողերելով՝ փոթորկի պէս յառաջ անցաւ. իսկ ծխահալած ալիծակներն՝ ահով դողով սկսան ծակերու մէջ քաշուիլ. որով համարձակութիւն առին ելնելու և ելնալ փախստականք Հայոց՝ գալու և Սուրենայ պզտիկ գնդին խառնուելու. որուն համբաւն և սարսափը չորս գի սարածեցաւ. բայց զօրայ փիշուորութիւնն այլ իմանալով՝ ոմանք ի թշնամեաց սիրտ ընին մեկէն վասն

հանելու և Թերևս մեկ հարուածով վերջնելու իրենց արդելք և սատակիչ հղո

։ Բայց այնպես գազանացեալ Մամիկոն մը բռնել՝ շատ դժար և վտանգաւոր փորձ էր։ Այսպէս փորձեցին նախ 200 արաբացի պատերազմողք, որք Կարնոյ քաղքէն (Էրզիրում՝) ելան, ալեկ զինուած և զրահուած, իջան 'ի Բասեն, գալու 'ի Բագրևանդ. գիշերը վրայ հասնելով՝ մեռան Թարս գիւղը, (Թերևս Մ՝ժնկերտոյ մտ), և անոր այգեստանեայց մէջ փռուեցան, այգեաց պատերը իրենց պատնէշ կարծելով։ Իմացաւ Մուշեղ, և հետը քանի մը կարիճ առած՝ դիշերանց հասաւ հոն. և որով հետև այդ պատերը հիւսած չէին՝ այլ միայն քար քարի վրայ դիզած՝ ցանկի մը պէս, անոնց տակ նստող և պառկողներուն վրայ փլուց. հոն կապուած ձիանն այլ իրաբելով՝ սկսան իրենց տէրերը կոխկռտել. գիշերուան, ձիերուն, պատին փլլելուն շփոթութեան հետ մեկտեղ՝ ներս թափեցան Մուշեղեանք։ Սղածն յայտնի է. Թերևս ոմանք յայլազգեաց կրցան՝ մերկ կողոպտուտ փախչիլ ազատիլ. բայց շատերն այն քարերուն տակ քնացան, մնացին։

Հապա քիչ մ՝ատեն կրցաւ Մուշեղ հանգիստառնուլ իր ամրոցը, վասն զի այլազգեաց աղաղտին կու գուռար. Դրունայ կողմնակալ զօրավարն իր պահապան զօրաց մէջէն չորս հազար կարիճ ձիաւոր ընտրեց և յանձնեց Էպու-Նէձիպ զօրապետին, որ երթայ ջարդէ ընչէ ապստամբները։ Նէձիպ իր գունդը անոնց երագընթաց տաձիկ ձիերուն պէս թռցընելով հասարակաց գուբան ճամբէն, յԱյրարատայ 'ի Կոդովիտ, անկէ 'ի Բագրևանդ հանեց, և եկաւ անոր գլխաւոր շինաւանին մտ, որ է Բագաւան (Ուչ-գիլիսէ)։ Այս տաւանին մտ, այս Արածանւոյ նախընծայ վտակաց եղելը, այս մտեկ Նպատ լերան շքին

տակ էր. որ անկէ 400 տարի առաջ ուրիշ Մուշեղ մը, Քաջաբուն Մուշեղ, Շապհոյ արքայից արքային ասնդ բանակը ցրուեց. բայց այն տեղն Հայ-Արշակունի թագաւորի մը ամբողջ զօրաց սպարապետ էր, և յունական գունդ մ՚այլ մարտակից ունէր, և Մեծ Ներսէս մը բազկատարած զօրավարաւ։ Անկէ 200 տարի վերջ՝ ուրիշ Մուշեղի մը վրայ գալով՝ անցաւ Թագրևանդէն Խոսրով Անուշրէւան, և կոտրեցաւ ՚ի Մուշեղայ Նփրատ գետոյն վրայ։ Իսկ այսօր տեսնց թոռանց թոռն հրաշատեսանն Մուշեղ՝ 4000 արաբացի տպառազէն ձիաւորաց դէմ ունէր 200 Հայ. քանի դէմ մէկ միայն. տակայն ունեցածն բաւական եղաւ իրեն։ Ասոնք յարձակեցան եկողներուն վրայ, շփոթեցին, ցրուեցին, շատերը գետին փռեցին, աւելի շատերը փախուցին. փախստականաց եռեւէն ընկան, օրով ճամբայ հալածեցին դէպ ՚ի հիւսիս, ինչուան Արագած լերան ոտքը. շատերն այլ ճամբուն վրայ փռելով, և անոնց հետ զօրավարնին ալ. և տարներով ու ձիոց երամակով յաղթական դարձան։ Այլազգեաց մնացորդքն հասան ՚ի Դուին. բոլոր քաղաքը ՚ի դոզ, ՚ի սուգ, անէծք և նզովք շարժեցին. և այնպէս ահ ընկաւ մեջերնին՝ որ կարծէին թէ ամեն դանէ Մուշեղը ներս կու մտնէ. և դրեթէ չվստահանալով քաղաքին ամրութեանը՝ ներքին ամրոցը քաշուած սքնցան։

Այս անակնկալ և գրեթէ անհաւատալի յաղթութիւնն և յաջողութիւնն, և այն ահարկու Արաբացւոց ահարեկ ըլլալն՝ կրնայ գուշակուիլ՝ թէ երկայն տարեներ ՚ի վեր ընկճած ժողովրդեան մը ինչ ազգեցին. ինչպէս համբաւն հոչակուեցաւ. ինչպէս գլուխներ տարքցան՝ խելապատակէն այլ ՚ի վեր, մինչև խոհեմութեան և նախահոգութեան ձայնները լսեցին. և զիրար գրգռելով պատ-

չանձն վեր բաներ մատնեցին. մանաւանդ չափազանց բորբոքեալ ձգնաւոր մը, աւելի սրտին հարցընելով քան Աստուծոյ, զամենքը կու յորդորէր և քաջալերէր, և իբրև տեսիլք տեսած հաւանեցընէր, թէ արդարև ազգին բաղդն հասած է. մի տարակուսիք կ'ըսէր, ձեր մէջէն մէկն բաւական է հազարի դէմ կենալու, երկուքն՝ բիւրուց դէմ։

Ցիրաւի շատ դժուար էր ռամկաց՝ (յեսուսանելու որ 200 կարիճ 4000 սպառազէն հնձեալները վանեց) այս դիպուածին մէջ՝ սրբութիւնը և ստութիւնը իրարմէ որոշել։ Բայց ոչ միայն ռամիկ մարդիկ և առանձին իշխանք միաբանեցան, այլ ինչուան Սմբատ բագրատունի սպարապետն այլ՝ հաւանեցաւ թողլու զԱբաքացիս և միաբանելու ընդ համազգեացն։ Այս բանս յաղթութեան մը չափ արժեց միաբանելոյ. բայց մեծագոյն յաղթութեան մ'այլ կու փափագէին. այսինքն հաւանեցընելու զԱշոտ, նախայիշեալ Սահակայ իշխանապետին որդին. որ չափաւոր տարեաց, և տարիքէն աւելի փորձ հռչակեալ խելացի մարդ էր. որչափ այլ հայրենեաց փառքը փափաքէր, այլ աւելի անոր ապահովութիւնը կու պահանջէր. կ'իմանար կ'իմացընէր այն ձգնաւորին չափազանց նախանձաւորութիւնը, և կ'ըսէր իրեն եկող իշխանաց և յորդորչաց. «Ո՛վ հայրենասէրք, զդոյշ կեցէք. քաջ էք և եռանդուն, բայց աւելի լաւ է իմաստութեամբ գործել և ձեզմէ առջիններուն փորձը քննել. կամք և կարողութիւն միշտ չեն կրնար իրարու հաւասարիլ. մէկն՝ ի ձեր ձեռքն է, մէկայլն ոչ. շուտ և անակնկալ յաջողութիւնք՝ երբեմն մեծագոյն անյաջողութեանց պատճառ կ'ըլլան։ Քանի մը հարկահան և զօրավար զարկիք, քիչով շատերու դէմ կեցաք, և երթալով կու յուսաք շատեալ. սակայն ինչուան որչափ կրնանք բաղմանալ, ինչուան երբ

միացունց մնալ։ Դեռ Արարատցւոց մեծ զօրավարն 'ի Դուին է. դեռ 'ի Կարին ուրիշ մեծ զօրավար մ'այլ կայ, դեռ շատ բերդեր անոնց ձեռքն են։ Եթէ բերդերն այլ առնուք, եթէ Հայաստանի մէջ եղած զօրքն այլ հալածէք, դեռ գժուարութիւնը քիչ մը կ'ուշացընէք, վտանգը կը մոռեցընէք։ Ի՞նչ պիտի ըլլայ ձեր բովանդակ գունդն Էմիր-էլ-Մումնեայ տէրութեան ծովածաւալ և ահաւոր զօրութեան դէմ։ Ո՞ր ազգ, որ տէրութիւն կրցաւ կամ կրնայ անոր դէմ կենալ. Յունաց տիեզերական ինքնակալութիւնն այսչափ անգամ կռուելով՝ չկրցաւ իր կորուսած երկիրներն 'ի ձեռք ձգել. ահա կայսրն Կոստանդին՝ որ միանակ առիւծներու դէմ ելլելով՝ սպաննեց, տեսէք ինչպէս սարսափած՝ թոզ կու տայ որ ամիրայութեան կոխէ իր սահմանները։ Ինքն ծոմն ու ցամաքը բաւական ամուր չիգաններ այնպիսի թշնամւոյ մը դէմ, դուք ինչ բանի վրայ գրած էք ձեր ապահովութիւնը։ Արդ եթէ կ'ուզէք ճշմարտապէս հայրենեաց օգուտը, ինչպէս և եւ ամենայն սրտիւ, հանդարտօրէն մոռնալով կեցէք տեղերնիդ. և ջանացէք իմաստութեամբ գարման տանիլ եղած և կրած չարեաց։ Ապա թէ ոչ, ինձի կ'երևի, թէ կամ յետ ինքասակար փորձոյ՝ պիտի յանձն առնուք կորակոր նուաճիլ մնալ տեղերնիդ. կամ յուսահատած՝ միայն զձեզ ապրեցընել ջանալով՝ ինքնակամ թողուլ հայրենիք, տուն տեղ և վաստակ. ձեր հարց քրտինքով ժառանգած բարիքը, ձեր նախնեաց հաւատքով կանգնած եկեղեցիները, և ձեր ծնողաց գերեզմանները այլ՝ ատելեաց ոտից կոխան, և երթալ 'ի ծառայութիւն կայսեր Յունաց, և պանդխտութեամբ կեանքերնիդ մաշեցընել։ Այ կամ, որ շատ վախնալի է, շուտ կամ ուշ՝ ձեր թշնամեաց ձեռքը ընկնալով՝ չարաչար մահուամբ պիտի

... իր ...

Ահա և այսպիսի քանք բաւական չեղան այն տաքցած գլուխները զովացընելու. Թողին զԱ-չոտ, և նկան իրարու հետ գաչինք գնել. խոր-հուրդ ընել, հնարք մտածել. այլ ինչպէս շատ անգամ պատահած է և կու պատահի այսպիսի գիպուածոց մէջ, չկրցան միաբանիլ մէկ գործոյ վրայ. ոմանք իրենց երկիրը քաշուեցան, ոմանք ամուր բերդերու ապաւինեցան։ Ամենէն տաք գլուխներն որ Մուշեղայ հետ միաբաներ էին՝ զի-նուոր և ռամիկ, 3000 հոգի գունդ մը եղան. Դուխները Թողուցին, գնացին Կարնոյ քաղաքին վրայ, զոր քանի մը տարի առաջ Նզիտ ոստի-կանն առեր էր 'ի Յունաց և լաւ ամրացուցեր. Թերևս հիմա մէջը բաւական զօրք չկար. չէ Հայոց Թուոյն՝ այլ ոգւոյն գէմ կենալու. բայց պարսիկներն բաւական զօրաւոր էին. բոլոր այն տարի (774) Ամեռուան սասանիկ սառամանիքնե-րէն այլ չանձրանալով՝ Հայք պաշարեցին կե-ցան քաղքին քով. և մեծամեծ մեքենաներ կանգ-նելով՝ կու ծեծէին պատերը. և քանի մը ծակ բանալով՝ կրցան քիչ մը քար Թափել 'ի ներս և քանի մը մարդ սպաննել. բայց աւելի սովով կու նեղէին քաղաքը, որ և անձնատուր ըլլալու վրայ էր, երբ յանկարծ մեծ մրրիկ և զօրաւոր հարկ մը հասաւ Հայոց վրայ։ Առնց հեռանալը յԱյ-րարատայ, և ոմանց այլ իրենց բերդերը քաշուիլ ուսանելով Դրուներցի արաքացիք, սիրտ առին, չորս կողմէն այլ ժողովեցան, և սկսան այրած սրտով ու ծարուած սրով մտատկոյ գաւառաց մէջ պատրիլ, և շատ սրիւնահեղութիւն ընել. բայց տպատամբները նուաճելու համար ստիպուն-ցան ամոթով՝ եղածը իմացընել ամիրապետին։ Ամ վրէժխնդրութեան յարմար առիթ գտնելով, ունիթիւ զօրաց միջէն ընտրեց Խոլատանիկ կարիճ-ները, 30,000 հոգի, ձիով և զրահով սղեկ մը

պատրաստած, և յանձնեաց Էմիր Իսկն-Իսմայիլ փորձ և հոչակաւոր զօրավարի մը ձեռք։ Որ և հարաւային հովերէն առաջ անցաւ Աստրեսան, և Աղձնեաց կողմերէն գալով մտաւ 'ի Խլաթ մեծ քաղաքն. ժողովելով հաւատարիմ մարդիկ՝ ազգ մը քանեց տեղեկացաւ Հայոց պատրաստութիւնը, որչափ հոգի միաբան և ուր ըլլալին, և ինչ ոյժ ունենալին. զոր 'ի հարկէ շատ քիչ և իբրև ոչինչ գտաւ իր բանակին բազմութեան և կազմութեան համեմատելով։ Հոն 'ի Խլաթ էր այն առեն խոհական իշխանն Աշոտ. և տեսնելով իր հայրենեաց վրայ եկած չարիքն, և իր իրատած իշխանաց անհաւանութիւնը, սիրան կ'ոյրեր կու հալէր, առանց կրակը գուրս տալու. մանաւանդ որ պիտի ստիպուէր Արտաւազդ գործակից ըլլալու իրեն ազգայիններուն դէմ։ Անհարին տագնապին մէջ առանց տուն կորսընցընելու ամենայն ծածկութեամբ իմացուց իշխանակցացը՝ Էմրի պատրաստութիւնը. և ահա ժամանակն է, կ'ըսէր, ցուցընելու ձեր խոստացած հաստատութիւնը, կամ իրարու պաշտպանութեամբ մեռնելու։ Աջի խրատուն մտիկ չբրին գաշնակիցք, եռքինէս կասկածեցան. կարծեցին որ Աշոտ Արտաւազդ հաւատարիմ մնալովը՝ զիրենք խարել կ'ուզէ և հեռացընել 'ի Խլաթայ. և մտքերնին դրին Կարնոյ պաշարողաց նման՝ այս մեծ քաղաքս այլ առնուլ յոյլազգեաց։ Համազասպ Արծրունեաց իշխանն գլուխ կեցաւ, հեռանառաւ Վասպուրականի զօրքերէն զատ՝ Ամատունեաց դունդն այլ, Սմբատ սպարապետին Աշոտ եղբօր դունդն այլ, և ելաւ երթալ Վանայ ծովուն հիւսիսային արևելեան կողմը՝ Արճեշ բերդաւանին վրայ, ուզելով հիմնայատակ ընել. անցած տեղերէն ռամիկ հեռեակ մարդիկ այլ կու ժողովէր կու խառնէր զօրքերուն։ Որոր հասան 'ի

Բերկրի, Խլաթէն Հայ մը նկաւ նորէն իմացընելու թէ էմիր զօրավարն մեռաւ է երեք բիւր և աւելի զօրքով։ Համազասպ հպարտացեալ՝ զայս այլ նենգութիւն կարծեց, և փոխանակ պարգևելու՝ պատժեց լրաբերը, և առանց անցաւ հասնելու յԱրձէշ։ Ասոր բնակիչքն այլ իմաց տուեր էին էմրայ, որ բազմութեամբ զօրաց ծածուկ ճամբաներով եկեր ապահով տեղ մը դարձեր էր. և հազիւ թէ Հայք սկսան Արձէշի բերդը ծեծել, Արաբացիք դարանէն ելլելով վրանին ընկան, և անզէն անխնայ հետևակ գնդին մեծ մասը ջարդեցին, որոց ոմանք այլ փախչելու առեն ծովը թափեցան. և այսպէս անիրաւութեան զոհ եղան 1500 անպարտ մարդիկ. անոնց հետ իրենց առաջնորդ ջրոս տղնուտկան իշխանք այլ մեծ ցեալքն փախստականաց ցրուեցան։ Այս պատահարս եղաւ ապրիլի 16ին (775)։ Արաբացիք զանոնք երկար միջոց հալածելէն ետև՝ դարձան սանկէ մեկայլ ապատամբները փնտռելու. և Խլաթու և Մանազկերտի դուռաներէն վեր փուլթալով թափեցան հոս, 'ի Բագրևանդ։

Ահա այս էր այն հնոցանման սև ծուխն զոր տեսանք յարևելից. որ և կոխելով այս ծաղկազարդ վայելչութիւնները, գետոյս ողբերականց քով՝ Արծնի ըսուած գիւղը ինչան. և դադրեցան զէնքերնին սրելու և մանու գործիքները պատրաստելու։ Իսկ արևմուտքէն փրթած փոքր արծաթափայլ հեղեղն՝ էր Մուշեղեան գունդն Հայոց, որ պաշարէր զքաղաքն Կարնոյ. և յանկարծ լսեց Արձիլու կոտորածը։ Եթե այնչափ երկայն համբերութեան, պզտի գնգով մը այնպիսի մեծ քաղաք մը պաշարելու և վառանգելու, որսը բրուելու առեն՝ ստիպուիլ թողուլ, ուրքան ծանր, ուրքան սրտակոտուր էր։ Այլ ուրիշ հնար չկարակռանին կրճռելով դարձուցին երեսնին 'ի Կար-

նոյ. բայց ուր երթան, -- Երկու Համբայ կար դիմացնին. մէկն և ապահովագոյնն էր՝ Արտաւաղդայ բռնածն, անցնիլ երթալ յարևմուտք և 'ի հիւսիս, Ցունաց կողմը մտնել, և յետ այնքան նեղութեանց՝ գոնէ ապրիլ և հանգչիլ։ Իսկ մէկայլն՝ կորիւնը կորուսած առիւծուն Համբան էր. զօրաւոր թշնամեացը վրայ գառնալ և յաւատհաս կատաղութեամբ զարնուիլ, ըլլայ ինչ որ ըլլայ։ Եւ այս եռքինը ընտրեցին այն զայրասիրտ ընկերակորոյս առիւծքն։ Կարնոյ լերանց գարերէն թափուիլ 'ի Բասէն, և անկէ այլ Սուկաւ լերանց (Փէօսէ տաղ) կռնակէն ընկնիլ 'ի Բագրևանդ. քիչ օրուան քիչ ժամուան գործ մը եղաւ իրենց. հոն այլ չգագրելով, ոչ թշնամւոյն բազմութիւնը ուզեցին քննել, ոչ անոր շարժելուն սպասել, այլ գարուդուր գեանի մը վրայ արձակած հրագունտի պէս ցատքըտելով առաջ եկան, և փոխանակ թշնամեաց սպասելու՝ իրենք անցան գնոր։ Թշնամեաց ահեղ բազմութիւնն և աւելի ահարկու պատրաստութիւնն, արաբիկ երիվարաց վազն ու փռինչն, լուսանիկ վրանաց և դրօշուց շարժիւնն, խառնալուր աղաղակն գոչումն, և պատերազմական գործեաց և թմբկաց որոտումն, փոխանակ զիրենք վախցընելու, այնքան աւելի կատղեցուցին բորբոքեցին, որ Արաբացւոց բանակէն քանի մը հարիւր քայլ հեռի՝ թողուցին ոչ միայն իրենց բեռները, այլ և ձիանքը. հեռաւակուց աւելի ազատ և համարձակ կրնային հայկական սղնեղնելը քարշել հեռուէն, ու մատանց թուր ու նիզակ շարժել։ Երկոյն Համբուն յօգնութիւնն այլ չէին ուզեր մտիկ ընել. եթէ գիշերուան ուսաւ վարագոյրն երկու բանակաց մէջ չկախուէր։ Անոր մէկ կողմը 30,000 ապառաջէն Արարացիք. մէկայլ կողմն 5000 հեռաւակ թնթաւաղէն Հայք անցուցին. ինչ հոգւով. ինչ մը-

ածութեամբ՝ ապրիլի 24էն 26 մանող միջոցը. կրնայ գուշակուիլ քան թէ գրուիլ։ Առաւօտն հաղիւ թէ ծագեց՝ Հայք անհամբերութեամբ նեռուեցան բազմութեան մէջ, սաստիկ կոտորած մը ըրին, սրընթաց հեծեալներուն մէկ մասը հալածեցին հեռացուցին. բայց վերջապէս իրենք այլ յօգնեցան։ Արաբացիք սրամտեալ և զգնահար յետ դարձան, Հայոց նախարարներէն մէկ քանին՝ (որ ռամիկին պէս հեռեակ չէին) քշեցին իրենց ճորտերովը. Հայոց ռամիկն այլ, յետ քաշուեցաւ. այն առեն Արաբացի հեծելոց եկաւ վրէժխնդրութեան կարգն..սկսան կոխկրտուիլ դէմ դնող հեռեակ Հայերը։ Առնք իրրև երկայնաշար ալիք՝ աւելի մեծ և երկայն ալիքէ մը ծածկուելու թաղուելու առեն, վերջին անհնարին ճիգ մ՝այլ ըրին. յետին յուսահատութեան կամ յուսոյ ձայն մը վերուցին. իրար զիրար կանչելով և սիրտ տալով. « քանի որ թեւերնուս վրայ » դեռ քիչ մը ուժ կայ, կ՝ըսէին, պէտք է թա» փենք մեր հայրենեաց և եկեղեցեաց վրայ. ողջ » ողջ երես դարձընել և յետ դառնալ՝ անկարելի » ըլլայ մեզի. մեռնինք ղէնք ի ձեռին, քան փոխ» ուսամբ ապրինք »։ Եւ արիւնոտ աչուընին մէկ մը երկինք տանելով, մէկ մը Բագրեւանդայ պաշտպան Ս. Յովհաննէսի, կանչելով ու գոռալով՝ նորէն յարձակեցան, և անգամ մ՝այլ իրենց մեծ և ուժով ալեաց վրայ ելան. միայն հազար հոգի մնացեր էին միագուռնգ՝ երկու երիք ըիւրուց դէմ. զոր վերջին անգամ մ՝այլ քշեցին։ Իսկ ասոնք այնպէս զարհուրեալ շփոթեալ էին, որ չէին գիտեր թէ մարդու հետ, հրեշոյ հետ, թէ հրեշտակաց հետ կու պատերազմին. և իրաւ թէ սուտ՝ իրենց շփոթութիւնը ծածկելու համար, յետոյ կու պատմէին, թէ մենք Հայոց գրոգին հետ կու տեսնէինք երկնաւոր զօրքեր, պա-

պաներ և երէցներ, որք աւետարանաց և բուրվառաց կ'առաջնորդէին անոնց։ Անշուշտ այսպէս տեսան ինչուան որ Հայոց վրայ զէնք չարժելու ոյժ չմնաց։ Այն առեն Թիւն յաղթեց. և երբոր դիմակաց չգտաւ՝ արաբացի գունդն յաղթական եղաւ։ Տարիէ 'ի վեր անդադար կռուող և վաղով՝ 3000 Հայք իրենց նիզակաց վրայ երես 'ի գետին Արածանւոյ ծաղկանց մէջ փռուելով՝ արիւնով ներկեցին ապրիլի երանգ երանգ փռոցը։ Հոն երկու բարձր ծառոց պէս ընկան պարագլուխք նահատակաց՝ ինչուան եռաքը իրենց խոստմանն և քաջութեան հաւատարիմ մնալով. Մուշեղն մամիկոնեան և սպարապետն Սմբատ. անոնց հետ նաև շատ մեծատոհմիկ նախարարներ, ինչպէս բագրատունին Սահակ, գնունին Վահան-Թաշնակ, և Սամուէլ մեծ նախարարն Մամիկոնէից, որ ասուրք դեռ երիտասարդ և գեղեցկութեամբ անուանի, ծաղկանց մէջ ծաղիկ, և իր ընկերակրցացն հետ յիւրաքի գարնան ամեն զարդերն աւելի սրատաուշ կու փայլէր՝ իր վերքերէն բղխած վարդերուն մէջ։

Յետէ այն Ղենաւորին քիչ մը արտորնաք տեսած և չգիտցած տեսլեանն համեմատ՝ փառաւոր վախճան մը չունեցաւ պատերազմն, սակայն և ոչ բոլորովին անօգուտ մնաց։ Թէ և գործն քիչ շատ սպառոնելի ըլլայ անաչառ գատաստանի առջև, չիկրնար անտես ըլլալիլ այնքան քաջութիւն, հայրենասիրութիւն, կրօնասիրութիւն այլ։ Հայց ազգանախանձ միաբանութիւնին աւելի գովելի կ'ըլլար՝ եթէ ըստ խրատուն Աչոռոյ չորժէին պատերազմն առաջ, կամ պատերազմի առեն. և կամ եթէ յետ պատերազմին՝ Արծրունին Մեհրուժան չսպաններ քաջին Մուշեղայ երկու որդիքը (որք իրեն ապաւիներ էին), իբր եթէ հայրենիին եղաւ պատճառ այնքան մարդկան

և իր հարազատաց կոտորածին։ Իսկ Արաբացիք որ այն գունդը կոտրեցին, և Բագրևանդայ դաշատց վրայ անթաղ թողուցին, ու սկսան չորս գիւաւրել և աւարել, իրենց կորուստներն այլ էին կրնար ծածկել, և ոչ իշխել շատ հեղ այնպիսի փորձեր փորձելու։ Իսմ՝ իբրև յաղթական՝ ամիրապետին երթալու ատեն՝ չորաչար ցաւերով բռնուած մեռաւ ի Պարսկաստան. քանի մը ամսէն ինքն ամիրապետն այլ նոյնպէս վերցուեցաւ. յաջորդ տարին՝ պատերազմին մէջ ընկնող Սըմբատ սպարապետին որդին Աշոտ, սկսաւ նորէն Արաբացւոց եւեւէն ընկնիլ, և երկիրները ապաւելով՝ Անի բերդը ամրցուց, որ յետոյ իր ցեղին թագաւորութեան աթոռ եղաւ. և օր մը աղօթք ընելու ատեն՝ թշնամիներէն պաշարուած, աղօթքը չմոռնալ, այլ լմանցընելէն ետև՝ եկաւ զարկաւ զանոնք, և դլխաւորին՝ Լիպառոն Աբդլլայն՝ երկու կտոր ըրաւ։ Ասկէ ետև նկող ոստիկանք սկսան զգուշութեամբ վարուիլ Հայոց հետ, մանաւանդ Հարուն Էլ-Ռէշիտ, որ ամիրապետ ըլլալէն վեց տարի առաջ (780) Հայոց և Պարսից մեծ ոստիկան դրուած էր։

Այս է Բագրևանդայ ըսուած կռիւն. զոր կարմիր արձանագրութեամբ Նշանոկէ Հայադիրն յ՚18 ահեկանի (25 ապրիլի) 775 թուին Փրկաւոսի։

Թ

Ս. ԹԷՈԴՈՐՈՍ ՍԱՀՄՈՒՆԻ

11 Մայիս 296.

Ահաւասիկ հասաւ մեղրակաթն Մայիս, գեղեցկագոյնն յերկոտասան հարազատս տարւոյ, զոնէ մեր հայրենեաց և անոր նման աշխարհի մէջ. ուր այս ամիսս՝ հայադիր հայկագիր՝ Մարերի անուամբ հեզիկ նազիկ կու պարէ 'ի բլուրս և 'ի բարձունս, բոլորովին կանաչ ու գալարազգեստ. ձեռքն ու ծոցն, գլուխն ու գօտին՝ փունջ փունջ գոյն գոյն ծաղկներով լցուած, որք իւր թեւթեւ գարշապարաց կոխած տեղէն կարծես գուրս բղխեն. արծաթաձալիք աղբերակունք կանչեն կըրկըջան. ծաղկափնտուր թռչնիկք երգեն պարեն. թեւթեւաթիկ ուրբ և այծեմունք սահին սուրան. հոտաւոր հովիկք և զով զեփիւռիկք ծոպ ծոպ ծամերնին ծածանեն, երբ հովէ հովիւ ցածնալով բլրէ բլուր ցատքելով՝ անցնի վազէ բամբիշն բարձանց Հայոց՝ մրազարդն մարերի։ Անոր շողակոթ շրջոլի շնչեն՝ ծաղիրներն վառ վառ շողշողան, պաղուներք խայծ խայծ խանձին կարմրին. և եթէ ձայնն անուշիկ հանէր ակընկիդ... Ա՛հ, երբն հայկածնին մարերուսայ՝ Հայոց հովասուն բարձանց վրայ, հազար տարիներ առաջ, երբ իր աղջն տէր ու ժառանգ էր բոլոր իր աստուածա-

պարգև երկրին, այն առենուան մրաշարդ մարդ-
ունայ երգն այլ՝ իրեն նման անանման էր. մեր նոր
լսած երգերն՝ ինչպէս չոր տերև մը վարդի գի-
մաց՝ չէին կրնար կենալ. ոչ մեր գուսանք և ոչ
օտար երգիչք կրնան անոր արձագանգներն ար-
թընցընել բարձր Հայոց պաղանձաւաց մեջ. և
թէ ճաշակիկ մը, ձայնիկ մ'ուզեմք երաշել, թեր-
ևս միայն Բեթելայ բլուրներէն լսուածն վայելէ
մեղրաբերանն մարերնայ. որ թուի՝ թէ գեռ Ե-
փրատայ երիտասարդ վանականերով ծաղկած ծա-
ծուկ ծմակէ մը կ'երգէ. « Ահա ձմեռն անց. ան-
» ձրևք անցին և գնացեալ մեկնեցան. ծաղիկք
» երևեցան յերկրի մերում. ժամանակ եհաս հա-
» սանելոյ. ձայն տատրակի լսելի եղև յերկրի մե-
» րում. թզենի արձակեաց զբողբոջ իւր. որթք
» մեր ծաղկեալք եառուն զհոտս իւրեանց »։...
Անշուշտ եռանդուն սիրտ մը հոս չդադրելով՝ ըզ-
մայլած, հոգեշունչ երգչին հետ ուզէ հրաւիրել
անծանօթ մերձաւոր մը, արքայական գեղեցիկ մը,
աղաւնակերպ հեզագէմ մը... « Ընդ հովանեաւ
» վիմին »։ — Այո, Հայագիրն այսօր կու տեսնէ,
կու յայտնէ այդպիսի մը, անծանոթացեալ ա-
նուամբ և տեղեաւ, որ ահա հանդչի ընդ հովա-
նեաւ ծառոյն և 'ի վերայ վիմին. յետին և քաղ-
ցրագոյն հանգիստ, նախ զհանգիստն յաւիտե-
նից։...

Ահաւասիկ նա. նման արքայական պքանչելի եղ-
բօրորդւոյն, արդարև սպիտակ ու կարմիր է. և-
րիտասարդ մը կուռ և կատարեալ հասակաւ.
բնութիւնն տաքնուծու և կերպարանքն ազատնոյ.
գիտէ մռնչել, բայց ընարէ մնչել. իբրև մեծ աշ-
խատանքէ և յերկար վազքէ եկած՝ անմարդա-
ձայն ձորակի մը մեջ՝ փռուած է մենաւոր ծառի մը
տակ, որ կարծես իր գեղանամած ճիւղերովն իբրև
մայրենի թևօք կ'ուզէ պաշտպանել զանիկայ, որ

աչ թեւը ձորեզերէն ցցուած քարի մը վրայ դրած է ծառին ներքեւ, և յոգնած գլուխն այլ թեւին վրայ. ձախը՝ կուրծքին վրայ պարկեշտ պատմուճանին խորշերուն մէջ. Կարծես ծաղկապատմոյն մարիրի ի հովիտ և ի բլուր թափառելով՝ կուփնուէր այս երիտասարդը, որ ըստ երախտապարտ պատմչի մը թողած յիշատակին, «Էր ա-» չքն թուխ, և գանգրահեր, և երեսքն խար-» տեսչ, և անձամբն երկայն». (աչքերն սև, մազերն գանգուզ ու գալար, երեսն գեղին ու կարմիր, հասակն ու կազմուածքն երկայնաձև). զգեստն պարզ մանրուր երկայն պատմուճան մը, վզէն ինչուան ծնկուընները և այլ վար. մէջքը գօտուով զսպած. սրունքն պարթևական սանապաններով ծածկած. դեղին գասատակներն կիսաբաց. ուսին քով մէկգի ձգած հայկական եղջերաձև խոյրն։ Երսուանց ամենեին անհոգութեան կերպ, ներսուանց անհնարին հոգ մը, որ երբեմն երբեմն բացխրփիկ ըրած երկու սև ագամանգ պատուհաններէն կու յայտնուի. պահ պահ յանկարծ սև ամպի շուքի պէս բան մը բոլոր երեսէն սահելով անանկ խեղճ ու ցաւագին երևոյթ մը կու տայ, որ կարծես թէ քովի ձորակին վազած վտակին պէս՝ իրեն համար բոլոր աշխարհ կ'անցնի, և կրնայ ըսել ինքն այլ իբրև զԱյրն ցաւոց, թէ «Տրտում է» անձն իմ մինչև ցմահ». այլ շուտով ամպի տակէ ելած բարկ արևու ճառագայթի պէս լոյս մը կու ծագէ գէմքին վրայ, աքանչելի հանգարտութիւն մը բոլոր անձը կու պատէ. կու խփէ երկայնաշարտ թարթափքը, և այնպէս անուշակ ու թնթռեալ քունի մէջ կ'երևայ, որ դարձեալ կարծես լսել իր մեղմիկ շընչէն, թէ «Ես ննջեմ և» սիրտ իմ արթուն կայ»։ Ո՛վ քուն ցանկալի քան զարթնութիւն. ո՛վ հրաշալի հանգարտութիւն. ո՛վ հանգիստ անբծութեան, ո՛վ տխրու-

թիւն անարատում. զեփիւռ, ծործոր, բոլոր գարնան գեղեցկութիւնն կու թուի իրեն հետ լռել ու մլատիլ։ — Ո՛հ, Հայկակ, թէ գիտէիր այս միայնութեան պատճառը, այս քնոյն պէտքը, թէ գիտէիր անոր յաջորդելու յետին արթնութիւնն, անշուշտ փափագէիր որ գունէ Սփեսաեան մանկանց չափ երկրնոտոր այդոր քունն, կամ թէ նոյն իսկ կենաց յետին քունն այլ հասնէր շուտով խառնուէր անոր. անզգալի կերպով շունչը առնուր վեր քաշէր, և դիմացնիս թողուր անարիւն նահատակի շուշանագոյն մարմին մը, թաւալած 'ի մէջ մանուշակաց և աղբրանց-արեանց։...

Բ

Բայց ո՞ւր եմք մեք. ո՞ւր է այս անծանօթ ձորակն, անծանօթ երկիրն, և ո՞վ այս աննման երիտասարդս։ — Մի թէ կամա՞ մոռցան պատմիչք և գլացան աշխարհագիրք. (և մանաւանդ մեր բազմերախտ պատմահայրն և աշխարհագիրն Մովսէս Խորենացի, որ բոլոր Մեծ Հայոց 200ի չափ գաւառները մէկիկ մէկիկ համրեց) նշանակել մեզի Կոգէրոյ երկիրը. Սալահոնէոյ գաւառը, Սարէնաշէն աւանը, Պորենէից դղեակը, և այն սրբատաւուշ Սէղէ՛հոգ ձորակը՝ ուր այսօր կու հրաւիրէ զմեզ Հայադիրն, Նփրատայ քարտէր հոսանաց եզերքը, որ Կարինէն իջնելով 'ի Դերջան գաւառ, անտի կ'երթայ յԵկեղեաց (Երզընկա). և այս երկու յետին գաւառաց միջոց դար-վար երկիրն է մեր փնտռածն, որ կերպով մը որչափ անծանօթ է՝ այնչափ այլ ծանօթանալու անուններ ունի. կ'ըսուի նաև Կորդուոյ երկիր, Հայոց ուրիշ հնագոյն աշխարհի և գաւառներու անուանակից. թերևս անոնց նման կորդ, խորտուրորտ երկիր

մ՝ ըլլալուն համար. կամ բնակիչքն նոյն տեղէն եկած ըլլալուն համար. կ՝ըսուի և Կոտէրոյ էրիր՝ յանուն Կոթեր աւանի. կ՝ըսուի յատկապէս և առաւել հայապէս Սաչանէց (կամ Սալահունեաց, Սահլունեաց) գաւառ, որոյ մէջ էին վերոյիշեալ շէնք և տեղիք. և քանի մ՝ուրիշ այլ, զոր յիշէ հայագիրն և լռէ հիմիոյ աշխարհագրութիւնն։ Այս տեղերուս հնագոյն և մեկ հատիկ և մեզի հարկաւոր յիշատակն՝ ասկէ 1500 և աւելի տարի առաջ կ՝ելլէ. այն տարիները՝ որ քաղաքական մթութիւն մ՝այլ կու պատէր բոլոր մեր աշխարհը, երբ սասանեանն Արտաշիր պարսիկ՝ Արշակունեաց թագաւորները հալածեց՝ ի Պարթևաց և՝ ի Հայոց և բռնաբար տիրեց մեր երկրին. ուստի հեռացեալ պատանին Տրդատ՝ Հռոմայեցւոց քով կու մնար, և կու պատրաստուէր քաջութեամբ տիրելու հայրենեացը. իսկ նախարարք Հայոց՝ ոմանք հնազանդէին բռնաւորին, ոմանք այլ իրենց երկիրներուն ամրութեանց վրայ հացեալ՝ կու սպասէին իրենց օրինաւոր տիրոջ։ Առնցմէ մէկն էր Սալահունեաց գաւառին տէրն այլ՝ Սուրէն, որոյ ցեղաբանութիւնն մեզ ցած չէ, այլ այսչափ յիշուած՝ որ թագաւորական ցեղէ էր կամ խնամի, ինչպէս անունէն ալ կրնայ գուշակուիլ. իր անուամբ աւան մը շիներ էր, Սուրենաշէն, յետոյ Զուրէն կոչուած, մօտ՝ ի հին բերդաշէնն կամ դղեակն Պարենի, որ յետոյ Բերդաձոր ըսուեցաւ, և անունէն կ՝երևի որ շինած էր լերան մը կող, որոյ վրայ կայր բերդն, և շինողքն էին Պարթևանք կամ Թերևս Պարթևք։ Այս երկիրս գրեթէ Մեծ Հայոց արևմտեան սահմանածայրն է և. մօտ Փոքրուն Հայոց ու Ցունաց բամբին. ըսել է՝ Հռոմայեցւոց իշխանութեան, որք այն ատեն ինչուան այս կողմերը նուաճած էին։ Ցունաց սահմանակցութեամբ կ՝երևի թէ

Սուրբն յունական սխորժակներ այլ ունէր, իր անուան համեմատ սուր բարքը կակղցընելու համար. և կ'երևի թէ սիկին այլ յունազգի էր, Աղուիա[1] անուամբ որ է Սիրելի. (Աղաւիթի ըստ յունաց), եթէ հայկական ալա կամ ալանի անունէն առած չէ, կամ Ջալմանի անուան թարգմանութիւն մը ըլլայ (իբր յունարէն ալոի, զարմանալի). և այս թերևս իր բնաշնորհ գեղեցկութեանն համար կամ անոյշ բարուքը, որովք անուանի էր. իրենց սիրոյն պատուէն այլ վկայէ որ 'ի շնորհս մորն և յունական մերձաւորութեանն՝ կոչուեցաւ Աթենոդորա, որ նշանակէ Տուրք Աթենասայ, իմաստութեան դիցուհւոյն. գեղեցիկ անուն, որ ոչ այնքան ծնողաց ընտիր ճաշակը կուցուցընէ, որչափ ծածուկ շնորհաց ընտրութիւն մը. որ 'ի հեթանոսութենէ կանչելով զնա 'ի լոյս Քրիստոսի՝ ապա Աստուածատուր անուամբ կընքեց։

Գ

Պատոց առաստութեան ամսոց մէջ ընծայեցաւ Աթենոդոր յամին Քրիստոսի 269, կարիճ հոր տրիասիրտ որդի, և գեղեցիկ ու գարշալի մոր՝ գեղեցիկ և գողտրիկ զաւակ. աչելով առաւ այն հասակը և կերպարանքը՝ զոր տեսանք Սեղեմնուսի ձորակին մէջ քարին վրայ հանգչած երիտասարդին վրայ։ Բայց տղայութեան հասակէն վեր անցնելու առեն, երբ գալար մրտենոյ մը պէս շիտակ կու բարձրանար կարմրուկ ու գանգրուկ, և ոպնիազեայ սև աչքերն անմարդմանելի փայլունութեամբ մը կու վառէին, այն վառանգաւոր հասակին շատ հեղ նախանձոտ հիւանդութիւն-

1 Յոր. Աղուիթոս կամ Տղուիթոս։

ներէն մէկն եկաւ վրան. սասանուհինգ տարեկան էր, երբ սատեղանման գեղեցկութեանց մէջ՝ ցաւոց և վիրաց ամպեր ցրուեցան, և վէրք անբժշկելիք, որք որդւոյն մարմնէն աւելի ծնողաց սիրտը կեղեքէին. թէպէտև, երբ ցաւերուն ազդած հեզութիւնը բնատուր շնորհացը հետ խառնելով, Աթենոդոր՝ իր խարտեաշ գլուխը մորը ծնկաց վրայ դրած, և ձեռուընեն հորը ձեռաց մէջ՝ հանգչէր. կիսաբացիկ կիսամաղձիկ շողակաթ աչքերովն, տարտկոյս կու բերէր՝ թէ այդ ցաւագին մրուրքն՝ իրենն աւելի շնորհք բերած են թէ տարած. այնքան լուսաւոր կերպարանքն չէր խաւարած, այլ բարակ շուքերով խառնուած։ Թէ և նոյն իսկ ցաւերն զինքն աւելի սիրելի ըրին ծնողացն և ծնողքը իրեն, սակայն կրնար հայր մը՝ իր պայծառաբար, իր ծերութեան յոյսն և յաղորդը, և մայր մը՝ իր սիրելագոյն ծնունդը՝ այդ տարտկուսի մէջ տեսնել, և սիրոյն սաստկութեանը կսկիծն այլ աւելի սաստիկ չըզգալ։

Սուրենի զբօսանաց և Աղուիթայ զարդարանաց ծախքն՝ մեծաւ մասամբ բժշկաց և բժշկական գարմանաց տրուեցան. ինչ որ հարուստ նախարար մը և որդեգորով ծնողք կրնային ընել՝ եղան. բայց զաւակնին չիրժշկեցաւ. չմնաց աստուած՝ որոյ ուխտ և նուէրք և զոհ չմատուցին, բայց Աթենոդոր չբռընացաւ։ Եօթն տարի, կենաց առուգագոյն տարիներն, հասակին աճման և ձևացման տարիներն, հիւանդութեամբ և ցաւերով անցան, և ցաւերուն անցնելու յոյսն ալ գրեթէ մեկեզ անցաւ։ Եւ երբ առողջութենէ յուսահատած՝ երկար ողջութեան մտածմունքն առաջ կու գար, երբ կենաց փափուկ թելն՝ ոլորուած մոլորուած երևար ծնողաց աչքին, և անգութ կարողին մերատն կու մատենար մոր մը դիմաց, և երբ գալարագեղ հասակն միջակոտոր

ծառի մը պէս՝ գետին տարածուած տեսնուէր կասկածոտ մտաց. — ո՜հ, այս՝ ամեն ցաւէ ցաւալի էր։... Բայց լռենք, գուցէ զուր տեղ հին և նոր սրտեր ճմլին։... Այսպիսի ցաւոց միայն մէկ զօրաւոր բժիշկ և դեղ մը կայ. — կ'ուզէս, ո՞վ կարօտեալ. — չորս մտա աչուքներդ վեր վերցու, կ'իմանաս, կու տեսնես։... Բայց ի՞նչ ընեն ա-նոնք՝ որ զուրկ են մեր սուրբ կրօնէն շնորհքէն։ — Դեռ կէս երանի անոնց այլ՝ որ գոնէ բնական լուսով կրօնասէր են և բարեսէր. և ազնիւ սրտի և մաքուր գլխի տէր ըլլալով՝ իրենց կեանքը մարդկօրէն կ'անցընեն, և բարերարութեամբ կու ստանան կամ կու վայելեն այն բարիքը՝ զոր բնութիւնն իրենց չէ տուած կամ յետ է առեր։

Այսպիսի մէկ մ'էր և Ալուիլիա, թէ և դեռ քրիստոնէութեան շնորհքէն զուրկ, այլ ոչ հեռի։ Իր երկիրներուն մէջ լեռ մը կար Սիլիբոն ըսուած (որ յունարէն լսուելով՝ գուցէ Թզենուտ կամ Թզապուտակ նշանակէր հայերէն). զոր հիմա չենք տեսներ աշխարհացուցի վրայ, բայց պէտք էր բաւական ընդարձակ ըլլալ՝ որ Ալուիլիա առոր եզերքը աւան մը կամ գեղ մը չունենար. իրեն զբօսանաց տուն և ագարակներ ու պարտէզներ. և շատ հեղ հոն քաշուելով իր գառնուկ պատանեկին հետ, բնութեան գեղեցիկ տեսարաններով՝ իր և անոր ցաւերը մեղմէր. և ո՞ գիտէ քանի՜ երկայն ժամեր՝ վայրկեններու պէս կ'անցնէին այն ծիածանաձեւ ծովակին եզերքը, երբ Աթենոդոր գալար վարդաթերթի պէս գլուխը մօրը կրութենցուցած, և նա իր վարսաւոր Ճակատը՝ բարակճիւղ ուռենոյ պէս որդւոյն վրայ կոխած, մէկ մը ջրերուն հանգարտութեանը վրայ, մէկ մը զաւակին անմեղ խաղաղութեանը կու նայէր. և սրտին բորբոքած կրակներն՝ այն երկու պայծառ զովութեանց մէջ կու մարէր։ Լ՚ին մեկայլ կող-

մը՝ չինած գիւղին դիմաց՝ աղբիւր մը կար, պատ-
շաճ և անոյշ անուամբ Աբիենոս, որ աւելի ա-
նոյշ խոխոջալով կ'իջնէր կու գար՝ Թերևս խառ-
նուելու նոյն ծովակին ծոցը, ինչպէս Ամենոգոր
իր մօրը գիրկը. անտարակոյս շատ հեղ Աղուիթա
այդ աղբիւր վազուկ արծաթները իր ոսկեհատիկ
որդւոյն ցաւած մասանց վրայ գարձուցեր, լուա-
ցեր ջնջեր էր. Ամենոգոր անոր քով հաւաքեր
գրեր էր մարերուայ գունագոյն բոյսերը, յառաջ
քան փուն փունջ ընծայելու իր մօրը, որ միշտ
մայրաբար՝ Թէ իրեն և Թէ իր որդւոյն մաս և ալ-
սակ կու հանէր այն մարգարտակաթ ծաղկունե-
րէն։ Որդւոյն ցաւոց վրայ գորովելով՝ կու յիշէր
անոր պէս ցաւագարներ. մանաւանդ երբ կու
առնէր զոմանս անունցմէ, որք ըստ բարբարոս օ-
բինաց հնեթանոսութեան, հալածուելով 'ի շինից
և 'ի բնակութեանց, ամայի անբնակ տեղուանք
կու Թափառէին. իբրև նղովեալք և անիծեալք.
այս սովորութիւնս կար նաև մեր ազգին մէջ այլ,
զոր յետոյ շատ խնամքով չանացին ջնջել Ս. Լու-
սաւորիչն և իր համանման սուրբ Թոռն Մեծն
Ներսէս. չէնքերէ հեռու տեղուանք հիւանդա-
նոցներ և ուրկանոցներ (բորոտներու տեղ) չի-
նելով, որք և այդպիսի բարերարութեան տեղեաց
մէջ հնագոյններն կու սեպուին. բայց իրենցմէ ա-
ռաջ այլ այս աշնուասիրտ տիկին Աղուիթա
Արբենուա աղբիւր քով չինեց տառապելոց պա-
տըսպարան մը, ուր ժողովեցան 36 ցաւագարք,
և գթասիրտ Աղուիթայի տուրքերովք կ'ապրէին,
և կ'օրհնէին իրենց բարերարը։

Ասոնց մէջ էր և Դասիոս կամ 'Դասիկ ծերու-
նին. որ, ինչպէս Աղուիթա անունց մայր սեպուե-
ցաւ, ինքն այլ հայր եղաւ Թէ անունց և Թէ նոյն
քնքն Աղուիթայ և Ամենոգորայ։ Առաջ անունց
մէջ իր պատկառելի կերպարանքն և արծաթա-

փայլ երկայն մարուքն՝ Տիր գից կամ Վահագնի քուրմ մը կարծուէր, որ քաղցր շրթամիջն ա-ւելի քան ասկեթել քնարով ամենուն սիրտը կակղցնելով, եթէ ցաւերնին չկրցաւ բժշկել, գո-նէ բնութեան բարիքներէն ու վայելչութենէն սկսելով՝ այն առատիկ ցաւագնելոց միտքը բարձրա-ցուց ինչուան առ բնութեան տէրն. և երբ հա-ստուց յարմար վիճակի, հանեց յայտնեց իր ծած-կած հովուական սրինգը և նոր նուագ մը երգից. զամենքը ափշեցուց, զամենքը զմայլեցուց, զա-մենքը հեռուցուց իրեն. այս նոր նուագս՝ Կապադ-ոկեցի հովուապետէն սովրած էր, անոր վարդա-պետութիւնն էր, Քրիստոսի աւետարանն էր։ Մերուներն Դասիկ գաղտուկ քահանայ էր. իր ընկերաց հովիւ եղաւ, մարմնոց ցաւերը թեթև-ցընելով՝ հոգիներուն մեռելութիւնն անգամ ոչ-ջնցուց. գարձուց զամենքն 'ի քրիստոնէութիւն. և ցաւոց ու փչոց մէջ՝ հոգեզուարճ վարդանոց մը, դրախտ մը բացաւ, ուր՝ այն տգիտարհեստ մոռ-ցուած և մերժուած տառապեալքն աւելի երբ-ջանիկ ու սրտաբաց էին, քան իրենց երկար գերու-թիւնը թօթուող ու Տրդատայ յաղթական գար-ձով փառաւորեալ դիւցազաշէջ Հայկազունք։

Աղուիթա և Ամենոդոր այլ լսեցին Դասիկ-սի և Ցիսուսի ձայները, և սրտերնին թնդաց. և թէ ոչ աւազանին ջրով՝ գոնէ սիրով ներսէն մերը-տուեցան, և սիրով կ'երթային ծածկաբար սուրբ ծերոյն աւետարանութիւնը լսելու, որ յոտնա-րէն կու կարդար սուրբ գրքերը և կու բացատ-րէր չհասկացողաց։ Մինչդեռ հոն, իբրև աբելա-կան սեղանէ մը՝ սուրբ կրօնից նուէրքն, աղօթք և զոհն՝ հեզօրէն կու բարձրանար առ Աստուած, դիմացը աւանին քով հնեթանոսաց մեհեանները կանգնուած՝ կու հրաւիրէին զառաջ և զչիւանդ 'ի զոհ և 'ի պաշտօն Հերակլի (Վահագնի) և Աս-

կլեպեայ՝ առաջնութեան լաստուածոյն, որոց
ասոնք մասնաւոր հանդիսիւ կատարէին հոն տա-
բուէ տարի։ Բարեմիտ կամ Թերամիտ քուրմք և
ժողովուրդք մեծ ջանքով կու յորդորէին զԱմե-
նոդոր այլ՝ որ գայ այն մարդասէր աստուածնե-
րէն բժշկութիւն խնդրէ. բայց նա միշտ պա-
տրուակներով կու զգուշանար. ինչուան որ հայրն
այլ տեսնելով որդւոյն չափահաս տարիքը, որ
քսանը անցուցեր էր, կու խրատէր որ անհոգու-
թիւն չընէ. «այս վեց տարի է կ'ըսէր, որ մեր
» աստուածոց զոհ չես ըրած, Թերևս անոր հա-
» մար այլ ցաւերդ կ'երկրնան». իսկ Ամենոդոր՝
նոյն իսկ ցաւերը պատճառ կու բերէր զոհի չեր-
թալուն. և ոչ միայն վեց՝ այլ և կրկին վեց տարի
խաբեց հայրը, և ճարտարութեամբ ազատեցաւ։
Հաւանական այլ է, որ Սուրէն իբրև գաւառա-
պետ մը և Թագաւորմ, երբ լսեց Տրդատայ գալն
'ի Հռովմայեցւոց, փութացաւ դիմացը ելլելու,
և արքունի բանակին մէջ էր, որ՝ (իր երկրին՝
Սալահունեաց մօտ) Եկեղեաց գաւառին մէջ
Գայլ գիւղն եղելոյը գաղրեր էր։

Դ

Քանի մը տարի այսպէս անցնելէն ետև՝ օր մը
Սուրէնալէն աւանն (Մնդաց գինուց չչուկով. Թա-
գաւորական գունդ մը զօրաց երևցաւ, որոց ա-
ռաջնորդէր Իշխանն Մազենա. ասոնք Եկեղեաց
Երէց աւանէն գալով և գէպ յԱրտաշատ եր-
թալով 'ի հին մայրաքաղաքն Հայոց, կ'անցնէին
Սալհունեաց գաւառէն, որ Ճամբուն վրայ էր.
ոչ պատերազմի և ոչ պաշտպանութեան համար
էր երթալնին, հապա յանցաւոր մը, կապուած
մը, Թագաւորին անհնազանդ մը կու տանէին.

սէրութեան գէմ պարտական գտուած մահա-
պարտաց ամենէն սասսիկ բանը ձգելու, որ էր
Արտաշատ քաղաքին գեանափոր վիրապը. իսկ
յանցաւորն այն՝ էր Գրիգոր մը... Ի հարկէ ա-
մեն դիէ հետաքրքիրք կու վազէին տեղեկանալու
թէ ո՞վ է, ինչո՞ւ համար է, և երբ լսէին թէ Քա-
ջի արանց Տրգատ թագաւորի հօրը՝ Խոսրովայ
սպանողին որդին է, ինչպէս ակռանին կրճտելով
կ'ուզէին վիրապը չհասած՝ հոն սպաննել ոչնչա-
ցընել զայն՝ որ քանի մը տարիէ վերջը պիտի ըլ-
լար իրենց խաւարեալ հոգւոց Լուսաւորիչ։ Հարկ
էր զօրականաց եկեալնաւորաց հեռացընել վրէժ-
խնդիր ամբոխը, և ապահով տեղէ մը անցընել
կապեալը. անշուշտ աւելի ապահով ճամբայ այլ
չկայր՝ քան մեր ցաւագնելոց պատասպարանին
սահմաններն, ուսկից՝ զզուելով կու հեռանային
այն տեղն առողջութեամբ, քաջութեամբ և ա-
զատութեամբ պարծեցող ժողովուրդն Հայոց.
իսկ հիւանդքն, տկարքն և նեղեալքն՝ համարձա-
կութիւն գտնելով՝ իբրև անկար և կարօտ մար-
դիկ՝ պահապանաց կասկած չէին բերեր։ Այս-
պէս կրցաւ Դասիկ իր ընկերներովն և Ամենո-
գորոսի հետ՝ մօտենալ առ սուրբն Լուսաւորիչ,
զորոյ խոստովանողութիւնը արդէն լսած ըլլալով.
և անշուշտ աստուածային ազդեցութեամբ իմա-
նալով թէ ինչ անձն է և ինչ պիտի ըլլայ այն
կապուածն, բերան իբրև հովիւ հլու իր ցաւա-
գար ոչխարները՝ ապագայ հովուապետին ոտքը
ձգեց. և այն սրբազան նահատակին առաջին հր-
ամանքը և ընդունելութիւնը այս նեղեալքս. որք
և առանց նեղութեան և ցաւոց՝ Աստուծոյ փառք
տալով դարձան։ Հոն՝ Դասիկ ծածկաբար իմա-
ցուց Գրիգորի թէ ո՞վ է հետն եղած իշխանոր-
դին, և գաղտ հաւատացեալ ու գեռ անկնունք
ըլլալը։ Սուրբն Գրիգոր քաջալերեց զներ քա-

հանայն, և պատուիրեց որ առանց վախի առնու-
ռանի պատանին իրենց գիմացը՝ արևելեան կողմը
եղած ազբիւրը, (արդեաք Արբենուան, թէ ու-
րիշ մը) և հոն մկրտելով զԱմենոգոր՝ անուա-
նէ Թէոդոր. Ամենասայ տուրքն ընէ Արքեպիս-
կոպոս։ Այնպէս այլ եղաւ. Լուսաւորչի ծածկեալ
լոյսն, զոր հաւատացելոց աչքն միայն կու տես-
նէին, և մկրտութեան ջուրքն՝ նորէն ծնան այն
կայսրաւ պատանին, և մարմնոյ ու հոգւոյ ազա-
ռ ու բիծ՝ զամենն այլ ընկեցին. գէմքն աւելի քան
զմանկութեանն պայծառացաւ. հոգին ևս աւելի.
և ոչ միայն գեղեցիկ. վայելուչ, կարիճ, այլ և
շնորհազարդ և սուրբ, մաքուր, պաշտելի անձ
մը եղաւ Թէոդոր։ Արանաշնորհ մայրն այլ այս
աստուածային պարգևաց հաղորդ ըլլալով, եր-
կուքն այլ չէին բաժնուեր Դասկայ քովէն. Ար-
բենուան ժորակը քրիստոնէութեան ծառայա-
ծուկ առնար մը դարձուցին, Հայոց հեթանո-
սութեան վերջի տարիներուն և վերջի ջանքերուն
առեն. երբ Տրդատ գրգեալ 'ի Դիոկղետիանոսէ
հրաման հանէր և հալածէր զքրիստոնեայս՝ իր
նոր տիրած և ընդարձակած սահմաններուն մէջ,
իր հաւատարիմ և անահատապաշտ իշխանքն այլ
նոյն հոգւով իրենց երկիրներուն մէջ հսկէին։
Բայց Սուրէն որչափ այլ գիւտեալ և վրէժխնդիր
էր, չկրցաւ իմանալ որդւոյն քրիստոնէութիւնը,
չյսեց անոր անոյշ սաղմոսերգութիւնը Արբենուան
խոսքանաց և Թզենուան ծփանաց հետ։ Ինչուան
յետ վեց տարիներու՝ ուրիշներն կասկածելով և
հասկընալով՝ մատնեցին որդի մը՝ իր հօրը, անմե-
զուիւն մը՝ անգթութեան։ — Իբր անախորժ
քնէ մը արթննալով Սուրէն, այն առեն իմացաւ
թէ ինչո՞ւ Ամենոգոր չէր երթար Վահագնի և
Ակիլեպեայ սեղանները զոհիւք և պատկաց պա-
տուելու. թէ ինչո՞ւ այնպէս մթայնութիւն և առ-

անմնութիւն կու սիրէր որդին՝ նաև յեա բժշկ. կութիւնն, իբրև տղայութեան և հիւանդութեան յիշատակաց սովորութիւն մը։ Ինչ որ ծուռ հաւատքի մը եռանդն, հայրենի գուշ և տիրական կամք մը կրնային ընել տալ՝ ըրաւ Սուրէն. վեց ամիս աշխատեցաւ որդւոյն սիրտը գարձընելու. իր չափէն վեր այլ խոստմունքներ ընելով, և բոլոր Սալհունեաց գաւառին ընդարձակ տէրութիւնը և փառքը ցուցընելով եռանդուն երիտասարդին. այլ ամենևին չկրցաւ ազատել քրիստոնեայ արանն։ Հայրութիւնն գարձաւ 'ի տէրութիւն, տէրութիւնն 'ի բռնութիւն, եղաւ հալածիչ և գահիճ որդւոյն. կարելի խոստմանցն հակառակ՝ ամեն կարելի սպառնալիք այլ ըրաւ, և հասուց պատիժ ու զրկմունք. ակամայ քան կամաւոր անգթութեամբ առնչեց իր ազիքը. սակայն չկրցաւ զատել զորդին իր նոր և յաւիտենական հօրէն, 'ի Քրիստոսէ։ Ցեա վեց ամսոց յօգնեցաւ, յուսահատեցաւ թշուառ և ողբալի հայրն. մեկ հատիկ և վերջին հնար՝ կամ ապրեցընելու կամ կորուսանելու՝ սեպեց իր սեւ սուրը. սպառնացաւ ու վճռեց սոսկալի մահ։ Թէոդոր բնաւ չվախցաւ մահուանէ, որ իրեն փափագելի հանգիստ մ'էր։ Բայց նոր Սանատրուկ մը տեսնել, նոր Կայէն մը, իր հօրը ձեռքը սպանուիլ, ՈՒՀ, այս դառն էր քան զմահ և մահերու մահ։... Աւա՜ղ Աղուիթայ. ոչ իր կռզակից կենակից ամուսնական իրաւունքն, ոչ կնոջական մայրական խանդաղատանքն և գութն՝ չկրցան ազատել իր մեկ հատիկը։ Գազանացեր էր Սուրէն. աչուքներն արիւն, բերանն մահ կու փսխէր. ոչ ոք կրընար մոտենալ անոր. սպառնալեաց ժամանակն այլ անցեր էր. ըլլալիքն հասեր էր։

Թէոդոր վերջին անգամ մը նայելով իր կրկին և մեկմեկէ շատ աննման ծնողաց վրայ, բոլոր որ-

դիական և քրիստոսական երկու կրակներով վառած արևանման աչքերովն, անկուն զօրավարի պէս, որ յետ ամենայն զօրականաց՝ քաջ քաջ կ'ինկնայ զօրաւորագոյն թշնամւոյն առջև, արցունքները զսպելով, և թողով այն չէնքը՝ որ երբեմն իրեն ծննդեան տեղ, և ասկէ եաւ իրեն համար ամայութիւն և ունայնութիւն էր՝ բոլոր աշխարհիս հետ, թերևս մօրը գիմաց սարսափելի և անասնելի տեսարան մը չբանալու համար, եկաւ գնաց անգարմ նեռի մը պէս։ Մովսէս, ձորակ, ազբիւրք և հիւանդանոց չէրցան արգելուլ զինքը. ամենուն վերջի նայուածք վերջի բարև տալով, և ոչ գիտէ ինչպէս արտին չափազանց ծանրութիւնը և լեցունութիւնը թափելով Իսահակայ գրկաց մէջ, և ընդունելով անկէ անմահութեան հաչակը և կենաց հացը, երիտասարդական ուժով մ'այլ ցնցելով զինքն և թափելով սուրբ ծերոյն գոգդոլուն թևերէն և արտասուաթոր մօրուքէն, փախաւ գնաց Աբրենուսի ձորէն դուրս, և անցաւ մտաիկ և աւելի անծանօթ անձայն ձորակի մը մէջ, որ կ'ըսուէր Սեղեմնուա. և հոն եօթն օր վեր վար պտտելով, Յեփթայեայ օրիորդին նման, Աբդլմանեի նման, ինքզինքը հրաժարեցընելով իր ծաղկեալ կեանքէն, իր պայծառ արևէն, անգին մոր մը սրտակտուր ծոցէն, կուրիրէր միայն անոր՝ ուսկից կու գան և ուր կու գառնան ամենայն բարիք և ամենայն չունչք արդարոց. մինչև յօգնած և հանգարտած՝ ընկաւ փառուեցաւ այն ծառին տակ և այն քարին վրայ, ուր տեսանք զինքը առաջին անգամ մեր պատմութեան սկիզբը։...

Ե

Հիմա գիտես, Հայկակ, ուր ըլլալդ, կու ճանչես ով է այդ չքնաղ երիտասարդդ. կեցիր հոս պահ մ'այլ, վերջին պահ. վասն զի այլ երկայն ժամանակ չկայ. մօտեցիր այդ անուշ ապառաժ սեղանին քով, այդ Սեղեմնուտի սաթեկայ ծառին տակ. ես լռեմ, դու դիտէ և զգա։...

Բայց ահա հեռուն վիշապի խօշիւն մը կու լսուի, առիւծու մռնչիւն մը. ձորեզերքն վար վարազաթեւ սեւ արծուի պէս կու սլանայ կ'իջնայ ծառին վրայ, ծառին ներքև, քարին մօտ... երկայնժանիք հրեշ մ'է, գազանագոյն քան զվիշապ, քան զառիւծ, քան զարծուի... Ինքն է, ինքն է. սուսերամերկն Սուրէն... որդւոյն փախստեան վրայ աւելի կատղած և արեան վրիժով լցուած, հին պատեանէն քաշելով ժանգոտ սուրը, և «Այդպէս, իմ երիտասարդութեանս երկաթ, այնքան կոտրած թշնամեացդ արեամբ չկշտացած՝ ծերութեանս առեն ինծի իմ որդւոյս արիւնն այլ պիտի ուզէիր թափելու», ըսելով, կ'առնու, և մոլեգին դիւահարի պէս կ'ընկնի սարէ սար ձորէ ձոր որդին փնտռելու։... Անշուշտ սատանայական ոգին զինքը քաշէր քշէր տանէր, ինչպէս երբեմն զԿայէն 'ի մահ Աբելի, կամ ինչպէս անկէ առաջ (ըստ դրախտերգակ քերդողին) ինքնին՝ դժոխոց անդունդներէն ելած՝ կու փնտռէր դրախտին դուռը, որ մեր երանելի նախածնողքը ձգէ 'ի մեղս և 'ի մահ։ Այսպէս դիւական թափառանօք վերջապէս հասաւ Սեղեմնուտի ձորեզերը, և իբրև սեւ արծուի՝ տեսնելով բարձրէն ծառին տակ իր փնտռած որսը, հասաւ շուտ ու թեթև անոր վրայ։... Բայց 'ի հար-



Խոյոր Հեզամրաւի աչտարՀերը կէս մը բա-
ցով. և կէս մը գլուխը վերցրՀերով...

Զ

Ո՞ւր են հիմա մեր մայիսի ծնած ծաղկունքն, ուր մնացին մրազարդ մարերնայ մրգունքն։ — Այսպէս, չկայ ծաղիկ հոլածին՝ որ չթամքի. չկայ պտուղ երկրաբոյս՝ որ չմոլթափի. ամենայն գալար ու պայծառ, յետ քիչ ժամանակի պիսի ըլլայ մառյալ ու խաւար։ Սակայն ծաղիկ այն ծաղիկն է, որ երբ ճղէն այլ զատուի՝ գարնանալ մընայ անթառամ, և մանաւանդ նոր գեղեցկութեամբ մը յաղթէ կանգուն ու ճոճուն ծաղկանց։ Այսպիսի ծաղիկ է հայրազէն գառնանման կոտորեալ երիտասարդն թէոդոր, թաւալեալ իր հովանաւոր ծառին և իր հանգստեան քարէ բարձին տակ՝ օշոշով և մանուշով հիւսուած խոտերու վրայ, Սեղեմնուտի ազատոր ձորակին մէջ. ուր հեզամնչիկ հովիկն խոնարհած կու խաղայ անոր արիւնլուայ վարդէ գիսակաց հետ. ինչուան որ երեկոյեան զովութիւնն գագրեցընէ և պաղեցընէ կարմիր կաթիլները, և գիշերուան լուսագընտիկն վերէն ծաթէ արծաթափայլ գողդոլուն ճառագայթները, որք կու մարմրին, շուք մը կու գառնան՝ թէոդորի մարմնէն ծագած հրաշափայլ լուսոյն քով։ — Այս լոյսն անշուշտ առաջնորդեց այն մարմինը մեծցընող և գգուող և հիմա զինքը սրտաթունդ փնտռող անձի մը, մոր մը։... Զանենք, չչնենք մենք այն մայրը Սեղեմնուտի մէջ։— Դու այլ գարձիր մայրիկ, գարձիր Աղուիթա՝ առ Դասիոս, և հրաման տուր. « Եմ. հայրիկ, եկ գնա 'ի Սեղեմնուտ. հոն կու գտնես իմ հայրազէն գառնուկս, իմ մրրկաթափ վարդենիս, իմ նուազած աղիքս. ան ու լուա այն արշալոյս ճակատը. թայց կիսալուայ ըրած՝ լեր ինձի փունջ

մը ոսկեթել մաղերկն, որ գլխուս վերջին պսակ ընեմ. լեցուր այն շուշանացեալ շրթունքները մայրենի և հայրենի համբոյրներով. ապա մաքուր կուաներով գոցէ, գոցէ այն արևակերպ գէմքը, զոր քիչ առաջէն պիտի տեսնեմ յերկինս. և գիր ծածկէ 'ի ծոց ամենուս ծնողին, հողուն »։ —

Գնաց գեղանամած ծերունին, հեռաց առած Թէոդորի հին ընկերները և ուրիշ ծածուկ քրիստոնեաներ, հաւատացեալ եղբարք և քոյրք, պարկեշտ կուսանք, որ քողով և մուղով արցունքներն ծածկած, և բոցաշարժ ճրագներ բռնած յուղարկաւոր կ'երթային Թէոդորի։ Արդեօք կայ'ն ա-նոնց մէջ, կամ կայ՞ր մէկ մը՝ որ յուսացեր էր երկրիս վրայ այլ սրտակից ըլլալու սուրբ նահատակին, և յետ անոր մօրը կանչելու զնա՝ իմ Թէոդոր. — պատմութիւնն կու լէ։...

Քահանայական և մարտիրոսական պաշտօն, աղօթք և արտասուք կատարուեցան. այն հովանաւոր ծառին ներքև և այն սեղանացեալ քարին քով՝ փորուեցաւ եռանդուն երիտասարդին քընարանն, և ծածկեցաւ մարտիրոսի մարմինն։ Անարուեստ պարզունակ քարակոփ խաչ մը վկայ կեցաւ նահատակութեան և հանգստեան սրբոյն Թէոդորի։

Թող գայ հիմա Աղուիթա աղօթելու երանեալ և աստուածազգեաց որդւոյ մը ծնացորդաց վրայ։ — Անհաւասիկ երանելի տիկինն, ծառէն առելի մաղերը ցրուած՝ փռուած ճակատ 'ի գետին։ Իբրև կրկին մայրք սոլոմոնեան դատարանին, հողն ու Աղուիթա կու գրկեն ու լմն է կ'ըսեն այս որդեակս։... Քիչ մ'այլ սպասէ Աղուիթա, և ահա թագաւորն իսպաղուիթեան՝ իր ցանկալի վշիռը կու ասայ, և յաւիտեան քուկդ կ'ըլլայ քու Թէոդորդ։

ՍԱԼՀՈՒՆԻ

Է

Իսկ հայրն... քա՛ւ լիցի, ամենևին անարժան այնպիսի անուան. գազանացեալն, դիւամոլն կամ գիւաբարին Սուրէն, իր սատանայական սուրը ա-ռած՝ և եկածէն աւելի շուտով փախչելով կու հեռանայ. տեղերն կու փախչին և ինքն իրմէ չի կըրնար հեռանալ. Գոչու�արեան որդւոյն բո-ղոքէ յերկրէ և յերկնից։ Հեզիկ գառին ա-րիւնն հիմա երկնաւոր նահատակի սահաւոր մա-սունք դարձած՝ սուրին վրայէն Սուրենի սիրտը կու պատռէ. կու փութայ խելացնորն՝ մնալի ազբիւրը, ալէկ մը կու լուայ կու ջնջէ որդւոյն յեսին նշանները, և անով իր և անոր միջի կապն՝ յաւիտեան կու ջնջուի։ Զորս տարի այն դառնա-գոյն դահճին, խղճի խայթուածքներուն մատ-նուած, Սուրէն կեանք մը կամ կենաց պատկեր մը անցընելով, անզեղջ և անյոյս կառապաշտ մոլ-րութեամբ մեռաւ. և յիշատակն յանէծս և 'ի սոսկումն մնաց։... Իւրածին որդւոյն արեան խուլ եղող սիրան՝ չեղաւ արժանի Աստուծոյ որ-դւոյն ձայնը լսելու՝ Լուսաւորչի բերնէն, և դառ-նալու 'ի հաւատս Թէոդորի՝ համբրէն Հայաստա-նեայց հետ, որք յետ երկու տարւոյ արժանա-ցան այս ամենամեծ պարգևիս։ — Վասն զի Ս. Թէոդոր նահատակեցաւ յամին 296, այսո-րուան ամսակէտիս (11 մայիսի) 28 տարեկան և 6 ամսական. Սուրէն կորաւ 300ին. Ս. Գրիգոր լուսաւորիչ՝ ելաւ 'ի վիրապէն յաջորդ տարին (301). և երբ հեռանալ տարին կ'երթար 'ի Կե-սարիա՝ Հայոց եպիսկոպոսապետ ձեռնադրուե-լու, անցաւ սովորական ճամբէն, Սալհունեաց գաւառին և աւանէն, որչափ տարբեր 15 տարի

առաջ անցածէն. փոխանակ շղթայից և կալանաւոր պահապանաց, հիմա Տրդատայ յաղթական կառաց վրայ գլուխ ած և Հայոց ամենէն մեծ նախարարներն շորս դին առած։ Այլ հեղն և ազնուասիրտ հայրն մեր՝ փառաց վրայ աչք չունենալով, իր սուրբ սանուկը կու փնտռէր. կանչեց գառաւ ծերունի քահանայն և հարցուց զԹէոդոր. Դասիկ իր ընտրեալ հովուապետին ձեռքէն բռնելով տարաւ ցըցուց այն տեղը՝ ուր որ վեց տարի 'ի վեր կու քնանար անոր հրամանաւ կընքուած։ Ի՞նչ կենդանակայլակ արտասուքներ էին որ Լուսաւորչի մը աչքերէ ինչան հայրաբար սուրբ երիտասարդին նշխարաց վրայ, որ իր քրտանց առաջին պտուղն, և մեր լուսաշնորհուհեմ անդրանիկ խայրիքն էր. անոր համար և առաջին վկայարան՝ յետ Հռիփսիմեանց նշխարաց ամփոփման, Թէոդորի հանգստարանն եղաւ. ինքնին Դրիգոր գնա չմեռնադրուած՝ կանգնեց հոն մատուռ մը, և երբեմն երախայ յանձնածը՝ հիմայ սուրբ վկայ մը յանձնելով Դասիոսի՝ գնաց։ Եւ երբ ցանկալի տաճարին իր ճակատը բարձրացուց գէպ յարևելք, աշակողմեան անկիւնը հանգչեցուցին սրբոյն մարմուր նշխարքը. մեկայլ անկիւնն այլ՝ տապանաքարին դիմաց՝ գրին այն սրբեալ քարը՝ որ մեր գառին զնման տեղան եղաւ։ Այն երկու սիրելի սրբատաշ քարանց մէջ էր անկէ ետև՝ Աղուիթայ սիրելագոյն հանգստարանն, որ իր որդւոյն մատրան ապատաւոր ըլլալով իբրև հաւատաւոր այրի մը, երկնախառն կեանք մը անցուց հոն. այլ ոչ երկայն ժամանակ։ Որդւոյն նահատակութենէն եօթն տարի վերջը, երբ հասաւ տարեդարձ անոր վերջին անգամ իրեն համբոյր տալուն և տնէն փախչելուն, նոյն օրը (Ե մայիսի) Աղուիթա, որպէս թէ դարձեալ զգալով այն ցաւալի կիրքը և որդին փնտռելու ելլելով՝

առանգեց աղաւնաչուն. հոգին. և Ճգնաստուն մարմնին թաղեցաւ իր որդեկին դիմաց՝ տաճարին դռնէն դուրս։ Ա. յետոր և առչի յիշեալ երկու սրբանիշ քարանց նման չորրորդ մ՝այլ գրուեցաւ՝ Աղուիթայ տապանին գիմաց, տաճարին արևմտեան կողմը. և նեղքեն հանգչեցաւ Թոսի, որ այս սխրալի քան սխրալի հանդիսից մէջ առաջինն ըլլալով հաստակաւ, վերջինն եղաւ ժամանակաւ. և ամեն բան կարգելէն կնքելէն ետև, ըստ իր տէրէկից Սիմեոնին հնաւ. «Արդ արձակեա, » Տէր, զծառայս քո՝ ի խաղաղութիւն. զի տե- » սին աչք իմ զփրկութիւն ». և հանգեաւ ընդ արդարս։

Ը

Թէոդորի թէ տապանէն և թէ այն ողբերէն ուր իր սրեան կաթիլքն խառնեցան՝ սուրբին լուսէն, շատ հրաշքներ եղան հիւանդաց և մոլեգնելոց վրայ. և ոմանք եղան, ինչպէս կու ցուցնէ երախտապարտ պատմիչին բանակարգութիւնն, յառաջ իսկ քան զշնութիւն մատարանն և զդարձն Հայոց 'ի Յեռն Լուսաւորչին։ Հայադիրն չիսափիկեր զմեզ հոս մէկիկ մէկիկ յիշել զանոնք. վկայասիրաց թոլուածք հին պատմչին նշանածներէն եռքն այլ եղածները քննելու և իմացընելու մեզի իսկ, որ զայս իրեանց կ'իմացընեմք։ Սա. եթէ հարցընէ սիրողն՝ Թէոդորի վկայարանը կամ ուխտատեղին, երթա՛ յԵրզնկա, և անցնի արևելեան կողմը և հարցընէ Դուրդա Ս. Թորոս վանքը. զոր սրբազան նահատակէն 1140 տարի վերջն այլ յիշատակած գտնեմք 'ի գիրս՝ « մեծա- » փառ և բարձրապատիւ ուխտ » կոչմամբ։ — Հոն քննէ գտնէ և համբուրէ մեր ըղձաւոր շըրթամբ այլ՝ այն չորս սրբանիշ քարերը, և մանա-

գիտական և քրիստոնական երկու կրակներով վառած արևանման աչքերովն, աննկուն զօրավարի պէս, որ յետ ամենայն զօրականաց՝ քաջ քաջ կ'ինկնայ զօրաւորագոյն թշնամւոյն առջև, արցունքները զսպելով, և թողլով այն չէնքը՝ որ երբեմն իրեն ծննդեան տեղ, և ասկէ եաև իրեն համար ամայութիւն և ունայնութիւն էր՝ բոլոր աշխարհիս հետ, թերևս մօրը գիմաց սարսափելի և անառանելի տեսարան մը չբանալու համար, եկաւ գնաց անդարձ նետի մը պէս։ Մովսէս, Ժորտակ, աղբիւրք և հիւանդանոց չէրցան արգելուլ զինքը. ամենուն վերջի նայուածք վերջի բարև տալով, և ով գիտէ ինչպէս արտին չափազանց ծանրութիւնը և լեցունութիւնը թափելով Դասկայ գրկաց մէջ, և ընդունելով անկէ անմահութեան հաչակը և կենաց հացը, երիտասարդական ուժով մ'այլ ցնցելով զինքն և թափելով սուրբ ծերոյն գողգոջուն թևերէն և արտասուաթոր մորուքէն, փախաւ գնաց Արբենուսի ձորէն դուրս, և անցաւ մտիկ և աւելի անծանօթ անձայն ձորակի մը մէջ, որ կ'ըսուէր Սեզեմնուտ. և հոն եօթն օր վեր վար պտտելով, Յեփթայեայ օրիորդին նման, Աբդլմսեհի նման, ինքզինքը հրաժարեցընելով իր ծաղկեալ կեանքէն, իր պայծառ արևէն, անգին մօր մը սրտակտուր ծոցէն, կու նը-ւիրէր միայն անոր՝ ուսկից կու գան և ուր կու գառնան ամենայն բարիք և ամենայն չունչ արգարոց. մինչև յօգնած և հանգարտած՝ ընկաւ փռուեցաւ այն ծառին տակ և այն քարին վրայ, ուր տեսանք զինքը առաջին անգամ մեր պատմութեան սկիզբը։...

Ե

Հիմա գիտես, Հայկակ, ուր ըլլալդ, կու ՀԱՆ-
ՀԵՍ ով է այդ չքնաղ երիտասարդդ. կեցիր հոս
պահ մ'այլ, վերջին պահ. վասն զի այլ երկայն
ժամանակ չկայ. մօտեցիր այդ անուշաշ ապառաժ
սեղանին քով, այդ Սեղեմնուտի սաթեկայ ծա-
ռին տակ. ես լռեմ, դու դիտէ և զգա։...

Բայց ահա հեռուն վիշապի խոշիւն մը կու լը-
սուի, առիւծու մռնչիւն մը. ձորեզերէն վար վա-
րազաթեւ սեւ արծուի պէս կու սլանայ կ'ինչնայ
ծառին վրայ, ծառին ներքև, քարին մօտ... եր-
կայնժանիք հրէշ մ'է, գազանագոյն քան զվի-
շապ, քան զառիւծ, քան զարծուի... Ինքն է,
ինքն է, սուսերամերկն Սուրէն... որդւոյն փա-
խուստեան վրայ աւելի կատաղած և արեան վրի-
ժով լցուած, հին պատեանէն քաշելով ժանգոտ
սուրը, և «Այդպէս, իմ երիտասարդութեանս
երկմիթ, այնքան կոտրած թշնամացդ արեամբ
չկշտացած՝ ծերութեանս առեն ինծմէ իմ որդ-
» ւոյս արիւնն այլ պիտի ուզէիր թափելու», ը-
սելով, կ'առնու, և մոլեգին գիւտահարի պէս կ'ընկ-
նի սարէ սար ձորէ ձոր որդին փնտռելու։... Ան-
շուշտ սատանայական ոգին զինքը քաշէր քշէր
տանէր, ինչպէս երբեմն զԿայէն 'ի մահ Աբելի,
կամ ինչպէս անկէ առաջ (ըստ գրախտերգակ
քերդողին) ինքնին՝ գժոխոց անդունդներէն ելած՝
կու փնտռէր դրախտին դուռը, որ մեր երանելաբ
նախածնողքը ձգէ 'ի մեղս և 'ի մահ։ Այսպէս գի-
ւական թափառանօք վերջապէս հասաւ Սեղե-
մնուտի ձորեզրը, և իբրև սեւ արծուի՝ տեսնե-
լով բարձրէն ծառին տակ իր փնտռած որսը, հա-
սաւ շուտ ու թեթև անոր վրայ։... Բայց 'ի հար-

կէ երկու քայլ մնացած՝ բնաբերաբար կամ ա-
կամայ կամաք՝ կանգ առաւ. հայրենի բնութիւնն
զօրանալով՝ դիւական մոլութեան մէջ անգամ
հիացաւ այն սքանչելի հանդարտութեան և ան-
մեղութեան թափանցիկ քունին վրայ, որուն նը-
ման բան չէր տեսած երբէք։... Ո՜հ. և ինչո՞ւ
չիմգեց սուրը ձեռքէն. ինչո՞ւ չցատքեց ընկնալու,
և հայրական շրթունքները վեր վար բերելու այն
մարգարտաշաղ վարդերուն վրայ, այն բարակ
քրանահար երեսներուն վրայ. այլ առանց դպչ-
ելու կեցաւ կանչեց կերկերեալ կոկորդով մը՝
« Ամենոգոր, որդեակ »։... Թէոդոր հեզամրափ
աչուրները կէս մը բանալով և կէս մը գլուխը
վերցնելով՝ պատասխանեց. « Հայր իմ »... վեր-
ջի՜ն անգամ հօր և որդւոյ անուանակոչութիւնք։
Սուրէն գարձեալ այլայլած՝ հարցուց անոր, թէ
պիտի հաւանի՞ իր կամացը և թոզլով զԿրիստոս
գառնայ 'ի պաշտօն կառց։ — Թէոդոր՝ « ես Քրիս-
տոսի հաւատացեալ եմ, ըսաւ, և այս հաւատոյս
» վրայ հոս կու մնամ »։ և նորէն դրաւ գլուխն 'ի
քարին, խփեց շրթունքը և աչքերը... մնաք բա-
րով արև, կեանք և աշխարհ։ — Բայց մէկ ան-
գամ մ՚այլ բացաւ Թէոդոր կիսակէս աչքը և շըր-
թունքը, երբ Սուրէն վայրենի վագեր պէս մէկ
ցատքելով ձգեց ձախ ձեռքը, և որդւոյն երկու
թիզ խարտեաշ մազերէն բռնելով վեր քաշեց
ինձորակերպ գլուխը, և պարկեշտ պատմուճա-
նին օձիքէն կարապատև պարանոցն երկընցաւ։...
Ո՜վ հրեշտակային կերպարանք, ի՞նչպէս կ՚այլա-
փոխիս։ — Իսկ Սուրենայ աջ ձեռքէն յանկարծ
փայլակ մ՚էր շողաց շեշտակի։...

Հոս միատեղ մեկգի կ՚ընկնան՝ պատմչին գրիչն,
Սուրենի սոսկալի սուրն, և Թէոդորի ձերմակ
վզէն նռնանման ճեղքուած կարմրահատ գլուխն։



Հոդոր հեզամրտի աչքերները կիս մը բա-
ցով. և կիս մը գլուխը վերցրեներով...

Զ

Ո՞ւր են հիմա մեր մայիսի ծնած ծաղկունքն, ուր մնացին մրաղարդ մարերևայ մրգունքն։ — Այսպէս, չկայ ծաղիկ հողածին՝ որ չցավքի. չկայ պտուղ երկրաբոյս՝ որ չմօթափի. ամենայն գալար ու պայծառ, յետ քիչ ժամանակի պիսի ըլլայ մառալ ու խաւար։ Սակայն ծաղիկ այն ծաղիկն է, որ երբ ճղէն այլ զատուի՝ գարձեալ մը նայ անթառամ. և մանաւանդ նոր գեղեցկութեամբ մը յաղթէ կանգուն ու ճօճուն ծաղկանց։ Այսպիսի ծաղիկ է հայրաղէն գառնանման կոտորեալ երիտասարդն Թէոդոր, թաւալեալ իր հովանաւոր ծառին և իր հանգստեան քարէ բարձին տակ՝ օշոշով և մանուշով հիւսուած խոտերու վրայ, Սեղեմնուոյ սգաւոր ձորակին մէջ. ուր հեզամնչիկ հովիկն խոնարհած կու խաղայ անոր արիւնլուայ վարդէ գիսակաց հետ. ինչուան որ երեկոյեան զովութիւնն գադրեցընէ և պաղեցընէ կարմիր կաթիլները, և գիշերուան լուսագընթիկն վերէն ծաղիկ արծաթափայլ գողգոջուն ճառագայթները, որք կու մարմարին, շուք մը կու գառնան՝ Թէոդորի մարմնէն ծագած հրաշափայլ լուսոյն քով։ — Այս լոյսն անշուշտ առաջնորդեց այն մարմինը մեծցընող և գգուող և հիմա զինքը սրտաթունդ փնտռող անձի մը, մոր մը։... Զատենինք, չքննենք մենք այն մայրը Սեղեմնուոյ մէջ։— Դու այլ գարձիր մայրիկ, գարձիր Աղուիթա՝ առ Դասիոս, և հրաման տուր. « Ն՛ւ, հայրիկ, եկ գնա 'ի Սեղեմնուա, հոն կու գտնես իմ հայրաղէն գառնուկս, իմ մրրկաթափ վարդենիս, իմ նուազած աղիքս. ան ու լուա այն արշալոյս ճառկաաը· բայց կիսալուայ ըլլած՝ բեր ինձի փունջ

մը ոսկեմեջ մաղելուն, որ գլխուս վերջին պահակ ընեմ. լեցուր այն շուշանացեալ շրմունքները մայրենի և հայրենի համբոյրներով. ապա մաքուր կտաւներով գոցէ, գոցէ այն արեւակերպ դէմքը, զոր քիչ առաւնէն պիտի տեսնեմ յերկինս. և դիր ծածկէ 'ի ծոց ամենուս ծնողին, հողուն»։ —

Գնաց գեանամած ծերունին, հեռաւոր Թէոդորի հին ընկերները և ուրիշ ծածուկ քրիստոնեաներ, հաւատացեալ եղբարք և քոյրք, պարկեշտ կուսանք, որ քողով և մուղով արցունքներին ծածկած, և բոցաշարժ ճրագներ բռնած յուզարկաւոր կ'երթային Թէոդորի։ Արդեօք կայ'ն ա-նոնց մէջ, կամ կայր մէկ մը՝ որ յուսացեր էր երկրիս վրայ այլ սրտակից ըլլալու սուրբ նահատակին, և յետ անոր մօրը կանչելու զնա՝ իմ Թէոդոր. — պատմութիւնն կու լռէ։...

Քահանայական և մարտիրոսական պաշտօն, աղօթք և արտասուք կատարուեցան. այն հովանաւոր ծառին ներքև և այն սեղանացեալ քարին քով՝ փորուեցաւ եռանդուն երիտասարդին քընարանն, և ծածկեցաւ մարտիրոսի մարմինն։ Անարուեստ պարզունակ քարակոփ խաչ մը վկայ կեցաւ նահատակութեան և հանգստեան սրբոյն Թէոդորի։

Թող դայ հիմա Աղուիթա աղօթելու երանեալ և աստուածազգեաց որդւոյ մը մնացորդաց վրայ։ — Անհաւասիկ երանելի տիկինն, ծառէն տեսնի մաղերը ցրուած՝ փռուած ճակատ 'ի գետին։ Իբրև կրկին մայրք սոլոմոնեան դատարանին, հոգն ու Աղուիթա կու գրկեն ու իմն է կ'ըսեն այս որդեակս։... Քիչ մ'այլ սպասէ Աղուիթա, և ահա թագաւորն իսալազուիթեան՝ իր ցանկալի վշիռը կու տայ, և յաւիտեան քուկդ կ'ըլլայ քու Թէոդորդ։

Է

Իսկ հայրն... քա՛ւ լիցի, ամենևին անարժան այնպիսի անուան. գազանացեալն, դիւամոլն կամ դիւաբախն Սուրէն, իր սատանայական սուրը առած՝ և եկածէն աւելի շուտով փախչելով կու հեռանայ. տեղերն կու փախչին և ինքն իրմէ չի կըրնար հեռանալ. ԳոչուՄն արեան որդւոյն բողոքէ յերկրէ և յերկնից։ Հեզիկ գառին արիւնն հիմա երկնաւոր նահատակի տխուր մասունք դարձած՝ սուրին վրայէն Սուրենի սիրտը կու պատռէ. կու փուլթայ խեղճացնորն՝ մօտի աղբիւրը, աղէկ մը կու լուայ կու ջնջէ որդւոյն յետին նշանները, և անով իր և անոր միջի կապն՝ յաւիտեան կու ջնջուի։ Զորս տարի այն գառնագոյն դահճին, խղճի խայթուածքներուն մատնուած, Սուրէն կեանք մը կամ կենաց պատկեր մը անցընելով, անզեղջ և անյոյս կռապաշտ մոլորութեամբ մեռաւ. և յիշատակն յանէծս և 'ի սոսկումն մնաց։... Իւրածին որդւոյն արեան խուլ եղող սիրտն՝ չեղաւ արժանի Աստուծոյ որդւոյն ձայնը լսելու՝ Լուսաւորչի բերնէն, և դառնալու 'ի հաւատս Թէոդորի՝ համարէն Հայաստանեայց հետ, որք յետ երկու տարւոյ արժանացան այս ամենամեծ պարգևիս։ — Վասն զի Ս. Թէոդոր նահատակեցաւ յամին 296, այսօրուան ամսակէտիս (11 մայիսի) 28 տարեկան և 6 ամսական. Սուրէն կորաւ 300ին. Ս. Գրիգոր լուսաւորիչ՝ եկաւ 'ի վիրապէն յաջորդ տարին (301). և երբ հեռևեալ տարին կ'երթայ 'ի Կեսարիա՝ Հայոց եպիսկոպոսապետ ձեռնադրուելու, անցաւ սովորական ճամբէն. Սալհունեաց գաւառէն և աւանէն, որչափ տարբեր 15 տարի

առաջ անցածէն. փոխանակ չղթայից և կալանաւոր պահապանաց, հիմա Տրդատայ յաղթական կառաց վրայ գրուած և Հայոց ամենէն մեծ նախարարներն չորս գին առած։ Այլ հեզն և ազնուասիրտ հայրն մեր՝ փառաց վրայ աչք չունենալով, իր սուրբ սանուկը կու փնտռէր. կանչեց գաւառ ծերունի քահանայն և հարցուց զԹէոդոր. Դասիկ իր ընտրեալ հովուապետին ձեռքէն բռնելով տարաւ ցոցուց այն տեղը՝ ուր որ վեց տարիէ 'ի վեր կու քնանար անոր հրամանաւ կընքուածն։ Ի՞նչ կենդանակայլակ արտասուքներ էին որ Լուսաւորչի մը աչքերէ իջան հայրաբար սուրբ երիտասարդին նշխարաց վրայ, որ իր քրտանց առաջին պտուղն, և մեր լուսաշնորհութեան անդրանիկ խայրիքն էր. անոր համար և առաջին վկայարան՝ յետ Հռիփսիմեանց նշխարաց ամփոփման, ԹԷոդորի հանգստարանն եղաւ. ինքնին Գրիգոր գեղ. չէնռնագրուած՝ կանգնեց հոն մատուռ մը, և երբեմն երախայ յանձնածը՝ հիմայ սուրբ վկայ մը յանձնելով Դասիոսի՝ գնաց։ Եւ երբ ցանկալի տաճարին իր ճակատը բարձրացուց գէպ յարևելք, աշակոզմեան անկիւնը հանդիպեցուցին սրբոյն մաքուր նշխարքը. մեկայլ անկիւնն այլ՝ տապանաքարին դիմաց՝ գրին այն սրբոյն քարը՝ որ մեր գաւառն զենման տեղան եղաւ։ Այն երկու սիրալի սրբատաշ քարանց մէջ էր անկէ եռաւ՝ Աղուիթայ սիրելագոյն հանգստարանն, որ իր որդւոյն մատրան ստասաւոր ըլլալով իրրև հաւատաւոր այրի մը, երկնախառն կեանք մը անցուց հոն. այլ ոչ երկայն ժամանակ։ Որդւոյն նահատակութենէն եօթն տարի վերջը, երբ հասաւ տարեգարձ անոր վերջին անգամ իրեն համբոյր տալուն և տնէն փախչելուն, նոյն օրը (8 մայիսի) Աղուիթա, որպէս թէ գարձեալ զգալով այն ցաւալի կիւրքը և որդին փնտռելու ելլելով՝

տանգից ազատեցուցչ. հոգին. և Ճգնաստուն մարդին թաղեցաւ իր որդեկին դիմաց՝ տաճարին դռնէն դուրս։ Այդոր և առչի յիշեալ երկու սբրանիչ քարանց նման չորրորդ մ՚այլ գրուեցաւ՝ Աղուիթայ տապանին դիմաց, տաճարին արևմըտեան կողմը. և նեղքեն հանգչեցաւ Դոռին, որ այս սխրալի քան սխրալի հանդիսից մեջ առաջինն ըլլալով հասակաւ, վերջինն եղաւ ժամանակաւ. և ամեն բան կարգելէն կնքելէն ետև, ըստ իր ալէկից Սիմեոնին հետ. «Արդ արձակեա, » Տէր, զծառայս քո՝ ի խաղաղութիւն. զի տե- » սին աչք իմ զփրկութիւն ». և հանգեաւ ընդ արդարս։

Ը

Թէոդորի թէ տապանէն և թէ այն տղբերէն ուր իր արեան կաթիլքն խառնեցան՝ առուին լուալէն, շատ հրաշքներ եղան հիւանդաց և մոլեգնելոց վրայ. և ոմանք եղան, ինչպէս կու ցուցնէ երախտապարտ պատմչին բանակարգութիւնն, յառաջ իսկ քան զշինութիւն մատրանն և զդարձն Հայոց ՚ի Հեռն Լուսաւորչին։ Հայագիրն չիսոփիպէր զմեզ հոս մէկիկ մէկիկ յիշել զանունք. վկայասիրաց թողուելք հին պատմչին նշանածներէն ետքն այլ եղածները քննելու և իմացնելու մեզի իսկ, որ զայս իրենց կ՚իմացընենք։ Նա եթէ հարցընէ սիրողն՝ Թէոդորի վկայարանը կամ ուխտատեղին, երթայ Սրզնկա, և անցնի արևելեան կողմը և հարցնէ Դուրբա Ս. Թորոս վանքը. զոր սրբազան նահատակէն 1140 տարի վերջն այլ յիշատակած գտնենք ՚ի գիրս՝ « մեծա- » փառ և բարձրապատիւ ուխտ » կոչմամբ։ — Հոն քննէ գտնէ և համբուրէ մեր ըղձաւոր չըրթամբ այլ՝ այն չորս սրբանիշ քարերը, և մանա-

ւանդ հիւսիսային անկեանը. հոն կանգնի և համ-
բուրէ (եթէ պահուի ցարդ) ձոզաբարձ խաչի մը
մէջ գրուած սրբոյն Թէոդորի քաղցրաբարբառ
յիսուսախօս լեզուն, որոյ համար այլազգիք ան-
գամ, կ'ըսուի թէ այն տեղը կ'անուանեն Սրբէուս
Ս. Թրոս (եթէ Գորոփու կամ Սալահունի անու-
նէն փոխուած չէ այդ անունը). Ցանձնեմք իր
հետ՝ աչխոյժ և ճարտարարբուեստ հաստակեցաց
Ս. Թէոդորի, գիտել նկարել և ցուցընել մեզի
այս պատմութեանս մէջ յիշեալ տեղուանքը. երկու
ձորակները, երկու աղբիւրները, ծովակը,
աւանները, գլեակները և այլն. — յանձնեմք ա-
նոնց վաւերուն մատաց և կրթեալ սրտից և մա-
տանց՝ նուագել և երգել այս պատմութեան և
եկեղեցւոյ արժանի և ընտիր գրուագն. — աղա-
չեմք մեր եկեղեցւոյ գլխաւորաց, իրենց զանա-
զան հոգոց մէկը պակսեցընելով կամ մէկ մ'այլ
աւելցընելով՝ այսպիսի սիրալի սրբոյ մը յիշա-
տակը յիշել միայն Ցայսմաւուրաց թափթփած
թերթից մէջ, այլ բարձրաձայն հռչակել տալու
սուրբ խորանաց վրայ. եթէ արդարև սրբոյն Գրի-
գորի Լուսաւորչի գործակից և հոգեկից ըլլալն
կու ճանաչեն իրենց առաջին հոգ և պարտք. և
պաշտամամբք սրբոց՝ բարձրացընել զփառս Աս-
տուծոյ։

Ժ

ԿԱՐՄԻՐՆ ՎԱՐԴԱՆ

2 Յունիսի, 451.

Արեգակն իր տարեկան ընթացքից մինչ դեռ չէ հասած իր բարձրագոյն գիտանոցը, կրակաթափ աչքերով նայելու արարածոց վրայ. դեռ հայկականն մրազարդ մարերի կուշտրունակէ իր գունաւոր օրերը, մանաւանդ մեր հայրենեաց բարձրատափ գաւառաց մէջ. և դեռ այս օրուան ընշանակեալ ամսաթուիս (2 յունիս – 26 մարերի) ըստ վկայութեան անուշագրոյց Եղիշէին, «Գարնանային է ժամանակն և գաշտքն ծաղկալից»։ Բայց արդէն Արարատայ ցածուն ծաւալ գաշտաց մէջ տաքն կոխած է. և եթէ առաւօտն և երիկուն զով այլ ըլլան, բոլոր օր մը անցընելու համար, Հայկակ, պէտք է նման նաղելոյն Աքայ փնտռել հով հով սարեր, զով զով ջրեր. «զբօսանս բարձանց և զբօսանս հովտաց»։

Ահա դեղեցիկ ընդարձակ բարձրահովիտ մ'այլ, որ ասկէ 3000 տարի առաջ ընտրուած էր իբրև գերագոյն և հաճոյագոյն հովասուն տեղի Հայկազն նահապետաց, անոնց զօրաց և ազատաց, «ուր էին հոլոց գէրինք թագաւորացն Հայոց», ըստ բանից հին ազգային պատմչի. որոյ արևմտեան հիւսիսային կողմէն՝ արարատեան Մասեաց

բարձրարձրն դարձրն գուրանալով գաշտանան. արևելքէն գեան Երասխ գարավազ կու պասի, հարաւային կողմէն՝ ոչ շատ բարձր լերանց շարք կ'ունջրպեան զայն 'ի Կոգայովտ և 'ի պարտատիէն Վանայ։ Այս սահմանագրեալ գաշտահովիտս իբր 3-4000 ոտք բարձր յերեսաց ծովու, ցածագոյն Երասխայ գաշտին մէջ բնակող Հայկազն նահապետաց ամարանոց եղաւ. Քրիստոսէ 13 գար առաջ. երբ զբօսասէրն և դիտողն Շաւարշ (որպէս ասուգաբանէ Գր. Մագիստրոս) շինեց հոն քաղաքաւան մը, 'ի բնակութիւն ամառուան, և իր անուամբն կոչեց Շաւարշաւան կամ Շաւարշան. յորմէ բոլոր շրջակայ կողմանքն և գաւառն կոչեցան Շաւարշոյ կամ Շաւարշան. մինչև Քրիստոսի ՌԾ գարուն սկիզբը Այրաքաջն Սմբատ սպարապետ Բ. Արտաշիսի արշակունւոյ՝ Ալանաց Արդոզ կամ Արտազ գաւառէն պատերազմի գերիներ բերելով, հրամանաւ իր սանիկ Թագաւորին հոն բնակեցուց, և անոնց հայրենի գաւառին անուամբ՝ Շաւարշանն այլ ըսուեցաւ Արդազ կամ Արդազոյ գաւառ. իսկ հիմայ իր անուանի և զարմանալի քարաբերդ քաղաքին անուամբ կ'ըսուի Մալազ։ Այս բնութեան և արուեստի ընտրած և հրաշակերտ տեղս՝ սրբազան և հին զօրութիւն մ'այլ պատուեր, սիրեր, սրբեր է. — կրօնքն՝ Հայաստանեայց եկեղեցւոյ խորագոյն խորհրդոց և հրաշափառագոյն հանգիստ տեղ ըրեր է Շաւարշական գաշտերը։ — Վերոյիշեալ Արտաշիսի հայրն՝ Սանատրուկ, կ'երևի թէ քան զՀինն Արտաշատ և քան զԻւր ձեռակերտ նորոգած Մծբինն կամ Մծուրս՝ սիրէր զայս տեղս, և իր անունը թողուց հոն լեռնաբլրի մը վրայ, Սանատրուկ լեռան, որ թերևս հիմայ Տիմ կ'ըսուի. ասոր քով եկաւ առաքեալն Քրիստոսի Թադէոս, և աշակերտուց զգուսար Թադաւորին՝

գորիորդն Սանգուխտ, առաջին կոյս վկայուհի Քրիստոսի, և ընդ նմին նահատակեցաւ զքանչելի վկայութեամբ. որոց յիշատակին՝ Հայաստանեայս տեփականած է քաղաց (գեկտեմբեր) ամսոյն մէջ օր մը։ Այս երկուքին վկայարանն այլ (քրիստոնէութեան հնագոյն ուխտատեղեաց և տաճարաց մէջն) կու պատուի մինչև ցայսօր Թադէի վանք անուամբ, որ և 'ի պատիւ առաքելոյն՝ Հայոց գլխաւոր եպիսկոպոսական թեմոց մէջն եղաւ, և 'ի միջին դարս՝ մի 'ի չորից արքեպիսկոպոսաց՝ որոց հարկ էր գտուիլ յօծման նորընտիր կաթուղիկոսի։ Առաջին երեք դարուց քրիստոնեայք, գաղտնապէս կու պատուէին այս սրբազան տեղս, առ ահի հեթանոս Թագաւորացն Հայոց. նախախնամութիւնն այլ մեծանաւոր տեսչութեամբ կու հսկէր անոր վրայ. և ուր Հայոց քրիստոնէութեան առաջին արեգակն ծագեցաւ, անոի երկրորդ անգամ ալ ծագել տուաւ զարեգակն Լուսաւորիչ. որ յետ 200 տարւոյ վկայութեան սուրբ առաքելոյն և Սանգխտայ և անոր հօրքրոջն Աւագուհեայ, տանց նշխարաց հանգստարանին քով իր հուեթեան սկիզբն առաւ՝ 'ի ծոց ուրիշ Ոգոհեայ, կնոջ Անակայ, երբ կու գայր սա 'ի Պարթևաց իւր փախստական՝ խաբել և սպաննել զԽոսրով Թագաւորն մեր։

Ի՞նչ զարմանալի և աստուածախառն տեսչութիւնք. Հայոց առաքելոյն Թադէոսի Թաղման մեծայարանն՝ Հայոց նոր առաքելոյն՝ Գրիգորի՝ յղութեան առագաստ։ Ո՞րքան զքանչելի է Շաւարշան՝ մեզի այսպիսի հոգևոր հանգիստից տաճար ըլլալուն, քան թէ մեր Թագաւորաց հովանոց։

Այս երկու սրբախորհուրդ գիպաց՝ նորակերպ նման մ'այլ հանգիպեցաւ նոյն տեղւանքը. Լուսաւորչի եղելութենէն 200 տարի ետև, որ թէ քաղաքական և թէ կրօնական կերպարանք

հաշակեցաւ. և այն այն գէպքն է զոր նշանակէ Հայագիրն այս ամսակէտիս. որ ասկէ տասանեւչորս դար առաջ (451 Թուին Քրիստոսի, յունիսի 3) էր շաբաթ օր Հոգեգալստեան ասնին. յորում հանգիպեցաւ Շաւարշանի երրորդ մեծ ազգային քաղաքակրօն գիպուածն, այնէ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ։

Բ

Այս գիպուածս, այս պատմութիւնս, այս ա-նուանս անգամ այնքան հաշակեալ և համբաւեալ է. յուզիս, որ ամենէն քիչ տեղեկութիւն ունեցող այլ՝ երբ լսէ Քաջ կամ Կորիւն Վարդան՝ սրտատրոփ կու ցատքէ. և թերևս ոմանք ուզեն յանկարծ գտնուիլ ինչուան նոյն սրտաբզիկան գաւառին մէջ, նոյն Շաւարշական գաշտը. նոյն Աւարայրի գեղին քով, նոյն Տէմոտ գեղոյն եզերքը, ուր այն մեծ և բաղդաւորհման ճակատամարտն և անմահախառն գործն կատարուեցաւ։ Բանայ փոփոգողն՝ ժամանակակից հեղինակաց, Եղիշէի և Ղազարայ Փարպեցւոյ, գեղեցիկ գրուածքը և մանրամասն պատմութիւնները, և ժամ մը, երկու ժամ՝ անոնց հետ ժուռ գայ հոն. հոն՝ ուր Հայութեան անջինջ, անմոռաց, յաւիտենական արձանաց մէկն կանգուն կայ և պիտի մնայ։ Իսկ ես հետդ, Հայկակ, կաղ՝ի կաղ ընթացիւք կ'ուզեմ մանդալ, և քանի մը բան հեռուէն դիտել այն մեծ տեսարանէն։

Կանխենք ուրեմն քան զմեծ գործողութիւնն՝ գոնէ օր մը, գոնէ գիշեր մը, այն գիշերն որ յունիսի առաջին օրը երկրորդին կու խառնէ. փութանք փոքր Մասեաց սարերէն դարվար սահելով՝ ինչուան յետին բարձրաւորին, որ կու նայի

Շաւարշան դաշտին վրայ։ Արդէն այս երեկոյեան՝ 14 դար առաջ այլ՝ այս անհամեմատ գիշերային լապտերս, այս բազմատես լուռ վկայս, այս խորհրդապահ լուսինս՝ ոյնպէս բոլորացեալ լուսալիր կու բարձրանար մեր եկած արևմտեան դարից եռեւէն՝ Մասեաց-Ոսին կողերէն, Արարատայ դաշտին հորիզոնէն. և ահա հանգարտ համասփիւռ և իբրև իւղակաթ կակուղ ճառագայթներով կու լուսաւորէ մեր փնտռածը, Շաւարշական Աւարայրի ընդարձակ դաշտը. որ մեր կեցած տեղէն դէպ՝ ի յարևելս հարաւայ երկընցած, իրեն ձևիչ կ՝առնու Տղմոց գետոյն ընթացքը, այն որ արևմտեան հիւսիսային կողմէն իջնելով՝ ծանր և պղտոր ալիքները կու թափէ Յերասխ[1], և այդ եռանկիւնաձև կամ երկայնաբոլոր դաշտին մէջ՝ իբրև մոխրագոյն երկայն շղթայ մը կու շարժի լուսնին նշուլից նիւթեւ։ Նեղ ու նուազ ջուր մ՝է նա. բայց ի՜նչ լայն վիճ, ի՜նչ խոր խորոց՝ իր եզերքը սարածուած երկու ունդման բանակաց մէջ. որոնցմէ մեր կողմը մեզի մօտ եղածն՝ լուսնէն և կրակէ աւելի պայծառութիւն լուսաւորուած ճերմակ ու գոյնագոյն կու սանդեմ. մէկայլն՝ կարծեմ թէ հեռաւորութիւնէն աւելի պատճառաւ մը՝ խառն ու խաւար կ՝երևայ, թէ և ահեղ անտառի պէս սփռուած ու դաշտին մեծ մասը ծածկած։ Այս երկու բանակաց միջի շարժմունքն և գործքերն այլ ի՜նչ տարբեր. հեռաւոր և սեռ բանակն միայն սովորական պատերազմի պատրաստութիւններ կու ցուցնէ. իսկ մօտաւորս աւելի կրօնական և հայրենական հան-

[1] Այս գետս հիմա ինչ կ՝ըսուի և ինչ ընթացք ունի, յայտնի չէ մեզի. Աբրահամ Գ Կրետացի՝ կաթուղիկոս՝ Արտապատայ մօտ կարծիր վանքին քով Յերասխ խառնուած գետը կու տեսէ Տղմուս։

գիտարան կ'երևի քան պատերազմի մարզարան։ Աստիկայ է Հայոց բանակն. վերջին բազմաթիւ բանակ՝ գումարեալ յանուն համօրէն Հայութեան, իր հնացեալ իշխանաց ձեռքն. 66,000 Հայ պատերազմողք, ձիաւոր և հեռաւակ, խաչանիշ վրանաց և գրօշուց տակ ժողովեալ են՝ զազգ և զկրօնս պաշտպանելու։ Ի՞նչ պանծալի գունդ և ինչ բազմութիւն կարծաց մեր աչքին առջև։... Սակայն ինչ են այդ վեց ու կէս բիւր զորքն Հայոց՝ Հայաստանի միահեծան և միահաւան տէրութեան օրերուն՝ հարկաւոր և վտանգի ժամանակ գումարած բանակին քով։ Սովորական տուն՝ Հայոց աշխարհապահ զօրաթիւն էր 120,000, որոց 40,000ի չափ թագաւորական գունդն էր, 84,000 այլ նախարարաց և տոհմից. իսկ մեծ պատերազմաց ժամանակ՝ կրկին և երեքկին աւելի ըլլալն՝ այսօր գիմացի բանակնիս կու վկայէ. յորում հազիւ քսան և հինգ տոհմի կամ ցեղի իշխանք և զորք կան, որոց որոշեալ զօրաքաժինն 20,000ի չէր հասներ. այս ցեղերուն շատին մեկ մասն, և բուն իսկ նախարարն այլ (մեծ գժբաղդութեամբ գնուոյն այնդիի կողմն են, պարսկական բանակին հետ. և ցաւելով պէտք է տեսանել հոն այլ նոյն չափ թիւ մը Հայոց. (վասն զի ըստ վկայութեան պատմչին՝ ուրացեալն Վասակ թէ իր Սիւնեաց աշխարհէն և թէ ուրիշներէ «ժողովեաց զամենայն գայթակղութիւն, և արար գունդ զօրաց բազմաց», որք կամաւ կամ ակամայ խառնեցան ընդ թշնամիս հայրենեաց և ձկեղեցւոյ. (ըստ տեսչեան սրբոյ Լուսաւորչին՝ գառինքն սպիտակք գառնալով 'ի սեաւ գայլս)։ Ինչպանց ու գայլոց գունդերն միասեղ առնելով՝ 120 հազար Հայ կ'երևան գիմագիմ Աւարայրի դաշտին մէջ. զորս բաժնելով կամ ջոկելով ըստ աշխարհաց Հայաստանի՝ կու տեսնենք որ հին

Հայոց 16 կամ քսան աշխարհաց Թուէն, ինչն ինկ կամ վեց աշխարհքէ եկած են այս գունդերս. որ են Այրարատ, Տուրուբերան, Վասպուրական, Սիւնիք, Մոկք. իսկ ուրիշ աշխարհքներէ հազիւ ոմանց մէկ երկու գաւառ կամ առհմ կու յիշուի. Մեծ Հայոց չորս մասին գրեթէ երկրքն գուրս է այս գոչեաս. բոլոր արևմտեան մասն՝ Յունաց կայսեր իշխանութեան տակ է. և թէպէտ Հմայեակ՝ եղբայր մեծին Վարդանայ, կու չանայ կ'աշխատի անոնցմէ այլ զորք ժողովել, բայց ոմանք չեն շարժիր կայսեր վախէն, ոմանք այլ ուշանալով չեն հասնիր առաջին. իսկ հիւսիսային և արևելեան գաւառք՝ Վրաց և Աղուանից խառնուած՝ անոնց հետ անշարժ կու կենան. հարաւային ամուր աշխարհք այլ Աղձնիք և Տմորիք՝ գրեթէ ինքնագլուխ չէզոք կու մնան. թէ և ասոնց ամենուն այլ հրաւէր և աղաչանք զրկուած էր. և ոչ միայն ասոնց. այլ և Վրաց, Աղուանից և Հոնաց. գալ միաբան Պարսից դէմ կենալու. բայց երկու խորամանկ և ազգուրաց Վասակք, մէկն յարևմուտք կեցած. մէկայն յարևելք. ամենայն հնարքով և սառութեամբք զանոնք հեռու բռնեցին Վարդանեան գնդէն: Այս սեսութենէս կ'իմացուի որ այսպիսի ծանր հարկի առեն՝ եթէ բոլոր Հայք միաբան մէկ կողմն ժողովէին, Վարդան փոխանակ 66,000ի կրնար 300,000 զորք այլ ունենալ: Որչափ այլ մեծ երևի այս թիւս, գեռ շատ պակաս է համեմատելով վերը ցուցած հաշուին և Թուոյ աշխարհաց և գաւառաց և զորաբաժնին Հայոց... Թողով երբեմն կարելին և այժմ անկարելին, գառնանք եղածին, և գիմացնիս կեցած մեր հայակոյտ բանակին:

Զորս գունդ կամ մեծ բաժնուած է այս բանակս. երկքն երկայնաձգած շարուած են Արարատի գաշտին մէջ Տղմուասոյ եղերքը. վասն զի

գիմացը Թշնամին այլ նոյնպէս տարածուած է. իսկ Մէկայլն՝ երկրին եռևէն մէջ տեղուանքը կնցած է, իբր վերջապահ և օգնական վտանգելոց. մէր կնցած տեղւոյն մասինն է՝ Առաջին և աջ Թևն հայ բանակին, որ Տղմուտայ գետոյն այլ առաջակողմն է, ուստի կու վարէ ալիքը գարվոր յարևելս յՍրասխ. այս առաջին մասին Թևապետն է հաւատարիմ Հայոց Ներքին հազարապետն, ուշխարհատեսուչն, որ Մովսէս կ'ըսուի, և է իշխանն Խորխոռունեաց ԽՈՐԻՆ, կարգեալ փոխանակ ուրացող իշխանին Գագիկոյ. Հայկայ որդւոյն անունը և քաջութիւնը 3000 տարիէ վերջ այլ փայլեցնող։ Իրեն օգնական գնդապետքն են, բաց յայլոց պայազատաց հին նախարարաց, ԱՐՈՒՆ ԸՆԵՑԻՆ և ՆԵՐՍԷՀ ԳՈՂԹՆԵՐՈՒՆԻ. ասիկա Վանայ ծովուն հիւսիսային կողմն եկած. առաջինն՝ որ Արդար կոչմամբ կու գովուի 'ի պատմչէն, թէ և ամէն ցեղէ աւելի քիչ նահատակից ընկեր ունեցաւ այս պատերազմիս մէջ, բայց զօրանգիսին տուն՝ այս բանակիս մէջ գտնուող ամէն իշխանացմէ աւելի և անհամեմատ աւելի զօրք կու տար, 4000 հոգի, որ (եթէ սխալ չէ Թիւն) կու նշանակէ կամ բազմաթիւ կամ պատերազմող ու սահմանապահ տոհմ մը, որուն պատմութիւնն և տեղն անգամ մեզ յայտնի չէ, բայց թերևս Վասպուրականի Ընձահից կամ Անձահից գաւառն ըլլայ, որ յետոյ յանուն գլխաւոր բերդաւանին՝ Կոգոր ըսուեցաւ, (հիմա Գիւգիւր, 'ի սահմանի պարսկական Հայոց)։ — Միջին Թևոյն ընդհանուր հրամանատարն է ՎԱՀԱՆ ԱՐԵՐՈՒՆԻ, որ այս Հայոց բանակիս մէջ, յետ սպարապետին (Վարդանայ) առաջին նախագահու իշխանն է, և ըստ կարգի ազնուութեան բարձրագոյն է քան զնա այլ. (վասն զի հին Խորենացւոյ տիեզերական Թագաւորներու ցեղէն է). ըստ արդեանց

այլ այժմանապէս առաջին Ճանչցիր գնա. թէ և նախ յիշած պատմչաց (Եղիշէի և Ղազարայ) մէջ չգտանիս անոր գեղեցիկ յիշատակները. զոր ան-զգամ և խորթ ձեռք մը (Բարձուման ասորին) վերուց ընկեց գեղեցկագիր պատմութենէն։ Վահանայ ընկեր գնդապետք են ՄԻՐՇԱՊՈՒՀ ՄԱՐԴՊԱՏՆ կամ իշխանն Մարգպետութեան, որոյ կալուածքն էին հին ատեն Նախիջևան գաւառին սահմաններն, և պաշտօնն էր Հայոց Թագուհւոյն և արքունի գանձուց հաղարապետութիւնն, որ և գունդ մը արքունի զօրաց ունէր իր ձեռքին տակ. ասոր հետ է և ԱՐՑԱԿ նախարարն Մոկաց, որ թէ և կոչտ ու խոշոր երկրի և բնակչաց տէր էր, այլ ինքն շատ կիրթ և ազնիւ մարդ, և ըստ վկայութեան ժամանակակից պատմչին՝ Գոռի, Հոմեռ, Գոլ Ի Երանէի, և Վարդանայ սպարապետին յատուկ սիրելի ու սրտակից մտերիմն, թէ ազնիւ և մտացի բարուցն համար, և թէ հին ծանօթութեանն և երախտեաց։ (Վասն զի յետ մահուան Ս. Սահակայ՝ երբ պարսիկ մարզպանք եկան 'ի Հայս՝ մեր աշխարհին կարգերը վեր վար ընելու, Վարդան Թողլով իր իշխանութիւնը և երկիրը՝ քաշուեցաւ յաշխարհն Մոկաց, յերկիր Արտակայ, ամուր բերդ մը, և մեծ պատիւ և սէր գտաւ այս իշխանէս. այնպէս որ երբ յետ ժամանակաց՝ Պարսից Թագաւորին գուռը՝ Հայոց նախարարք տոգնապած էին, իրենց բերան առին զԱրտակ, որ համոզէ զՎարդան իրենց հետ միաբանելու 'ի խորհուրդ ուրացութեան)։ Հիմայ Վարդան զԱրտակ բանակին միջոցը դրաւ։ Այս երեք մեծ իշխանաց հետ կային ուրիշ մեծամեծ նախարարաց պայազատք և Թագաւորական զօրաց գլխաւորներ։ -- Բանակին ձախ թևոյն զօրավարքն էին, ՓԱՓԱԳ ԱՌԱՒՍՂԵԱՆ. թէ ինքն և թէ իր ցեղն շատ ծանօթ չեն մեր պատմութեան

մեջ, և ընակութիւնին ուր տեղ ըլլալն այլ յայտնի չէ. թէ և կ'երևի մեզ Այրարատայ կողմերն ըլլալ. ԹԱԹՈՒԼ ՎԱՆԱՆԴԵՑԻ. Խառնոյ ընդարձակ դաշտերուն իշխեցողն. սոնց ընկեր ՑԱՌԱՑ ԳՐՆԴՈՒՆԻ՝ զարմանալի մտկանուանեալ, գլխապետ շատ հեռու և օտարաբակիզբն առնի մը. Քանանացւոց, Քամայ ցեղէն. որք ըստ պատմութեան՝ հալածեալք 'ի Յեսուայ և յԻսրայելացւոց՝ անցան յԱֆրիկէ, և մեջերնէն մեկն Քանանիգաս անուամբ եկաւ 'ի Հայս, և ցեղն ըսուեցաւ Փնիմուենիք կամ Քեղուենիք։ Այս (ձախ) թևին գիմաց՝ Պարսից աջ թևը մեծ պատրաստութեամբ և բազմութեամբ կեցած էր. անոր համար սպարապետն Վարդան՝ ընդհանուր տեսչութենէն զատ մասնաւորապէս այս թևին առաջնորդել կամ օգնել յանձն առաւ։ Բանակին երեք թևերուն եռև ջորբորդ օգնական կամ վերջապահ գրաւ քաջ և հաւատարիմ խումբ մը, գնդապետ կարգելով իւր հարազատ եղբայրը ՀԱՄԱՍԱՍՊԵԱՆ. և իւր միւս սրտակից և նիզակակից բարեկամն ու սիրելին՝ ԱՐՇԱՒԻՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ. (ինչպէս որ յետոյ ասոր որդիքն՝ Ներսեհ և Հրահատ՝ իր եղբօրորդւոյն և իր յաջորդին Վահանայ՝ սրտակիցք և բազկակիցք եղան)։ Արշաւիրայ կալուածն էր Այրարատայ հին Երասխաձոր գաւառը, որ յետոյ Կամսարականն և Արշարունիք ըսուեցաւ։ Այս երկու հաւատարմաց և քաջաց հետ՝ ջորբորդ գնդին կ'առաջնորդէր նոյն իսկ բոլոր բանակին առաջնորդն և սպարապետն, ինքն Մամիկոնէից տէրն, Մեծ, Քաջ և Սուրբ ՎԱՐԴԱՆ։

Պատերազմին առնն՝ աւելի ձախ թևոյն քով գտուեցաւ. իսկ հիմա՝ գրեթէ ամեն տեղ ամեն գնդի քով կ'երևի. ամեն մեկուն պէտքը և պատրաստութիւնը քննելու տեսնելու, և հարկաւորը տալու, ըսելու. ամեն կողմ կարծես կու

լուսի նոր խոսած առենաբանութիւնն. «Ի բա-
» զում պատերազմունս մահաբեր է իմ, և ձեր ընդ-
» խա[1]»։ Ամեն բան կարգաւորելէն և վաղուան
պատերազմի յարմարցընելէն ետև, կու գաւանայ
Վարդան չորս գնդերէն զատ ուրիշ և աննման
գնդի մը մէջ, որ առաջիններէն ոչ շատ հեռու
ժողովեր էր, վրանի տակ. և էր Հայոց եկեղե-
ցւոյն ուխտն. հոն էին կաթուղիկոսն Յովսէփ,
որ աշխարհին քաղաքական շփոթից համար դեռ
հանգիստ չէր օծուած. և զատ ուրիշ եպիս-
կոպոսաց և երիցանց՝ հոգեւից և հրաշալից երէցն
ՂԵՒՈՆԴ, որ բոլոր ուխտապահ Հայոց հայր և
բանակին երկրորդ սպարապետ մ'էր, եկեղեցւոյ
և հայրենեաց աննման նահատակ մը, որուն ամ-
նայն կրօնասէրք և ազգասէրք, աշխարհիկք և ե-
կեղեցականք՝ կրնան նախանձիլ. Ս. Սահակայ և
Մեսրովպայ վախճանելէն ետև, թէպէտ՝ որ անոնց
երիցագոյն աշակերտն էր, իբրև երեսփոխան մը
եղաւ անոնց. խորհրդոյն և օրինակաւն կու շար-
ժէր զեկեղեցին և զաշխարհն։ Եւ ահա այս գի-
շերս այլ՝ մեր հաւատարիմ բանակին դիմաց և
Վասակայ զրկած հրապուրիչ պատգամաւորաց՝
երկար քաջալերական առենաբանութեամբ մը
Վարդանայ ըսածները կու հաստատէ կրօնական
փաստերէ։ Զօրականք՝ այդ երկու հոգեշունչ բե-
ւռանաց փչմունքէն (Վարդանայ և Ղեւոնդայ) վա-
ռուած՝ պատերազմի վեր, յաղթութենէ վեր
բանի կու պատրաստուին, — մարտիրոսութեան,
պսակուելու յերկինս. և պահ մը զինուց պատ-
րաստութիւնը դադրեցընելով, հոգւոյ պատրաս-
տութիւնը կու սկսին։ Մէջերնէն երիտասարդք
ոմանք, այն առենուան թոյլ տրուած սովորու-
թեամբ դեռ երախայ ըլլալով, կու փութան 'ի

1 Կարգ յեղիէ։

սուրբ աւազան մկրտութեան, կանչելով. « Այս » գիշեր ջրով, վաղը առատու արեամբ »։ Շաւաբ-շանի գաշտաց մէջ լճակ մը կու նշանուի Ափ-ֆեղ. սպիտակ-լիճ անուամբ. կու սիրեմ կարծել թէ այս լճակիս մէջ մկրտուած ըլլան այն եռանգուն երիտասարդքն, որք գիշերը նորակնքոց ճերմակ պատմուճանը հագան, առատուն քաջաց փայլուն զրահը. երիկունը՝ վկայից կարմիր ծիրանին....

Հիմայ հասարակ գիշերն անցեր, և դիւցազնա-կան կամ քաջասրբեան օրը ծներ է. գեռ չլուացած՝ կու փութան քահանայքն գիշերային եկե-ղեցական պաշտօնը աւարտելու. և աստուածա-յին գերագոյն նահատակութեան հանդէսը կա-տարելու, — սուրբ պատարագը։ Թերևս Լուսա-ւորչի և Տրդատայ, կամ մեծին Ներսէսի և Մու-շեղայ օրէն 'ի վեր՝ այսպիսի վեհ վսեմ, սխրալի, սրբալի հանդէս մը կատարուած չէր. պատերազ-մական փողերէն առաջ լսուեցաւ եկեղեցւոյ կոչ-նակն, սուրբ հօտապետաց քաղցրիկ խոշոշմէան ձայնները. և երբ խաղաղարարն ամենայն աշխար-հի անունց ձեռքով սուրբ հացի կերպարանաւոր ծած-կեալ՝ բարձրացաւ 'ի հաճութիւն Հօր և 'ի հաշ-տութիւն մարդկան, վաթսուն հազար կարմիր հաւատացեալք՝ անձամբ և զինուք խոնարհեցան, երկրպագեցին, հաղորդուեցան սուրբ խորհուրդոցն, մարմնոյ և արեան Փրկչաւորի Աստուծոյ. գրսի զրահներէն զօրաւոր զրահ մը հագան հո-գւով, և կանգնելով կանչեցին. « Հաւատարեսցէ « մահս մեր ընդ մահու արդարոցն, և հեղուսցի » արեան մերոյ ընդ արեան սուրբ մարտիրոսացն, » և հաճեսցի Աստուած կամաւոր պատարագաւս, » և մի ուացէ զեկեղեցի իւր 'ի ձեռս հեթանո-» սաց »։ Այսպէս փութացան իւրաքանչիւր իր գրն-գին, իր տեղւոյն, զենքերնին զրահնին պատրաս-տելու, և ուժերնին կազդուրելու քիչ մը կերա-

կրով. յառաջ քան զարեւուն երեւալն։ Ամանք այս բաներուս զբաղած, ոմանք այլ վրանաց դրան քով կամ իրենց կահուց և զինուց վրայ կոթնած, աչուընին Հայկին և Վահագնին համաստեղութեանց վրայ, լռիկ մռիկ երկնից և երկրի հեռախօսելով մտքերնէն, յանկարծ ձիերուն գափրը ու խրխինջը լսելով՝ կու գառնան այն կողմը, ու սրտերնէն ինչպէս կ'անցնի. կու թօթուեն վարագեղ գլուխնին. հայկական մեծ ու պայծառ աչքերն կու թաւալին լայնալիք յօնից ներքեւ. ազնուաձիգ մատներով խարտեաշ պերեւեշանին շոկոտելով՝ կու նային կ'երթան մուտքն 'ի լոյս հովտէ հովիտ, լեռնէ լեռ՝ ինչուան այն տեղն, այն շէնքը՝ ուր քնիկ հայրենի տնակն է, ուր թողուցին իրենց կակուղ սիրելիները... ոհ, որքան հեռու իրենցմէ, և արդեօք որքան աւելի պիտի հեռանան քանի մը ժամէ վերջ. արդեօք վաղը այս ժամուս գեռ երկրիս վրայ՝ թէ յերկնից պիտի նային անոնց՝ զոր սուրբ սէրն չի բաժներ ոչ յերկրի ոչ յերկինս։... Երկընցեր քիչ մ'այլ՝ ով վերջին ժամ գիշերոյս, և թող մեր սիրասուն սրբասուն, քաջասուն Հայ երիտասարդաց՝ ոյսպիսի մտածութեամբք կամ սրտածութեամբք սպասել առաւմայարգար փոզոց ձայնին. և գոհ եղեմ աչուընչ հայրենի հովիկ, (եթէ սաոյգ է զգայուն մարդկան կամ երգչաց ըսածն), անցիր առանց շրթանց քովէն, խառնուէ այն լայնաչուընչ հագգաղներուն, և գնա հրախառն համբուրիչ պէս հաղորդելու իրենց յիշածներուն, իրենց սիրածներուն....։ Մենք հարկաւ և ոչ կամաւ՝ անցնինք գեռոյն այն կողմը. թշնամեաց բանակն այլ քիչ մը ճանչնալու։

Գ

Այս Պարսից բանակս մեր աշխարհը եկածնե-
րուն մէջ մեծերէն մէկն է. եթէ Հայք հարկի
առեն ինչուան 300,000 և աւելի զինուոր կրնա-
յին հանել, Պարպք ևս առաւել. իրենց ընդար-
ձակ աշխարհաց համեմատութեամբ. և հիմայ որ
ուրիշ կողմանէ խաղաղութիւն ունէին՝ կրցան
մեծաւ բազմութեամբ գալ, իրենց ամենէն երևե-
լի զօրավարներով, և ամենայն պատերազմական
պարագաներով։ Ցաղկերաս և իր խրատուն
Միհրներուս՝ ինչուան Հնդկաստանի հրատանջ
հովիտներէն Հայաստանի ձիւնեղէն բարձրագա-
տաց վրայ խաւրեցին էրամոխ ֆէղոյ. զորս բանա-
կին մէջ իրենց սպարապետն ի գունդս գունդս բա-
ժանեց, կ'ըսէ պատմիչն. քաջաձի Հայոց հեծե-
լոց դէմ չէին կրնար կենալ համաթիւ Պարսիկ
ձիաւորք, անոր համար այս անձնուռնի քնթանա-
ւոր դաշտաց վատահացեր էին. իրենց ընտիր
ձիերն այլ Հայաստանէն կ'առնուին, և հաշուու-
թեան առեն՝ իրենց լաւագոյն յաղթող հեծելա-
քըն՝ Հայք էին։ Հիմայ այս գունդ գունդ փղաց
երամակը միայն շորս հինգ խուռմ այլ սեպենք
կամ բոլոր մէկէն 50 փիղ (որ թէ և շատ, գեռ
պատմչաց ցուցածէն շատ չ'երևիր), մէկէն ա-
նանց քով 150,000 Պարսիկ կու տեսնես. վասն
զի կրկին կրկին կ'ըսէ պատմիչն թէ ամէն մէկ փղի
քով 3000 սպառազէն զօրականք կային, և կ'ա-
ւելցրնէ. «Թող զայլ զօրսն ամենայն». որոնցմէ
էր Մատեան քաջամարտիկ գունդն այլ. գարձեալ
ուրիշ տեղ կ'ըսէ, որ սպարապետն Պարսից տե-
ղեկանալով թէ 60,000էն աւելի են Վարդանանք,
և թէ որքա՛ն են անոնց պարագլուխքն, մեկուն դէմ

երկք երկք հոգի կու պատրաստէր։ Երբ այս ա-
մենայն, և սակէ գուրս Վասակայ ուրացակից
գունդքն այլ, և Հոնք և ուրիշ բարբարոսք այլ
մէկտեղ առնելով, եթէ Պարսից բանակը 250,000
զօրաց կու հասնի՝ ըսեմք, գեռ ճշմարտէն պա-
կաս ըսած կ'ըլլամք, և ոչ այլ աւելի՝ եթէ 300,000
այլ ըսեմք. մանաւանդ որ պատմիչաց մէկն կ'ըսէ
ասանց համար, թէ «տարածաներ երկայնէր Հա-
» կատան յերկայնութիւն գոյին ռեթի». և յառաջ,
«'ի ընդարձակ դեղի Տղմոց գոյին... զակիշ ա-
» ծեալ բանակէին»։ 'Լակիշ ըսածն է բանակին
շուրջ գին ամրութիւն՝ ապահովութեան համար,
զոր աւելի պարզաբար կու յիշէ առաջին պատ-
միչն. «Բանակ բոլորեր, փոս հատաներ, պատ-
» նէշ կանգներ, շերտաւոր փակեր, ամրացուցա-
» ներ իբրև զքաղաք ամենայն պատրաստութիւն»։
Վասն զի կու վախէին Պարսք թէ Վարդանանք
յանկարծ վրանին հասնին, և կրնային այլ պն-
դէս ընել, ըստ 'Լազարայ Փարպեցւոյ. բայց ա-
սիկայ յանդգնութեան գործ մը կ'ըլլար. և ամ-
ենայն պատրաստութիւն, մանաւանդ հոգևորը՝
ընելու առեն չէին ունենար. — վասն զի երկու
բանակներն այլ գրեթէ մէկ առեն հասան պա-
տերազմն տեղը. Պարսք՝ Հերայ և Զարևանդայ
կողմերէն (Խոյի և Սալմասայ), Հայք յԱրտա-
շատայ, պատերազմն առաջին օրը. և տեսան
որ Պարսք նոր հասեր են և բանակնին ամրաց-
նելու վրայ են։ Պարսից սպարապետն էր Մու-
ն Նիսալուրդ (որ թերևս նշանակէ թաւ-է-
բեռ, բուրդ-մորուք), իրենց ամենէն երևելի զօ-
բավարն. և կ'երևի թէ նոյն անձն է, որ Հայոց
թագաւորութիւնը վերցուելէն ետև՝ երկու ան-
գամ մարզպան դրուեցաւ 'ի Հայս, և հոն չգտած
պատուին վրէժն առնուլ ուզեց այս առիթու-
իրմէ յարմար անձ մը չէին կրնար գտնել Միհրը-

ներսեհ և Ցազկերտ։ Պատերազմին առեն ինքն կեցաւ ընդհանուր զօրավար բանակին կեդրոնը կամ մէջ տեղը. Պարսից առենէն կարիճ քաջաց քաջ անյաղթ և անմահ սեպուած գնդով. որ է Մոգէան կամ Մատենիկն. որք Մակեդոնացւոց փաղանգին պէս քովէ քով պարսպի նման անբաժ կու կենային և մեկտեղ շարժէին, և թէ մէկն ընկնար, տեղը ուրիշ մը կ՚ամբոջացընէր գունդը։ Զախ թեւին զօրագլուխ՝ կ՚երևի թէ էր Դուզաք, որ և բոլոր բանակին մէջ նախապատիւ էր յետ Մուշկանայ, և Հայոց աջ թեւին գէմ կու կենար (ընդդէմ Խորենայ). բայց այս կողմն պատերազմը չի զայրացաւ, կամ թէ երկու գիմամարտք այլ հաւասար քաջութեամբ կռուեցան իրարու հետ. այլ ասասկութիւնը արևելեան կողմն էր, ուր էր Պարսից աջ թեւն. և հոն գումարած էին բոլոր նիզակակից ազգաց զօրքն, որոց մէջ գլխաւորք էին (գժբաղդաբար) Հայք և Կոտէլ. որ են Հայոց արևելեան սահմանակիցքն Կազբից ծովուն մօտերը. ասոնց այլ գրակից Գէլ (Տիլէմ). ասոնցմէ զատ Ադուրհոյիւ կամ Ադուրհոյիւ, և Հոնք՝ որք՝ ի հարկէ մեծաթիւ պիտի ըլլային։ Հայոց սեցած գնդին գլխաւորն պէտք էր ըլլալ ինքն վառն Վասակ, տէրն Սիւնեաց, (որ քան զամենն ցեղ Հայոց՝ բազմաթիւ զօրաբաժին ունէր յաշխարհագումար հանդիսին Հայոց, 11,400 կառուոզ.) Սիւնեաց իշխանին միաբանք էին իշխանքն Բագրատունեաց, Խորխոռունեաց, Վահևունեաց, Ապահունեաց, Ակէոյ, Ուրծայ և մասն մի Ամատունեաց և այլոց. որոց զօրաբաժինք գումարին 8000ի չափ, և Սիւնեաց գնդին հետ 20000ի կու մօտենան. Վարդանանց զօրաբաժնէն գրեթէ աւելի են. ասոր համար ըսի՝ որ ասոնց չափ այլ կրնային հետևող ունենալ և բոլորն 60-70000 ըլլալ։ Այս երեք թեևերին զատ

էր Յորդանանի, և անոր առաջնորդ Արքեպիս. իբրև վերջապահ, միանգամայն և փղապետ, որ մեծ խումբ մը գազաններով՝ մեկայլ զօրաց եռանը կեցած էր, և ուր պէտք ըլլար՝ հոն օգնութեան պիտի շարժէր։

Դ

Բայց հոս չուշանանք, վասն զի ահա լուսացեր է պատերազմական օրն, օրն մեծ, օրն անմոռանալի։ Երկու բանակներն իրենց հրամայուած տեղը և կարգը կու բռնեն. Պարսից սպարապետն իւր երեսուն բիւր զօրաց և փղաց բազմութեան դիմաց՝ կու տեսնէ գրեթէ հաւասար երկայնութեամբ շարուած բանակ մը. բայց գիտէ այլ որ իրենին պէս թանձր չէ նա. հազիւ քանի մը կարգ զօրաց կան ետեւէ ետեւ. զայն այլ գիտէ (մեր ցաւովը) որ անոնցմէ այլ ոմանք բոլոր սրտով միացած չեն բուն ուխտապահ Հայոց. այլ Վասակայ հրապուրանքէ պղտորուած. և եթէ վարպետ խաղ մը խաղայ՝ կրնայ զանոնք իր զօրաց հետ խառնել, կամ պատերազմէ դուրս հանել. գիտէ որ իր նիզակակից սնցած Հայերն՝ այն օր Վասակայ հետ իրենց միամտութիւնը Պարսից ցուցընելու համար՝ աւելի քան զՊարսիկս քաջութեամբ պիտի կռուին, կամ աւելի առեւլութեամբ. ինչպէս որ կ՚ընեն թշնամացեալ բարեկամք։ Անոնք իրեն մէկ մէկ յոյս մեծ մեծ մխիթարութիւնք են. բայց քանի որ կու մտածէ թէ իր բուն թշնամեաց, թէ և քիչուոր այլ հաւատարիմ Հայոց՝ սպարապետն է Վարդան, այն ժամանակի (ըսէք ամեն ժամանակի) զօրավարաց օրինակ, և Պարսից թագաւորին անգամ՝ քաջութեամբն դէռ սիրելի և հարկաւոր անձ մը. Մուշեղեանց բոլոր պատրաս.

տուժիւնն և բազմութիւնն տարակուսելի կ'երևի, ու կու տագնապի։ Բայց ժամն կառուց կու մնաս-նայ. կու ժողովէ գնդապետները ու զօրավարնե-րը. կու յիշեցնէ իրենց պարտքը. Վարդանանց կարծութիւնը, քաջութեան և յաղթութեան վարձքերը, վատութեան և փախստեան պատիժ-ները և դատապարտութիւնը. և կու խաւրէ ի-բրաքանչիւր իր կարգին։

Այս բաները լսելու կարօտ չէին Հայք, բաւա-կան լցուած Վարդանայ, Ղևոնդի և Փրիսառոսի հոգւով, որ գեռ սրտերնուն մէջ կու խօսէր. կըր-նար ուրեմն իրենց սպարապետն այլ քիչ մը այն դիշերուան վերջին պահին՝ առանձնանալ իր վրա-նին տակ. նախ խօսիլ ընդ Աստուծոյ և յանձնել իր կեանքը և մահը, որոց երկուքն այլ ատուքիս կու փափագէր, և կու հաւատայր այն օր փոխել յանմահութիւն. ապա երկրիս վրայ հարկաւոր եղած բաներուն համար յետին կամքը աւանդել 'ի կտակ կամ 'ի սիրտ մտերմաց. մինչ սպասա-ւորքն և Թիկնապահք զէնքերը և զարդերը կու պատրաստէին։

Ահա հագաւ, հեծաւ, զուարթացաւ Վար-դան, արևէն աւելի ցանկալի և սպասելի այն օր՝ իր սիրելեացն. ամենուն աչքն՝ ոչ այնքան թշնա-մեաց բազմութեանը վրայ սոսկմամբ կու նայէին, որքան սիրով կու դառնային այն բարձրաստուր կա-թողիկէաձև չիկակարմիր վրանին, որոյ դրան վերև ոսկի արծուին թևատարած, չորս բոլորն կար-միր-կանաչ-սպիտակ դրօշներ հովէն ծալլուելով ու բացուելով՝ իբր ծափ ծափի առած կու հրա-ւիրէին զՎարդան. զՎարդան հրաւիրելով՝ վրա-նին եզելքը պար առած պահապան ու պատուոյ գունդն՝ նշան առին, և սկսան շարժիլ. յանկարծ վրանին փեղկերն վերնալով բացուեցան, Թիկնա-պահք և սպայք. հնձեալք և հեռեակք՝ փայլ

փայլ զէնքերով իբրև ամպէ մը սկսան գուրս թափիլ. և խումբ մը ծաղկազգեստ կայսրաս երիտասարդաց՝ 26 տարուընէ վերը՝ լռած ձայն մը ձգեցին, որոտալուր, ահաւոր, վսեմ և քաջագր ձայն մը, որ մեր յետին Արշակունի Արտաշէս թագաւորին սև օրէն վերը չէր լսուած.... Արքունական երաժշտաց գասն էր. որ այն օր 'ի Վարդան կուռ ճանաչէր Հայոց թագաւորը, առաջնորդը, յոյսը և փառքը. և երբ մեծամեծ ոսկեփայլ գալարուն և անգալար պզինձներն լայնաբալոր բերանին յերկինք չկած՝ իբրև յետ երկայն հառաչանաց՝ հայկական պատերազմի եղանակը հնչեցին, ահ, բոլոր բանակն, գետին ու լերինք թնգալով գոփելով որոտացին, Փառ Հայոց, Սուրբ սպարապետ. Վարդան գալ։ Եւ ահա յերևան եկաւ քաջն այն, Կարմիրն այն Վարդան, Ճառագայթներուն եռանէն գուրս վազող արևուն պէս, իր նախապապուն Մուշեղի նման՝ ձերմակ, ճարտուկ, ճախրասլաց, բարձրապինչ բարձրաքիռինչ ձիուն վրայ յարմարած՝ քան թէ հեծած կամ նստած. վասն զի ձին գրեթէ սանձի անկարօտ և տիրոջը տակ աւելի թեթևցած քան թէ առաջ՝ չես գիտեր կուխաղայ թէ կու թռչի. իսկ տէրն իբրև եզեկիէլեան անուի մը վրայ հանգչած՝ թեթեւութեամբ ամեն գի կու գառնայ, կու թռչի, կու հանի։ Ոսկեխառն արծաթակուռ սպառազինութեան վրայ՝ ձգած է մեծ ծիրանի ու ոսկեթել սամոյրօձիք վերարկուն, զոր արևակերպ ականակուռ ապիզակ կամ ճարմանդ մը կուրծքէն վեր կու միացնէ, օղակներէն յակուռնիներ կախուած, և ինչուան նռնագոյն կօշիկները կ'իջնէ. գլուխն արծաթախառն սաղաւարտ՝ ոսկեքանդակ գարգմանակաւ, որոյ կռնակէն գէպ 'ի գագաթն ոսկի արծուի մը կայ, և վարի եզերքը բոլորած պսակաձև թագ մը, անոր վրայ այլ պլլուած բոլոր

գերագոյն իշխանութեան նշանը՝ «Խարկանդ ը-սուած հանգոյցը, որոյ ծայրերն ցցուն ազարդք՝ ուսոց վրայ կ'ինջնեն։ Բայց արդարև տեսութեան արժանի մասն՝ այն հանգուցին ներքև էր. բոլոր-բակերպ, կարմրայտ գրեթէ ճառագայթարձակ, զուարթ գէմք մը. նման եգիպտական Արամազդայ, բայց Ամպրոպայինոյն աչքերով։ Խայտլուխ և խրն-ձորգլուխ ձողերու և նիզակաց վրայ՝ բաց յեռա-գոյն գրօշից կու ծածանին զանազան գունով և նշանով վառեր, Մամիկոնէից տէրութեան, Հա-յոց սպարապետութեան, Ցունաց սորստեալ-ութեան և Հայ Թագաւորի տեղակալութեան. զորս ուրախութեամբ ողջունելով 66,000 բերան՝ Պարսից անհուն բանակին և անճոռնի փղերուն ձայնն այլ կու խափանեն պահ մը։ Վարդան յա-ռաջ անցնելով իր սպայից գնդէն՝ մէկ մը ճերմա-կովը կու Թուչի բանակին մէկ ծայրէն ինչուան մէկայլը. ողջունելով, խրախուսելով, գրեթէ նոր ոյժ մը փչելով, և... նշան կու տայ սկսելու զպա-տերազմն։ Ահա մէկէն կու սկսին զէնք ձգել վեց բիւրքն Հայոց. ոմանք սպառազէնք (այսինքն բո-լոր զրահ հագած), ոմանք մերկք (այսինքն ան-զրահ), և ասոնք են աղեղնաւորքն. ոմանք վահա-նաւորք. հետևակք՝ նիզակաւորք և սուսերա-ւորք. աւելի շատն հեծեալք ծանր կամ թեթև զրահով։

Ե

Հիմայ Թողունք որ քիչ մ'այլ խօսի Եղիշէ. «Իրրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան » կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բար-» կութեամբ զայլայանային, և գազանացեալ զо-» լութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան. » և ամբոխ ազազակին յերկոցունց կողմանց՝ իր-

» րև 'ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գոր-
» ծէր. և հնչումն ձայնիցն զքարանձաւս լերանցն
» շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտիցն և 'ի
» փայլիւն պատենազէն վառելոցն՝ իբրև նշոյլք ճա-
» ռագայթից արեգական հատանէին։ Նա և 'ի
» բազում սուսերացն շողալ, և 'ի ճօճել բազմա-
» խուռն նիզակացն՝ իբրև յերկնուստ ահագին
» հրաձգութիւնք եռային։ Քանզի ով իսկ է բա-
» ւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայ-
» նիցն. որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթ-
» մունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ-
» հասարակ խլացուցանէին։ Անդ էր տեսանել
» շատապ մեծի տագնապին և զաղէտս անբաւ առ-
» բակուսանացն երկոցունց կողմանցն, առ 'ի յան-
» գուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քան-
» զի թանձրամիտքն յիմարէին, և վատասիրտքն
» լքանէին, քաջքն խիզախէին, և նահատակքն
» գոչէին »։...

Այս մեծ ու բաղդավճիռ ճակատամարտս, ուր 300,000 և աւելի անձինք կռուեցան գրեթէ յառաւօտէ մինչև յերիկուն, որչափ նշանաւոր է սաստկութեամբն՝ նոյնչափ այլ քիչութեամբ մեռելոցն. երկու կողմն մեկտեղ հազիւ 4 կամ 5000 մարդ ընկան. որոյ պատճառ, մեկ մը երկուքին այլ հմտութեամբ և վարպետութեամբ շարժելն է. մեկ մ'այլ բանակաց մէջ տեղ գետ մ'ըլլալն, որով երկայն ատեն հեռուէն նետաձգութեամբ և ուրիշ հեռաձիգ զէնքերով կռուէին. Հայք աղեղնաւորութեան մէջ շատ վարպետ էին, որով աւելի յաջողեցան Պարսից վրայ, բայց թուով նուազ ըլլալով՝ կրնային յօգնիլ սուանց քշելու Պարսիկները. իսկ ասոնք թէ և բազմաթիւ՝ չէին համարձակեր Հայ աղեղանց դէմ գետը անցնիլ. մանաւանդ առանց փղերու՝ զորոնք գժուար էր շարժել։ Բայց կամաց կամաց երկու բանակն այլ

սկսան մտանալ 'ի գեռանգերքը, և հարկ էր որ մեկն կամ մեկայն անցնի գիմացի կողմը իբր յաղ-թող. և Հայք առին այս առաջին յաղթութիւ-նը։ Իրենց երկրին գար ու փոս գիրքն՝ զիրենք չարքաշ և փորձ ըրեր էին. յաջողութեամբ ան-ցան ջուրը, մինչ Պարսիկք սարակուսեալ կու վխտային եղերքը. Հայք ջրէն ցատքելով առաջին թափով գիմացի եղողները քշեցին. բայց իրենք այլ սկսան Պարսից բազմութեան ոյժը իմանալ։

Հոս գրեթէ նորէն սկսաւ պատերազմն, և բազդն յերևան գալ։ Բանակաց արևմտեան թևքն հա-ւասար իրարու կ'ընդդիմանային, և գրեթէ ին-չուան վերջը սակաւաթիւ Հայք՝ Իոզեբէնայ գէմ կեցան, ինչուան որ իրենց երկք գնդապետ զօրա-վարքն այլ՝ քաջապէս ընկան նահատակուեցան գաշտին վրայ, Խորէն, Արսէն և Ներսեհ։ Մինչն թևքն այլ նոյնպէս սասսիկ ճգամբ և գրեթէ հա-ւասար կու կռուէին. իսկ արևելեան թևերուն, ուր Հայք Հայոց գէմ էին, Վասակայ հրապոյրն զօրացաւ, և Վարդանանց կողմի թևն սկսաւ սբ-կարանալ. այն չփոթութեան առեն գունդ մը անկէ զատուելով՝ փախաւ կամ պատերազմն գուրս ելաւ. այս բանս բոլոր պատերազմը կեր-պարանափոխ ըրաւ։ Աւելի մեծ չփոթութենէ ազատեց իր բանակը՝ արթուն և երգաշահաս սպա-ռապետն, որ առնելով ձախ թևին ետ քաշուիլը, վերջապահ ջոկով մը հասաւ օգնութեան, նորէն կարգի մտուց հաւատարիմները, և ինքն առաջ անցնելով ընկաւ Պարսից աջ թևին վրայ, յո-րում՝ ուխտազանց Հայք, և հիւսիսային ու ա-րևելեան ազգաց գունդեր կային, և քշելով տա-ռաւ ձգեց անոնց միջին թևին և փղակու

և գէպ յարևելք քշեց. որով Պարսից երկու շփոթեալ շարժեալ գնդերն այլ ընկան իրարու վրայ, ու Վարդանայ և Վահանայ սուրերուն մէջ. և եթէ սանիք չառուր ըլլային, կամ նոյն առեն վերջապահ գունդն այլ իրենց օգնութեան հասնէր, թերևս բոլոր Պարսից բանակը պղտորէին. վասն զի Վահանայ և Վարդանայ բախմունքէն՝ անվանելի Մասեան գունդն անգամ պատառուեցաւ, 140 անմահ Պարսիկ՝ Հայոց սպարապետին և Արծրունի նիզակակցին սուրերով մահացան, մեկայլներն այլ փախչելու վրայ էին. և ահա վարած կորած Վասակայ շար գլուխն տեսնուեցաւ իր յետ քշուած գնդին մէջ. Վարդան արդար վրէժխնդրութեամբ գարձաւ այդ անիծապարտին վրայ, որ իր թելադիր սատանային սիրած օձուն պէս՝ սողոսկելով սպրդեցաւ, փղերուն մէջ փախաւ պահուըտեցաւ։ Թերևս Վարդանայ պէտք չէր այնչափ յառաջ նետուիլ կամ հոս ուշանալ. բայց ինքն արդէն ըլլալիքը գուշակելով, աւելի երկնից նահատակ քան յերկրի յաղթող ըլլալ փափագեր։ Պարսից սպարապետն Մուշկան՝ որ կենաց և մահու, յաղթութեան կամ յաղթուելու ժամը հասած կու տեսնէր, որչափ որ տագնապեցաւ 'ի Վարդանայ, անոր շատ յառաջելն այլ իրեն օգուտ առաւ. տեսաւ որ անոր և Մնացեալ Հայոց միջին ու ձախ թևոյն մէջ՝ մեծ միջոց կայ. իր չփոթեալ զօրաց դասերը և Մասենիկ գունդը ժողվեց սրատանդնց, ու մաս մը այն հեռու Մնացեալ Հայոց վրայ դարձուց, մաս մ՝այլ Վարդանայ և Վահանայ դէմ կենալու. և ասոնց եռանէն գալու և մէջ փակելու՝ պատուէր տուաւ շուտով, փողեց կանչեց Արտաշրի՝ որ փղերը առաջ քշէ. ինքն այլ իր յատուկ գնդով յառաջ անցաւ։ Նա այսպէս երկու երկք կողմէ պատելով հոն, ։ Կորովին Վարդան իւրովք քաջ

» Նիզակակիցքն՝ ոչ սակաւ նախաձիրս 'ի տեղւոջն
» գործեաց. յորում տեղւոջ և ինքն իսկ արժա-
» նի եղև առնուլ զկատարեալ նահատակութենն
» պսակ »[1]։ Վարդանայ հետ հոն պատկուեցաւ
իր պատուակից և նիզակակիցն Վահան Արծրու-
նի. այս երկու պարագլխոց պէս՝ իրենց գնդից
ինչուան վերջին շունչը առաջնորդելով և կռուե-
լով ընկան մեծափառ քաջութեամբ աջ թևին
երեք զօրագլուխքն, զոր վերը յիշեցինք. ձախ
թևին գնդապետն այլ Տաճատ Գնթունի. այս
թևէն և միջին թևէն երկերկու զօրաւոր զօրա-
գլուխք ապրեցան. անոնց տեղ ուրիշ զօրապետ
իշխանք ընկան ԱՐՏԱԿՆ ԳԱԼՈՒՆԻ, ՀՄԱՅՏԱԿ ԴԻ-
ՄԱԳՍՆԱՆՑ, ՎԱՀԱՆ ԳՆՈՒՆԻ և ԳԱՐԵԳԻՆ ՍԻՐՈՒԱՆ-
ՑՑԵԱՆ, որով յայտնի եղաւ՝ որ թէ Վարդան և
թէ իր հաւատարիմ նիզակակիցքն՝ մաքերնին
դրեր էին՝ կամ հալածել քշել զթշնամին, կամ
ինչուան վերջը պատերազմելով մեռնիլ. և ա-
րեամբ քաւել բոլորովին իրենց սուտ ուրացու-
թեան յանցանքն այլ։ Խոր համար երբ Պարսից
զօրքն մտան 'ի Հայս, Վարդան հրաւէր խաւրեր
էր իրեններուն՝ ոչ այնքան 'ի պատերազմն՝ որ-
քան 'ի մարտիրոսութիւն, ըսելով. « Գունդ բա-
» զում հասեալ գայ, բերելով աստուածասիրաց
» պսակս երկնաւորս. արդ որ ոք ցանկայ առնուլ՝
» ահապարեցէք, զի մի վրիպեսցի ոք և զչանայ-
» ցէ.... Եւ զայս լուեալ ճշմարտասիրացն և զան-
» մահութիւն սիրողացն՝ գոչդեցան, ելևելս առ-
» նելով զմիմեանսիք, որպէս հօտք որ 'ի ձայն աղի
» փուութայցեն զկնի հովուաց »[2]։ Իսկ վերջապահ
գնդին մեծ զօրագլուխքն Արշաւիր և Համազաս-
պեան՝ պատերազմին սաստիկ խառնուրդէն հե-
ռու ըլլալով՝ իրենց պաշտօնը կատարեցին. յետ

1 Եղիշէ։ 2 Ղազար Փարպեցի։

նահատակութեան արժանաւորաց՝ և երկոյին վրայ հանելուն, եւ քաշեցին ուխտապահ զօրքերը, որ իրենցմէ յանդուգն և յառաջագէմ վարիչներն կորուսեր էին. ուստի ոմանք այս երկու վերջապահ զօրագլխաց գնդին խառնուեցան, ոմանք այլ ցրուեցան զանազան կողմ, կամ բերդերու մէջ քաշուեցան։ Տասն պարագլուխ նահատակեալ իշխանաց հետ, իւրաքանչիւրին ցեղէն (բաց յԱրծրունեաց) 276 կամ 286 կըտրիճք ընկան բուն պատերազմին առեն. որոց գրեթէ կէսն, 137 հոգի Վարդանայ հայրենակից՝ տիրասէր Մամիկոնեանք էին, մնացեալոց մէջ բազմաթիւնքն են՝ Արտակայ տոհմակից Գալունիք, 57 հոգի։ Ասոնցմէ դուրս են Արծրունիք, որոց թիւն թշնամութեամբ ընջուած կ'երևի. նոյնպէս նշանակուած չեն ուրիշ ցեղերէ և թագաւորական գնդէն մեռածաց զատ զատ թիւերն. բայց առաջիններուն հետ մէկտեղ բոլոր պատերազմին մէջ ընկողքն էին 696 հոգի. ասոնցմէ զատ քանի մը հարիւր այլ նոյն օրը ձեռք ընկան և փղաց ոտնակոխ եղան, կամ ամրացած տեղերնէն բռնուած սպանուեցան. և ասոնցմով ու առաջիններով միացումար նահատակելոց թիւն եղաւ 1036 [1], զատ 'ի տասն նախարարաց։ Իսկ թշնամեաց կողմէն պատերազմի մէջ ընկան ինն մեծ իշխան և 3544 մարդ. որ է ըսել. եռապատիկ կամ քառապատիկ աւելի քան զՀայս։

1 Վարդան պատմիչ 1252 հոգի կ'ըսէ. անշուշտ պատերազմէն ետքը բերդի մը մէջ գտնուած ու սպաննուածներն այլ մէկ տեղ սեպելով։

Զ

Ի՞նչ եղաւ այս մեծ և հռչակաւոր պատերազմին հետևանքն։ Հայք՝ բարոյապէս յաղթեցին, Պարսք աշխարհօրէն։ — Վասակ և Պարսիկք նախ սկսան առլի հնարքները բանեցընել. ուխտապահ Հայք այլ իրենց հնարքը. ամենք բերդերու մէջ ամրացան, ամենք այլ կառուած Պարսից դէմ կեցան, ինչուան անոնց սահմաններն այլ յարձակելով. և սարսեցին զԹագաւորս՝ որ զիրենք ազատ թողու իրենց սուրբ կրօնից պաշտաման և իրենց հայրենի սովորութեանց մէջ։ Ցանձն առաւ և թողուց Թագաւորս. և որովհետև քահանայք և գրիչներ նախարարք բազմիւ էին առ նա ընդդէմ Վասակայ, կանչեց զանոնք իր գուռը, զոմանս կամաւ և զոմանս բռնի. և բոլոր Պարսից սանեն առլի քննելով՝ յանցաւոր գտաւ զպարեցապարս իշխանն Սիւնեաց Վասակ. և գտաւապարանց մահուան բանի, ուր և չարաչար ցաւերով մեռաւ։ Քահանայից գլխաւորները Ս. Ղևանդեանք, նահատակեալ առաւ (յամի 453). իսկ Հայոց նախարարները բանեց՝ ի Պարսկաստան, ուր և մեացին զանազան պատճառաւ 15 տարուց չափ. յետոյ Պերոզի Թագաւորութեան սանեն արձակուեցան գարձան իրենց հայրենիքը. ուր կային գեռ սեցած ուրացող Հայերէն. և նորէն սանց գրգռութեամբ սկսան Պարսք հակառակիլ ուխտապահաց. որոց գլուխ կեցաւ Վարդանայ արժանաւոր եղբօրորդին Վահան. և քանի մը տարի պատերազմով յոգնեցնելով Պարսից զօրավարները. վերջապէս սարսեց և հաւանեցուց զԹագաւորը՝ որ թողու զՀայս ազատ իրենց կրօնից և հայրենի սովորութեանց և իշխանութեանց

մէջ. և նոյն ինքն Վարդան եղաւ բոլոր Հայոց վերակացու իշխանապետ և իբր փոխարքայ, մարզպան կոչմամբ, յետ 38 տարուոյ պատերազմին Վարդանանց։

Ահա այս եղաւ հետևանքն Շաւարշանի երրորդ հանգիսին։ Այսպէս կատարեց Վարդան իր օր մ'ըստծը՝ Պարսից Թագաւորին և բոլոր արքունեաց առջև, թէ այնպիսի գործ մը պիտի գործեմ՝ որ բոլոր աշխարհք պատմելի մինչև յաւիտեան [1]։ Յիրաւի, մեր նախահօր Հայկին օրէն և իրեն Թոռնորդւոյն Պեզէցիկն Ալուայի օրէն ինչուան յարքայորդին Փորոս և ինչուան 'ի քաջն Լիպարիտ, զօրավար Զ Լեւոնի, վերջին Թագաւորին Հայոց, Հայ իշխանաց և զօրավարաց մէջ՝ ամենէն սիրելին և ոնոնելին մեր Հայոց ազգի խորանաց, սրտից և բերանոց մէջ՝ է Կարդն Վարդան, որդի Համազասպայ Մամիկոնէից տեառն և Հայոց ոստարապետի և երբեմն իշխանապետի, Թոռն մեծին աստուածապատիւ հայրապետին Սահակայ Պարթևի. որոց քաջութեան և արքունեան գրկաց մէջ ծնաւ, սնաւ, գործեց ու մեռաւ. պատուաբաշ կենցաղն՝ ոչ միայն իր ազգէն՝ ինչուան Թագաւորի տեղակալութեամբ կամարքունեի տան պահպանութեամբ, այլ և 'ի Յունաց և 'ի Պարսից. բոլոր Հայոց ոստարապետ ըլլալով քսան տարի, ազգային և օտար նշանաւոր զօրավարաց շատէն վեր անցաւ. 42 մեծ Ճակատամարտ-

1 « Յայսմ հետէ այսպէս կամք են (իմ), զանամ զի թէ » յայժմ գործեալ ինչ իցէ, և ոչ արժանի անուան և գո- » վութեան. յայսմ հետէ հնարիմ ամենայն զօրութեամբ » և ուժով օգնականութեամբն Աստուծոյ, գործել գործ » այնպիսի, զոր ոչ միայն առաջի մեր Աբեաց, այլ և 'ի » Կայսեր գրանն և յայլ ազգս՝ պատմեցի համբաւն » այն, մինչև յաւիտեան »։ — Ղազար Փարպեցի։

ան մեջ յաղթող ելանելով, զոր աւելի Պարսից ծառայութեամբ մեջ ըրած էր զանազան աշխարհքներ, ինչուան Խորասանի և Թուրքաստանի անապատին մեջ Մէրու կամ Մէրվիրուա գեղեցիկ վրայ, ուր նոյն ինքն Ցաղկերա Թագաւորն ականատես ըլլալով անոր քաջութեանը, և ուրիշ գործքերն այլ լսելով, հիմա իր զօրաց կոտորածէն և նախարարաց սպանուելէն աւելի՝ Վարդանայ մահուան վրայ ցաւեցաւ, և գտաստիճանեց զՎասակ իրրև պատճառ անոր մահուանը. և բոլոր արքունեաց առջև կ'ըսէր, « Թէ զայնպիսի քաջ և պիտանի և » զվասակաւորն մեր՝ զՎարդան.... և կայսր » (Ցունաց) և կամ Հունաց արքայ բռնութեամբ » յինէն հանել կամէին, (ես) ամենայն Արեաց » (Պարսից) ուժովս կռուէի, և չտայի հանդչել, » մինչև այսրէն յիս հանէի »։ Զանծալի վկայութիւն և արժանաւոր համարմունք. բայց ափսոս քեզ ով կոյր Թագաւոր, որ անխոհեմութեամբ կորուսիր այնպիսի պիտանի մարդը, զոր միայն իր Հշմարիտ սիրելի հայրենիքն և եկեղեցին անկորուստ պահեն մինչև ցայսօր։

Վարդան նահատակութեանն ատեն գոնէ յիշատակեան պիտի ըլլար. իրեն ժառանգ արու զաւակ չթողուց, անոր համար Մամիկոնէից տերութիւնն անցաւ իր Հմայեակ եղբօրը. որ նոյնպէս քիչ ատենէն նահատակուելով, յաջորդեց անոր որդին հռչակաւոր կարիճն Վահան, յետ գարձին 'ի Պարսից։ Բայց գուսան մը ունէր Վարդան՝ իր հօրը և իր գեղեցկութեան պատճառաւ կրկին անուամբ կոչուած, Վարդէնի և Շուշանիկ, որ Վրաց բդեշխին կամ Գուգարաց նահապետին Վազգենի տիկին եղաւ, և անոր անդուլ ձեռքով նահատակուեցաւ, երկայն և սքանչելի համբերութեամբ և իմաստութեամբ, յայտնի ցուցընելով որ գուսան է Վարդանայ և Թուռնեայ Ս. Նահա-

կայ, որոց փառք մ՚այլ աւելցուց, մեր եկեղեցւոյ առնելի վկայութեանց պարծանք ըլլալով, և ցուցած արութեամբն՝ ոչ պակաս քան զքաջամարտիկ սուրբ գունդն Վարդանանց։

Վարդանայ անգին մարմինը, անշուշտ հաւատարիմ Մամիկոնեանքն՝ չթողուցին աւար Պարսից, այլ իբրև պանծալի նշան և գրօշ հայրենեաց՝ քաջաբար վերուցին։ Նչխարքն զանազան տեղ ցրուեցան, և յետոյ մինչև՝ ի Համէն, ուր կու յիշուին և՝ ի սկիզբն ԺԶ դարու։ Բայց Ոգին հայրենեաց, հաւատարիմն Հայաստանի, որ իր քաջանշան որդւոց վարձու և անմահութեան մեկ մեկ անանկալ և վսեմական բան կամ անուն կու հնարէր, յարիշտակեց Վարդանայ նչխարաց մէջէն այն թանկ գլուխը՝ որ զինքը գնելով բոլոր Հայ աշխարհին և եկեղեցւոյ վրայ՝ աւելի բարձրացուց զանոնք, և այն ջաջուռ աչը՝ որ երեսուն տարի արևելից և արևմտից մէջ քաջագոյն և սրբագոյն վարիչ էր բանակաց, յազթութեանց վրէժառահատ, և պակաց հաւաքող. առաւ գրաւ՝ անոր մարմնով մայրենի նախահաւուն և հոգւով հօրն՝ հանգստարանին մէջ, Ս. Լուսաւորչի նշխարաց քով։... Սեպուհ լեռան գագաթան սարերուն մէջ միաբանեցան երեք վեհագոյն նչխարք և մեծագոյն յիշատակք և աստուածապատան նահատակքն Հայոց. ԳՐԻԳՈՐ, ՅՐԴԱՏ, և ՎԱՐԴԱՆ։

Է

Ս. Վարդանանց վրայ երգուած գանձ մը լսենք, որ բաղմաց անծանօթ է.

«Որ զամենայն յամենայնի ընուս առատապէս, տարաբեր զիմանալի զօրս վերինս քեզ՝ ի հաճութիւն. հաճեցար և՝ ի մարդկանէ առնուլ սպա-

սաւորս և փառաբանիչս անուանեալ քում սրբոյ, ընդ որս և 'ի շառաւիղէ մերոյն համայնից հօրն լուսոյ՝ զՓաջն Վարդան, հանդերձ իւրայովքն. զորս կարգեցեր 'ի զօրս վերինս գերապանձ լուսով զարդարեալ. ընդ որս Աստուծոյ զօրացն յայտնապէս տեսեալ 'ի վերուստ խլեալ պսակ լուսոյ բազմաբեալ։ Ընկալ Տէր, զազաչանս միաբան ժողովելոցս քեզ 'ի հաճութիւն. ազաչեմք։

Վսեմական վիպասանութեամբ պատմաբանի ձեր գործ հանդիսի, Փաջդ Վարդան, արի, երջանիկ, հանդերձ միախումբ ընդ քեզ վառելովք, թիւ հազարաց և երից տասանց հանդերձ վեցեկի թուով. լիալիր սիրով վառեալ 'ի սէրն Աստուծոյ. հանճարական ձեր խմաստութեամբ, մաքուր անձամբ, մաքրափայլ մտօք, մաքրազարդից գոլ հանդիսակից, արժանաւորք յաւէտ գովութեան, տիրապէս հաճոյք Աստուծոյ։ — Ընկալ, և այլն։

Սատայք ձեզ անուն քաջութեան յերկինս և յերկրի, քաջ զօրականք, ընտրեալք յԱստուծոյ. որք ըստ հրամանի փրկչին Յիսուսի սպառազինեալք՝ մեծաւ հաւատովք, բարձեալք ըզխաչն սէրունական, յուսով հեռևեալք զհետ խաչելոյն, սուսերը Հոգւոյն, բանիւ բարձրելոյն ամրացուցեալք զմեզս իմանալիս, կրկին մարդով կրկնակի վառեալք որպէս զքաջք 'ի պատերազմի, վանեալք զդունդս լեգէոնաց հակառակորդացն Ճշմարտութեան։ Ընկալ, և այլն։

Էական լուսոյն հեռևեալք՝ յերկրէ յերկինս ըստ կազմեալ, վասն Ճանապարհին Ճշմարտութեանն՝ Ճամբարապատ Ճանապարհ հորդեալք, զխարդախութիւն ունայնախոհացն՝ արդարութեանն ընտրանաւ յայտնեալ, տուր երկայր ունելոք բարձեալք, վրիժապարտ ազգին վաստակեր 'ի մաքառումն պատրասական. զծաղկածին

դաշան Վասանական՝ [1] կարմրածազիկ արեամբ ձեր ներկեալ, արդասաւոր ձերով հանդիսիւ զարդարելով զբամբիշ Քրիստոսի։ Ընկալ, ևն։

Սուրբք և սիրեցեալք և ճշմարիտ զօրականք ընտրեալք, ըստ հաճոյից Տեառն պատրաստեալք, զբարիդք մարան մարտուցեալք՝ ի յաղթական ձեր պատերազմի, զբարիոնն ձեր մրցանակի արժանապէս յանձին ընկալեալք. որպէս զքաջ յաւէտ նահատակք արիական ձեր պատերազմաւ թեւակոխեալք՝ ի վերնասիոնն՝ ի կենդանւոյն քաղաք Աստուծոյ, ի պօղոսեան մայրն առաքելոյ, քաղաքակիցք գտայք հանդիսի. բարեխօս լերուք առ Տէր վասն ազնուազգս դիշատակս ձեր, զօրականք ընտրեալք։ Ընկալ, և այլն։

Այս գանձիս կամ քարոզիս հեղինակն է Մովսէս ոմն, ինչպէս որ անագլուխ տառքն ցուցընեն, որոյ առաջին և վերջի տներն աւելորդ սեպեցինք հոս գնել, անոնց մէջ Վարդանանց յիշատակութիւն չըլլալով. օրինակն 620 տարուան ձեռագրէ մը առնուած է, որ հեղինակին բաւական հնութիւնն այլ ցուցընէ։

1 Ի՛երեւի թէ հեղինակն կամ գրողն չփոթմամբ կույիշէ հոս, Ս. Գրիգորիսի նահատակութեան գալաք Վրթանէն, փոխանակ ըսելու Շապուհի կամ Ապրշահի։

ԺԱ.

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

ԵՒ

ՍԱՀԱԿԴՈՒԽՏ

21 Յուլիսի 736.

Ա.

Հրոտից ամիսն է. արեւն՝ առիւծ աստեղատան մէջ արդարև հրեղէն ճառագայթներովը՝ իբրև առիւծային թաթերով կու լլկէ կու տոլորէ զերկիր։ Հայկայ հրաշաձնակ աստղն այլ (Շնիկն) սկսած է բարձրանալ. ամեն տեղ տաք, ամեն բան կրակ։ Ո՞ւր են այն Հայոց ձիւնեղէն սառնապատ լերինքն. անոր բեւեռային կերպարանքն՝ հիմա յայրեցեալ գօտի փոխուեր է։ Երկու հակագէմ կլիմայք կ'երևին մեր երկրին մէջ. սաստիկ ցրտութիւն և սաստիկ տաքութիւն։ Ի՞նչպէս բնակելու է սանկ երկրի վրայ։... Մեր հարքն, և մեր եղբարքն անգամ, շատ տեղ գետնի վրայ չէին բնակեր ուրիշ աշխարհաց բնակչաց նման, գոնէ տարուոյն երկու ծայրայեղ յեղանակաց առեն, այլ անկէ վար կամ անկէ վեր. այսինքն, ձմեռն՝ երկրին երեսաց տակ, կէս գետնափոր տանց մէջ, նման իմն հողաթմբիր կենդանեաց. իսկ ամառն՝

այլ աւելի վայելչագէս, երկրիս սովորական երեսէն վեր, օգասահման կենդանեաց և թռչնոց հետ. կամ լերանց և սարից վրայ, կամ ծառոց և ձեռակերտ բարձրաւանդակաց վրայ, ձորերու ցիցերու վրայ հաստատելով գարպասներ և ննջարաններ։ Սոնք են Հուլ և Հուլանոյ և Հուլեյ գեղջն Հայոց. որ Թորգոմայ օրերէն 'ի վեր մինչև ցայսօր սիրելի և բազմալի են 'ի Հայաստան և Հայաստանի եզերքը բնակող ազգաց. և ինչ որ այսօր Ռուսաց և Օսմանեանց իշխանաւորքն և զօրապետք կ'ընեն երկրին բնիկ ժողովրդեան հետ՝ անոր բարձրաւանդակաց վրայ ամառանալով, զնոյն 4000 տարի առաջ այլ Բաբելոնի և Նինուէի Թագաւորք և իշխանք. մեր Թագաւորաց, իշխանաց և ռամկաց հետ։... Ո՞ւրախ այլադէմ, այլախօս, այլակամ ժողովուրդք, զորք և տեարք ամառնացան բնակեցան հոն 'ի հովս Հայոց, և անցան գնային, չատերն անդարձ. իսկ երկիր դարձեալ նոյնպէս իր ամարանոցը կու պատրաստէ. նոյնպէս կու բուսնին ծառք և ծաղկունք, նոյնպէս կու գան ծիծառունք և կառունկք. նոյն հովք և նոյն հովանիք Հայոց. և նոյն.... այո, ըսենք կիսամաղձիկ կրիւք, և նոյն սերունդք բնիկ նախնեաց, դեռ ևս վկայք երիթևեկի այլազգեաց, և վայելողք հովոյն և զովոյն։

Օրհնեալ ըլլան հովքն Հայոց. հովք հայրենեաց, զոր 'ի մխիթար և 'ի մռաացումն երկայն ձմերան՝ պարգևեց մեզ դրախտին անկողն, Ամարջապետն. օրհնեալ հովն և զովն՝ որ 'ի ցած ձորերէ և դաշտերէ վեր կանչելով ժողվելով զՀայաստանեայս՝ երկրին այն կոնաձև կամ սափաձև բարձանց վրայ, իբրև 'ի վերայ սեղանոյ բնութեան, բնաբար այլ կ'ազդէին անոնց՝ արարչագործ մեծութիւնը, վսեմութիւնը, գեղեցկութիւնը, զանազանութիւնը։ Կ'առողջանային կ'ու-

ժողովային կու զուարթանային միտք և մարմին. թագաւորն կու հպարտանար, և ոչ անիրաւէր, որ Աստուած իր իշխանութեան տակ ձգեր է այն հովասուն սահմանները, և անոնց աշխոյժ ծընունդքը. զինուորք և ազատազունք հոն կու զօրացընէին, թեթևցընէին, ձկուն և տոկուն կ'ընէին իրենց կորիճ անձինքը, սարէ սար՝ այծեմանց և ցռուց նուէէ ընկնալով. յորս. հովիւք՝ հոն կու ծաւալէին երկրին և երկրագործութեան կենդանի հարստութիւնը և օգնութիւնը. արուեստաւորք և ռամիկք՝ օրական և ամսական աշխատութիւնները հոն կու հանգչեցընէին. բանաստեղծք և հոգեւորք անգամ, պաշտօնեայք Տրի և Քրիստոսի, պարապողք ուսմանց և կրօնից, հոն այն հովերուն մէջ գոնէ ժամ ժամ զովանալով, աւելի յատակ մտք և պայծառ տեսութեամբ կ'ելլէին բարձրագոյն տեղուանք, 'ի կաճառս հաւատոց, 'ի պարս բանաստեղծից, յերգս հրեշտակաց. և իրենց հոգեշունչ Օրհնութիւնները և Հմբարձիները երգելով՝ կ'իջնէին, եկեղեցւոյն Շարակոնը և Մանրուսմունքը՝ նոր նոր եղանակով հարստացընելու. և ամառնային հովանոցներու ազգած երկնախառն հոգին և շունչն՝ զարմանալի այլակերպութեամբ ինչուան խորագոյն ձմերան խորանիստ տաճարաց մէջ հնչեցընելու, և ձայնիրին հասցընելու յետ հազար տարիներու՝ մինչև մեզի այլ Օրհնեալ ուրեմն միանգամ այլ ըսենք, այն երկնաշունչ Հոգն Հայոց, որ այսպէս հոգեւորեցին մեր հարքը, և անոնց յարգարեալ շնչոմն՝ զմեզ այլ կու հոգեւորեն այսօր։...

Ա'կ. Հայկակ, ելենք այսօր մենք այլ այն բարձրանազ տեղերուն, հայրենեաց գարերուն, Հայոց հովերուն. Սիւնեաց զովերուն վրայ. այն տեղուանքը՝ ուր Բաբիկ՝[1] ազատեալ 'ի պանդխ-

[1] Հայր ուրացելոյն Վասակայ։

տուԹենէ Պարսից՝ ուրախուԹեամբ որսի կ'ելնէր, « Խնդալով խաղալով 'ի վերայ սովորական » Թաաերացն և ինչքսից խրախաբանացն, 'ի լե- » ռինս որսասուն և բազմաջոլիր վայրացն, 'ի լե- » ռինս Սիւնեաց[1] »։

Բ

Այս խաղէն ինտուումէն և որսէն աւելի պիտի սխորժիս անշուշտ, երբ քիչ մը յօդնուԹիւն առնելով, և աչքերդ բնուԹեան բարձրագլուխ և խորածոց գեղեցկուԹեանց վրայ պաբացընելով Թողուս միտդ վեր վար ժուռ գալու, և յանկարծ լսես վերը յիլեալ պաչտօնէից մեկուն ձայնը, որ իր աշխիՀանին յարմար և իր բնատուր շնորհաց համեմատ՝ բարձրագոյն մտածուԹեանց մէջ Թըռչըռելով վերանալով, Սիւնեաց Սիոնի լեռնէն կու սլանայ Երուսաղէմի Սիոնը, անկէց այլ անգին, հեռու, խոր կ'իջնէ մինչև յատուն Կարմիր Մովուն. հոն կու պտըտի մեծ նախամարգարէին հետ, կու գիտէ ծովակըռուր գաւազանին հրաշքը, կու լսէ անոր հրաշալի Օրհնեսցուքը. և իր բարձր հանՀարոյն վրայ վստահացեալ՝ աւելի վեհագոյն անձին (Գրիգորոսի) շնորհաց, կու փորձէ աւելի հոգիացընել հայացընելայն հրաշալի օրհներգը. և սլանալով իր հայկական հովոց վրայ՝ կու սկսի նուագել.

« ՅաղԹական քեզ օրհնուԹիւնք, Տէր. որ ըզխորոց ծովուն հերձեր ջուրն. զի 'ի նմա զբռնաւորին ջաղխեցեր զգլուխ. և զարգելեալսն՝ 'ի ձեռն խաչի քո՝ վերածեր 'ի կեանս։

1 Սոեփ. Ուռպելեան։

ահա կու տեսանեմք՝ որ իբրև տեղեակ այս տեղեր-
բուս՝ անսովոր և անմարդաձայն ձամբով մը կու
գայ, Աւագ աղբեր ընթացքը կու բռնէ, անոր
հովանաւոր ափանցը ընթացիւք. քաղուածքն ե-
բաց, հաստատ և իբր սպառնալից. նոյնը կարդ-
ծել տան գէմքն այլ. որոյ սեռթել շրջանակին
վրայ հազիւ քիչ մը արծաթագոյն խառնուածք
կ'երևնայ. բարձրակամար յօնքն քիչ մը իրաբ
մտեցեր են լայնաբոլոր ճակատին կեդրոնին տակ.
երեսքն չոր կարմրութեամբ մը կու վառին. բայց
քանի կու յառաջէ՝ գէմքն կու թուլանան, հան-
գարտութիւնն կ'աւելնայ. կարծես թէ ոգեին
տակ ցաւոքաղող մորեխաց, գլխուն վրայ կախուած
ճպռանց աղաչական ճռճռմանց ողորմելով, և կա-
նաչ հովանւոյն պատռուածոց միջէն երևցած
կտոր կտոր երկնից կապոյտներէն խրատուած՝
կռնձած ճակատը պարզելով. խարշափուն տե-
ղեաց միջէն սուլուլիկ հովերու շնչմամբն սրտա-
բացուելով, և ջրոյն մանրաքրքիջ կարկաջանաք
հրաւիրուած, քաղուածքը կու ծանրացնէ, կու
գաղրի. կու նայի ծառոց և ալեաց վրայ. կու ձայ-
նէ իր փոքրաւորաց և սպասաւորաց յառաջ գալ,
և հոն իր վրանը կանգնել և հեռանալ. և երբ
զինքը իր ցանկալի առանձնութեանը մէջ կու
գտնէ, վերարկուն վար դնելով, կ'երթայ աղբիւ-
րին յատակ հոսանաց տակ տաքութիւնը բժշկե-
լու. կու զովանայ, կու ընկղմի, և աղբերափանց
մօտ յարմար լայնամիջոց ուռենի ծառ մը տես-
նելով՝ կ'առնու իր փայտաշէն հանգստանոցը, ա-
մառուան հովոցի անկողինը, կու հաստատէ այն
կանաչ-վարագոյր հովանեաց տակ, և զԱստուած
օրհնելով՝ անոր բնաբուն բնազարդ տաճարին
մէջ, հանգիստն 'ի քուն կու փոխուի, մտածու-
թիւնքն յերքաղ և 'ի տեսիլս։... Արդեօք կու
տեսնէր քիչ մը վերջը ըլլալիքն այլ. երազական

տեսիլքներէն բացայայտ ճշմարտութիւնէ մէջ մըտնել ու մնալն առանց արթննալու։... Ո՛վ սիրելի և սոսկալի դիպուածք, և գրեթէ անմտան այսպիսի անմտութեան մարդու մը համար։

Դ

Բայց յառաջ քան զդիպուածն՝ քիչ մ՝այլ ճանչցէր, Հայկակ, այս վանեմամիտ մարդուս կեանքը և գործքը։ Վսեմ մտացն յարմար կամ թէ առիթ իսկ այնպիսի մտաց՝ վանեմական ծագումն ունէր. Հայոց մայրաքաղաքին (ուր կու նստէր կաթողիկոսն և Արարատի ասորիկանն աշխարհատեսուչ), աւագերեցն Սահակ՝ որ յետ կաթողիկոսին նախապատիւ կրնայ ըսուիլ Դուռնայ եկեղեցեաց պաշտօնէից մէջ, ընծայեց աշխարհիս զՍտեփաննոս, իբրև Զաքարիա մը Աստուծոյ սրբազան սեղանոյն խունկ ածելու առեն՝ իրեն արժանաւոր քահանայացու զաւակ մը մեղթելով և ընդունելով, անոր Յովհաննէսին նման՝ զոր, որ արդարև անոր պէս այլ վախճան մ՝ունեցաւ։ Ա. աւագերէց հայրն՝ յայտնի է որ իր որդին առաջին տարիներէն սկսաւ վարժեցընել և կրթել ուսմանց և եկեղեցական պաշտամանց. որոց աւելի յարմար և վեհագոյն վարժարան մ՝այլ չէր կրնար գտնել քան զնոյն իսկ Հայոց կաթողիկոսարանը, ուր եկեղեցւոյ ուխտին համար մասնաւոր ուսումնարան մ՝ունէին մեր հայրապետքն. որոց աթոռը կու նստէր այն առեն Տէր Սահակ, աշնուական, միանգամայն և բանավարժ բանասաեղծ անձն, որպէս վկայեն իր գրչէն մնացեալ քանի մը ճառք և շարականք. անշուշտ ճանչցաւ հանճարաւոր կաթողիկոսն իր հանճարեղ համբակը, և յանձնեց մասնաւոր խնամոց վարժապետաց։

տարբերութեան վրայ, և իշխանն յազթող ելաւ. հմտութեամբ՝ Յունաց Ս. Հարց վարդապետութիւնը հարազատօրէն մէջ բերելով, միանգամայն փիլիսոփայական պատճառաբանութեամբ քննելով։ Իմացաւ Ստեփաննոս որ իմաստասիրական տրամաբանութեանց համար բաւական չէր ինչուան այն տեղն սովրածն 'ի Հայս, և պէտք էր աղբիւրներէն քննել սուրբ վարդապետաց գրուածքը։ Եւ որովհետև Սմբատայ հետ աւրուած էր՝ գաղտուկ և ծպտելով ելաւ 'ի Դրունայ և գնաց 'ի Կ.Պոլիս. և փնտռելով գտաւ հոն վարդապետ Յոյն իմաստասէր մը որ և Ճգնաւորի պէս կ'ապրէր 'ի միայնութեան. անոր աշակերտեցաւ թէ լեզուն սովրելու և թէ փիլիսոփայութիւն. յունարենէն զատ լատիներէն այլ սովրեցաւ որ արևմտեան եկեղեցւոյ Հարց վարդապետութեանն այլ տեղեկանայ։ Իսկ Սմբատ գժուարելով անոր գաղտուկ երթալուն, իմացաւ ուր ըլլալն, և նախանձայուզութեամբ իմացուց կայսեր, Ստեփաննոսի ով և ինչ կարծեաց տէր ըլլալը։ Կայսրն այլ, կ'ըսէ պատմիչն, հրաման տուաւ քննելու զՍտեփաննոս. իսկ սա իր վարդապետէն խրատուած՝ ըսաւ, թէ ես ուրիշի հետ բան չունիմ, այլ պանդուխտ եմ, եկած իմ ապրուստս հոգալու և իմ բարուցս աշխատելու։ Այս խօսքով ոչ միայն ազատութիւն գտաւ, այլ և համարձակութիւն ուռաւ քաղաքը գալու և Յունաց եկեղեցիները և ուսումնարանները մտնելու. մանաւանդ Ս. Սոփիայ գրատունը, ուսկի ուզած գրքերը կ'առնուր, կարդար, կ'օրինակէր, թարգմաներ։ Յետոյ Ամենք այլ գնաց, հոն այլ հին իմաստասիրաց թոզած համբաւոյն մնացորդը քաղելու. և նոր գրքեր քննելու։ Եւ երբ գարձաւ՝ աւելի ծանօթացաւ Յունաց մեծերուն, պատրիարքներուն և սրբուհեաց։ Հոս էր այն

առեն Դաւիթ հայազգի իշխանաղն, որ հիւպատոսութեան և թագաւորական սեղանակցութեան պատիւն ունէր, և յունարէն լեզուն կատարեալ գիտէր։ Այսր օգնականութեամբը կամ այլք անցնելովն՝ թարգմանեց Ստեփաննոս զանազան Ս. Հարց գրուածներ. նախ Ս. Դիոնէսիոսի արիսպագացւոյն խրթնաբան խորհրդոց գրքերը, որոյ մեթին բանիցն այլ լուծմունք կամ մեկնութիւն գրեց համառօտ. այս գործս 'ի գլուխ հանեց յամի Տեառն 712. մեկ երկու տարի ետև թարգմանեց Ս. Կիւրղի Պատրիարքոյ ըսուած գիրքն և անոր զանազան խրատներն և ճառերն. — միւս տարին, 716, 'Լեպոնի գրոյ մեկնութիւն մը թարգմանեց. յաջորդ տարին, 717, Ս. Գրիգորի Նիւսացւոյ Յաղագս բնութեան և յարմարման մարդոյ անուանեալ գրքերը. և հաւանօրէն ուրիշ գրքեր այլ։ Դաւթի ձեռքով համարձակութիւն առած՝ կայսերական գրատունն այլ քննեց, և գտաւ ոսկեռուսի մատեան մը նախնի Ս. Հարց գործոց, զոր արդէն ընդունէին Հայք. որով կայսրն այլ հաճելով այս բանիս՝ յանձնարարական գրով կամ օգնականութեամբ խաւրեց զՍտեփաննոս 'ի Հռոմ, ըստ խնդրոյ նորա, որ այն տեղի հռչակաւոր մատենադարանն այլ քննէ. հոն գտաւ Ստեփաննոս լատիներենէ զատ՝ Յունաց Ս. Հարց գործոց ընտիր և հին օրինակներ, ինչպէս Ս. Ամբանասի, Ս. Եպիփանու, և Ս. Կիւրղի Դանիելոյ գրքերն. և հաւանօրէն ինչ որ մինչև այն առեն հայերէն թարգմանուած չէր՝ ինքն թարգմանեց։ Առանցմէ գուրս թարգմանեց Ս. Մելիտի ըսուած տեսիլքն կամ գուշակութիւնքն, որ ուրիշի չինած անվաւեր գրուածք են. Իլինի առաման պատմութիւն մը համառօտ, յորում Իլինի առու

 1194 տարի Քրիստոսէ առաջ կ'ըսուի։ Ուրիշ շատ գրքեր այլ, կամ բնագիր կամ թարգմանած՝ հետ ա-

ատած, չուզեց 'ի Հռոմայ նորէն դառնալ 'ի Կ.Պոլիս, ուր արդէն 16 տարի կեցեր էր. այլ նաւեց յԱթոռ և դարձաւ 'ի Հայրենիսն 'ի Հայս։

Իր հեռաւորութեան 16 կամ 20 տարուան մէջոց՝ մեր աշխարհքն շատ փոփոխութիւններ տեսեր մանաւանդ թէ կրեր էր Արաբացւոց ոտիկաններէն. Հայոց իշխանքն նուազեր էին, եղեա կաթուղիկոսն շատոնց վախճաներ էր, և ըստ ոմանց նաև իր յաջորդն՝ մեծանուն Յովհաննէս Օձնեցի, և Դաւիթ Արամենեցին էր կաթողիկոս. որ և մեծ պատուով ընդունեցաւ զՍտեփաննոս և իր բերած գրքերը. որոնցմէ զատ ունէր նաև նամակ մ'այլ կնքեալ, Կոստանդնուպօլսոյ պատրիարքէն Ս. Գերմանոսէն. որոյ ծանօթ ըլլալով 'ի Կոստանդնուպօլիս և շատ հեզ հաւատոյ վրայ խօսելով, և յորդորուելով նա պատրիարքէն՝ Յունաց հետ հաղորդուելու, Ստեփաննոս կու զգուշանար, իր կաթողիկոսին հաւանութիւնը չառած։ Անոր համար Ս. Գերմանոս գրեց այն հոգեւոր թուղթը, «Գրիգոր է խոշորն» ՝ Ռիան մէջ »։ զոր և ինքն Ստեփաննոս թարգմանեց և տուաւ կաթողիկոսին, և անոր հրամանաւն այլ, կ'ըսեն, գրեց պատասխանը, «Զգրիգորի խոշորն զանգրիանն տա Բէրրեալ»։ Սակայն այս պատասխանը, հիմա մեր ձեռք եղած օրինակներուն նայելով՝ հեռի է 'ի խազազութենէ Գրիգորոսի և 'ի հոգւոյն Գերմանոսի և յիմաստութենէն Ստեփաննոսի, թէ և շատք 'ի նախնեաց մերոց յանուն Ստեփաննոսի յիշեն. այլ եղան և երկբայողք և օտար ձեռքի խառնուրդ ցուցընողք [1]. զոր զգօն քննող մը կրնայ ատուգել թէ այն երկու թղթերը կարդալով, թէ Ստեփաննոսի ուրիշ գրուածները, և թէ մանաւանդ անոր հանձարը և Յու-

1 ինչպէս հալեպաւոր վարդապետ Պ.

նաց հետ այնքան կենակցութիւնը։ Ոչ միայն կաթողիկոսն Հայոց՝ այլ և իշխանք Ճանչցան և պատուեցին զՍտեփաննոս, մանաւանդ Սիւնեցիք, որոց քով վարդապետ և ուսուցիչ եղեր էր. և որովհետև իրենց եպիսկոպոսն Յովհան՝ յաջորդն Անանիայի, արդէն վախճանած էր, Բաբգէն և Գուրգէն իշխանք Սիւնեաց խնդրեցին 'ի կաթողիկոսէն որ ձեռնադրէ զՍտեփաննոս իրենց եպիսկոպոս։ Կաթողիկոսն ոչ միայն եպիսկոպոս ձեռնադրեց զնա, այլ և 'ի պատիւ արժանեաց նորա անուանեց հիւրապետ. և Սիւնեաց եպիսկոպոսութեան աթոռը որ մինչև այն ատեն եօթներորդ կու սեպուէր 'ի կարգի եպիսկոպոսաց, բարձրացուց յերրորդ կարգ, և Սիւնեաց աշխարհին ուրիշ եպիսկոպոսներուն նախագահ դրաւ զնա։

Մէկ տարի մը միայն կատարեց Ստեփաննոս իր պաշտօնը արժանապէս, թէ հովուական այցելութեամբք և թէ քարոզելով. և գրելով զատ յառաջին գրածներէն՝ զանազան խնդրոց վրայ ճառեր, որոցմէ հասին մեզի քանի մը հատ, քանի մը մեկնութիւնք այլ եկեղեցւոյ խորհրդոց և ծիսից. և հիմնարկութիւն մը կին տէրտէրին, զոր դաւանորէն 'ի Կոստանդնուպոլիս գրած է։ Սրբազան երգոց մասն այլ թուի թէ երգեց այս միջոցիս, (որ ըստ ոմանց ոչ մէկ տարի՝ այլ ութ տարի քշեց, բայց կ'երևի թէ առաջին տարիներն Սիւնեաց աթոռոյն անտէրութեան ժամանակն են)։

Ո՞ր ան ազնիւ և ցանկալի երգեր և այլ գրուածներ և թարգմանութիւններ փափաքելի և յուսալի էր այսպիսի բանիրուն վսեմական անձէ մը, որ յետ ոսկեգիր թարգմանչաց Ե դարուն՝ առաջին թարգմանիչ կրնայ ըսուիլ. մինչև ոմանք նոյն իսկ թարգմանչաց մէջ կու խառնեն զինքը, կամ իր գործքերը կ'ընծայեն թարգմանչաց ժամանակակից Ստեփաննոսի մը՝ որ չէ եղած։

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Ն

Դառնանք հիմա 'ի Մոզն առան, ուր շատ ան-
գամ նկած էր Ստեփաննոս այցելութեան. այս
տեղանոյն առնն շինութեամբ ու հարստութեամբ
նշանաւոր եղած կ'երևի, քաղքի մը պէս. և թե-
րևս հարուստ քաղքի շնորհաք և անշնորհութիք
ոչ անչան։ Նզդ ու մեզդ բարուց պժգալի օրի-
նակ և ցուցանք մը կու յիշէ պատմութիւնն, և
անով այլ մեր պատմութիւնը կու լուսցընէ. ցու-
ցանք մը՝ Մեգէայ, Ցեզաբելի, Հերոդիագայ տե-
սակէն. անպարկեշտ լկաք և յանդուգն կին մը,
հերատուկ մը, որ թերևս շատ ցածազգի ոնէ այլ
ջըլալով, աւելի համարձակութեամբ կու լըբէր
իր գլխէ հանած երիտասարդին հետ, և գայթա-
կղութիւնն կու հրատարակուէր։ Այսոր համար
արթուն եպիսկոպոսն երեք անգամ եկեր խրա-
տեր էր այդ անզգամ զգայունը, որ չէր խրա-
տուած. իսկ այսօր չորրորդ անգամ յանգիմանե-
լով, և սնոր լրբութիւնը տեսնելով՝ հոգևոր իշ-
խանութիքն բանադրեց, Աստուծոյ արդար գա-
տաստանին և մարդկան արհամարհանացը թողուց
զանիկայ. և այն բարկութիՀ տաքութիւնն էր՝ որ
ցորեկուան տօթուն հետ խառնուած կու սոխպէր
կու տանէր զինքը քիչ մը զովութիւն և հանգիստ
փնտռելու, նախ Աւագական ալեաց և վերջը Ծո-
ՀաՀիւղ հովոցին վրայ։ Որչափ որ սրտատոչն և
նեղութիւնն սաստիկ էր եղած, այնքան այլ հան-
գիստն խոր և խաղաղ եղաւ. և ո՞ գիտէ, կիսաբ-
թուն միտքն ի՞նչ մեղեդեաց և խորհրդածութեց
հետ էր, կամ հոգին՝ տեսլեամբ՝ ո՞րքան հեռացեր
էր այս աշխարհքէս, երբ յանկարծ իրոք այլ բո-
լորովին հեռացաւ վերացաւ ասկեց. և երանի՜ թէ

երեսին խաղաղաստան զովագին հովուն բարեխ-
մամբը և ոչ դահճէ աւելի դժնդակ հարուածով
մը՝ կարէր շունչն։ Սոսկումն և զզուանք կու բերէ
լսելն, թող թէ պատմելն, այնպիսի անարգ և ե-
զեռնաւոր վրէժխնդրութիւն մը, մանաւանդ այն-
պիսի արարածէ մը՝ որ կին կ'ըսուի, որ բարու-
թեամբն կակուղ հրեշտակ մը կու դառնայ, չա-
րութեամբն խստող սատան։ Ցանցաւոր և անի-
րաւ կինն այն՝ ոխով լցուած ընդդէմ եպիսկոպո-
սին, ուզեց նոյն օրը գիւղական դրդմամբ սարսա-
փելի յիշատակ մը թողուլ աշխարհիս մէջ. և ի-
մանալով անոր ուր տեղ հանգչիլը. պալատաւո-
րեց հոմանին՝ իր անարգ սիրոյն վրայ. մահու զէն-
քը ձեռքը դրաւ, հանեց զնա 'ի ծառն. յայանի
է ինչ բանի համար։ Մարդն թերեւս ոչ այնքան
ճարպիկութեամբ որչափ վախով դողով կամաց
կամաց վեր ելլելով, երբ տեսաւ Սուփաննոսի
վսեմափայլ դէմքը՝ հրաշալի հանգստեան մը մէջ,
որոյ ըստ պատմչին « իբր զբոց ցոլանայր շունչն
» 'ի վեր, և ճախիր առեալ դառնայր անդրէն. և
» հրեշտակ մի կացեալ 'ի անտրան՝ հովանի ունէր
» նմա թեւօքն », սարսափած, թուլցած, հազիւ
կրցաւ չիտակ վար իջնել, և տեսածը պատմել
կնոջը։ Իսկ այն այլանդակ այլասիրոխ սիրան՝ այլ
աւելի կատղած՝ նորէն ստիպեց, կանացի և գի-
ւացի շողոքով բողոքով, սիրով ու սաստով՝ որ ու-
րիշ բան չմտածէ, միայն սպաննէ։ Երկրորդ ան-
գամ այլ ելաւ թշուառ ու վատ մարդն, բայց և
առաջինէն աւելի սոսկացած սահմռկած՝ ահաւոր
բաներ տեսնելով՝ ծառէն վար ընկաւ քան թէ
իջաւ։ Այն ատեն հերատաւոր ջատաւոն որ իր առ-
ջի բնութենէն բոլորովին դուրս ելած էր, վատ
և անարի կանչելով մարդուն, թեւերը սոթռտելով,
առաւ սուրը. և այն խաբող սատանային հետ սո-
ղոսկելով ծառն 'ի վեր՝ հասաւ հրաշունչ հրէշի

մը պէս անձնաս և անզբաղ օրասոյն վրայ. և այն վսեմ սաստարաձև գլուխը վերցնող սեան (վզին) իջուց անիծեալ հարուածը... այնքան շատ և չխաղ, մինչև քնացողն՝ մեկ ցնցմամբ արթնցաւ յաւիտենականութեան մէջ. և անկեց ոգեռնեալով իր Սոդան հովտաց և հովոց մէջ թոզած մարմնոյն արիւնթաթաւ կերպարանքը՝ կանչեց հոգւով. «Տէր, քո է վրէժխնդրութիւն և արդար իրաւունք». ինչպէս որ տեսիլքով յայտնուեցաւայս՝ նոյն կամ նոյ անուամբ սրբակեաց ճգնաւորի մը, որ այն տեղի մօտ Սիոն լերան վանաց մէջ կ'ապրիէր.....

Այն օրուան հոգին՝ իբրև փախչելով և սմաչելով՝ իջաւ բարձրաւանդակ հանգստարաններէն, երեկոյեան հովանիներուն հետ խառնուելով, որուն զովութիւնը զգալով եպիսկոպոսին սպասաւորքն՝ եկան վրանը վերցնելու... Փուշ զարմացք, սոսկումն առաւ զիրենք՝ երբ փայտեղէն մահճէն դեռ կաթկթած արիւնը տեսան, և սառուածակերպ տէրերնին՝ աւազակի մը պէս սրախողխող... Զերկընցընենք. մեռածէն աւելի իրենք մահացեալ՝ վերուցին մեծահոգի անձին մարմինը, և հանեցին Սիոնի վանքը, ուր լալով և ողբով եկան նոյ և իր միանձունքը. բայց մօտի Աբխազն գեղին բնակիչքն այլ լսելով՝ իրենց գեղջուացին հետ եկան և ապշելով պաշտօնէից՝ իրենց գեղը իջեցնել տուին մարմինը. և հանգուցին հոն Ս. Գրիգոր Նարեկացիի նուիրեալ մատրան մը մէջ առ ժամանակ մը։ Սակայն պժգալի գոյժն գեղէ գեղ, քաղաքէ քաղաք տարածեցաւ, անոր հետ նոյ ճգնաւորին տեսիլքն այլ՝ որ սոսկալի պատուհաս մը կու սպառնայր բոլոր այն տահմաններուն։ Զուշացաւ պատիժն, ըստ պատմչին՝ տահաւոր ժամ և սասանութիւն եղաւ քառասուն օր բոլոր գաւառին մէջ. շատ լեռներ փլան և գետին.

ներ բարձրացան, շատ ազբիւրներ ցամքեցան և ցամաք տեղուանք ազբիւրացան. ծուխն ու փոշին ամպի պէս կու տարածուէր, և բոլոր բնութիւն 'ի սուգ երևէր. տասն հազար հոգիէ աւելի համրուեցան չէնքերու տակ և գետնին պատառուածոց մէջ մնացող մեռնողքն, անծանօթներէն զատ։ Այս կէս բնական և կէս բանական պատահարին հետ՝ բնակչաց վախն և յետոյց աւանդութիւնն խառնուելով՝ ըսին, թէ ժամին և մշուշին տեսն ազգոց ձայներ այլ լսուէին, իբր թէ Վա՛յ յոր, վա՛յ յոր կանչելով. և անկէ՝ Եղեգեաց ձորն ըսուեցաւ Վայոց ձոր. սակայն այս անունս անկէ հարիւրաւոր տարի առաջ այլ կու լսուէր։

Քառասուն օրէն ետև գագրեցաւ ժամն ու մշուշն, և ամեն կողմէ եկան, երկրին աւերմունքը թողլով՝ նախ անոր հոգևոր տիրոջ արժանաւոր հանգիստ մը տալու. և եպիսկոպոսաց, քահանայից, վանականաց և ժողովրդեան բազմութիւնը բաւական չսեպելով, զկաթողիկոսն այլ կանչեցին. և յետ բազմօրեայ գիշեր ցորեկ աղօթից և պաշտամանց՝ աշխարհահանգէս յուշարկաւորութեամբ վերուցին մարմինը յԱրկազան գիւղէն, և Արբայ գետոյն գիմացի կողմը անցընելով հանեցին բարձրաւանգակ տեղ մը՝ լերան տարբերին վրայ, կանաչագոլոր միայնութեան մը, այսինքն անտառի մը մէջ. ուր շատ հին տաճարներ, և յաւաջ իսկ քան զԼուսաւորչի ժամանակն, առաքելոց քարոզութեանը հետևող հին քրիստոնեայք Սիւնեցիք եկեղեցի մը շիներ էին 8 դարուն մէջ, 'ի պատիւ Ս. Սահականնոսի. որոյ քով բոլորեցին հոգեսէր անձինք իրենց միայնանոցը, և խստակրօն Հգնութեամբ կ'ապրէին, գիշեր ցորեկ աղօթելով. և կերակրի համար ալ միայն մանգինէ և կիթելնէ հրաժարելով՝ այլ և ամենայն տուք բանէ, և թանիկն անգամ թողլով. անոր

համար կոչուեցան Թանահատ, և տեղն՝ Թանահ-
ոի վանք. ահա հոս բերին հանգուցին Սիւնեաց
իմաստասէր մեծարգոյն մարմինը. վրան պըղ-
տիկ մատուռ մը կանգնեցին. զոր յետ շատ ժա-
մանակի, յամին 1278-9 քակելով՝ մեծ ու գե-
ղակոփ գմբեթաւոր եկեղեցի մը շինեցին, և հի-
ման տակ թաղեցին մարմինը իր տապանաւն։
Այս եկեղեցին ինչուան հիմա կանգուն կեցած է.
և հիւսիսային կողմը որմնակից ունի փոքրիկ գե-
ղաշէն մատուռ մը. տեղւոյն բնակիչք կարծեն
թէ հոն ըլլայ Ստեփաննոսի գերեզմանն. բայց
պատմութիւնն գեռ եկեղեցւոյն հիման տակ կու
ճանաչէ այն եկեղեցազարդ գլուխը։

Զ

Իսկ ինչ եղաւ, ուր կորաւ այնպիսի գլխոյ գա-
հիճն, հայ Հերովդիադայն. արդեօք ժաժին ա-
տեն պատաւուած գեռնին անգնդոց մէջ ընկղմ-
ցաւ, թէ տարերքներէն աւելի արտասած ու սրրա-
մրտած մարդկանց արդար վրիժուք պատառ պա-
տառ կորատեցաւ... Ստեփաննոս Աստուծոյ սր-
գարութեան և ողորմութեանը յանձներ էր իր
սպանիչը, և իր նախանուն նախօրինակ նախա-
վկային հետ՝ ըսեր էր, «Տէր, մի համարիր զայդ
ոգմա 'ի մեզ»։ — Յոզովուրդն վախցաւ Ա-
ստուծոյ դատաստանը յափշտակելէն. բնութիւնն
պատկառեց իր արարչին կամքէն. իսկ այն որ Ա-
ստուած է դիմութեանց՝ կակղացուց խստացեալ
այլանդակեալ սիրտը. և այն սեղեխ հերատուկ
Հերովդիադայն դարձուց յապաշխարող մը։ Ճանչ-
ցաւ կինն՝ իր կարծածէն վեր ըրած չարիքը. և
ինքզինքը գատապարտելով՝ զգեստները պատըռ-
տելով քարերով կու ծեծէր կուրծքը. և այն ան-

պարտ արեան տեղ՝ իր յիմարած արիւնը թափելով. ինքն իր սոսկալի չարիքը և խայտառակութիւնը կու պատմեր, կ'ողբար, կու բողոքեր, իրաւունք և պատիժ կ'ուզէր. և տեսնելով որ իրեն մեծագոյն պատիժ է մարդկանցմէ այլ պատիժ չցընելն, գնաց Թանահատ վանքը արևմտեան կողմէն պատուոյ ձորակի մը դիմաց, և հոն գետինը փորելով՝ մտաւ քնչուան 'ի կուրծքը կենդանի գերեզմանի մը մէջ՝ և իբրև անյոյս մեռեալ մը՝ սոսկաձեռ, դիշեր ցորեկ կ'ողբար կու լար, թոռուելով կու խնդրեր մեղացը. մինչև սամնուն գուրեն այլ շարժեցաւ, և աղօթք հրամայուեցաւ անոր համար. Թողութեան ձայնն եկաւ 'ի գերեզմանէ ապանելոյն, « Թողեալ լիցին քեզ մեղք, ով կին » գու ». զոր և տուրբ պատարագի ժամ ամենքն լսեցին, և Թաղուելիւն աւետեցին կնոջն։ Բայց նա թէ և շնորհակալեցաւ Աստուծոյ, բայց գեռ զինքն անարժան սեպելով ուրիշ կերպ ապրելու, ուզեց և մնաց մինչև նոյն կենդանաթաղ գերին մէջ. և հոն հանգարտ արտասուքով կնքեց ապաշխարող կեանքը. հոն այլ թաղուեցաւ, իր զոհած բարեխօսին դիմաց. որ կու թուի դեռ իր վսեմական ձայնը կամ հառաջանքը լսեցընել այն հին և օրբազան թաղեալներուն և միայնութեան խորին։

Է

Այլ ուր է իրեն արժանաւոր խօսակ մ'այլ, որ իր ցաւալի մահը ողբերգեր մեզի։ Ո՞ւր էր այն մովսէսանման Օրհնեսցուք երգողին հոգեկցորդ քոյրն, Մարիամ, որ նոյն և նման երգերը կերգեր։ — Նախանձելի՛ բաղդ, կրնամ ըսել թէ և անակնուանելի, և պանծալի փառք հայրենեաց մերոց. մեր օրհնեալ դիւաազան, Սահականաս,

ունէր իր մարնմանման Թանգուհին, մեր եկեղեցւոյ սրբազան սիրելեաց, յիսուսասէր Սափփոնը, հարազատ քոյրն. ՍԱՀԱԿԴՈՒԽՏ. որ արեան հետ անոր հոգւոյն ներքուԹեան և ախորժակաց այլ ժառանգակից էր։ Սահակադուխտ այլ հմուտ երաժիշտ և երգահան էր, և հրեշտականման եղանակաւոր. փափուկ և սպիտակ հասակը կուսուԹեամբ և հաւատաւորի պարկեշտ ձեռվը պըսակած, արդարև մենասէր յաւերժահարսին նըման, Թոզուց հեռացաւ յաշխարհէ, մինչեւ իր ընտանեաց սեփական տուրքը՝ հոգէխառն քնարն առաւ հետը. և մեկ հատիկ արժանաւոր միայնուԹեան տեղ ընտրեց հոն, ուր իրմէ 400 տարի առաջ, Հայոց օրիորդաց պարագլուխն, ներքսիրան ներքազդածն, նաղելեաց նախատիպն, մելամաղձիկն և մենասէր, Թագաւորական և սրբասքանչակն ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ. իր հսկայ Թագաւոր եղբօր (Տրդատայ) ձեռքով կանգներ էր իր սքանչելի օդասրահ Հոլանոցը, Գառնոյ ձորոյն սիւնասաք պասալգեայ բնաշէն բլրոց վրայ. որք խորանգունդ վէրերու և բազմածոց ձորակներու վրայ նային, և մեր դարուս հմուտ բնաքննիչներն այլ սքանչացուցին։ Ահա Գառնոյ ձորակին ծածուկ ծոցերուն մէջ՝ գաւառ այրասիրան, մանաւանդ Թէ հրեշտականասիրան Սահակդուխտ, անգրաղ քարայր մը, և հոն անցուց կեանքը, հիանալի բնուԹեան տեսարանաց մէջ՝ հիանալի երգովք օրհնելով բնուԹեան Տէրը։ Բայց այն աննման քնարին և մեղրաշունչ բերանոյն ձայներն՝ շատ զօրաւոր էին իր միայնուԹեան դէմ կռուելու. — երգ և լուսուԹիւն չեն կրնար միաբանիլ. — այրէ այր, քարէ քար համբաւն հնչեց. կարծուեցաւ Թէ Հայոց եկեղեցւոյն երգահան հոգին, մարնմդոյն մուսայն՝ մարմնացեալ իջեր է Տրդատայ և Խոսրովիդխտոյ սիրական սորերուն մէջ. աշխարհիկ

ու ՀԿԿԵՑԱԿԱՆՔ կու գային, ոչ լսելու և զմայլելու միայն, այլ և աշակերտելու և սովրելու նոր և զանակնկալ։ Հարկ եղաւ որ մեր մուսայն այլ՝ իր սասուսածաշնորհ պաշտօնը կատարէ. և առանց իր կուսական ու նուիրական շնորհաց նուազուելիւն մը բերելու, մենարանին դրան առջև վարագոյր մը ձգելով, ինքն ետևը նստած՝ կ'երգէր և կու սովրեցնէր։ Շատ բարակ և բազմանգամանակ երգեր չինեց, զոր մեր երաժիշտքն Մանրամանդ կ'անուանեն, և առանձնաբար Կյուրդի և Մեղեդի. որոց գոնէ մէկ մասն անշուշտ գտուի այսօր այլ այդ Մանր-ուսմունքը և Կցուրդք գրոց մէջ, թէ և մեք չգիտենք թէ ո՞րն է յատուկ իրեն, ո՞րն իր եղբօրն և ո՞րն օտարաց. միայն հաւանիմք թէ շատն առաջի երկուքին են, քեռն և եղբօրն, Սահակդիանոսի և Սահակդխտոյ. այն երգոց մէկին այլ, ինչպէս կ'իմացընէ մեզի պատմիչն, Սահակդխտոյ անունը կու յայտնէր, անսգլուխ գրեր ռանին, և կու սկսէր Սրբոյ Սոգիոյ։ Ժամանակին, ոչ, այն ժանեւոր ժամանակն, մեզի չհասուց այն կցուրդն այլ. բայց անշուշտ չկրցաւ այլ բոլորովին անհետ աննչան ընել, և թողուց առաջին տունը. զոր և շատ հեզ հիմայ ըստ յարմարութեան վայելուչ խմաստիցն՝ ելդեմք առաջի Սրբութեան Սրբութեանց։

« Սրբուհի Մարիամ, սաֆոր ոսկի, և սապանակ կատակարանաց,
Որ զ'ի վերուստ զհացն կենաց՝ պարգեւեցեր քաղցեալ բնութեանս
Առ նա միշտ բարեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց »։

Իր քերդող եղբօրը եղերական վախճանին առաւն՝ արդեաք ո՞ջ էր քերդողուհի քոյրն, և լսելով սրտահար սրտաբեկ գոյժը՝ քարայրին անկիւ-

նէն սոսկալով սառաջ եկաւ, և անգարման ցաւուն յետոյ ինքն ինքիմարանք առնելով իր հոգեխօս բամբիռը, վերջին անգամ անոր ամենէն քաղցր և ամենէն ողբական ձայնները իր սրտին փափկագոյն զգացմանց հետ՝ հանեց գնչեց. և իբրև այլորինակ Դեռովրա՝ փոխանակ օրհնելու այն այլանման սիրասպան Յայէլին ձեռքերը, նզովեց հերառուկ չարաշէն կնոջ ոչը. և իբրև մայրն Սիսարայ զրկուած իր սիրելւոյն այցելութենէն, փոխանակ բարձր ձոզերու և գաւազաններու վրայ կանգուն գիտելու՝ գետնամած տեսնելով անոր եպիսկոպոսական և արքայական վառերը և գրոշները, որք և արիւնովը թաթաւուած՝ կու յիշեցնէին նոր և կսկծալի կերպով մը «զկապուտ երանգոյն գունագոյն նկարուց. նորոտ պէսպէս» նկարուց. այն էր պարանոցին նորա կապուտ», և հառաչեց իբրև հարազատ քոյր անեղբայր, բայց Սահակդեռոյ և Սահեփանոսի արժանավայել հառաչանք. և ապա իր երկայն սեաւ վարագուրովն՝ քնարն այլ գէմքն այլ պատելով, ծածկուեցաւ բոլորովին մարգկանց տեսութենէն ի խորս քարայրին.... Պատմութիւն լռէ։

ԺԲ

ՏՕՆՔ ՆԱԻԱՍԱՐԴԻ

23 Յոյսոսի.

Հայոց սրբազան սարեգլխին՝ բնութիւնն ծազկափթիթ ծիծաղով կու կենդանացընէ զմարդիկ. իսկ քաղաքական սարեգլխին, որ է Նաւասարդն (Յոյսոսոս), կէս խամրած բնութիւնն ինքնին կենդանանայ մարդկան հաստատած օրէնքովն և հանգէսներով։ Տարւոյն սաքագոյն ամիսն՝ Հայոց բարեկենդանն էր, կաղանդ էր. կրօնական, զինուորական և աշխարհախումբ հանդէսներով՝ բարձրաձայնք, լեռնահովիտք և հովոցք Հայոց՝ գարնանման գեղեցկանային։ Բազմութիւնք 'ի գառս ժողովրդեան՝ հոգագործք՝ մեծ աշխատութիւն մը չունենալով այս եղանակիս, կրնան ցորեկուան տաքը անցընել՝ իրենց և բնութեան խնամած հովանեաց ներքև, ուր կու գիմեն 'ի քաղաքաց այլ արուեստաւորք, զօրականք և աղատաղունք։ Եթէ դու այլ. Հայկակ, բազդ ունիս առոնց մասնակից ըլլալու, բարով գոհով վայելես. ապա թէ ինծի պէս զրկուած ես բնութեան գալար առագաստներէն, հովերէն զովերէն, հովոէն և սարէն, գիտէ զանոնք քու մենարանէդ։ Այլ, ինչ գոհ և հանգարտ ոմանք նստած պզտի ձեռագործ.

ծի մը կու պարսպին, քան թէ կ'աշխատին. ո-
մանք կու խաղան, կու խօսին. մէկն խոսելուն
վրայ երկընցեր՝ քուն կ'ըլլայ, մէկ այլն ջուրուն
եզերքը կու զովանայ. ուրիշ մը՝ քիչ մը փիլիսո-
փայ կամ մելամաղձիկ՝ առանձին շքի մը տակ
կամ ծառի մը գլուխը նստած՝ կու կարդայ կու
մտածէ. հոս տղայք կու ցատքըտեն, կու գլորին,
կու պառկին. հոն ամբողջ ընտանիք մը առանց
սփռոցի սեղանի մը վրայ կու ճաշէ. այս կողմը եր-
կու բարեկամք՝ երբեմն ծանր երբեմն թեթև խօ-
սին. այն կողմը՝ երկու սիրելիք իրենց կարծած
ամենակարևոր բանին վրայ կու խօսին, և 'ի հար-
կէ անանկ ձայնով մը՝ որ մենք չիլսենք։ Հոն բա-
նակած է այրարատեան ստուգածահրաւէր գուն-
դը այլ, ազգային աշխարհազօր զինուորքն,
120,000ի չափ, ժողոված ըստ աշխարհաց և նա-
խարարութեանց Հայոց, իրենց իշխանաց և Հայոց
Թագաւորին հետ, կատարելու Նասսարդի գծե-
րը. ոմանք ատուածոց պահապանաց, յիշատակք
քաջաց նախնեաց, մրցունք կարճաց, խաղք և վա-
յելք հաստատակաց. զոր 3000 տարուոյ չափ կո-
տարեցին՝ մեր ըստ աշխարհի երջանիկ նախնիքն,
Թեոդացին գուիեցին Իագրեանդայ տափերու և
բլուրներու վրայ, մինչև ծածկեցան անոնց տակ։
Իսկ երբ Հայկայ և Վահագնի օրերուն խորհրդա-
կատար քրմապետաց առեղ՝ փոխանակեցին խա-
չապատակ քահանայապետք, մեհենաց վրայ եկե-
ղեցիներ կանգնեցին. բայց անոնց չորս գին և դուռ-
սը նոյնպէս մնաց. բնութիւնն իր կերպարանքը
չփոխեց, ազգն իր հանդէսները չփոխեց. այլ տա-
ճարը սրբեց, և փոխանակ գիշ՝ նուիրեց Աշմար-
տին Աստուծոյ և նահատակաց նորա։ Գրեթէ
անկարելի էր՝ որ Ս. Գրիգոր զՀայս 'ի հեթանո-
սութենէն դարձընելով 'ի քրիստոնէութիւն, այն
հին մեծահանդէս աշխարհաժողով զրօսանաց օ-

րերը՝ անհանգէս անյիշատակ թողու. ուրեմն թէ ինքն և թէ իր հետեւողքն՝ անոնց իւրաքանչիւրին տեղ՝ կերպով մը նման և յարմարագոյն սուրբ տօներ և եկեղեցւոյ յիշատակներ կանգնեցին։ Ինչուան որ քրիստոնէութիւնն ազգէ մը ամբրնալով, և ժամանակի երկարութեամբ հին սովորութիւնքն խափանելով, կրցան յետագայ առաջնորդք՝ այն եկեղեցական տօնից օրերն այլ պատշաճապէս փոփոխել. շատն այլ դարձեալ նոյն առաջին հեթանոսութեան տօնից օրաթուին թողուլ։

Բ

Նաւասարդի նախընթաց՝ տարւոյն վերջի հինգ օրերուն սկիզբը՝ (որք սուրբ կ'ըսուին) նուիրեալ էր Վարդավարի Վարդամատն ԱՍՏՂԻՆ գիցուհւոյն, որոյ փոխան առաջին հայրապետն Հայոց կարգեց ՎԱՐԴԱՎԱՌ. որ է տօն Պայծառակերպութեան Քրիստոսի, զոր քան զամենայն ազգ՝ պայծառապէս տօնեն Հայք մինչև ցայսօր։ Իսկ Նաւասարդին առաջին օրն (11 օգոստոս.) որ է քաղաքական տարեգլուխն Հայոց, ազգին ամենէն մեծ, պանծալի, սրբազան օրն էր, և հանգէսքն շատ օրեր կու տևէին, պէսպէս յիշատակներով. որք միով անուամբ Ամանորայ կ'ըսուէին, իբրև սրբազանեալք յատուկ Աստուծոյ մը. քաղաքօրէն այլ համալիսարան կամ ալիսարածել կ'անուանէին. վասն զի ուրիշ տօներէ աւելի կատարուէին բազմութեամբ մարդկան, որք յամեն գաւառաց կու գային ժողովէին Բագրեւանդայ բարձրաւանդակաց վրայ. Թագաւորն իր այրարատեան չորս բիւր գընդովն, նախարարք ութ բիւր գումարտակաւք, 600 գաւառասեռարք և 400 գահակալ ինչ-

խանք, բազմութիւն կրօնական աւագ պաշտօ-
նէից, ամենքն իրենց տեսակ հնարով, պաշտօնէիւք,
ճորտերով. որով միայն քաղաքական, զինուորա-
կան և կրօնական ազգային հանդիսացեալք իրենց
մարդիկներով. քանի մը բիւր կ'ըլլային զատ 'ի
հասարակ զօրականէն։ Իսկ բազմութիւն ազ-
նուաց և ամուսաց՝ միլիոնաւոր պիտի ըլլային։

Ի՞նչ էր այս Հայոց համալխարհական ոստից պատ-
ճառն. — քեզի անծանօթ չէ Հայկակ, որ նախ՝
հին Նաւասարդն կամ տարեմուտն էր. որոյ ըս-
կիզբն և անուն անգամ մթութեան ամպոց մէջ
ծածկուած է, որք ինչուան Նոյի տապանակիր
գագաթը և դարը կու բարձրանան. Նաւասարդն
որ հին հնդիկ և զանդիկ լեզուաւ նաւասարդա
տուգաբանի, այսինքն Նոր-գարի, նոյն հին ազգին
աւանդութեամբ, յիշեցնէ ջրհեղեղի յիշատակն
այլ. Սարգա որ և Սարասվարի՝ մեծի Գրահոյ աս-
տուածոյն գուսան և կին կու ճանաչի, և ջրոց
գիցուհի, ոսոիկան աղբերականց և գետոց։
Սրբարդ, Նաւասարդի օրերը՝ կ'ըլլային պէսպէս
ջրախաղք. իբրև ասոնք ջրոց կամ յիշատակ ջրհե-
ղեղին և փրկութեան մարդկան ապաստանաւն 'ի լե-
ռինս Արարատայ։ Իսկ մերազնեայք հիմա վար-
դավառին օրը կու կատարեն ջրոյ հանդէսն այլ,
որպէս յայտնի է ամենուն։ — Սրբարդ, ասն էր
յիշեալ Ամանորայ ոմեքիէր տէր, զոր բնրոց և ա-
ռատութեան խնամակալ չաստուած մը կար-
ծեմք. և կամ չաստուածահայրն Արամազդ և Անա-
հիտ ամիսին. վասն զի ասոնց ասն այլ (մասնա-
ւորապէս առաջնոյն՝) այսօր կատարուէր։ Այս
չաստուածներէն զատ ուրիշ շատ գից մեհեանք
այլ կային Բագրեւանդայ մայրաքաղաքին կամ գըլ-
խաւոր բնակութեան տեղ, որ կ'ըսուէր Բագա-
ան, այսինքն չաստուածոց քաղաք կամ շէնք.
իւրաքանչիւր գից սեղանք կամ մատուռնքն այլ

Բագին կ'ըսուէին. և այս բագնեաց բազմութենէն ոչ միայն աւանն, այլ թուի թէ և գաւառն ազգն իր անունն առած՝ Բագրեւանդ է. իբրև բազարանաց բազարան, այսինքն բուն ասուածաբան։

Դից հետ գիւցազունք և գիցանուէր կամ սրբբազան անձինք այլ հոն իրենց արժանեաց համեմատ բագին ունէին, ինչպէս որ կու վայլէր այլ՝ նաւասարդի ասնները ամենախումբ համաշխարհական ընելու համար։ Այս գիւցանուէր և պաշտելի անձանց մէկն էր Մաժան մեծ քրմապետն, բարեբաստ թագաւորին Բ Արտաշիսի բազմաթիւ որդւոց մէկն. զոր ոմանք յեզբարցն սպանին, ոմանք այլ մեծարեցին. ասոնցմէ էր Տիգրան Գ, որ երբ թագաւորութեան հասաւ (յետ իր Արտաւազդ և Տիրան եղբարցն), Մաժանայ գերեզմանին վրայ գիւցավայել բագին մը շինեց. քանզի այլ հիւրանոց կամ իջեւան, ուր ձրի բնակին անցորդ ուխտաւորք, և վայելեն Մաժանայ նուիրած զոհերէն։ Տիգրանայ որդին Վաղարշ՝ այլ աւելի պատուեց քրմապետ հօրեղբօր յիշատակը, և նաւասարդի ամանորայ ասնները այլ աւելի աշխարհախումբ հանգիսիւ կատարել կու տար. որով հին ասնից վրայ չորրորդ մ'այլ աւելցաւ։..

Բայց մինչեւ Տիգրան և Վաղարշ այսպէս եղբայրասպան Մաժանայ վրէժը խնդրէին, սպանողն (և ինքն իսկ սպանեալ) Արտաւազդ՝ յետ մահուն անգամ կու մրմռար կու սպառնար նորէն վրէժ խնդրելու և աշխարհախումբ ասնը համաշխարհական սուգ գարձընելու, և տարուոյն հետ բոլոր աշխարհս այլ վերջացընել տակն ու վրայ ընել։ Արտաւազդ՝ անդրանիկն Արտաշիսի և Սաթինկան՝ ազայութենէն 'ի վեր բոլոր կեանքը խնթութիւն մնթութիւն անցուց մոլութեամբ և յանդգնութեամբ, մինչև ժողովուրդն

իրեն Շիրազ կանչէր. անանկ որ Հայրն գրեթէ սրատացաւէ մեռաւ, և մեռնելու առեն, (առաս. պէտք մեռնելէն ետև կ'ըսեն) անիծեց զնա, որ երբ որսի ելնէ «յազատն 'ի վեր 'ի Մասիս», Քաջերն (գէշ ոգիներ) բռնեն զինքն և տանին լեռան վերի կողմը մութ վէի մը մէջ պահեն. և այնպէս այլ եղաւ կ'ըսեն. վասն զի թագաւորելէն քիչ վերջը որսի ելնելով Մասեաց վրայ՝ Գինոյ գեղաւ. կեն աղբերց քով՝ ձիով հանդերձ ընկաւ Մասեաց վէին մէջ, և Քաջերն երկաթի շղթայիւք կապեցին զնա. բայց իր երկու որսի շներն քովէն չգաստուելով՝ անդադար երկաթները կու կրծեն կու մաշեցընեն. անանկ որ տարուոյն վերջի օրը մազի բարակութեան և կոտրելու կու հասնի. բայց նաւասարդին օրը գարբինք իրենց սալը և ամենայն արուեստաւորք իրենց գործիքը կու զարնեն. այն ձայնէն երկաթները ներքն կու հասնին, Արտաւազդ իր շղթայից մէջ գերի կու մնայ, աշխարհս այլ անոր տեւերմունքներէն ազատ։ Ահա այս այլ հինգերորդ յիշատակ մ'է նաւասարդի. զոր յիշելով և յետ 300 տարւոյ՝ ունակարծիք ոմանք 'ի քրիստոնէից, ոչ միայն նուաստարդին օրը, այլ և ամեն կիւրակի օրեր՝ սալերնին գործիքնին կու զարնէին, որ զօրանան շղթայք չփտացած Շիգարին, և չելնէ զաշխարհք աւրելու։

Գ

Այս ամեն յիշատակներէ վերագոյն և հնագոյն և տօնելի յիշատակ այս օրուանս էր, վեցերորդ, մեր շատ հեղ յիշեալ ՀՈՑԹՆ, մեր ազգին նախահայրն, և իրմով ազգերնուս ձեւանալն, մեծ յաղթութեամբն ազատելով 'ի Բելայ բռնութենէն։ Թերևս յիշես, Հայկակ, որ թէ ազգային

աւանդութիւն, թէ Քաղդէացւոց հին պատմութիւն, թէ մեր ասմարական տարեհաշիւք և թէ աստղաբաշխականք անգամ միաբան ցուցընեն, այս մեծ և ամենապանծ ասնիս սկզբնաւորութիւնը 'ի 11 օգոստոսի, 2492 տարի յառաջ քան զԹուականն Քրիստոսի։ Զկայ ազգ մը որ այսչափ տոյգ հին և այսչափ պանծալի յիշատակ մ'ունենայ. վասն որոյ կրնամք անուանել զսա բուն Օր հայխան և Տն ազգային. որ այնքան երկար ժամանակէ վար իշնելով՝ բարձր լերան գլխէն իջած ձեան հիւսին նման, և վերոյիշեալ յետին յիշատակները վրան առնելով՝ այլ աւելի մեծցեր է։ Հայկայ մեծ քաջութեան և անուան համար էր՝ որ իր յաջորդքն՝ նաւասարդի օրերուն իրենց ազգին ոյժը ներկայացընող կարիճ զօրաց աշխարհագուսար հանգէաներ կ'ընէին. և այն մեծ անձին անունը մեր սուրբ Հորք և Թարգմանիչք իրենց հեթանոս հարց պատուագրութեանը 'հեռանելով՝ աւելի սրբացուցին և անմոռանալի ըրին, երկնից համաստեղութեանց և աստուածաշունչ գրոց մէջ գրոշմելով, ուր որ ուրիշ ազգք Որիոն գիւցազնը և աստղը կու յիշեն։ Քանի որ ազգային ինքնագլխութիւն կար՝ այս և ասոր հետ միացեալ յիշատակք կրկնուէին և հնչէին քրիստոնէութեան գար ու կէս սիրած աեանն, որչափ որ քրիստոնէութիւնը կրնար յիշել. և որպէս զի բուն սրբազան կամ եկեղեցական ասն մը գտանայ այն օրը, հայրն մեր Լուսաւորիչ գրեթէ ամեն ասներէ առաջ այս օրս նուիրեց Ս. Կարապետ Յովհաննու և Արենոգինէ, եպիսկոպոս վրկային, որոց նշխարքը ըերաւ 'ի Կեսարիոյ և 'ի Սեբաստիոյ. և նախ 'ի Տարօն գաւառ գալով ուր անոր կռատունները ջնջելով, Աստուծոյ յայտնութեամբ՝ անոնց տեղ շինեց բնրատ սրբոց մատուռներ, եկեղեցիներ և վանքեր, որոց մէջ ա-

մինչեւ նշանաւորն է Մլոս սարքն ըսուած Ս. Կարապետն։ Տարօնոյ երկիրն՝ սահմանակից Բագրեւանդայ՝ ուսկից կ'ընդունի զԱրածանի գետն, անոր պէս այլ մեհենազարդ կրօնական երկիր մ'էր, և սեզի հանդիսից. ինքն այլ ունէր իր Բագաւանն՝ Յաղիշոյ կամ Յաղիշ գեղի անուանեալ, որ է ըստ զոհերու սեզ, իր շատ մեհենաց և բագնաց համար։ Լուսաւորիչ այնքան սուտ և ստաստակար հանդէսներ խափանելու համար՝ պատուիրեց Թագաւորական հրամանաւ, որ այնուհետեւ նաւասարդի հեթանոսական յիշատակաց սեզ՝ նոյն տարեմտին օրը՝ կատարուի այս երկու սրբոց յիշատակն քաղաքական հանդիսից մէջ՝ առաջնին պէս։ Անոր համար գարձեալ Բագրեւանդայ ծայրը՝ մօտ Մաղկէոյ և Նպատ լերանց, մօտ և Արածանւոյ աղբիւրներուն՝ ուր մերոց զՏրդատ և զբիւրաւորս Հայոց, Լուսաւորիչ՝ մեծ տաճար մ'այլ շինեց յանուն Ս. Յովհաննու, որ և կոչի Բագրեւանդայ Ս. Յովհաննէս. որ և յետ 300 և աւելի տարիներու նորէն շինուելով գործակցութեամբ Հերակլ կայսեր, մինչև ցայսօր կ'ամբառնայ մեծագոյն նշանակ հին և նոր Նաւասարդաց։ Երբ Հայոց ինքնիշխանութիւնն այլ վերցուեցաւ, քաղաքական ազգային հանդէսք այլ գադրեցան, սրով այս սրբոց ասնքն այլ ուրիշ շարժական տօնից կարգը մտան։ Բայց Նաւասարդն, այսինքն Հայոց քաղաքական տարեմուտն, 44 դարէ վեր միշտ գտանալով՝ Հայկայ ասանդ բարձրանալուն օրերը՝ անխափան կու յիշեցնէ մեր ազգին և հայրենեաց օրը, զոր և արժան է մեզի՝ որ վիճակի մէջ այլ ըլլանք՝ անոր յարմար յիշել, ասնել և հանդիսացընել անմոռաց, որչափ որ ազգի և Հայ անուն և լեզու պահելիք։

Դ

Տարեգրքին երկու շաբաթ եաև, Նուասարդի 1ՆԻՆ, հին Հայագիրն մեծ աշխարհախուզմ ասն մ'այլ կու նշանակէ, Հայաստանի ամենէն սիրելի և ամենէն մեծ թնամակալ պահապանին, որ էր գիցուհին ԱՆԱՀԻՏ, մեծապէս պատուական և պաշտեալ 'ի Հայոց քան յայլ ազգաց. մինչև ոսկիէ արձաններ կանգներ էին անոր յԱրիզա աւան՝ ընդ մէջ Մեծ և Փոքր Հայոց, ուր շրջակայ ժողովուրդք այլ յուխտ գային. ուր և մեծազօրն Տրդատ աղաչելով զհայրենիսն 'ի Սասանեանց բռնութենէն՝ համաշխարհական ասն և շնորհակալութիւն մատոյց. և իր հրովարտակաց և խօսքց մէջ կ'ըսէր. « Մեծի Անահտայ տիկնոջ, որ է » վտակք ազգիս մերոյ և կեցուցիչ. զոր և Թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ Թագաւորն Յունաց. որ է մայր ամենայն զգաստութեանց, » բարեբար ամենայն մարդկան բնութեան, և ծնունդ է մեծին արին Արամազդայ։... Մեծն » Անահիտ որով կեայ և կենդանութիւն կրէ երկիր Հայոց։... Խնամակալութիւն յԱնահիտ » տիկնոջէ » (հասցէ ձեզ Հայոց)։ Այս տեղս էր դէպ ն բուն դիցուհին Հայոց Ռոգտոտոյն. ուր կու պատուէր Հայաստանի Տիկինն, նաև յօտար ազգաց. կարծուելով 'ի Լատինաց Տիտա, (որ և աջ կողմէն կարգալով Անտիտ կարգացուի). 'ի Յունաց՝ Արտէմ, և Պարսից և մերձաւոր ազգաց մէջ այլ նոյն Անահիտ անուամբ ճանաչուէր. բայց ամենէն աւելի Յունաց պարծանք Ռէնոս դիցուհոյ նման ճանաչուէր. ինչպէս Տրդատայ գովութիւնն յայտնէ. և Պլատոն փիլիսոփայն այլ յայս կարծիս էր. սակայն անունց Արտեմեայ. Իսաբելացւոց Սիւլիտաեայ. Փիւնիկեցւոց Ա-

տարեայ, Լուսնի, Աստղեան, Հերայի և այլոց գից այլ զուգական կու տեսուէր. միով բանիւ ամենայն աստուածական հաճոյ յատկութիւն ճանաչէին Հայք յԱնահիտ դիցէն, և անոր համար մեծապաշտօն պատուէին։ Յայն պաշտօն կու հրաւիրեր Տրդատ և զԳրիգոր, որ քիչ առանէն զինքը պիտի հրաւիրեր 'ի մեծագոյն և 'ի սրբազան պաշտօն. ինչպէս որ յետոյ անոր հաւանութիւնն՝ իջուցանելով զԱնահիտ 'ի տիկնութենէ Հայոց՝ տեղը բարձրացուց զմիայն արժանին պաշտօն յետ Աստուծոյ, զՍ. Կոյսն Աստուածածին, արդարև երկնից և երկրի տիկին. և մեծահանդէս տօն մը կարգեց 'ի նոյն 15 նաւասարդի (25 օգոստոս). զոր հին տօմարը Աստված տօն կու գրեն, և այլք՝ առանց որոշ յիշատակի՝ միայն եկեղեցւոյ և Աստուածածնի տօն. որ յետ ժամանակաց փոփոխելով կամ խափանելով, մոռացութեամբ քաղաքական և անահատական հանդիսից, նոյն Աստուածամօր վերափոխման տօնին հետ խառնուեցաւ, զոր Հայք տօնեն ('ի կիւրակէի մօտ 'ի կէս օգոստոսի. իսկ այլք 'ի 15 օգոստոսի, որ է 5 նաւասարդի)։

Այս տօնիս նախընթաց օրը, որպէս յայտ է ամենուն, հիմա Շողակաթ տօնը տօնեմք, որ է Էջմիածնայ մայր եկեղեցւոյն նաւակատիքը, և Եկեղեցւոյ և Աստուածածնի յիշատակ մը. զոր նոյնպէս տարեմանց Ս. Լուսաւորիչն, և հաստատեց 'ի 4 նաւասարդի (14 օգոստ.) որ կամ իր տեսչական օրն էր, և կամ հաւանօրէն՝ ուրիշ հին հեթանոսական տօնի մը օր, որոյ խափանիչ դըրուեցաւ Շողակաթն, ինչպէս Վարդավառն այլ Աստղական տօնին. և անոր պէս այլ գեղեցկութեան, վայելչութեան և պատուհանաց յիշատակ մը. կամ դիցուհւոյ տօն մը գուշակել կու տայ անունն։

Թուի թէ ուրիշ ոչ մ՚այլ կամ թափորի պէս հանդէս մը կար անկէ քանի մը օր եռեւ, նաւասարդի եօթին (17 օգոստ.), ընդ մէջ Ամանորայ և Անահտի ոնից, որուն պատճառն անծանօթ է մեզի, բայց տեղը հաստատուած է ՏՈՆ ՊԱՏԿԵՐԻ ՅԻՐԱՄՕՐՆ։

Ե

Ի՛նչ զարմանալի փոփոխութիւն և անմման յարմարութիւն։ Ասորկան և Անահտայ ոսկէծղի ոսկէձոյլ ոսկիամոյր անգրեաց տեղ, փոյտեայ խաղոր անշուք պատկեր մը. բայց կերպարանածը անոնցմէ շատ և շատ մեծ, աստուածային իսկուհւոյ մը, ոչ քեռ և դստեր կամ կնոջ դից, այլ Մօր Աստուծոյ, և անամուսին մօր. որ է ըսել կին և կոյս. միով բառիւ Կուսամայր. հրաշալի՛ բան, բոլոր հեթանոսաց իմաստութէ վեր. որք Ասորկայ և Անահտայ նման մենասէր կոյսերը՝ դրին դարձուցին 'ի կարգ անպարկեշտ կանանց. քրիստոնեայն՝ կուսի մը գերագոյն շնորհք իր յաւէրժ կուսութիւնը Հանչնալով՝ հաւատաց զնա մայր Աստուծոյ, և միոյ միայնոյ Աստուծոյ. որով և միայն Տիրուհի երկնից և երկրի։

Այս ոնս հնագոյն է քան զԳրիգոր Լուսաւորիչ, և ըստ բարեպաշտ և ընդունելի աւանդութեան՝ հաստատեալ 'ի Բարգուլիմայ։ Այս Ա. ռաքեալ որ ղրկեցաւ 'ի տեսութենէ Տիրամօրն ոնոր ննջմանը առեն, բաղդաւոր եղաւ անոր ըսկզբնակերտ պատկերը ժառանգելու, և բաղդաւոր ըրաւ զՀայս անոնց ժառանգեցընելով։ Այս պատկերը քանդակեր և նկարեր էր Յովհաննէս աւետարանիչ, և Տիրամայրն դնելով 'ի վերայ երեսացն օրհներ և թողեր էր յիշատակ առաքի-

լոյն և աշակերտաց և ամենայն հաւատացելոց. առաքեալք՝ վասն վիրիթարելոյ զԼուսաւորչիմաս՝ անոր պարգևեցին. և նա իբրև սերունդաբան նը. շան մը հետը կու տանէր՝ ուր որ քարոզութեան կ'երթար յարևելս, 'ի Հնդկաց մինչև 'ի Հայս. և անով սուտ աստուածներու կու վերցնէր, ճշմարտութիւնը կու հաստատէր. անով արևու նախրական աշխարհին մէջ (Խորասան) զարև խաչարկելով՝ անոր բազին ապաստար մոգերը՝ աշակերտաց 'ի պաշտան Արեգականն արդարութեան, և հետը բերաւ 'ի Հայս. կարգեց առաջնորդ նորընծայ հաւատացելոց։ Մեր աշխարհին հարաւային արևելեան կողմերը պարակելով, եկաւ այն բարձր և անծանօթ Տօրոսի կողմերը, որք Ամանոսայ ծովուն պարապտերը կ'անջրպետուին 'ի բարձր հովտէն Տիգրիսի. որոց վրայ ձմեռան գիշերն բարդ բարդ ձիւներն 'ի գարնան բազմավտակ հեղեղաջուր գառնալով, սառիկ գնդընչմամբ կու թափին թաւերուռն լեռնապատ խորաձորի մը մէջ, և կ'երթան խառնուելու արևելեան Տիգրիսի ծոցը, որ այն կողմէն կու բղխի։ Վախն և բռնութիւնն աւելի ամենեզ տեսարան մը կ'ընծայէին այդ գժուարակոխ անհուրատես կոհակացեալ լերանց, քարաշէն ամպագիսակ բերդերով. որոց մէջ անուանի էին երկուքն, Կանգատ կամ Ամատ և Դարիոյտ։ Ինութեան և բռնութեան ահեղութեան վրայ՝ աւելցուց կապաշտութիւնն իր պատկառանքը և արհաւիրքը. յիշեալ գագաթանց մէկուն վրայ կապնած էր սիկիրն Հայոց՝ Անահիտ. բայց ոչ թշուառ յիրդն կայ՝ ծաղկանց և մարմանդից մէջ խաղով ծիծաղով նազելով, այլ իբրև սեղանոյն գժուարութենէն, ամառուան կայծակներէն, ձմեռուան սառամանիքներէն, և ապառաժից ժանտութենէն՝ խոժոռած գմենիայեաց գլխոյ մը կ'երևար. որոյ

չանթերը կայծակները կու ցաղքեցընէին խաբ-
բայ քուրմք. քարայրի մը մէջ քաշուած, սաէպ
սաէպ մեծամեծ կռաններով սալեր սարեր զար-
նելով թնդացընելով և կայծ հանելով։ Որչափ որ
սհաւոր և գժոխելանելի էր այս տեղ՝ այնքան
այլ յաճախելի ուխտաւորի մը եղած ժողովուր-
դեան. որք սուելի սոսկմամբ քան սիրով կու քը-
շուէին կու գային հոս, իրենց ցաւերուն կամ իզ-
ձերուն համար ճար ու ճարակ գտնելու. խաբ-
բայ քուրմք այլ կու տային անոնց ազատելի դե-
ղեր և ծրարներ, այլանգակ կռոց արձաններու
ձեռքէ։ Ահա այս տեղս եկաւ Ս. առաքեալն Բար-
թուղիմէոս Խորասանէն գարձած ատեն. և իր
բերած Տիրամօր պատկերն բաւական եղաւ ամե-
նքան գաղրեցընելու. գարբնաձայն թնդմունքն
լռեցին, կայծերն մարեցան, կուռքն կործանե-
ցան, Անահիտ անյայտ եղաւ. իսկ անոնց պաշտ-
ենայքն արտասած՝ կ'ուզէին քարկոծել զառա-
քեալն և իրեն հետ եկող հաւատացեալքը. իսկ
նա ոգեկիկ խաչով մը ամենուն յաղթեց, առաւ
ու անկեց Անահտայ տեղ, և ամենքը փախան,
չիք եղան. և անկէ ետև այն խաչին կ'երկրպա-
գէին. մինչև յետ 250 տարեայ եկաւ Ս. Լուսա-
ւորիչն, յարգուելեամբ առաւ այն խաչը իբրև յի-
շատակ առաքելական, և հետը կու տանէր, ին-
չուան որ առանձնացաւ'ի Սեպուհ. յետոյ գար-
ձեալ այս կողմերս բերին զայն և կանգնեցին 'ի
վերայ գերեզմանի ահեղազոր թագաւորին Տըր-
դատայ, մարմինը հոս փոխադրելով'ի Թորգանայ։

Այն ոգեփայլ լեռներուն վրայ ելնել յաղթեց
և յուխտ՝ չարաչար աշխատանք և պաշտօն էր.
անոր համար Ս. առաքեալն իր հրաշագործ Տի-
րամօր պատկերը պահեց այն լերանց ձեւացուցած
խորաձորին մէջ, ապահով ու ծածուկ խորշ մը,
որոյ մուտքն կ'անցնի լերանց հատանքէն ձեւացած

Տիգրիս գետն. այն քարէ գարերուն մէջ իր ձեռագիր փոքրիկ եկեղեցեակ մը շինեց, ու հոն գրաւ հրաշալի Պատկերը. քոնին այլ քանի մը խրատիթ շինել տուաւ, և բոլորը մեկէն անուանեց ՀՈԳԵՍՑ ՎԱՆԳ. ուր բնակեցուց նորընծայ կուսանք, զորս 'ի Գոգթն գաւառէ բերած էր հետը. և անոնց յանձնեց Տիրամօր պատկերը և մատուռը. նորահաւատ քրիստոնէից այլ հովիւ քահանաներ ձեռնադրեց, որք ատենի գաղտուկ կ'երևէին քան թէ կուսանքն։ Անոնց առաջնորդ էր Մարիամ քոյրն Յուսկան կամ Յուսհատայ, զոր առաջին հայրապետ կրնամք անուանել. որ և յետ շատ տարիներու ուղելով բոլորովին առանձնացեալ ապրիլ, Թողուց Հոգեաց վանքը, և գեղոյն գիմացի կողմն անցնելով, քարայրի մը մէջ խցիկ մը շինեց, հոն ճգնեցաւ, հոն մեռաւ և Թաղեցաւ։ Իսկ իրեն տեղ մայրապետ գրաւ զԱնա. Որմզդատայ կամ Մազդատայ և Մաքովարի [1] քոյրը. որ նոյնպէս քանի մը տարի հոգալով կուսաստանը և վանքը, յետոյ առանձնացաւ ուրիշ կողմ մը. Դարբնաքարի ձորոյն այն դին, և ինքն այլ հոն իր խրատիթին մէջ վախճանեցաւ, իրեն յաջորդ Թողլով իր քոյրը Մարեա. որուն ուրիշներն այլ յաջորդեցին. և միշտ հաւատացեալք, Թէ և սակաւաթիւ, ճնացին հոն, ինչուան Հայոց աշխարհօրէն հաւատացեալ 'ի Գրիգորոս։ Ուսկից քանի մը տարի առաջ՝ Հռիփսիմեան կուսանք այլ եկան հոս ուխտի, և միխիթարուեցան իրենց պէս գաղտուկ կեցող հաւատարիմներէն։ Այսպէս անկոխ անտառ քարերու սորերու մէջ ճշմարտութիւնը կուպահէին փափուկ կուսանք, մինչդեռ կայսերը և հրա-

1 Զատանք կու յիշէ Խորենացի Իրրև իր ատեն ծանօթ անձինք ուրիշ պատմութիւններէ, որք կորսուած ըլլալով՝ մեզի անծանօթք են։

կայ թագաւորք կու հալածէին իրենց տիրած տեղերէն։ Վախնալով որ հոս այլ չհասնի հալածանքն՝ Հռիփսիմեանք ստիպեցան թողուլ զգուշաւոր խազազութեան մէջ իրենցմէ առաջ եկած Տիրամոր պաշտօնեաները, և գնացին դէպ՝ ի կողմն Վանայ։ Իսկ երբ Լուսաւորիչն սկսաւ քրիստոնէութիւնը համարձակ տարածել, Հոգեաց վանքն այլ հռչակեցաւ, լուսաւորեցաւ, հրաշքներով պայծառացաւ. որոց սնձամբ ականատես վկայ ըլլալով սուրբ Հայրն մեր, ընդարձակեց վանքը և շինեց Ս. Սխեն եկեղեցին. բայց առաքելոյն ձեռակերտ Տիրամոր տաճարիկը անարատ թողուց, նոյն ձևով և մեծութեամբ, և նոյնպէս այլ մնաց գրեթէ ինչուան վերջը. բայց տեղն՝ ի Լուսաւորչէ նորոգեալ՝ երթալով անուանի եղաւ, ուր յետ կուսանաց արք կրօնաւորեցան, և Հայոց անուանի վանորէից և ուխտատեղեաց և եպիսկոպոսարանաց մէկն եղաւ. վանաց երէցն ու եպիսկոպոսն կոչուեցաւ Արքաբանի Պարսէրն առաջնորդ, որ նոյն է ընդ Հոգեաց վանաց. և երբեմն նոյն իսկ Անձևացեաց եպիսկոպոսական աթոռն, որոյ առաջին՝ ի պատմութեան յիշատակեալ եպիսկոպոսն է Աբիսողոմ՝ ի դ դարու, մեծին Ներսիսի օրերը։

Այս սուրբ Ներսէս հայրապետս այլ եկաւ հոս ուխտի և հեռը բորոտներ բերելով՝ բժշկեց Տիրամոր ընորհքովը, և հիւանդանոց մ՝ այլ շինեց ուրիշներու համար. որով երրորդ անգամ մեծ հաստատութիւն առաւ սուրբ Պատկերին տօնը. զոր և յետագայ Հայրք և եպիսկոպոսք հանդիսաւոր կատարէին այսօրս (7 նաւասարդ, 17 օգոստ.) իրրև՝ ի յիշատակի վերափոխման կուսին, որպէս թուի՝ ի նոյն ինքն յառաքելոյն Բարթուղիմեայ դրուած, և հաստատուած՝ ի Ս. Լուսաւորչէն։ Ինչուան՝ ի վերջին դարս յուխտ և՝ ի պատուի

Ճեաց Հոգեաց վանքն, և Պատկեր Տիրամօրն. որք հիմա նոր հնաազօտութեան և լուսափայլութեան կարօտ են, քրիստոնէութեան հնագոյն և առաջին ուխտատեղեաց, կուսատանաց և վանաց մէկն ըլլալով։

Այս տեղերս այսպէս սառորդրէ ակնատես քերդող ոմն՝ Ներսէս Մոկացի, մեզմէ երկու և կէս դար առաջ։

Ընչեաք փայտին որ ընդհեցաւ
Բարդուղիմեայ վիճակեցաւ։
. . . . . .
Նկեալ յերկիրն Անձեւացեաց՝
Առ ի համբաւ քարի միոջ,
Յոր էր ազուէսն ամրացեալ յորջ,
Ընդ Անահտայ բնակէր սիկնոջ
Մարդախուշոշ կրանոգոյ.
Գանգի փայլակն ի վայր անկեալ՝
Ի գարբընաց քրբայս արկեալ,
Զգեղն որ կազմէր ախտիւ խառնեալ
Յուռութուլունս մակարդացեալ.
Որպէս ի Ճառքն պատմեկան
Ուսուցանէ մեզ միաբան,
Եւ զվիշապին հին մեքենայն
Կիպրիանոս այր սրբազան։
Զի հին վիշապն անգըր բռունէր
Եւ կրանին համաձայնէր,
Խախմամբ թնդման ահ արկանէր,
Չնոսա յուշոյ միշտ խաբանէր։
Իսկ արք տեղւոյն զերդ խելագար
Անդ խռնէին գեգերաբար,
Թարախածոր առեալ ծըրար
Եւ կոչէին Դարբընաքար։
Յոր վայր հասեալ առաքելոյն
Փութով խաբան առնէր գործոյն,

Դարբընաքար բախման թեդոյն,
Որ գործանեայքն էին նիւթոյն.
Եւ զդիցամոյրըն խորտակեաց
Ընդ բանուածիւն քակեալ դիւաց.
Փարանձաւէն յայն հալածեաց
Եւ սրբութեան տեղիք գործեաց։
Իսկ չար զինուորք գունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձու լերինն,
Վիրդս ի վիմաց յայն հոսէին
Ընդ այն և ՀԻՒՍ արձակէին։
Բարգուղիմոս զայն տեսանէ
Բարձրաւանդակ լեառն ելանէ
Խաչ մի փոքրիկ անդ օծանէ
Փարիս մի զքաջքն արտահանէ.
Զոր եւ յետոյ սուրբըն Գրիգոր
Զարձանն առեալ՝ պահէր ընդ իւր,
Մինչ Տրդատայ մահուանն աւուր
Երիսին եդ պըսակաւոր։
Կանգնէ եւ անդ կրկին նշխան,
Ցըստորոտով լերինըն յայն.
Կարկառակոյտ մի սուզական
Զեռնագըրեալ ի մեծ արձան։
Եւ է տեղին յոյժ լեռնափակ
Պատեալ վիմաք երկնագիտակ,
Իսկ մէջ ծոցոյն հարթայատակ
Հոսանահերձ վընտաքատակ.
Զի Տիգրիսին մեծի կայլակ՝
Որ յԱդենայ քառորդ վրտակ,
Ցատմամբ խազայ միչտ հատարձակ,
Ընդ գոգ հովին արտգարագ.
Մերձ կանգնաւոր մեծ ամրոցին՝
Որ Ապառաւուց քար կոչէին,
Ուստի լերանցըն ջուրք հոսին
Եւ դեռանան 'ստ գարնան մասին,
Գայ զառիվայր առասպարին

Անցեալ ընդ հիմքն տաճարին,
Ընդ արքային շիրմով պարին,
Ապա ի մի խառնեալ յարին։
Հիմն արկանէ անդ հաւատոյ՝
Ընդ խորանին կառուցելոյ.
Շինեալ յանուն Կուսին հոգւոյ
Եւ պատկերին որ անդ սրբոյ։
Անդ առաքեալ Բարդուղիմին
Կառուցանէ իւրով ձեռքն
Փոքրը ձեւով զեկեղեցին
Եւ անուանէ Աստուածածին.
Զառեղին Հոգոյ-Լանչ անուանէ,
Եւ ի քրեր կանայս յանձնէ.
Երանելի փոքրիկ նոցա շինէ
Եւ ի գերբուկսն բաժանէ.
Կացուցանէ զքոյրն Յուսհատայ
Մայրպետ կրօնից գլուխ նոցա,
Զքոյրն Աւրմզդայ և Մաքովրայ
Եւ զայլ կանայսն յետ նոցա։...

. . . . . .

Բագրեւանդայ բլուրներէն բարձրաձայն հնչած նաւասարդի երգերն՝ հոս այս Անձեւացեաց քարայրից մէջ ցածնալով կու ծածկուին։ Ո՛ւր էր թէ դարձեալ այս անձաւներէն արձագանգելով ելնէին հնչէին՝ ի բարձրաւանդակ Բագրեւանդ, յիշատակաց Հայկայ և Տրդատայ, Բարդուղիմայ և Գրիգորի, ամենայն անվնաս յիշատակաց Նաւասարդայ։

ԺԳ

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ

28 Նաւասարդի. — 7 Սեպտեմբերի.

Ա

Կէս գարէ առաջի էր որ Հայաստան յերկու վիճակ բաժնուած՝ երկու ինքնակալ տէրութեց վերատեսչութեան տակ, Պարսից և Յունաց, ասոնց երկար և աչխարհախռով կռիւները գրեթէ բոլորովին դադրեցուցեր էր։ Բայց Յազկերտ Բ՝ հաղիւ թագաւորած Պարսից, յամի 439, անպատճառ պատերազմ հրատարակեց ընդդէմ կայսերաց. հրաման տուաւ իր յառաջապահ սահմանակալ գունդերուն, որ մէկն Աւարհատանէն երթայ Մծբնայ վրայ, մէկ այլն յԱարպատական մանէ 'ի Հայաստան, Յունաց հայկական բաժինը խլելու։ Այս գունդս՝ Սրատխայ հովիտը և Վանայ պարտատափը անջրպետող միջոցէն փութալով՝ կ'ելնէ, Մազկոտան վայելչութիւնները կոխկռտելով կու փճացնէ, ասնահանգէս Բագրևանդայ բարձրատափին վրայ կու բռնակի. և առանց ակնածութեան և գթոյ՝ կու գայ նոյն խակ անոր չինագլուխ ասնագլուխ տէզոյն՝ Բագաւանին՝ քով՝ իր զօրապետաց վրանները կու զարնէ։ Ո՛րքան այլափոխուած էր Բագաւան այն առջի

զուարթածաղիկ պայծառութենէն, զոր երբեմն[1] տեսար, Հայկակ. և սակայն շատ տեսն չէր անցած այս երկու կերպարանաց մէջ. հազիւ տասն տարի էր՝ որ Ա. յարարատայ Թագաւորին բանակն չէր կանգներ 'ի Շահապիվան, և ոչ իր դրօշներն ու վաշտերն փռուէին 'ի Բագաւան։ Բագաւան թէ և դեռ իր հեթանոսական անունը պահէր, բայց գրեթէ գար ու կէս առաջ Լուսաւորչի աջով օծուած էր, Տրդատայ և իր աշխարհախումբ բանակին հոն մկրտուած տեսն. և Տարօնոյ դիցաւանին հետ՝ նուիրեալ էր Ս. Յովհաննու Մկրտչի. որոյ անունը տանելով իր սրբեալ ճակատուն վրայ Թագաւորն Տրդատ, իր յիշատակն այլ խառնեց Մկրտչին հետ. անոր համար շատոնք կարծեն թէ յանուն Յովհաննու-Տրդատայ Թագաւորի՝ Ս. Յովհաննէս կոչուի մինչև ցայժմ Բագրեւանդայ Իւլ-գիւխ անուանեալ տաճարն և վանքն. և 'ի միացեալ յիշատակ Տրդատայ, Լուսաւորչի և Յովհաննու Մկրտչի՝ Հայոց ամենէն սրբազան ուխտատեղեաց մէկն է եղած. և հիմա մեր աշխարհքին սրբազան տաճարաց ամենէն վեհմագոյնն է ահեղակերպ մեծութեամբն և հընութեամբն. դեղեցիկ ծնունդ Հարատարապետութեան մեր Իսրայէլ վարպետին և առատաձեռնութեան Հերակլի կայսեր. որոյ շինութեանն տարին և նուագարանքը Հայոց դիրն նշանակէ 'ի 28 նուագարդի (որ է 7 սեպտեմբերի) 639 տարին։ Այսօրուան քեզի յիշելիքս այլ. Հայկակ, զարմանագէպ զուգութեամբ՝ նոյն օրաթուին ընը-շանած է և նոյն գարաթուն, այսինքն յեօթն սեպտեմբերի յամին 439, ՀԻՆԳ 200 տարի առաջ։ Այս տաճն Բագաւանի Ս. Յովհաննէսն կայսերական կերպարանքը չունէր, սակայն անշուք

[1] Տես Տն. Ղեւոնդեան։

չինուած մ'այլ չէր. Երիզորի և Տրդատայ գաստակերտ ըլլալով. վասն այսորիկ ոչ միայն պաշտօնական ժողովուրդը, այլ և ժողովրդապետք և հայրապետք գոյին սպասուելու զեղջին յիշատակաց։

Եւ ահա հիմ՝ այլ Յաղկերտի վարազցեալ զօրաց արշաւանաց առեն, հոն Բագաւանայ խաղաղաւէտ խորաններու քով քաշուած կու նստէր, և երկայն գիշերուան լուսապատկող լապտերի մը պէս՝ որ գանգաղ առաւօտուն մօտ պսպղալով կու մարմրի, այնպէս կու հսկէր մօտ'ի գերեզման իննանամեայ ծերունի մը. բայց աստուածափայլ աստուածապատիս ծերունի մը, որոյ նման՝ ամենայն բարեմասնութեամբքն և ծայրացեալ հասակաւն, ոչ յառաջ և ոչ յետոյ չերևցաւ'ի Հայաստան։ Սա է Թոռն Թուռնորգուոյ սրբոյ Լուսաւորչին մերոյ, մեծ կաթուղիկոսն Հայաստանեայց Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ։

Բ

Ամեն կենսագիրքն վկայեն թէ ծնած և մեռած է մի և նոյն ամսաթուի մէջ նաւասարդի 30ին. վախճանած տարին յայտնի նշանակեալ ըլլալով. և շաբաթուան օրն ալ (հինգշաբաթի), կ'իմանամք որ այդ նաւասարդն շաբաթական ամսուն է, որոյ 30ն էր սնչարժ նաւասարդի, 28 յամին 439, և 7 սեպտեմբերի. իսկ իր ծնած տարին՝ ըստ չարժական տարւոյ նաւասարդի 30ն քսան կամ 21 օր այլ եաք էր, որով Ս. Սահակայ ծնած օրն կ'ըլլայ սեպտեմբերի 27, համարելով թէ ծնած տարին է Քրիստոսի 352-53 թուոց մէջ։ Յայսմաւուրաց մէկն կ'ըսէ Սահակայ համար, Կեցեալ ամս ԽԶ (56), որ ուղղագրելով 22. մեղի կ'ընծայէ կենաց տարիքը 86, և ծնած տարին 354.

իր աշակերտքն [1] վկայեն թէ հաստատ «'ի յերկար ծերութիւն». սակայն անհերքի է պատմչաց ոմանց ըստ ածն՝ թէ 110 կամ 120 տարի ապրած ըլլայ Ս. Սահակ. վասն զի այդ թուով՝ ծնունդն կ'ելնէ յ'319 կամ 329 թիւն Քրիստոսի, յաւուրս Ս. Լուսաւորչի։ Բուսական է Ս. Սահակայ 86-90 տարուան կենաց՝ դեռ սովորական երկայն՝ շքեղեան մ'այլ. որ և երկարութենէն աւելի նշանաւոր եղաւ իրեն պատահած դէպքերով և անձինքներով. որով ոչ միայն ազգային պատմութիւն այլ և ընդհանուր նոյնաժամանակ պատմութեան մէջ լաւ նշանելի է. ազգայնոց մէջ՝ թէ քաղաքական թէ եկեղեցական և թէ ուսումնական տեսութեամբք. իսկ օտարաց առջև՝ աւելի եկեղեցական մերձաւորութիւն։ Սահակայ երկայն կեանքն և երկայն կաթուղիկոսութիւնն (51 տարի), ոչնունդն և զարգացումն 'ի Կեսարիա և 'ի Կոստանդնուպօլիս։ զինքը մերձաւոր և ծանօթ և շաղկապ ըրին այն մեծամեծ Անձանց՝ որք եկեղեցւոյ մէջ վեհագոյն յեղանակ մը բռնորին, անոր ամենէն գերապանծ հայրապետաքն ըլլալով։ Այս յեղանակս՝ «այն առաւելն է, կ'ըսէ Վիլմէն, որ եկեղեցին ընկերական օրինաց այլ հիմնեալ հաստատեաց և հաստատական տերութիւն մը դարձաւ. այն առաւելն է, որ 'ի պերճախօսութեան և 'ի գրութեան՝ յառաջ բերաւ այն վսեմ և պայծառ հանճարները, որոց ոչ երբեք նման գտուեցան հաւասարորդք՝ բայց եթէ Դաղղիոյ ծէ դարու որբազան քարոզիչքն։ Ո՛ր-չափ մեծամեծ մարդիկ, որքան գերագոյն ճարտարութիւնք ելան՝ Ս. Աթանասէն մինչ 'ի Ս. Օգոստինոսի մինչոցն. Ի՞նչ հրաշազօր մտաւորական շարժմունք բոլոր հռոմէական աշխարհին մէջ.

1 Ղազար Փարպեցի։

» ի՞նչ տաղանդներ՝ խորհրդական մրցմանց մէջ
» հանգիստացեալ. ինչպիսի՞ այժ մարդիկն՝ հաւա-
» տոց վրայ բանեցուցած. ի՞նչ կերպարանափո-
» խութիւն բովանդակ ընկերութեան, որ եղաւ
» ձայնիւ այն կրօնից՝ որ գեանոգամբանների
» կու վերանայ 'ի գահոյս Կեսարուց, որ ուզա-
» ծին պէս 'ի գործ ածէ՝ իր մարարիրասաց արիամբ
» մաշեցուցած սուրը։... Մատց և արիութեան
» ամենէն ամենալի ցանուութեան իլած առանն է,
» երբ ներքինիք կառավարէին զինքնակալութիւն,
» և բարբարոսք վրդովէին, այն առանն է որ Ա-
» թանաս մը, Բարսեղ մը, Դիր. Նազիանզացի
» մը, Ոսկեբերան մը, Ամբրոսիոս մը, Օգոստինոս
» մը՝ կու լսեցընեն ամենէն մաքուր բարոյականը
» և ամենէն գերագոյն պերճախօսութիւնը։ Մի՛այն
» սոնց հանճարն կանգուն մնաց ինքնակալու-
» թեան ընկնալու առեն. կործանմանց և փլա-
» տակաց մէջ սոնք՝ հիմնարկուք կ'երևին. և յի-
» բաւի, վասն-զի ճարտարապետք էին այն մեծ
» կրօնական շինուածոյն՝ որ ապեսի փոխանորդէր
» հռոմէական ինքնակալութիւնը։։ Մեր Հայոց
ազգին այլ հին թագաւորութիւնն և ինքնաստ-
ութիւնն վերնալու առեն՝ Ս. Սահակ չէր որ
զազգն և զեկեղեցին կանգուն պահեց՝ մինչև ցայժմ.
(Թերևս աւելի քան) հաւասար այդ յոյն և լա-
տին սուրբ Հորց, որոց ոմանց[1] կենաց վերջին

1 Ս. Սահակայ ծնած տարին (354) և քիչ ատեն վերջ (13 Դեկտեմբ.) ծնաւ արիմանան (և Թերևս ընդհանուր) ե-
կեղեցւոյ մեծագոյն վարդապետն՝ Ս. Օգոստինոս. անոր վարդապետակիցքն՝ Ամբրոսիոս և Հերոնիմոս 14ական պատանեակք էին (ծնեալք յ340). Ոսկեբերան՝ որ Ս. Սահակէն 10 տարի վերջ սկսաւ հայրապետութիւնը և անկէ 32 տարի առաջ լսեցուց, տասնամեայ մանուկ էր (ծնած յ344)։ Ս. Սահակ իր պապուն կենդանի օրհնութիւնն առած է, վասն զի սուրբ Վրթանէս վախճանե-

կայծերը տեսաւ իր նորավառ աչքն, ամանց պոյծառագոյն օրերուն հասաւ, ոմանց կենակից և աթոռակից եղաւ, շատերուն՝ և նաև իրմէ վերջ սկսողներուն՝ շրջանին լմընցընելը տեսաւ, և հազիւ զոմանս թողուց դեռ իրենց պայծառ աթոռին վրայ։ Առանցմէ ոմանց, և անոնց 150 ընկեր հայրապետաց և Կոստանդնուպոլսոյ և Բ տիեզերական ժողովոյն, (յամին 381), հաւանօրէն ակնառաւ եղաւ, իր կաթողիկոսութենէն ութ կամ ինն տարի առաջ, երբ Թերևս սուրբ կարգալ առած չէր, բայց իբրև որդի և Թոռնորդի սուրբ քահանայապետաց և վկայից՝ ծանօթ էր 'ի դրան կայսերաց։ Քահանայապետութենէն առ-

ցաւ հաւանօրէն յամին 355. յաջորդ տարին (356) Եգիպտոսի և ամենայն միտնանց արեգակն մարաւ, սուրբն Անտոնիոս 105 տարուան. տարի մը նաև, 357, նոյնպէս հարիւրը անցած վախճանեցաւ Ոսիոս՝ որ Գիկիոյ Ա. տիեզերական ժողովոյն գահակալութիւն բազմեր էր. այն ժողովոյն և բոլոր արևելեան Ս. Հայրց պարտակցութեան մեծն Աթանաս՝ Ս. Սահակայ պատանութեան ատեն իր գահուն վրայ կ'ելնէր կ'իջնէր (+ 373), և Թերևս ընդուներ էր զնա յԱղեքսանդրիա իբրև Թոռն իրեն աթոռակից հայրապետաց. նա առաւել Ս. Կիւրեղ յԵրուսաղէմ, որ վախճանեցաւ Ս. Սահակայ կաթողիկոսութենէն 3 տարի առաջ (386), և իր յաջորդն Յովհաննէս հայրապետ։ Մեծափառ և վայելչաբան Բարսեղ՝ որ Մեծին Ներսիսի հետ կարգ առեր էր, անչուշտ անոր որդւոյն մեծարող գաստիարակ այլ եղաւ, և իր կարգակցին եղերական մահը սղբալով՝ կու սպասէր որ փոխանակ կորնչացի Սահակայ՝ Ներսիսեանին Սահակն իրմէ առնու իր հարցնման կաթողիկոսութեան ձեռնադրութիւնը. բայց կանխեց մահն (379). որ և յաջորդ տարին (380) մարեց Աստուծոյ անապատներուն արևը, զՍ. Եփրեմ։ Մեծին Բարսղի հոգեկից տարեկից և պատուակիցն Գրիգոր Նազիանզացի՝ վախճանեցաւ Ս. Սահակայ կաթողիկոս նոյնած տարին (389). իսկ անոր (Բարսղի) հարազատ եղբայրն Գր. Նիւ-

ջի կեանքը, 35 տարի, աւելի Հայաստանէ դուրս քան ներսը անցուցած կ'երևի։ Բոլոր մեր նախնի լուսաւորչազարմ հայրապետք՝ Յունաց մէջ կըրթուելիւն առած են. մանաւանդ Ս. Ներսէս, որ նախ 'ի Կեսարիա և յետոյ 'ի Կ. Պոլիս վարժեցաւ յուսմունս. և ըստ պատմչաց ոմանց, առաջին քաղաքին մէջ իր պատանեկութեան առեն Վարդան Մամիկոնեան նախարարին Սանդուխտ դուստրը կին առաւ, ըստ այլոց (որ աւելի հաւանելի է) Կոստանդնուպոլսոյ մէջ Ասպիոն անուամբ ազնիւ (Յոյն) իշխանազին դուստրը, որ և յետ երեք տարուոյ վախճանելով՝ թողուց զՆերսէս այրի պատանի մը. բայց անոր հասակին և մեծ օրէնին

սացի՝ անոր կաթողիկոսութեան 12դ տարին (400). արիսարիան Ամբրոսիոս՝ յիններորդ տարի կաթողիկոսութեան Սահակայ (397)։ Գիլ մ'եռև (405) վախճանեցաւ Ս. Եպիփան իրրև հարիւրամեայ. Երուսաղեմի հայրապետան Յովհաննէս 'ի 25դ տարին (414). Թէոփիլոս Աղեքսանդրացին յ'30դ տարին (418). Ս. Ներսիմոս յ'32դ տարին (420). մեծն և իր տարեկիցն Օգոստինոս ի12դ տարին (430)։ Ակակ Բերիոյ եպիսկոպոսն 112ամեայ 'ի 44 տարին կամ այլ եռև. իրմէ քիչ առաջ եռև երկու Ակակք այլ. եպիսկոպոսք Ամիդայ և Մելիտինոյ։ Վերջապէս այն ամենայն դիտուն և օրբաղան հրաչալի անձինքն, որք 'ի կիսոյ Դ դարուն ց'կէս Ե դարու փայլեցան յաշխարհի, և եկեղեցւոյ Հայոց և սիւնք հաստատութեան կ'ըսուին, ամենքն այլ անցան Ս. Սահակայ ալաց և կենաց առջևէն. իր գահակիցն և երբեմն գահակալուին՝ քաջահաւատն Փիրմոս արքեպիսկոպոս Կեսարիոյ՝ վախճանեցաւ նոյն իսկ Ս. Սահակայ վախճանած տարին. և այն մեծերէն՝ միայն Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի և Ս. Պրոկղ Ոսկեբերանի աշակերտն և աթոռոյն ժառանգն, երկուքն այլ Ներսիսի դըլխահար ախոյեանք, բարեկամք և թղթակիցք Սահակայ՝ և տարաբաղ կրսերք՝ իրմէ քանի մը տարի եռև փոքր ի բնոյ փառաւորեալ ժողովակցացն յերկինս։ (Կիւրեղ † 444, Պրոկղ † 446)։

ֆիլիմարանք, և յաւիտենական ֆիլիմարանք՝ մէն այլ՝ ֆիածին որդեակ մը, զմեծն ՍԱՀԱԿ։ Թերևս աշխարհքիս մէջ չէ եղած քան զառանք՝ վեհագոյն հայր մը վեհագունի որդւոյ։ Առաւած՝ ֆիայն մեր եկեղեցւոյ ընարեց 140 տարւոյ չափ՝ Վեհաց-ցւոց նման՝ քահանայապետական պայազատութիւն, որք վեց ազգ զիրար յաջորդեցին։

Սահակ 'ի Կոստանդնուպոլիս և 'ի Կեսարիա վարժեցաւ իր ցեղին և աշակերտանին յարմար ուսմանց. յունարէնը իբր մայրենական լեզու գիտէր, և ուսմամբ այլ այնքան հմուտ էր անոր քերականական արուեստին՝ որ նոյն իսկ բնիկ Յունաց վարդապետներէն շատը կու գերազանցէր[1]. սորերէն այլ գիտէր անշուշտ չափաւորապէս. պարսկերէնն այլ՝ իբրև տիրող լեզու 'ի Հայս. իսկ իր և մեր բնիկ հայերէն լեզուին՝ Թարգմանչն կրնայ ըսուիլ, կամ առաջին հայերէն. վկայ՝ հայերէն աստուածաշունչ գիրքն, որ իր ոսկի գրչէն և մեզը լեզուէն առած է իր մեծագոյն ողորկութիւնը, քան զոր քաղցր և կակուղ հայախօսութիւն չկայ ազգերնուս մէջ. և թերևս ըստ այսմ մասին՝ քան այլոցքն՝ արժանապէս գերազանց գտաւի քան զամենայն թարգմանութիւնս Ս. Իրոց։ Իր աստուածաշնորհ հայրն՝ Մեծն Ներսէս, լաւ գիտնալով և թերևս տեսանելով այլ իւր անարժան հորը, Աղամանդիէի, և հօրեղբօրը (Պապայ) անվայել վարքը, և խանդարեալ արքունեաց հրապոյրքը, չեմ տարակուսիր որ թոզեր էր իր գեղաբոյս ծնունդը զդոյշ տեղ և ըզդոյշ վարժապետաց ձեռք. որոց մէջ մեծանուն ընարեց Իսահակ այլ, քան հորը ահեղ և տխուր մահուընէն եաւ՝ փուլթալ անոր գահը ելնել հազիւ 20ամեայ հասակաւն, ինչպէս Ս. Գրիգորիս

1 Ղազար Փարպեցի։

իր պապուն հօրեղբայրն (16ամեայ). կամ նոյն իսկ իր հայրն Ներսէս, որ չէր աւելի քան զ'25ամեայ նորահաս եպիսկոպոս մը՝ գահը ելած առեն, և ոչ աւելի քան զ'35ամեայ 'ի գերեզման իջած առեն[1].

Ս. Սահակ այլ կանուխ կարգուեցաւ, Լուսաւորչի աթոռոյն ժառանգ մը աւելցընելու համար. բայց Աստուած սահմաններ էր իրմով գագրեցընել այն յաջորդութիւնը. և հրաշալի երկայն տեսիլքով մը յայտնեց անոր՝ մինչ գեռ սարկաւագ էր, և Վաղարշապատայ մայր եկեղեցւոյն (Էջմիածնի մեջ) հանուն կ'ընէր աւագ հինգշաբաթի գիշեր մը, իր ազգին եկեղեցւոյն հանդիպելիքն ուխտապահ և ուխտազանց հաւատացեալց գործովք։ Միայն գտարիկ մ'ունեցաւ Ս. Սահակ, զոր անուանեց իր անուամբն Սահականոյշ, և տուաւ 'ի կնութիւն Համազասպայ Մամիկոնէից տեառն[2]. 'ի Համազասպայ ծնան իրեք սահակավայել կորիւնք, Կարդն Վարդան, Համազասպեան և Հմայեակ. որոց առաջինը իրեն որդեգրեց իրրև հարազատ ժառանգ. բայց Վարդան այլ իր տուրբ պապուն պէս տրու զաւակ չունեցաւ՝ իր Դիցարիկ կնոջէն, այլ երկու ազջիկ. Վարդանոյշ և Շուշանիկ կոչուած, զորս գգուեց Մեծն Խսահակ իր պապական ծնգաց վրայ, և սեպեց իրեն պայազատ, Թողլով անոնց այլ իր սեփական հայրենի ժառանգութենէն[3]. հաւանօրէն իր Թոռանց Թոռունքն այլ

1 Ամենայն գաւազանագիրք մեր և պատմիչք Ս. Նիբսիի 34 տարի կուտան քահանայապետութեան. այդ թիւն իր կնոջ տարիքին տալու է։

2 Յորմէ կու հասասուի թէ ինքն չէր որդի դատեր Մամիկոնէից տեառն։

3 Որպէս մէջ յիշատակուի աւետարան մ'այլ իր սրանչելի մատանց իսկագիրն. կ'ըսուի թէ Ս. Սահակ իր ձեռաքն չատ գրքեր այլ գրեր էր։

տեսաւ Ս. Սահակ, զոնէ Ս. Շուշանիկեան շառաւիղքը, (որ՝ ափսոս, գժնկի մը հնար զուգեցաւ, Վազգենի Վրաց թագելին. սակայն այնով այլ աւելի ինքն զարմանալի և ծանելի եղաւ)։ Վարդանայ մեկայլ եղբարց ցեղն արու զաւակք յաջորդեց ինչուան ԺԳ դար (Թերևս անկէ ետև այլ), և Ս. Սահակայ արեամբը Պահլաւունի ըսուեցաւ. արեան հնա արդիւնքն այլ ժառանգեց արժանապէս. և ԺԱ-ԺԲ դարերու մէջ շատ արժանաւոր անձինք ընծայեց աշխարհի և եկեղեցւոյ. և այսպէս կատարեցաւ իր տեսլեան մէջ հրեշտակին խոսքումն, թէ վերջի տաներները իր ցեղէն նորէն քահանայապետներ պիտի ելնէին, և էին Գրիգորեանքն և Ներսիսեանք, յետ կիսոյ ԺԱ դարու մինչև 'ի սկիզբն ԺԳ դարուն։

Գ

Ս. Սահակայ վարքն չորս նշանափայլ երևոյթ կ'ընծայեն նկատմամբ իր անձին և ազգային պատմութեան. — Ա. ուսումնական պայծառութիւն կամ հայերէն գպրութիւն, որ իր գործակցութեամբն զարգացաւ. — Բ. Եկեղեցական կարգաց վայելչութիւն, որոց նոյնպէս հիմնադիր կըրնայ ըսուիլ, յետ Ս. Լուսաւորչին. — Գ. քաղաքագիտական կամ քաղաքական տեսչութիւն, որոյ մասնակից եղաւ հաւասար իր հօրն, և աւելի քան զբաղումն յօտար հայրապետաց. — Դ. անձնական առաքինութիւնք, կամ նուիրական կեանք։ Ասոնցմով կ'երևի սուրբն Սահակ աշխարհքիս մէջ փայլած ամենէն պայծառ հոգւոց մէկն. խորին տեսութեամբ, հարուստ հանճարով, տաք սրտով, գործունեայ կամքը, վսեմ զգացմամբք։ Այս չորս դէմաւոր դիտելեաց վրայ կ'ուզեմ գար-

ձրնել աչքդ. Հայկակ, թէ և համառօտ առաւ-
թեամբ, քան պատմական գաղարմամբ։

Որչափ որ Ս. Սահակայ ժամանակն փառա-
ւոր և պայծառ էր ըստ եկեղեցական կարգի, այն-
չափ այլ անշուք և անշնորհք մեր բնիկ աշխար-
հին քաղաքական վիճակն. իր երախայութեան
տարիները, նոր յաթոռ նստեր էր Տիրան թա-
գաւոր, սկիզբն ազգերնուս կործանման, իր ան-
քրիստոնեայ վատ և թոյլ վարուք. որոյ գէմն ջա-
նալով Ս. Ցուսիկ՝ պապահայր Սահակայ՝ զոհ
եղաւ. Տիրանայ յաջորդն Արշակ՝ չարագոյն քան
զհայրն, վեհագոյն քան զՑուսիկ քահանայապետ
ունեցաւ՝ անոր թոռը, զՍ. Ներսէս, որ ժրու-
թեամբ ջանաց այնպիսի մոլի անէին իշխանութեան
առեն՝ թէ զաշխարհքն թէ զեկեղեցին չէն պա-
հել. նոյնպէս անկէ այլ մոլի որդւոյն առեն, Պա-
պայ, որոյ անօրէնութեանն ինքն այլ զոհ եղաւ։
Իրմէ վերջ 15 տարւոյ չափ Հայաստանի քաղա-
քական շփոթութեանց միջոց, Պապայ, Վարազ-
դատայ, Արշակայ և Վաղարշակայ և Խոսրովու
թագաւորութեանց առեն՝ չորս կաթուղիկոսք
նստան օտար ցեղէ. ասոնց վերջնոյն առեն Խոս-
րով Գ յաջողեցաւ ազգին յերկու բաժնուած նա-
խարարները միաբանելով՝ հանգարտեցընել զՀա-
յաստան. և յամին 389 նստուց յաթոռ մեծին
Ներսիսի՝ անոր արժանաժառանգ որդին, զմեծն
Իսահակ, որ այն առեն իր հօրը վախճանած տա-
րին ըլլալով և անոր ձրիքն և շնորհքն զարդա-
բեալ և յաւելեալ, կերպով մ՚այլ անոր քահա-
նայապետութիւնը նորոգեց և յառաջ վարից ամ-
բողջ կէս դար։ Խոսրով քան զայս մեծ շնորհք
չէր կրնար ընել իր ազգին. և այնքան մեծ եղաւ
և գովելի շնորհքն, որչափ որ անով իր անձնական
շահուն ձեռաս բերաւ. վասն զի այնպիսի կաթու-
ղիկոս մը իր աթոռոյն հեղինակութենէն զատ,

թագաւորաց ազգական այլ ըլլալով՝ ազգին վրայ մեծ ազդեցութիւն պիտի ունենար. այս բանս վախ բերաւ Պարսից թագաւորին. և որովհետև Խոսրով առանց իրեն իմացընելու՝ այնպիսի նշանաւոր անձ մը Հայոց արքազան գահուն վրայ բարձրացուցեր էր, Պարսիկն զերկուքն այլ պարտաւոր սեպեց. և զի Խոսրով ուրիշ ինքնագլուխ գործեր այլ կ'ընէր, և ինչուան անկէ գլուխ քաշելու և Ցունաց հնազանդելու կու սպառնար, խուրնց իր Արտաշիր որդին՝ որ զԽոսրով վերցընէ'ի թագաւորութենէ, զՍ. Սահակ այլ 'ի հայրապետութենէ, Խոսրով խաբուելով և սխալուելով՝ Արտաշիրի ձեռքն ընկաւ. և տեղը գրուեցաւ իր եղբայրն Վռամշապուհ (390). որ քան զեղբայրն զգուշաւոր և վախկոտ գտուելով՝ ինքնագլուխ բան չէր ըներ. անոր համար չհաւանեցաւ Ս. Սահակայ խնդրոյն այլ. որ գտաները (Սահականոյշ) ազաչանք՝ խնդրեր էր իր փեսայն Համազասպ Մամիկոնեանը սպարապետ դնել Հայոց, փոխանակ նոր վախճանածին (Սահակայ ասպետի). Այս բանս երկրորդ պատճառ մ'եղաւ Ս. Սահակայ՝ անձամբ երթալու առ թագաւորն Պարսից և միջոցը շինելու. Գնաց 'ի Տիզբոն, տեսաւ արքայից արքայն, հաճելի և պատկառելի եղաւ անոր. խնդիրքները ընդունեցաւ, զՀամազասպ ոչ միայն սպարապետ կարգեց, այլ և Հայոց նախարարաց մէջ բարձրացուց պատուով ինչուան 'ի հինգերորդ գահն. ուրիշ յանցաւոր սեպուած նախարարաց այլ ներուն առաւ, և անոնց պատուոյ կարգերը նորոգելով՝ դարձաւ առ Վռամշապուհ, և ասոր ձեռքով այլ հաստատեալ առալով Հայոց Գահանոյշը[1], իր սուրբ հօրը նման նո-

1 Որ է ցուցակ կամ կարգ պատուոյ իշխանաց և աւագաց, թէ որն առաջ որն ետև պիտի կենան կամ նստին թագաւորական կամ ազգային հանդիսից մէջ։

բէն Ներոդիէ եղաւ քաղաքական դասակարգու-
թեանց. և ևս առաւել աշխարհքին խաղաղու-
թեան և շինութեան։ Բայց քաղաքական խնամ-
քը թողով առ խոհեմ թագաւորն Վռամշապուհ,
ինքն սկսաւ մեծ հոգով և լանքով իրեն վայլածը
հաստատել և ամենցընել, եկեղեցական բարեկար-
գութիւնքը, որ շատ տարիներէ վեր խանգարեր
էին շատ տեղ, և անարժան սովորութիւնք տի-
րեր էին։ Ուղղութեան համար բաւական գիտու-
թիւն և հմտութիւն, կամք և ոյժ ունէր. բայց
ուղղութիւնը հաստատուն և ճեայուն ընելու հա-
մար՝ կարևոր հնարք մ՚այլ կար՝ որ կու պակսէր
իր հօրը, և Ցուսկան և Լուսաւորչի անգամ. այս-
ինքն է ազգային լեզուի գործածութիւնն, որ՝ի վա-
ղուց խափանեալ էր, ընկիկ հայերէն գիրն խափա-
նուելուն համար. և անով՝ օտար լեզուներ (յոյն,
ասորի և պարսիկ) սովրիլ ստիպէին թէ աշխար-
հականք և թէ եկեղեցականք, իրենց արտաքին և
սուրբ պաշտամանց մէջ վարելու. և ամենքն այլ
հաւասար լեզուաց յաջողութիւն չունենալով՝ ի
հարկէ կրթութեան և կրօնից մեծ պակասու-
թիւն կ՚ըլլար։ Պէտք էր հայերէն գիր հնարել։
Այս հնարքը Աստուած մեր քահանայապետին
մովսէսեանման գաւազանին չառաւ, այլ իրեն ա-
հարոնանման աջակցին, Ս. Մեսրովբայ։

Դ

Այս անձը գու լաւ կու ճանաչես, Հայկակ,
որ յաճենայնի ընտիրից և գործակից եղաւ մեծին
Սահակայ, գրեթէ և կենակից. (անկէ հինգ ա-
միս եան յաշխարհքէ ելաւ և անկէ այլ քիչ մը
առաջ յաշխարհ եկած կ՚երևի)։ Նախ Ս. Ներսի-
սի փոքրաւոր էր, և անոր վսեմական մահուն ա-
ւուն ըսածները մոռիկ ընելով՝ աւանդեց յետոյց.

յեռոյ Հայոց Թագաւորին արքունիքը մեռաւ քարտուղարութեամբ, լաւ Թարգմանիչ և գրիչ ըլլալով. քանի մը տարիէն՝ արքունիքը Թողուց, առանձնացաւ յաստուածխոհութիւն և 'ի Աղքատութիւն. և հոգին ու միտքը աստուածային շընորհաց լուսաւորելով, ելաւ (յաջին 396) քարոզելու և վարդապետելու զանազան կողմեր, առաւել 'ի Սիւնիք։ Այս վարդապետութեան առեն աւելի քան զաւելի Ճանչցաւ աղգային գրոց և գպրութեան հարկաւորութիւնը. որոյ համար եկաւ խորհրդակցելու ընդ սրբոյն Սահակայ, և տեսաւ որ արդէն կաթուղիկոսն այլ նոյն մտածութեամբ եպիսկոպոսաց ժողովոյ մէջ է (403). բայց ուրիշ եկեղեցական հոգեր վրան առած ըլլալով՝ յանձնեց Մեսրովպայ մասնաւոր խնամքով այս բանիս եռեռն ըլլալ. և ինքն անձամբ առ Թագաւորն երթալով զնա այլ յորդորեց յայս ջանս։ Ներսէսէր Թագաւորն այլ ետէ գանձով և ետէ քաղաքական ծանօթութեամբք օգնութիւն ըրաւ, մանաւանդ որ ինքն այլ պէտք ունէր լաւ քարտուղարաց, և Ս. Մեսրովպայ յարքունեաց երթալէն ետև՝ յարմար մը չէր գտած։ — Զերկընցընենք այս պատմութիւնս. Աստրի Դանիէլ եպիսկոպոսի մը քով հին հայերէն գրեր կային. անոր իսաւրեց զՍ. Մեսրովպ (404), որ առաւ բերաւ 'ի Հայս, և երկու տարի աշխատելով, գպրոցաց մէջ սովրեցնելու տղայոց. Ճանչցաւ որ անբաւական են այն 'Իտալիէական նշանագիրքն. և յետ ուրիշ շատ հնարից և ուղևորութեանց, ինչուան 'ի Սամոս [1] երթալով՝ հոն աւելի աղօթքով և Աս-

[1] Մեր գրերուն գտնուած տեղն հետաքննութեան արժանի է. ոմանք Սամոսի տեղ Սամոսատիա պատմին Շամուշատ քաղաքը կարծեցին. ոմանք այլ 'ի Բալու եղած է կ'ըսեն այս գիւտս. ուստի 'ի նախնեաց վկայի Սամոս

աւուծոյ յոյժանուէիեամբ՝ քան մարդկային հեա-
րիւք՝ գոսա և յարմարցուց իր և մեր փափագե-
լին (յամի 406)։ և Ճարտար յոյն գրչի մը ձեռք
մացընելով 'ի ձև, (որ Ռուրվղեան գոսդ կամ էր-
ֆոնտգիր կ'ըսուին հիմա), իբր փորձի համար ձեռք
զարկաւ թարգմանելու և գրելու հայերէն Սո-
ղոմոնի Առակաց գիրքը։ Այս եղաւ սկիզբն թարգ-
մանութեան Ս. Գրոց, հեռու և անծանօթ կըղ-
զուոյ մը մէջ, այն տարին՝ յորում Պաղեստինոյ
առանձնութեան մէջ Ս. Հերոնիմոս գագրեցուց
իր գրիչը՝ սուրբ գրոց լատիներէն (վուլկատա)
թարգմանութենէն։... Հոս քեզի թողում ազ-
գիդ և նախնեացդ արդար և համաչխարհական
խնդութեան և հանդիսից մասնակից ըլլալ. կ'ուզես
Ս. Մեսրովպայ հետ փութա 'ի հայրենիքդ,
իբրև 'ի Սինա լեռնէն իջնելով աստուածագիծ
պատգամներով. կ'ուզես թագաւորին և կաթու-
ղիկոսին և բոլոր մեծաց և փոքրունց հետ անոր
դիմացն ելիր, օրհնել, համբուրել և ընդունել
այն անտես մատեդ հետ խօսող և լուսաւորող
գծիկները. և մի ասա մի նկատէ, տես գպրոցաց
կանգնումը, աշակերտաց ժողովումը, փոյթ և
ջանքն, իբրև երկայն ծոմաջանութենէ ետև պա-
հոց պնակները կոտրող և զատիկ ընողք՝ յոյն և
ասորի պնակիանները թողլով՝ հայերէն այբուբենը
գրող ու սովրող մեծ ու պզտիկները. անոնց մէ-
ջէն՝ Սողոմոնի 60 զօրաւորաց պէս՝ բոլոր աշ-
խարհքէն ջոկած 60 ամենընտիր աշակերտը, որք

կղզին, (Ուռամ-ատտար)։ Ս. Մեսրովպ՝ Պերութէն կամ
Սիդոնէն կամ մօտ նաւահանգստէ մը նաւելով՝ բոլոր
Փ. Ասիոյ հարաւային եզերքը պտտած է ընդ Միջերկրա-
կան ծով, և արևմուտեան կողմը կղզեաց մէջ մտեր է 'ի Սա-
մոս, որ և արժանի է մեր գպրութեան կամ Ս. Մեսրով-
պայ ուխտատեղեաց մէջն ըլլալու։

խարեն ուղիմաստոյնք, փոփիկոնոյնք, երկարոգիք, կամ զրկուին յԱղիքսանդրիա, յԱթէնս, 'ի Կոստանդնուպոլիս, յՍգեսիա, և յայլ ուսմամբ ա-նուանի քաղաքս, լաւ սովրելու յոյն և սասրի լեզու, և թարգմանելու սուրբ և պիտանի գրքեր։

Այս գիւաս և յեղափոխութիւնս այսպէս երբէ հին գանձասաց մը, (Գէորգ).

« Ո՛վ անվեհեր փառասէր պնդութեան՝ 'ի գիւա-
» հանձարոյ սրբոց թարգմանչացն. խորհին սաեզ-
» ծանել սասս գծագրաց, նշանակ խօսից հայկա-
» կան լեզուիս. որով վաղ անցեալքն յիշասա-
» կին, և մեկնեալքն՝ գէմ յանգիման խօսին։ Յայս
» հոգ զարթուցեալ զքանչելին Սահակ, զարմն
» վեցերորդ սրբոյն Գրիգորի. զոյն առ նովաս և
» զայդ ընդ նմին սասուածաբանակ հայրն սուրբ
» Մեսրովպ. որ և զբղմալի պարգևս սասուցն ըն-
» կալաւ յԱստուծոյ 'ի մեծ գթութեանցն։ —
» Լեր Գրիգոր, պահպանիչ աշակերտացս եր-
» կանիկ սրբոց թարգմանչացն, ազաչեմք »։...

« Գրաւորական սասուց առաջարմամբ մեծապէս
» խընդայր սէրն սուրբ Սահակ. խակոյն ձեռնար-
» կէր 'ի թարգմանութիւն մարգարէականն սա-
» սուածխօսութեանց. ժողովեալ մանկունս 'ի
» վարժ գպրութեան, աշնցուցանէր զուսուցն
» իմաստից, ջամբելով զկաթն նշանագրացն՝ սա-
» նէր վարդապետս և պատմաբանողս, զի յա-
» ջորդք հարանցն վարդապետաց՝ լիցին աշա-
» կերտքն պայծառագոյնք։ Լեր Գրիգոր, եւն »։

« Եւ եւս 'ի զօրագոյն զօրութիւն գնալով գրա-
» ւորականին վարժից կրթութիւն, պարզ գրա-
» գիտութիւնն զարգանալով 'ի քերթողականն
» արուեստս յառաջիւր. որոց առաջին մեզ հայր
» քերթողաց պայծառն Մովսէս այն Խորենացին.
» նախանին աշակերտս սրբոյն Մեսրովպայ 'ի քերս
» բայից հզար քան զնա. դամարոր նմին՝ Յովսէփ

» Պաղնացի. նորուն վարժակից Սղնակ Կոզբա-
» ցի. Անյաղթն Դաւիթ և սուրբն Կորիւն, և միա-
» համուռ գաս քերականացն. որք ասասուածն-
» ղէն վարդապետութեամբ փարթամացուցինըզ-
» Հայասատանեայս։ Լեր Քրիստոս, պահապանիչ
» աշակերտացս երջանիկ սրբոց Թարգմանչացն »։

Ե

Պարագլուխ Թարգմանչաց և մատենագրաց ինքնին Ս. Սահակ՝ քահանայապետի արժանաւոր կարգերը հոգալով, յառաջ քան զայլս Զենոբիոսեանց կարգը գրեց. ինչուան իր առեն գործածուած Ս. Լուսաւորչի յունարէնէն առածը փոխելով և ընդարձակելով. և յամին 410 նաւասարդի ութներորդ, տարւոյն սկիզբը հրատարակեց զայն հանգիստպէս. գուցէ ձեռնադրելով բազմաւթիւն եկեղեցւոյ ոպասաւորաց, քահանայից, և Թերևս եպիսկոպոսաց այլ։ Նոյն կամ յաջորդ տարին՝ Թագաւորէն և բոլոր եպիսկոպոսաց ուխտէն խնդրուելով՝ յանձն առաւ գլուխ կենալու Աստուածաշունչ գրոց Թարգմանութեանը. և ընդ Ս. Մեսրովպայ՝ բոլոր եկեղեցական պաշտամանց և ծխից, այսինքն Մաշտոց ըսուած գրոց, մասն մի Թարգմանելով՝ի զանազան հարց, և մասն մի նոր շարադրելով, և մասամբ Ս. Լուսաւորչի գրուածները փոխելով՝ի հայ։ Ընդհանուր Թարգմանութեանց սկիզբն սեպուի 411-2 տարին, և վերջն 426. այս 14 տարուան միջոց Մաշտոց, և Աստուածաշունչ գիրք հայերէն գրուեցան և կանոնեցան, հաւանօրէն՝ գրագրութեամբ քաջին Մովսէսի Խորենացւոյ որ Ս. Մեսրովպայ քեռորդին էր, և Ս. Սահակայ Դրէին [1]։ Թարգ-

[1] Ս. Սահակայ գրագիրն կամ գրագրեան կ'անուանի Մովսէս Խորենացի, երբեմն Կիւրենոյ երբեմն Խորենոյ։

մանուելեան երկրորդ տարին Ս. Սահակ յիշեմք. ծին ըլլալով, (ուր և կ'երևի թէ այն տեսեն նորոգեց Ս. Հռիփսիմեայ լուսաւորչաշէն մատուռը, և այն հրաշագեղ կուսին տապանին վրայ դրաւ իր հայրապետական կնիքն այլ Լուսաւորչի կընքոյն քով), հան հրատարակեց ննջեցելոց Սաղմոսարանի կարգը. իսկ Փահանայութիւնը և Հոգեհանգիստը՝ զոր Ղազարիկ թարգմանիչն բերած էր՝ (Ս. Եփրեմայ շինածը ասորերէն 'ի հայ փոխելով և աւելցընելով), հրատարակեց տասն տարի ետև։ Ուրիշ կանոններէն միայն Սէրմոնէտոյ թուականն յայտնի է, յամին 423-4 հրատարակուած. մնացեալքն այլ այս միջոցիս ոմանք 'ի Ս. Սահակայ և շատն այլ 'ի Ս. Մեսրոպայ կարգաւորեցան, անոր համար իր մականունամբն Մաշտոց ըսուեցաւ գիրքն, կամ թէ ինքն Մաշտոց[1] ըսուեցաւ գրոց պատճառաւն, որ կ'ըսուի նա Օրդնոնիանոբէր։ Մեր Տնտոյցն այլ ըստ հայ և հոռոմ ամսոց ինքն Ս. Սահակ նախ կարգաւորեց, և ինչուան հիմա գտուի իր գրածն այլ, յետոյ փոփոխածներէն զատ։ Թարգմանութեանց գլուխ գործոց եղաւ նախայիշեալ Աստուածաբանել գիրքն, որ և սուրբ Սահակայ անթիւ յիշատակաց և պարծանաց պարծանքն է հիմա մեր մէջ. զոր նախ 'ի Հայաստան գտուած ասորերենէն թարգմանեց, վերջը յունարէն Եւթանասանից թարգմանութենէն սրբագրեց, կամ նորէն թարգմանեց. և այլ վերջը՝ Եփեսոսի ժողովէն ետև՝ երբ թարգմանիչք բերին աւելի ընտիր և ստոյգ Եւթանասանից օրինակ մը, անոր համեմատեց՝ և փոփոխեց առաջին

[1] Մաշտոց անուամբ կաթուղիկոս մ'այլ ունիմք, թ գարուն վերջերը. զոր այլ ոմանք կարգագիր սեպեն այդ գրոց. և անոր համար հին մաշտոցաց ետևն գտուի այդ կաթուղիկոսին վարքն։

թարգմանածը [1]. և վերջապէս վերջին ձեռք դնելու և ըստ կարելւոյն կատարելագործելու համար, աշակերտներէն քաջագոյնները (յորս Մովսէս Խորենացի, Դաւիթ, Եղիշէ, և այլք), խաւրեց յԱղեքսանդրիա, որպէս զի տիւրաքար հմտանան յոյն լեզուին, և ամենևին անտարակոյս և հաւատարիմ ըլլայ թարգմանութիւնն. բայց աշակերտաց անյագ ուսումնասիրութիւնն և ընթերցմունքն զիրենք ուշացուցին Աղեքսանդրիոյ հարուստ գրատանց, և Ս. Կիւրղի վարդապետարանին մէջ. և երբ դարձան 'ի Հայս՝ զիրենք ղրկող մեծ վարդապետքն վախճանած էին։

Ս. Սահակայ հեղինակօրէն շարագրածոց մէջ՝ մաշտոցի քանի մը կանոններէն զատ, գլխաւորքն են Առաջ ըմբռնա ըմբռնաջ (բաց 'ի քանի մը օրհնութիւններէ), սկսեալ 'ի Ղազարու յարութենէ ազնիւ վսեմ երգոյն, «Այսօր գոլով 'ի Բեթանիա՝ » քո ամենաղօր հրամանաւդ ձայնեցեր Ղազա- » րու, և գոչացաւ մահ. գժոխք պարտեցաւ, ա- » պականութիւն լուծաւ. կենդանարար Քրիս- » տոս, կեցո զմեզ». մինչև 'ի վսեմախաղաղ յետին նուագն Քրիստոսի թագման. «Որ արարիչդ » ես արարածոց, հանգուցեալդ 'ի քերովբէս, » վիմով կնքեցար յերկրի»։ Այս հեզասլաց խորամուխ լեզուին և բանից՝ յորմարցուց երաժշտական եղանակներն այլ. վասն զի այս զմայլելի արուեստին այլ քաջահմուտ էր։ Ժամագրոց աղօթից այլ մէկ մասին հեղինակն է Ս. Սահակ, մինացելոց՝ իր սուրբ աշակերտքն և յաջորդքն Գիւտ և Յոհան, և այլք յետոյ։ Պատարագամատոյց մ՝այլ ունի հիմակուան գործածուածէն աւելի Ճոխտրան և Ճշդաբան։ Առնք թէ իր մատենագրական հան-

1 Տես վասն թարգմանութեան Ս. Գրոց 'ի Ռազմավէպ 1850, երես 212, և 1851, երես 250։

Հարոյն անիրկայ հաւատոքք են, և թէ իր եկեղեցական կարգաց և հոգեւորութեան խնամոցն. որոց համար՝ (բաց յայսոքանի պաշտամանց կամ սրբազան գրոց) շատ անգամ ժողովներ ըրաւ եպիսկոպոսաց, և արժանաւոր քահանայապետութեան կանոններ, խրատներ, կանգուններ հրատարակեց. յորոց մեան հիմա վեց կամ եօթն խոհական և յստակախօս բանք. Ա. առ Եպիսկոպոսունս, Բ. առ Քորեպիսկոպոսունս, Գ. առ Քահանայս և Վանականս. Դ. վասն եկեղեցւոյ և վանաց, և արիւն կամ նուիրաց ժողովրդեան 'ի վանս. Ե. վասն անառեսութեան եպիսկոպոսաց եկեղեցական նուիրաց. Զ. դարձեալ վասն նուիրաց եկեղեցւոյ, թէ որպէս բաժնելու է եկեղեցւոյ սպասաւորաց։ Այս խրատներս Ս. Գրիգորի գրած կանոններէն առնելով ընդարձակած է, ինչպէս ինքնին կու վկայէ, և իր կաթուղիկոսութեան առաջին տարիներն հրատարակեց յունարէն, և յետ գիւտի գրոյն՝ հայերէն. անոնց հետ ուրիշ կարճ կանոններ այլ, որ յանուն Ս. Լուսաւորչին պահուին ցարդ 'ի կանոնագիրս մեր։ Ս. Սահակայ ամենայն գրուածոց լեզուն զքանչելի յստակութիւն, մաքրութիւն և ազնիկութիւն մ'ունի հանգիրձ վսեմութեամբ, զոր իր հոգեկիր և արիւնաժառանգ Ս. Շնորհալիէն զատ՝ թերևս ուրիշ մը չկրցաւ ստանալ նոյն ատենանի։

Այս առատուածառուր և ամենահարկաւոր եկեղեցական և ուսումնական շնորհքները պատրաստելէն ետև, իր բոլոր ազգին և վիճակին մէջ ծաւալելու այլ ջանաց մեծն Խսահակ. Պարսից բաժնին մէջ անաչառ ընդունելի ըրաւ, բայց Յունաց բաժնին մէջ գժուարութիւն կրեց։ Սրկու տէրութեանց մէջ կեանքի պատճառ չլլալու համար, քիչ մ'այլ իրարատեցութեամբ՝ յունաբաժինք խորչէին 'ի Պարսկահայոց. մինչև ոչ

հայերէն գրագրութիւնը ընդունեցան, և ոչ Ս. Սահակայ օրհնութիւնը. այլ 'ի Կեսարիոյ արքեպիսկոպոսէն կ'առնուին ձեռնադրութիւնն այլ. Ս. Սահակ փորձ մը փորձելէն ետև՝ առ ժամանակ մը լռեց. մանաւանդ որ այն տարիներն Կոստանդնուպոլսոյ աթոռոյն յաջորդութեան մէջ այլ չփոթութիւն կար. մինչև որ շատ տարիէ ետև (420) սահմանելով Ցունաց բաժինը երթալ, և նորէն հոն իրեն արժանի պատիւ չգտնելով, թուղթ գրեց առ կայսրն Թէոդոս Փոքր և առ հայրապետն Ատտիկոս, նուիրակ խնդրելով իր փոխանորդը, զՍ. Մեսրովպ, և իր թոռը՝ Վարդան. կայսրն և հայրապետն նախ մեզադրեցին Ս. Սահակայ՝ ասելի Պարսից և Աստուծոց կողմ կենալը, և հայերէն գրոց գիւտին համար Ս. Ոսկեբերանին խորհուրդ չհարցնելն. (ցիշեցէ՛ն՝ որ այն ատեն իրենք զՈսկեբերան կու հալածէին 'ի սաստամանիս հիւսիսային Փոքր Ասիոյ). վերջապէս հաւանեցան որ Ս. Սահակ հովուէ յունաբաժին Հայերն այլ, և հոն այլ գպրոցներ բացուին հայերէն դպրութեան. Ս. Մեսրովպայ այլ յունական վարդապետութեան աշակերտն և պատիւ տալով յետ դարձուցին։ Այսպէս զբոլոր Հայաստան աշակերտեցին Սահակ և Մեսրովպ. և խնամքնին տարածեցին անկէ դուրս այլ իրենց գրակից և մասամբ թեմակից ազգաց վրայ, Վրաց և Աղուանից, որոց լեզուին գրերն այլ հնարեց Ս. Մեսրովպ, և սուրբ գրքերը թարգմանել տալ սկսաւ։

Ցունաց բաժնին մէջ եղած ատեն՝ Ս. Սահակ իմացաւ որ հոն իր վիճակելոց մէջ չար և այլանդակ ազանդ մը կայ, զոր Բուլիոդիան կ'անուանեն պատմիչք մեր, և ոչ այնքան մատաց չարափառութիւն, որքան բարուց անբարութիւն կու ցուցնեն. խստիւ ետևէ ընկաւ այս ազանդութիւնը վերցընելու. և երբ հարկ եղաւ իրեն նորէն դառ-

նալ 'ի Գարեգին բաժինն (431), յանձնեց սուրբ Մեսրովբայ՝ որ անաչառ քննէ գտանէ, և անհաւանները պատժէ, անուղղաները՝ ճակատին խարանով այլ նշանելով՝ հալածէ։ Այս բանս թէ այն աղանդին սասուկ աղաւեղութիւնը կու ցուցնէ և թէ Ս. Սահակայ արիութիւնն. որ յայլան քաղցր և հեզ, զիջող և համբերող, ուր որ Աստուծոյ իրաւանց վրէժինդրութիւնն յանձնած էր իրեն՝ հոն արդար և անաչառ էր. զնոյն արթնութիւն ցրցուց յետոյ նեստորականաց և ուրիշ աղանդաւորաց դէմ. զնոյն՝ իր կանոնական գրոց մէջ այլ կու սպառնար. և զնոյն խրատ գրէր շատ տարի ետև առ Ս. Գրիգոր՝ աշակերտ և աթոռաժառանգ Ասկանեբանի, արամախառն յիշատակաւ իր ազգին վիճակին, որ անտէր ըլլալով այն առեն՝ կու դժուարացընէր կաթուղիկոսութեան տիրաբար իշխանութիւնն այլ. իսկ դուք կ'ըսէր « Թագաւորս ունիք՝ որ զՀոգ Աստուծոյ » յանձին բարձեալ բերին, և... կարող են ըզ- » փուշն 'ի միջոյ արքել. (վասն այնորիկ) պարտ և » պատշաճ է ձեզ որ 'ի մեծամեծ իշխանութիւնդ » վայելէք՝ նախանձել զնախանձն Աստուծոյ և 'ի » գլուխ վարել զայնպիսի նախանձու վրիժուց » հատուցմունս, և ոգւով և մարմնով ջանալ՝ զի » բարձցին 'ի միջոյ եկեղեցւոյ Քրիստոսի՝ անուա- » նաբկ անօրէն ամբարշտութեան գայթակղու- » թիւնք »։ Այս թուղթս սուրբ հայրապետն մեր մահուընէն քիչ տարի առաջ գրած է. երբ ինքն կաթուղիկոսի քաղաքական կամ իշխանական տիրութենէն հրաժարած՝ միայն աստուածային տիրական իշխանութիւնք անհրաժեշտ կու վարէր, անդադար վարդապետութեամբ և հովութիւնք։ Այս ցաւալի և սիրալի գէպքը պէտք է յիշեմք. Ս. Սահակայ քաղաքագիտութիւնը և քաջ ազգասիրութիւնն այլ լաւ ճանաչելու համար։

Չ

Գրեթէ գրոց թարգմանութեան սկիզբն և քահանայարհնէքի հրատարակման տարին (412) վախճանեցաւ բարեացապարտ թագաւորն մեր Վռամշապուհ, որ Տրդատայ մահուընէն ետև՝ կէս դարու մէջ եղած չըլլալու չարիքն և չիրթքը՝ մոռցուցեր էր իր 21 տարի խաղաղ և խոհեմ կառավարութեամբն. իր մահն նորոգեց հին վէրքերը, որք՝ աւա՛ղ, անբժշկելի մնացին։ Վռամշապուհ՝ իրեն ժառանգ տասը տարեկան տղեկ մը թողուց, Արտաշէս անուամբ. աշխարհը մեկէն վերվար չըլլալու համար՝ փութացաւ զգաստ հովուապետն Ս. Սահակ, (որ և յետ թագաւորին ազգապետ ճանաչուէր), գնաց առ Ցազկերտ Ա. և կերպով մը իր պատճառաւ զրկուած Հայոց առաջին թագաւորին փոխարէն ընելով, խնդրեց որ նորէն թագաւորեցընէ Վռամշապհոյ եղբայրը, Խոսրովը, որ Անյուշ բերդին մէջ արգելուած և ծերացած՝ մահուընէ զատ ազատութեան յոյս, և թերեւս փափաք այլ չունէր։ Ս. Սահակայ շնորհքն մեծայն կրցաւ Պարսից անփոփոխելի օրէնքը փոխել, և ինչուան 'ի մահ և 'ի բանտ դատապարտեալը՝ հանել 'ի բանտէ, և հաւանեցընել զնա այլ՝ նորէն իր երիտասարդ գլխին կրած թագը՝ գնելու հիմա կորսցեալ և ալևորեալ գլխին վրայ. որ և տարիէ մը աւելի չկրցաւ վերցընել զայն. սակայն գոնէ փառաք մեռաւ, և Ս. Սահակայ օրհնութեամբը իջաւ քնանալու իր ազգակից թագաւորաց հետ հասարակաց քունը։ Ս. Սահակայ փափաքն կատարեցաւ անոր թագաւորութեամբն, այլ կիսկատար մնաց՝ կարգ թագաւորութեամբն. յետ որոյ քանի մը տարի պարապ մնաց աթոռն, Արտաշիսի տղայութեանն համար.

և թէպէտ հասաւ նա յարրունս. բայց Ցազկերտ
իր որդին Շապուհը թագաւորեցուց Հայոց. որ
և յետ չորս տարի անարգանաց թագաւորութեան՝
հօրը հիւանդութիւնը լսելով փութացաւ 'ի Պա-
ղատասան անոր յաջորդելու. բայց մեկեալ 'ի
գերեզման մտաւ, իրենները ապանեցուելով. և
թագաւորեց Պարսից Վռամ Բ։ Սա մեկէն Ցու-
նաց դէմ պատերազմ բացաւ (420), մեր աշ-
խարհքն այլ նորէն ոտնակոխ եղաւ. և ահա այս
չփութութեանս համար էր որ Ս. Սահակ անցաւ
'ի բաժին Ցունաց. և որովհետև Շապհոյ թագա-
ւորութեան տեսն մեռեր էր իր փեսային Համա-
զասպ Մամիկոնեան՝ սպարապետն Հայոց, անոր
որդին և իր թոռը՝ Վարդանը՝ զրկեց ընդ Ս. Մես-
ropովպայ առ կայսրն Թէոդոս, և տրտունջ պա-
տուանուամբ հօրը տեղ իշխանութեան հասուց։
Անոր հետ Թէոդոս կայսր պատուէր զրկեց առ
Անատոլ՝ իր արևելից կողմնակալ զօրավարն, որ
յապահովութիւն յունարաժին Հայոց ոմուր
քաղաք մը չինէ, և չինեցաւ Կարնոյ քաղաքն (428)։
Եւ յետոյ Ցունաց կայսրն և անոր իշխանութեան
տակ եղած արևմտեան Հայաստանը շահելով և
յանձնելով 'ի վարդապետութիւն Ս. Մեսրոպ-
պայ. Ս. Սահակ Ճարտար քաղաքագիտութեամբ՝
արևելեանն այլ չթողուց Պարսից թագաւորին
վրէժխնդրութեանը. այլ զասպետն Սահակ և
(յետոյ) զթոռն իւր Վարդան (երբ գարձաւ առ
'ի Ցունաց) զրկեց 'ի գուռն թագաւորին՝ հաշ-
տութիւն խնդրելու. որովհետև Շապհոյ երթա-
լէն ետև՝ Հայք գլուխ քաշեր և վաներ էին ըզ-
Պարսիկ պաշտօնեայս. ասոնց պատգամաւորու-
թիւնը բաւական չըլլալով. (ըստ ոմանց)[1] ինքնին

1 Ի պատմչաց ոմանք զՎարդան միայն յիշեն զրկուած
առ թագաւորն Պարսից. ոմանք գնա և զՍահակ ասեն.
ոմանք այլ գիշերս Վարդանայ ընդ Ս. Սահակայ։

Ս. Սահակ՝ երբ արեմտեան Հայոց Եկեղեցական բանները կարգի դրաւ, երկու փոքր թոռներուն հետ (Համազասպայ և Համբիկայ) գնաց՝ ի դուռն Վռամայ (422), և իր քեռայրը և աստուածատուր շնորհքն՝ ոչ միայն թափեց թագաւորին զէնքերը, այլ և Վռամշապհոյ որդին Արտաշէսը թագաւորեցընել տուաւ և բերաւ կանգնեց իր հօրը սթոռը։ Երկու տէրութիւնց մէջ և այնպիսի վտանգաւոր և խառնակ ժամանակ մը՝ այսպիսի խորագէտ և անխարդախ խաղ մը խաղալ և յաջողիլ՝ միայն սուրբն Սահակ կարող էր[1]։ Ո՛րքան անոր երախտագէտ և անձնատուր պէտք էր ըլլալ Հայաստան՝ իր թագաւորաւն և իշխանքն և ամենայն ուխտիւ Եկեղեցւոյն և ռամկաց։ Լուսաւորչէ սկսեալ իր յաջորդ հայրապետքն՝ շատ հեղ այսպիսի բարիք և տիրութիւն ըրին իրենց որդիացեալ ազգին, բայց այն օրհնեալ և օրհնելի ազգին որդիքն՝ շատ պակաս և պարտական գըտուեցան առ բարերարն։ Այսպէս այլ հիմա, նախ թագաւորն՝ անարժան որդի զգօն Վռամշապհոյ, Պապայ և Արշակայ Ճամբաները երթալով՝ զզուեցուց նախարարները, արհամարհեց անոնց երեսգարձութիւնը, անտատեց Ս. Սահակայ խրատուցը, միայն իր ծազկեալ և հուժկու երիտասարդութեանը լսելով։

Նախարարքն և իշխանքն վեց տարիէ աւելի (423-428) չկրցան համբերել անկէց իրենց և իրենց կանանց հասած անարգութիւնը, և միաբանեցան մերժելու զԱրտաշէս՝ ի ձեռն Վռամայ Պարսից թագաւորի, և անոր գահէն կոչմնակալ կամ հարկաժողով մը գնել տալով՝ իւրաքանչիւր ի-

1 Ցունաց հետ հաշտութեան փլնորդ մ'այլ եղաւ Ակակ եպիսկոպոսն Ամիդայ, պարսիկ գերիները գնելով և ազատ արձակելով։

րենց տէրութիւնը և ազատութիւնը խաղաղութեամբ վարելու. առ այս կու յորդորէին զՍ. կաթուղիկոսն այլ։ Թերևս մտածութիւնն բոլորովին անիրաւ չէր, իրենց առջի կրածները յիշելով յանկարդ Թագաւորաց, այլ դեռ շատ հեռու էր յուզիչ և 'ի խոր տեսութենէ. մանաւանդ որ եղածէն աւելի սև կ'ուզէին ցուցընել զԱբրահամ, և յիրաւի իրմէ սև ու ազատեալ Թագաւորի մը մտանել իրենց զեղխ՝ բայց քրիստոնեայ Թագաւորը. ինչպէս որ շատ պայծառ և գեղեցիկ խօսքերով բացատրեց այս բանը Ս. Սահակ, և երկար ջանաց հանգարտեցընելու զնախարարս։ Բայց անոնց դամբերութիւնն հատեր էր. և չուզելով եա կենալ իրենց բռնած ճամբէն, չէին այլ կրնար ուրիշ անառնի և վատ գործ մըն այլ չաւելցընել. այսինքն, իրենց աշխարհական տիրոջ՝ Թագաւորին դնա՝ գագրեցընել նաև հոգևոր տիրոջ՝ կաթուղիկոսին իշխանութիւնն այլ. վասն զի եթէ նա չմիաբաներ դեռաբինին՝ խօսքերենին առաջ չէր երթար. ապա պէտք էր զնա այլ յանցաւոր ցուցընել Պարսից Թագաւորին դիմաց։ Ահա հոս էր մեծագոյն փոսն, որոյ վրայէն չկրցան ցատքել, ընկան մէջը. և ձգեցին իրենց տնաղքը և բոլոր աշխարհքին։ Ելան գնացին Պարսից դուռը. Վռամ յօժարութեամբ լսեց անոնց ամբաստանութեանց և զրպարտութեանց. և քիչ մը վերջը կանչեց 'ի դուռն զԹագաւորն և զկաթուղիկոս. Թագաւորն արդարացուց զինքը. կաթուղիկոսն այլ ցուցընելով թէ Թագաւորին անքրիստոնեայ գործքերը՝ իր (Սահակայ) տունանին մէջ դատելի է և ոչ Պարսից տեսանին մէջ դատապարտելի, անոր իրաւունքը պաշտպաննց. և հոս այլ երևցաւ Ս. Սահակայ մինակ մեծութիւնն՝ բոլոր բազմութեան իշխանաց պզտիկութիւնը քով։ Արտաշէս իր ներքին խղճովը.

նախարարքը իրենց արտաքին խղճովը, Վռամ իր անփույթ խղճովը՝ մթնցած միգամած կորացած էին. միայն Ս. Սահակ սպիտակ և պայծառ սիւնացեալ ամպոց պէս հոն կու բարձրանար։ Պարսից Թագաւորն առանձինն այլ յորդորելով զՍ. հայրապետն, և չկարենալով անոր բերանէն ամբաստանութիւն մը լսել, բաւական սեպեց նախարարաց ըսածը, և յանիրաւի գտատպարտեց զԱրտաշէս, զրկելով յաթոռոյ և յաղատութենէ. նոյնպէս այլ երաւ կաթուղիկոսին. դարձեալ նախարարաց լսելով, որք (ամօթով կ'ըսեմ) ամբաստանեցին զնա իբր Յունաց կուսակից, և փոխ բերին անոր գրած նամակները առ կայսրն և առ Անատոլ, և զվարդան զրկելն առ նոսա։ Ս. Սահակ այլ արդիլուեցաւ 'ի Պարսս, երեք չորս տարի։ Հայոց Թագաւորին տեղ Պարսիկ մարզպան մը ղրկուեցաւ 'ի Հայս. իսկ այն սուրբ և մեծ կաթուղիկոսին տեղ ով. — չարալեզու երեց, չերեց մը, Արծկեցի Սարմէն. որ 'ի վարձ մատնութեան այնպիսի ատուածարեալ և պատկառելի անձի մը, անոր աթոռը ժառանգեց։ Հայոց քահանայապետ անուանեցաւ, գոնէ կաթուղիկոսի արտաքին իշխանութիւնը բանեցընելու, որովհետև ինքն և ոչ եպիսկոպոս էր։ Ցկաւ 'ի Հայս, իր տեղ երեսաք Ս. Սահակայ պայծառութեանը մէջ բիծ երևելու համար. բայց և ոչ տարի մը գիմանալով՝ նոյն իսկ իր գործակից և բանակից նախարարներէն վռնտուեցաւ. որք և ուրիշ կաթուղիկոս մ'ուզեցին 'ի Վռամայ. նա այլ Բէրէնը կամ Բէրէնա անուամբ Ասորի մը խաւրեց, որ եկաւ տանտիկիններով լեցուց Հայոց հայրապետանոցը, զոր Ս. Սահակ իմաստուն վարդապետաց և թարգմանչաց և խարազնագրեաց Հանուորաց զարդարեր էր։ Այն տեսն շատ լաւ իմացուեցաւ տանոր արժէքը, և ոչ միայն աշխարհին մէջ, այլ և

կայսեր քով և Եփեսոսի 200 հայրապետաց մէջ հարցուեցաւ բնառուեցաւ Հայոց սուրբ հայրապետին վերադաս գահը. հայրապետը Թարգմանիչքն մեր որ հան գանուեցան՝ ցուցին հեռաւէն Տիզբոնի բանաը։ Այս անկարծելի յանդիմանութիւնս 'ի սիւնհոդոսի աշխարհագրումը հայրապետաց, արդարև ծանր՝ այլ արժանի էր մեր կարճամիտ կամ կարճատես իշխանաց. որք աչքերնին ազէկ մը շփելով՝ յետ երեք տարուայ մերժեցին զԲրքիշու այլ. և ոմանք լռելեայն՝ ոմանք յայտնի՝ Ս. Մեսրովպայ և բոլոր եկեղեցւոյ ուխտին հետ մեկտեղ՝ նորէն զՍ. Սահակ խնդրեցին յետ դարձընել. միայն ոմանք Պարսից Թագաւորին կամացը Թոզուցին զով որ ուզէ խաւրելու. յունաբաժին Հայք այլ ուրիշ մ'առաջարկեցին. Վասամ Թէ իր ուզածը և Թէ անոնց ուզածը միտքանելու հնարք մը սնպեց՝ Շմաւէլ (Սամուէլ) անուամբ ասորի մը խաւրել փոխանակ Բրքիշոյ. կաթուղիկոսի արտաքին իշխանութիւնը վարելու. և մարդպանին օգնական ըլլալու. Ս. Սահակն այլ արձակեց, որ Շմաւէլի ընտրածները ձեռնադրէ յեպիսկոպոսութիւն, և հոգևորապէս հովուէ իր ժողովուրդը. և այսպէս յերկու բաժնելով կաթուղիկոսութեան իշխանութիւնը, և արտաքին հոգաբարձութիւնը վերցընելով 'ի Ս. Սահակայ, անոր վիճակեալ ոստիկին այլ պակասցուց. այսինքն կաթուղիկոսին արուած կալուածքներուն մեծ մասն առաւ, և քիչ դեղ ու ոգաբակ Թոզուց անոր. արձակելու առենն այլ երդումն պահանջեց 'ի Ս. Սահակայ՝ որ հաւատարիմ կենայ իրեն, և չմիտի ցունաց կողմը. ապա Թէ ոչ՝ բոլոր ազգին վրայ չարիք կու հասցնէ։ Այն առեն Ս. Սահակ՝ որ կ'իմանար իր հարկաւորութիւնը ազգին համար, բայց չէր այլ կրնար յանձնառու երևիլ Վասամայ ամեն հրամայածին,

իր արժէքը անգամ մ՚այլ ցոյցուց. և յոյսք կանգ-
նելով բոլոր արքունի հանդիսին մէջ, երկար ա-
ռանձնաբանութեամբ մէկիկ մէկիկ յառաջ բերաւ
իր 40 տարիէ աւելի հաւատարիմ ծառայութիւն
և երախտիքն առ Թուռան Զարեհ, և՚ի Իրանէն
անվարժ և աներախտ մնալն, Զարեհց տուա խոստ-
մունքը և խորդախութիւնը, և անիրաւ գատաստ-
անները, և իր քրիստոնեայ հաւատոց անհրա-
ժարելի պարտքը՝ հաւատակցաց հետ (Ցունաց
և այլոց) հաղորդութիւն ընելու։ Եւ այնքան սի-
րաբար Ճարտասանութեամբ, այլ հանդարտ և
վսեմ կերպով խօսեցաւ այն վսեմագոյն ուրմանա-
մեայ ալևորն, մինչև Թագաւորն և իշխանքն և
մոգերն պապանձած իրար կուռնայէին, և չկըր-
ցաւ մէկն պատասխան տալ. այլ յետոյ ինքնին
Թագաւորն հրամեց իր մեծերուն, որ շատ գանձ
ստակ տան մեր կաթուղիկոսին, այնպէս գեղե-
ցիկ և անվախ համարձակ խօսելուն համար. որոյ
համբաւն յետոյ մեր աշխարհն այլ հասնելով՝
այլ աւելի սիրելի ըրաւ իր ծերունի ամենաշնորհ
հայրապետը։ Իսկ ինքն՝ ստակը մերժելով տուող-
ներուն ազաչեց որ անոր տեղ Թագաւորէն խըն-
դրեն՝ ինչ որ ինքն երբեմն յԱրտաշիր թագաւորէ էր-
այսինքն, նախարարաց իշխանութեան գահնամա-
կը անփոփոխ հաստատել. և մանաւորապես Ար-
շակունեաց թանամի եղող նախարարաց կալուածք-
ները յետ գարձնել իրենց։ Վերջապէս այլ յաղ-
թութեան յիշատակայ. ամեն խնդրածները կա-
տարեց, և անոր Թոռը, Ս. Վարդանը՝ հաստա-
տեց՚ի պատիւ Մամիկոնէից սիրութեան և գո-
րովութեան Հայոց։ Այսպէս յետ երկար կամ
չորս տարի արգելանաց գարձաւ Ս. Սահակ՚ի
Հայս, և իր հին փառաւոր աթոռը Վաղարշա-
պատը Թողլով, նկատմամբ անարժան Շմաւելին,
բայց յանձնելով զայն՚ի հոգարարձութիւն իր հո-

գեկցին՝ Ս. Մեսրովպայ, ինքն ընարեց իրեն կա-
յանք՝ Հայոց մերաբանը. Բագրևանդայ Ս. Յով-
հաննու ուխտատեղին. և երբեմն այլ անոր մա-
վիճակները պաքտելով, հարազատ հովուի պէս
կու ինամէր իր հեռացող և երբեմն մոլորեալ հօ-
տը. և առաջնեան պէս անխնայ քարոզէր և վար-
դապետէր։

Է

Այս առեն մխիթարութեամբ ընդունեցաւ
սուրբն Սահակ զԱղն՝ Արծրունեաց հոգեսէր
իշխանն 'ի կրօնաւորական կեանս, ինչպէս 40 տա-
րի առաջ այլ խնդրեր էր, բայց Ս. հայրապետն՝
Պարսից թագաւորին ակն ածելով՝ չէր յանձն
առած այն առեն։ Ս. Սահակայ արգելանաց ա-
ռեն Եփեսոսի ժողովն կատարուեր էր (431).
որոյ վեց կանոնները և ոմանց 'ի Հարց ժողովոյն
առանձին թղթերը առ Ս. Սահակ բերին 'ի Կոս-
տանդնուպօլիս եղած Թարգմանիչք մեր՝ Ղևոնդ
և Կորիւն, Եզնիկ և Յովսէփ. ուրիշ սուրբ Հարց
գործքերով, և գտան զՍ. Սահակ և զՄեսրովպ
յԱշտիշատ Տարօնոյ. զորս ընդունելով Ս. Սա-
հակ՝ ժողովական առեւնաբանութիւն[1] մը ըրաւ
իր հաւատարիմ եպիսկոպոսաց առջև, և հաւա-
նութեամբ նոցա և Ս. Մեսրովպայ՝ պատասխան
գրեց հայրապետաց. և սկսան նոր բերած գրքերը
Թարգմանել և սուրբ գրոց Թարգմանութիւնը
ուղղագրել։ Բայց Եփեսոսի ժողովին վճիռը չգտ-
ռեցաւ 'ի Յոյնս՝ Նեստորի և իր հետևողաց վճ-
ռերը, այլ աւելի զայրացաւ և ընդարձակեցաւ։

1 Այս առեւնաբանութիւնը կու յիշուի մեր Հարց ա-
ռաւուծաբանական խնդրոց վկայութեանց մէջ. 'ի ՃԾ-ԷՆ
ՈՐ ՅԱՏԻԼԵՑԻ ԽՕՍԻՑԸ։

Ուղղափառ և այլափառ իրարու գէմ գրէին, և օտարաց խաւրէին գրածներն, յորոց շատք չկարենալով ընտրել զուղիղն և զծուռն՝ չփոթէին. աւելի չփոթցընող էր Նեստորի վարժապետին Թէոդորի Մոպսուէստացւոյ գրուածքն, որ Արիոսի և Մակեդոնի և ուրիշ հերձուածոց գէմ գրուած ըլլալով՝ ուղղափառ կ'երևէր, բայց երևոյթին տակ ծածկած էր Նեստորական թոյնն. սակայն 'ի սկզբան շատոնք իբրև ուղիղ ընդունեցան. ինչպէս և Կիւրայ եպիսկոպոսն Թէոդորեանոս խմաստուն պատմիչն. որք 'ի Հայս այլ խաւրեցին այն գրոց օրինակները, և որպէս երևի՝ ոմանք 'ի մերոցս այլ ընկալան, և քարեկամն Թէոդորեանայ՝ մեր Եւլալ եպիսկոպոսն Մարդպլոյ (զոր յետոյ յիշէ Եղիշէ 'ի ժողովի Արտաշատու) թարգմանեց զայն գրեանքն 'ի հայ։ Այս բանիս կասկածելով նախ Ս. Սահակայ մերձաւոր աշակերտքն Ակակ Մելտենոյ եպիսկոպոսն, և երանելին Բարուլաս՝ Եդեսիոյ եպիսկոպոսն, գրով իմաց տուին առ ծերունի հայրապետն մեր (յամի 434-ն). որ և մեկէն քննել տուաւ ու գտաւ. և Թէոդորոսի գրուածոյ հետ՝ Բաբուլայի և Ակակայ նամակն այլ խաւրեց առ ծանօթն իւր Ս. Պրոկլ Կոստանդնուպօլսոյ հայրապետն, ձեռամբ Ղևոնդի երիցու և Աբրայ կամ Աբելի, որպէս զի նա երկու կողմէն գրուածներն այլ քննէ և իր գատաստանը իմացընէ։ Պրոկղ ուրախութեամբ ընդունելով Ս. Սահակայ ղրկած նուիրակութիւնը, և անոր ծայրազարդ հասակին, և թերևս հին ծանօթութեան և դիպուածոց համեմատ, ինչն որ դեռ նոր նստել էր յաթոռ (434), գրովելով և պատկառանօք, իբրև իր վարդապետ.

1 Մէկ գրուածն այլ էր ընդդէմ մոգութեան Պարթից, և գրեր էր առ Ս. Մեսրովպ, թերևս առոր խնդրովը։

ան (Ոսկեբերանի) ընկերակցիցը տեսնելով՝ կու գրէր այս նշանակաւ խօսքերով սկսելով. «Երա-
» նի՛ որ հանապազորդ լինիցին 'ի քաղցրահայ-
» եաց տեսիլ սատուածագեղ երեսացդ. և զի՞ ա-
» սեմ հանապազ, այլ գոնեայ յաւուրս կամ
» յամիս կամ 'ի տարեկան։ Աստուգէ և իմ անձն
» Ո՞ տանէր զիս արժանի հասանել անկանել յոտս
» ուսուցարանիս։.. Եւ ուստի՞ ինձ այդ լինիցի,
» բայց եթէ յաղօթից սրբոյդ, զոր մեծ պա-
» տարագաւ մինչ 'ի վերայ արժանաց և անար-
» ժանաց՝ ամենասուրբն Աստուծոյ հաստատա-
» նես»։ Իսկ խնդրոյն վերայոյ երկայն բացատրու-
թիւն մը գրեց. բայց նախ քան զրկելն 'ի Հայս,
խուրեց առ անուանին Յովհաննէս Անտիոքայ հայ-
րապետն, որ ինքն այլ իր հաւանութիւնը և սա-
տարագրութիւնը տայ. նա այլ իր եպիսկոպոսաց
ժողովով սատարագրեց և գովութեամբ գրծուց.
նուիրակն տարաւ թուղթը նաև առ մեծն Կիւ-
րեղ Աղեքսանդրի հայրապետն. նա այլ հաւա-
նեցաւ և առանձինն այլ գրեց թէ առ Ս. Պրոկլ
և թէ առ Ս. Սահակ ընդդէմ Թէոդորի Մոպ-
սուէստացւոյ. այսպէս Պրոկլ երկու պատարիաք-
քաց վկայութեամբ այլ հաստատելով գրածը՝
անկէ ետեւ զրկեց 'ի Հայս[1] (436). բայց իր նուի-
րակն Բասիլ՝ իր կողմանէ այլ բաներ աւելցուց
ընդդէմ Թէոդորի, իր հայրապետին գրածը բա-

[1] Այս թուղթս գրուած կու տեսնուի յամին 435. հա-
րիւր տարի ետքը Դիոնեսիոս Փոքրիկին կամ Կարճիկին
թարգմաներ է 'ի լատին լեզու. խորագիրն կամ հատցէն՝
Հայոց եպիսկոպոսաց, վարդապետաց և վանահարց ուղ-
ղուած է. Ս. Սահակայ անունը չկայ. հաւանօրէն, անոր
զատ գրեր եր, եպիսկոպոսաց զատ. որպէս զի Պարսից
թագաւորին առէն յանցաւոր լսեսուի Ս. Սահակ՝ իբրև
ժողովով Յունաց հետ միաբանող։

ւական չնամարելով։ Այս թղթոյն այլ միաբան պատասխան գրեց Ս. Սահակ ընդ Մաշտոցի, և ապահովցուց որ Թէոդորի սերմունքը չկան Հայոց մէջ. « Եւ որ Դիոդորեայ (Թէոդորի) Մամուես-
» տացւոյ աշակերտեալք իցեն, առ ժամանակս՝
» ի շնորհացն Աստուծոյ՝ այնպիսի ինչ չեն է յայտ-
» նեալ. ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ ապան-
» ղուն, ի հարկէ ջանալցի մեզ խլել զնոյն և զգայ-
» թակղութիւնն զայն ի միջոյ ի բաց կորուսանել.
» զի միաբանութիւն՝ որպէս ի ձերում միջի փա-
» ռաբանի, և զմեզ ի նմին հաւատարութեան փա-
» ռաւորութիւն առ Աստուած հասուցանել ար-
» ժանի արասցէ »։ Այս թուղթս[1] գրած է Ս. Սահակ հազիւ երկու կամ երկք տարի յառաջ քան իր մահը. այն միջոցին հանգիպեցաւ և մահ Շմաւէլի, որ ապահովութեամբն աւելի քան զի՛ երբեքիցս զգուելի եղած էր ամենուն, բաց ի Սուրմակայ։ Հաւատարիմ նախարարքը և եպիսկոպոսունք ազատելով այն անուանեալ քաղաքացի տարի կաթուղիկոսէն, Ս. Սահակայ ոգեն ընկան, և լալով ներումն խնդրէին և օրերով կ՚ապաշէին որ իր հօրը Ս. Ներսէսին պէս անյիշաչարութեամբ յանձն առնու նորէն իրեն կատարեալ կաթուղիկոսութիւնը. բայց ամենայն ջանք և աղաչանք անօգուտ եղան. Ս. Սահակ ոչ յիշաչարութեամբ մերժեց, այլ արդէն լաւագոյն հանդերձեալ կենաց պատրաստութեան մէջ ըլլալով

1 Ասկէ զատ երկար թուղթ մ՚այլ գրած է Ս. Սահակ միաբանութեամբ ժողովոյ եպիսկոպոսաց և վանահարց, որուն միայն յունարէն բնագիրն կայ հիմա. այս թուղթս կարգացուեցաւ Կոստանդնուպոլսոյ Բ ժողովոյն (Ե. տիեզերական) մէջ յամի 553, իբրև զօրաւոր և պայծառ գրուած մը ընդդէմ Ն՝ենտորի և Թէոդորոսի, անոնց ժամանակներից աւելի և մեծ հայրապետ մը։ — Տես Պատմ. Հայ. Բ. 261։

այն ծանրացեալ հասակի, միանգամայն և հին տեսիլքն միշտ աչացն առջև ըլլալով, յիսուն վաթսուն տարի զայն լաւութեամբ պահելէն եւ, պատմեց իրեն աղաչողաց, թէ իր ցեղէն քահանայապետութեանը գագրիլն և թէ իր եկեղեցւոյն հանգիստեալ հալածանքը և վանդը։ Զոր լսելով ամենքն զարհուրեցան, ապշեցան, ափ 'ի բերան եղան, և ակամայ իրաւունք տուին այն մեծ սրբատակաւոր անձին՝ որ կ'ըսէր. « Երիթայք յինէն » 'ի բաց, և թոյլ տուք ինձ ողբալ զընդհանուր » կորուստս աշխարհիս Հայոց. զոր տեսանեմ ա- » ջք մատցս՝ 'ի զօրութենէ վերին ցուցակութենէ. » մի բռնադատէք մխիթարել զիս 'ի վերայ բեկ- » ման ժողովրդեան իմոյ [1] »։ Սլան կորստոյ, 'ի բաց գնացին լուռ մնաց, և անկէ ետև ոչ ոք համարձակեցաւ այն խնդրոյն վրայ բան մը խօսիլ՝ այն վնասմ ցաւով կնքուած սրտին հետ. որուն բռնի հնչած հառաչանքն այլ հիմա շատ ազդու կու գար նախարարաց սկընջին, քան անկէ տասն տարի առաջ երկայն յորդորանքն՝ զերեանք կրկին տիրամտանութենէ յետ կնցընելու համար։ Իր լուսաւորչական գահը իշխանական փառաց դառնալէն աւելի՝ մխիթարութիւն եղաւ իրեն կենաց վերջընթեր տարին՝ (438), իր մեծ աթոռակցին, Ս. Ոսկեբերանի մարմնոյն դարձն 'ի Կոստանդնուպոլիս. որուն մահը, աքսորանքը, և եպիսկոպոս Նստորն տեսեր էր Ս. Սահակ իր կաթուղիկոսական աթոռէն։ Իսկ հիմա այն աթոռոյն ատոիճանաց վրայ նստած՝ և նիստելով 'ի գերեզմանն, « յայնմհետէ ամիսոփեալ զինքն յամենայն » աշխարհածուփ գրօսանաց, ալօթիւ միայն պա- » տրաստեր և վարդապետութեան [2] »։

1. 2 Ղազար Փարպեցի։

Ը

Հոս պէտք է յիշել Ս. Սահակայ վարուց սբբ. բաղդոյն նրբաղդոյն կերպարանքն այլ, աստուածային համակամութիւնն, կամ ներքին կենակցութիւնն ընդ Աստուծոյ. յորում այնքան գերազանց էր քան իր սուրբ նախնիքն անգամ, մինչև անաչառ պատմիչն [1] համարձակ վկայէ թէ. «Սա ամենայն առաքինութեանց հարցն նմանեալ. » աղօթիցն մասամբ առաւելեաց։ Քանզի սաստ. » ցաւ աշակերտաս 60, արք կրօնաւորք, խարա. » զնազգեստք, երկաթապատք, բոկագնացք, որ » յարընդ նմա չրջէին. որովք՝ մշտնջենաւոր պաշ. » տամամբ կոփէր զմանն, որպէս զոյն՝ որ յանապատն » էն. և հոգայր զաշխարհս, որպէս զոյն՝ որ յաշխարհի » էն »։ Այս երկու անձնական հարկաւոր հոգերը բոլոր կենացը մէջ այնպէս միացուցեր էր Ս. Սահակ, որ երկու անձ կարծուէր մի և նոյն կերպարանքը, մէկն յաշխարհի և յարքունիս՝ զընկերս և զազգ հոգալով. միւսն յանապատի և յառանձնութեան՝ իր հոգին և զԱստուած մտածելով։ Այսպէս կ'ընէր կաթուղիկոսութենէն առաջ. այսպէս կաթողիկոսութեան առեն, և այսպէս իր կենաց վերջերն այլ. և թէ և հիմա բոլորովին առանձնանալ փափագէր, այլ «Բազումք յե. » պիսկոպոսաց և յայլոց պատուական քահա. » նայից՝ ոչ երբէք ժուժէին ունել և մեկուսա. » նալ 'ի մշտաբուղխ աղբերէ վարդապետութե. » արբոյն, ուր ուրեք և դիպէր, 'ի յոստանի և » կամ 'ի հովս [2] »։

Ցեռին անգամ 'ի հով ելեր էր յամարան 439 տարւոյ, երբ յետ մահուն Վռամայ՝ անուր յա.

1 Խորենացի։ 2 Ղազար Փարպեցի։

ընդդէմ որդւոյն՝ Յաղիերոսի՝ զորդն եկան 'ի Խա-
գաւան, ինչպէս անուանք 'ի սկզբան պատմութեան.
և ահա այս անժամ ու անպատշաճ չիմութեանէն պէտք էր հեռացընել այն 'ի մահ և յանմահութիւն հասունացեալ հայրապետը, որ որդին յետին հիւանդութեամբ մօտ էր իջնելու յանկողնէն 'ի գերեզման։ Հայրապետի հաւատարիմ ձեռասունքն՝ աւելի գրկոք քան պատգարակաք՝ վերուցին ժամանակին հայրապետաց նահապետը, և Լուսաւորչի յետին պայազատը. տարին քանի մը ժամ հեռու՝ Աղաչիերոսի Բուր կամ Բրդոյ ըսուած գիւղը. որ ապահով և ճամբէ հեռու տեղ մ'էր, (զոր գժբազդութեամբ ես չատ փնտռեր և չեմ տեսած)։ Հոն հիւանդութիւնն ծանրանալով, խմաց տրուեցաւ ծանօթիցը. հաւանօրէն պատերազմի պատճառաւ սուրբ Վարդան հեռացեր էր. բայց իր կինն Դասրիկ՝ և մեկ այլ եղբարքն և մերձաւորք՝ եկան իրենց պապուն և ամենայն Հայոց հօրն քով. իր համանուն համահոգի Խահակ նահապետին նման՝ կամենալով մահուան բարձին, աշխարհական և հոգեկան կապերն ըրաւ. բաժնեց անոնց իրմէ կողոպտուած առացուածոց մեացորդը. բայց աւատապէս տուաւ իր անկողոպտելի սատացուածքը. այսինքն « ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա » օրհնութիւն բազմաւ. և պատուիրեաց նոցա պա- » հել զվարդապետութիւն պատուիրանի սրբոյն » Գրիգորի, զոր ուսոյց և աւանդեաց Հայոց [1] »։ Զնոյն պատուէր և օրհնութիւն տալով իր հաւատարիմ ձեռնասուն հոգեսուն տաղկերատացն, ապա բոլորովին ամփոփեց զինքն յինքեան. և թերևս իբրև յետին բարով մեռաս ըսելով աշխարհիս՝ ան-

[1] Ղազար Փարպեցի։

ցուց անգամ մ՚այլ մոքէն ընդարձակ նկարի մը պէս՝ ինեանամեայ կենաց բազմակերպ տեսարան-ները և փոփոխութիւնները, քանիէն առելի թա-գաւորաց յաջորդութիւնները՝ զոր տեսեր էր ե-րեք տէրութեանց մէջ. Հայոց, Յունաց և Պար-սից, որոց շատին հետ տեսութիւն և զրոյց այլ ունեցեր էր. — իր աշխարհին կերպ կերպ և շատը ոգբալի դիպուածները, (Տիրանայ կուրութենէն ինչուան Ադրաշիսի սպասրը). — ևս առաւել ե-կեղեցւոյն անցքը, իր մեծ պատուն՝ Յուսկան՝ բրածեծ մահուընէն մինչև 'ի մահ իր անարժան սիթոռակցին՝ Շմուէլի. ուսկից փոխելով յիշա-տակը՝ անցուց առջևէն երկայն սուրբ շար մը իր հովուակից հայրապետաց՝ զորս գար և կէս ժա-մանակ [1] տնուցեր և իրեն ծանուցեր էր. և որոց եռանէն ահա կ՚երթար ինքն այլ. յետ շատերէն երկար՝ (կէս գար հովուութեան և բազմաթիւ վասակաց և ջրաց) առ հովուապետն և վար-ձահատոյցն ամենեցուն, Գրիգորաս. որոյ յանձնե-լով զազգն և զեկեղեցին, զերբախտաւորս և զա-պերբախտս, և ապա իր 'ի մանկութենէ առ նա փափագած և կարօտած հոգին, փոխեցաւ « խա-» զաղական հանգստիւ [2] » 'ի կենաց աշխարհիս՝ 'ի կեանս արքայութեան երկնից. յետոյ սեպ-տեմբերի, 439 տարւոյն, յոր հինգշաբաթի, յերկ-րորդ կամ յերրորդ ժամուն « 'ի պաշտամանն ա-» ռնուշահոս իւղոյն [3] ». մեծն այն անձն, « Որ

1 Ս. Ագաթանգեղոսի՝ յամի 296, ցմահ Ս. Սա-հակայ, 439։

2 Ղազար Փարպեցի։

3 Ի՞նչ է այդ անուշահոտ իւղն, որոյ պաշտաման ա-ռանն վերաբերեալ Ս. Սահակ, ըստ պատմչոյ Կորիւնի. հաւանօրէն հիւանդաց օծման իւղն. կամ այն իւղն՝ զոր Յոյնք ալ պատարագին հացին և գինւոյն հետ կ՚օրհնէին գիշերային ժամէն առաջ. իւղը սովորաբար կանթեղաց հա-

» մահկանացու ծնեալ. անմահ զիւրն յիշատակ
» ելիցէ. պատուեաց զպատակերն, պատկառեաց
» 'ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն. և
» այդքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասու-
» թեան իրիք մասն 'ի ծերութենէն եղանիլ, և
» ոչ յախտից առընդունել[1] »։...

Հանգիստս, ով Մեծ, քու սրբասնեալ մարմնոյդ յերկրի, և փառք պայծառ հոգւոյդ՝ յերկինս։ Բայց ինչ ըսեմք քու հաւատարմացդ, քու անմիտիթար որբոցդ, քու կարօտեալ աշակերտացդ, որք յետ երկար ժամանակաց և աշխարհէ աշխարհ պանդխտութեանց՝ կու գիմեին յԱղեքսանդրիոյ և'ի Բիւզանդիոյ, յԱթենայ և'ի Հռովմայ՝ քու և քու հոգեկցիդ (Մեսրովպայ) ամենընկալ հայրագորով գրկացդ, յուսալով հարստանեաց պարոյք և առադասի երգովք դիմաց ելանել, և ուրթ կամ ասան տարուան մտաւոր աշխատանաց պտուղն ընծայել։ Իսկ հիմա, « Ո՞ւր է » քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս, » և ահաւորութիւն՝ առ թիւրս. ո՞ւր զուարթ » շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հան- » գիպումն. ո՞ւր խնդամիտ սիրտն՝ ընդունող ար- » բանեկաց. ո՞ւր երկայն ճանապարհաց յոյս հեշ- » տացուցիչ, աշխատութեանցն հանգուցող։ — » Կորնաւ ժողովոցն, թոռնաւնաւահանգիստն, ե- » լիք օգնականն, լուեաց ձայնն յորդորեցուցիչ »։ Այս իւսքերս եթէ նախ Խորենացւոյ մը գրչէն լսած ես, Հայկակ, գիտցիր որ կրքերն՝ շատերուն են, իմս այլ են. որ այն առնն և անկէ եաւ եզածներն այլ նկատելով, աւելի անոր նման « Հա- » ռաչումն յիս 'ի նէրքս ընթանայ և արտասուլ, և

մար էր, բայց երբեմն հաւատացեալք կ'առնուին և ջերմեռանդութեամբ կ'օծուէին։

1 Խորենացի։

» կամեցուցանէ բարբառել բան տխրական և սգա-
» ւոր », քան թէ փափագ գայ Ս. Սահակայ վը-
» բայ. « հրաշափառագունիւ անցանել բանիւ ըստ
» արժանի սուրբ հօրն գրուածից [1] »։ Սակայն
դարձեալ նոյն ազնուասիրտ աշակերտին և պատ-
մըչին հետ « այլում առեալոյ և ժամանակի զոյսա-
» սիկ թողցուք »։ և երթանք մենք այլ հետուէն՝
ընկերելու այն լուրջ յուզարկաւորաց հետ, ո-
րոց աչխարհական պարագլուխն է մեծին Վար-
գանայ կինն, սևազգեստեալ սիրելեաց պէս. իսկ ե-
կեղեցականաց՝ Աբեմիա երէցն, սարկաւագապետ
Սրբոյն. հանգերձ բազմաթեսամբ աշակերտաց
և խարազնազգեաց մեսրանից, քահանայից, ա-
զատ և ազամիկ մարդկան աշխարհախուռամբ հանդի-
սի. օրք լնուն լեռ ձորք ձոր անցնելով. և Արա-
ծանուոյ հառաչաձայն կարկաջանաց քարավազ
ճամբան բանելով՝ կ'իջնեն 'ի Տարօն գաւառ, և
կու դադրին անոր հիւսիսակողմը պարսպոզ լե-
բանց սառրատը՝ սարատափի մը վրայ, ուր է հան-
գուցեալն սնփական կալուածն, և բուն հին զը-
հից տեղն՝ Յուտիլոպ գեղն. հոն այն ասատուածա-
նման հոգւոյն անարատ պահարանը՝ պարկեշտ
մարմինը՝ կ'ամփոփեն պատուական տապանի մէջ.
օրոյ վրայ յեսոյ կու շինեն այնպիսւոյն արժա-
նաւոր « Սկեղեցի մեծապայծառ և վկայարան
» սրբոյն, պատուական և մեծագին սպասուք »։

1 Խորենացի։ Արդեաք գրեց սա յետոյ հրալափառ-
էոյն բան մը, ինչպէս արժանի էր, 'ի պատիւ իր մեծ հայ-
բարեսիրին, յայտնի չէ։ Կարծուած է թէ և Տիրոջ Վա-
նանդուոյ քահանայն՝ որ նուիրակ գացած էր 'ի Պարսս
խնդրելու զՍ. Սահակ, գրած ըլլայ անոր վարքը. — ա-
ւելի հաւանական է թէ Խորոնի Բուրիմնին այլ գրած է
անոր վարքը։ Սարկաւագ վարդապետ այլ ներբող մը
գրած է 'ի պատիւ նորա։ Այս գրուածներէն և ոչ մէկն
հիմայ ծանօթ են։

անար այլ բոլորտիքը « հիմնացուցեալ կանգնե-
» ցին 'ի տեղւոջն վանս բազմութեան պաշտօնէից,
» կարգեալ գարմանս անպակաս պաղոց 'ի հան-
» գիստս առաւելեալ եղբայրութեանն [1] » . ուր
ժողովեցանիր ճգնաղգեցիկ աշխերանէրէն ոմանք.
ոմանք այլ ուրիշ տեղեր ցրուած վանքեր հաս-
տատեցին : Իսկ հաւատարիմ երախտագէտ սիրե-
լիք սրբոյն՝ Աշտիշատայ եկեղեցին և վանքն այլ
բաւական չտեսնելով, « ժողովս տարեւորական
» աշխարհայորդոյ բազմութեամբ հաստատեցին
» 'ի տեղւոջն. որ ըստ ժամանակի՝ բազմամբոխ
» ժողովրդոյն՝ կամաւոր յօժարութեամբ ազատք
» և քահանայք գաւառին, այլ և կարի յոյժ հե-
» ռաւոր տեղեաց գիմեալք յոր կարգաղրութեան
» նորա ասնեն. որ և բազում օգնութիւնս առաղ-
» ջութեան ըստ խրատքանչիւր տխտից շահին 'ի
» նշխարաց սրբոյն, և ուրախալից սրտիւ դառ-
» նան [1] » ։

Երջանիկ հայրապետս և յայսմ մասին, որ Վար-
գանայ պէս թոռն ունեցաւ, և Մամիկոնէից նը-
ման բարեպաշտ և տաքսիրս ազգականներ, որք
կրցան ուրիշ նախարարաց ապերախտութեան
փոխարէն՝ մեծագործ սուրբ յիշատակարան մը,
հոյակապ տաճար մը կանգնել, իրենց նահապե-
տին նշխարաց վրայ. այնքան արժանապէս մեծ
ու փառաշնչ էր այս տաճարս, որ երբ լման 200
տարի ետև (639) մոլէնախանձ Հագարացիք առա-
ջին անգամ մտան 'ի Հայաստան, հասարակ եկե-
ղեցեաց խնայելով՝ ամենէն ալ՝ զարնողները փը-
լուցին. որոց մէջ չորս հատն յանուանէ յիշա-
տակի, և առաջինն է սա։ Թայանի է որ յետոյ
գարձեալ չինեցաւ վայելչապէս, բայց զայն այլ
քակեց, կ'ըսեն, գազանասիրտն Լենկթիմուր, և

[1] Ղազար Փարպեցի։

անոր քարերով Արածանուոյ Սուլուխ գիւղին քով կամուրջ կապեց. բայց մինչև հիմա կու տեսնուին աւերակք հին եկեղեցւոյն, նշանք մարմկանեան մեծագործութեան. որոց մէջ փոքրիկ, պարզ, ու կէս գեղանթագ չէն մատուռ մը՝ 14 գարէ վեր կու ծածկէ զգէրեզմն ոեցին Սահակայ։ Անոր գիմաց գրուած է պատշաճապէս՝ իր յեռին հոգէկիր և արիւնակիր շաւուիղն, շուշանագէզ և Շապան-անուն Թոռնեայն, Վարդենի՝ դուստրն Վարդանայ մեծի։ Անոնց ուշին յիշատակին մինչև ցայսօր յուխտ երթան խոնարհ սեղացիք, կարծեմ թէ և Փուրգք անգամ. փոխանակ այնքան հեռաւոր և մերձաւոր ազգայնոց, որոց պարտ և պատշաճ էր ոչ միայն նորէն կանգնել վայելուչ եկեղեցին, այլ եթէ աւելի առատութիւն և ազատամտութիւն բանեցընէին, բլրաչափ բուրգ մ՚այլ բարձրացընել ՝ի յիշատակ անման հայրապետին մերոյ և ամենայն հայրապետաց արժանաւոր օրինակին. փափագելի էր այն բրգան չորս երեսաց վրայ կռել գրել իրանչան քանդակներով՝ իր վարուց չորս աքանչելի կերպարանքը. առաջնոյն վրայ գրել ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԱՇԽԱՐՀԱԿԵՑՈՑ, գրուագելով երկու անգամ իր ազգին թագաւոր կանգնելը, և երկու անգամ անոր ազնուականութեան գահնամակը նորոգելը. մէկ մը՝ Պարսից գուռը, մէկ մը նախարարաց ժողովին մէջ իրաւաքանելն, և այլն. — երկրորդ երեսին վրայ գրել ՈՒՍՈՒՄՆԱՑՈՒՐ ԲԱՆԱՍԷՐ, և շարել իր շարականները, թարգմանութիւնները, նախագասելով աստուածաշունչը. Ս. Մեսրովպայ մեռք տալը, դպրոցաց բացումը ընդ բոլոր Հայաստան, Վրաստան, Աղուանստան, և թարգմանչաց առաքումը յԱսորիս, յԵգիպտոս, ՝ի Յունաստան և յԻտալիա. — երրորդին վրայ գրել ԵԿԵՂԵՑԱԶԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏ, և դրուագել իր գու-

մաքած ժողովքները, գրած կանոնները, գրած և հաստատած եկեղեցական գրքերը, Հայրապետաց հետ թղթակցութիւնը, հերձուածները հալածելը. – չորրորդին վրայ գրել ԵՐԿՆԱԿԵՆՑԱՂ ՍՐԲԱՍՈՒՆ, նշանակելով իր նուիրական, ճգնազգեցիկ կեանքը և կենաց յետին ժամը։ Իսկ քառակուսի բրգան ծայրն ալ քիչ մը տաշելով՝ ընկել 'ի գագաթը երկնասլաց սպիտակ սրտաձև սափոր մը ոսկի բոցով և ոսկի գծով նշանուած, զոր փափաքէի Հայկակ, որ՝ թէ ոչ այնքան մեծ, գոնէ այնքան փայլուն ըլլար՝ մինչև ուր որ ըլլայինք՝ կարենայինք տեսնել զայն և կարդալ հոն ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ։

ԺԴ

ՀՈԳԷՓԱՑԼ ՍԱՑԼՔ ՀԱՑՈՑ

ԱՐԻՍՏԱԿԷՍ

30 Նոյեմբերի.

Ա

Փշեց իջաւ պախրցին ձիւնապսակ սարերէն. արջառ ոչխար թողլով գալար արօտները՝ դռնափակ գոմերու մէջ խռկուած մայեն, հինդամեայ ձմեռան ձանձրոյթը սկսելով։ Ձիւսասերք և բնասերք այլ փուլման 'ի չէն 'ի քաղաք. վասն զի նոյեմբեր իր խոնաւ ոռքերուն կոխեց զծառ ու զծաղիկ. աներևներն իսպառ թսթափեցան, պտղատու պարտէզն չոր ձոլերով ցցուած պատնէշ մը գարձաւ, կամ մրրկէ փախած մերկ անառագաստ նաւախումբ. պաղուկ պախրցի մ'այլ, պաղուկ հով մ'այլ, ու ահա կու մեռնի կ'անցնի գալարուելիքն մեր կլիմայից. ահա ձերմակ պատանքն այլ կու սկսին տեղ տեղ փռուիլ. ձիւնն լեռներուն գագաթէն վար կ'իջնէ, կու սկսի յերևան գալ գաշտաց. քիչ առեն էն զամենքը կու ծածկէ և միայն ինքն կ'երևի... Լինցաւ այս տարուան բնական կամ բուսաբանական հանգէսն և կեանքն այլ. գոցենք գնոնահայեաց պատուհան.

նիս, բանանք վերնագիրքս պատուհանները. ըզ-
բանալ զմայլել երկնից հովքին լուսածգի ծագիք-
ներուքը, զոր ասուրոյն բուսարձակ յիզանակաց
կայսառութիւնն՝ չատ հեզ արհամարհել կամ
անտես ընել կու տար մեզի։ Նայէ, Հայկակ,
գլխեդ 'ի վեր. պարզ է գիշերս, տես ասպազելից
երկինքը. եկ գտանանք հոն, հոն է մեր ձմեռնային
տեսարանն։ Մտա, ծագիկ, պատուղ, խաղող, ա-
մենքն այլ կարծես մարգուս մանկութիւն, աշ-
խոյժ, թեթև մտածութիւն, զուարթ երկրաւոր
կեանք մը կ'ապցնն. իսկ երկնից աստեղազարդ ե-
բեայթն՝ սիրարժ ծերութիւն, ծանրութիւն մը,
խոր մտածութիւն և անմահութիւն մը։ Ո՛հ, որ-
քան պիտի ընդարձակեր և բարձրանար մտքեր-
նիս, եթէ կարենայինք՝ ինչպէս անկաթանք բոյ-
սերը՝ այսպէս այլ այդ երկնահովին ամեն մեկ
լուսատարմ ծնունդները ճանչնալ, իւրաքանչիւ-
րին կազմուածքը և իրարմէ տարբերութիւնը, ի-
նքնց ճամբան և նպատակը, և «զամենեսին զնո-
սա յանուանէ կոչել»։... Թերևս որ մը գտուին
և յայտմ մասին մեզմէ աւելի բազդաւորք, և եր-
կինք՝ պատմէ անոնց մեզմէ պահած Աստուծոյ
գործքերը, և Հաստատութեան ներդաշնակաւոր
ձայնն՝ լուսոյ հետ գարէ գար վար իջնելով աւելի
մօտ հասնի մեր ականջաց և թոռանց։ Իսկ մեք քա-
նի որ մեր խոնարհ վիճակին և գիտութեան չա-
փով իբրև անապատակեաց թափառիկք կիսա-
գլոր սայլերով կու գնգնրինք, գտնենք մեր
շարժուն բնակութեան անուամբ՝ երկնից ամ-
ենէն նշանաւոր համաստեղութիւնն այլ կ'անուա-
նենք Սայլ. զոր ատտեղաբաշիք այլ՝ ոչ աւելի ազ-
նիս կոչմամբ անուանեն Արջ. և ինչպէս որ քեզ
ծանօթ է՝ ոչ մեկ, այլ երկու Սայլ և երկու Արջ
համաստեղութիւն նշմարեն. Մէջ և Փոքր։ Ահա-
ւադիկ առաջինն՝ բևեռէն բաժնուած երեսն այն-

գին գաբձուցեր է. երկրորդին ծայրն նոյն իսկ բևեռին մէջն է խրեր. այսինքն իր եօթն աստեղաց առաջինն՝ որ է քեզուոյն ծայրն՝ ինքնին բևեռային աստղն է։ Մեր նախնիք այլ բաւ հնագոյն և նոր ազգաց՝ զասնիք Սայլ կամ Սայլաթափք կ՚անուանեն. բայց ինչպէս որ նոյն հին ազգերուրիշ անուններ այլ կու տային այդ համաստեղութեան, նախնի Հայք այլ կոչէին Իսմայ, Աբասանդ, Վէյոլի (թերևս վեցն որոշագոյն տեսնելով՝ եօթներորդը նուազագոյն), Բոմաստէպ, Գաղուլ, և այլն։ Եւ ինչպէս ամեն ազգ մեկմեկ ազգային աստղութեանմիջ կամ կարծեաց, այսպէս մերն այլ այդպիսեաց անուններ է դայդ և ուրիշ աստեղաց բոյլերը, որպէս Հայն, Վահագն, Ցորդգոլ կամ Մէրոնդն կամ Հէնանոյ։ Եթէ ազգային հին գպրութիւնն և վիպասանութիւնք յայտնուէին՝ այս երկնից աստղային գպրութիւնն այլ՝ հայ գրերով և անուններով պիտի կարդային. կամ թէ սուրբ ազգային ոգին կանգնէր տիրաբար և գիտնաբար և հրամմեր, անշուշտ դարձ հայկական գիւցային կամ սրբազան անուամբք պիտի ճանաչուէին. հին հայկական պայազատութիւնն՝ իր քաջագունքը, գպրութիւնն՝ իր իմաստասէրքը, և եկեղեցին՝ իր սուրբերը պիտի յիշէր և անուաններ՝ զանոնք տեսանելով։... Մենք հիմա շատանանք այդ երկնագնաց գուսարեալ Սայլին եօթնասաստեղեան կազմուածքին նայելով զուգել անոր այսօրուան Հայադիր յիշատակն, որ է Ուրդոյ և Թուռան Լուսաւորչին [1]. և առանց հեղինակութիւն բանեցընելու, կամ օրէնք հրամմելու՝ գիտենք այսօր եօթն աստեղաց մէջ կամ հեռ՝ զԳրիգոր 'ի ծայր քեզուոյն, և վարը իւր որդիքն

1 Տնաստոյնք ամենք նպիտմբերի մէկին և ամենք այլ գեկտեմբերի մէկին գնեն այս տօնս։

Աթիոքայի և Վրթանէս, և չորս անքնեարը՝ Գրիգորի, ազատագոյնը, իբրև հեռու աշխարհի (Աղուանից) հիւր զրկուած, և Յովհ իր եղբայրն, Ներսէս՝ Թոռն Յուսկան, և վերջին անիւ հիւսիսային բևեռին ուղղաձիգ նայող՝ Սահակ որդի Ներսիսի։ Եւ թէ գու սրատես ըլլալով, Հայկակ, սիրես Փոքր Սայլին վերածել այս ցանկալի անուններս՝ որ մեր սայդ երկնագնաց եկեղեցւոյն հոգեկիր կառքն են, անոր ծայրի աստղն՝ որ է հիւսիսային բևեռն երկնից՝ կ'ըլլայ մեծն Գրիգոր, մէկայլքն այլ մի ըստ միոջէ։

Մեր սրբազան Հայապերն՝ Գրիգորի, Ներսէսի, և Սահակայ մանաւոր ասնական յիշատակաց օրեր նուիրելով՝ այս օր մնացեալ չորից յիշատակը կարգէ. անունցմէ այլ վերջնոյն, (Գրիգորիսի) սուրբ Նշխարաց գիւտին պատշաճաւոր զատ օր մը նուիրէ. որով օրս սեփական կու մնայ երիցն, Աթիսակիսի, Վրթանիսի և Յուսկան, և ասոր մահուն ընկերակցի մը, Դանիէլի ծերոյ. որք 'ի հարկէ այլ և այլ օր կատարեցին իրենց երկրաւոր կենաց յաղթական շրջանը, այլ որ և է մոռացումնամբ կամ խորհրդով՝ բոլորն միատեղ մէկ օրուան հատատ մեզի։ Առանց համար երգէ քաջ գանձասացն Մովսէս. «Մշտապայծառ լուսոյն աշտանակք գովելիք և բարձրատեղուանք, քահանայապետք գահաւորեալք, շառաւեղեալք 'ի հօրէն լուսոյ, Ճշմարտութեան Ճշմարիտ քարոզք և պարծանք պարծանաց մերոյս գրոհի. սիւնք տաճարի տեսան բարձրաբերձ գոլով և հաստատեղոյս. սուրբ Աթիսակէս, վեհդ Վրթանէս, քաջափառ Յուսիկ և համբակ Գրիգորիս, հանգերձ սրբասանեալդ Դանիելիս այլասեռիս և համատարածիս, անմարմնաբար 'ի մարմնի կատուցեալք՝ որպէս հրանիւթք և իմանալիք։ Այսօր ժողովեալ մանկունք Սիոնի

» ասնեն ցնծութեամբ զօր յիշատակի ձերոյ հան-
» գիսի։ Ահա բուրեսցի այս երգ առաջի քո, ա-
» մենասուրբ Երրորդութիւն »։

Այս զքանչելի եօթնասանեղեան հայրապետաց գուսպարքն՝ մեր եկեղեցւոյ ամենէն նշանակաւոր երեւութից մէկն է, քաղաքական պատմութեան մէջ այլ ոչ աննշան, որովհետեւ ազգին հին հեթանոսական օրինաց՝ քահանայապետքն թագաւորի պէս մեծափառ գլուխ մ'էին. թագաւորաց յաջորդութեան մէջ եղած պարապ ժամանակին այլ՝ թագաւորահօր կամ խնամակալի տեղ մը կու բռնէին։ Ասոնց լուսափայլութիւնն մեր եկեղեցւոյն հորիզոնին և գահուն վրայ իրրև դար ու կէս քշած է. այն վսեմ, բնչիեաւոր և բազմայնազանակ գարուկէն ('Ին և Նին կէսն) որ քրիստոնէութեան փառաւորագոյն յեղանակն է, իր գերագոյն վարդապետաց և հզօրագոյն և ընտիր թագաւորաց փայլմամբ. թագաւորաց նկատմամբ՝ այս յեղանակիս մեր պատմութիւնն շատ անփառունակ է, բայց մէկ Տրդատ թագաւոր մը կ'ընծայէ՝ որ կընայ Յունաց Կոստանդիանոսի և Թէոդոսի հետ նախագասութեամբ մրցիլ (եթէ օրինաւոր է այսպիսի մրցումն). իսկ հայրապետաց նկատմամբ՝ մեր հայկական եօթնեւրեակն չի նուազիր Յոյն և Լատին ժամանակակից պանծալի հարց քով. թէ ոչ գրականութեամբ, այլ հովուական և ազգասիրական երկամբք, որ առաջին պարտք է հայրապետին։ Մեր եկեղեցաշարժ Սոյլին առաջին և վերջին աստեղքն միայն, Գրիգոր և Սահակ՝ ծանօթք են գրաւոր վաստակովք այլմիւսոց սակաւ ինչ յիշատակ կայ, այլ քրոտմամբք և արեամբ մի քանի զմի գերագոյնք, և առաքինական գործովք զանազանեալք.

Բ

Երկք հայրապետաց (որոց մանաւոր յիշատակն արուեստ է այսօր), զառաջինն միայն հետազօտեցէք այս գիշեր, որ և 'ի կարգի հոգեփայլ Սայլին անքիւրապէս յետ Լուսաւորչին գայ, այսինքն է ԱՐԻՍՏԱԿԷՍ կամ ՌՈՍՏԱԿԷՍ, երկրորդ որդի Գրիգորի՝ տարուք, բայց տասիճանաւ յառաջացեալ քան զանդրանիկն Վրթանէս. որովհետև սա ամուսնացեալ էր, ինքն կուսակրօն, և վասն այնորիկ ընտրեցաւ 'ի հօրէն յաջորդ իւր։ Յետ Թանց մէջ սա և Գրիգորիս միայն կուսակենցաղ եղան, հրեշտակային միայնութիւն սիրելով, քան Լուսաւորչի ցեղը աճեցնել, որոյ համար այլք յանձն առին 'ի սկզբան ազգային ընտակցութիւնը։ Մինչդեռ Վրթանէս հօրը նման պատանութեան տեսն աշխարհ մտաւ 'ի Կեսարիա, Առիստակէս գրեթէ ծննդեան տեսնէն յաշխարհէ զատուելով անապատատէր տատրակի նման միայնութիւն և առանձնութիւն սիրեց. երկու որդւոց ըստ աշխարհի հայր ելլալն բաւական սեպելով մեծն Գրիգոր, ընդհանուր Հայ ազգին հայրութեան նուիրեց զինքը. երկայն և վերջին բարև մը տալով իր պարկեշտ ընտակցին՝ Մարիամայ, որ իր սիրոյ վերջին խայրիքը գեռ ծոցին վերայ կրելով՝ երկանը հետ բոլոր աշխարհիս այլ մեռք բարով ըսաւ, քաջուեցաւ հաւատաւոր կանանց վանք մը, և հոն անուշ իր երեխայն, ինչուան որ հասաւ տարիքն՝ մարց և կուսանաց գրկէն ելնելու և ճգնազգեաց հարանց որդեգրելու։ Հօրմէն զատուած տեսն, անզգայ անծանօթ անձիկ մ'էր Առիստակէս. իսկ մօրմէն բաժնուելու տեսն՝ այնքան լաւ և խոր գիտէր մայրական սէրը. որքան որ ուրիշ սէր մը չէր գիտեր. բայց

գարձեալ 'ի նոյն առաքինի և մեծասիրտ մօրմէն սովրելով հանդերձեալ կենաց գերագոյն սէրը և վարձքը, և անոր օրինակաւ և խրատովն յորդորուած՝ պզտիկ հասակաւն և ուժովն, երբաւ այն մեծ անցքը՝ իբրև նոր Սամուէլ մը Աննայի ձեռօք. և յանձնեցաւ Նիկոմաքոս անուամբ զգօն Յոյն կրօնաւորի մը, որ շատ տարի քովը պահելով եղաւ անոր հոգւոյ հայր. և երբ քրիստոսանուէր կենաց ամենայն հնարքը սովրեցուց և բաւական տեսաւ իր հոգէսուն աշակերտը՝ ցուցուց անոր խորագոյն միայնութիւն և անապատին մուտքը։ Ադիստակէս երրորդ անգամ մ'այլ բաժնուելով 'ի մէկ հատիկ ծանօթ և հոգեկից անձէն, և թերևս առաջինէն զօրաւոր՝ եթէ ոչ նոյն պէս կակուղ ցաւով մը, թողուց զինքն իրեն, և թաղեցաւ առանձնութեան մէջ, միայնակեաց աստուածախոհ ճգնաւոր մ'ըլլալով. այսինքն մինակ առլրօղ սղօթիւք և ընթերցմամբ և քիչ մը ձեռաւոր աշխատանօք. բոլոր կեանքը մշտավառ կանթեղի մը պէս Աստուծոյ դիմաց կախելով, գիշեր ու ցորեկ։

Թերևս աւելի քան քսան երկայն տարիներ անցան այն լռութեան և միայնութեան մէջ՝ մէկ օրուան մէկ գիշերուան պէս, երբ առաւօտ մը իր մռայլեալ խրճիթին դուռն ուժով զարնուեցաւ. և երևցան բազմութիւն անծանօթ և օտարադէմ մարդկան, ոսկէփայլ արծաթազարահ զինուորք, ցցունազարդ սաղաւարտաւորք, դեռնագղարդ հեծեալք. որք չէ միայն քսան, այլ քառասուն յիսուն տարուան բաներու երաշներ պատմեցին. գոնէ իրեն երազ երևցան այն տարիներուն մէջ հանդիպածներն դուրսը, իր հօրը, Հայոց ազգին և անոնց թագաւորին. որք հիմա իրեն հրաւիրակ խաւրելով ազգին աշնուագոյն իշխանները՝ կու հրաւիրէին, կու սիրէին կու քաշէին որ երթայ

գայ 'ի Հայաստան, 'ի Վաղարշապատ, յորքու-
նախ հսկայ Թագաւորին և 'ի գահ քահանայապե-
տութեան Հայոց։ — Որչափ այլ նորատեսիլ էր
այս երազս և գժուարին անկէ արթընալ, աւելի
գժուարին եղաւ Առիստակիսի, մանաւանդ թէ
անկարելի՝ իր միայնութեան տեսիլները շարու-
նակել. աշխարհախառն խժլտուք մը ալիքներու
պէս խուժելով՝ զարկաւ քշեց իր պարկեշտ շե-
միկը, և հեղեղեց իր ամրթխած խցիկը. շփոթե-
ցաւ անզգաստութիւնն, փախաւ բազմամեայ խլա-
ցեալ լռութիւնն. Առիստակէս իբրև չորս գին
ջուր առած՝ հազիւ քարի մը վրայ ոանկռիւ ե-
ղած շուտոր մնաց։... Աւելի քան զլսած բաներն,
և աւելի քան անտես հօր մը (թէ և այնպիսի
արժանաւոր աննման հօր մը՝) անփորձ սէրն,
քաղցր և ցանկալի էր իրեն իր միայնութիւնն, որ
էր իր բոլոր ստացուածքն, իր սերութիւնն, իր
սէրն. և եթէ Աստուծոյ և հօր մը կամաց հնա-
զանդութեան պարտքը չճանչնար, ու Կեսարիոյ
եկեղեցւոյ գլխաւորներէն չյորդորուէր, չէր կըր-
նար թողուլ իր խլեակը և երթալ Հայոց նորա-
հաստատ քահանայութեան գահագլուխ ըլլալ։
Սրբազան հարկին գլուխ ծռեց Առիստակէս, ոչ
առանց կծու արտասուքներով բաժնուելու այն
տեղէն՝ որ միայն զինքը կու ճանչնար, և զոր միայն
կու ճանչնար ինքն. և այն քանի մը սրտակից հո-
գեկից անձինքներէ՝ զոր իր սրբութիւնն ժողովեր
և աշակերտեր էր իր ճգնարանին մօտ։...

Շուտով անհերևոյթ եղաւ իրեն ծանօթ սիրելի
սահմանն. շատ չափաւոր համառօտ էր իր հորի-
զոնիկն. կարճ ժամ մը չանցած՝ նոր հորիզոն և
նոր աշխարհ մը բացուեցաւ գիմացը, որ անծայր
անվերջանալի կու թուէր՝ որչափ որ յառաջ եր-
թար։ Բայց իրեն առաջին տեսիլք և ցուցանք ե-
ղան զինքը ամենոյն բազմութիւնն, Հայոց արքու-

նի գնդին հսկայակերպ կորիձներն՝ անձառնի ճոճմունքներով, ահագին զրահներով, երկայն սեգերով և լայնալիճ սպեներով, որոց մէջ՝ որ-սորդներէ բռնուած վայրի եղնորթի մը պէս վախ-նալով կ'երթար. այնանց խօսելու կուներայէր կու նկատէր անոնց շատ արևէ շատ արիւնէ անցած խանգրած երեսները, հին ու նոր սպեաց նշան-ներ, առիւծաձև ցցուած և տարածուած մազեր. — կու տեսնէր անոնց մէջ ամենէն պատուելի և նախիշխան եղած ծերունի մը, որուն գմբեթաձև գլուխն թէ և բոլորովին ալևորած էր, թէ և եր-կայն սարաձև յօնքերն խառնուէին խորացած աչաց թարթիչներուն հետ, թէ և կորիճ թոռներ-ու պապ կ'երևցընէր զնա հասակն, բայց դեռ զէնքով ու զրահով ծածկած, իր ամենէն կայ-տառ զինակրին հաւասար շուտ կու շարժէր, կ'ելլ-նէր կ'իջնէր ձիէն, ու ձայնը փողի պէս գնդին մէջ կու տարածէր. և էր Արքատազ մանդակունի սպարապետն Հայոց, և դասախարակ Թագաւո-րին Տրդատայ, զոր՝ յառաջ քան զյիսուն տարի՝ փախուցեր ազատեր էր Առիստակիսի պապուն ընկերաց ձեռքէն. և այսօր անոր թոռը՝ զինքն Առիստակէս՝ կու տանէր իր վեհափայլ սանուն (Տրդատայ) մտերիմ ընելու։ Երկրորդ պատուելի անձն կ'երևէր գնդին մէջ բաւական տարազը կըտ-րիճ մը. Տաճատ՝ Աշոց գաւառին տէրն, որ և փե-սայ էր Արտաւազդայ և երբեմն ճանչցող և մատ-նող Գրիգորի՝ իբրև որդւոյ Անակայ՝ սպանչի հօր Թագաւորին, և յետոյ նոյնպէս իմաց տուող Տրդատայ որ Գրիգոր երկու որդիք ունի, արժա-նաւորք պատուելոյ. անոր համար այլ զրկուե-ցաւ զանոնք գտնելու տանելու, և այսպէս փո-խարինելու իր մատնութեանը, որով Լուսաւո-րիչ տան և երեք տարի յօժուտ վիրապին Ար-տաշատայ մնցնեցաւ։ Բոլոր գնդին յառաջագէմ

և վարիչ կ'ընթանայր Լուսանդուն երիտասարդ մը, իրեն յարմար կրակոտ երիվարի մը վրայ թռչելով, 'Ի՞՞՞ կայսրեն Ցրդատայ. որ սմենևին Անխոտակիսի կամակարութեանը և սրտով և աչօք յետ դառնալուն չնայելով փողէր փչէր քշէր երթար, և ալքունի գունդը յանապատէն փոխադրէր 'ի Կեսարիա մայրաքաղաք Փ. Հայոց, ուր առաջուց գտեր և պատրաստեր էին զԼերթանէս երէց եղբայր Անխոտակիսի. ոլք և զարմանք և ներկինք նայելով՝ եղածները մեկմեկու զրուցելով և իրարու գիրկ տալով, անկէ ետև կամայ ակամայ Ճամբայ ընկան փութալ դէպ 'ի Մեծ Հայք....

Գ

Հանինք մենք այլ հոն մեր պատմութեան Ճամբան կարճեցընելով. Ահա համբաւը լսելով Թագաւորն ինքնին ընդ առաջ կու գայ իրրև իրեն եղբօրորդւոց և որդւոց Լուսաւորչի, կ'ուզէ անձամբ տանիլ զանոնք իրենց հօրը. Իսկ հայրն նոյա և մեր՝ որ կամակից էր Թագաւորին իր որդիքը կանչելու 'ի Հայս, ոչ աշխարհական փառաց և մարմնաւոր մխիթարութեան համար էր, այլ իր հոգևոր բնութը վերցընելու օգնական և փոխանորդ ունենալու համար, զոր չէր կրնար այնպէս համարձակութեամբ յանձնելու ուրիշի՝ ինչպէս իր որդւոց. միանգամայն և երկոյն չարակրութեամբ և յոգնութեամբ մաշած՝ կարծէր թէ շուտով իրեն կենաց վախճանն պիտի հասնի, և փափագէր վերջի տարիները միայն իր հոգին մտածելով պատրաստուիլ 'ի հանդերձեալ կեանս. դարձեալ՝ անդադար գովութիւն և օրհնութիւն և պատիւ լսելն՝ ուր որ երթար, իրրև գերմարդկային սնձ մը երևելով, իրեն ծանր կու գար և

կ'ուզէր փոխչիլ 'ի մարդկանէ և թաքչիլ յԱստուած։ Այս մոռացութեամբն էր որ հիմա այլ որդւոց գալուն առանն՝ ինքն չէր երևեր, այլ յԱկեղեաց գաւառն էր, ուր այնչափ չուրչուրանք կրնր էր, և իրրև թափած արեանը գին՝ Տրդատ անոր տուեր էր այն գաւառին մեծ մասը, լեռներով դաշտերով և շինքերով, մինչև Լ---ուլի գ--- ըսուելոյ երկիրն։ Այս գաւառին և Դարանաղեաց սահմանամէջ է Սեղ-հ սրակատար լեռն, լայնատարած կողերով, այրերով, քիչ տեղ դժար, անտառոտ մացառոտ տափերով. այս դժուարակոխ և ահարկու տեղուանքը՝ ուր հազիւ հովիւներն կրնային ելնել իրենց հօտից ետևէն, մէկ զարմանալի աղջիկ մը կլսեր էր արիապար ելնել, և երկոյն տարիներ սղտիկ քարայրի մը մէջ մինակ ապրիլ վայրենի որոջի մը պէս. իրմէ զարմանալի և գեղեցիկ աղջկան մը (Հռիփսիմեայ) ընկերը էր սա, մենաստերն Մանդ. վոր յետ շատ տարիներու դասու այն խորշերուն մէջ Լուսաւորիչ աչքն. և երբ ժամանակն լցուաւ, ամիոփիոց անոր պարկեշտ մարմինը իր հովուական վերարկուաւն, և թաղելով անոր ներքսագոյն մենարանին մէջ, անկէ ետև ուզեց ինքն ժառանգել զոյն տեղը, և իրենն մենարան և աղօթարան ընտրել։ Ահա այս կողմերս էր երբ լսեց Տրդատայ ձայնը, որոյ ձայնին միայն պատասխան կու տար և կ'ելնէր իր Ճգնարանէն. և տուիծն և գառն համամիտ և համասէր մէկտեղ կենակցէին։

Այս անգամ թագաւորին հետ տեսաւ իր առաջին կենաց ժառանգիչը և կենդանի յիշատակը, իր սրիտը, իր որդիքը. որոնց երկրորդ թերևս քիչ մը ճանչնար հին նմանութիւն, իսկ կըրտերոյն՝ Առիստակիսի վրայ՝ գուցէ ուրիշ նմանութիւն չէր գաներ, բայց եթէ թեթև ամպոյ մը պէս հեռացեալ սահեցեալ անձի մը՝ որ երբեմն

իրեն կենաց կցորդ, և անոնց մայր եղած էր. (եթէ գեա. ոյսպիսի մտածութիւն կրնար այն ասատուածախոհ անձին միտքն այլ զարնել հեռուանց)։ Սակայն եթէ արտաքին նմանութիւն և ծանօթութիւն դժուար և աննշմար էին Գրիգորի և Ադիսատակիսի մէջ, հոգեխառն նմանութիւնք զարմանալի կերպով կ'երևէին. – երկուքն այլ անմարմնոց նման, մէկն Ճգնաւորի հայր, միւսն Ճգնաւորի որդի, երկուքն այլ Ճգնողք։ Քառասուն տարեկանի մօտ էր Ադիսատակէս՝ երբ առաջին անգամ Ճանչցաւ իր հայրը զՍ. Գրիգ. Լուսաւորիչ Հայոց. ի՞նչ զգացմունք մաքուր սրտին՝ առաջին անգամ համանման մաքուր և վեհ սրտի մը և գերկաց վրայ բարախած առեն.... Տեսեր ես, Հայկակ, Ճամբան փոխել տուած գետ մը. իր յատակին պէս ձեռագործ յատակ մը կու փորեն երկայն տարիներ աշխատելով, որուն ծայրն հողաթմբով կամ կապանքով մը միայն զատուած է 'ի գետոյն. երբոր վերջապէս կու փորուի կու լմընայ նոր Ճամբան, այն կապանքը կու քակեն կամ այն հողաթումբը կու փլցընեն. և ահա յանկարծ գետն իր հին ծոցը թողլով այս նոր բացուածին մէջ՝ ապակիէ լեռներու պէս թաւալելով կու թափուի, և երկայն տարիներով փորած ցամաք ծոցը՝ վայրկեններու միջոց կու լեցուի կու ծածկուի անծանօթ հոսանքներով։ Այսպէս հոր. գեց 'ի սրտէ Գրիգորի հոգէխառն սէրն 'ի սիրտ և 'ի հոգի Ադիսատակիսի, ոչ այնքան բնական, որքան գերբնիկ ներգործութեամբ մը։ Անշուշտ հոգին սրտին զարկեր և բան մը ազդեր էր Գրիգորի, զոր թերևս լաւ չէր իմացած այն առեն, երբ մօրը գիրկը ձգելով զԱդիսատակէս երթայ՝ հեռացաւ անոնցմէ և այսօր երկրորդ զարնուածք սրտին իմացուց յայտնապէս, եթէ սա է իր հոգւոյ պայազատն, իր յաջորդ հայրապետն Հայոց։

Արգէն իրեն տեղակալ և ընդհանուր հոգաբարձու եկեղեցեաց և վանորէից դրեր էր Դանիէլ անուամբ եպիսկոպոս մը, (որ և երկարակեաց ըլլալով՝ նոյն պաշտօնը վարեց Աբիսակիսի, Վրթանէսի և Յուսկան օրերն այլ, և եռքինիս մահուընէն ետև՝ անոր պէս ինքն այլ նահատակեցաւ, վասն այնորիկ և այսօր Լուսաւորչի որդւոց և Թոռանց հետ հաւասարապատիւ կուսանուի). անկէ զատ ձեռնադրած հարիւրաւոր եպիսկոպոսաց գլուխ և նախադաս կարգեր էր զԱրբիանոս Հալբայ եպիսկոպոսն, որ քրմապետի մը որդի էր. իսկ հիմա զԱբիսակէս 'ի ինդրոյ Թագաւորին Տրդատայ և մեծամեծաց և եպիսկոպոսաց՝ անուանեց իրեն երեսփոխան և յաջորդ, եպիսկոպոսական աստիճան տալով անոր. ինքն այլ անոր վիճակը իրեն առաւ, այսինքն առանձնութիւնն, առաջինէն աւելի հեռանալով յաշխարհէ և լեռնակեցիկ ճգնելով, միայն առեն առեն իջնելով և որդւոյն հետ միաբան ձգելով հոգևոր արբը Հայաստանի ընդարձակ եկեղեցական ագարակին մէջ։

Դ

Յետ քանի մը տարի այսպէս քաղաքավարելու՝ Տրդատ ուզեց տեսութեան երթալ Կոստանդիանոս կայսեր իր մեծամեծ նախարարներովն, երբ նա 'ի Քրիստոս հաւատալով ազատութիւն հրատարակեց եկեղեցւոյ. Գրիգոր այլ իջաւ իր ճրագնարանէն՝ մեկանել երթալու շնորհաւորելու եկեղեցւոյ գլխոյն՝ եղած յաջողութիւնը, և հետն առաւ իր եկեղեցւոյ գլխաւորները զԱբիսակէս և զԱրբիանոս՝ հանդերձ այլովք։ Եւ երբ յետ իրը տասն տարւոյ Կոստանդիանոս հրաւէր խաւրեց առ Տրդատ նուիրն զԳրիգոր առնուլ և գալ 'ի Նի-

կիա քաղաք, ուր եկեղեցւոյ գլխաւոր եպիսկոպոսներն 300էն աւելի պիտի ժողովէին՝ ի քննութիւն և՝ ի դատապարտութիւն Արիոսի վարդապետութեան. Տրդատ աշխարհին քաղաքական վիճակին համար, Գրիգոր այլ խոնարհութեամբ պատուէ փախչելով, յանէն չառին երթալ. այլ իրենց կողմանէ խաւրեցին զԱրիստակէս, ընկերութեամբ ուրիշ քանի մի եպիսկոպոսաց Մեծ և Փոքր Հայոց, որոց անուանքն նշանակին՝ ի կանոնական գիրս ժողովոց եկեղեցւոյ։ Արիստակէս երթալու ատեն հանդիպեցաւ՝ ի Կեսարիա՝ ընկերակցելու Ս. Ղևոնդայ հայրապետին՝ որ իր հայրը մեռանագրեր էր, և նոյն օրը եկեղեցւոյ մէջ կու մկրտէր իր հօրն անուանակիցը զՍ. Գրիգոր՝ հայր Գրիգոր Աստուածաբանի, (իրեն նման մեծատէր հայրապետի, որ և նոյնպէս իր հօրը օգնական և յաջորդ եղաւ Նազիանզու եկեղեցւոյն մէջ). այս հանդիպին ներկայ և Ճամբուն ուղեկից եղան Ս. Յակոբ Մծբնայ հայրապետն, Եւթաղ Նգեսիոյ հայրապետն և Յովհան Պարսից հայրապետ, և այլք։

Անցնելով ընդ Կապադովկիա, Գաղատիա, և Բիւթանիա՝ հասան այս մեծ և փառաւոր եպիսկոպոսաց կարաւանն՝ յառաջին ժողովարանն եպիսկոպոսաց, ՝ի հաստատութիւն հաւատոյ, ՝ի Նիկիա քաղաք. որ և առաջուց հոն ժողոված պատուական առաջնորդներուն և ժողովրդոց ընդառաջ ելան արևելից վեհագոյն հայրապետաց, որոց նմանք չերևեցան երբէք ժողովոց մէջ։ Այս հայրապետաց մէջ, առանց կողմնասիրութեան և վիճման, Հայոց հայրապետն էր ամենէն հեռաքննելին և փափաքելին. քան և չորս տարիէ վեր յարևելք և յարևմուտք հռչակուած էր Գրիգորի Լուսաւորչի անունն, խոստովանողական նահատակութիւնն, բազմամեայ վիրապ-ընկեցու-

թիւնն. Հայոց հսկայ թագաւորը և բոլոր ժողովուրդը 'ի Քրիստոս հաւատացնելն, և հարիւրաւոր եպիսկոպոսաց գահոյգլուխ ըլլալն. և դեռ չատերն չցիտնալով անոր խոնարհաբար հրաժարելն՝ կարծէին թէ պիտի տեսնեն զնա Կեսարիոյ հայրապետին աջակից. այլ խաբուեցան. ազնըւախոհքն՝ մխիթարուեցան անոր տեղ հայրապետման արժանաւոր որդին տեսնելով. իսկ այլախոհք (եթէ սայդ է աւանդութիւնն) տհաճելով և արհամարհելով։ Վասն զի կ'ըսէ աւանդութիւնն, թէ Ս. Գրիգոր մեծահասակ և վայելչակերպ էր. իսկ Ներսեսակէս՝ փոքրահասակ և վատաւոյժ, տղայութենէ վեր անդադար ճգնութեամբն. «Մենաւորութեան լեռնակեցութեն, » քաղցի, ծարաւոյ և բանջարաճաշակ կենաց, և » սրգելանոց անլուսիս, խարսիզնազգեստ և գեռ» նաւարած անկողնոց և բազում անդամ զչնչ» տական հանգիստն գիշերաց զհարկ քնոյ՝ յո» ստանաւոր տքնութեան 'ի թարթափ ական վը» ճարելով[1]». և իր անմոռաց մենասէր ճգնազգեցութեան ախորժումն՝ անզարդ անպաճոյճ հագած, որչափ որ կրնար եպիսկոպոսաց գլխաւորմը։ Զոր տեսնելով, կ'ըսեն, պճնասէր և ամբարհաւաճ Հոռոմոց մանկունքն, որք Նիկիոյ լճին (Ականիոս, Իզնիկ կէօլիւ) եզերքն կու սպասէին, քթերնուն տարին, և դա ոչ եպիսկոպոսապետի՝ այլ եզնավար մշակի մը կերպարանք ունի, կ'ըսէին. և չարաճճիկք ոմանք՝ հոն գետին հերկող եզներն այլ կու ցուցընէին, կամ զինքը փորձել կ'ուզէին հրեաբարբնշանախնդրութեամբ։ Այն ասեն, կ'ըսեն մեր այլ յալթասէր և յուսախայթ աւանդաբանք, Ներսեսակէս մաճը բռնելով քշեց եզանց զոյգը, ոչ կարծր հողը կսկլե-

1 Ագաթանգեղոս։

լու, այլ կակուղ ջուրը կարծրացընելու. և Նի-
կիոյ լճին մէջ արտավար մը տեղ՝ իբրև ցամաքի
վրայ գնալով և քայլեցնելով եղները՝ սալիքները
ակօսեց, ձերմակ փրփուրով գիծերը դիզելով, և
գարձաւ ցամաք. և իր ոտից հետքն ինչուան հի-
մա կ'երևայ լուսափայլութեան նշանով։ Դու,
Հայկակ, մի փնտռեր այդ նշանները, ինչուան որ
հրաշիցն արժանաւոր և ստոյգ պատճառը չի գըտ-
նես. սակայն իբրև հին աւանդութիւն կարդա՛
գովասանին գրածը. «Ի վերայ կապուտակ ա-
» լեացն լայնատարած լճին լիութեան վերհաւէտ
» և քաղցնածածան կորովակի սիգաշարժ թանձ-
» րութեամբ ջուրցն ովկիանոյն՝ սիգաքայլ ոտիւք
» սրընթացութեամբ սիրացեալ. անվէներ դիտ-
» մամբ յիսուսաբար 'ի նկատեալ տեղին հաստ-
» ներ. ոչ պետրոսօրէն երկմտեր, այլ փրկչաբար
» խիզախեր։ Եւ ժողովելոց հարցն բազմութեան՝
» սիրալի հիացումն առներ. և զանդրադարձու-
» թիւնն եկաւորութեամբ՝ ոչ տարակուսանօք
» ինչ հայթհայթեր, կամ յառաջարկեալ հան-
» դիսէն կասէր. այլ նոյնաձև օրինակաւ համար-
» ձակապէս 'ի հաստատուն երկիր ելանէր. որ և
» հետք հնաագնացութեանն մինչև ցայսօր ժա-
» մանակի լուսաշաւիղ երևմամբ 'ի վերայ երե-
» սաց ջուրցն տեսանի առ 'ի յիշատակ սրբոյն
» աքանչելեաց. և ճշմարտապէս ամենայն ուրեք
» 'ի տեսողացն սաստգիւ պատմի առանց երկբա-
» յութեան, որպէս և է ճշմարիտ. նա և թշնա-
» մեաց վկայութեամբ հաստատի հաւատեալ,
» որ զօրաւոր է յամենայնի. այլ և ստուն Աստու-
» ծոյ և տաճար 'ի տեղւոջն հաստատեալ, առ 'ի
» վկայութիւն հրաշիցն և 'ի հաւատ տեսողաց »։

Նկեղեցւոյ և սինկլերական սուրբ ժողովոյն
պատմութիւնն ամենուն ծանօթ է. յետ վճար-

ման գործոցն՝ Առիստակէս այլ գարձաւ իր աշխարհը. և ժողովոյն մէջ եկեղեցական բարեկարգութեան համար սահմանեալ կանոնաց օրինակը և հաւատոց դաւանութիւնը կամ հանգանակը բերաւ ներկայացուց իր հօրը և Տրդատայ, ոլոր պատկառանօք ընդունելով նոյնպէս այլ ընդունելի ըրին բոլոր Հայոց. Ս. Գրիգոր իր կողմանէ այլ քանի մը կանոն և վարդապետութիւն աւելցուց անոնց հետ. և անոնցմէ զատ այլ շատ կանոններ և վարդապետական ճառեր և աղօթքներ գրելով և աւանդելով իր արենակիր և հոգեկիր յաջորդին, քանի մը տարիէն ետև բոլորովին դրաժարեցաւ յաջխարհէ և'ի տեսութենէ մարդկան. և այլ չէր իշներ իր սեպհական լեռնէն՝ յայց ելնելու իր հոգէծին որդւոցը. հազիւ երբեմն կ'ընդունէր'ի տեսութիւն զՏրդատ և զՌըստակէս՝ երբ եկեղեցւոյ հարկաւոր խնդիրներ կամ տարակոյս ունենային։

Ն

Այսպէս Առիստակէս յետ տասնուհինգ կամ աւելի տարի առանձին եպիսկոպոսութեան և եպիսկոպոսութեան, յամին 331 միայնակ և բուն քահանայապետ ճանչուեցաւ Հայոց. և եօթն տարի կնցաւ սրբազան պաշտաման մէջ. ոչ պակաս այլ և « առաւել ևս քան զՀայրն վերագոյն » երևեցուցանէր սա զիւր վարդապետութիւնն » առ հարքն, և յետ նորա », որպէս վկայէ ակատեան և ականջալուրն Ագաթանգեղոս. և միւս պատմիչն [1] ասէ. « Այդարև էր սուտեր հոգևոր » ըստ ասացելումն, վասն որոյ թշնամի ամենայն » անիրաւաց և զազրագործաց երևէր »։ Իր եօթն

[1] Մովսէս Խորենացի։

ամեայ միայնակ քահանայապետութեան մէջոց Անիսակէս ջանաց իր լուսաւորիչ հօրը լոյսը աւելի ծաւալել, կարգերը հաստատել, պակասները աւելցընել, մասնաւորապէս վանքերը շատցուց. եկեղեցեաց մէջ այլ յիշուի Պոփաց գաւառին մէջ շինած մեծ և հոյակապ եկեղեցին։ Իսկ գրաւոր յիշատակ հասած չէ մեզի իրմէ. միայն կու յիշուի որ հօրն հետ կանոններ գրաւ և վարդապետութիւն եկեղեցւոյ։ Ի ներբող իմանալի և զգալի եկեղեցւոյ վայելչաբան շարական մ՚ունիմք, « Զորս ըստ պատկերի քումմ », ևն. ասոր հեղինակ կարծուող զանազան անձանց մէջ երիցագոյնն է Անիսակէս, թէ և ոչ հաւանագոյն. և ասի թէ յետ գարձին 'ի Ժողովոյն Նիկիոյ երգած ըլլայ, « Կեցս զորդի ծառայի քո » զոր 'ի Հռովմայ գահիցն վերապատուեցեր, ուր » եգին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ։

Իսկ իր վերագոյն և ասուէր հոգեւոր աներկիւղ վարդապետութեան պայծառագոյն վկայութիւն այլ է իր վարդապետութեան և կենաց կատարածն։ Հայոց հաւատալէն վեր մօտ քառասուն տարի անցեր էր. որչափ որ քրիստոնէութիւն համարձակ ծաւալեալ պաշտուէր, բարուց թուլութիւնն այլ կու սկսէր երես ելնել. մանաւանդ որ մեծն Տրդատ այլ ծերացեր, և ինքն այլ իր հոգևոր հօր Գրիգորի նման ճգնասիրութեան և առանձնութեան փափագէր. ասով թուլամիտք և թուլահաւատք սկսան համարձակութիւն առնուլ, մանաւանդ ուր օր թագաւորէն շատ հեռու էին։ Անոնցմէ էր և Արտեղաս Պոփաց նահանգին նախարարն, սահմանակից Փոքր Հայոց և Յունաց բաժնին, և ըստ ոմանց՝ ազգաւ այլ յունախառն. ասոր երկրին մէջ էր Անիսակիսի շինած մեծ եկեղեցին, ուր թերևս սովորական աթոռն այլ դրած էր. և շատ անգամ գալով և

տեսնելով նախարարին անքրիստոնեայ վարքը՝ հայրապետաբար կու խրատէր և յանդիմանէր. բայց ամպարիշտն ոչ միայն ոչ զգաստացաւ, այլ ոխալով և մախալով՝ Հերովդիսի և Հերովդիադայ խորհուրդը մտաբերեց, մեր Հշմարտաքարոզ կարապետին գլուխն առնուլ, մենասէր տատրակին մրմունջը լռեցընել. և երբ օր մը սուրբ հայրապետն քանի մը աշակերտօք առանձնաբար կու գայ՝ շատ չբանած Համբէ մը, յանկարծ ծածկուած դարանէն աւազակի պէս դուրս ցատքեց Անքեղայոս իր սպասաւորներովն, և սրով Թռուց սրբոյն աստուածախոհ և քաղցրաձայն գլուխը... Անապատէ յանապատ փչեց շունչը. 'ի միայնութենէ մարմնոյն յածային միայնութիւն միացաւ մարքուր հոգին. որ աւելի քան զ60 տարի իբրև բռնի արգելեալ էր 'ի պարկեշտ հոգեղէն բնակարանին:

Առաջինն 'ի յաջորդաց Լուսաւորչի այսպիսի վկայական մահուամբ կնքեց իր մեծ և ծանր պաշտօնը, աւելի յայտնի արեան նահատակութեամբ՝ քան իր ամեն յաջորդքը: Իսկ իր հոգեփայլ բազմակցաց մէջ, իրեն նմանագոյնն կուսութեամբ Ս. Գրիգորիս, մահուամբն այլ կերպով մը նմանակից է, չարաչար արենհեղութեան սպանմամբ. անոր եղբայրն Յուսիկ՝ ծեծով անարիւն զոհ եղաւ. Ներսէս նոյնպէս վկայ և զոհ, այլ աւելի ծածուկ, Թունով մահացեալ. Վրթանէս և Սահակ միայն բնական մահուամբ և ծերութեամբ մեռան յանկողնի, 'ի միջի սիրելեաց. իսկ պարագլուխ գուսպարիցն՝ Ս. Լուսաւորիչն, մովսիսական՝ առանձինն, հրեշտակաց առջև և Աստուծոյ:

Աշակերտք Ս. Առիստակիսի տարին անոր միշտ մահացեալ մարմինը և Թաղեցին 'ի Թիլն աւանի՝ գաւառին Լուսաւորչի, որուն սեփական ստացուած տուած էր այն աւերն Թագաւորն Տրդատ. որ 'ի հարկէ լսելով այս մեծ գոյժը, նկաւ սպա-

նելոյն եղբօր՝ Վրթանէսի հետ՝ յեռին պաշտօնը կատարելու, արտմութեամբ և սրտմտութեամբ. յորմէ զարհուրած արքակերպն Արքեղայոս մեկէն փախեր և Կիւլիկիոյ մէջ Տօրոսի դժուարակոխ լեռներու մէջ ընկեր էր։ Աւանդութիւնն յիշէ թէ և ինքն սուրբ հայրն Գրիգոր ազդմամբ հոգւոյն իմանալով՝ եկաւ լալու իր խոստովանութեան պակասորդը լեցնող վկայամահ որդին, որ և հօրը քարոզութեան պակասորդը կու լեցընէր. և թերևս հոգևոր նախանձով մը դարձաւ իր ՀՐԳՆԱՐԱՆԸ, անկէ ետև լուսաւոր տեսութեանցը մէջ նոր երևոյթ մ՝այլ ունենալով, զԱռիստակէս արիւնլուայ։

Աչխարհաշրջիկ վարդապետ մը մեզմէ երեք դար առաջ, կ՝ըսէ, թէ սուրբ Առիստակիսի կարապետանման գլուխն՝ի Քորֆու կղզին տեսեր և պատուեր է - բայց մեզ անծանօթ ըլլալով ճրբ և ինչպէս և հիմա ուր ըլլալն, փափագիմք գիւտին. և մխիթարիմք աստեղազարդ երկնից բևեռինն՝ այսած առեննիս՝ դիտել և նկատել Սայլին երկրորդ և բարձրակամար աստեղ հետ զԱՌԻՍՏԱԿԷՍ։ Եթէ ըստ մենաստէր ախորժանայն՝ գործովք և հուշակաւ այլ անծանօթագոյն մնաց այս սուրբս քան զընկերակիցսն. սակայն արդեամբք հաւատար և առաւելեալ. վասն զի գրեթէ քան զամենայն յաջորդսն (բաց՝ի Սահակայ) երկարագոյն միջոց (իբրև քառորդ մի դարու) եպիսկոպոսական և հայրապետական հոգաբարձութիւնը ընտրաւ, և Լուսաւորչի քահանայապետութեան կէս միջոցը և կէս հոգը մէկ տեղ կրեց, անոր սրբազան լուսոյն հետ մօտագոյն խառնելով իր կուսափայլ հոգւոյն ՀԵՐՄԱԿ ՀԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ, զոր և յետոյ՝ի ծիրանեգոյն ծարրելով՝ իր ջերմիկ արեամբն՝ սլացաւ յաւաջ քան զՀՅՍԻՍ և զՍԱՅԼԻՆ ամենեսին, Հայ հայրապետաց գուսպարից նախագահ ըլլալու՝ի դպրութեան յաւիտենից։

ԺԸ

ՇՈՒՇԱՆ-ՎԱՐԴԵՆԻ

Դեկտեմբերի 25 (14)[1]

Ա

Տարուոյն վերջի օրերն է. եղանակն սխուր, ժամանակն խաւարին. Թոռմեալ Թմրեալ բնութեան վրայ տարածուած համասփիւռ ձերմակէն՝ լոյս չի ծագեր, մխիթարութիւն չելներ. ձմեռն՝ միշտ ցուրտ, սառն՝ միշտ սոսկումն կ'ազդէ. իսկ այն այսահար սօսափիւնն, այն մոլեգին մրրիկն զոր կու լսես կէս գիշերուն՝ ճարճատեալ ծառոց կարկամ գրկերէն, և քարանձաւաց ըքալից բերաններէն, մարդուս՝ ինչուան ոսկորները կու սարսռեցընէ։ Այսպիսի սառն տաքուկ անկողին մը, վառած թոնրի մը անկիւն, արծարծուն կրակարանի մը եզերք, ի՞նչ քաղցր են, ոչ միայն ծուլից՝ այլ և օրն 'ի բուն աշխատող բանուորի մը, դամեստ բարեկամաց, կամ մենասէր իմաստասիրաց։ Քաղցր ըլլայ քեզի այլ, Հայկակ, յառաջ

[1] Այս հայագիր յիշատակս նշանակուի 'ի 17 քաղցր ամսոյ, որ է դեկտ. 25, բայց գործոյն հանգիպած տարին (473-5) Հայոց չարժական տօմարով քաղցրի 17ն հանդիպի 'ի 14 դեկտեմբերի։

քան մրափի մոռացութեան մէջ ընկնալէդ. քանի մը ժամ ճաթռռող խարուկին լուսովը՝ մեր հայրենեաց հին դիպուածները հնաբաններ. և այդ մեռած փայտերէն նոր կենդանութիւն հանող կրակիդ պէս՝ մարած անցքերէ և մեռած անձերէ՝ կենդանի կրքեր արթընցընել... Երանի՛ անոնց, որ թէ և աղքատիկ, թէ և ցօղունապատ խրճիթի մէջ, կամ կիսաթռչ հողէ տանեաց տակ, գեռ խոր խորշիկ մը, բուխերիկ մ՝ունին, որոյ մէջ քանի մը տաշեղով տաքութիւն և լոյս կու պահեն, և անով իրենց նմանեաց երեսը կու տեսնեն. ծխանին ծակէն արձակած ծուխն՝ նաև գիշերուան և քնոյ խորութեան մէջ, կ'իմացընէ հազիւ հանդիպող կամ մոլորած անցորդի մը՝ թէ այն մեռելատիպ հոզի քարի խառուի և ձեան տակ այլ կենդանութեան կէտ մը, ընտանութեան բոյն մը կայ.... Ո՜հ, ի՞նչ դժնդակ է այն տեղն, ուր ծըխան չի ծխեր. ի՞նչ խղճալի անձ, որ այսպիսի եղանակի և ժամանակի մէջ՝ բնութեան ամենայն սասքից և արհաւրաց մէջ, սառի և սարսուռի մէջ պատած պաշարուած բռնուած ըլլայ. ուր ոչ միայն այդ չարիքն, այլ և չարիքներէն ազատելուն ճար ու յոյս այլ չըլլան. — և մանաւանդ, մանաւանդ եթէ մէկն բռնի և անպարտ դատապարտուած ըլլայ այդպիսի, և քան զայդ աւելի զրկմանց, կրից և ցաւոց.... Հայկակ, հոս անտարբեր կալ մնալ չըլլար. այս յիշատակիս՝ ցուրտն և սարսուռն ամեն պատ ճաթեցընելով ներս կու մտնեն. կրակդ կ'անցնի, ծուխդ կու ցնդի, սիրտդ կու սոսկայ... Ելլ, ելլ խրճիթէդ, մոռցիր ձմեռ խաւար. հայրենական հոգւոյ հրեղէն վերարկուն ձգէ վրադ. թող կրակիկդ, և հասարակ գիշերուան խօլաչունչ մրրկին մէջ՝ անկէ սուր ելլ թռիր։

Սրթանք, մէկ շնչով անցնինք սառնապատ սա-

լեր ու ձորքեր. երթանք՝ ուր որ ցրտին, միայնութեան, ամայութեան, և ահեղութեան երևոյթ կայ, վիշք և կիրք կան։ Երթանք, ուր այսօրուան Հայագիր յիշատակն յափշտակէ զմեզ. մեր հայրենեաց հիւսիսագոյն սահմանները. ուր հսկայաձև երկայնաշար Կովկասու լեռնագօտեաց գիմաց՝ իբրև զուգահեռակ կամ հակապար ա. նոնց, աւելի ցած և աւելի կարճած լեռնագօտի մը կու ձգուի ընդ հարաւակողմն. զոր Հ-ա-ա-վ ա-ա կամ գուցէ լաւ ևս Հ-յ-ա-Ս-ա-ա կ'անուանէ աշխարհագիրն. և որ շատ հեղ հին Հայոց և Վրաց սահմանապարիսպն եղած է. բայց շատ հեղ այլ Հայք անցնելով այդ պարսպէդ՝ տիրած և բնակած են անոր դէպ հիւսիս տարածած գեղեցիկ ձորագաշտերուն. որոց մէջ մեծ գետոյն Կուրի հայաբուխ օժանդակներն զեռալով քաջաբոյս փորակներ և ձորակներ կու ձևացընեն։ Անոնց վրայ կ'ինչեր Լթագապատիւ նախարար մի, անուանեալ Բդէ-ա-ի Գ-գ-գ-ոյ. վասն զի այս հին և մուլթ նահապետական անուամբ. կոչուէր այդ Վրաց և Հայոց մէջ տարածուած բազմալեռ բազմաձոր բազմալիճ բազմագետ աշխարհն. որոյ և յետին գաւառքն՝ յարևելեան կողմն՝ կոչուէին Կ-ղ-ք-ք-ր. Ծ-ք-ք-ր. Զ-ր-ք-ր։ Այս երեք փոքրակաց անմիջապէս յարևմտից հիւսիսախառն կից՝ փոքրակ մ'այլ կայ, զոր շատ պատմիչ և աշխարհագիր Լթողեր են անծանօթ. այն է Ի-ղ-ի-ք-ր. և սակայն ամենեն աւելի ծանօթ ըլլալու իրաւունք ունէր այս գաւառակս. որովհետև ասոր մէջ է, իր հարաւային ծայրը և յեզր գաշտին Վրաց, ասոնց հիմկու մայրաքաղաքին՝ Տփխեաց՝ դիմաց. իբրև կիսաւուր ճամբով միայն հեռու՝ Գուգարաց բը. դեշխին մայրաքաղաքն՝ Յ-ա-ր-գ-ա-, նոյնպէս գրեթէ բոլորովին մոռացեալ. զոր միայն յիշեցընէ ձորագնաց գեսուկ մը՝ Յ-ա-ր-գ-գ-ի-ա կոչմամբ, և խառ-

նուի հարաւային հայակովկաս լեռներին իջած վտակին հետ, այն որ իր բնիկ գաւառին անունը կու պահէ (Բոզնեաց գետ), հիմա Բուլգարի կոչուելով։ Իսկ այդ բգեշխաց տիրոջ հին և շէն քաղաքն՝ հազար տարիէ վեր գիւղացեալ՝ Գոլնէ կոչի, հնագոյն անուամբ և աւանդութեամբ մը. վասն զի այդ տեղը՝ կ'ըսեն, շինած է Գոլ կամ Գոլ անուն եղբօրորդին Հայկայ. որոյ անուամբ երբեմն գետն այլ Գոլնեգետ կոչուի։ Այս շէնս կամ քաղաքս՝ Բոզնոփորի հարաւային ցածագոյն ծայրը շինած է. իսկ գաւառին բարձրագոյն լեռնաստհման ծայրը, հիմիոյ մայրաքաղաք և պղնձահատ Լէռնէր լերանց տարրոտը, Բոլորաւրեայ աղբերականց մեջ՝ ամուր և աւեր շէնք մը կայ, որ նոյնպէս Թորգոմայ առաջին թոռանցմէ շինուած կ'երևի, քան թէ ի Ճենազնեայ Ուռպելեանց, և կոչուի ինչուան հիմա ՈՒՓԸՆԹ, Թերևս յանուն Ուփար նահապետի մը կամ Ոփարը ցեղի մը. որոյ հին բնակարան և ոստան եղած կրնայ ըլլալ. և յետոյ տեղւոյն բարձրութեան և գժայլութեանն համար թողուած, բայց պահուած իբրև ամուր և անմատոյց բերդ, պատսպարան և տեղի ապաւինի գաւառին, կամ արգելարան բանտի խնամեալ պահելի անձանց։

Մեր քննութեան առեն այլ, ասկէ իբրև 1400 տարի առաջ, այս պահուած քաջուած մթին և խոժոռ կերպարանքը կ'ընծայէր Ուփբէթ. և առաւել այս եղանակիս և այս պահուս։ Գարուն, այն աստուածային երկրասփիւռ ծիծաղն, գարուն և ամառն՝ որ Բոզնեաց փորակը ծաղկազարդ բուսաբուսի վիճակ մը կու դարձընեն՝ սնոր պայծառ ալեաց մատուռակութեամբն, Ուփրենթայ բլրոյին նզելքն այլ չեն մոռնար հասարակաց երկրի պարգևին. ինչուան բանաերու պատերուն վրայ այլ կու բուսնի կու բացուի ու-

բախտութեան և անմեղութեան նշանակն, ծաղիկ մը...։ Իսկ մարդուս սրտի ծաղիկն՝ գթութիւնն, ո՜հ, գթութիւն չի բուանիր, չի բլխեր բանաւորաց կուրծքէն, որ մանէ այդ պատերէն ներս. հոն՝ ուր ոչ միայն ստոյգ արդարութեամբ դատապարտածն, այլ երբեմն (չըսեմք շատ դեղ) նաև անպարտն արգելեալ, զուրկ 'ի լուսոյ և 'ի յուսոյ աշխարհի՝ տառապի, տուժի, մեռանի։...

Այս գիշեր, Հայկակ, դու այդ նիւթական անշարժ բնութեան պարգևիկն այլ չես գտներ հոս. հոս ամեն բան չորցեր, սառեր անցեր է. և եթէ ըստ բալդիդ՝ գլխուդ վերև թափառած սև մը. բուններն պատռտելով, բանան քանի մը վայրկեան գալկահար և դողդոջուն լուսնի մը երես, ահա տեսածդ ամայի ցուրտ սառած անապատ մ'է։ Լեռք և Լեռվեր ներանց կոշտ կռնակներուն վրայ քանի մը կանաչ ըսուած մոշայք և եղևինք կան. այլ այս առհասարակ տարածեալ ձեան տակ կամ մէջ, դողդոջուն ու անփախուստ շուքերու պէս կու ծփան ծառերն. և այդ պաղ պախրցի հովուն թևևլուն տակ՝ իբրև վզէն բռնուած կենդանիք՝ սուր ու խայթող ձայներ ձիչեր կու հանեն. միայնակ ճրգ և երաժշտութիւն հիւսիսային հովպտին՝ այս եղանակիս, այս տեղւոյս։ Եթէ յանկարծ ջատուկ պառաւի մը վայելու նման սուր ձայն մ'այլ չի փրթի՝ դիմացի բերդիդ քարէ պահապանի նման բարձրացեալ աշտարակին գագաթէն. որոյ վերին պատուհանին խորշը քաշուած տափագլուխ լայներես փեսրապոնք բուիճակն՝ ասպակենման մեծակլոր աչքերը աջուձախ սահեցընելով, կորուկախ քթովը՝ ձմերական խոր հանդարտութեան մէջ անգամ անհանդարտ և անկուշտ, բանտապանին կամ բրնաւորին նման կարծես կու սրդողի ամեն օտար կենդանեաց, որ չխառվեն իր աւերակաց տերու-

թիւնը, լաթգելուն իր որսերը։ Եւ ահա, երբ լուանին Հաթոռած Ճառագայթներն այլ քաշուին, անհեգեգ բերդն, բարձրահայեաց բուրգն՝ աներևոյթ կ'ելլան, բուին վայն ու վուլն աւելի կու զօրանայ։ Արտաքինէն կրնաս գուշակել Ուփրենթայ ներքին երևոյթն այլ, պատերուն թանձրութիւնը, սրահներուն, սենեկներուն կամ խորշերուն նեղութիւնը, և տեղ տեղ բարձրէն բացած ծակերուն պզտիկութիւնը. ուսկից ոչ երբեք արտաքաց մաքուր օդ մը և պայծառ լոյս մը կ'ելնեն, այլ մրրախառն բան մը, այնչափ՝ որ կարունայ արգելական մը դեռ ընել, և հառաչանքները անկէց գուրս արձակել ինչուան ուր որ հանի. և փոխարէն՝ դրսէն ընդունել բուիճակին վայիւնը, հիւսիսին սառափիւնը, և երբեմն հեռաւոր ձորերէն լլցած ջերուն հանգարտընթաց սահանաց կարկաչանքը. — հառաչանք հովու և ջրոյ, — ի պատասխան հառաչանաց հրացեալ և հալեալ արտի բանտարկելոյն։...

Բ

Կայ արգեօք հիմակ այլ մեկ մը, այսպիսի դըժընդակ եղանակի մէջ, այսպիսի գժնդակագոյն տեղ մը արգելուած. մինչդեռ քաղաքական և կրօնական եղանակք՝ փոխանակ ընութեան՝ մխիթարեն զմարդիկ, նոր տարւոյ յուսով և Քրիստոսի Աստուծոյ ծննդեան տօնից հրաշափառութեամբ։ — Քանի մը մղոն Համբայ, ձորակ մը, ամայի գաշտակ մը, պատ մը միայն՝ տանանց անկոխ արգելք կանգներ է ընդ մէջ աշխարհի, կենակցութեան, և ընդ մէջ բանտարկելոյն. ամենայն ինչ՝ ոչ միայն տխուր, այլ և անփոփոխ է անոր չորս դին, բաց 'ի մտքէն. եթէ դեռ զօրաւոր սիրտ մը կարունայ նուաճել զարիս-

բութիւնը, և բանեցընել գլխոյն աստուածա-
տուր ազատութիւնը. այն ազատութիւնը, ո-
րուն կ'ուզէ, բայց չիկրնար արգել ըլլալ անգթա-
գոյն բռնաւորն այլ։... Բայց անցնինք այդ լուռ
և խաւար սրահներէն, խորշերէն, գազանարան-
ներէն, ուր վրանիս կու թափին ձանձախարիթի
նման սևցած սարդի ոստայններ, և պահապան-
ներէն շուտ արթնցող ճիւաղակերպ ջղթիներ՝
կաչէկծիկ թևերով՝ սատանի ձագերու պէս պա-
սէ պատ կու զարնուին. բաց յայն սենեկէն միայն,
ուր անփոյթ՝ քան անգութ՝ պահապանքն պառ-
կած, փոխանակ սնքուն հսկողութեան, խորդա-
լով կու խրտնցընեն իրենց մատնուած դիմացի
արգելականը։ Եթէ այդ մարգկային գազանաց
որպիսութիւնը նայելու ըլլաս, կ'իմանաս՝ որ հոս
շատ արգելական չկայ, բայց եղողն շատ զգուշու-
թեամբ պահուած է իբրև մնծագոյն յանցաւոր
և անազատելի մահապարտ մը։...

Սիրտ ըրէ, մտիր այդ ծակը. խարխափէ շո-
շափէ չորս գին. շատ ընդարձակ չէ, քանի մը
քայլ է. այլ դիշերուն մթուն չես կրնար բան
տեսնել. սակայն հոս թէ մթջօրէին բարկ արևուն
այլ դաս՝ շատ աւելի պիտի չտեսնես. տեսնելու
բան այլ չկայ. այդպիսի արգելականի խորշ մը՝
շատ մերկ և պարապ է։ ԽնձՀ. և ոչ անկողին մը
կայ, այլ պզտի խշտիկ մը, որուն վրայ հազիւ
նստել կարելի է և ոչ երկայնուկ պառկիլ. ո՜հ,
պառկելու Հար այլ չկայ։... Կու լսես այդ թանձր
շղթայից խշտռոցը. անշուշտ ատոնք բանտելոյն
ոտքերն կաշկանդած են. ոչ ոտքերն միայն, այլ
և այն մարդուս ազատութեան արտաքին զուգակ
գործաւորները, ձեռքերն այլ։ Այլ աւելի խըղ-
ճալի և պժգալի. մարմինն այլ արձակ չէ, գլուխն
այլ ազատ չէ. հայրուխած չան վայել անուր մը՝
վրէն անցած, ամուր կապանք պատին պնդած

է. եռապատիկ երկաթով կապկրպած, կատաղի գազանի մը կամ գազանացեալ վիրագի մը նման, երբեք անգամ արգելեալ։ — Սառոյգ է ուրեմն առաս-պնին, որ առենոք այս լերանց դիմաց՝ Կովկասու Էլպրուզայ բարձրագոյն սարերուն գլուխը կու ցուցընէր զդիւցազն Պռոմիթեա, որ երկնուց կը-բակ գողնալուն ու յերկիր բերելուն համար՝ չաս-տուածներէն դատապարտուած կապկրպած լե-րանց մերկ կողերուն վրայ ձգուած էր։ Այդպիսի պատուհասի մը արժանի սեպուած կարծուի այս հակակովկաս լերանց բանտեալն այլ։ Ի՞նչ բարկ կրակ է արդեօք ասոր գողցածն. վասն զի յիրաւի իր ձեռքերն այլ այրած, խարած, սպիացած կ'ե-րևին. նոյնպէս ոտքերն այլ, և ինչ որ մորթ կ'ե-րևի վրան. նաև երեսներն այլ, և ինչուան աչքերն այլ՝ գրեթէ աչքուրթենէ ելած. երբեմն բարկ ա-րևէ, և վերջը մթէն խանգարած ուռած ցաւած. կարկաւուն դէմքն՝ վառած դեղնած. չորս գին՝ զգուելի որդեր ճ՝ճիներ կու զեռան։ Իմացը՝ սև ու չոր գարիէ հացի կտոր մը, քովը փառչիկ մը պաղ ջրոյ. այս է իր կենաց սնունդը ամեն Աս-տուծոյ օր, որչափ այլ ապրի։ Վրայի մաշած զգեստն, եթէ զգեստ այլ կրնայ ըսուիլ, իր վի-ճակին յարմար՝ առանջելի, մազախառն հիւսուած մը. աւելի խստակրօն ճգնաւորի հագուստի նը-ման, քան սովորական մահապարտի։... Բայց ո՛վ անառանելի ծանօթութիւն... այս ամեն պրժ-գալի բաներն դեռ կու պզտիկնան, ոչինչ կ'երևին, կամ թէ կրկին կու մեծնան, կու սաստկանան լեռնանան, մինչև յերկինս կու բարձրանան, եր-բոր հաւատաս, Հայկակ, եթէ այդ չարաչար բանտարկեալ մահապարտդ՝ սովորական յանցա-ւորաց սեռէն չէ, այլ ՝ին մարդ է։...

Անշուշտ երկուքին մէկն. կամ դա՝ պատմու-թեանց մէջ չլսուած եղեռնաւոր անզգամ, գե-

զիչ սպանիչ, քաղաքայրեաց, աշխարհակործան կին մը պիտի ըլլայ. կամ առոր բանտողն այլ ա-ռելի եղեռնաւոր անզգայ գազան բռնաւոր մը։... Կին մը. ասանկ առեն, այսպիսի տեղ, այսպիսի վիճակի մէջ... Անշուշտ սիրտ չեմ ըներ, Հայ-կակ, այս պատմութիւնս քուլերուդ պատմելու. կամ սիրտ չեն ըներ անոնք լսելու և աչք մը տա-լու այսպիսի սեռակից անձի մը վրայ. քեզի ան-գամ ծանր է՝ քու մօրդ զուգակիրը՝ թէ և յան-ցաւոր և մեծայանց ըլլայ, այդ երկաթներուն մէջ կարկտուած տեսնել։ Հապա որքան աւելի զգալի, կսկծալի և սոսկալի պիտի երևի այդ պատ-կերդ, եթէ գիմացը ուրիշ պատկեր մ՝այլ ըլլար՝ աշխարհիս (չեմ ըսեր զեղծ ու շփացած, այլ և) օրինաւոր բարեկեցիկ վայելուչ փառաւոր տիկ-նոջ մը։ Պէտք է արդեօք այն պատկերն այլ փընտ-ռել։ — Այո. հոս ոչ մարդասիրութիւն և ոչ անձնահաճութիւն, այլ բարոյական հարկ և պարտք մը կայ զայն այլ տեսնելու. պէտք է վայրկեան մը բանտէն դուրս ելնենք, որ բանտին մէջինը լա-ւագոյն ճանչնանք։

Գ

Շատ հեռու չեմ տանիր զքեզ, Հայկակ. հա-զիւ ճաշաժամու մը ճամբայ. այս Բողնոյ-փորտ-կէս դուրս չէ, այլ նոյն իսկ անոր չինագլուխն, նախայիշեալն Յուրտաւ. մայրաքաղաք բդեշխին Գուգարաց։ Անշուշտ մեկէն գուշակես թէ դի-մացդ ելնելիքն պիտի ըլլայ բդեշխուհին։ Ցիրա-ւի, անկէ զատ չէ. և գիտնալու հս որ այս տեղի բդեշխուհիս, թագուհիէ շատ պակաս չէ։ Հայոց մեծ թագաւորութեան տակ քսանի չափ նախա-խարարներ կային, մեկ մեկ փոքր աշխարհներու ազատօրէն կառավարք. ասոնցմէ չորսն աւելի

շատ ազատ և գրեթէ անկախք էին. ասոնք էին Իդէլֆոն, որ երբեմն Թագաւորք այլ կ'ըսուէին. և որոց մէկն հոս Հայաստանի հիւսիսակողման սահմանակալ կամ աշխարհապահն էր՝ Գուգարաց նախարարն, որ և Վրաց Իդէլֆ կ'ըսուէր, և երբեմն բուն ազատ Վրաց Թագաւորէն աւելի զօրաւոր՝ և աւելի ընդարձակ երկիր ունէր, և ասոր վրայ այլ իշխանութիւն կու բանեցընէր՝ Հայոց Թագաւորին կողմանէ: Արդ յայտ է որ բոլոր հիւսիսային կամ կովկասային Ժողովրդոց առջև Գուգարաց բգեշին՝ մեծազօր մեծափառ իշխան և տէր մը Ճանաչուէր. խաղաղութեան առեն 18 կամ 20000 զօրաց հրամանատար էր. անոր համեմատ առատ եկամուտ այլ ունէր ներկրէն. մէկ մը անոր ընդարձակութեան և բերքերուն համար, (բաւական տափարակ և ցած դաշտեր ունենալովն, և աղէկ փայտի անտառներ, ու մանաւանդ պղնձի և ուրիշ մետաղաց հանքեր). մէկ մ'այլ Ալանաց-Դրան Ճամբուն հարուային պահակը՝ իր իշխանութեան տակն ըլլալով. որ էր սովորական Ճամբայ Հայաստանէն և արևմտեան Ասիայէն 'ի Կովկաս դնացողաց և անկէ հոս եկողաց. այս երկրեակս և մանաւանդ վաճառաց եկումուպքն՝ շատ շահաւոր էր Գուգարաց տիրոջ. Ասպիսի գրութեամբ՝ հարկ է որ իր դէմոյն այլ հիւսիսային տիկնայց մէջ Թագուհայլ և մեծափառ նազէր. Եւ եթէ ուրիշ դըշխոյք միայն այսպիսի բարձր գահու մը վրայ ըլլալովն այլ կրնային փայլել, հիմակուան թագուհուհին իրմէ առաջիններէն անուանի, աւելի բարձրագոյն պէսք է փայլեր իր անձնական ձրիքը. որով կայսերաց գահոյքն անգամ կրնար պայծառացընել. վասն զի էր նա Թոռնադստարիկ մեծի Պարթևին և տուրբ քահանայապետին Սահակայ, դուստր Մեծին Վրդանայ ՎԱՐԴՈՒՀԻ-

ՇՈՒՇԱՆ. այս երկու պարագլուխ ծաղկանց ա-
նուամբ և անոնց չնորհօքը ծանօթացեալ և հրա-
չակեալ, 'ի հօրէն Վարդանայ կամ Վարդանի կամ
Վարդենի կոչեալ. և 'ի սիրոյ գգուանաց՝ իր մա-
քուր և պայծառ տեսլեանն համար Շուշանիկ կո-
չուած, որ և իրր սեփականագոյն անուն մնաց
վրան։ Շուշանկան չուքն և չնորհքն՝ չէր այնքան՝
հարստութիւն, Մնծին Վարդանայ Սամիկոնեից
տեառն անուանակիր զաւակ և ժառանգ ըլլալն,
կամ Իուգարաց բդեշխի դշխոյ ըլլալն. և ոչ այն-
քան մարմնափայլ գեղեցկութիւնն, ոչ իսկ պար-
թևական և մամիկոնեան արեան ազնիւ սերունդն,
որքան 'ի հօրմէն, մամէն (Սահակադիսաց) և 'ի
մեծ պապէն առած դասաիարակութիւնն, իմաս-
տութիւնն, բարեպաշտութիւնն. միով բանիւ,
չնորհքն և օրհնութիւնն՝ որովք արդարև աշխար-
հիս մէջ մեծ անուն և զարմանք թողլով՝ արիա-
կան, գիւցային, աստուածանշոյլ կանանց մէկն
ճանչցուեցաւ. և հարկ էր որ իր երկրաւոր տիկ-
նութեան օրերուն այլ փայլէր և ըլլար աստղ և
պսակ հիւսիսոյ։ Իրկանը՝ Վասգէն բդեշխի՝ ներ-
կայ չեղած ատեն, տիրաբար կ'իշխէր և հրաման՝
սայր աշխարհին, տանը մէջ՝ գերազոյն ազնիւ մայր
մ'էր. հասարակաց բարերար և դայեակ. եկե-
ղեցւոյ բարեզարդիչ փայլեցուցիչ, արժանաւոր
Ս. Սահակէն ժառանգած բարեպաշտութեան,
հոգեսիրութեան և հայրենասիրութեանն. որով
կարգաւորեց և մատուց Ցուրբատաւայ եկեղեցւոյն
մէջ հայերէն ժամակարգութիւն, զատ 'ի վրա-
ցւոյն. (վասն զի Վրացիք այլ շատ կային հոն,
Թերևս աւելի քան զՀայս, երկար ատեն Վրաց
իշխանութեան տակ ըլլալով երկիրն. անոր հա-
մար երկու լեզուով այլ կատարել կու տայր պաշ-
տօնը). և Եպիսկոպոսք հրամանը սիրով ընդու-
նելով՝ հարիւրաւոր տարի նոքն այլ՝ իրրև աւան.

գուԹիւն և պատուէր մեծ գշխոյին՝ անփոփոխ պահէին այս կարգը։

Ահա այսպիսի է բգեշխուհին՝ զոր կ'երԹամբ տեսնելու 'ի Յուրտաւ. և 'ի հարկէ այսպիսի ձրից և արժանեաց քով՝ շատ ծաղրելի և անգասնելի պիտի ըլլայ՝ անոր վսեմափայլ կերպարանացը հիանալ, կամ տիկնուԹեան ԹագնուշՁարը, ոսկին, բեհեզն, ծիրանին, գոհար ակունք և մարգարիտները գիտել. բաւական ըլլայ առանց մանր քննելու և համրելու՝ հարևանցի մ'այլ տեսնել զինքը դշխոյական դարպասին մէջ՝ հանդիսական հագուստովը, և բնական նարմանազուկ շարժուածքովը. կարծես՝ ընորհք, հեզուԹիւն և վսեմուԹիւն իրար խառնած՝ զինքը զանգեր ու զարդարեր են. և այդ ամենայն փառքերէ վեր ելնելու կու շարժէ մանտրուքայլ ոտքերը, որպէս ԹԷ իր բուն գահոյքն՝ աստեղաց կամ արևու մօտ խորանի մէջ կանգնած ըլլայ։...

Հիմա կրնամք, Հայկակ, այս Գուգարաց բգեշխուհին, իր տիկնաբար կոխած շեմէն շարժել ու փոխագրել վայրկեան մը Ուփրեթայ զնդանին մէջ. և հասկընալ՝ ԹԷ ինչ է վեհ վսեմ գեղեցիկ բարեկիրթ բարեպաշտ զուարակամայր կին մը, և ինչ է այդ մեր նախ տեսած, երկերկաԹեան կապած, մաշած մարած պառաւն. որոյ՝ կին անգամ ըսել դժար կու գայ։ Թերևս պարտիզափայլ շուշանին և ձմեռը անաանց խար արուած ջոր ծաղկին մէջ՝ այնքան անմանուԹիւն չըլլայ, որքան այս երկու կերպարանաց մէջ. անմօտենալի վիհ մը կ'երևի մէջերնին։... Եւ սակայն. — սակայն, ինչ չեկրնար ընել մարդուս հոգին. այն մեծ և անմահ զօրուԹիւնն, որ բարուԹեամբ կրնայ բարձրանալ մինչև յԱստուած, և չարին հետևելով՝ ինչուան սատանայի գործակից ըլլալ։ Այս երկու հակառակ կերպով՝ հոս այլ մեզի

անման անմոռանալի անկարծելի երևցածն՝ կբ-
նայ ըլլալ. և ոլորձն եղած է, և մեր ուզածէն և
չուզածէն աւելին այլ։ — Ուփրլեթայ շղթայեալ
վշտակիրն՝ և Գուգարաց շնորհաշուք դշխոյն՝ Շու-
շանիկ, անբաժանելի մի և նոյն անձն է...։ Մե-
ծին Վարդանայ մեկնատիպ գուսանն, Վազգենի
կինն, Վրաց բդեշխուհին, աննման Շուշանիկն
այն է՝ որ վեց տարիէ վեր այս ահեղ և գժնգակ
տեղւոյս և շղթայից մէջ գտատապարտուած է՝ ի
տանջանս և՝ ի մահ։...

Դ

Ո՛վ ափշութիւն, ո՛վ սոսկումն, ի՞նչ փոփո-
խութիւն, տէր Աստուած։ Եւ ի՞նչպէս. ինչո՞ւ։
— Արդեօք այդ մեծաշնորհ կինն՝ իր
և հասարակաց նախամօրը պէս խաբուելով, աս-
տուածային պատուիրանին անհնազանդ՝ վրդն-
տուեցաւ իր դրախտանման գարպասէն. թէ որ.
դեօք երկնային զօրութեանց պարագլուխ արու-
սեկին պէս հպարտացեալ՝ ուզեց Բարձրելոյն ա-
թոռն ելնել, և զարնուելով անոր կայծակէն՝ գլո-
ռեցաւ ընկաւ՝ ի խաւար և յօտարութիւն։...
Թէպէտ և անհուն կ'երևի կերպարանաց փոփո-
խութիւնն, սակայն այդ մաշած գիմաց վրայ ամ-
բարտաւանութեան և մեղաց հետք չեն երևիր.
շատ հեռի են չարութեան շուքերն անգամ՝ այն
հեզութիւն և առաքինի տրտմութեամբ խորացեալ
խորշոմեալ երեսներէն. — նուազեալ և ցամա-
քեալ աչքերէն՝ գեռ գթութիւն և ողորմութիւն
կու կաթէ. — խարշած շրթանց մէջ գեռ շնորհք
կու ժպտին լռիկ. — անթագ անպսակ Ճաղատ
Հակոբն վրայ դեռ անարուեստ զօրութեամբ մը
գրուած կ'երևի՝ թէ սա դշխոյ է արժանափառ։
Նեղ բանտին մէջի մեկ հատիկ գործարանն՝ ոչ-

Բանաց մը, անոր վրայ երկու գրքոյկք՝ աղօթամատոյց մը և Ս. Սահակայ ասատուածաշնչաբան մատներով գրուած աւետարանիկ մը, և այս երկուքին մէջ կանգնած խաչափայտ մը՝ կու վկայեն, թէ ասատուածարեալ հոգի մը կայ այդ պատերէն աւելի՝ մարմնով բանտուած՝ անձին մէջ. որուն հանդարտութիւնն, սենեկին խաղաղութիւնն, և գրեթէ որդանց մէջ անգամ զգալի անուշահոտութիւն մը, շատ համարձակ կու վկայեն, թէ գոչ միայն իր անուան շնորհն պահած է, այլ և առաւելած. անպարտ է այդ գտատապարտեալց, անարատ է տառապեալց, սուրբ է Ուփրեթայ բանտարկեալն, հրեշտակաշնորհ է ՇՈՒՇԱՆԻԿ, և անօրինակ երևոյթ մ՝է մեր տեսածն հոս։...

Ո՞վ է ուրեմն պարտաւորն. ո՞վ այն այլանգամ յանցաւորն, այն ապատաժ բռնաւորն, այն մարդապազանն՝ որ յայս վիճակ հասուց զսա։ — Վազգէ՛ն. — Վրաց բդեշին, նոյն խակ կենակիցն, ամուսինն Շուշանիկան։... Անշուշտ կամ՝ խելագար կամ դիւահար պիտի ըլլայ՝ որ այդ գործդ ըրեր է, կամ գժոխական առեղծութեամբ մը մխուած՝ որ զմարդ մոլորցընէ չար քան զեղեռ ու զդեռ։

Ափսո՜ Շուշանիկան. երջանիկ ժամանակ մը ծնաւ, իր հօր Վարդանայ ամենայն փառաց մէջ և հօրապապուն Սահակայ ճծպեռական գահակալութեան առեն. սակայն թշուառ գարու գըշխոյ եղաւ։ Հասակին վիճակին ամենէն պայծառ միջոցին, Հայոց բաղդին փառափայլ արևն խաւարեցաւ, վերցաւ թագաւորութիւն ցեղին Տրդատայ և քահանայապետութիւն Ս. Գրիգորի. Հայաստան տակն ու վրայ եղաւ, Պարսք ջանալով զՀայս կրակապաշտ ընել՝ երկայն տարիներէ վեր լուած հալածանքը նորէն բորբոքեցին. Հայք բանիւ և փառաբեր չկարենալով համոզել զամպարիշան Յազկերտ՝ աշխարհօրէն պատերազմաւ ու-

զեցին գէմ կենալ զինուց բռնութեան. մեջերնին երկպառակութիւն ընկաւ, կէսն կաչառուած 'ի Պարսից և մոգութեան հաւանած՝ արգելք եղան յաջողութեան պատերազմին և ազատութեան. Վարդան՝ հայրն Շուշանիկան գլուխ հայրենեաց ուխտապահ մասին՝ ընկաւ փառաք և սրբութեամբ մեծ Ճակատամարտին մէջ. իրեն հոգւոյն և զօրութեան յաջորդ մը չգտնուեցաւ շուտով։ Իշխանաց և ցեղապետաց ոմանք փախստեամբ և թաքստեամբ ծածկուեցան. ոմանք զէնքով պաշտպանել ջանային իրենց ամրոցները. շատոնք այլ 'ի Պարսից ձեռքն ընկած խաբէութեամբ՝ բռնեցան յօտարութեան. և ոչ սակաւք՝ գժբաղդարար՝ սիրելով զփառս և զվայելս աշխարհի՝ քան զհանդերձեալ յոյսն, հաւանեցան կամայ կամ ակամայ մոգուցն և կրակապաշտից. և քրիստոնէութեան փոխանակ՝ արևու և մուխրի պաշտօնը յանձն առին։ Որոցմէ այլ աւելի զզուելով ուխտապահքն, ոչ միայն արք այլև կանայք, փափկասուն տիկնայք, իբրև նորէն ինքուելով 'ի Քրիստոս՝ հաստատեցին ուխտ դրին մինչև խպատ համբերել, նեղիլ, տառապիլ և շուրանալ զտուրբ հաւատս Յիսուսի, չմարել Լուսաւորչին ջահը՝ պիղծ մոխրախայծ խանձողաց դիմաց։

Այս եղբի երկու դասուց մէկմէկ պարագլուխ կրնան սեպուիլ Գուգարաց բդեշխն և իր դշխոյն. Վազգէն վասականման ուրացողաց, աւերողաց, հայրենատեաց, քրիստոսատեաց անարի արանց. Շուշանիկ՝ Եամունեայ նման մեծահաւատ մեծահոգի հայրենասէր աստուածասէր այրասիրտ կանանց. որք « Մուռացան զկնացի ուկարութիւն, » և եղեն արուք առաքինիք 'ի հոգևոր պատերազ- » մին... ոչ միայն յոգիսն մեխիթարեալ կային առ » աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, » այլ և մարմնոյ ենգութեամբք առաւել ևս բար-

» ձին զրեան ծանրութեան... Ոչ ինչ յիշեցին
» ամենեին զանուն փափկութեան մայրենի ազա-
» ուութեանն, այլ իրրև մարդիկ՝ որ վշտամբերք
» լեալ ի ցեն անդատին 'ի շինական սովորութենցն
» ատանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրա-
» գոյնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերու-
» թիւն վշտաց։... Անարիւն ճգուանց նմանեցին,
» որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրա-
» նաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով,
» զանմարմնոցն բերեն զնմանութիւն [1] »։

Այսպիսիք էին այն ժամանակի ուխտապահքն Տիեզերական Հայոց ազգին, որպէս ակա-նատես սուրբ պատմիչն նկարագրէ։ Այլ ինչ արգեօք պիտի ըսէիր. ինչ մեղրեղէն թէ հրեղէն գրչով պիտի գրէիր, ո՛վ անուշակդ Եղիշէ, եթէ լսէիր, եթէ տեսնէիր՝ այդ տիկնաց տիկինը, այն քո և մեր գիւղացին՝ Վարդանայ՝ Վարդենի գըստ-րիկը Շուշանը, այսպէս քան զամէն կին և այր՝ այդ հալածանաց պարագային մէջ՝ սաստկապէս տանջեալ և հրաշափառապէս հանգիստացեալ։

Ե

Եթէ կանացի մարմին մը քան զայդ աւելի կըրուկ տանջանքներ կրած է, գուցէ աւելի երկար տաեն չէ կրած. թերևս ոչ ոք այլ աւելի և պէտ-պէս զրկանք և սրտակոուր կիրք ազեաց գթոյ և հոգւոյ վշտաց։ Անշուշտ այդ սեռին վերհագոյն մեծուհեաց առաջին գասէն է Շուշանիկ. երբ նկատենք զնա յետ սրբութեամբ տիկնութեան կենաց՝ ուրացողի մը կին գտուած, թերևս և մայր ուրացող որդւոց։ Այս բանս իրեն հազար մահէ գառնագոյն էր. և բովանդակ այն միջոց ժամա-

1 Եղիշէ։

նակն՝ յոր անարժան գժնիկ այրիկն՝ Վազգէն՝ 'ի գուռն Պարսից էր գացեր, կու հոգար կու հալէր կասկածելով անոր ընելիք չարէն. թէ անոր՝ և թէ իր զաւակաց (իրեք մանչ և մէկ գաւեր) հոգւոյն վտանգը մտածելով։ Անոր համար երբ մէկն իրեն աւետիս տուաւ, թէ տէրդ գարձեր 'ի Պարսից՝ ոչ առողջ կու հասնի իր աթոռը, առաջին հարցմունքն եղաւ, թէ հոգին ինչպէս է, ոչ է... Դժուարասելի, և աւելի դժուարալուր պատասխան. աւաղ. Վազգէն հիւանդ, օրհասական, մեռած է հոգւով. զի « Ի գուռն արքունի երթեալ՝ » ասրայա զքրիստոնէութիւն, և եղեալ ընդ պարսկական օրինաւքն՝ 'ի ՅՈՄայ և ոչ 'ի հարկէ և 'ի բրնունութենէ... վասն լկսի և անառակ վարուցն... » երկիր պագանէր կրակի, և ուխտեր ընդ սատանայի. և խնդրէր կին պարսիկ 'ի Թագաւորէն. և (նա) հաւատայր նմա, և տայր զնոչ » իւրոյ մայր նմա 'ի կնութիւն. և յանձն առնէր » զկինն առաջին (զՇուշանիկ) և զորդիսն՝ գարձուցանել 'ի մոգութիւն օրէնս »[1]։ Այս կայծակնաշաւ գոյժն երբ իջաւ յականջ Շուշանիկ, գլորեցաւ ընկաւ գետին. և երբ խելք ու շունչ իրեն գարձաւ, վայով և լալով քիչ մը տիրոջ ալնգելով ժողովեց զաւակները, շտապելով տարաւ յեկեղեցին, ընկաւ տուրբ սեղանոյն դիմաց, զարկաւ ճակատ 'ի գետին. երբեմն հառաչանաք և երբեմն լռութեամբ՝ անորդի Աննայից պէս գետնամած մնաց, միայն Աստուծոյ բողոքելով, և միայն Աստուծով կրնալով գիմանալ։ Եկեղեցւոյ պաշտօնեայք ցաւով և ահով կու նայէին, և աւելի եռանդեամբ իրենց բոլոր օրուան պաշտօնները կատարեցին. Շուշանիկ գետ տեղէն չէր շարժած. երեկոյն հասաւ, Աստուծոյ տաճարն

[1] Վարք Շուշանիկ։

այլ պիտի փակուէր. Շուշանիկ ելաւ սուրբ յա-
տակէն, բայց չդարձաւ իր տպարանքը, այլ ե-
կեղեցւոյ քով ունակ մը քաշուելով, հոն բոլոր
գիշերն այլ Աստուծոյ կու գանգատէր։ Իր դրան
քահանայն վերջապէս համարձակելով քիչ մը
միխիթարութիւն տուաւ, և ուրիշներէն այլ սաք-
պելով՝ քիչ մը կերակուր առաւ. և դարձեալ
գիշերուան մնացած մասը կեցաւ յաղօթք։ Այդ-
պիսի սրտի հարուածոց՝ չկայ քան զայս (աղօթք)
յարմարագոյն և զօրագոյն ճար ու ճարակ։ Ներ-
կրորդ առաւօտեան պաշտօնն այլ կատարելով
յեկեղեցին, դարձեալ սկսաւ դրան քահանային
ողբալ իր զուակաց վասնզը. արդէն իր մեկ հա-
տիկ աղջիկն չափահաս ըլլալով, հարկաւ քիչ օ-
րէն մոխրապաշտ զանդկի մը հարս պիտի երթար.
մանչերն այլ ժամանակաւ անպարկեշտ պարսու-
հեաց փեսայանային։

Ուրիշ մխիթարանք չգտնելով առաքինօրէն
կանչեց. «Հատա՛ւ սպառեցաւ ամենայն յոյս յեր-
» կրէ և 'ի մարդկանէ. բայց (ես) ակն կալայ
» Աստուծոյ ամենակալի՝ որ փրկէ զիս. և տայցէ՛
» ինձ թևս որպէս աղաւնոյ զի թռուցեալ 'թևօք
» Հոգւոյն սրբոյ շնորհօք հասանել և դադարել
» յանապատի, ընդունել զօրութիւն 'ի վերին
» խնամոցն, սթափիլ փոքր ինչ 'ի մրրկեալ սրտ-
» նեղութենէս և 'ի վհատութենէս... Եւ ես պատ-
» րաստ եմ տալ զանձն քանի՝ և կապանաց և
» ամենայն կատանաց, որով նեղէ զիս ուրացողն.
» զի Աստուծով կեցից, և մեռայց վասն անուան
» նորա, և ոչ թողից զաւանդութիւն հարցն ի-
» մոց՝ լուսաւորչացն Հայոց»։... Այն յԱստու-
ծոյ խնդրած աղաւնոյ թևերն ինչան հասան հո-
գւոյն, և ինչուան Ուփրեթայ բանան այլ հասու-
ցին, թեթևութեամբ և ուրախութեամբ սրտին.
որով նախ ելաւ կանգնեցաւ իբրև մեծ թագուհի

մը՝ որ Թագաւորի մը չկրցած յաղթութիւնը ը-
րած ըլլայ։

Այսպէս վանմութեամբ և վատահութեամբ նը-
ստած էր, երբ Վազգէնի կողմանէ նուիրակք հ-
կան, արքունեաց եպիսկոպոսն Յովհան և թգեշ-
խին եղբայրն՝ մեծ իշխանն Զոչիկ։ Պահ մը սպ-
պանձեցան, կապուեցան, սկսան լալ. և հազիւ
կրցան կըմկըմալով և ամաչելով թգեշխին հրա-
ւէրքը տալ, որ կու կանչէր տիկինը, բայց կ'իմա-
ցընէր այլ որ կ'ուզէ իրեն պէս քրիստոսուրաց
տիկին։ Այն առեն մեծն և մեծաց գուսարն և
Թոռնեայն՝ Վարդանայ և Սահակայ, տիրական
բերանը բանալով սասուոց եպիսկոպոսին. Ան-
վայել ասելանիդ՝ այսպիսի պատգամաբերու-
թիւն, ըսաւ. դու Ճշմարտութեան քարոզ. «Դու
«զայդ հրամայես. միաբանել ընդ առն ամբարշտի
» և ուրացողի զԱստուած. և այսպիսեացս լինիս
» Թելադիր և մատխաք։ Աւաղ իմոյ Թշուառու-
» Թեանս, որ և յորդորիչ ինձ ոչ գտաւ »։

Եպիսկոպոսն պատկառեալ և սրտապնդեալ՝
պատասխանեց. Ճշմարիտ է ըսածդ, բայց եթէ
դու անշարժ մնաս՝ Վազգէն ոչ զքեզ միայն, այլ
և բոլոր իր իշխանութեան քրիստոնեաները պիտի
հալածէ, եկեղեցիները քակէ, բագին կանգնէ.
մինչդեռ հիմա կու խոստանայ մեզի՝ ամենեին
չդպչիլ անոնց, և ոչ զոք սպիպել, եթէ դու հա-
ւանիս երթալու իրեն։ Ես և տոգրդ, Զոչիկ, ե-
կեր եմք՝ ոչ յուրացութիւն հրաւիրելու զքեզ,
այլ յորդորելու գալ երևիլ թգեշխին, բան մը ը-
սել. վասն զի եթէ յետ Աստուծոյ կայ մեկին՝ որ
կարենայ անոր միտքը փոխել և սիրտը շարժել՝
դու ես, տիկին մեր։ — «Վազգէնի սրտին սիրել
» ու շարժել՝ միայն Աստուծոյ կարելի է, ըսաւ.
» Շուշան. բայց թէ իմ երթալս հարկաւոր կ'երևի
» ձեզի, այնա կ'երթամ, բայց 'ի տառապանս և

» 'ի չարչարանս ։ Ըսաւ և արիաբար գարշաւ յապարանքը. սակայն չմոռաւ իր տիկնուհեան փառաշարդ սենեկաց մէջ. այլ առանձին անակի պէս զատուած կողմ մը քաշուեցաւ, և երեք օր անքուն անկերակուր, լալու և աղօթքի կեցաւ։

Երրորդ իրիկունն Վազգէն պատրաստել տուաւ մեծահաց ընթրեաց սաճարը. ջահերն վառեցան, ամենքն իրենց բազմականը բռնեցին, միայն Շուշան դշխոյին գահոյքը պարապ էր. բդեշխն խաւրեց զՋոջիկ որ բռնադատէ բերէ զբդեշխուհին. յետ երկար աղաչանաց հազիւ հաւանեցաւ Շուշան. իբրև նոր Ցուդիթ մը, այլ Ցիսուսի հեզութեամբն և մեծագոյն վսեմութեամբ զինուած՝ երթալու նոր Հոլոփեռնայ ընթրիքը. ջնարեց անոր պէս իր պերճագոյն զարդերը, և ոչ իսկ ա. նոնցմէ շատ փայլուն բնական գեղեցկութիւնը ե. րևցընել ուզեց. այլ չափաւոր ձևով մը պարաբ. կած, միայն ծածուկ զարդ մը, չքնաղ լանջապ. նակ մը, անգին կնիք մը դրաւ ծոցը, որ էր իր սուրբ հօրպապուն ձեռագիր աւետարանին, և այնպէս մտաւ 'ի սաճարն։.. Սխրացան սարսեցան պահ մը ամեն սեսողք չուզելով անգամ, մինչև ջանացին իրենք զիրենք զսպել, և խոզքով ու կնրակրով այլայլութիւններն ծածկել. իսկ Շուշան՝ իբրև երկնաճաշակ յաւերժահարան, իր բարձր գահոյից վրայ բազմած, անխօս և անկերակուր կեցաւ, և ոչ իսկ Ցուդիթայ պէս իր նաժրշտաց մախաղէն փոխինդ մը ծամելով. այլ իբրև զՍաթեր լուռ լեզուաւ և մեծարարրատ երևաներ. ով՝ երբեմն կու մարէր երբեմն կու վառէր, աւելի ակնախոհիլ քան զաւենային ջահափայլութիւն սաճարին։ — Նոր սեսակ անմոռան ընթրիք մ'եղաւ այն օր. Վազգէն սրտէն վագրի պէս կու մռնչէր, ինք զինք կ'ուտէր և չէր կրնար ճիկ հանել. Շուշան իր դշխոյն՝ գիմացն բազմած՝ լու.

թեամբ անգագար յանդիմանութեան սեղաս-
րաւի մը կու թափէր անոր և համախոհից վրայ.
մինչև փուլացան ընթրիքը չերկընցնել ելնել, և
ամենքը իրենց սեղը քաշուեցան։ Նոյնպէս ըրաւ
և Շուշանիկ։

Զ

Իսկ քաջն Վազգէն՝ այն կըլլած թունահամ
պատառները չմարսած, շրթունքը խածնելով,
և թողլով իր Պարսկաստանէն բերած շամբուշ
բամբշիկն այլ, կու փնտռէր զՇուշան՝ անոր սրբա-
կատանաց մէջ. ոչ իբրև այն օրերը՝ որ իր բարե-
յիշատակ հայրն Աշուշա բգնչի՝ մեերիմ բարե-
կամն Վարդանայ՝ փեսայացոյց զինքը Թագաւո-
րական փառաց Մամիկոնէից օրիորդին. և ոչ իբ-
րև փքացեալ հակայ մը՝ արեգնափայլ առագաստ
մտնելով, այլ իբրև լախտաւոր անճոռնի Հերա-
կլէս, կամ կոպիտ դրաստավոր մը, հատ բրով
մը հանդիպեցաւ հրեշտակափայլ հարսին, երբ
ծառայից ձեռքով՝ դառնել և բանի բերել առաւ
զնա. և փոխանակ տարաշխարհիկ պարգևաց, փո-
խանակ պարսկային ծոցէն բերած բատոյ և մար-
գարտոյ. անհնարին ծնծուփնա Թափեց վրան,
անիծոյ և անխիր. քարշանք մազերու և պար-
կեշտ զգեստուցն, բռնցի ոգացի հարուածք...
(ամօթ, զզուանք մարդկութեան). մինչև յետին
ծառայքն անգամ զգնելով և ցաւելով՝ վազեցին
առ Զոջիկ, որ փուլացաւ եկաւ ջանաց գոցել
այդ խայտառակ տեսարանը, ազատել զանմեղ
ազատին դատան վարուժանին ձեռքէն։ Բայց
ձար չեղաւ. գազանացեալ մարդն՝ իր եզբայրն
այլ սկսաւ ոգացել քշել, և իբրև փայտահար
յանտառի կ'իջեցընէր հարուածները իր ոտքը ընկ-
ած անձին վրայ, հայհոյելով զնա և անոր հայ-

րը, գՀաւատքն այլ, զԱստուած այլ. մինչև ինքն յօգնելով և չուզելով մեկ հարուածով մ՚այլ ձեռքին տակ սպաննել իր առաջին կենակիցը, հրամայեց որ քարշեն տանին ձգեն ուսկից որ բերին։

Երկրորդ առուն ինքնին գնաց հոն, տեսնելու իր երեկուան թաղած կարկուտին արդասիքը։ — Շնորհագեղն Շուշան ջախջախեալ էր, կզակները կոտրատած, աչուքները արիւնալից. այլ ոչ բոլորովին մինչաբեկ. դեռ ողջ էր։ Հրամեց Վազգէն որ հոն պահեն զնա զգուշութեամբ, և չմոռնան որ քովը մարդ երթայ. ուրիշ բան այլ չտան իրեն՝ բայց միայն գարէհաց և ջուր, ինչուան որ մեռնի։... Իրմէ վերջը եկաւ հաւատարիմ դրաներէցն, իր աստուածահրաման պարտքն ընելու, չվախելով բռնաւորէն, ուսկից պահապանքն անգամ գանելով՝ թող տուին քահանային. որ երբ մտաւ և այնպէս արիւնլուայ գետին փռուած տրորած տեսաւ տիկինը, պաշտօնը մոռացաւ, սկսաւ տղու պէս լալ. մինչև ինքն քաջասիրտ խոստովանողն Քրիստոսի սկսաւ՝ փոխանակ ընդունելու՝ տալ մխիթարութիւն. «Մի » լար, ասէր, 'ի վերայ իմ. զի առանց հանդիսի և » չարչարանաց՝ ոչ արդարանայ առաջի Աստու- » ծոյ ամենայն մարդ. և ոչ շնորհք փրկչին՝ լքա- » նէ թողու զոք առանց ողորմութեան որք յու- » սանն 'ի նա»։ Ապա քահանայն այլ զնա մխիթարելով՝ ողաչեց որ քիչ մը ուտելու բան առնու. Շուշանիկ հազիւ կրցաւ բերանը բան դնել. այնչափ ուժէ ընկած էր։

Քանի մը ամիս այսպէս անցաւ. վասն զի Վազգէն քաղաքէն հեռացեր էր. ուր նորէն գարձաւ աՀապարանոք, լսելով որ երկրին վրայ թշնամի կու գայ. ապահովութեան համար տղոքը Վրաստանի կամ Կովկասու ամուր կողմերը ղրկելու. զնց. Կուր գետէն անցնելու ատեն տղոց մէկն դի-

պուսածով կամ գաւառանութեամբ ընկաւ կո-
բաւ, և մեծ սուգ պատճառեց բոլոր երկրին.
միայն Շուշան էր՝ որ մոր պէս ցաւեցաւ, այլ
քրիստոնէի պէս ուրախացաւ՝ որ ազգին ժամա-
նակաւոր մահուամբ յաւիտենական մահուանէ
ազատեցաւ, սուրբ հուսաքը չուրացած մեռաւ։
Իսկ հայրն Վազգէն հեթանոսօրէն անյուսաբար
կ'ողբար չարաչար. մինչև իր իշխաններէն զատ՝
Վրաց Թագաւորն և Պարսից կողմանէ գրուած
մարզպանն այլ եկան զինքը մխիթարելու։ Իսկ
անզգամն խորամանկութիւն բանեցընելով՝ այն
առեն հեռացուց զՇուշան'ի պալատէն, և հրամ-
մեց որ երթայ եպիսկոպոսին ապարանքը՝ եկեղ-
ցւոյն մօտ։ Մեծ ուրախութիւն և բաղդ սեպեց
զայս Շուշանիկ, և արդէն երկընէն ազատած սե-
պելով զինքը՝ իր աշխարհաձև զգեստն այլ փո-
խեց հոն, և հաւատաւորի խոշոր զգեստն հագաւ
և օրհնեցաւ. կրկին նուիրական կենաց մեծ զուար-
թութեամբ անդադար աղօթից և բարեգործու-
թեան կու հետևէր, ամենայն տեսողաց սիրելի և
զարմանալի և գրեթէ պաշտելի ըլլալով։ Այս
լուրս կրկին բորբոքեց Վազգէնի սիրտը դիւա-
շունչ կատաղութեամբ. և երբ մեծամեծ հիւրերն
քովէն գացին՝ յետ կանչեց զՇուշան, և պատուէր
խաւրեց՝ որ թողու այդ ձևը և կերպը, և դառնայ
գայ հնազանդի իրեն ու տիկնութիւնը վայելէ։
Իսկ մեծահոգի նահատակն բացէ՛ի բաց մերժեց
ամպարշտին հրաւէրքը. և այսուհետև մեր մէջ
կապ չկայ ըսաւ, վասն զի դու թողեր զՔրիստոս,
իսկ ես այլ աւելի կապուեցայ անոր հետ։ Այս
պատգամին հետ զրկեց դարձուց Վազգէնի իր
տիկնութեան նշանները, զարդերը, և ինչ որ ան-
կէ ունեցեր էր. և գիտնալով անոր կասկիզը՝
պատգամը վերջացուց ըսել տալով. թէ ինչ որ
կ'ուզես ըրէ, «Ես պատրաստ եմ մեռանել. քան

» Լեռ անցանել զաւանդութեամբն հարցն իմոց »։

Այս արդար նախատանաց այլ չհամբերելով անարդար մարդակերքն, գարձեալ իր դիւցազնական լախտն ու բիրն առած՝ բազմութեամբ ծառայիցն վազեց խենթի պէս...։ Երկինք կայծակները բռնեցին, երբ առանց սարսափելու մըտաւ յեկեղեցին, լսելով որ հոն է Շուշան և անկից չիհեռանար. չպատկառելով ոչ յԱստուծոյ և ոչ 'ի մարդկանէ՝ սկսաւ սրբազան սաճարին մէջ այլ ծեծուփեա քաշել աղօթող սիկնոջը. սոսկացան գանեցան տեսողք, գոյն առին գոյն տուին, բայց չհամարձակեցան բան մ'ընել. միայն Աստուծոյ պաշտօնեայն, քահանայ մը՝ համարձակեցաւ յանդիմանելու. Ի՞նչ սրտով, ի՞նչ իրաւամբ, ըսաւ, այդպէս չարաչար կու տանիս սիկինը։ Անօրէն մոլին վերուց բիրը՝ իջուց սատակիկ կոփ մը քահանային վրայ այլ...։ Երկինք դարձեալ համբերեցին.. իսկ ժողովուրդն այս երկու սրբապիղծ յանդգնութիւնները տեսնելով, սկսաւ լալ և յերկին բողոքել. Վազգէն՝ անմեղ գառանց փարախի մէջ սոված գայլոյ պէս ընկած, որու որ պատահէր՝ զարնելով հրելով, փութացաւ իր ծառայից օգնութեամբ քարշել զՇուշան. հանել յեկեղեցւոյն, և նոյնպէս գեռնաքարշ ընդ քար և ընդ տիղմ զգեստաբզիկ արիւնլուայ ձգել յատարանքը. ուր մեռցած ուժն այլ թափեց խեղճին վրայ՝ ծեծելով և զգեստները պատռելով առաջինէն աւելի. և այնպէս կիսամեռ թողուց. Զոյնիկ այլ հոն չէր որ ջանար ազատել հարսը։

Ցեռ քանի մ'անգամ այսպիսի պժգալի հանդիսից՝ Վազգէն հարկադրած ըլլալով իր երկրէն դուրս Հոնայ կողմը երթալու՝ վերջին դիւական և անլուր վրէժն այլ թափեց Շուշանեան վրայ. անձամբ բերելով զնա յԱւփրիկէ՝ և այն երեքեր.

կաթեան շղթաները անցընել տալով ոտից, ձեռաց և վզին, անլուր լքբութեամբ իր կնիքն այլ անոնց վրայ զարկաւ, որ չհամարձակի մարդ մոտենալ և քակել. և այս յետին պատիւն ընելով իր ամուսնոյն՝ վերջին բարևն այլ տուաւ հայհոյելով անոր նախնիքը և սուրբ կրօնքը։ — Իսկ երանուհին այսպիսի կոտանաց մէջ այլ իր վսեմական սրտովն նախ գոհացաւ զԱստուծոյ, և ապա ուրախ եմ ըսաւ՝ Վազգենի, որ զիս Աստուծոյ սիրոյն համար այսպիսի կապանաց արժանաւորեցիր, որով քիչ ատենէն յաւիտենական ազատութեան պիտի հասնիմ. բայց քեզ վայ և ափսոս՝ որ ասոր հակառակ կապանք և հատուցմունք պիտի ընդունիս Աստուծոյ արդար դատաստանէն։ — Այն արդար և ահաւոր դատաստանին վրիան էր Շուշանկան բերնէն ելածն. որ և այնպէս ազդաւ՝ այլ անօգուտ՝ զարկաւ Վազգէնի սրտին, որ չկարաց այս անգամ պատասխան տալ. և յուգայեան յուսահատութիւն մը հեռացաւ։

Երբոր վիշապին հետը հոտը ծածկուեցաւ, ելնելք օրէն հաւատարիմ գրաներէցն՝ որ ձագակորոյս թռչնոյ պէս ծառէ ծառ դարէ դար կու դիտէր իր թնամոց կարօտը, մտաւ բանտը. այս անգամ ուրիշ բան չկար ըսելու, բայց ընկնալ պագնել տիկնոջն կարծր կապանքները և համարձակ երանի տալ անոր։ Իսկ տառաքնի և անմման դուստրն Վարդանայ, միայն մէկ երանութիւն մ'ուներմ, կ'ըսէր, որ է այս երկաթներս, որ զիս կու սրբեն այնպիսի մարդու կենակից ըլլալէս, և անոր զաւակ ընծայելէս. ասոնք ըլլան վկայ առաջի երկնից և երկրի՝ որ իմ յօժար կամքս թողուցի ինչ որ աշխարհս ինձի կրնար տալ, և հանդերձելոյ համար յանձն առի այս ցաւերս, որով յուսամ Աստուծոյ ողորմութեան և իր սրբոցը հասնիլ։

Է

Այսպէս կեցաւ, այսպէս համբերեց Շուշան երկայն տարիներ Ուփրեթայ բանտին մէջ. միայն յետ շատ ազաչանաց Զոլկայ՝ հազիւ զիջաւ Վազգէն անոր վերջին երկաթը վերցընել տալու. որով կրնար տուրքն քիչ մը հանգչեցընել գլուխը կաչիէ բարձի մը վրայ. բայց զայն այլ խնայելով կ'ընէր. վասն զի ինքն այլ սկսաւ անգիտանալ իր վրայ, իբրև թէ արտաքին ցաւն և կապն բաւական չըլլային. քունն այլ կու կարձեցընէր, որ աւելի ժամանակ ունենայ ազօթելու. գարեհացիկն և ջուրն այլ շատ կու սեպէր, և ամբողջ շաբաթներ ծոմ կ'անցընէր, միայն շաբաթ և կիրակի օր քիչ մը բան ծամելով յետ սուրբ հաղորդութեան, զոր հաւատարիմ դրաներէցն անխափան կուբերէր. և կամաց կամաց ուրիշներն այլ համարձակելով սկսան գալ, աղօթք խրատ և օրհնութիւն ուզելու, ամենք այլ առողջութիւն խնդրելու, և գտան այլ ուզածնին։

Սրբութեան, ճգնութեան ու հրաշից համբաւն սկսաւ տարածուիլ չորս դին. լսեց թնչուան Ճորայ պահակէն՝ իժականջ Վազգէնն այլ. և յետ չորս տարուց գտնալով իր երկիրը, առաջին հոգն եղաւ իր բանտարկեալը քննելն. և իմանալով որ մարդ մտած է ներս, պահապանաց մահուան ծեծ մը տալ տուաւ. և հրամից առաջինէն աւելի խնամութիւն ընել ու չարչարել զսուրբը։ Բայց այնչափ երկար առեղուան փորձով աղէկ գիտնալով որ չարչարանք օգուտ մը չունին, ուզեց կախարդութեամբ ուզածին հասնիլ, նման Սաւուղայ. և տարի մը ջատուկ վհուկ կնկան ձեռքով աշխատելով՝ չիկրցաւ բան մը շահիլ։ Այնինչ զօրաւոր հնարքն և վրէժն՝ որ յիրաւի Շուշանկայ սիրտը

վեր՝ ի վայր պիտի ընէր, ամենէն եռքը թողուց. — աղաչները ուրացընել, իրեն պէս կրակապաշտ ընել։ Այս գառն գոյժս՝ ուսկից միայն այնքան առեն կու գողար մայրն աղէգուիթ և բարեպաշտ, իր վեց տարուան երկոտիներէն աւելի կարուկ եղաւ՝ կիսամաշ կեանքը բոլորովին մաշեցընելու։ Այնուհետև աշխարհիս վրայ սրտի կէտ մը չունէր, և ոչ յանկարծական յոյս մը. վաղաք և ցաւաք շատ առաւել քան իր ընկերակից առաքինի համբերող կանայքը, անոնց՝ գոնէ ուշ բայց վերջապէս հասնող մխիթարութիւնն այլ չունեցաւ. յիրաւի ողբաց անոնց համար սրատառուչ վիպասանն, թէ « Բազում ձմերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունք. » տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ. և նո» քա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն » իւրեանց ». — սակայն յետ երկար շրջանաց՝ վերջ ունեցան այն բազում ձմերունքն այլ. և երբ յետ իբր տասներեք տարեաց անգամ մ՝այլ եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունքն, ընդ կենցաղասէր մարդկան՝ խնդացին և ցնծացին համբերող տիկնայքն այլ. վասն զի վերջապէս տեսան « զանձկալիսն իւրեանց... զքանկալի գեղ երե» սաց նոցա »։ Այլ, ա՜հ, միայն Շուշանիկն չհասաւ գարուն. չեկաւ ծիծառն, չերևցաւ անձկալին. և ոչ « ծաղիկք գարնանային յիշատակեցին » զպսակասէր ամուսին »։ Շուշանիկ վեց եօթն տարի ոչ կանաչ գեանին ծոցէն ծլած ծաղիկ մը տեսաւ, և ոչ ծաղկի տեսութեամբ այլ կրնար անոնց պէս ցանկալի յիշատակ մը արթընցընել. իր ծաղիկն էր փուշ վաղաց, յիշատակն՝ ուրացող մը Աստուծոյ և ամուսնոյ։ Անոնց՝ առն տեղն գարձեալ նորոգեցաւ, մաքրեցան փոշոտեալ և ծխոտեալ սրահակք և սրսկապանք նորեկ հարսանցն, վերցուեցան սարդի ոստայնք առագաս-

ատց նոցա, կանգնեցան բարձրագահք ատաճարացն, և ուղղեցան ապաստք երախանաց նոցա. գարձեալ գալարացան բուրաստանք ծաղկոցաց նոցա և արթք գիներքերք ծաղկեալ եռուն զհոտս իւրեանց. և սիրելիք հանդիպեցան իրարու ընդ ուռենեաւ և ընդ նռենենեաւ։ Իսկ Շուշանայ, ցորեկ, գիշեր, ամառ և ձմեռ միակերպ խաւար մը, կսկիծ մը, տխրութիւն մ՚էր, հալումաշ յիշատակներ. որոց երկընցած անեղեւոյթ թելք՝ միայն մահն ապ. ամի կարէր։ Եւ արդէն մօտեցեր էր մահուան ցաւրա մկրատն՝ այն մարգարտաշաք ոսկեղ սուրբ կե. նաց կապին....։

Ը

Զարշարանաց եօթներորդ տարին խոնարհեցաւ ընորհակալթ Շուշանկան գլուխն. լուսածաբաւ աչքերուն գիմաց բոլորովին գոցուեցաւ աշխարհիս վարագոյրն. հանգերձեալ լոյսն սկսաւ զհոգին հրաւիրել.... Հաշակեցաւ մահաբեր հիւանդութիւնն. ամեն լսող երանի կու տար անոր՝ որ կարենար տեսնելու այն հրաշալի նահատակը. բայց ամենքն չունեցան այս բաղդը. իշխանք և ազնուականք Վրաց և մերձաւոր Հայոց՝ փութացան յետին յարգանք մը մատուցանել իրենց ըստ աշխարհի գժբաղդ դշխոյին. ամենէն առաջ հասաւ բարեբերն Զոլիկ՝ իր կնոջ հետ մեկտեղ. ընկաւ նախ երկրպագեց Շուշանկայ աղօթանոցին վրայի խաչափայտին. ապա սուրբ տիկնոջ ոտքը ընկաւ, զարկաւ գլուխը գետնի, լացաւ շատ. օրհնութիւն և մեղացը թողութիւն խնդրեց, և հազար կատր եղած սրտով հեկեկանաք բանտին պատերը թնգայընելով յետ դարձաւ։ Նկաւ Սամուէլ Եպիսկոպոսապետն Վրաց Մծխիթայ մայրաքաղաքէն, հանգերձ Ցուրտաւայ դրան Ցով

հան եպիսկոպոսով և քահանայիւք, որք շատ ան-
գամ եկեր և միթարեր էին զսուրբը. եւ առա-
ւել այն հաւատարիմ դշխոյին դրաներէց քահա-
նայն որ ստուգիւ անոր մեծ և սուրբ սրտին խո-
բագոյն կրիցը հաղորդ էր, և յԱստուծոյ և իր ա-
զախինէն՝ շատ երկնաւոր վարձուց արժանի էր,
՝ի փոխարէն այն զովարար միթարական բաժա-
կաց՝ զոր բանիւ աւետարանին ընծայեց իր տիկ-
նոջ և հոգևոր դստեր։ Անոնց ամենուն այլ՝ տի-
կինն սրտառուչ շնորհակալեցաւ, իբրև իրեն ծնո-
ղաց և գայթակաց. շնորհակալ եղաւ և իր յետին
այցելութեան եկող մեծաց և մեծուհեաց և հա-
սարակ ժողովրդեան. աղօթեց և աղօթք խնդրեց.
օրհնեց և օրհնուեցաւ։...

Ամեն մարդկային օրէնք կատարեցան. մնաց
արդեօք ժառանգութեան խնդիրն. — յայտնի է
որ սուրբն իր խաչէն և աւետարանէն զատ կատ-
կելու բան չունէր. բայց մերձակայք և ժողո-
վուրդն՝ նախանձելի և ագահելի բաներ կու տես-
նէին. ամենքն մէկմէկէ աւելի կանչէին. Երկաթ-
ներէդ կտորիկ մը ինծի, շղթաներէդ օղակ մը,
խշտեակէդ յիշատակ մը ինծի հանէ, սուրբ տի-
կին։... Իսկ սուրբն, արդարև սուրբ, խոնարհ և
հեզ, պատասխանեց մարմրրած ձայնովը. Ես ար-
ժանի չեմ այդպիսի խնդիրներու. « Բայց կամք
» Աստուծոյ եղիցին. արարէք որպէս և կա-
» միք ». և յետին հրաժարական՝ ամենուն առ-
հասարակ օրհնութիւն տալով ըսաւ. « Ամենա-
» լին Փրիստոս լի արասցէ զձեզ հոգևոր օրհնու-
» թեամբ ». Ապա բազմութիւնը հեռացընելով,
ինքն այլ իր մեկ հատիկ մնացած երկրիս վրայի
բաղձանքը կատարեց Եպիսկոպոսապետին և անոր
ուխտին. սակայն դեռ զայն այլ աքանչելի խոնար-
հութեամբ մը՝ յանձնելով անոնց կամաց. « Եթէ
» արժանի կու սեպէք զիս խնդրոյս, տարէք մար-

» մինա թագեցէք այն տեղ՝ ուր որ նախ առաջին
» զիա քարշեցին »։ Այս միայն եղաւ կատակ և փա-
փագ Մ. Շուշանեկան. հոն թողուլ մարմինը՝ ուր
որ զանկնութիւն, զփառք, զաշխարհ և զվայելս
կորոյս այն մարմինն. և քարշանք, հարուածք,
չարչարանք և վիշտք սկսան՝ վասն հաւատոց և
սիրոյն Աստուծոյ, և հոգեւոր տիկնութեան հան-
գէպն պատրաստուեցան։ Վարդանածին դշխոյն
ինչուան 'ի մահ իր հայրենի մեծասրտութիւնը
պահեր էր, հոգւոյն ամենայն վերնագոյն շնորհաց
հետ։

Յետ այսորիկ ամփոփելով զինքն յինքեանս՝ սր-
ձակեց վերջին ձայն մը գոչուիլեան առ Աստուած,
որ արժանի ըրաւ զինքն այդ չարչարակիր նահա-
տակութեան, և ազաչելով ընդունել իր կարօ-
ատած հարց և սրբոց քով, խաչակնքելով տուան-
գեց հեզաբար զոգին. որոյ նման հզօր և պայ-
ծառ՝ շատ քիչ ճանաչուած է յաշխարհի՝ տակ-
ուասեռ բնութեան մը մէջ։

Բարեպաշտոն կանայք մեծ պատուով լուացին
մաքրեցին պարկեշտ և մաշած մարմինը, աւելի
տաք արտասուքներով քան սնուշանոտ ջրերով.
յետոյ երկու եպիսկոպոսունքն և քահանայք այլ
խնկով և իւղերով զսպեցին. և բազմութեամբ
ժողովրդոց, համարձակ պաշտօնով, իբրև նորէն
Փուգարոց դշխոյն գարձընելով 'ի դաշն, 'ի բար-
ձրագոյն գահ, հանգուցին Յուրասաւայ կաթո-
ղիկէին մէջ. երեկոյի և գիշերի պաշտօնը կատա-
րեցին. երկրորդ օրն՝ հանգստեան պատարագ
իբրև սրբոց տօնահանդէս։ Ապա վերցընելով սբր-
բոհոտ մարմինը՝ տարին գրին իր փափագած տե-
ղը, հոն՝ « ուստի զառաջինն քարշեցին ». և ուս-
տի կու յուսար սուրբն՝ յետ դագրելու բոլոր
կենցաղոյս ձմերուան, 'ի բանալ քրիստոսանորոգ
գարնան նորոյ երկրի, պայծառ ծաղիկ յարու-

թեան վերաբերումնիլ վերաթաչիլ ընդ առաջ երկ-
նաւոր թագաւորին, և գրկել խառնիլ անքաժա-
նապէս իր նախափառաւորեալ հոգւոյն հետ։

Այն ընտրեալ և սրբեալ տեղն եղաւ ժողովա-
տեղի բարեպաշտ անձանց. Հայոց և Վրաց ա-
նուանի ուխտաւորեցաց մէկն. ուր և յետ 800 ա-
մաց՝ մեր պատմչաց մէկն այլ. Սեբաստիոյ եպիս-
կոպոս, վկայէ, թէ «դեռ ևս կան տեղիք չարչա-
» բանաց նահատակութեան նորա, և հանգստա-
» բան սուրբ և պատուական նշխարաց նորա. զոր
» մեր բազում անգամ երթեալ և համբուրեալ
» (է) զսրբութեան տեղին»[1]....

Թ

Եթէ դու այլ բաղդ ունենաս, Հայկակ, օր մը
համբոյր տալ այն սրբութեան տեղեաց, մի՛ մո-
ռանար անգամ մ՝այլ Բողնեաց գետն 'ի վեր եր-
թալով՝ հազարամեայ աւերակաց մէջ փնտռել
Ուփրեթայբուիճաբոյն բերդին մամռապատ մնա-
ցորդները. նորոգէ մտօքդ, ոչ այնքան զնիւթա-
կան շէնքը, որքան անոր մէջ հանդիսացեալ զար-
մանուհին. — տես անդամ մ՝այլ՝ այն անուամբ,

[1] Պատմիչ վարուց Շուշանիկի, որ եթէ չէ իր գրան-
երէցն կամ Յովհան եպիսկոպոսն, ուրիշ ականատես ժա-
մանակակից մը պիտի ըլլայ, Վաղդենի վրայ բան մը չբաներ
յետ անոր որդիքը ուրացընելուն. բայց յետագայ պատ-
միչք Վրաց կու հաւատան՝ որ իրենց թագաւորն 'ի վրէժ
անդարձ չարչարանաց և մահուան դչխոյին, յետ տարի-
ներու՝ պատերազմի մէջ բռնեց զուրացող բդեշխն Գու-
գարաց արիմանան սահմաններուն վրայ, և ոգի ոգի կտոր
կտոր ընել տալով, կտորներն այլ ծառաց վրայ կախեց 'ի
նշաւակ տեսողաց և 'ի կերակուր գիշատչաց. Պարսից
թագաւորին այլ իմացընելով թէ բանի համար ընելն՝ ան-
ճաղդիր եղաւ։

բնութեամբ, սրբութեամբ, Շուշանուվարդը. — տես զանիկ մէկ մ'իր փառաց արքունեաց գահուց մէջ, մէկ մ'այլ երեքերկութեան կապանաց, որդանց և ճձեաց մէջ, անլոյս, անկրակ, անմթի-թար թողած, յաղբիւս ընկած մարգարտի պէս. — համրէ անոր վեցամեայ վաստց, մանաւանդ թէ ըստ հին պատմչին ազգման՝ «ի-ւրաքանչիւր զտա-ն բեաց կամ զամսոց կամ զշաբաթուց կամ զա-ն ւուրց և կամ զժամուց չարչարանս». — նկա-տէ այն մեծահոգի ծովատարած սրտին անգա-դար թաւալած ալէկոծուր ալիքները. — և տես գարձիր նայէ վրաց։...

Ո՛վ ժամգոհ կենցաղասէր մարդիկ. ո՛վ անհամ-բեր գիւրախնդիր տիկնայք. ո՛վ փոքրոգի լծա-բարձք Քրիստոսի. որք այդչափ գանգատիք մեր կենաց և կրից վրայ. գնացէք 'ի բերդն Ուփրե-թայ և տեսէք զ'ՇՈՒՇԱՆՆ-ՎԱՐԴԵՆԻ։

ԺԶ

ԱՇՈՏ Ա.

ԵՒ ՀԱՑԱՍՏԱՆ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Մայիս 27.

Ա

Հայադիր օրացուցակն այսօր Թ գարուն քանի մը անձանց սրբազան յիշատակին մէջ՝ վեհագոյն կու նշանակէ զ՝ԱՇՈՏ ՐԱԴՐԱՑՈՒՆԻ։ Հազարամեան գար մը մեզմէ առաջ՝ նշանաւոր կէտ մ՚է մեր հայրենեաց պատմութեան մէջ. մեծ յեղափոխութեան մը միջոց, որ երկայն և ծանր տարիներ քշեց, բայց յաջող վախճան և արդասիք ունեցաւ. յայտ է թէ ոչ բաղդով, հապա ջանքով, աշխատութեամբ, չափով ու թուով. այսինքն խելքով, իմաստութեամբ, արիութեամբ, առաքինութեամբ։ 450 տարիէ վեր քաղաքական միութենէն ձեղքած քայքայած ազգ մը, և Հայու պէս ազգ, որ իրեք աշխարհակալ զօրաւոր տէրութեանց, Պարսից, Յունաց և Արաբաց, հազարուամէկ փորձանքներէն անցեր էր տաշուելով ու մաշուելով, և գեռ կու տքար, մանաւանդ այդ եղքի ազգին ճիրանաց տակ. այդպիսի ազգի մը՝ կերպով մը գարձեալ մէկ քաղաքական ազգային

գլխու մը միանալու, և այն գլխոյն վրայ այլ արքունի փառափայլ թագ մը դնելու, և յետ այնքան անյոյս գարուց՝ Հայոց արքայ ըլլալու, կամ ծածուկ աստուածային հրաշք մը պէտք էր, կամ յայտնի ԱՇՈՏ մը՝ այն ծածուկ հրաշքը իր բազկաց, մտաց և սրտին մէջ ամփոփած, զոր և ըստ ժամանակին յերևան կու հանէր։ Ցիրուաի սա բազմաց անկարելին նաև անկարծելին՝ ի գլուխ տարաւ, հաստատեց, 30 տարի աշխատելով. ոչ այնքան սրով և աղեղամբ, (թէ և նոյն տարիներուն մէջ ինքն էր Հայ հայրենեաց առաջին զինակիրն և անձնապահն այլ), որքան խոհեմ մտքովն, և թերևս անկէ այլ աւելի՝ զգայուն և առատ սրտովն, որոց գէմ չկրցան կենալ ոչ արտաքսական գանութիւն, ոչ բիւզանդականներբուութի, և ոչ ազգային նախանձ և ինքնակամութիւն. ամենքն այլ հաճեցան հաւանեցան սիրեցին զԱշոտ։ Ամիրապետն Բաղատայ՝ անոր յանձնեց բոլոր Արտաստանի, Միջագետաց և Կովկաս լերանց միջոց եղած երկրին վերակացութիւնը, և խաղաղութեան պատասխանատու ըլլալը. կայսրն Կ.Պոլսոյ՝ ի մէջ ամենայն թագաւորաց և իշխանաց ժամանակին՝ որոց հետ վերաբերութիւն ունէր, ըստ մեծութեան՝ յետ խալիփայից՝ զԱշոտ կու ճանչնար մեծապատիւ ազգիչխան, և ըստ սիրոյ՝ առաջին Ուրդի կոչելով զնա իր թղթոց մէջ. իսկ ազգային իշխանք՝ նաև անկախք՝ զնա ճանաչէին նախիշխան և միայն թագաւոր։

Ազգի մը նոր գլխապետ ըլլալ կամ ազգ մը կանգնել յինքնիշխանութիւն՝ մեծ յաջողութիւն կամ մեծ ճարտարութիւն կու պահանջէ. և ի հարկէ այս ձիրքերս ունէին որոնք որ այսպիսի գործ կատարեցին. այսպէս և մեր Աշոտն։ Իսայ իրենը՝ մանն գժուար պարագայից մէջ ըլլալով և այնքան խոհեմութեամբ, զգաստութեամբ և ազնուաբա-

լոյութեամբ վարու

բելութիւնն, ընտրողաց այլ մեծ առաքինութիւն. որ գժբաղդաբար սակաւագիւտ եղած է այնպիսի ազգի մը մէջ, որուն բնական երկրին ձևն ու դիրքն, ձորերն, լեռներն ու գետերն անգամ՝ զատութիւն և իրարմէ անկախութիւն մը կ'ազդէին բնակչացը։ Հոս անկարելի է ենթադրել մեր հազարամեայ իշխանաց և նախարարաց վրայ այնպիսի առաքինութիւն, առանց ենթադրելու Ա. Շոտոյ մեծագոյն կատարելութիւնը. և յիրաւի ով որ մեր վերոյկարգեալ ազգայարոյց տիրապետաց վարքը ուշի ուշով քննէ, կարծեմ չիկրնար գտնել առաքինի մը իբրև զԱշոտ. միայն Վաղարշակ կրնայ այս պատուիս արժանի սեպուիլ, բայց իր օտար ծագումը, և բաղդով թագաւոր ըլլալն (թողունք դիցապաշտութիւնն այլ), մեզի այնչափ սիրելի չեն ընծայեր զինքը, որչափ երախտաւոր մեր հին հարանց պատմութիւնը գտնել և պահել տալուն համար։ Երջանիկ նա, մանաւանդ թէ մենք, որ գտուեցաւ այն տաեն իր և մեր բաղդին յարմար՝ Աբաս Կատինա մը, որ մեր Հայկազանց պատմութեան պատճառաւ՝ զինքն այլ անմահացուց. ինչպէս որ իրմէ եռաքը անոր դրուածքը առաջին կարգացող և նորոգող Ագաթանգեղոս այլ անմահացուց իր ժամանակի ազգակեցոյց Տրդատը. իսկ անոր վերջին կարգացող և հայերէն հաւաքողն՝ Մովսէս Խորենացին՝ երբ Վաղարշակայ թագին և ցեղին ընկնալը և վերջնալը լալոտ աչօք տեսաւ, զոնվ կրնար անմահացընել... — զՏրդատ Սահակ, զնախահայրն Ա. Շոտոյ. « Անմահ 'ի յիշատակ թողուլ քեզ զայդ » (Պատմութիւն Հայոց) և որ զկնի քո գալոց » են ազգք »։ Մար Աբաս, Ագաթանգեղոս, Մովսէս, իրեք անմեռն անձանց համար գրելով, թերևս անոնցմէ աւելի զիրենք, իրենցմէ այլ աւելի անմահացուցին զազգս Հայոց...։

Բայց զԱչոտ ոչ անմահացընէ։ Զունէր, չգը-տա՛ ինքն այլ Աբասայ մը, Մովսէս մը, որ իր թէ քաջութիւնները թէ լաւութիւնները մեզի ճա-ռէին։ — Ունէր, այո՛. և յայսմ ևս՝ ըստ մասին՝ բաղդաւոր քան զառաջինսն եղաւ. վասն զի գտաւ ոչ միայն ազգային՝ այլ և ազգական մը, թոռնա-կից մը, զԲագրատունին Շապուհ, որ բոլոր իրենց ցեղին պատմութիւնը գրեց՝ ի պատճառս իր համ-շիրակին. գժբաղդ մենք եմք, որ դեռ այս Բա-գրատունեաց պատմութիւնը չեմք տեսած, և ծգ-գարէ վերջ կարդացող այլ չեմք գիտեր, թէ և անյոյս չեմք օր մը յերևան ելնելուն։ Այդ փա-փագելի գրուածդ ոնչուշտ ոչ Աբասայ և Մով-սէսի գրուածոց չափ հետաքննական պիտի ըլլայ, և ոչ Ագաթանգեղոսին պէս վայելչաբան, որով-հետև ժամանակակից անուանի պատմիչ մ՝այլ, պերճաբանն Յովհաննէս կաթուղիկոս, կ՝ըսէ ա-նոր համար. « Ոչ կարացեալ ըստ քերթողական » հրահանգացն համառօտաբար ընձեռել, սակայն » ըստ իւրում ժամանակի ընտանի գոլով նորա » զբոյցացն ամենայնի, գեղջուկ բանիւ բաւական » քեզ տայ պատճառս տեղեկութեան »։ Սակայն մեր հոս փնտռածը՝ չէ քերթողութիւն, այլ պատ-մութիւն, տեղեկութիւն ընտրեալ անձին՝ որոյ վարքը « 'ի մանկութենէ մինչև յերևոյթս երի-» տասարդութեան... զզօրութիւնս և զքաջու-» թիւնս և զպատերազմունս, և զհրոսմունս 'ի » յայլս, և զայլոց ևս 'ի նա,... յոյժապատում » արարեալ է (և) զզբոյցս պայազատութեան » Աչոտոյ,... զիշխանական պատմութեան և ըզ-» թագաւորացն զհանգամանացն զկարգս», և այլն, մանրամասն գրեր էր Շապուհ. վասն այնորիկ կաթուղիկոսն անոր կու խաբրէ փափագողը, և ինքն միայն թագաւորութենէ վերջի դիպուածնե-ները համառօտիւ կու յիշէ։ Եւ որովհետև անկի

զատ ուրիշ մ'այլ գրուած չունիմք. ըսել է որ այս արժանաւոր անձին կատարեալ պատմութիւնն անծանօթ է մեզի. բայց որչափ այլ որ ցաւալի է այս՝ այնչափ այլ ցնծալի՝ որ մնացած քիչ տեղեկութիւնքն այլ աւելի զօրաւոր վկայ կ'ըլլան անոր մեծութեներ. Եթէ Շապհոյ գրածն՝ թէ իրեն և թէ Աշոտոյ պարծանք կրնար սեպուիլ՝ աննախանձաբար ազգակցին պատմութեն ըլլալուն համար, թերևս ուրիշ կողմէ՝ իբր ազգակից՝ կողմնասէր կամ շողոքորթ կարծուէր. բայց կաթողիկոսն որ իր ժամանակին դէպքերը՝ թէ վայելչաբար և թէ անկողմնասիրութեամբ գրած է, որչափ այլ զգուշացեր է Շապհոյ պատմածը չկրկնելու համար՝ Աշոտոյ վրայ խօսելու ատեն, չէ այլ կրցած համարմունքը, զարմանքը, ըսենք թէ և սէրն այլ՝ զսպել ու չըսել. «Ինձ աս-
» տանօր ոչ արդեօք այլ ինչ է բանս սիրելի՝ քան
» թէ գեղեցիկ 'ի բանս գովեստից, որ վասն Աշո-
» տոյ իշխանին իշխանաց են հետեւմունք. Վասն
» զի 'ի տիս հասեալ միջակութեան, քաջահա-
» սակ էր նա և անձնեայ և թիկնաւէտ և զուարթ-
» երես և մրայօն, նկարէն իմն և ինչ յաջս ու-
» նելով, որպէս զյակինթ կարմիր 'ի մէջ մարգար-
» տի ծագեալ, և վայելչացեալ գեղեցկութեանն
» աչեօք. մեծիմաստ և քաղցրաբան, և առ կերո-
» կուրս խորախնմանաց ոչ խանդացեալ նորա ընդ
» լաւագոյնսն և ոչ արհամարհեալ զնուաստա-
» գոյնսն. այլ հաւասարակաց 'ի վերայ տարածէր
» զգգեստ խնամոց իւրոց. և ըմպակս իմն կշռէր,
» նախ զիւր և ապա զամենեցուն կենցաղս. միան-
» գամայն իսկ ասել, եթէ որ ինչ մարդկութեանս
» էր պիտանի՝ ոչ ինչ կասեցուցանէր »։

Ուրիշ ժամանակակից պատմիչ մ'այլ, (Թովմաս) որ այնչափ Բագրատունեաց կողմնակից չէր, Արծրունեաց տունէն ըլլալով, և որուն գիրք-

ազն էր Գագիկ, չիկրնար չքսել Աշոտոյ համար աւելի մեծաքանութեամբ, թէ «բարձրագոյն » և հանճարեղագոյն էր քան զբնաւ Հայաստան » նեայս, և զընդհանուր կացեալս 'ի ներքոյ երկ- » նից »· որ է, ըստ մատաց հեղինակին, քան զամենայն Հայ և քան զամենայն մարդ (ժամանակակից) աւելի խելացի և մեծահարկի։

Անուանին Փոռ պատրիարքն Յունաց կոչէր զԱշոտ՝ «Քաջայայտ բարեպաշտութեամբ, հզ- » րագոյնդ Հոխութեամբ, բարձրագոյնդ 'ի հոմա- » սեռս »։ Միչեալ պատմիչներէն քիչ եղեն ե- կող խոհական պատմիչն Ասողիկ՝ կ'ըսէ վասն Ա- շոտոյ, յետ յիշելոյ իր յաղթութիւնները. «Էր » այր քաջդր և հեզ, և անարատ և անբամբաս » կեանս կեցեալ, և ոչ անորինեալ արատաբոյ օ- » րինաց բնութեանն, և հանոյ էր Աստուծոյ յա- » մենայն վարս անրիծս »։ Թագաւորք յետագայ պատմչաց և ամենայն զինքը յիշողաց միաբան գո- վութիւնը և յարգութիւնը, որոց նման քիչե- րուն տուած են իրմէ առաջ կամ ետև, կամ թէ և ոչ մէկուն. վասն զի դժար է նմանը գտնել բո- լոր բարեմասնութիւնքը մէկտեղ բերելով. վայ- ելչութիւն, քաջութիւն, հանճար, կրօնասիրու- թիւն, աշխարհաշէնութիւն, սիրտ շահել, ազգը պատուել և փառաւոր ընել, հին քաղաքական կարգերը նորոգել, եկեղեցեաց պայծառութեան և ուսման զարգացման օգնական ըլլալ, ցանկալի խաղաղութեամբ, զոր վայելցուց թէ ազգին և թէ սահմանակցացն, յետ այնքան դարերու անհան- գըստութեանց, խռովութեանց և կասկածանաց. և ազգային ինքնագլխութեան հետ՝ Հայոց մատ- աւոր, գրական և արուեստական ոգին այլ նորէն կանգնել։ Ինչ որ ըստ այս մասանց՝ իրեք գարե- րու մէջ (ծ, ծԱ, ծԲ), շինութիւնք և բարգաւա- ճանք եղան, նախ Մեծ և ապա Փոքր Հայոց մէջ,

ամենքն այլ պարտական են Աշոտոյ Ա. որ իրա-
ւամբք Մեծ ըստ ենգաւ. և ոչ միայն թագաւորու-
թեամբն այլ արդեամբք և արժանեաւք՝ իր ամե-
նայն անուանակցաց մեջ Աստուծոյն։ Վերոյիշեալ
հեզինակաց վկայութիւնքն և պատմութեանց
գէպքն (զոր յետոյ տեսանիք), ամիրապետաց և
կայսերաց պատուագրութիւնքն, սահմանակից
ազգաց և պետութեանց պատկառանքն, ազգային
նախարարաց և իշխանաց մեծարանք և հպատա-
կութիւնն՝ տարակոյս չեն թողուր որ տակէ տա-
ջի հազարամեան դարէդարձին՝ Հայաստանեայց
մեջ նա էր ամենէն երևելի անձն, կամ Բագրա-
գոյն 'ի հոմանոյս, ըստ Փոտայ և Թովմայի։

Իսկ իմ այս բանս յիշելս և կրկնելս առ քեզ,
Հայկակ, ոչ այնքան ժամանակի կարգին բերելն
է, որքան այսպիսի արժանաւոր անձի մը բաւա-
կանապէս ճանչցուած չըլլալն. Տիգրանք, Տրդատք,
Վահանք, Վարդանք՝ բռնած են մեր ազգասիրաց
միտքը. արժանապէս. բայց Աշոտոյ այլ տարբ-
է իր տեղն, անոնց կարգին վրայ. ես հոն կը գնեմ.
դու եթէ գտնես իրեն մեկենասը՝ զՇապուհ պատ-
միչ, կրնաս թերևս նոր կարգի դասաւորութիւն
ընել։ Ա. այժմ մնացեալ պատմչաց յիշատակ-
ներէն հաւաքեմ Աշոտոյ կեանքը. զոր լաւագոյն
և ճանչնալու համար՝ պէտք է նախ ճանչնալ ա-
նոր ցեղը, զԻագրատունիս, մանաւանդ Հայոց
անիշխանութեան առեն. մեկ մ՝այլ պէտք է ճանչ-
նալ այն առեն (թ դարու) Հայաստանի և անոր
մերձաւոր ազգաց քաղաքական վիճակը, և ա-
ռաւել երկու աշխարհակալ իշխանութեանց,
Յունաց և Արաբացւոց. որոց բազդն կամ կամքն
կու շարժէին զՀայս և զոլոր Ասիոյ արևմտեան
մասը։

Բ

Բագրատունեաց ցեղին ծագման վրայ երկու գրութիւն եղած է. մէկն բուն 'ի Հայկայ և յԱրմենակայ զաւակաց կու համարի զայն. բայց ըստ Խորենացւոյ՝ այս բանս ըսուած է « անհաւատութ » մարդոց, ըստ յօժարութեան և ոչ ըստ Հրշ- » մարտութեան ». մէկն այլ իր ըսածն, զոր Վիրք և Ցոյնք [1] հաստատեն. որ է՝ 'ի Հրէից ծագումն, և ըստ Վրաց՝ բուն Թագաւորական Ցուդայի և Դաւթի ցեղէն. որոց նահապետն կամ նախահայրն 'ի Հայաստան եկաւ Շամբատ կամ Սափատիա անուամբ իշխանն, զոր Հրաչէ հայկազն Թագաւորն մեր Նիզակակից Նաբուքոդոնոսորի՝ 600 տարի Քրիստոսէ առաջ՝ բերաւ յԵրուսաղեմէ իբրև գերի. բայց ազատութեամբ և իշխանաբար բնակեցուց Հայաստանի արևմտեան հիւսիսային կողմերը. գլխաւոր տեղ տալով անոր՝ Սպեր գաւառը. ուակից ոմանք դէպ 'ի հիւսիս՝ Նգերաց և Վրաց կողմերը սփռեցան, ոմանք դէպ յարևմուտս և հարաւ, Փոքր, Բարձր ու Դ Հայոց կողմերը. Թերևս ինչուան 'ի Կապպադովկիա, ուր Բաֆոքն [2] գաւառ յիշուի. վասն զի առաջ այս ցեղին սովորական եղած Բագրատ անունն այլ Բաֆոքիս էր, ինչպէս որ Սմբատն այլ Շամբատ կամ Սափատիա. Իսկ այս նոր անուններն առին՝ երբ Քրիստոսի դալստենէն քիչ տարի առաջ բռնադատուեցան յԱրշամայ Թագաւորէ Հայոց, և չատերն ուրացան հրէական կրօնքը. իսկ ո-

1 Կոստանդին Պերփիւռժէն.

2 Խորենացին յաշխարհագրութեան Պոխոտիանէ անուանէ, 'ի մասն Փոխրգիոյ.

մանք Հաւատարիմ մնացին, ինչպէս իրենց հայրերն այլ՝ բովանդակ Հայկազանց իշխանութեան տակ, ոչք աւելի ուղղահաւատ և նեղոգամիտ էին քան զԱրշակունիս։

Առանց թագաւորութեան սկիզբը՝ իբր 150 տարի նախ քան զՔրիստոսի թուականն, երբ Վաղարշակ մտաւ թագաւորելու 'ի Հայս, հրէական տոհմին ազգապետն՝ Բաղարատ՝ առաջին եղաւ ողջունելու զնա թագաւոր, և շատ ընծաներէն զատ՝ իր մեկ ազնիւ աղջիկն այլ ընծայեց 'ի կնութիւն նորընտիր թագաւորին Հայոց. թագաւորն այլ այս բանիս փոխարէն՝ զտներն ընտրեց իրեն թագադիր, և երկրորդ թագաւորութեան. միանգամայն և Արգեր, այսինքն Հայոց ձիաւոր զօրաց գլուխ, որ ըսել է գրեթէ բոլոր բանակի սպարապետ, և առանձինն արևմտեան զօրագնդին (11 կամ 21,000 զօրաց) գլուխ։ Այսպէս մեկ գործով, հրէական աշխարհութեամբ և շողոքորթութեամբ՝ Հայոց հին և նոր տոհմից մէջ առաջնութիւնը առաւ Բաղրատունին, ամենէն ազնիւ և մեծիշխան տեսուեցաւ [1]։ Այս պատիւս և իշխանութիւնս ժառանգական մնաց իր տոհմին մէջ ինչուան եղբը. թէ և քիչ մը ժամանակ՝ ոմանք յազգապետացն զրկուեցան, (մեր թագաւորաց անհաւանութեամբն, կամ ստիպելովն կուռք պաշտել). բայց այն իրենց ազգային ճկուն բարքն և յոժարամտութիւնն 'ի ծառայել, միշտ իրենց տերանց սիրաը կու շահէր. և կ'երևի թէ Հայկազանց ժամանակ այլ մեծ պատիւ ունէին, և հաւանօրէն նոյնպէս արևմուտից կուլմնապետ էին։ Մեծին Տրդատայ և իր թոռանց գահակալութեանց մէջ այլ յետ Հայկազանց և Պարթևաց

[1] Սեբէոս Ուսպելեան. «Շնորհէ ևս ունել գնախնականն բարձ 'ի վերոյ քան զամենայն»։

թագաւորական տոմարից՝ առաջին գահն էր Բագրատունեաց կամ Ասպետաց. նոյնպէս գրուած էր Արշակունեաց թագաւորութենէն վերջն այլ Պարսից գահնամակին մէջ. միայն այս ատեն Սիւնին առաջին գրուեցաւ 'ի պատճառս մարզպանութեան Վասակայ։ Արշակունեաց վերջին թագաւորաց հետ խնամութիւն այլ ընելով Բագրատունիք՝ այլ աւելի ազնիւ և նախապատիւ եղան։

Պատուոյն հետ Բագրատունեաց սահմաններն այլ ընդարձակեցան. և այն հալածող Արշամայ ատեն իսկ բնակեցան ոմանք յԱյրարատ թագաւորական նահանգին մէջ, ուր և առաջին գարուն եղբերն Արտաշէս և իր խնամակալ բազմարդիւն ազգարարեալին Այրուքաջ Սմբատայ՝ տուաւ Կոգովիտ գաւառը, Այրարատ լերանց ստորոտը, ուր չինեց նա զՇոգաբան աւանն. յետոյ չինեցաւ Դարոյնդ բերդաւանն, և եղաւ իշխանանիստ և գերեզմանատուն Բագրատունեաց, զոր իրև տուն և քնարան նախնեաց՝ պատուէին ազգապետքն ինչուան 'ի ԺԴ դար Քրիստոսի. և դեռ ոմանք հոն թաղուէին։ — Ը դարուն վերջերը՝ մեր մեծ Աշոտոյ պապն՝ Արշարունեաց երկիրը՝ կամ Երասխաձորը՝ գնեց 'ի Կամսարականաց, Շիրակայ հետ, որ քիչ ատենէն իրենց ցեղին թագաւորաբնակ տեղն եղաւ։ Տարօնոյ երկրին այլ կ'իշխէին Բագրատունիք նոյն ատեն, բայց ինչ կերպով զանիկայ 'ի Մամիկոնեից առնուն՝ մեզի յայտնի չէ։ Անկէ այլ հետու, Մոկաց երկրին իշխանն այլ Բագրատունի էր այս ժամանակներս (Թ դարու մէջ)։ ըսել է որ Հայաստանի միջին ազնուագոյն այրարատեան թագաւորական երկիրները՝ և մասամբ հարաւային Հայք այլ քիչ քիչ Բագրատունեաց ձեռքն անցան։ Բայց այսչափ միայն չէ. հապա մեծացեալ արևելեան երկու մեծ աշխարհաց կամ ցեղից, այսինքն Արծրունեաց և Սիւնեաց

հետ այլ խնամենալով՝ կերպով մը անոնց վրայ այլ նախերիցութիւն ունէին Բագրատունիք, զոնէ մեր Աշոտն, որ այն երկու մեծապատիւ ցեղից ազգապետաց սնեալ և հայրագիր էր։ Իսկ հիւսիսային Հայոց և սահմանակցաց, գրեթէ ծայրէ ծայր Սև ծովուն եզերքէն ինչուան Կազբից ծովուն եզերքը՝ հայ ու վրացի զու մեծ իշխանք և թագաւորք՝ 'ի Բագրատունեաց էին Թ-ԺԲ դարուց մէջ. սկսեալ ի Հումշէնու ու Սպերու երկրէն, (որ Բագրատունեաց բնագաւառն էր 'ի Հայս), Տայոց տէրն՝ որ կիւրապաղատ կ'ըսուէր յունական պատուով, Կղարջաց և Գուգարաց տէրքն, Ափխազաց կամ Եգերաց թագաւորն, Վրաց թագաւորն, Կախեթոյ թագաւորն, Զորոյ գետոյ և Աղուանից ըսուած թագաւորք, և թագաւորքն Հայոց։ Վրացի զու Բագրատունի իշխանաց սկիզբն եղաւ յ'Ը դարու, 'ի Հայոց հոն անցնելով ոմանց, թէ և Վիրք չեն ուզեր ընդունիլ զայս, և կ'ուանդեն թէ Սրուսաղեմէն եկած է իրենց ցեղատեան Ջ դարուն վերջերը։ Իսկ արեւմտեան կողմերը՝ Սպերէն անդին Փոքր Հայոց մէջ այլ Աշխարհաբերդու (Ապշէ-հրովա) սահմաններուն՝ այս տաւեններս կը տիրէր Բագրատունի մը, Գրիգոր Իշխանիկ անուն, որ Ցունաց ձեռքէն ուրիշ տեղեր այլ առաւ։ Այս գործերուս և կոչմերուս պատմութիւնը քննողին՝ յիրաւի մեծ զարմանք պիտի բերեն այսպիսի գէպք. և գրեթէ ուրիշ տեղ մ'այլ տեսնուած չէ մեկ իշխանական տոհմի մը՝ այսպէս լրիկ մեղմիկ այպան ընդարձակ և զանազան աշխարհաց իշխանութիւններ ձեռք բերելն՝ առանց բռնակալութեան. և կու սարսափի հաւատալ մարդարէութեան Խորենացւոյ, ինչպէս ինքն այլ կու հաւատար Աստուծոյ առ Աբրահամ ըսածին. « Եւ Բագրատունւոյդ ասեմ, յիշելով զբան իւր (Աստուծոյ), եթէ թագաւ-

» ուրիք ազգաց 'ի քէն ելցեն, և թագաւորէք 'ի
» 'Իուին[1] »։

'Իսառնալով նորէն իրենց իշխանական պայազա-
ռութեան, Արշակունեաց տէրութեան վերջերը՝
ըստ հին սովորութեան՝ իրենցմէ էր սպարապետն
Հայոց. որ երբ մեռաւ, Ս. Սահակ հայրապետն՝
իր գտնէր խնդրանքէ՝ անոր որդին իր թոռը Մա-
միկոնեան իշխանը (զՄեծն Վարդան) գրաւ. բայց
յետ նահատակութեան նորա՝ իր յաջորդն Վա-
հան և ուխտապահ նախարարքը՝ Բագրատունեաց
գլխաւորին՝ Սահակայ ասպետի տուին Հայոց
ազգապետութիւնը, որ այն առեն կ'ըսուէր Մարզ-
պան։ Անկէ ետև դար մը (Զ դար), դար Պարսից
և Ցունաց հակառակութեան, Բագրատունիք
գրեթէ չեն յիշուիր պատմութեան մէջ, այլ ա-
ւելի Մամիկոնեանք և ուրիշ ցեղերէ նախիշխանք.
բայց նոյն դարուն վերջը Սմբատ Բագրատունի՝ նորէն
կու կանգնէ ցեղին անունը և փառքը, գրեթէ թա-
գաւորական պատիւ գաղնելով Պարսից արքային
շնորհքով, վասն քաջութեանց իւրոց, և Վրկա-
նայ մարզպան կ'ըլլայ, Հայոց մէջ այլ իբրև նախ-
իշխան. որուն նոյն պատուով յաջորդեցին՝ որ-
դին Վարազիրոց, և թոռն Սմբատ, մինչև 'ի
կէս է դարու. յորում Արաբացիք վերուցին Պար-
սից Սասանեանց թագաւորութիւնը, և մտան 'ի
Հայաստան։ Հոս այլ Բագրատունեաց ազգա-
պետն և Հայոց նախիշխանն Սմբատ՝ իր նախնեաց
քաջաքաջութիւնը բանեցընելով՝ կամովի հնա-
զանդեցաւ Արաբաց անգիմակաց իշխանութեան,

1 Թէ և Գիուին այլ երբեմն տան Բագրատունիք, բայց իրենց թագաւորական աթոռն չեղաւ հոն, այլ ուշ այլ լաւ հեռու այն կողմն։ Աստոյ որդին Սմբատ թագաւորն հոն նահատակուեցաւ. և այնուհետև կ'ըսէ պատմիչ մը, Խորենացւոյն գուշակութիւնն կատարեցաւ։

և մնաց իր պատուին մէջ. այս քաղաքագիտութիւնս բանեցուցին իր յաջորդքն այլ. մեծաւ մասամբ, ինչուան մեր Աշոտն այլ. և այնպէս յաջողեցան զՀայաստան 'ի խաղաղութեան պահել և զերկնք յիշխանութեան, հաճութեամբ թէ ազգին և թէ ամիրապետաց. իսկ երբ մէկ կամ մէկ այլ կողմն տհաճութիւն եղաւ՝ Հայաստան գրեթէ միշտ ընաստուեցաւ։ Մէկ խօսքով և տեսութեամբ, յետ վերցուելու Հայոց ինքնագլխութեան՝ Արշակունեաց թագովք, ազգային բազդն կամ վարչութիւնն սահմանուած կ'երևի 'ի ձեռս Բագրատունեաց մինչև ց'ԺԲ դար, կամ 800 տարուան միջոց, յորում՝ իբրև դար մի միայն Մամիկոնեանք փայլեցան։

Վերոյիշեալ բազմայազթ Սմբատէն սկսեալ (Զ դարուն վերջէն) ինչուան 'ի Մեծն մեր Աշոտ 'ի կէս Թ դարու, 260 տարի, գրեթէ անընդհատ կը յիշուին Բագրատունեաց գլխաւորքն իբրև տան ազգ, Հայոց իշխանապետի և սպարապետի պատուով. յԱշոտոյ Մեծէն այլ սկսեալ՝ 200 տարի՝ այլ աւելի պատուով՝ իբրև նախիշխան և թագաւոր Հայոց կու տուէ պայազատութիւնն. անկէ այլ եռև գարձեալ 200 տարուոյ չափ՝ ցեղին պայազատութիւնն կու մնայ փոքր թագաւորութեանց մէջ (ց'կէս ԺԳ դարու)։ Իսկ Վրաց և Իմերէթի մէջ ինչուան այս գարուս սկիզբն կար Բագրատունի թագաւորութիւն, և ինչուան այս օրս թագաւորական տերունդք և իշխանազունք Բագրատունիք, որ Ռուսաց կայսրութեան մէջ՝ արքայազանց և զօրապետաց պատիւ և իշխանութիւն ունին հիմա այլ. և Եւրոպայի, գուցէ բոլոր աշխարհիս ազնուական տոհմից մէջ ամենէն հնագոյնն և ազնուագոյնն է Բագրատունեաց ցեղն՝ 2,600 տարուան հնութեամբ (կամ 3,000 ըստ Վրաց, հանելով մինչ 'ի Դաւիթի մարգարէ)։

Գ

Հայոց աշխարհին և ազգին Ճակատագիր մ'Լ-
ված է իր մէջ բաժանեալ ըլլալն քաղաքական
վարչութեամբ, յետ վերցուելու ինքնագլխու-
թեանն (Արշակունեաց), կէսն Յունաց և կէսն
Պարսից ձեռք ընկնալով. որոց յաջորդ կամ ժա-
ռանգ եղան ինչուան անցեալ դարուն վերջն՝ Օս-
մանեանք և նոր Պարսք՝ յետ Արաբացւոց. իսկ
այս դարուս՝ հիւսիսային հզօր ազգ մ'այլ (Ռուս)
այն երկուքին բաժնէն մեծ մեծ մասեր առնելով՝
երրորդապետ եղաւ Հայոց. հանգերձ Վրաց աշ-
խարհին սերտանալովն, որուն միացած էր մեր աշ-
խարհին մէկ մասն այլ։ Յունաց բաժինն՝ նախ ա-
րևմտեան Հայք, քիչ մ'այլ հիւսիսային և հա-
րաւային գաւառներն էին, Կարին, Բասէն, Սր-
զընկա, Զմշկածագ, Խարբերդ, Արղնի, Նփըր-
կերտ, Ամգայ կողմերն, և բոլոր Փոքր Հայք, և
Սփրատայ աջ կամ արևմտեան կողմն եղած աշ-
խարհները. որք առեն առեն կերպ կերպ բաժ-
նուեցան քաղաքական կամ աշխարհագրական
օրինաց, և Յոյն կամ Հայ իշխանաց յանձնուե-
ցան. իսկ Մեծ Հայոց մասին վրայ սովորաբար
տեղացի իշխաններ կու գրուէին, մէկ գլխաւորի
մը երաշխաւորութեան տակ, որ զանազան պա-
տուոյ անուն և աստիճան կ'ունենար, ինչպէս՝
խան, սպարապետ, գունդի, կիւրապալատ, դրունա-
ռաբ, նոգիլխանմոս, ոգիկիոպատ, և այլն։ Զօրաւոր
կայսերաց ժամանակ՝ ինչպէս էին Յուստինիա-
նոս, Մորիկ, Հերակլ, և այլն, բաւական հան-
գիստ և հնազանդ էին արևմտեայ Հայք, և կայ-
սերութեան մեծամեծ պաշտամանց և արքունեաց
մէջ յառաջագէմ. իսկ սակայն և մոլի կայսերաց
առեն՝ շատ հեղ ապստամբ. և երբ Ա-

բաբացիք տիրեցին արևելեայց, երբեմն ուզեցին առնոյ՝ քան Յունաց ներքև մնալ, թերևս ազգին միութեանն այլ փափագելով, յորում ըստ կրօնից այլ զանազանութիւն մտեր էր. յունակողմանք կաթողիկոսին իշխանութենէն ելնելով, քիչ անգամ նաև առանձին կաթողիկոս այլ ունենալով, բայց աւելի՝ առանձին եպիսկոպոսներ՝ իբրև 'ի թեմի Յունաց պատրիարքաց կու սեպուէին։ Քիչ մը մերայոց կամքն, քիչ մը Յունաց թուլութեամբ, Արաբաց բռնութիւնն՝ Ի և Ը դարուց մէջ գրեթէ բոլոր Մեծ Հայոց տիրեց, և ոչ միայն Դունայ մէջ նստաւ ոստիկան, իբրև վերակացու և հարկահան Հայոց, այլ և Էրզիռումի, Կամախի, Խարբերդու, և հարաւային Հայոց կողմերը զանազան ամիրաներ և հարկահաններ գրուեցան. ինչպէս յԱրզն, Նփրկերտ, Մանազկերտ, Խլաթ, Նախիջևան, Պարտաւ, և այլն. որոնց հետ երբեմն Յոյնք կու պատերազմէին, քիչ հեղ և յաղթէին։ Իսկ այս ժամանակիս, Աշոտոյ երիտասարդութեան առեն՝ Թէոփիլոս կայսրն բաւական զօրացաւ և շատ տեղ առաւ Արաբացւոց ձեռքէն. բայց վերջապէս հաշտութիւն ընելով յետ քաշուեցաւ. իր յաջորդ Միքէլին առեն (842-867) Մեծ Հայք գրեթէ բոլոր Յունաց ձեռքէն ելնելով՝ կամ Արաբացի ամիրայից կամ բնիկ իշխանաց ձեռք մնացին. ինչուան որ Վասիլ Մակեդոնացի կամ Արշակունի թագաւորեց 20 տարի (867-886) և բաւական զօրութիւն և փառք կայսերութիւնը կանգնեց։

Այս անձը հարկաւոր է քիչ մ'աւելի ճանչնալ թէ Աշոտոյ ժամանակակից ըլլալուն, թէ հայազգի ըլլալուն և թէ գործոյն համար։ Այս առեն Յունաց և Հայոց մէջ քանի մը տեսութիւնք իրարու նման երկու իշխանապետ և երկու հայրապետ եղան. և իւրարու հետ գործակցութիւն

այլ ունեցան. Վասիլ և Անշոտ (857-886), Փոտ և Զաքարիա (864-875)։ Վասիլ՝ ըստ ոմանց մեր պատմչաց՝ Տարօնոյ կողմերէն էր, բայց հաւանօրէն էր 'ի Մակեդոնիոյ, և 'ի հօրէ կամ 'ի մօրէ Արշակունի Հայերէն, զոր կայսերքն Յունաց այն կողմերը բնակեցուցեր էին։ Յոյնք շատ զարմանալի բաներ կու պատմեն ասոր ծննդեան, աղայութեան, ուժին և քաջութեանց վրայ, և կայսր ըլլալու գուշակութեանց. ստոյգն այս է՝ որ ազէկ կրթուած, կորիճ, զգօն և բարեպաշտ մարդ էր. և խելքով ու քաջութեամբ յառաջացաւ, ինչուան յարքունիս. բայց անզգամ և մոլի կայսեր մը պաշտօնեայ ըլլալով՝ ստիպուեցաւ երբեմն անոր կամաց և գործոցն այլ հեռևիլ. որ իր համբաւոյն մեծ աղտ է. զոր և աւելցուց՝ զկայսրը սպաննելով և քանի մը ուրիշ սպանութեամբք այլ։ Բայց յետոյ արդարասէր կառավարութիւն, յաղթութեամբք, շինութեամբք, գեղեցիկ օրինօք և գրաւոր խրատուք այլ՝ նշանաւոր կայսերաց մէկն եղաւ։ Գլխաւոր գործոց մէկն այլ է՝ Փոքր Հայոց մէջ բռնացած Պօլիկեան կամ Մանիքեցի ազանդաւորները ջնջելն, հեռերնին անձամբ պատերազմելով և ուրիշ զօրավարաց, որով հետև թշնամիքն այլ զէնք կու գործածէին։ Մէկ նշանաւոր գէպքն այլ եղաւ Փոտայ հետ յարաբերութիւնն։ Այս անձին ծանօթութիւնն այլ հարկաւոր է մեզի. Վասլի նախորդ Գինով Միքայէլին առեն, իր քեռին Վարդ՝ ուզածին պէս կու կառավարէր զնա և տերութիւնը, հանդերձ անկարգութեամբք և զեղխութեամբ. որոյ համար յանդիմանուելով 'ի Ս. Իգնատիոս հայրապետէն Կ.Պօլսի՝ ոխացաւ, և աւծուէն ձգելով՝ աքսորել տուաւ. անկէ աւելի անակնկալ կերպով՝ տեղը դրաւ իր խնամիներէն մէկը, որ տէրութեան դիւանապետն էր, և ժամանակին ամ-

նահմուտ անձն և ճարտար գրիչն կու սեպուէր. զոր և աշխարհական վիճակէն՝ չորս օրուան մէջ բարձրացուց 'ի գահ պատրիարքութեան Կ.Պօլսոյ, յամին 857. այս էր Փոտ։ Սորոնման և ասկէ շուտ՝ երկու տարի առաջ այլ 'ի Հայս. Զաքարիա՝ իր արժանեաց և գիտութեան համար՝ մի և նոյն օրուան մէջ յաշխարհական վիճակէն բարձրացաւ ինչուան 'ի ձեռնադրութիւն կաթուղիկոսութեան Հայոց. որ և Յովհաննէս իմաստասիրէն ետև († 728) առաջին մատենագիր և ժողովարար հայրապետ է։ Այս երկու զուգակցաց մէջ՝ որչափ որ Աշոտ վերհագոյն կ'երևի քան զՎասիլ անարատ քաղաքավարութեամբը, այնպէս Զաքարիա քան զՓոտ. եռքինս գիտութեամբն անհամեմատ վերագոյն էր քան զմեր հայրապետն, իսկ խորամանկութեան գործովքն անհամեմատ վար քան զաթոռն՝ յոր նստաւ բռնութեամբ։ Շատ զարմանալի է՝ որ Փոտ չանաց Հայոց և Յունաց եկեղեցւոյն միութիւնը հաստատել ուղղափառապէս, յեռոյ իր եկեղեցին զատեց ընդհանրական եկեղեցւոյ միութենէն։ Յայտնի են բազմաց իր գործքերն, զոր չկրցաւ առաջ տանել Վասիլ տաեն, որ 'ի թագաւորելն՝ վռնատեց զնա յաթոռոյ և դարձուց զՍ. Իգնատիոս. բայց երբ սա վախճանեցաւ (878), Փոտ խորամանկութիւն շահեցաւ զսիրտ Վասիլի. որ թերևս իր սպանութ 'ի կայսրութի եղնելուն վրայ միշտ վախնալով, կ'ուզէր եւել քան զեւել համոզել ժողովուրդն իր օրինաւոր ըլլալուն, մանաւանդ իբրև Արշակունի ցեղին սերունդ։ Այս տկար կողմը գիտնալով Փոտ՝ քովէն պատմութիւն մը հնարեց, հին յունարէն ձեռագրի մը մէջ գրեց հին ձևով հին մագաղաթի վրայ, գուշակելով 'ի նմա թէ Արշակունեաց ցեղէն թագաւոր մը պիտի գայ այս տաեն, այս անուն, և այս բանիրս պիտի ընէ, զոր արդէն ըրած

էր Վասիլ. գիրքն այլ անոր գրաբան մէջ մատուց՝ իր մէկ համախոհին ձեռքով, որ և հաւատացուց կայսեր, թէ զայն կարդալու և մեկնելու համար՝ Փոտէն յարմար մարդ չկայ։ Դարձաւ Փոտ յաքսորանքէն, կարդաց իր մարգարէութիւնը, ինքն իրեն մեկնիչ ըլլալով. իմացուց որ այն գրուածը բոլորովին յարմար էր Վասիլի, ինքն էր գուշակեալ Արշակունին՝ Հայոց թագաւորաց ցեղէն, որք պայազատելու առեն՝ թագը կ'առնուին ի գրաբառնեաց նահապետէն. Վասիլ այլ գոհութեամբ կառարեց այս բանս, ինչպէս յետոյ պիտի տեսնենք. և Փոտ նորէն նսաւ յաթոռ հայրապետութեան, ինչուանոր մեռաւ Վասիլ. բայց որդին՝ Լեւոն Իմաստասէր՝ մէկէն ձգեց զՓոտ յաթոռոյն, և աքսորեց Հայոց վանք մը, ուր և մեռաւ (891)։

Դ

Յունաց կայսրութեան և Հայոց յարաբերութեան վիճակը իմանալնէս եաւ, դառնանք Արաբացւոց ամիրապետութեան, որք քաղաքական օրէն աւելի առընչութիւն ունեցան ընդ Հայոց. և իրենց գենպետին (Մահմէտի) մահուընէն քիչ տարի եաւ՝ մտան 'ի Հայս. ուր Պարսից բռնութիւնն տկարանալէն եաւ՝ կայսերք աւելի ջանային տարածել իշխանութիւնին, հանգերձ եկեղեցական վարդապետութեամբք։ Այս բանիս տհաճելով ժամանակին քանի մի գլխաւոր և զօրաւոր Հայ իշխանք, երբ յանկարծ նոր և զօրաւոր թշնամի մ'այլ տեսան (զԱրաբացիս), նախ մէկ մը զէնքերնին ասոնց վրայ փորձեցին, բայց յետ անօգուտ քաջութեանց և յետ կշռելու թշնամւոյն ոյժը՝ յանձն առին հնազանդելու. ընդունեցան անոնց ոստիկանը, և իրենց մէջէն իշխա-

նապետ կամ հոգաբարձու մը. այսպէս ըրաւ Սմբատ բաց Բագրատունին այլ Թոռն Սմբատայ Բագրատայրթի։ Յոյնք շատ ջանացին բայց չկարցան վռնտել զԱրաբացիս և նուաճել զՀայս. մերոնք ինչուան �։ դարուն վերջը բաւական հանդարտ մնացին ոստիկանաց իշխանութեան տակ. բայց Ը դարուն սկիզբն՝ անզգամ և ագահ հրամանատարք սկսան չարաչար նեղել զՀայս. ասոնք այլ զայրացեալ՝ ջարդ մը տուին Արաբացւոց (՝ի Վարդանակերտ), որ մեր պատմութեան մէջ նշանաւոր գէպք և Թուական մ՝եղաւ. ինչպէս որ Արաբացիք այլ քիչ մ՝ետքը (705) խորամանկութեամբ աւելի մեծ մեսաս հասուցին Հայոց, գլխաւոր իշխանները այրելով Նախջևանի և Խրամայ եկեղեցեաց մէջ, ուր ժողովեր էին՝ իբր դաշինք գնելու պատճառաւ. և այս տարին այլ Ա լարացւոց պատմութեան մէջ անուանի եղաւ Կրելի դարի ըսուելով. տպրած իշխաններէն և տոնոց զաւակներէն շատն ալ բռնեցին՝ ամիրապետին խաւրեցին. և տան տարի նեղելէն ետև Թէ զանոնք Թէ մեր աշխարհը, գերեալները դարձուցին և դիւրութիւն ըրին, քառասուն տարուոյ չափ, Յունաց և Հունաց հետ պատերազմի զբաղելով։ Այս առեն Բագրատունիք նորէն սկսան պայծառանալ և Աշոտ պատրիկ իշխանապետ եղաւ (733). գժբաղդաբար Մամիկոնեան իշխանք նախանձելով ջանացան անոր տեղ անցնիլ, և վերջապէս անարգ կերպով և պժգալի գործով մը զրկեցին զԱշոտ (749)։ Ամիրապետն լսելով Հայոց խլրտումը խաւրեց զեղբայրը՝ Աբդելա (750), որ հանդարտեցուց և դրաւ իշխանապետ զՍահակ (753) հօրեղբայրն Աշոտայ, որուն յաջորդեց որդին Աշոտ. իսկ անոր հօրեղբօրորդւոյն՝ Աշոտ պատրիկին՝ յաջորդեց իր որդին Սմբատ՝ իբրև ապարսպապետ Հայոց։ Քանի մը տարի հանդար-

տուրքեն վերջը՝ շուտ շուտ ոստիկաններ փոխուելով՝ ի Հայս, ամենքն այլ կու ջանային անկէ բան մը փրցընել, աւարով դառնալ, կեղեքէին կողոպտէին. բնականապէս Հայք այլ նեղեալ յուսահատեալ՝ ոմանք փախչիլ մտածէցին, ոմանք այլ բռնութեամբ բռնութիւնը վանել. ասանկ մեծ գործոյ համար դիւրին էր տարաձայնիլ և երկու բաժնուիլ. ինչուան Աշոտ իշխանապետն և Սմբատ սպարապետն իրարմէ զատուեցան կարծեաք. Սմբատ ապստամբողաց կողմը բռնեց, Աշոտ ձեռքը քաշեց և առանց մատնելու հայրենիքը՝ հաւատարմութիւն պահեց ունոնց՝ ուսկից իշխանապետ դրուած էր։ Այս գործս ինչպէս առաջ գնաց և ինչ վերջ ունեցաւ, գուպէտք է յիշել, Հայկակ. Բագրեւանդայ ըլրոց վրայ ժուռ գալուդ՝ պատմեր եմ քեզի [1]։ Այս գեղեցիկ ծաղկաւէտ հովտաց արեւամբ ներկեալէն եռաւ, նորէն ոստիկան եղաւ Եկեղեաց Իպն-Իսահիա, որ քանուերկու տարի առաջ Արդլայի հրամանաւ՝ զՍահակ իշխանապետ դրեր էր, և երկրորդ անգամ խաղաղութեաց զՀայս. Բագրեւանդայ կռուոյն մէջ ընկած Սմբատայ տեղ՝ անոր որդին Աշոտ Մահակերը կարգելով սպարապետ. որ օրինաւոր իշխանութեան հպատակ, բայց անօրէն զրկողաց գլխահար էր. և քանի մը Արաբացի բրնաւոր զօրավարներ ու զօրագունդեր ջարդեց, որք իր երկար իշխանութեան տեսեն՝ (776-819) Հայաստանի զանազան կողմերը շատ սաստիկ ու. աւեր կ'ընէին. ասոնցմէ էին երկու Խազմ կամ Խուզիմա, Հայր և որդի, մէկն նահատակիչ հարազատ Արծրունի եղբարց՝ Ս. Սահակայ և Համազասպայ՝ (յամին 785), միւսն նահատակիչ Ս. Սահակայ և Յովսեփայ (յամին 801)։ Նոյն

1 Տես Ապրիլի 25։

առեններն Ջահապ անուն ամիրայ մ'այլ՝ Արծ-
րունեաց ուրացող Մեհրուժան իշխանին փեսա-
յացեալ՝ 'ի Դուին բռնացեր, և Արշարունեաց
գաւառին մէկ մասին այլ տիրէր, (որ Բագրա-
տունեաց սեպհական էր,) աւելի այլ առաջ գալ
կ'ուզէր. Աշոտ՝ իր Շապուհ եղբօրը օգնութեամբ
վանեց անոր զօրքը, և տիրեց ուրիշ կողմերէն
զատ՝ Շիրակայ գաւառին այլ, ուր Անի բերդը
ամրացուց և ընտանիքը հոն դրաւ, որ յետոյ իր
ցեղին թագաւորանիստ քաղաք եղաւ։ Գանի մը
տարի վերջը նորէն Ջահապեանք եկան 5000 զօ-
րաք յարձակելու 'ի Տարօն, ուր միւս Բագրա-
տունի Աշոտն կ'իշխէր. Աշոտ Մասակեր 500 մար-
դով վանին հասաւ՝ 3000ը ջարդեց, մնացեալը
ցրուեց. եղբայրն այլ Դրնայ վրայ յարձակե-
ցաւ, և քաղաքն առին։ Առնոյ վրէժն ուզեց առ-
նուլ Հօր ոստիկանն, որուն 4000 զօրաց գէմ ե-
լաւ Սմբատ Տարօնոյ իշխանն (որդի Աշոտոյ իշ-
խանապետին) 500 մարդով, օգնութեամբ Սիւ-
նեաց իշխանին. քսան երկուքն այլ մեռան պատե-
րազմին մէջ (819-20)։ Նոյն աեն Սևադա Ջա-
հապեանն այլ Աշոտ Մասակերի և Շապհոյ հետ
կը կռուէր. այս պատերազմիս մէջ ընկաւ քաջն
Շապուհ. իսկ եղբայրն՝ սպարապետն՝ յետ եր-
կու տարուոյ խաղաղութեամբ կեանքը կնքեց, և
տեղն անցաւ (820) Սմբատ Ապէ-Աբաս Խաղբատեան,
հայր մեր Աշոտ թագաւորին, որ Սևադայի հետ
հաշտութիւն ըրաւ, և հաստատուեցաւ իր սպա-
սպարապետութեան պատուոյն մէջ։

Այս տուեններս ամիրապետաց տիրապետու-
թիւնն սկսեր էր տկարանալ, պատճառաւ իրենց
զնդմանց, և անկիրթ Թուրքեր ընտրելու իրենց
պաշտօնեայ և պահապան. կամաց կամաց զօրա-
ւոր իշխանք սկսան գլուխ քաշել։ Ոստիկանաց
բռնութիւնն այլ տկարացաւ 'ի Հայս. Մուգաս.

սէմ ամիրապետն վախնալով որ Հայք բոլորովին չմիաբանին Յունաց հետ, Հոլէն սպանուած Սըմբատ իշխանապետին որդին՝ Տագարատը՝ իր հօրը տեղ գրաւ տէր Տարօնոյ և իշխանաց Հայոց (839). զոր և իր յաջորդ խալիֆայն (Վաթէք-Պիլլահ) հաստատեց նոյն պատուոյն մէջ (843)։ Այսպէս ասոր իշխանապետութեան և Սմբատայ սպարապետութեան ատեն երեսուն տարուոյ չափ, մինչև ցկէս Թ դարու, բաւական վրայ եկան Հայոց իշխանք և սկսան ակնածելի ըլլալ ամիրապետաց. որք Թոյլ տուին անոնց, ինչուան որ մէկ կողմէն Յունաց հետ հաշտութիւն ըրին (840), մէկ այլ կողմէն իրենց տեղ՝ գրգռեցին Փոքր Հայոց Պոլիկեանները Յունաց դէմ, որ քսան և հինգ տարի աշխատցուցին Լեոնի և Վասիլի զօրավարները և զնոյն ինքն Վասիլ (848-873), և ամիրապետը ապահովցուցին այս կողմանէ։

Այսպէս քիչ մը դրսէն խաղաղեալ, ամիրապետք ուժերնին մարելու ատեն՝ վերջին և ահեղ փորձ մ'ըրին Հայոց նոր արծարծած ոյժն այլ բոլորովին մարելու. յիրաւի մեծ խուսար հասաւ Հայոց, բայց այս վտանգէն ելլաւ առաջինեան պայծառ լոյս մը։

Վերը յիշեցինք որ խալիֆայից վարչութեան շփոթութեան և անկարգութեան մէկ պատճառն այլ էին իրենց նորընտիր Թուրք օգնականները. ասոնք Թաթարստանի կողմերը պատերազմի մէջ բռնուած կտրիճներ էին, զոր խալիֆայք իրենց Թիկնապահ ըրին, վրանին վստահանալով. և ոչ միայն զինուորութեան՝ այլ և արքունեաց մէջ վերակացութեան և պաշտօններու հասուցին յաջողները։ Ասոնք այնքան համարձակեցան, մինչև երբ Վաթէք խալիֆայն մեռաւ (847), իրենք նըստուցին յաջորդ անոր եղբայրը Մոդավվէքքէլ-Ճեաֆար (զոր մեր պատմիչք Ջաֆր կոչեն). ի-

բարու արժանի ընտրոգքն և ընտրեալն. մէկն ա-
նուրէն անգութ բռնութեամբն, մէկալնդ անոր
յարմար գործիք. այնչափ այլ յարմար, որ հետ
15 տարուոյ՝ անոր որդւոյն հետ միաբանած՝ սպան-
նեցին զնա։ Ճեաֆար անգթութեամբն՝ խալի-
ֆայից Ներոնն ըսուեցաւ. արքունեաց մէջ, վե-
րոյիշեալ պահապաններէն զատ, չորքոտանի վայ-
րենի գազաններ այլ ազատ թողուցեր էր՝ որ յան-
կարծ իր պաշտօնէից գիմաց կ'ելնէին, և կամ լե-
ղապատառ կամ մարմնապատառ կ'ընէին. բայց
տեսնելով որ անոնք կ'ուշանան, օր մը բոլոր մե-
ծամեծները մէկ տեղ ժողովեց, և իր թիկնապա-
հաց գլուխ կենալով՝ զամենքն այլ թրէ անցուց։
Այսպէս իր մերձաւորները պատառոյ մը հետա-
ւոր հպատակաց վրայ ինչ գութ կրնար ունե-
նալ։ — Արիմն և գէպքն լաւ կ'իմացընեն. և
հարկ է ազնուական պատկեր մ'այլ տեսնենք մեր
աշխարհին մէջ, որ մեր Աշոտոյ պատկերը լաւ մը
լուսաւորէ. թէ և նոյն իսկ այն սևանկար պատ-
կերն այլ իր լուսափայլ կողմերն ունի։

Զափր ամիրապետութեան աթոռը նստեցին
քիչ ետքը (848) Հայաստանի ոստիկան խաւրեց
զԱպուսէթ - Մուհամմէտ - Էր-Ռուֆի ըսուածն,
երբ Բագարատ իշխանապետ էր 'ի Տարօն. որ և
խորագիտութեամբ կանխելով քան զԱպուսէթ՝
անոր առջև խաւրեց իր մեծամեծներէն մէկ քա-
նին ծանր և ազնիւ ընծաներով, և յորդորեց որ
չաշխատի առաջ գալու, եթէ միոքն հարկերը
ժողովել էր, ինչպէս որ կ'իմացընէր. նա այլ գի-
տելով և իմանալով որ Բագարատայ քով բաւա-
կան ոյժ և օգնական կայ (Արծրունեաց հետ գաշ-
նակցութեամբն), գոհութիւն ցրցուց և հարկերը
առնելով հանգերձ ընծայիւք առ խալիֆայն՝ յետ
դարձաւ. և յաջորդ տարուան հարկապահան-
ջութիւնը յանձնեց Արզն (Խարզան) նահանգին

կուսակալին որ կ'ըսուէր Մուսէ-Իպն-Զօրահա։ Ինքն գարձաւ առ Զափիր, և բնրանով ամբաստանելէն զատ՝ իրաւ կամ սուտ թղթեր այլ առաւ, այն կողմերու ամիրաներէն գրուած՝ ընդդէմ Բագարատայ և Աշոտոյ Արծրունեաց նահապետի։ Ոչ միայն Զափիրայ հաճոյ էր այս ամբաստանութիւնս, այլ և Մուսէի, որ արդէն Բագարատայ թշնամի էր սահմանակցութեամբն. և հիմայ Հայոց հարկապահանջ ըլլալով՝ սկսաւ խրոխտալ, հարկը ժողովելու անուամբ, բայց իրաք վրէժ առնելու։ Զմեռ առնն (849) յանկարծ բազմութիւն զօրաց մտաւ 'ի Տարօն, և Բագարատայ ձմերոց քաղաքը (Մուշ) պաշարեց. Բագարատ շուտով ազատաւոր գնապան խաւրեց Աշոտոյ Արծրունեաց նահապետին, որ իր տոհմայնոց և ազատազդի պաշտօնէից ձայն տալով՝ վաթսուն և աւելի իշխան ժողովեցան, գնացին 'ի Տարօն, երբ Բագարատ սոխպուած էր Մուսէի գէմ մինակ ելնելու. յարմար առենին հասնելով՝ զարկին ցրուեցին զօրքերը, բանակը կողոպտեցին։ Մուսէ ամօթով տեղը գառնալով՝ նոր ամբաստանութի գրեց խալիֆային. այնպէս այլ Արծրունեաց երկիրը գնացող հարկահանք, որ իրենց անիրաւութեան համար վռնտուած էին յԱշոտոյ և պատերազմելով յաղթուած (849-50)։ Այսպէս լուրեր բաւականէն շատ էին Զափրի՝ չարաչար պատժելու զՀայս. և պատժողն այլ 'ի հարկէ կու վայլէր որ ըլլար Ապուսէթ. որ և ինքնին այնչափ կու փափագէր վրէժխնդրութեան՝ որ արտորնօք Հայաստան վազելու առեն՝ Հաթեցաւ Ասորւոց կողմերը. և տեղը դրուեցաւ (851) իր որդին Սուսուֆ։ Ամիրապետն՝ ասոր կարիճ ձիաւոր զօրաց գունդ մը տուաւ, և խոստացաւ այլ՝ որ եթէ նուաճէ զՀայս՝ ժառանգութեամբ իր ցեղին թողու անոր ոստիկանութիւնը։ Սուսուֆ

մեծ պատրաստութեամբ և յուսով կոխեց նախ Աշոտոյ երկիրը, և անոր մօրն ազաչանք՝ միայն պատանդներ առնելով՝ նլաւ անկէ և եկաւ 'ի Խլաթ. հոն կանչեց գրով զԲագարատ իշխանապետն՝ խոստանալով զինքը իրեն տեղ վերակացու դնելու, վասն զի այս երկրին ցուրտը՝ ինձի չատ մեծ կ'ընէ կ'ըսէր, և չեմ կրնար հոս ուշանալ։ Բագարատ խաբուելով եկաւ իր մեծերով և եկեղեցականօք. ամենքն այլ ընկան յորդայթ և յերկութի կապանս, և զրկուեցան առ ամիրապետն. իսկ Նուսուֆ փութացաւ տիրեց Տարօնոյ, բոլոր երկիրը տակնուվրայ ըրաւ, և ժողովրդեան կէսը փախուց, կէսն գերի ըրաւ որ առնի յԱսորեստան, առ ժամն պահելով 'ի Մուշ՝ ուր ձմեռը կ'անցուներ. ապասելով դարձեան՝ որ Տարօնոյ հարաւակողմի լեռնայնոց վրայ յարձակի, որք են Սասունցիք և Խութեցիք։ Բայց անոնք իրմէ շուտ չարժեցան, և նիզակնին ցցած լեռներէն վար թափեցան. պաշարեցին, առին Մուշ քաղաքը, թշնամիները ջարդեցին, գերիները արձակեցին, Արծրունեաց պատանդները յետ դարձուցին, առարը թաղեցին. հազարապետյանալ Նուսուֆն այլ գոտան՝ որ վոխէն փախած և Բագարատայ շինած Աշոտ Ա. Փրկիչ հոյակապ եկեղեցւոյն գմբէթին պատին մէջ պահուրտած էր. հոն ուղտոնենց զնա նիզակաւոր մը։

Ն

Երբ այս անակնկալ լուրն հասաւ Ջափրի, այլ Հայաստանի բոլորովին ջնջման վիճակը առաւ, ամեն դիւ կորիճ պատերազմողներ կանչեց, մասնաւորապէս Արտրացի և Պարսիկ վարպետ աղեղնաւորներ և հիծեալներ, և մեծ զօրադունդ կազմելով յանձնեց իր գլխաւոր պաշտօնեից մէ-

կուն, որ քաջութեամբ, խորագիտութեամբ և իմաստասիրութեամբ անուանի էր, և այլ աւելի հռչակեցաւ 'ի Հայաստան. խալիֆային սիրելի պատհապանաց ցեղէն էր սա, և կոչուէր Բաղ-էշ-Շարադի կամ Թարա-Բաղ, Էլ-Փեդէր (այսինքն Սև-ցուլ, Մեծ կամ գոռոզ)։ Իրեք չորս տարի կեցաւ 'ի Հայս (852-5), բայց իրմէ առաջիններուն շատ երկար տարիներու մէջ չկերցածը՝ 'ի գլուխ տարաւ։ Նսիբինեանի և Խրատի օրերը կերպով մը նորոգեց. նպատակն էր Հայոց ամեն ինչխանաւոր, զօրաւոր անձինքը կամ ապանել կամ գերի տանիլ, կամ հաւատքէն ուրացընել. և ինչպէս կ'ըսէ մեր ժամանակագրաց մէկն համառօտիւ [1], «Պալեալ զամենայն իշխանս և ազատս Հայոց՝ հսպան, զկէսն մարմնով և զկէսն հոգւով». բայց մենք կըրնանք աւելցընել թէ ոմանք հոգւով այլ մարմնով այլ ապրեցան. և շատ դիւրագին և թեթեւ չըրին Բուղայի սրիւնոտ ու սև յաղթանակը. որ՝ բաց 'ի գերեաց, 30,000 մարդ կ'ուրդեց կ'ըսեն 'ի Հայս, (զատ 'ի Վրաց). իսկ իրեններէն՝ այլ աւելի կ'ուրդուեցան։ Թէ մարմնաւոր քաջութեամբ և թէ հոգևոր նահատակութեամբ, շատ նշանաւոր և անմահանալի յիշատակներ թողին Հայք այս պարբոյսիս. զոր 'ի գիր անցուցեր էր Շապուհ պատմիչն, մէկ մասն այլ կու պատմեն Յովհան կաթուղիկոս և Թոմաս սրծրունի. որոց գլխաւոր գէպքերը միայն համառօտիւ յիշեմ, որ լաւ իմացուի Հայաստանի վիճակը Աշոտոյ առեն։

Բուղա՝ Բաղէշի կողմերէն մտաւ 'ի Հայս, և գնաց 'ի Խլաթ, որ շատոնց ամիրայից աթոռ էր եղած. նախ գունդ մը խաւրեց Խութեցոց վրայ, զոր շատ դժարութեամբ հազիւ կրցան նուաճել.

[1] Մխիթար Այրիվանեցի։

մեծ գունդ մ՚այլ առաւ Ժիրաք անուն զօրավարին և զրկեց Արծրունեաց վրայ. սա ինչուան որ հասաւ ՚ի Վան՝ Ճամբուն վրայ կրցածը աւարեց, թալանեց. իրեններէն այլ շատ մարդ կորուաւ։ Եւ շատ Արծրունին իր ազատները ժողովեց՝ Նկան ըսուած ամուր քարաբերդը քաշուեցաւ (՚ի Թոռնաւան գաւառի Սրասխայ մօտ). զոր եկան պաշարեցին Ժիրաք և Բուղա՝ բոլոր իրենց գնդերովն, (որք աւելցեր էին Հայաստանի մէջ եղած ամիրայից զօրքն այլ, և ամենայն պատերազմական ու պաշարման գործիք և նիւթ ունէին). պաշարեալքն զարհուրած՝ Աշոտէն գաղտուկ թուղթ խաւրեցին առ Բուղա. նա այլ պատանիլեց որ զԱշոտ իրեն տան և իրենք ապահով մնան։ Աշոտ իմանալով իշխանաց վատութիւնը և չկարենալով վախերնին փարատել, կամայ ակամայ գնաց առ Բուղա, որ պատուով ընդունեցաւ զնա առ ժամն. ինչպէս անկէ առաջ ընդուներ էր Մոկաց տէրը՝ Սմբատ Բագրատունի մը. սա ամենէն առաջ ինքնակամ իրեն գալուն համար՝ բռնաւորին սիրտը շահեցաւ, և Ժիրաքայ բռնած գերիները յետ դարձուց. իսկ Աշոտ և անոր որդին Գրիգոր Դիւրենիկ, և ուրիշ գլխաւոր իշխաններ, հանգերձ տիկնամբք՝ իբրև գերի կամ պատանդ խաւրուեցան առ ամիրապետն. նոյնպէս անոր Գուրգէն եղբայրն այլ, որ Բուղայի խաւրած 15,000 զօրքը ջարդելէն ետև՝ ինքնին եկաւ առ Բուղա. իր մայրն այլ Հռիփսիմէ տիկինն՝ կամաւ որդւոցը ետևէն գնաց ՚ի Պաղատ։

Երբ հասան ասոնք և ուրիշներ այլ՝ առաջին բանտելոց քով, ամիրապետն զամենքն այլ կանչեց իր առեանը, և ամենայն զարհուրելի կերպարանքաւ և խօսքերուն յանդիմանեց, սպառնացաւ, մահապարտ վճռեց. միայն ազատութեան ճար՝ մոլիմանութիւնը ցուցընելով։ Յազկերտի առեն

Վարդանանց գիպուածն հոս այլ նորոգեցաւ. և Թէոպէտ Արծրունեաց եպիսկոպոսն Յովհաննէս, որ կապելոց մէջ էր, իր կարգին յաջմամբ պատասխանատուաւ, քրիստոնէից կրօնքը և պատիւը պաշտպանեց. բայց իսալիփայն բարկութեամբ առեանէն ելնելով իմացուց կապելոց՝ որ իր օրէնքին գէմ էր անոնց հետ վիճաբանիլ, կու ծնայ որ կամ հաւատքին ուրանան կամ սպաննուին։ Աղդէն Բագարատ իշխանապետն ուրացեր էր, ըսելով՝ Թէ բռնութեամբ և ակամայ ուրանալն մեղք չէ. ուրիշ շատեր այլ գժբաղդաբար իրեն հետևեցան. իսկ Յովհաննէս եպիսկոպոսն, Գրիգոր Արծրունի իշխան մը և Գրիգոր քահանայ մը, հաստատուն մնալով՝ երկաթակապ բանտեցան, ուր չորս տարիէն մեռաւ իշխանն վկայական անուամբ։

Իսկ Բուզա 'ի Գուբին ձմերելով՝ հոն նահատակեց եօթն կորինթներ, ոլք իրենց գլխաւորին անուամբ (Աստմ Անձևացի) կու կոչուին, և նաև Վարդանանց ժամանակակից նոյնանուն վկաներէն զանազանելով Սրբոյ Աղուանց։ Այն ձմեռ չորս կողմ եղող իշխաններ՝ Հայ և Վրացի՝ իրենց երկրին ամրագոյն տեղուանքը քաշուեցան, ոմանք այլ եկան անմատուր եղան. որոց մէջ գլխաւորն էր Սպարապետն Սմբատ, որ և ազատութիւն գտաւ իր տեղը բնակելու, և երբ պէտք ըլլայ բանակը գալու և առաջնորդելու։ Գարնան (853) գնաց Բուզա Տփխիս քաղաքին վրայ, առաւ այրեց 80,000 հոգւով։ Վրաց կողմէն անցաւ Կովկասի կողմերն այլ նուաճելու, և եկաւ նախ Մանարաց վրայ՝ որ Աղանաց և Վրաց մէջ տեղ բնակէին. զօրաց բազմութեանը վրայ վատահացած՝ սկսաւ կռուիլ. ինն ամիս[1] նստաւ այն տեղուանքը, տան և ինն անգամ պատերազմ-

[1] Ինն օր գրած է Թոմայի Արծրունւոյ գրոց մէջ։

ցաւ սաստկանալէս, շատ մարդ կորուս, ամօթով յետ դարձաւ, մնաց Հայ-Ազուանից երկիրը. ուր Սայի կամ Ալդ-Մուսէ Երիցու-Բերդի անուամբ կարիճ մը Ալցախայ լեռնային կողմերուն կ'ինչխէր. և Մանարաց քաջութենէն սիրտ առած՝ իրենները ժողովեց Քիթիշ լերան վրայ, և պատրաստեցաւ ընդդէմ Բուղայի։ Բուղա հոս այլ նախ յարձակմունքով սկսաւ, յաղթուեցաւ. ապա սկսաւ լեռը կրցած կողմէն պաշարել, և իր զօրաց համար ապաւինութեան բերդակներ շինեց. ամիրապետին այլ լուր խաւրեց, տեղւոյն գծարութիւնը և կարիճ իշխանին յամառութիւնը իմացընելով, թէ ինչ ընէ, թողու եթէ սպասէ։ Խալիֆայէն՝ կռուելու հրաման և նոր զօրք եկաւ, բոլոր բանակով նորէն յարձակեցաւ, և նորէն վռնտուեցաւ։ Տարւոյ մը չափ հոն ուշացաւ Բուղա, քսանևութ անգամ յարձակումներ արաւ, ամեն անգամ այլ յաղթուեցաւ։ Դարձեալ սէջք եղաւ պատգամով խաղաղութեան հրաւիրել. Ապու-Մուսէ յանձն չառաւ Բուղայի հետ խօսիլ, ինչուան որ խալիֆայէն ուղղակի իրեն թուղթ չգայ. երկու կողմէն այլ դեսպան խաւրեցին 'ի Պաղատաս. խալիֆայն թողութեան գիր գրեց Մուսէի, եղածները չեղած սեպելով, և պատուիրեց որ անկասկած գայ իրեն, Բուղայի այլ պատուիրեց որ պատուով ընդունի զնա։ Եւ այնպէս եղաւ։

Բուղա այս կողմերս եղած ատեն՝ նահատակեց զՄուսկաթլ Վանանդեցին, Սողոմոն Սևորդին, Կտհա, և Յոշնան Խուլթեցին՝ որ իր լեռնցոց առաջնորդն էր Բուղայի զօրաց դէմ, և հիմա հոս իր հայրենեաց նման լեռներու և լեռնորդայց գիմաց՝ գերագոյն քաջութեամբ պատկուեցաւ։ Բոլոր այս կողմերս և 'ի Դուին և 'ի Վասպուրական նահատակելոց թիւն՝ աւելի էր քան զ250. զոր

ամենքը մեկէն ոտնել հրամմեց կամիջուղկոսն, Յովհաննէս Ե, մեհեկանի ամուռն քսան և հնգին, (որ է երեք մարտի)։

Ապու-Մուսէի հետ պատերազմելու սուրն՝ Բուղա ուրիշ ազատ իշխանաց այլ պատգամ խաբերեր էր որ գան իրեն հնազանդին. ոմանք հաւանեցան, ոմանք մատնուիթեամբ ձեռք ընկան. ոմանք այլ երբ տեսան Ապու-Մուսէի յանձնառութիւնը, յոյսերնին կարեցին պատերազմով գէմ կենալու կամ փախչելով ազատելու։ Այս կամայ կամ ակամայ նուաճեալ իշխանաց դիւաւորքն էին՝ Սիւնեաց երեք մեծ իշխաններն, Գրիգոր, Փիլիպպէ և Վասակ. Խաչենոյ տէրն Աղբերներսէհ, Դարիմանայ տէրն Կարիճ, Սևորդեաց տէրն Սահմանոս Կոն (որ և խոստովանութեամբ մեռաւ 'ի Պաղատատ իր որդւոյն հետ), Գրիգոր Մամիկոնէից տէրն, Սահլ Շաքէոյ տէրն, (Պապէք ապստամբը բռնողն). գրեթէ չմնաց ուրիշ ազատ գլխաւոր իշխան մը։ Այսպէս Բուղա աւելի խորամանկութեամբ քան քաջութեամբ իր կամացն հանելով՝ գնաց 'ի Պարտաւ ձմերելու, բոլոր բռնած իշխանները մեկ տեղ ժողովելով։ Սուտ խոստմունքներով և պատուով քիչ մը առեն խաբիրբեց. գիշեր մ'այլ յանկարծ իրենց հանգըստեան և քնոյն առեն՝ շղթաներով կապուած գոտան զիրենք. երկրորդ օրը ճամբայ գրուեցան գէպ 'ի Բաղատատ. Սմբատ սպարապետն այլ անոնց հետ, որուն մեծ մեծ յոյսեր կու տար Բուղա։ Ինքն այլ բռնած որսերը քշելով գնաց իր արժանաւոր ամիրապետէն վարձքն առնուլ. տեղը թողլով Իբրահիմ անուամբ կուսակալ մը։ Իսկ Հայոց իշխաններէն՝ միայն Գուրգէն Ապուսէլէհի որդի ըսուած Վասպուրականի գլխաւոր ազատներէն մեկն՝ Բուղայի հաւանութիւն այն նահանգին տէր գրուեցաւ, զոր արդէն քաջութեամբ՝

անոր թոգած զօրքերու ձեռքէն առեր էր. իսկ Հայոց թշնամիներն մէջ թոգուց Սմբատ սպա. բապետն որդին՝ զմերն ԱՇՈՏ։

Զ

Բագրատունի թագաւորաց մէջ միայն մեր Ա. Աշոտոյ կենաց չափն կու յիշուի, եօթանասունու. մէկ տարի. վախճանած տարին այլ նշանակուած ըլլալով՝ ծնած կու հանգիպի Քրիստոսի 820 թը. ւականին. այն տարին՝ յորում սպանուեցաւ Լեւոն Հայկազն կայսրն 'ի Կ. Պոլիս, յորում 'ի Հայս Սմբատ իշխանաց իշխանն և Սահակ Սիւ. նեաց նախարարն Հոլոյ հետ պատերազմելով՝ ընկան կռուին մէջ. յորում (կամ տարի մը ետեւ) մեռաւ մեր Աշոտոյ պապն՝ Աշոտն Մոսկեր. ո. րոյ ժառանգն Սմբատ Խոստովանող՝ հօրը մա. հուանէն քիչ առաջ՝ առեր էր 'ի կնութիւն Տա. րօնոյ տիրոջ և Հայոց իշխանապետ և իր անուա. նակից Սմբատայ գուստրը. յորմէ ծնեալքն են, (մեր գիտցածներն) Լոռս մանչ և Երկու աղջիկ, նախ մերս Աշոտ, յետոյ Աբաս [1], Շապուհ, Սու. շիզ. Ա.... կին Գուրգենայ իշխանի Գուգարաց, Ա... տիկին Վրաց։ Սմբատ իր հօր եռանգուն կարձութենէն ուելի խազաղասէր աշխարհալի. նութիւնը ժառանգեց. անոր համար հօրը թշնա. մւոյն՝ Զահապետան Սեւադայի հետ հաշտութիւն ըրաւ և թոգուց որ նստի հանգիստ 'ի Դուին. ինքն այլ անկէ ճանչցուեցաւ ապարատպետ Հայոց, ինչպէս իր մանկահասակ աներձագն այլ՝ Բագ. րատ՝ տէր Տարօնոյ և նախիջեւան Հայոց։ Սպա.

1 Աբաս անունէն կարծեն սմանք հօրն Ապլաբաս մկա. նունը, իբր թէ հայր Ա[illegible]ոյ. բայց ինչպէս ոչ Աշոտոյ՝ այլ Աբասայ հայր կոչուի.

բասկեան և իշխանապետ՝ խնամիք և բարեկամք էին, բայց Բագարատ ոչ Սմբատայ խոհեմութիւնն ունէր և ոչ բարեպաշտութիւնն, և շատ տարի վերջը (840) մեղերնին տհաճութիւն մը ծագեցաւ՝ Բագարատայ յանդուգն գործով մը. տա որ չարալեզու մարդիկ ամբաստանեցին այն առեղծուան կաթողիկոսը՝ Տէր Յովհաննէս Ե, վրան անարժան բաներ ըսելով, որոց առանց քննութեան հաւատալով Բագարատ՝ հրամանց որ իրեն կաթողիկոսութեան պատիւ չտան. սա այլ թոզուց աթոռը և վանք մը քաշուեցաւ։ Սմբատ և Սիւնեաց տէրն Սահակ՝ այս բանիս դժուարած՝ յետ դարձուցին զկաթողիկոսը և պատուով նստուցին աթոռը. Բագարատ իբր արհամարհուած՝ կու սպասէր յարմար առթով իր իշխանութիւնը ցուցընել. բայց ուրիշ փորձանքներ հանդիպեցան իրեն, Ապուսէթի ոստիկանութեան առեն, ինչպէս առաջ յիշեցինք։ — Սմբատայ սպարապետութեան առեն, որ և Աշոտոյ կենաց կէսն է (821-855), իր խոհեմութեամբն Հայաստան 'ի խաղաղութեան վայելեց, գոնէ այն տեղուանքն՝ ուր կու հասնէր իր առաջնորդութիւնն, կամ Դուռնայ ոստիկանին իշխանութիւնն. վասն զի Հայոց սահմանակիցք՝ Աղուանք, Սպերպատական և Միջագետք՝ ուրիշ ոստիկաններ և ամիրաներ ունէին, որ այն կողմերը կու նեղէին. ասոնցմէ էր Սևադա մ՚այլ, Աւառանշան? ըսուած, որ Պարտաւէն (Աղուանից մայրաքաղաքէն) ելլաւ զօրքով ասպատակեց Սիւնեաց երկիրը, և հին իշխանանիստ Շաղատ աւանին տիրեց. Վասակ Սիւնեաց տէրն՝ բանաւորին դէմ աւելի բռնագոյն մը գտաւ, զՊապէք մոլորեցուցիչ ապստամբն 'ի խալիֆայէն, զոր պատմիչք մեր կոչեն Բաբ կամ Բուրան. առանց հետեւանքը մոռանալու կանչեց, և ոնոր օգնութեամբ վռնտեց

զԱՆադա. ինքն այլ քիչ ատենէն մեռաւ, երբ այն վանգաւոր օգնականն գնա իր երկիրն էր. որ և Վասակայ ապջիկը կին առաւ և անեղոյ իշխանութիւնը սկսաւ նուաճել. Սիւնեաց Բաղք գաւառին կորիճներն ոտք ելան, բայց բաւական չեզան գէմ կենալու այն բռնաւորին, որ քսան տարի ամիրապետաց տէրութիւնը սասանեցուց, և իրեն հետ ընկնողներէն 150,000 մարդ ջարդեց. հոս այլ շատ կոտորածներ ընելով՝ տիրեց բուն Սիւնեաց տէրութեան. անկէ անցաւ (827) Սևանայ ծովուն եզերքը իշխող Հայկազն Սիւնեաց երկիրը, հոս այլ 15,000 մարդ կոտորեց, և տասն տարի այլ այս կողմերը և հարաւային Հայոց ամուր տեղուանքը ընկնալով՝ խալիֆային խաւրած շատ զօրավարները ջարդով յետ դարձուց։ Մեծ վարձք խոստացուած էր զինքը սպաննողին կամ բռնողին. որ տրուեցաւ քսջ Հայ-Աղուան երիտասարդ իշխանի մը, Սահլի Սմբատեան, որ նախ իր հայրենեաց՝ Աղուանից, այսինքն Արցախ և Ուտի նահանգաց Հայոց՝ ասպատակները ջնջեց, յետոյ ամիրապետին խաւրած Աւֆշին զօրավարին յորդորմամբ՝ Բաբանայ եռևէն ընկաւ, վերջապէս բռնեց (837) այն զարհուրելի բռնաւորը, և տաւ վարձք 660,000 ֆրանգի չափ։ Այս այն կորիճն է՝ զոր յետ իբր քսան տարուայ ուրիշ մեծամեծ իշխանաց հետ Բուղա խաւրեց առ ամիրապետն 'ի Բաբելոն, ինչպէս քիչ մ'առաջ յիշեցի։

Այս պատերազմերուս մէջ Սմբատ սպարապետն և իր որդին Աշոտ այլ մասն ունէին։ — Մեր հմմայ ունեցած պատմիչքն չեն յիշեր. բայց այսչափ կ'իմացընեն՝ որ Սմբատ ոչ միայն քաջաքակտն վարչութեան և շինութեան կրթեց իր անգրանիկը, այլ և սպարապետութեան, բանակաց առաջնորդելու. և հօրը յաջորդելէն առաջ

ապէ՛ չատ քաջութիւններ ըրած ըլլալը՝ և զանոնք իր համբերակին (Շապհոյ) 'ի գիր անցընելը՝ կու յիշէ ժամանակակիցն և ականատես Յովհաննէս կաթողիկոս. և հարկ է թէ գոնէ Բուզայի գալէն առաջ առուը ասրին այնպիսի գործով անցուցած ըլլայ թէ 'ի Հայս և թէ Կովկասու կողմերը. լոկ խուզարարութեան առաւելն այլ չինութեանց պատպարելով՝ 'ի հինն Նրազգաւորս՝ որ և Շիրակաւան (Պաշ-Շէօրէկէլ). պալատէն զատ՝ Սմբատ մեծ և փառահեղ եկեղեցի մ՚այլ չինեց (838)[1] Ամենափրկիչ անուն, բարձրաբերձ գմբեթաւ, որ հիմայ կործանած է. բայց եկեղեցին իր չորս անսիւն կամարաց վրայ բարձրացեալ կեցած է, թէպէտ և այն այլ Սմբատէն երկու դար ետև նորոգեալ։

Է

Յետ երեսուն տարուոյ Սմբատայ ապարատութեան և Աշոտոյ կենաց՝ հասաւ Հայոց մեծ ալէկոծութեան և վանդի պարտպոյն, զոր առաջ յիշեցինք, Բագարատայ և Ապուսէթի գիպուածովք, որոց համար եկաւ Բուղա 'ի Հայս։ Նախատեսս և նախահոգ ապարատեան իր իշխանակցաց պնդապլխութիւնը տեսնելով և չկարենալով զամենքը համոզել, ինքնաց մնացածը և կերցածը ապահովել. և դեռ Մեզ զօրավարն (Բուղա) իր աչխարհէն չբարժած՝ Սմբատ իմանալով եղած պատրաստութիւնը, թէ առոր և թէ ամիրապետին՝ թղթով և ընծաներով խնայցուց որ ինքն ապըստամբաց կողմը չէ, այլ օրինաւոր իշխանու-

[1] Ոմանք մեր Աշոտոյ որդին Սմբատը համարին այս եկեղեցւոյս չինող. բայց իր չինածն ուրիշ եկեղեցի էր պալատին մօտ, որ թերևս հիմայ հոն մնացեալ քանի մը տերակ եկեղեցեաց մէկն ըլլայ։

թեան հաւատարիմ. և այսպէս առաջին յոգեթու-
թիւն մ'ըրաւ բանաւորին դէմ, և Հայաստանի
միջնաշխարհը ապահովցուց. զոր և այլ աւելի
հաստատեց՝ երբ Բուզա Կատիղոսայ պէս սպառ-
նալեաք եկեր կու գար մեր աշխարհը։ Այս ան-
գամ Հայոց պարսպան հրեշտակին՝ 30ամեայ կոյ-
սառ և հզօր երիտասարդի մը կերպարանաք ե-
լաւ անոր դիմաց, աչքը շլացուց, սիրտը շարժեց,
խոստմունք առաւ որ հրու եղողին վնաս չհասցը-
նէ, և այնպէս թողուց որ մտնէ 'ի Հայս։ Այս
հրեշտակս էր ինքն ԲԵՌՈՍ, հաստակին և վայելչու-
թեան և զենուորութեան ամենեն փայլուն և ծաղ-
կած առեն. անշուշտ Բուզա իրեն բազդ այլ ան-
պէս որ այդպիսի անձ մը և անոր նման եղբարք
և հայր՝ իրեն դիմակաց պիտի չըլլան։ Աշխոյժ քա-
ջաքաղաքական և ամենայն յիշատակելի գործոց մէջ
այս առաջին դիպուածն է. դիպուած բարեգու-
շակ. թէ և ինքն գեռ չէր տեսներ՝ այդ գործոյն
և առոր նմաններուց համար՝ նոյն գացած ճամբէն
թագաւորական թագի մը ճամբայ ելնելն, որ հա-
սաւ իր ճակատին՝ յետ 35 տարեաց։ Երբոր գան-
գամ ապահովեց Սմբատ հայրենիքը յետ իր հրեշ-
տակին (իր որդւոյն) ինքնին ելնելով ընդ առաջ
Բուզայի, երբ սա նուաճելով զհարաւային Հայս՝
մտաւ 'ի միջնաշխարհն և կու գար 'ի մայրաքա-
ղաքն Դուին. «Սպարապետն Հայոց՝ երբոր գի-
» տաց, կ'ըսէ պատմիչն Թովմաս, թէ ոչինչ օ-
» գուտ բերէ արտաքոյ հրամանաց նորա լինել,
» փութացաւ եկն առ նա, և ընկալեալ 'ի նմա-
» նէ՝ բնակեաց ինքն և իւրքն՝ հանգերձ իւրա-
» քանչիւր կալուածովք, առանց կասկածանաց»։
Նա միւս պատմիչն (Յովհ. կաթ.) «զմահ 'ի կեանս
» խառնեալ՝ սակս աշխարհին իւրոյ փրկութեան,
» գնայ ընդ առաջ նորա բազում ընծայիւք և պա-
» տարագաւ. և ասընկալեալ 'ի նմանէ պատուս-

» սիրաբար... բազում իմաստութեամբ զսաղաղ
» և զանոսի միաս նորա յինքն հանդուցեալ վը-
» տահէ »։ Բուղա ըստ խոսումանն հանգիստ թո-
ղուց զՍմբատ. բայց միայն տեղեկութիւն կ'առ-
նուր անկէ իր երթալու տեղերուն և անձանց վը-
րայոյզ. և երբեմն հետը կու տանէր զնա, թէ ոչ
պատերազմելու՝ գոնէ թշնամիները յորդորելու
'ի հնազանդութիւն, կամ գործը շուտով վերջա-
ցընելու համար։ Սմբատ այս գժուար և փափուկ
առթին մէջ ըրաւ որչափ որ պարտք հայրենեաց
և պարտք հպատակութեան միաբան պատուի-
րեն. և հաւանօրէն իր հեռացած տաեն՝ տեղը
թողած էր զԱշոտ. որ չյիշուիր այս տաեն ուրիշ
տեղ, ինչպէս յիշուին իր հայրն և եղբայրն՝ Ա-
զուանից պատերազմին տաեն։ Հոս նորէն հար-
կաւոր կու սեպեմ գառնալ այն պատերազմին և
յիշել ախորժելի գիպուած մ'այլ։ Երբ Բուղա
շարաչար զարնուած յԱպուսմուսէէ՝ յուսահա-
տեալ փակուեր էր վրանին մէջ, և տասն օր քովը
մարդ չէր մտեցըներ, միայն Սմբատ սպարապետն
համարձակեցաւ նելս մտնելու և բռնաւոր ձեռ-
քէն բռնելու, յիշեցընելով անոր որ պատերազմի
մէջ յաղթութիւն չէ ամօթ, այլ վնասիլն։ Բուղա
թէ անկէ թէ ամիրապետէն նոր հասած պա-
տուէրքով և զօրքերուն քաջալերուած՝ ըրաւ այն
մեծ յարձակմունքը Ֆթիչ լերան վրայ, թէ և
չյաղողեցաւ։ Այս միջոցիս կու յիշուի Աշոտոյ
եղբայրն Մուշեղ, որ մտա բլրի մը վրայ կեցած
կու գիտէր այն ահաւոր պատերազմը. և երբ յան-
կարծ լսեց հազարաւոր փողոց և եղջերաց շռն-
չեն, և բազմաթիւր զօրաց արաբացի կոկորդաց
աղմաղուր աղաղակն, իբր 250,000[1] սպառազէն

[1] Պատմչն տեղ մը յիշէ որ Բուղա իր բանակին մէջ՝ 300 հոգւոյ մէկ դրօշակիր մը դրեր էր, և այս պատերազ-

մարգկան և երիվարաց փայլմունքն, վազքն, վեր վար շարժիլն, երկու կողմէն յուսադրաբար կամ յուսահատաբար կանչուրտելն, վարէն վեր մեքենայով նետուած նետեր, աէգեր, գունտեր, պարսեր, վերէն վար սահած թափած քարեր, նետեր նիզակներ, և այն գրեթէ չբացատրելի խառնուրդը, զարհուրածքը, անամոգ երկնքի մը տակ սասակաձայն որոտմունքը, և անեման հեղեղի մը նման զեռալը, խելքն գլխէն թռաւ, սոսկումն և յոփշտակութիւն զինքն վերացուցին, կ'ըսէ պատմիչն, մինչև յահաւոր հանգէս գալը առանց Փրիսառի 'ի դատել զաշխարհ 'ի վախճան ժամանակի. և քանի որ միտքն այն յոփշտակութեան ի եռանդեան մէջ էր՝ ասուածարեալ մարգարէի կամ ներշնչեալ բանաստեղծի պէս՝ (ինչպէս որ արդէն վարժ էր բանահիւսութեան), սկսաւ յանպատրաստից ստեղծել երգել ոտանաւոր չափով հինգ տուն սրտառուչ երգ կամ շարական մը, որ կու սկսէր,

Անդրաղելի սկսան սրտի նայեցող անէն իմ.

ղոր, գիտեմ դու այլ, Հայկակ, աւելի ախորժով ուզես կարդալ, քան այն պատերազմին շուկը լսել. — ոչ, թնչ ըսեմ, թերևս այս երգս այլ մեր կորուսեալ Շապուհ պատմչին հետ գտուի. հիմայ ուզեմք չուզեմք պիտք է գոչանալ այս մեկ տողով, այս փչրանքով, ինչպէս որ մեր ուրիշ շատ հին ցանկալեաց այլ հազիւ մեկ տողիկն մեկ փշրլիկն ունինք՝ մնացորդք ժամանակաց խառնակութեան, հնութեան կամ անհոգութեան....

Գիս մէջ 1000 դրօշակիր կու յիշէ. այս հաշուով 500,000 կ'ըլլար զորքն. բայց որովհետև ինքնին հոս 200,000 են ասելի էր կ'ըսէ, մնք Ապուսմուսէի բանին այլ ասելոնելով՝ թերևս աւելի չդրինք 250,000ը։

Բայց գու անցողաբար զայս այլ նշանէ, որ գրականութիւնն այս ատեն այս Բագրատունեաց տոհմին մէջ ծաղկած է եղեր և պահուած, հաւասար զինաշարժութեան։

Այն պատերազմին և Բուղայի գործոց վերջը ու գարձը՝ առաջ յիշեցի. հարկ է հիմայ ճամբել զնա՝ որ գառնամք յԱշոտ. բայց ցաւագի հարկ մ՝այլ կայ. պէտք է որ այն ճամբուն վրայ տեսնեմք նաև զհայրն Աշոտոյ, զհայրն Հայոց, զմեծ-ոգին Սմբատ. ոյոյ մեծ արդիւնքն այլ յառաջ յիշեցի. ինքզինք զոհելով՝ հայրենիքը մեծ սպառնալիքէ և կոտորածէ ազատելն, այնպիսի ժամանակ, և ըստ անուանն (Գարբա-Բուղա) կառղած սեւ ցլու մը եղջիւրներէ. որ և պատուէր տուաւ սպարապետին՝ որ տունը հոգոյ, ասելն իր որդին Աշոտը դնէ իբրև տեղակալ, և գայ իրեն, որ էր Թան ամիրապետին՝ արժանաւոր վարձքն առնուլ։ Սմբատ թերևս կու գուշակէր ինչ վարձք ինչ վերջ ունենալը. բայց գոհ էր իր ըրած երախտեացն առ հայրենիս. գոհ էր իր տեղ իր ամենեին նմանն և սիրելին Թոդրուն. քաղաքական կոզմանէ հոգ չունէր՝ Աշոտոյ պէս խոհեմ և կըրնար կորիւն մը դնելով իրեն փոխանորդ. ուզեց յապահովել հոգեորն այլ, զոր միշտ կումատէր յԱստուծոյ և իր հայրերէն ժառանգած բարեպաշտութեամբը. զոր և ժառանգեցուց իր զաւակացն, ոչ պակաս քան զքաջութիւն և զիմաստ։ Արդ որովհետև նոյն ատեն կաթուղիկոսն վախճանած էր և աթոռը պարապ մնացած աշխարհին շփոթութեան պատճառաւ, Սմբատ այն նեղ ժամանակին կարելոյն չափ եկեղեցականները ժողովեց իր իշխանանիստ քաղաքաւանը, Յարաղբաւորս, և ստեղին յարմար անձ մը չգտնելով անոնց մէջ՝ ընտրել տուաւ արժանաւոր աշխարհական կամ գեռ կարգ չառած անձ մը, որ էր Զ-ա-

րէ՝, Կոստայից գաւառին Զաղ գիւղին, որ է մօտ Երևան քաղաքի, և հիմա Նրանոս այլ կ'ըսուի, ինչուան այս առեն պատմութիւն բան չի յիշեր այս անձին վրայ, բայց գործն կու վկայէ որ ոչ միայն սրբուն վարուց ունէր, այլ և շնորհք տեսչութեան այն բարձր աստիճանին համար՝ յոր ամբարձաւ, նոյն օրը ձեռնադրուելով 'ի կիսասարկաւագութենէ մինչև 'ի կաթուղիկոսութիւն, և նստաւ յաթոռ Ս. Լուսաւորչին (854). խիստ գիտութեան այլ վկայ են իր գրուածքն՝ մեծ ոճով և աւագ շաբաթուան աւուրց վրայ, 16 ճառ, որչափ որ ինձի ծանօթ է. որոց մէջ բաց 'ի վարդապետական մեկնութեանց, ազգային աւանդութիւնք և աստուածաբան տեղեկութիւնք այլ կան։ Սմբատ՝ աշխարհին հետ զինքն այլ յանձնեց նորընտիր հայրապետին ազօթից. և անչուշտ շատ սրտառուչ եղաւ հրաժարականն՝ երբ մէկ կողմէն կաթուղիկոսն իր գաւազանն առած, մէկայլ կողմէն Աշոտ՝ հօրը սպարապետութեան սուրը առած, շուարեր էին այս շատ և անկարծական փոփոխութեանց վրայ, մինչդեռ նոյն անչափոհ շուտութեամբ զգաստ սպարապետն աւանդելով երկուքին այլ ինչ որ իրեն ամենէն ցանկալի էին 'ի Հայրենիս, և ողջունելով զանունք, վերջին՝ ողջոյն, փութացաւ երթալու առ Բուղա, առ Զաքր, 'ի Բաբելոն և 'ի բանտ, և ոչ ևս դառնալու 'ի Հայրենիս։

Ը.

Ոչ միայն ցաւալի այլ և շատ զգուշալի և գըժուարին էր Աշոտոյ վիճակն. Բուղա բոլորովին ազատ թողէր էր զնա, բայց Հայոց ոստիկան մ'այլ և իբրև լրտես մը դրեր էր զԻպրահիմ. որուն հետ վարուելու թէ և քաւական խոհեմութիւն ունէր Աշոտ, բայց Պաղտատի լուրերն

զինքը կու խառնէին. իշխանաց բանտարկութիւնն, իր հօրն այլ անոնց հետ, և հաւատքի ուրացութեան վախն։ Իր մէկ սիրալ կամ յանդուգն քայլն՝ կրնար հօրը կենաց վնաս հասցընել. մանաւանդ երբ ուրիշ իշխանք ուրացութեամբ յետ դարձան (857-8), և ոմանք հոն նահատակուեցան, և մընաց 'ի բանտի միայն Սմբատ, որուն գրեթէ ինքն. իշխանութեան պատիւ խոստացած էր Բուղա խալիֆային կողմանէ. իսկ սա՝ անոր հաւատարմութեան փոխարէն՝ Աստուծոյ անհաւատարիմ ըլլալ կու պահանջէր 'ի Սմբատայ. և զի նա Ճշմարիտ մեծահաւատ և սիրոտի էր, ոչ բռնաւորն կրնար յաղթել, ոչ Սմբատայ կապանքը կու քակուէին։ Աշոտ սիրելի ջանք և աղաչանք ըրաւ առ Ջաֆիր, յայտնի չէ. բայց այնչափ հաւատարմութիւն ցոյց, որ ոչ իրեն և ոչ հօրը վրայ կրցան կասկած ու մեղադրութիւն մ՚ընել. թէպէտ ինչպէս հօրն, այսպէս այլ իրեն երբեմն ծանր ծանր և անախորժ հարկեր կու գնէր այս հաւատարմութիւնս. և շատ հեղ ծանրութիւն ասուղքն այլ՝ իր համազգիքն կ՚ըլլային, ապստամբութեամբ և անհնազանդութեամբ. պէտք էր կամ նուաճել զանոնք, կամ անոնց պէս ապստամբ և յանցաւոր երևիլ. և անկէց այլ աւելի՝ մոռացող կարծուիլ հօրը կապանաց և բանտին։

Այսպիսի ասիմ մ՚ելաւ Գրիգոր Մամիկոնէից տէրն, որ ուրիշ դլխաւոր իշխանաց հետ գերուած և բանտարկուած էր 'ի Խարբերդ, բայց յաջողութիւն մը գտնելով՝ փախաւ անկէ և թշնամեաց միջէն անցնելով՝ եկաւ իր երկիրը, 'ի Բասֆրեանդ. և անկէ այլ ամուր տեղ մը գտնելու պատրաստուած ատեն՝ յետ Եօթն աւուրց մեռաւ։ Սեւեէն ընկնող արաբացի ոստիկանն պատուիրեր էր Աշոտոյ՝ որ ուր այլ ըլլայ՝ երթայ բռնէ զԳրիգոր. Աշոտ լսելով անոր մահը՝ գլուխը հանել

տուաւ և զրկեց բռնաւորին, ըսելով որ փախչելու առեն բռնուած է։ Ասոիկանն ուրախացան, խալիֆայն 'ի վարձ հաւատարմութեան Աշոտոյ՝ իրեն պարգևեց Գրիգորի երկիրը (Բագրեւանդ), և իրը 30,000 ֆրանգ այլ վրան։

Սակայն նման դիպուած մ'այլ եղաւ Արծրունեաց իշխանաց հակառակութեան պատճառաւ. ուր (ինչպէս առաջ յիշեցի) Գուրգէն իշխանն ազատօրէն կու տիրէր. բայց երբ գարձաւ միւս Գուրգէն եղբայրն Աշոտոյ՝ բուն տիրոջ Արծրունեաց, և ասոր որդին Գրիգոր Դերենիկ (858), մէջերնին չփոխուելիւն ծագեցաւ. զոր և չաւելցընելու համար՝ առաջին Գուրգէնն թողուց իր երկիրը և Ցունաց կողմը անցնիլ ուզեց. եկաւ ինչուան յԷրզիռում, որոյ արաբացի քաղաքապետքն Ինչրի և Զէբրի՝ բռնեցին զնա և Աշոտոյ խաւրեցին. Աշոտ շատ գժարացաւ՝ այնպիսի կարիճ և զգօն մարդ մը անարդ վրէժինդրութեամբ մատնելու. բայց քանի որ հօրը կապանքն կու յիշէր՝ իր սիրտն ուրեք կու կապկըպէր։ Իրեն յանձնուածին կապն այլ չկրցաւ քակել. այլ յանձնեց Խիֆլիզի քաղաքապետին, որ այլազգի էր. նա փորձեց և չկրցաւ հաւանեցընել զԳուրգէն յուրացութիւն, ապա կապ կապի վրայ աւելցընելով զրկեց զնա 'ի Բաղքրն. ուր նոյնպէս հաստատ մնալով իր հաւատոց վրայ՝ գրուեցաւ 'ի բանտ. բայց մէկ կամ երկու տարի վերջը յաջողութեամբ պրծաւ, գարձաւ իր երկիրը։ Արծրունեաց պայազատն (որդին Աշոտոյ) Դերենիկ՝ որ գեռ 14 կամ 15ամեայ պատանի մ'էր, և իրեն հօրը տեղակալ կունտէր խալիֆային հրամանաւն, երբ իմացաւ Գուրգենի գառնալը՝ վախնալով որ չըլլայ թէ տիրէ երկրին, աւելի իր հաստակակցաց լսելով քան խոշական ինամակալաց՝ յանկարծ վրան վազեց, բայց վնասուցաւ քալ

ու փորձ իշխանէն։ Դարձեալ յանկարծակի յարձակեցաւ Դերենիկ, Գուրգէն արդէն հիւանդ ըլլալով ձիէն ընկնալով բռնուեցաւ, և բանտեցաւ ('ի Հաղամակերտ, իշխանանիստ Արծրունեաց)։ բանտապանն քակեց և ազատեց զ'Գուրգէն, և գիշերանց բերաւ մտուց զնա 'Դերենիկայ քնարան սենեակը։ Գուրգէն տրդէն վրէժիսնդրութեան պատճառ կրնար ունենալ, որովհետև 'Դերենիկայ պապն սպաներ էր իր հայրը։ սակայն իր սիրտն շատ մեծ էր՝ այսպէս գողաբար անխոհեմ ուլայ մը սպաննելու համար։ և մանաւանդ ազնուական տղայ մը՝ թէ և թշնամի, ո՜հ, բնութեան խաղաղութեանը մէջ՝ միշտ տղայ միշտ զբաւարթուն է։ Գուրգէն՝ թէպէտ և սուրը անոր գլխուն վրայ վերուցեր էր, մեկայլ ձեռքն այլ սակրին և դանակին վրայ, սակայն չկրցաւ արցունքը բռնել՝ սիրոյ և առելութեան կռուին մէջ, լալով կանչեց։ «'Դերենիկ, որդեակ իմ Դերենիկ, » ինձմէ բարով, այսուհետև համարձակ սիրէ եր. » կրիս։ եւ կ'երթամ 'ի Ցունտստան »։ Դերենիկ զարհուրած վեր ընկաւ, երազի պէս և երազէ ահաւոր տեսարանը տեսաւ, իր բանտեալը սուսերամերկ գլխուն վրայ կեցած։ «Ա՜հ, հայրս, ինչպէ՞ ինձի », կանչեց, և լեզուն բռնուեցաւ։ Գուրգէնի բաւական էր եղածն։ արիւնէն աւելի էր արտասունքի վրէժն։ նոյն արտասունքը չսրբած՝ փութացաւ ելաւ ծածկուեցաւ տեղ մը, ինչուան որ յարմար առիթ գտնէ փոխելու Ցունաց երկիրը, ուր որ շատոնց միտք ունէր երթալ։ — Բաւական չէր այս արտասուչ, այս թատերական տեսարանս։ հա՞րկ էր որ նոր դիպուածներ այլ նոր նոր տեսարաններ աւելցընեն։ — Իր պատուրաստած տունն (Երանգանի գեղին) վանաց տէրտիրոջ քոմն էր, որ հիւրասիրութեամբ՝ մատնեց զնա առ Դերենիկ։ և ահա թերևս աւելի վախով

քան առելութեամբ՝ նորէն ամուր տեղ մը պա-
հել տուաւ զԳուրգէն, և պատուիրեց այլ որ
նեղութիւն չտան։

Այս առեններս մերն Աշոտ զբաղած էր իրեն
աւելի մօտ Հայոց, Վրաց և Աղուանից իշխաններ-
ը հանդարտեցընելու և ամիրապետին հպատակ
պահելու. այս գիպուածիս չկրցաւ հասնիլ յա-
ռաջ քան զկաթուղիկոսն Զաքարիա. որ երբ լսեց
Գուրգէնի մեծասրտութիւնն և Դերենկայ փոքրո-
գութիւնն՝ քանի մը եպիսկոպոս հետն առած ե-
կաւ աղաչեց մանկահասակ իշխանորդւոյն՝ որ ար-
ձակէ իրեն կենաց խնայողը. պատանին այլ մե-
կէն հաւանեցաւ, արձակեց զԳուրգէն. մեկ տեղ
դաշինք դրին, և գարձուց անոր հայրենի ժառան-
գութիւնը, որ էր Մարդասատան գաւառը, Նախ-
իջևանի մօտերն, և սիրով բաժնուեցան։ Գուր-
գէն այլ անկասկած ըլլալով 'ի Դերենկայ՝ սկսաւ
վախնալ յԱշոտոյ. վասն զի իբրև ապստամբ յա-
միրապետաց մեկ մը բռնուած և անոր ձեռքը ա-
ռրուած, հիմայ որ նորէն փախչելով բանտէն եկեր
էր իր տեղը, 'ի հարկէ աւելի յանցաւոր կու սե-
պուէր, և աւելի պարտք կար Աշոտոյ՝ անոր վրայ
աչք ունենալու։ Ասոր համար Գուրգէն հանգիստ
չէր կենալ տեղ մը, այլ աւելի Տարօնոյ կողմերը
կու պտըտէր, ուր մայրենի ազգականներ ունէր.
և հոն էր՝ երբ Աշոտ խաղաղցընելով զվերին Հայս՝
յանկարծ եկաւ այս կողմերս, Վանայ գաւառը.
'Դերենիկ վախնալով գիմացն ելաւ. Աշոտ քիչ
մ՝աւելի խրատել կամ վախցընել ուզելով, հրամ-
մեց որ արգիլած պահեն զնա Վանայ բերդը, ուր
ինքն այլ եկաւ։ Գուրգէն հոս այլ առաքինի մեծ-
անձնութիւն մը բանեցուց՝ իր մերձաւորին վրայ,
բայց թերևս ուրիշ կիրք մ՝այլ ընդդէմ Աշոտոյ.
400 կարիճ ժողովեց և յանկարծակի շտապելով
եկաւ ոչ հեռու 'ի Վանայ՝ Նարեկայ մօտերը նոր-

գիւղ ըսուած գեղը. և գեսպան խաւրեց Աշոտոյ միտքը իմանալու, և իմացընելու՝ որ եթէ զԴերենիկ պատժել և գերի առնել ուզէր՝ ինքն անոր ազատութեան համար պիտի պատերազմէր, (միտքը գլուխ էր գլխերանց Աշոտոյ վրայ ընկնիլ). իսկ եթէ խրատելու համար էր ըրածն, ասոր ապաշխարողոյն ճամբայ մը կ'երևի կ'ըսէր, եթէ հաճիս, քեզի փեսայացընել զԴերենիկ, որ հաւատարիմ և հնազանդ ծեայ իբրև հօր։ Աշոտոյ միտքն այլ այս էր. սիրով հնազանդեցընել զպատանին, որ նոր կարգուած էր, բայց նոր այլ այրի ծեացած իր մատղաշ հարսէն։ Այս առթով երեք իշխանքն այլ ուրիշ բարեկամացան. Աշոտ առաւ զԴերենիկ հետը տարաւ 'ի Բագարան՝ աւանն Շիրակայ, և հոն իր զաւակին պէս պահելով ինա տաեն մը. յետոյ մեծահանդէս հարսանիք ըրաւ, և իր սիրուն Սոփի դստրիկը պսակեց անոր հետ (862). ուսկից ծնան երեք անուանի իշխանքն Աշոտ-Սարգիս, Թաչիկ-Գագիկ և Գուրգէն. որոցմէ Գագիկ Արծրունեաց առաջին թագաւոր եղաւ և իր ցեղին ամենէն մեծագործ և հռչակաւոր անձն։

Այս առաեններս Դերենիկայ հայրն՝ Աշոտ տէրն Արծրունեաց այլ գարձաւ, և իր իշխանութիւնը ժառանգեց. նոյնպէս իր երկրին խոստովանող եպիսկոպոսն այլ Յովհաննէս, և անոր ընկերն Գրիգոր քահանայն, և ուրիշ իշխանք այլ գարձան. միայն Արծրունեաց որդեսէր մայրն, տիկին Հռիփսիմէ՝ Բաբելոնի արգելանաց և տաք օդուն չդիմանալով՝ մեռաւ, և հոն օտարութեան մէջ թաղուեցաւ։ Նոյնպէս այլ մեր Աշոտոյ հայրն՝ բազմերախան Սմբատ, իշխանակցաց դառնալէն ետև՝ ինքն որ ամենուն առաջնորդն էր՝ ամենէն վերջին եղաւ, և ամենէն աւելի նեղութիւնամբ բանտի մէջ մնաց։ Եռաս հնդ հրապոյր լսեց. միշտ արհամարհից, և ուրիշներուն ուշադրութիւնն երջանկու-

թիւնը աւանելով անարատունչ, անկէ ետեւ միայն իրեն անանց երջանկութեանը կը փափագէր, որ և չուշացաւ. ասան ամիս նեղութենէ ետեւ[1] վախճանեցաւ ազատրանաց և արգելանաց մէջ, և թաղուեցաւ Դանիէլի մարգարէին անուամբ ճանչցուած գերեզմանատեղին. Թողլով հայրենեաց պատմութեան մէջ պատուելի անուն մը, եկեղեցւոյ մէջ աւելի պատուելի Խոստովանող անունը և յիշատակն ընդ արդարոց, զոր Հայոցիր Նշանակէ 'ի 25 մեհեկի (3 մարտի)։

Աշոտ երկրի վրայ սխուր բայց յերկինս ուրախ բաղդ գտաւ, ունենալու նախ հայր մը, և յետոյ (55 տարի վերջը) որդի մը Խոստովանող կոչուած, և երկուքն այլ հոժանուն Սմբատ. եւ քինն իր պապուն միայն հոմբերութեամբ երկրած խոստովանութիւնը՝ արեամբն այլ կատարեց ու կնքեց, ինքն այլ արքազան նահատակաց կարգն անցնելով. (Յայսմաւուրաց) Հայոցիրն մէջ ամեկի ինն (ապրիլի 15) բռնեց. իսկ ինքն Աշոտ այլ թէ ոչ առնական խոստովանութեամբ՝ այլ յայանի բարեպաշտ կենաց և մահուանն համար՝ արժանի սեպուեցաւ հօրը և որդւոյն հաւասարելու եկեղեցւոյ մէջ փառաց, որով՝ քան զնոսա գերազանցեց յերկրի։

1 Սմբատայ վախճանած տարին ըստ ոմանց կ'երևի 859, և ըստ այլոց 861. Յայսմաւուրք 10 տարի կ'ըսեն իր գերութիւնը, բայց այս գերութիւնս Բուղայի գալէն կու սկսին պատմիչք, որ է 852. այս հաշուով կրնայ 10 տարի ըսուիլ։

Թ

Սմբատայ ապերախտ կալանապետն Ռուզա՝ իր-
մէ ապերախտէն պատիժն առաւ. նոյն ինքն Ջաֆր
իսալիֆայն խաւրեց զնա իբրև կուսակալ 'ի Խո-
րասան, և գաղջ պատուէր տուաւ ու սպաննե-
ցին. իսկ ինքն ամենայն չարեաց առիթն այլ. ինչ-
պէս առաջ յիշեցինք, իր որդիէն սպանուեցաւ
(861). այս հայրասպանն այլ (Մոսգանէր)
խղճէն տանջուած քանի մը ամսէ ետև մեռաւ.
ուրեն անցաւ (862) իր հօրեղբօր որդին Մոսգա-
յին-Գիլլահ, որ իբրև փոխարէն Սմբատայ ան-
պարտ մահուան և Աշոտոյ զրկանաց, անուանեց
զոսա Իշխան Իշխանաց, ոչ միայն Հայոց, այլև Վրաց
և Աղուանից. թէ և սա արդէն իբրև անոնց վե-
րակացու և նախիշխան ճանչցուած էր՝ իր հօրը
պանդխտութեան սարիէն սկսեալ. և այս տա-
րին (858) կուռնշանակուի 'ի տարէգիրս սկիզբն
իր իշխանութեան և Բագրատունեաց պայծաղ-
տութեան. որ և նշանական հանդիպմամբ (Փրիս-
տոսի ծննդեան տարի հաշուելով) Ար-
շակունեաց թագաւորութեան սկսանելուն հա-
զարամեակն էր. իսկ այն թագաւորութիւն վերջա-
նալէն ետև 'ի 428 թուին Փրիստոսի՝ նոյնպէս 428
տարի էր։ Բայց այս պատուոյս հասանելուն բուն
առիթն էր Աշոտոյ իսկեմութեամբ և աշխարհ-
թեամբ կառավարութիւնն. հաւատարմութիւն՝
ոստիկանաց և ամիրապետին վստահութիւնը շա-
հեր էր, յոլովորանոք և առատաձեռնութեամբ՝
ազգային իշխանաց սիրտը. հասարակաց բարին
դիտելով՝ անձնական զրկմունք կամ արհամար-
հանք բանի տեղ չդնելն՝ զինքն այլ աւելի սիրելի
ըրին. զոր և ականատեսն Յովհ. կամիուղիկոս
այսպէս կու բացատրէ. «Յորժամ փոխանակ

» Սմբատայ հօր իւրոյ պայազատէր զապարապե-
» ատութիւն Հայոց, գրեթէ ամենեցուն քան զնա-
» խագունէին վեհագոյն ճանաչիւր. վասն զի
» ընկալեալ զմեծարանս՝ 'ի բաց արհամարհէր
» զանարգանս, և միշտ 'ի հրահանգս բարւոյ կըր-
» թութեան զինքն վարժէր, և բարի ազգուն իւ-
» րոյ ոգւոյն տայր. ընդ ամենեսեան սէր սերա,
» և ոչ 'ի հակառակութիւնս ինչ կամ 'ի կռիւս
» ընդ թշնամիսն մաքառեալ, քան թէ բարե-
» գործաց բանիւք և բարի օգնեալ՝ զնոսա ածել
» յուղղութիւն և 'ի կամս իւր. իսկ զպայքարանս
» սնոսի շահուց ինչս իւր վարկեալ՝ և առատա-
» ձեռն առ ամենեսեան գտեալ, յինքն զբազմաց
» միտս յանգուցանէր սիրելիր սրտիւ. որպէս զի
» յայսմ սակի ամենիքեան իսկ նմա հաճեալ հա-
» ւանեալ էին... և ամենիքեան գաչինս ընդ նմա
» դնէին, որպէս արդարև ընդ թագաւորական
» զարմի »։ Խալիփային գունէն Աշոտոյ իշխանու-
թեան զգեստը առաւ (862) Ալ-իպն-Եահեա
Էլ-Էրմանի կոչուած ոստիկանն, որ բուն Արզնի և
Նփրկերտոյ կուսակալ էր, և կու պատրաստուէր
երթալ ընդդէմ Յունաց. ինչպէս գնաց այլ՝ և պա-
տերազմի մէջ մեռաւ։

Իշխանապետութեան հետ Աշոտոյ յանձնե-
ցաւ աւելի ծանր և հոգալի պաշտօն մը, որ ին-
չուան այն առեն քրիստոնէից չէր արուած. այս-
ինքն է Հայաստանի հարկահանութիւնն. հարկե-
րը ժողովել և խալիփային գուռը խաւրել, կամ
յանձնել 'ի ձեռս ոստիկանի մը՝ որ գեռ կունը-
աւէր 'ի Դուին, իբրև երեսփոխան և վերագիտող
մը ամիրապետին կողմանէ, առանց խառնուելու
նէրքին կառավարութեան։ Ի՞նչ և որչափ էր
Հայոց հարկն. մեր պատմիչք որոշակի կ'ըսեն
60,000 դահեկան (ոսկի), որ է իբր 750,000 ֆր-
ռանկ ոսկւոյ։ Ա. Սմբատայ՝ Աշոտոյ որդւոյն առե-

նին համար է, երբ Վասպուրական և ուրիշ մեծ նահանգներ զատուեր էին իրմէ, և իր ամիսի իշխանութեանն տուրքն էր այդ. իսկ անկէ առաջ, Արաբացի պատմիչ մը կու յիշէ որ թէ Բագրատունեաց իշխանութեան (Շիրակայ), թէ Վասպուրականի, թէ Սիւնեաց, և թէ արաբացի ամիրայից իշխած երկիրներուն, որ են Կարին, Դուին, Արձիշ, Խլաթ, Խարզան, Պէրզէնտ (?), որ մէկ անուամբ Հայաստան կոչուէին, միագումար հարկն էր իբրև 2,500,000 ֆրանգ. ասկէ զատ էր Տարօնոյ երկրին հարկն 60,000 կամ աւելի. Արզնի և Մուֆարզնի հարկն՝ որ Հայաստանի և Տարօնոյ հարկէն աւելի էր. Ամդայ հարկն՝ որ Հայաստանի հարկին կիսուն չափ էր. Եփրատայ կողմերուն հարկն այլ զատ կու յիշուի. և բոլորի մէկէն գումարն 10 միլիոն ֆրանգի կու մօտենայ։ Արաբացի պատմիչն կամ վիճակագիրն այս և ուրիշ յիշեալ աշխարհաց մէջ միայն մուն Հայաստանին համար կ'ըսէ, թէ այս աշխարհս կամ վիճակս արծաթով կու վճարէ հարկը. արծաթ ըսելով զուտ արծաթ կ'իմանայ, թէ ոսկի (ոսկի և արծաթ). — կարծեմ առաջինն. վասն զի այս ժամանակէն դար մը առաջ Հայաստանի մէջ առատ և զուտ արծաթահանք գտուած էին, խալիֆայէն տիրած տեղն, հաւանական է որ այն արծաթէն կու տրուէր հարկը, գոնէ տեղն մը։ — Հարկին չափը հարկահանաց և տնտեսաբանից թողլով, արծաթահանքն այլ երկրաբանից քննութեանն, գտնանք յիշխանապետն Հայոց։

Աշոտ բարձրագոյն պատուոյ հանելով իր առաջին իշխանութիւնը, այսինքն սպարապետութիւնը՝ տուաւ իրմէ վերջը եղող եղբօրը, որ էր Աբաս, «այր քաջ, անմնեայ և թիկնաւէտ, առոյգանձն և գեղեցիկ հասակաւ, կորովի և յաջողակ 'ի պատերազմունս. որ և աջակցեալ իսկ

» եղբօր իւրում Աշոտոյ՝ զամենեսեան հնազան-
» դէր ընդ լծով ծառայութեան. 'ի բազում կոչ-
» մանս բազում անդամ արութիւն ցուցեալ, և
» հռչակաւոր և հոյակապ 'ի մէջ բազմաց ե-
» րևեալ [1] »։ Սպարապետութիւնն ինչպէս սր-
ղեամբ՝ այսպէս և պատուով առաջինն էր 'ի Հայս
այն ատեն՝ յետ նախիշխանին. իսկ երբ իշխանա-
պետն Թագաւոր եղաւ՝ իր և սպարապետին մէջ
նոր պատիւ կամ աթոռ մ'եղաւ Իշխանաց Իշխան.
սակէ զատ և վար կարծուի Տէրանց-տէր պատիւ
և աթոռն. իսկ քիչ ատեն վերջ՝ ասունցմէ այլ
վեր և անմիջապէս Թագաւորէն ետև գրուեցաւ
Նուէրդ-ուրթայի պատիւն, որ երբեմն Թագաւորին
ժառանգն կ'ըլլար, երբեմն մեծ երկրի մը նահա-
պետն.— ուրիշ մեծ պատիւ և աթոռ մ'այլ հաս-
տատեցաւ Մարզպան Հայոց կոչմամբ, որուն իշխա-
նութիւնն կամ պաշտօնն շատ որոշ չինչանակուիր.
(յայտնի է որ Սասանեանց ազգատութեան
ատենի մարզպանաց նման չէր, վասն զի անոնք
հիմակուան ոստիկանաց պաշտօնը կու վարէին.
և իրրև միանգամայն իշխանապետ և հարկահան
էին. գուցէ Բագրատունեաց մարզպանն՝ հարկա-
ժողովն ըլլայ, կամ սահմանապահն)։ Այս պա-
տիւներէս ոմանք, և ուրիշ շատեր այլ, Ա Սմբա-
տայ ատեն որոշուեցան, և ոմանք անկէ ետքը.
իսկ իր հօրը Աշոտոյ կարճ Թագաւորութեան ա-
տեն՝ ոմանք միայն, ուսկից անշուշտ իր որդւոցն
այլ մասն հաներ էր։

Ան էին (յիշեալ) որդիքն Աշոտոյ՝ Սմբատ Ա.
իր յաջորդ Թագաւորն, 'Իսրէլ, Սահակ, Շապուհ.
իսկ 'ի դստերացն յիշուին, մէկ մը՝ կինն Գուա-
գամայ իշխանորդւոյն Վրաց. երկրորդ, նախա-
գրեալն Սոֆի՝ տիկին Արծրունեաց. երրորդ Մա-

1 Յովհ. կաթ.։

բիամ՝ Սիւնեաց տիկին, կին Վասակայ՝ որ մակա-
նուամբ կամ փոխանունաբար կոչմամբ Գոբիոս կ'ը-
սուէր. զոր և Աշոտ երբ իշխանապետութեան
հասաւ՝ հաւանութեամբ ամիրապետին հաստա-
տեաց 'ի տերութեան հայրենեաց. կամ որոշ ը-
սելով Սեւանայ ծովուն բոլորտիքը եղած Գեղա-
մայ գաւառներուն. վասն զի բուն հարաւային
Սիւնիք (որոյ գլխաւոր գաւառաքն էին Վայոց ձոր
և Բաղք) զատ և աւելի մեծապատիւ իշխան մ'ու-
նէին, որ և բուն Սիւնեաց տէր կամ դասերեց
իշխան կ'ըսուէր. և այս առեն իշխողն այլ Վա-
սակ մ'էր, Իշխանիկ մականուանեալ. մեկայլքն՝
Սիսականք կ'անուանէին իբրև սերունդք Սիսա-
կայ 'ի Թոռանց Հայկայ, ևս և Հայկազեան. Արս-
բացիք Սիւնեան կոչեն զասունք, իսկ զբուն Սիւ-
նիս՝ իրենց գլխաւոր գաւառին Վայոց ձոր անու-
նը ծանելով՝ Վայոցիք կոչեն։ Այս առենուան և քա-
նի մը յաջորդ դարուց պատմութիւնը և անձինքը
որոշելու համար՝ հարկաւոր է այս զանազանու-
թիւնը գիտնալ[1], և մանաւանդ մականունները ո-
րոշել. զոր երանի թէ պատմիչք այլ միշտ ա-
նուանց քով նշանակած ըլլային, վասն զի անուա-
նակից իշխանք շատ կան, ինչպէս այս երկու մեծ
Վասակ իշխանքս. որոց մէկն փեսայ Աշոտոյ,
միւսն այլ թէ և ոչ խնամի, այլ նոյնպէս կու պա-
տուէր և կու պատկառէր յիշխանապետէն. «յա-
» ւէտ իմասաստութեամբ և հեզահամբոյր հանդար-
» տութեամբ և հաւանութեամբ մեծաւ հնազան-
» գէր Աշոտոյ իշխանին իշխանաց, և խրատու նո-
» րա զունկն մատուցանէր խնամով. իբրև զօրէնս
» միշտ 'ի սրտի իւրում պահելով. և 'ի ձեռն այ-

1 Պատմիչք մեր երբեմն այսպէս կու գանազանեն, երբեմն խառն կամ շփոթ կը յիշեն. Զամչեան պատմահայրն այլ մեր հոս դրածին հակառակ՝ զՏեղ Գաբուռին՝ Սիւնի կոչէ, զԻշխանիկն՝ Սիսական։

» Նորիկ յաւէտ ինն ընդարձակագոյն զտուն սէ-
» րուլթեան իւրոյ յարգարէր 'ի բոլոր բարեմասն
» լրութիւնս. և կայր բազում խազաղութեամբ
» ըստ ամենայն հանգիստի բարեպաշտութեան »:
— Իսկ Գաբրուեն Վասակ փեսայն Աշոտոյ՝ կարճ-
օրեայ մեռաւ, չորս կարիճ թողլով, Դրիգոր-
Սուփան՝ իր յաջորդը, Աշոտ, Սահակ և Վասիլ
կամ Վասակ. որք միշտ պատերազմաց հնազանդ
եղան, և մօրերնուն վրայ մեծ սէր և խնամք ցու-
ցին՝ Ցուսիայ հալածանաց առեն. բարեպաշտու-
թեամբ և շինութեամբ այլ անուանի եղան, ինչ-
պէս իրենց մայրն այլ Մարիամ։ *

* Աշոտոյ իշխանապետութիւն տարին հեռաւոր
աշխարհի մը մէջ այլ իշխանապետ մը անուանե-
ցաւ, և նոր տէրութիւն մը կանգնեց, որ հազա-
րամեայ տևողութեամբ և տարածութեամբ հա-
սաւ. Աշոտոյ տիրած տեղերուն այլ տիրեց. Բիւ-
րիկ Վարեկացին Շուեսի եղերքներէն եկաւ Զալ-
դիկ ծովուն արևելեան կողմը, ուր գտնուէ վեր
քնակէին Սլաւեանք. որք նեղեալ 'ի Ֆինեան ազ-
գաց՝ յօգնութի կանչեցին զնա. Բիւրիկ եկաւ այս
տեղս (862) Նովկորոտի քով, և յետոյ 'ի նոյն
իսկ 'ի քաղաքն գրաւ իր իշխանապետութեան աթոռը.
և այսպէս եղաւ սկիզբն լայնածաւալ ու մեծա-
զօր տէրութեան Ռուսաց, որ և յետ հազարա-
մեայ կենացն դեռ երիտասարդութեան ուժոյ
մէջ կ'երևի. մինչև իր ծնած կամ ձևացած ա-
սեն՝ Աշոտոյ ազգն արդէն ծերացեալ էր. Բիւ-
րիկայ ժառանգորդն երկրիս ծայրերէն կու մտա-
նայ 'ի կենդրոնն, իր հարաւագոյն երկիրն հիմա
գրեթէ Հայաստանն է. Աշոտոյ ժողովուրդն իր
կենդրոնական կողմերէն կու սփռի ինչուան Նով-
կորոտէն անդին, և իր հիւսիսագոյն գաղթականքն
գտուին 'ի մայրաքաղաքին Ռուսաց ('ի Բեգեր-
պուրկ)։...

Ժ

Իշխանապետութեան առաջին տարին՝ Աշոտ իր աթոռանիստ Շիրակաւանին քով զօրահանգէս մ՚ըրաւ իրենիներուն և հանգերձ իրեն հաւան և հլու իշխանաց և ազնուականաց զօրաք. իսկ անհաւան հիւսիսայնոց (կովկասեանց) գէմ՝ կու պատրաստուէր յարձակելու։ Մինչ դեռ հոս բանակած էր, Կ. Պոլսոյ բռնացեալ պատրիարքին՝ Փոտայ՝ նուիրակն եկաւ, թուղթ մը տուաւ առ իշխանապետն, և ընծայ՝ մասն՚ի սուրբ խաչափայտէն Քրիստոսի. զոր մեծ հաճութեամբ և հաւատով ընդունեցաւ Աշոտ, իբրև պատակ իր բարձրացեալ գլխոյն, յառաջ քան զթագն թագաւորական, և միշտ հետը տանէր ուր որ երթար։ Այս թղթով յորդորէր Փոտ զԱշոտ՝ ընդհանրական եկեղեցւոյ հետ միութիւնը անկասկած հաստատել՝ չորրորդ տիեզերական ժողովն ընդունելով. որոյ համար Զաքարիայ կաթուղիկոսին այլ առաջուց գրեր էր, և ըստ խնդրոյ նորա խաւրեր Նիկիոյ մետրապօլիտը՝ Վահան կամ Յովհան, իբրև իրեն երեսփոխան. որպէս զի բերան՚ի բերան խօսելով այս Հայոց և Յունաց մէջ հակառակութեան խնդիրը լաւ պարզէ և իմացընէ. ինքն այլ իր թղթին մէջ կու յիշէր այն ժողովքին համար եղածներն՚ի Հայս և՚ի Յոյնս։ Իշխանապետն և կաթուղիկոսն հրամեցին ժողովք ընել եկեղեցականաց և իշխանաց՚ի Շիրակաւան. որոց հետ գտուեցաւ և մեծանուն ասորի սարկաւագապետն Նանա, որ երբեմն՚ի խնդրոյ Բագարատայ իշխանապետի գրեր էր Յովհաննու աւետարանի մեկնութիւն մը՝ Ս. Հարց ասորերէն գրած կամ թարգմանուած գրքերէն հաւաքելով, և յետոյ արաբերէն թարգմանելով. վասն

զի անշուշտ այս լեզուն ծանօթ և ընտանի էր Բա-
գարատայ. որոյ գերութեան և բանտարկութեան
առեն՝ նախա այլ բանտեցաւ 'ի Զափրայ, և յետ
խստաւանական համբերութեան և նեղութեանց՝
ազատեցաւ. իսկ էր գիրքն ընկաւ Սմբատայ (ապա-
բարեսին) ձեռքը, որ և հայերէն թարգմանել
տուաւ. յետոյ մերս Աշոտ այս գիրքը թողուց
իր բարեպաշտ դստեր Մարիամայ՝ տիկնոջ Սիւ-
նեաց, որ նորէն թարգմանել կամ հայերէն շա-
րադրութիւնը կոկել տուաւ. որով մեր այս թ
դարու մատենագրութեանց կարգն անցաւ. և թէ
այս բանիս համար հարկ սեպեցի յիշել հոս, թէ
առենին և ժողովրդին անէնքը լաւ ճանչնալու։

Արաբացւոց բռնակալութեան առեն գրեթէ դար
ու կէս միջոց ժամանակի՝ Հայաստան նշանաւոր
եկեղեցական ժողով մը չէր եղած. յետ ժողովոյ
Յովհաննու Օձնեցւոյն (722-4) այս առաջինն էր
(862), ուր Վահանայ մեծարաբոլոր խոհական,
երկար և պարզ մեկնաբանութիւնքն, Աշոտայ
և Զաքարիայի ուղղասէր և խաղաղասէր ոգիքն՝
միաբանելով, ժողովին այլ հաւանեցաւ և ընդու-
նեցաւ Փոտայ առաջարկութիւնը. որով Հայք
աւելի մեծարեցան 'ի կայսերաց, ևս առաւել ի-
րենց իշխանութեանն ներքեւ եղողք։ Բայց գտաւ-
ցան և անհաւանք, ինչպէս Սահակ Մառուա, որ
և Ապիկուրէշ մականուանեալ, եպիսկոպոս Տա-
յոց յԱշուն[1], որ Յունաց ձեռքն էր այն առեն,
անկէ հալածուած եկաւ Աշոտայ քով, իբրև ժո-
ղովին պատճառը քննելու համար. և անոր հա-
կառակ մեօք թուղթ մը գրեց առ Փոտ, իբրև 'ի
դիմաց Աշոտայ, ինչպէս կ'ըսեն իրեն համախոհքն,
և ինչպէս կու կարդան այն ինքնակամ թղթին օ-

1 Անծանօթ, եթէ չէ Իշխան մեծ առեն Տայոց, կամ
Էօշք Թորիմումայ։

բինակաց մէջ. որուն թերևս միայն սկիզբն Աշոտոյ գրածն կամ գրել տուածն ըլլայ. «Քահանայապետի զգօնացելոյ, պարկեշտի և առաքինասիրի որ 'ի Քրիստոս վարուք, Փոտ վերապիտաղ մեծ քաղաքիդ Նոր-Հռոմայ պատրիարգ. Աշոտ իշխանաց իշխան Հայոց Մեծաց. Զդիր հանձարեղ խոհականութեանդ ձերոյ, ով աստուածարեալդ, ընթերցայ, և յոյժ ուրախութեամբ բարերանեցի զերկնաւորն ի Քրիստոս, զփրկիչն մեր և զկեցուցիչ, յաւէտ կենդանութեամբ զարբուութիւնդ ձեր տեսանելով պաշտպանեալ. այլ և զնախնականդ առ միմեանս զսիրոյն կապակցութիւնս, զորս ներբողական բանիւ յիշատակեալ էիք։ Ընորհ բազում ունիմ և կալայց Սրբութեանդ», և այլն։ Աշոտոյ հարազատ նամակ մը կայ առ Փոտ համառօտ, յորում ընդհակալ կ'ըլլայ զրկած խաչափայտին մասին համար, և առ կայսրն հաւատարիմ ըլլալուն վերայ, առ որ յորդորեր էր Փոտ. թէ և ասոր թղթին մէջ այս նիւթիս վերայօք ուրիշ բան չեմք գտներ բայց այս խօսքս. «Նախ յԱստուծոյ՝ պահպանական ընորհիւն ամրացեալ 'ի թշնամեաց, և յորդայթից պահպանեալ պատահմանցն. զինի և յորթոդոսաց[1] սուրբ թագաւորացն, զերկաքանչիւրսն ժառանգելով, զայժմուս և զհանգերձեալսն։.. Առաքեցաք քաջատոհմութեան և մեծանձնութեանդ քո՝ յիշատակ օրհնութեան 'ի պաշտպանեալ աստուածընկալ պատուական խաչէս»։

Իմ գտած Աշոտոյ պատասխանն և նամակն այս է. «Յաւէտ հեշտութեամբ ընկալայ, ով պատուական գլուխ և հայր սուրբ, զառ 'ի քէն գրեալդ. անխախտելի կալ մնալ մեզ 'ի

1 Այսինքն՝ ուղղափառ։

» սպասաւորական հնազանդութեան սուրբ և աս-
» տուածապարգև թագաւորութեանդ, ըստ աս-
» տուածային գրութեանցն՝ որ մեզ աւանդեցաւ.
» յորմէ ոչ երբեք խոտորեալ, քան եթէ միշտ 'ի
» նոյն խոկալով հնազանդութեան և սպասաւո-
» րութեան խորհուրդս. ցանկ սպասելով ազգե-
» ցեալ ինչ 'ի մեզ հրամանի ինքնակալ թագաւո-
» րութեանդ, զորս անսայթաք և առանց հնգ-
» գալոյ զփոյթ յօժարութեանն արդիւնաւորիմք.
» խորհրդով և երկիւղիւ, վերնական շնորհացն
» ազդեցութեամբ։ Այլ և զքոյդ պատուական
» սիրելութիւնդ՝ անընդմիջաբար 'ի խորհուրդս
» իմ յաւէտաբար կրեմ զսիրոյն կապակցութիւն,
» ըստ արժանաւոր քոյդ մեծութեան, և պար-
» կեշտ և նազելի և մաքուր վարուց. ըստ որում
» հայցեմ 'ի նուիրական և մշտահայց յընդունակ
» քո ազօթս և զմեզ յիշատակել. հայցելով յա-
» պէնիազն Աստուծոյ, զի և 'ի մեզ կանխեսցէ զա-
» ռատապարգև շնորհացն իւրոց զողորմութիւն։
» Եւ խաղաղութիւնն Աստուծոյ վերստինանա-
» ցի ձերում սրբութեանդ, պահպանելով ան-
» վրդով յամենայնի զքոյդ արժանաւոր և պար-
» կեշտ գլխաւորութիւնդ։ Օրհնութեանս՝ զոր
» առաքեալ էք յաստուածընկալ և յամենա-
» յաղթ նշանէդ, խոնարհ երկրպագութիւն մա-
» տուցի. և շնորհակալութիւն, յաւէտ միւս ևս
» վայելչական ողջունիս »։ Այս վերջի խօսքս կ'ի-
մացնէ որ իւաչափայտէն զատ վայելուչ ողջոյն մ'այլ խաւրեր էր Փոտ, որ թերևս շնորհաւորու-
թիւնն ըլլայ Աշոտոյ Իշխանապետութեան համար։

Այսչափ բաւական սակայն հիմայ, Հայկակ, այս խնդրոյս և գիպուածոյս վրայ. և եթէ սուելի ու-
զես, հարցուր մեր նոր պատմահօր (Զամչեան), որ և կու. յիշէ այդ թղթագիր Սահակայ և Աշոտոյ սնուամբ հարցմունք և պատասխանիք. 'ի

հարկէ նոյնպիսի խնդրոց վրայ, բայց շինծու և ուրէն կարկըտած։ Իսկ ես յիշեմ տաղ մը 'ի Ցաղ-ութիւն Քրիստոսի, որոյ սկիզբն է.

Սուտեանք ձայնեալ զուարթնոյն ըղձարաւ-թիւն խաչեցելոյն,
Հուրջ պատեալ ըզվիմանն եւ զկափարիչ գերեզմանանն.
Դեր սուրբ կատարքն խուճապեալ, եւ վար-շամակն աղաղակէր,
Հէր յարեաւ. պատանն զայս ամենայն ակն-զերաց։

Ինչպէս կու տեսնես տողագլուխ տառքն կապեն Աշոտ, և շարունակելով բոլոր տաղն կապէ Ա-ղբ Խաղաղարար Խաղաղ Սահակ. կրնայ կարծուիլ թէ այս Մատուռ Սահակս երգած ըլլայ Աշոտոյ Թագաւորած տաճն և շողոքորթութեամբ Թա-գաւորաց Թագաւոր անուանած. բայց գուցէ ան-ծանօթ Սահակ մ'այլ ըլլայ՝ անոր Թուական ժա-մանակ՝ (Բ Աշոտոյ Երկաթի) որ Շահանշահ ըսուե-ցաւ, այսինքն Թագաւորաց Թագաւոր, որովհե-տև իր տաճն (30 տարի յետ Մեծին Աշոտոյ) ուրիշ աղգակից և սահմանակից Թագաւորք այլ բուսան։ Փոտ ինչպէս Աշոտոյ՝ այսպէս Ջաքա-րիայի այլ պատճառ եղաւ Թղթակցութեան և Ցունաց մտանելու. կաթուղիկոսն ուրիշ եկե-ղեցական խնդիրներ այլ ըրաւ Վահան մեծրա-պօլսին հետ, և նոր ու հին տեղեկութիւնները խառնեց իր գրած Հաւերուն մէջ։

ԺԱ.

Ժողովքին յաջորդ տարին (863) մեծ բնական գիպուած մը պատահեցաւ 'ի Հայս, որ թէ իշխանապետին և թէ քահանայապետին գուռը և խնամքը շարժեց։ Այս դարուս (Թ) գրեթէ բոլոր վերջին կիսուն ատեպ երկրաշարժեր եղան արևելք. Կ. Պոլսէն սկսեալ ինչուան 'ի Հնդկաստան, մեծ վնասներով. շատ անգամ այլ հանգիպեցաւ 'ի Հայաստան, որուն լեռներն և հրաբղխի կազմուածքն գեանաժամի ահեղ թատր կ'ըլլան. այս միջոցիս մասնաւոր թատր և ողբական թատր եղաւ Դուին քաղաքն իր սահմաններով։ Այս քաղաքս յետ մահուան մեծին Տրդատայ, 'ի կէս Դ դարու, կանգնեցաւ Հայոց հին մայրաքաղաքին՝ Արտաշատայ քով, տափակ բլրի մը վրայ, որ կ'երևի թէ մարած հրաբղխի կատայ մ'է. 500 տարի 'ի վեր էր որ Հայաստանի առաջին քաղաք կու ճանաչուէր, և յետ մեր վերջին Արշակունի թագաւորաց՝ ամեռ եղաւ Պարսիկ մարզպանաց և յետոյ արաբացի ոստիկանաց, և այնպէս էր գեռ այս յիշած տառենս այլ, և անկէ այլ ետև գրեթէ դար մը և աւելի այլազգեաց ձեռքն մնաց։ Մեծ մայրաքաղաքի մը շատ յատկութիւններ ունէր. բազմամարդութիւն, հարստութիւն, շինութիւն, շռայլութիւն, և այլն. անոր համար պատմիչք ժամանակին՝ եղած վտանգը քաղաքացւոց մեղաց պատուհաս կու սեպեն, որոց մէջ թէ քրիստոնեայք թէ այլազգիք շատուր էին. և յիրաւի զարմանալի է որ այս տառենս, (30 տարուան միջոց) երեք մեծ ժամ կու յիշեն պատմիչք, երեքն այլ 'ի Դուին հանդիպած, մեկմեկէ սաստիկ և ահեղ. առաջինն եղաւ այս թուիս (863) մեծ

պահաց մէջ[1], և շատ չէնք փլան քաղաքին ամէն կողմն այլ, հանդերձ մասամբ պարսպաց քաղաքին. և որ աւելի կսկծալին է 12,000 հոգի փլատակաց տակ կորաւ. մնացեալ բազմութիւնն սարսափած տուներէն փախան, և ուրիշ ծածք չգտնողք՝ հրապարակ և բաց տեղեր կենային. ետ զանակն այլ դեռ ձմեռ ըլլալով, և սաստիկ ձմեռ, շատերն ցրտէն մեռան, ինչուան ոմանք սառելով կամ ձեռքերնին և ոտուընին կորսընցնելով։ Աւելի վախ տուողն այլ ժաժին նոր սպառնալիքն էր, վասն զի իրեք ամիս առեն առեն կ'երերար գետինն։ Սոր համար Զաքարիա կաթուղիկոս աղօթք հրատարակեց հաւատացելոց, ինքնին աղօթականաց գլուխ կենալով. և իր բարեպաշտութեան պտուղ սեպուեցաւ սասանութեան գադրիլն։ Բայց չորս հինգ տարի ետև (867-8)[2] նորէն ժաժ եղաւ և գրեթէ ամբողջ տարի մը քշեց, երբեմն աւելի երբեմն պակաս մնաս ընելով. սակայն բոլոր կորուստն մէկ տեղ բերելով սոսկալի թիւ մը կու նշանակէ պատմիչ մը, 120,000 հոգի փլատակաց և պատառամնաց մէջ փնտացած. եթէ գրչաց մէջ սխալ չկայ, որ բացարձակ կու գրեն, « Խորասուզեաց յանդունդս իբրև երկոտասան » բիւր մարդկան. ահա խոտոյ նմանութիւն ասի « մարդ »։ — Բայց ասկէ ահեղ և մեծ սեպուած է 25 տարի ետև հանդիպածն (893) Աշոտոյ մահուանէն քանի մը տարի վերջը. վասն զի յանկարծակի և գիշեր առեն եղաւ, և այնպէս սաստիկ՝ որ քաղաքին մեծ մասն կործանեցաւ. և

1 Փոտրեի ըմբռնան կ'ըսե Ասողիկ պատմիչն. բայց չեմ գիտեր առաջին ըմբռնթն է Պահաց, թէ ուրիշ ըմբռնմ մը։

2 Կամ երկու տարի այլ ուշ. վասն զի ի Ձեռագիրս թիւն տարբերի, ոմանք ունին ՊԺԶ (867-8) ոմանք ՊԺՐ (868-9)։

70,000 ոգի մեկ ցնցմամբ ընկան անկանգնելի. որ ոչ միայն մարմնաւոր կենաց՝ այլ և հոգւոց մահուան մեծ վախ առաւ. վասն զի շատերն շփոթելով կարծէին թէ Աստուծոյ նախախնամութիւնն բոլորովին հեռացեր է անոնցմէ. որոնց սիրտը և հոգին բժշկելու՝ միայն հնարաւոր գըտաւեցաւ Սեան կղզւոյ վանահայրը մեծ և գիտնական Հգնաւորն Մաշտոց, որ այն ատեն 'ի Հայաստան առաջին անունն էր որքութեամբ և կրօնաբերութեամբ, և ամենուն ծանօթ. որով և յաթոռ կաթուղիկոսութեան հրաւիրեցաւ (897)։ Թէ ժամանակիս ամենէն նշանաւոր անձանց մէկն ըլլալուն, և թէ Աշոտոյ հետ այլ ծանօթութիւն ունենալուն՝ հարկաւոր և սիրաշահելի է հիմայ թողուլ զ'Իւրին կիսաւեր կիսականգուն, և Սեանայ մենաւորը նկատել։

Մաշտոց, որոյ մկրտութեան անունն թուի Ստեփանոս, Աշոտէն իբրև 14 տարի վերջ յաշխարհ եկած է (833-4) քահանայական ազնիւ ցեղէ մը, յԵղիվարդ գեօղ Այրարատայ, Արայի լերան ստորոտը. ուր առաջին տարիներն անցուց իր հօր՝ Գրիգոր քահանային խնամոց և դաստուութեան տակ. որ և այն ատենի բռնաբարոյ ոստիկանաց նեղութենէն զզուած, թողուց հայրենիքը և եկաւ Գեղամայ ծովուն հարաւակողմը Սոթք գաւառին մէջ բնակեցաւ, և բարեպաշտութեամբ կու կրթէր զաւակները. որոնցմէ ըզ-Մաշտոց՝ երբ չափահաս եղաւ՝ դրաւ 'ի կրթութիւն և 'ի կարգ քահանայութեան 'ի վանքն Մաքենոց, որ Գեղամայ և Սոթից գաւառին միջոց ծովուն մօտ՝ սարատափ տեղ մը շինուած է, և հիմայ Գոշըգիւլէ կ'ըսուի. իսկ այն ատեն այն կողմերուն, և թերևս բոլոր Հայոց վանքերուն մէջ նախապատիւ էր, իր միանձանց խստակրօն վարուք և գիտնականութեամբ. որոց պատճառ

եղած էր իմաստասուն հայրն Սողոմոն, դար մը և աւելի առաջ։ Այս վանքս որ քանի մը Սողոմոն-ներու մենարան, Ստեփանոս Սիւնեցւոյն վարժարան, Վահանայ Գողթնացւոյն օթևան եղած էր, Մաշտոցի այլ մարզարան եղաւ. Թէպէտ և քիչ առաջ Բաբանայ բռնութեամբ աւերուած էր, և միանձունքն ցրուըտած, բայց Աշոտոյ փեսային՝ Վասակ՝ նորէն նորոգել տուեր էր (յամի 851), և կրօնաւորքն ժողովեր էին, որոց հիմակուան առաջնորդն էր Ստեփանոս անուամբ մէկն. որ դասախարակեց զՄաշտոց, և քահանայ ձեռնադրել տուաւ Սիւնեաց եպիսկոպոսին (Դաւթի)։ Մաշտոց հոգևոր և գրաւոր կրթութեամբ հոն կատարուելով, և աւելի առանձնական ճըգնական կենաց փափագելով. Թողուց արդէն բաւական խստակրօն (Մաքենոցաց) վանքը, և Արարատեան-ապարանք ըսուած տեղը անապատասուն ճգնաւորաց մէջ գնաց։ Քիչ առենէն անկէ այլ եկաւ, և եկաւ՝ այն տարին յորում Աշոտ իշխանապետութեան հասաւ (862), ինքն այլ մտաւ 'ի Սևան, յամայի և միայնուկ կղզին Գեղամայ ծովուն. և քան զնա զարմանալի սիրութիւն կամ հասարակութիւն մը հաստատեց, որ և յետ վերցուելու Աշոտոյ սէրութեան և ցեղին, և յետ հազար տարւոյ՝ դեռ ինչուան հիմայ այլ կու գիմանայ։ Այս հասարակութիւնս էր խստակրօն ճգնաւորաց միաբանութիւն մը. վանք մը, որ թէ և այս հազարամեկիս մէջ միշտ չմնաց առաջին փայլման մէջ 'ի սրբութեան և 'ի գիտնականութեան միաբանից, և զանազան գիպուածներէ անցաւ, 'ի վերայ այսր ամենայնի գրեթէ ամենէն հին մնացած և բնակած վանքն է մեր աշխարհին մէջ. 'ի բաց առեալ քանի մը մեծ ուխտատեղի և եպիսկոպոսական աթոռներ (ինչպէս յերկիրն Աշտ)։

Լեռներով շրջապատած և ընդարձակ ծովակի մը մէջ մէկ հատիկ կղզի մը, որ իր բնագիր բարձրութեամբն (մեծ ծովուն երեսէն 6000 ոտքէն աւելի վեր ըլլալով) տարուոյն քանի մը ամիսը բոլորովին սառած ապիտակ անապատ կու դառնայ։ Ի՛նչ յարմար առանձնութեան և մասնաւորութեան տեղ. թերևս աւելի այլ կ'ըլլար, եթէ կղզին քիչ մ'այլ աւելի ծովակին մէջտեղուանքն ըլլար. բայց անոր մէկ ծայրն է ցամաքին մօտ, այնչափ որ բարձր կանչելով ձայնն կու հասնի և կու լսուի. բայց ով որ աղաղակ չխիրեր, նա և ոչ կու լսէ։ Մեր աշխարհին ամեն մեծ ծովակներն այլ այսպէս մենացեալ կղզեվոնքեր ունին, որք հին և հեթանոսութեան ատեն այլ շատուածոց նուիրեալ տեղիք էին, և երբեմն նաև ամուր և ապաստանի տեղ կամ բերդ։ Այսպէս էր և Սևան. ուր, կ'ասանգեն, թէ Ս. Լուսաւորիչն կործանելով կուռց մեհեանը, և տեղւոյն լուսաթիւնը տեսնելով՝ ըսած ըլլայ, Այս է վեն, այսինքն վանքի յարմար տեղ, և անկէ ելած ըլլայ Սեան անունն. բայց պէտք է որ անկէ հին ըլլայ այդ անունդ։ Մեհենին տեղ Լուսաւորիչ պզտիկ մատուռ մը շինեց, կ'ըսեն, յանուն Ս. Յարութեան, որոյ և կործանած պատերուն մնացորդն կարծուի թէ ինչուան հիմայ կ'երևի. իսկ ուրիշ հին շինուածոց մնացորդքն այլ ջրին տակ երբեմն կ'երևին. ըսել է որ ջուրն բարձրացեր է. և կարծուին մնացորդք այն ամրոցին՝ ուր Ը դարու մէջ քանի մը հեղ ամրացան Հայք Արաբացւոց ապստամբութեան առեն. բայց վերջապէս Արաբացիք մտան հոն և աւրեցին. թէպէտև անկէ վերջն այլ շատ հեղ նոյնպէս ամիրութեան և ապստամբի տեղ եղաւ կղզին։ Իսկ Մաշտոցի հոն քաշուած տեղն՝ անչէն և երեսէ թողած տեղ մը կ'երևի, Սիսական իշխանաց տէրութեան տակ։ Իրեն ու-

զածն այլ այսպիսի ամայի մռայլեալ տեղ մ'էր, ուր ձմեռուան սառամանեաց և գարնան պան-
ջնլի ծաղկազարդութեան մէջ՝ տան տարիէ ա-
ւելի միայնակ Աստուծոյ հետ կենակցէր։ Բայց
անկարելի եղաւ մարդկանց ծանօթութենէն և
մեծարանքէն ազատիլ. շնորհալի վարքն, խօսքն,
գիտութիւնն՝ իր անունը հռչակեցին. այն կոզմ-
բուն տիկինն՝ նախայիշեալն Մարիամ, գուսար
մեր Աշոտոյ, ծովուն եզերքը նորաշէն եկեղեցեաց
կու զարդարէր. և կ'ըսեն թէ իր վաղամեռ ընկերն՝
Վասակ՝ կտակաւ պատուիրեր էր իրեն որ 40 ե-
կեղեցի շինէ իր հոգւոյն յիշատակին. հիմայ բա-
րեպաշտ տիկինն լսելով Մաշտոցի համբաւը և
Սեւանայ միայնութիւնը, ուզեց երկուքն այլ
տեսնել և հոն այլ եկեղեցի շինել։ Մաշտոց՝ այն
տեղը Ճգնաւորանոց սեպելով՝ չէր հաւանիր որ
կին մարդ մտնէ. բայց յետոյ, կ'ըսեն, տեսիլք
տեսնելով և Աստուծոյ կամքն իմանալով՝ թոյլ
տուաւ, որ գայ Մարիամ և ընարէ տեղ, ու եր-
կու եկեղեցի շինել տայ, մէկն յանուն ԺԲ Առա-
քելոց, մէկայլն Ս. Աստուածածնի. երկուքն այլ
կանգնած յամին 874. որք յետոյ առեն առեն
նորոգուելով գեռ նոյն գիրքով և մեծութեամբ
կանգուն և չէն են, և Հայաստանի հին եկեղե-
ցեաց մէջ յիշուին։ Կզզոյն արևելակողմը՝ քա-
րոտ և գժուարին, միանգամայն և ցամաքէն ամ-
նէն հեռու տեղը՝ երկու քարուկիր խցիկներ կան,
որ Մուտոյներ կ'ըսուին, և Մաշտոցի առանձին
Ճգնարանքն Ճանաչուին. ուր, թողլով արդ զինքը՝
իր աշակերտաքն, քանի մը տարի վերջը նորէն
դառնանք բարևելու Աշոտոյ հետ. հիմայ պէտք
է ասոր հետ ըլլալ։

ԺԲ

Ժամին տարին՝ կամ եղած չփոթութիւնը իրեն օգնական առնելով, կամ իր երկրին ասերածը ուրիշ երկրի աւարով լեցընել ուզելով, Ջահապ՝ Սևագայի որդին (զոր Աշոտոյ պապուն առեն յիշեցի) որ Դուռնայ կողմերուն կ'ինկնէր, յանկարծ զօրքերը ժողովեց, Աշոտոյ բուն սիրուն և ժառանգութեան մէջ մտաւ, Արշարունեաց կամ Երասխաձոր գաւառը. և այս գեղոյս հարաւային կողմը անցնելով բանակեցաւ։ Աշոտ իր նոր սպարապետին, (որ էր իր երիտասարդ եղբայրն Աբաս) յանձնեց բոլոր իր ձեռքին տակ եղած զօրքը. Աբաս ժողովելով իրեններն այլ, գումարեց 40,000 կարիճ և շատ արիւն տեսած զօրք. զորոնք պատրաստելով Կաղզուանայ քովերը, Ջահապայ չկարծած առեն վրան հասաւ, և առնոր բոլոր բանակը ցիրուցան ըրաւ. ոմանք սրի տակ ընկան, ոմանք ջրին մէջ՝ գետէն անցնելու աշխատելով, քիչերն կրցան փախչիլ, որոնց մէջ Ջահապ այլ 16 մարդով հազիւ կրցաւ ազատիլ և ամօթով գտնալ։ Իր բանակած և յաղթուած տեղն 'ի յիշատակ 40,000 զօրացն Հայոց՝ Քառասնից կոչուեցաւ. Կաղզուանէն քիչ հեռու, բայց Երասխայ մեկայլ (հիւսիսային) կողմը հիմայ կու նշանակուի Քէռա անուն գեղ մը, թուի թէ նոյնն է, անունն քիչ մը կարճցած. իսկ գետն՝ որ այն տեղուանք ընթացքը շատ փոխած է, կ'երևի թէ հազար տարուան շարժմամբ քիչ մ'այլ աւելի դէպ 'ի հարաւ իջեր է. բայց ուրիշ տեղ մ'այլ կու նշանակուի դէպ յարևելք և գետերքը Քրոնոն անուամբ. այս երկուքէն որն է Աբասայ յաղթութեան տեղն. – երբ յայն կողմերը յայց ելլենք, ջանանք ստուգելու։

Աշոտ այս դիպուածին մէջ ամիրապետէն նկատելու ամենեւին հոգ չունէր. որովհետեւ Զահապ ոչ ամիրապետին կամքը տիրեր էր, և ոչ այլ իրաւունք մ'ունէր. ուրեմն այս գործով ոչ միայն իր իրաւունքը և աղդը պաշտպանեց, այլ և ուժը բաւական ցրցուց շրջակայ ամիրայից և աղդաց այլ, որք երկար առեն հանգարտ և սիքած կեցան, իրենց այլ դիմացինին այլ չափը ճանչնալով։

Տասն տարուայ չափ պատմութիւնն նոր դէպք մը չի յիշեր. յայտնի է որ խաղաղութեան տարիներ էին (863-873), Աշոտայ քաջութեան և խոհեմութեան պտուղ. միանգամայն և աշխարհաշինութեան տարիներ. թէ ինքն Աշոտ, թէ եղբարքն և թէ փեսայքն՝ այս միջոցիս շատ շէնքեր շինեցին և նորոգեցին։ Ժամանակն գարձեալ անոնցմէ շատը ընջնց, մանաւանդ քաղաքական շինուածները. իսկ եկեղեցեաց մէկ մասն դեռ կեցած է, քիչ կամ շատ խախտած և նորոգուած, և ասկէ հազար տարի առաջ հայկական ճարտարապետութեան օրինակ մը կրնայ ըլլալ։

Այս խաղաղութեան և շինութեան միջոց կաթուղիկոսն այլ իրեն վայելուչ շինութիւններ և կարգաւորութիւններն ըրաւ. ինքն այլ քահանայապետական իշխանութիւնը պայծառացուց և պատկառելի ըրաւ այլազգեաց անգամ. այնպէս որ երբ այցելութեան գնաց առ Յիսէ որդի Շէխեայ (873), (որ ամիրապետէն կողմնակալ ղրկուած էր Ասորւոց կողմերու ինչուան 'ի Պաղեստին, միանգամայն և Հայոց այլ վերատեսուչ), ոսաիկանն յեռ մեծարանք ընդունելու զՀաքարիա՝ երթալու առեն իր հանդիսի դրօշներէն (ալամ) մէկն ընծայ առաւ, և իշխանութիւն այլ՝ որ վրան խաչ կանգնէ և միշտ իր առջեւէն տանի ուր որ երթայ հանդիսիւ։ Այսպիսի բան դուցէ

իրմէ առաջ եղած չէր։ Նոյն մարգասիրութիւնը ցոյց տուաց Աշոտոյ այլ. մանաւանդ թէ իրաւ ընկեր գործակից առաւ զանիկա։

Այս տեսիլներս Վասպուրականի մէջ նորէն չփոթութիւն ծագեցաւ. Աշոտ տէրն Արծրունեաց՝ իր որդւոյն Դերենիկան ըրածին պէս ուզեց գարձեալ զրկել զԳուրգէն (որոյ վրայ երկար խօսեցայ), անոր Անձաւացեաց երկրէն. թէ ոչ բոլորը՝ գոնէ զկէսը կ'ուզէր առնուլ և իր որդւոյն տալ. յանկարծ զօրաք կոխեց Գուրգենայ երկիրը. և պատգամ խաւրեց որ եթէ չուզեր պատերազմ՝ թողու երկրին կէսը։ Գուրգէն անիրաւութեան գէմ իրաւամբ պատասխան տուաւ. Ձիս իմ հայրենի երկրէս դուրս հանեցիք. Աստուած ինծի ուրիշ տեղ մը տուաւ, զայս այլ կ'ուզէք յափշտակել. միթէ միայն գուք պիտի տիրէք երկրի. Աստուած այս բանիս դատաստանը պիտի տեսնէ։ Եւ առանց տեսն կարնցընելու՝ իր եղբօրորդւոյն (Գրիգորի) ձեռքը քանի մը հարիւր կըտրիճներու գունդ մը տուաւ. զոր իմանալով Աշոտ՝ արհամարհեց և անհոգ կեցաւ. բայց անոնք գիշերանց ընկան Արծրունեաց բանակին վրայ և շփոթելով ցրուեցին, հանգերձ անոնց իշխանաւն. որ այս ամօթալի փախչելու փոխարէն, կամ վրէժը պահանջելու համար՝ 8,000 հեծեալ ժողովեց իր և շրջակայ երկիրներէն, մեր իշխանապետին որդին Սահակն այլ գլուխ զօրաց դրաւ, (որ կ'երևի թէ իր քրոջ և քեռւոյն քով էր նոյն ատեն). ասոնք ելան գացին պաշարեցին Կանգուար բերդը, ուր ամրացեր էր Գուրգէն, և երկու ամիս աշխատելով՝ բան չկրցան ընել։ Սահակ՝ իր հօրը խաղաղասէր ոգին բանեցուց, թերևս անկէ պատուէր այլ առնելով. և միջնորդ եղաւ խաղաղութեան. զօրքերը արձակեցին. Գուրգէն և Աշոտ արծրունի եկան զիրար տեսնելու, հաշտութեան ուխտ դրին և սիրով բաժնուեցան։

Արծրունին այս գործը թողլով՝ ուրիշի մը ձեռք զարկաւ, որ թէ և աւելի իրաւացի՝ այլ նոյնպէս դժուար և անյաջող. Վանայ երկրին հիւսիսակողմն կայ երկիրն Ամկոյ, որ Վասպուրականի գաւառ մ'էր, բայց հարիւր տարիէ աւելի էր որ ապստամբացի ցեղ մը Ռ-Մանի կամ Էմանիի ըսուած կուտիրէր անոր. և այս առենս անիրաւութեամբ՝ Աշոտոյ գլխաւոր իշխաններէն մէկը սպաններ էր (Ռոսատոմ Վարաժնունի). որոյ արեան վրէժը պահանջելու և իր հին հայրենեաց ժառանգութիւնը ամբողջացնելու համար՝ Աշոտ և իր որդին Դերենիկ, (երկուքն այլ տարբերութիւն) եկան պաշարեցին Ամկոյ բերդը, որ ամրութեամբ շատ անուանի և անառիկ ճանաչուէր. այնպէս այլ մնաց հիմայ։ Հոն բան չկարենալով տեսնել, եկան Արծրունիք Վարագ լերան կողմերը ամրոցներուն տիրելու. քանի մ'առին, մէկն այլ պաշարեցին, և մեռա էին առնելու, երբ յանկարծ մեծազօր թշնամի մը հասաւ վրանին՝ 16,000 սպառազէն ձիաւորաց. մեծ կողմնակալն Ցիսէ, հանգերձ Մանազկերտի այլազգի իշխանին զօրքերով, զորս յօգնութիւն կանչեր էին Ռ-Թմանիկք։ Արծրունեաց առէրն և որդին իրենց սովորական յանդգնութիւնքն՝ բերդին պաշարումը թողլով, 2,000 ձիաւորով 12,000աց դէմ ելան. խոհեմ իշխան մը՝ Վահան՝ ցուցընելով յայտնի վտանգը կու խրատեր զԱշոտ որ յետ քաշուի. և հազիւ կրցաւ նոյն իսկ Ցիսէի իշխանաց մէկուն հետ միաբանած՝ խօսք հասկցընել Աշոտոյ և յետ դարձընել. Ցիսէ եկաւ մտաւ 'ի Վան. ուր Դերենիկ՝ Աշոտոյ որդին, և Գագիկ՝ Վահանայ որդին, ազատաւոր եկան առ կողմնակալն, պատանդ տուին, խոստացան հարկերն այլ տալու, և խաղաղութեամբ դարձուցին զՑիսէ։ — Այս դիպուածէս քիչ վերը մեռաւ Աշոտ (874) և տեղն անցաւ իր գործակից որդին Գր. Դերենիկ՝ մեծին Աշոտոյ փեսայն։

ԺԳ

Իսկ Ցիսէ կողմնակալն այս կողմերէն ելնելով գնաց Հայ-Աղուանից երկիրը, 'ի Պարտաւ մայրաքաղաքն, որ 'Իունայ պէս արաբացի ոստիկանի մը ամրոց էր. հոն իբրև իրեն փոխանորդ Թողուց Սմենցի Արաբ մը Մուհամմէտ Իպիւլվէտ անուն, զոր պատժիչք մեր անուանեն Սմեմիկ կամ Համանիկ Մահմեդ որդի Ապվիտայ կամ Ապվիտոյ։ Սա Ցիսէի հեռանալէն ետև տեղացի իշխանաց հետ միաբանելով՝ գլուխ քաշեց զինքը հասատողէն. Ցիսէ իմաց առաւ մեր իշխանապետին, և միարան եկան ապստամբին վրայ ու պաշարեցին Պարտաւ քաղաքը. ժամանակն յարմար չըլլալով յետ դարձան, և նորէն եկան. և թէպէտ 13 ամիս այն կողմերը կեցան, բայց չկրցան առնուլ քաղաքը. Ցիսէ կուփուռթար իր տեղը և իր գործոցը դառնալու. Աշոտ այլ պարզանոր օգնելու և ամիրապետին հաւատարիմ երևելու համար եկած էր, քան թէ ինքնակամ Պարտաւայ բռնաւորին հետ կռուելու. սակայն այս բանս բաւական առիթ եղաւ իր և անոր մէջ թշնամութիւն ձգելու։ Արդ երբ Ցիսէ բոլորովին հեռացաւ, Սմենիկն համարձակութիւն գտաւ վրէժը պահանջելու. երես երեսի գալ, զօրքով Աշոտոյ դէմ ելնել չէր համարձակեր. աւելի անաչխատ և ստիպողական կերպ մը գտաւ զԱշոտ իր ձեռքին տակ ձգելու, եթէ Աշոտ այլ իրմէ աւելի խորագէտ և հնարագէտ չըլլար։

Մուհամմէտ Թուղթ Թլթի վրայ գնացին գնացանի վրայ կու խաւրէր Հայոց իշխանաց՝ որ զինքն ընդունին իրենց երկրին ոստիկան, շատ գիւրութիւններ խոստանալով. անոնք Աշոտոյ հետ միաբան՝ իմանալով խորամանկութիւնը՝ իրմէ առաջ

մարդ խաւրեցին առ ամիրապետն, և ոստիկան խնդրեցին զԱհմատ Իպն-Խալէտ (Ահմատ որդի Հալթի, կամ Համտգա՝ ըստ պատմչաց մերոց) որ առաջ այլ քիչ մ'առեն Բուղայի երթալէն վերջը ոստիկան եղած էր 'ի Հայս (856)։ Ամիրապետն հաւանեցաւ Հայոց խնդրոյն. Ահմատ փութացաւ իր հին աթոռը. և երբ Աստրեստանէն մտաւ 'ի Դատուան (մօտ 'ի Բաղէշ) որ շատոնց արաբացի իշխողաց աթոռ մ'եղած էր, բոլոր մերձակայ երկիրներու իշխանքն ընդ առաջ եկան, որոց մէջ էր Գր. Դերենիկ Արծրունեաց տէրն, Աշոտ կիւրապաղատ (որդին Բագարատայ) տէր Տարօնոյ։ Մեր իշխանապետն այլ իր կողմանէ խաւրեց իր Շապուհ եղբայրը. ամենքն այլ ընծաներէն զատ, հետերնին զօրք այլ առած էին, որ հանդիսով տանին նստեցընեն զնա 'ի Դուին։ Աստոց հետ եկեր էր նաև Մանազկերտի կողմերուն իշխող արաբացին Էպիւ-Ֆէրս (Ապլբաս), և ուրիշ այլազգի իշխանք։ Եմէնիկին կողմանէ այլ մարդ կամ թուղթ կար, որ իր ոխը չմոռնալով գրգռեց բոլոր կրօնակիցները և զնոյն ինքն Ահմատ՝ Հայերը բոլորովին նուաճելու։ Նորընտիր ոստիկանն ապերախտութեամբ հաւանեցաւ բանսարկուներուն, և գրեց առ Եմէնիկն՝ որ զօրք պատրաստէ և իբրև իրեն թշնամի ձևացած գայ 'ի Հայաստան, երբ ինքն Հայոց իշխանները 'ի Դուին ժողովէ՝ հարկերը պահանջելու համար. և այսպէս երկու կողմէն զանոնք մէջ փակելով՝ ուզածնին ընեն։ Զգաստան Աշոտ որ Եմէնիկին ինչ ոգւոյ և կրից տէր ըլլալը լաւ գիտէր, և այն այլազգեաց հաւատարմութեան չափն այլ. ամեն գլխաւոր ճամբու անցքերու վրայ ծածուկ լրտեսներ գրեր էր. և թէպէտ իր թշնամիքն այլ ծածուկ հնարքներ կու բանեցընէին, և նամակները չկարծուած բաներու մէջ կարելով կու

խաւրէին, բայց իր աչալուրջ լրտեսներէն ամենքն այլ չազատեցան. Թուղթ և Թղթատար բռնուեցան։ Աշոտ առանց ձայնձնելու՝ Թղթատարները յարգելան գրաւ, Թղթերն ալ քովը պահեց. և ոստիկանին քով եղած իշխանաց իմացուց որ ըզգուշանան. անոնք ալ մէկիկ մէկիկ զօրքերնին հեռացուցին փախան, իրենց տեղը գարձան։ Ահմատայ յուղարկաւոր չգտուեցաւ՝ բաց Էպիւֆիէրսի զօրագնդէն, որոցմով կորագլուխ եկաւ մտաւ 'ի Դուին։ Իշխանապետն այլ ընծաներով գնաց 'ի պատիւ անոր, միանգամայն և 'ի փորձել. և իմացաւ որ Սմբատիկէն աւելի լցուեր է նախով, և մեծ մեծ կուրբրդէ. առ ժամ մը լռեց Աշոտ իբրև չիմանալով միտքը, ինչուան որ ապերախտին սպառնալիքն սկսան աւելի յայտնի ըլլալ։ Այն առեն ինքն այլ անվախ և տիրաբար հրամմեց գատել զնա. որ իբրև վերակացու էր եկեր Հայոց, և խարդախ դաւաճանող կ'ըլլար։

Հանդիսական օր մը ելրբ առաւօտուն Ահմատ հանդիսի ելած իշխանական վրանին տակ գոռոզացեալ կեցեր էր մեծամեծաց շնորհաւորութիւնը ընդունելու, և անհամբեր կու սպասէր Հայոց իշխանաց իշխանին այցելութեանը. յանկարծ տեսաւ որ անոր եղբայրն է ներս մտնողն, Աբաս սպարապետն. և յիրաւի սպարապետի յանդգնութեամբ, սպառազինութեամբ, կայտառ և տհարկու կերպարանօք. որուն անսովոր և զինեալ այցելութեան վրայ զարմացած՝ բարկանալու առեն չմնաց. վասն զի իմացուեցաւ որ գուրսն այլ զինուորաց պատրաստութիւն կայ. ականջներն ցցուեցան, լսեց զինուց և վահանաց շկահիւնը, ձիոց ոռնաձայնը և խրխինջը. վախն առաւ սիրտը, և գրեթէ մեքենաբար երկընցուց ձեռքը առ Աբաս՝ որ Թուղթ մը կու տար իրեն... Ի՞նչ ցուրտ զարմանք, ինչ գունատութիւն, ինչ

գող եկաւ վրան, երբոր տեսաւ իր իսկ մատնու-թեան թուղթը՝ զոր գրեր էր առ Եմինին՝ ընդ-դէմ Հայոց։.. Աչուքներն մթընցան, դողդողալով կարծէր թէ Աբաս թուղթը թողլով՝ թուրը ակիսի ինչ ընէ չարանիւթ գլխուն վրայ։ Բայց ապարապետն անոր ձեռքէն քաշելով, և մանուան վախէն վատահացընելով՝ հանեց վրանէն դուրս, ուր ջրի մը պատրաստուած էր. հեծցուց վրան, և ցուցընելով հարաւային ճամբան, Գնա, ըսաւ, գլուխդ քեզի պարգև. բայց մեկ մ՚այլ մի դառնար։ Ջորին սկսաւ հալածական տանիլ իր տիրոջ անհաւատարիմը և մեր հայրենեաց դաւաճանը. մինչեւ նա իբրև երազէ երաւլ, ափշութենէ ափշութիւն, վախէ վախ կու տեսնէր՝ որ իր հետ բերած զօրաց գունդն այլ՝ զենաթափ եղած ՚ի զօրացն Հայոց՝ մերկ ակլոր միայն իրենց բերած բաներովը և ձիերովը դէպ ՚ի Մանազկերտ ճամբայ կու գրուէին, ուսկից որ եկեր էին։ Իսկ զինքն Ահմատ դէպ ՚ի Վասպուրական գարձուցին. ուր աշխոյժն Շապուհ՝ իշխանապետին որդին՝ պահապան գնդով մը քշելով զնա տարաւ մինչև ՚ի սահմանածայրն Հայաստանի, և Ատրեատանի անապատը հանելով՝ դարձաւ առ հայրն։ — Ահմատայ գալուն և երթալուն տարին որոշ նշանակուած չեն, բայց կ՚երևին յամս 877-880։

ԺԴ

Այս գիպուածէն քիչ մ՚առաջ՝ մեր այս պատմական թատերէն նշանաւոր անձ մը պակսեցաւ. ՚ի վերջ 876 տարւոյ Զաքարիա կաթուղիկոսն վախճանեցաւ, իր հայրապետութեան քսան երկրորդ տարին, աստիճանին յարմար վարքով և փառքով. և իրեն տեղ ընտրեցաւ ՚ի սկիզբն յաջորդ տարւոյն (876, յանուարի 13ին) Գէորգ Բ.

արժանաւոր անձն, ծննդեամբ 'ի Գառնի գիւղաքաղաքէ. որ և իր երկու նախորդաց չափ (Յովհաննու Ե, և Զաքարիայի) 23 տարի քահանայապետեց, և անոնց պէս արթնութեամբ աշխատեցաւ թէ եկեղեցւոյն վրայ, և թէ աշխարհին քաղաքական հանդարտութեանը. օգնելով Աշոտոյ և միջնորդ ըլլալով իշխանաց հաշտութեան, ժամանակն և պաշտօնն իրեն այլ բերին վշտալի և սև օրեր. ինչպէս, ոմանց իշխանաց և եկեղեցականաց հակառակութիւնք. – Ախշէի ասպատակութիւնն 'ի Հայս, որոյ ձեռք ընկաւ ինքն այլ. – 'Իսնայ եաքին մեծ ժաժն, և ամենէն առաջ մեծ մոնտրաժամ մը (876). զոր յիշող ժամանակագիրն (Ասողիկ) կ'ըսէ, «մահն ահագին համաշխարհական», և ուրիշ տեղեկութիւն չիտար: Բայց ունեցաւ այլ պայծառ և ուրախալից օրեր. ինչպէս, նոյն իշխանաց հաւանութիւնն և հաշտութիւնն, Աշոտոյ թագաւորութեան հանելն, և անկէ առաջ՝ Աղուանից կաթուղիկոսաց և Սիւնեաց մարտապօլսին հաւանութիւնն և հպատակութիւնն իրեն լուսաւորչական աթոռոյն, ուսկից որ պատճառաւ մը բաժնուեր էին, և իրարմէ ձեռնադրութիւն կ'առնուին (Աղուանք և Սիւնիք). Հիմակուան հաշտութեանս փառքն մեր իշխանապետին կու վայլէ. վասն զի ինքն եղաւ միջնորդ, հաւանեցուց զիշխանս Աղուանից որ իրենց անձնական կաթուղիկոսն օրինաւոր ձեռնադրութիւն առնու 'ի Գէորգայ կաթուղիկոսէ (877). այս առթիւ բարեկարգութեան ժողով մ'այլ եղաւ, և Գէորգ կանոններ գրաւ Հայոց և Աղուանից աթոռաց յարաբերութեան վրայոյզ:

Գէորգայ կաթուղիկոսութենէն քանի մը տարի ետև՝ իր նախորդին բարեկամն Փոռ՝ գարձաւ աքսորէն և յաջորդեց զԻգնատիոս, ինչպէս որ 'ի սկզբան այլ յիշեցինք, հանգերձ պատճառաւն.

որ է Վասիլ կայսեր վրայ սահեցած հաճոյական գուշակութիւնն. որոյ համար կայսրն, կ'ըսեն ոմանք, զրկեց դեսպան մ'առ Աշոտ՝ իրմէ Թագ խնդրելու։ Ցոյնք չեն յիշեր այս բանս, զոր եթէ ստոյգ այլ գիտնային՝ թերևս իրենց պատիւ չէին կարծեր. մեր ժամանակակից պատմիչք այլ չեն պատմեր, այլ եռաքէն եկողք. մեզի շատ անհաւան չերևիր՝ ժամանակին և անձանց պարագաները դիտելով. մանաւանդ որ պատմիչք կու յիշեն Վասիլի զրկած դեսպանը և շատ ընծաներն առ Աշոտ. զոր ոմանք կու գրեն՝ թէ Աշոտոյ Թագաւորութենէն եռև զրկեց հանգերձ Թագիւ 'ի պատիւ նորա. բայց այս յայտնի սխալ է. վասն զի Վասիլ կայսր մեռաւ յօգոստոսի (կամ այլ առաջ) 886 տարւոյն, Աշոտ Թագաւորեց յետ ապրիլի յայնմ տարւոյն. ապա ուրեմն Վասիլի դեսպանն խաւրուած է մինչդեռ Աշոտ ամիրապետէն Թագ առած չէր։ Կրնանք կարծել՝ թէ Վասիլ իր կողմանէ կանխած՝ անոր գլխու զարդ կամ պսակ խաւրած ըլլայ, ուրիշ զարդերու և ընծաներու հետ. բայց այս ամեն բաներն այլ կ'իմացընեն՝ որ հարկաւոր և մեծ բան մ'ունէր Վասիլ Աշոտոյ հետ. և յարմար է ըսել. թէ առանց շատ ձայն հանելու՝ կամ զենքը կամ իրենները հաճեցընելու համար՝ ուզեց Աշոտէն Արշակունեաց Թագը, ինքն այլ անոր խաւրեց բիւզանդական պսակ մը։ Ժամանակակից մեծ պատմիչն Ցովհ. կաթուղիկոս՝ որոշակի Թագ չի յիշեր. բայց կերպով մը Թագաւորակից կ'անուանէ. « Մեծ կայսրն Ցունաց Բարսեղ, ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան և նուաճութեան և սիրոյ հաստատեր ընդ արքային մերոյ Աշոտոյ, որդի սիրելի զնա անուանելով. և հաղորդակից կացուցանելով յամենայն Թագաւորութիւնս Թագաւորութեան իւրոյ »։ Այս խօսքերս կու ցուցընեն Վասիլի

կոչմանէ զիկեղուիթիւն մը, որ առանց մեծ պատ-
ճառի մը չէր ըլլար. զնոյն հաստատէ և ուրիշ ժա-
մանակակից մ՚այլ՝ նոյն իսկ գեսպանին ծանօթ,
(և է պատմիչն գիւտի նշխարաց Ս. Լուսաւորչին
՝ի Կոստանդնուպօլիս). որ գիտամբ, կամ իբրև
իր նպատակէն դուրս՝ չի յիշեր գեսպանութեան
պատճառը։ Կարդանք այս հեղինակին գրուածին
սկիզբը, որ մեր Աշոտոյ պատմութեան այլ շա-
րունակութիւն ըլլայ, « ի ժամանակին՝ յորում
« Հայոց թուականն երիքհարիւր քսան և եօթն
» էր, (878-9) առաքեալ լինի ներքինի ոմն, ա-
» նուն նորա Նիկոդեմոս, (զոր յետագայ պատ-
» միչք մեր կոչեն Նիկեա), ՝ի Վասքէ կայսերէն
» Յունաց հրեշտակութեամբ՝ առ Աշոտ իշխա-
» նաց իշխան ՝ի Հայս, հանդերձ պատուոյ ընծա-
» յիւք և վայելչական պարգևօք ազգի ազգի՝ բե-
» ռեալս ՝ի Թագաւորէն. և հանդիպեալ լինի իշ-
» խանաց իշխանին ՝ի գաւառին Արշարունեաց՝
» ՝ի Զարեհուան գեղջ. և կացուցեալ առաջի նո-
» ցա զընծայսն յոյնքանոյ մեծէ արքայէն, պատ-
» ճէ միանգամայն և զիրամայեալսն բանս՝ հանձ-
» ռեալս և ախորժելիս. զոր ընկալեալ իշխանաց
» իշխանին զյունական[1] պարգևսն՝ զանձնախաղան
» և զերևելիսն, մեծարէր և զառաքեալ ներքինին՝
» իբրև զմեծարիմ սպասաւոր Թագաւորին. վասն
» զի էր այրն այն խոհեմագոյն և հանճարեղ և
» հաւատարիմ Թագաւորին »։ Դեսպանութեան
գործը լմընցնելէն ետև՝ Նիկեա պատմեց Աշոտոյ,
թէ առանձնաբար ինքն ՝ի ծառայութեան էր իր տեսու-
նակից մեծ իշխան ներքինապետի մը, Միքայէլի
կայսերութեան առեն, որ (կ՚երևի թէ էր Նիկի-
ֆոռն Օորիւֆաս, այս երկու անուամբ այլ յի-
շուած ՝ի Յունաց՝ յիսուն տարիէ աւելի միջոց,

[1] Ուրիշ Օր. Ղ-ոգնական։

(827-881), թերև ծովապետ կայսերաց և շատ գործոց մէջ մտած. որ ինչպէս մեր հնոյնական յիշեց), առաջ Միքայէլի ծառայութեան մէջ էր, և անոր մահուան վրէժը կ'ուզէր առնուլ 'ի Վասիլէ. բայց Վասիլ ճարտարութեամբ որսաց զնա։ Ա. սիկայ ընդոծին մանչիկ մ'ունէր Սկլաւան ազգաւ, որ անբժշկելի հիւանդութիւն մ'ունեցաւ, կամ գիւահարութիւն. օր մը մեծ իշխանն այն, և այս Սկլաւիկ պատանին ու մեր գնսպանն մէկ տեղ գացեր էին աղօթելու 'ի Ս. Երրորդութեան եկեղեցին ('ի Կ.Պօլիս). հոն պատին տակ մարմարիոնէ հին գերեզման մը կար արծաթապատ, զոր գիտէին պահարան սրբոց մարմնոց, բայց որուն ըլլալն չէին գիտեր։ Աղօթից ատեն յանկարծ պատանուոյն վրայ այլայլութիւն եկաւ, և գիւահարի պէս սկսաւ կանչել. Ո՛վ մեծդ Գրիգոր, ո՛վ Ս. Հռիփսիմէ, Ս. Դայիանէ, ինչո՞ւ եկեր էք 'ի Հայոց երկրէն, և գուք այլ Սարգիս և Բաքոս, զիս հալածելու համար։ Այս ըսելով ընկաւ պատանին, փսխեց, ու քիչ ատենէն խելքն վրան գալով՝ ընկաւ տիրոջն ոտքը և ըսաւ. Հոս եղած սրբոց զօրութեամբ ես հիւանդութենէս ազատեցայ։ Շուտ մը ձայն տուին քահանայից, որ եկան մատքրեցին գեռինը. յետոյ աւագերէցն հրամանաւ կայսեր՝ գերեզմանին բանալիքն բերաւ, որ շատոնց պաշտօնը չընելուն համար՝ չկրցաւ հիմայ այլ ընել. իշխանն կոտրեց կղպանքը, բացինք և գտանք չորս ման. երեքն արծաթէ արձաններ էին, չորրորդն մարմարէ անտուկ մը, որոց իւրաքանչիւրին քով գրուած այլ կար. այս մարմարին մէջ էր Ս. Գրիգորի Լուսաւորչի նշխարքն, որոյ ոսկորներն հսկայի ոսկերաց պէս մեծամեծ էին. արծաթէ արձանաց մէջ այլ վերոյիշեալ սրբոց նշխարքն կային, և գեռ ուրիշ նշխարք այլ, որոց անունն նշանակած չէր։ Թագուհին Թէո-

դորա, կայսրն Միքայէլ և Փոտ պատրիարքն բաղմութեամբ ժողովրդեան եկան յերկրպագութիւն, և պատուով գրին նշխարքն 'ի վայելուչ տեղ։ Այս դիպուածս հանդիպեցաւ մեծ պահոց հինգերորդ շաբաթուն և նոյն օրը տարեկան ասն հաստատեցին. ինչպէս որ հիմայ Աշոտ այլ լսելով իմացուց Դէորգայ կաթուղիկոսի, և հաստատեցին մեծ պահոց հինգերորդ շաբաթ օրը տօնել այս յիշատակը, որ հիմայ Լուսաւորչի Մուտն 'ի վերապն կ'անուանի։ — Աշոտ աղաչեց գեսպանին՝ որ այս դիպուածը տեղն 'ի տեղն իրեն գրէ. Նիկեա այլ երբ դարձաւ իր տեղը՝ նորէն սաստկելով գրեց և խուրեց Աշոտոյ, որ աղէկ հայերէն գրելու համար տուաւ «առ ժամանակին կա. » ցեալ վարդապետն Հայոց, զոր յետոյ նշանակեցից » զանունն», և նա այլ թարգմանեց գեսպանին գրածը, քիչ մը գովեստ աւելցընելով 'ի պատիւ Ս. Լուսաւորչին, և յառաջաբան մ'այլ։ — Իսկ այս ժամանակիս վարդապետն ո՞վ էր. խոստացեալ անունն յետոյ յիշուած չէ. գուցէ մեծանունն Մաշտոց վարդապետ ըլլայ, կամ թէ ինքն իսկ կաթուղիկոսն Գէորգ, վասն զի միայն սոսր անունն յետոյ յիշուած է 'ի պատմութեանն, և թերևս վարդապետ ըսելով կ'իմանայ զՀայրապետն։

Աշոտ զդեսպանը պատուելէն ետև՝ կայսրուզածն այլ խաւրեց անոր ձեռքով, հանգերձ ծանր ծանր ընծաներով, և «տասն հազար արծաթ » (6-6800? Ֆրանգ) ընծայ նորաչէն եկեղեցւոյն». զոր չանուանէր յիշող պատմիչն. բայց թուի թէ ըլլայ Ս. Մէյոյէլ եկեղեցին՝ Վոսփորի ծովեզերքը, զոր պատրիարքն Իգնատիոս նոր լմընցուցեր էր (878), և դեռ չէր օծած, և երեք տարի վերջը Փոտ պատրիարքն նաւակատիքն ըրաւ (881)։ Իսկ Նիկեայ բերած ընծայից մէջ կու յիշուի և Թա.

չարիայեն մասն, որ յիսոյ Հռոմայէն ուրէ Նշան ընուցուաւ, այդ անուամբ վանքը պահուելով, որ է 'ի սահմանս Լօռի քաղաքի Տաշրաց (կամ Սօմխէթի). ուր կ'աւանդեն ոմանք, թէ Վասիլ անուամբ յոյն իշխան մը Յովհան Իմաստասիրին առաքն՝ քարոյրի մը մէջ առանձնացաւ 'ի Ճգնութիւն, և անոր համար Հռոմայէ ընուեցաւ տեղն. իսկ խաչն՝ Հայոց աքանչելագործ շատ խաչէց մէկն եղաւ, և զանազան հրաշքն յիշուին։

ԺԸ

Ահմէտ կամ Մուհամմէտ ոստիկանը վռնտելէն ետև՝ Աշոտ անոր թողած խառնակութիւնները սկսաւ շտկել և անոր կուսակիցներն այլ զսպել. և նախ հիւսիսային ու Վրաց կողմերը գնաց. ուր, գիտնալու է, որ այս Ահմատին նախնիքն ամիրայութեամբ կ'իշխէին Տփխիսի կողմերը, և առեն մը բոլոր Վրաց կուսակալ էին. իր հայրն Խալիլ կամ Խալիտ՝ յետ երկոյն առեն տիրելու և քանի մ'ոնգամ հեռանալու կամ հալածուելու՝ այն կողմերը մեուր էր պատերազմի մէջ. և տեղը տիրացեր էր Սահակ Իպն-Իսմայէլ, զոր սպաննեց Բուղա՝ երբ առաւ զՏփխիս, ինչպէս 'ի սկզբան յիշեցի. և նորէն իշխանութիւնը տուաւ Խալիտայ որդւոյն՝ այս յիշեալ Ահմէտին. բայց քիչ ատենէն սա իշխանութենէ փոխուելով՝ Տփխիսի տիրացաւ Կոգլոյ կամ Կոգլոլանուն մեկ մը, զոր պատմիչն Վրաց՝ թէ այս Սահակայ ազգական անուանէ և թէ Աշոտոյ, իբր թէ ասոր հօրաքեռորդին ըլլայ։ Ահմէտ երկրորդ անգամ ոստիկանութեան առեն՝ ջանաց իր հօրը մահուան վրէժը պահանջել, և ուզածին պէս ձեռք խառնել Վրաց և Գուգարաց իշխանութեանց մէջ. բայց երկար ժամանակ չդտաւ։ Իր հալածուելէն ետև՝ կա-

լոց այլ սկսաւ. ինքնիշխանաբար վարել և հակառակել, ոչ միայն Վրաց՝ այլ և մեր իշխանապետին. Աշոտ անոր այլ վրան գնաց (880), և օգնութեամբ Գորամայ իր հօրաքեռւոն՝ բռնեց զնա պատերազմի մէջ, Կուր գետոյն եղերքները, և խաւրեց Ցունաց երկիրը. անշուշտ Վասլի հետ նոր ըրած դաշնագրութեանը վրայ վստահանալով։ Տփխիսը յանձնեց հաւանօրէն Դաւթի՝ եղբօրորդւոյն Գորամայ, և ատոր բաժնէն առաւ Աշոցք գաւառը, որ անմիջապէս սահմանակից և գրեթէ մասն էր իր բնիկ երկրին՝ Շիրակայ։ Այս Գորամս քիչ առաւելն թողուց իր իշխանութիւնը և կրօնաւորեցաւ. տեղն անցաւ որդին՝ Նարս կամ Ներսեհ, որ խռովարար իշխանասիրութիւն ապաննեց զԴաւիթ (881), և շատ շփոթութեանց պատճառ եղաւ. որոյ համար յետ ժամանակի գարձեալ պէտք եղաւ Աշոտոյ գալ և կարգի դնել այս կողմերս։ Այն ատեն այս Վրաց և Վրաց հայոց երկիրները չորս հինգ բաժին էին, իւրաքանչիւր առանձին իշխանաց ձեռք, որք ամենքն այլ իրարու ազգակից էին 'ի նոյն Բագրատունեաց ցեղէ. գլխաւորն էր Վրաց իշխանն (կամ Քարթլի կուրապալատն), յետոյ Գուգարաց իշխանն, Սամցխէի (Ախալցխիէի) իշխանն, և Արտանուջայ իշխանն. ասոնք ամենքն այլ Սիւնեաց և Վասպուրականի իշխանաց նման՝ Աշոտոյ իշխանապետութիւնը կու ճանչնային, և ոստիկան չեղած առեն՝ անոր կու յանձնէին իրենց երկրին հարկերը։ Ասոնց երկրին արևմտեան հիւսիսային կողմն էր Աբխազաց կամ Եգերաց թագաւորն, որ անկախ էր, և Վրաց տիրել ուզելով՝ խռովութեան պատճառ կ'ըլլար։

Աշոտ խաղաղութեամբ գառնալով 'ի Վրաց հայոց՝ Տաշիրաց գաւառէն անցաւ եկաւ Գեղամայ ծովուն ծայրը. Սևան կղզւոյն դիմաց՝ Բանակա-

տեղ ըսուած տեղը, և հոն բանակեցաւ։ Յարմար առիթ էր հոս տեսաւորութեան Աշոտոյ և Մաշտոցի, այս երկու մեծանշան անձանց, որք համբաւով բոլոր աշխարհին ծանօթք՝ զիրար այլ ճանչնալ փափագէին։ Աշոտ կ'ուզէր տեսնել այն սրբակրօն և գիտուն միայնակեացը, իր գտեր (Մարիամայ) հիւրընկալը, որ առանց իրեն չափ աշխատելու՝ ընդարձակ երկրի մը մէկ կողմէն մէկայլ կողմը երթալու, կղզւոյ մը մէջ դադարմամբ՝ թէ երկինք կու վաստակէր թէ մարդկանց սիրտը։ Իսկ Մաշտոց լսելով Աշոտոյ գործքերը, միացուցած քաջութիւնը և արդարութիւնը, իր նպատակէն և իր ջանքէն շատ հեռու չէր դներ իշխանին աշխատանքը. կու փափագէր տեսնել այն աշխատանաց ոյժ և փառք տուող խաչը, զոր Վասիլ կայսր ընծայ խաչերը էր իշխանին, և նա միշտ հետը կու տանէր։ Տեսութենէն առեալ մեծ փափագմամբ փութացաւ Մաշտոց՝ ելաւ կղզիէն, եկաւ 'ի Բանակատեղն. հանդիպեցան իրարու երկու շնորհաւորքն. Աշոտ համբուրեց Մաշտոցի լուսափայլ երեսը և աչքը. Մաշտոց այլ իշխանին խոնարհելով երկրպագեց անոր բազկաց և կրծոց զարդ խաչին. ուստ դրաւ աչքերուն վրայ և համբուրելէ չէր դադրեր։ Վսեմամիտ իշխանն չէր կըրնար զրկել խաչարարձը իր սիրածէն. կայսերաստուր ոսկեկապ և մարգարտազարդ խաչը պարգևեց ճգնաւորին՝ որ աւելի ուրախութեամբ իրեն համար ազօթէ. անոր միաբան վանականաց համար այլ պարգևեց՝ իբրև կալուածք եկեղեցւոյն՝ հինգ գեղ, Յամոփոիէրդ՝ որ սնմիջապէս ծովեզերքն է և Թուի մօտ Բանակատեղին, Վարոէր (Ճրուհրա), Գոմոյոր, Ինէրդ, Ռուեոյ-գաֆ, որոց երկք առջինքն գեղանոյն անուամբ ճանաչուին Սանայ գիմաց ծովեզերքը։ Առնցմէ զատ այն ծովակէն ելլող ձկունց մէկ մասը՝ որ արքունեաց կու

տրուէր հարկի տեղ՝ վանքին թողուց. գարձեալ, այգիներ՝ Արեւանու և Գառանոյ կողմերը։ Հաւանարէն Աշոտ այլ մեռաւ 'ի կղզին 'ի տեսութիւն նորաշէն եկեղեցեաց և վանացն, և իշխանական առատութեամբ ու բարեպաշտութեամբ աւելի շէնցընելով զԱւան՝ գարձաւ իր երկիրը։

ԺԶ

Իշխանապետն իր խնամոց յանձնուած երկիրներուն հիւսիսակողմը ապահովելէն ետեւ՝ դարձաւ 'ի հարաւակողմն, Եմինիկեն գրգռեալ և Անմեռը գրգռող ամիրաներն այլ նուաճելու. որոց գլխաւորն էր Մելազկերտի կամ Ապահունեաց ամիրայն Ապլաբաս Կայսիկ ցեղիս։ Մեր պատմիչք այսպէս կ'անուանեն Արաբացի Քայս ցեղ մը և ցեղապետ մը, որ Արրահմայ որդւոյ Իսմայէլի զաւակներէն սերեալ կ'ըսուի. և Մահմետի առաջն կու յիշուի գիտնական մը այն ցեղէն Ասէմ Իպն-Քայս։ Ի դարուն մէջ Արաբացւոց բռնատարութեան առաջն այս ցեղէն մեկն այլ բռնացաւ Վանայ ծովուն բոլոր հիւսիսակողմը տարածեալ երկրին վրայ. մեկ կողմէն (արեւելքէն) ինչուան Ամու երկիրը Վանայ մօտերը, մեկայլ կողմէն (արեւմուտքէն) ինչուան մեր Հայկոյ նահապետական Հորք գաւառը. քիչ առաջնէն իշխանութիւնն յերկու բաժնուեցաւ. արեւելեանն իրեք գլխաւոր քաղաք և գաւառ ունէր, Թլաթ, Արճէշ և Բերկրի, հանգերձ Ամիւկ ամուր բերդաւն, որ (եռքինս) յետոյ զատ իշխանակալութիւն մ'եղաւ. արեւմտեանն այլ իրեք գաւառ, Կորի, Հորք և Ապահունիք։ Այս եռքինիս արեւմտեան ծայրն և Հարքայ սահմանակից հին քաղաքաւան մը կար և կայ, Մանազկերտ, հիմայ Մէլազկերտ, և աւելի առաջ Մանազազկերտ կոչուած, և շինուած յորդւոյն

Հայկայ 'ի Մանազկերտոյ. որով թերևս Հայաստանի և բոլոր աշխարհիս ամենէն հին մնացեալ քաղաքաշէնն է, զոնէ ամենէն հինգերէն մէկն. հոս կուռնատեր արևմտեան երկիրներուն Կայսիկ ամիրայն, և կոչուէր տէր Ապահունեաց կամ Մանազկերտոյ. Խլաթայ ու Ամկոյ իշխանէն աւելի զօրաւոր, ու մերձակայ Հայոց այլ պատկառելի։ Բայց Աշոտոյ իշխանապետութիւնն անոր վրայ այլ տարածուեցաւ, և անկէց այլ հարկ կ'առնուր, ինչպէս յիշխանացն Հայոց։ Այս բանս որչափ այլ ծանր էր Կայսկին՝ չէր համարձակեր Աշոտոյ հակառակելու. ինչուան որ Յմենիկն և Ահմէտ իրեն յոյս տուին. քիչ մ'այլ մեր սահմանակից իշխանքն պատճառ եղան զինքն ուռեցընելու. որով հարկը կարեց յԱշոտոյ։ Իշխանապետն այլ եկաւ զօրքով. Խլաթայ և Բերկրոյ տէրն Ապլէրթ՝ հպատակեցաւ և հաստատեցաւ յիշխանութեանն. իսկ Ապահունեաց տէրն Ապլաբատ՝ ամրացաւ 'ի բերդն Մանազկերտոյ. Աշոտ անոր մեկայլ երկիրները նուաճելով՝ բերդն այլ պաշարեց. և մինչդեռ մտա էր տիրելու՝ Արծրունեաց երկրին շփոթութիւնները լսելով՝ փութացաւ դէն դառնալու. հոս խաղաղութեամբ վերջացընելով գործը, հաւանեցուց զանհաւան Կայսիկն՝ իր չափին մէջ մնալ, և թղթով այլ գաչինք դնելով՝ հաստատեց զնա յիշխանութեանն, և հարկերն առնելով գնաց։

Իսկ Արծրունեաց շփոթութիւնքն շատոնց սկըսեր էին, գրեթէ Ահմէտ ոստիկանին և Կայսկին մեկտեղ եղած առեն. որք երբ զատուեցան, այս եղբինիս խորամանկութեամբ՝ բանտարկու մարդիկ Արծրունեաց և Տարօնոյ իշխանաց մէջ կասկած և պաղութիւն ձգեցին, մինչև երկուքն այլ Ապահունեաց երկիրն էին, ամիրայէն հրաւիրուած, որսի պատճառաւ։ Նախ Արծրունեաց

իշխանն՝ Դերենիկ՝ անոր քովէն հեռացաւ, յետոյ Տարօնոյ իշխանն Աշոտ Կուրապաղատ (որդի Բագարատայ), զոր և խարգախութեամբ բռնել տուաւ Դերենիկ, և իր երկրին մէջ բանտեց Սևան ըսուած ամուր բերդը, ու իր Հասանիկ քեռորդւոյն պատուիրեց որ արձակ պահէ. և Աշոտոյ տեղ գրաւ անոր եղբայրը՝ Դաւիթ արքայիկ կոչուածը, որ և իր քեռայրն էր. Ահմէտի այլ գրեց ու հաստատեց զնա յիշխանութեան Տարօնոյ։ — Կուրապաղատն իմացուց իր վանդը Գէորգայ կաթուղիկոսի՝ որոյ սիրելի էր. և նա անձամբ եկաւ աղաչեց Դերենիկայ, բայց սա յանձն չառաւ ազատել զԱշոտ, և հոգևոր տէրն տրտմութեամբ դարձաւ. իսկ մեր իշխանապետն այս տեսիլներս հիւսիսայնոց հետ զբաղած էր։ Կուրապաղատին ճարն հատնելով՝ ակսաւ ընտանենալ իր բանտապանին, այսինքն Հասանկան, որ դեռ 15 կամ 16 տարուան պատանի մ՝էր, և տղու պէս խաբեց. հաւատացուց թէ Դերենիկ քեզի դէմ այլ կու մտածէ և զքեզ այլ պիտի բռնէ։ Պատանին՝ իր ամուր բերդին վրայ վստահացած՝ մտածեց իրեն որսորդը որսալ. հիւանդ ձևացաւ, և աղաչանք խաւրեց Դերենիկայ՝ որ գայ զինքը տեսնէ. սա իբրև օրհասական հիւանդի մը քով փութացաւ երթալու, և առջի տեսութենէն ետև՝ երբ գիշերը քաշուեցաւ իրեն համար պատրաստուած տեղակը, յանկարծ դուռը վար առին և ներս թափեցան ջահաւոր և զինաւոր մարդիկ, բռնեցին զինքը և ամրոցին ծայրը հանեցին բանտեցին, ու զԱշոտ արձակեցին։

Այս բանս լսեց մեր իշխանապետն երբ Մանազկերտը պաշարած՝ մտ էր առնուլ. և փութացաւ ուրիշ իշխաններով Սևանայ բերդին քով՝ իր փեսայն ազատելու. կաթուղիկոսն այլ եկաւ, և երկուքն այլ յորդորելով և խրատելով զպա-

տանին Հասանիկ՝ հաւանեցուցին. արձակեց ըզ-
քեռին. և իրեն ապաստովութեան համար՝ պա-
տանդ թողուցին քովը Իւրենիկայ երկրորդ տղա
հասակ որդին՝ Դաւիկը, (յետոյ Արծրունեաց
գիւղացն)։ — Բայց Դերենիկ քիչ աւելնէն դրած
գաղտնիքն ոտքի տակ առնելով լռեցնց զՀասանիկ.
քանտեց Ի Նկան բերդի, և անոր Սևան բերդին
այլ տիրեց. սակայն իր աներէն ակն ածելով քիչ
մ՝այլուրիչ միտք ունենալով՝ արձակեց զՀասան։

Քիչ մ՝ատեն հանգարտութիւն եղաւ (885-7)
այս կողմերս այլ. ինչպէս ուրիշ ամեն Աշոտոյ
իշխանապետութեան տակ եղած տեղերն այլ-
ուր՝ ինչպէս տեսանք, երբեսուն տարիէ աւելի էր՝
որ Աշոտ անդադար անխոնջ աեղէ տեղ վազելով
և հասնելով՝ խռովութիւնները կու խաղաղէր.
աղիքները կու ցածցնէր. և հանդարտութեր հո-
վու պէս կու փարէր գորգուրար ամենուն վրայ։
Նկաւ ժամանակն՝ որ իր գրկած գգուած իշխա-
նազունք այլ՝ իրենց աղէզարդ հայրագիրը մեծա-
րեն արժանաւոր սիրով և պատուով. որուն հա-
ւանեցան ուրիշ իր խնամքը վայելող իշխանք այլ.
շնախանձեցան և այլասդիք։ Իսկ հասարակաց
հայրն կամ՝ մայրն Հայաստան՝ հնձկլուած հառա-
չանքը լռեց. հանգչեցաւ։ Սև տխրութեան թա-
ցած ու մաշած ճամբաներէն ինչան ճերմակ ուրա-
խութեան արտասուքներ. բարձրացաւ ձայն գո-
հութեան առ Աստուած. և թերևս ոչ այնքան
Աշոտոյ գլուխը թագաւ փառազարդեալ տեսնե-
լուն, որչափ այն թագը այդեամբք, երեսիտա
գիտութեամբ և սիրով կապուած և դրուած տես-
նելուն համար։

ԺԷ

Այս երախտագիտ և սիրոյ զգացմանց գործոց առաջնորդք եղան, ինչպէս որ կու վայելէր. եպիսկոպոս Գրիգորքն, Սուփան Սիսական՝ թոռն մեր Աշոտոյ, և Գերենիկ Արծրունի՝ փեսայ Աշոտոյ, իրենց աշխոյժ և կայտառ զաւակքն. որոց միաբանեցան՝ Վասակ Իշխանիկն՝ Սիւնեաց տէրն, կաթուղիկոսն Գէորգ, և գրեթէ ամեն աշխարհաւէր և գաւառատէր իշխանք և թեմական եպիսկոպոսունք, հանդերձ Վրաց և Գուգարաց մեծամեծ իշխանաք, որոց շատն խնամի այլ էին իշխանապետին, և բոլոր իր ազգակից և բարեկամ իշխանաւորք. որք ամենքն այլ Աշոտոյ պարտականք էին մէկ մէկ կամ շատ կերպով, անոր 33 տարուան սպարապետութեան և իշխանապետութեան ատեն, մանաւանդ թէ հօրը գործակցութիւնն այլ մէկ տեղ տեսնելով՝ իր 30ամեայ աշխատանացը, գործոցը, խնամոցը և փառացը՝ պարտականք էին։ Անոնց հաւասար ազգային զօրագունդն այլ, որ այնքան տարիներ միշտ փառք և քաջ անուամբ հայկական դրօշը կրեր տարեր էր զանազան կռիւներ, և այլ աւելի բարձրացընելու կուսպատէր։ — Թերևս ատենցմէ այլ աւելի՝ ռամիկ ժողովուրդն, խոնարհ և տկար սեպուածքն, որք իբրև զհայր ճանչնային և սիրէին զբարերարն Աշոտ. և աւելի համարձակ առ Աստուած աչքերնին վերցուցած՝ իրենց բարերարին բարիք և փառք մաղթէին, քան թերևս իշխանքն՝ ամիրապետէն խնդրէին, որ այնուհետև փոխանակ օտար ոստիկանի՝ իրենց համազգին իրենց շնորհէ անկախ գլուխ, ուղղակի հարկատու իրեն (ամիրապետին)։ Աշոտոյ իշխանութեան տակ արդէն ոչ միայն իլենք երկանիկ եղած էին, այլ

և խալիֆայք գանգատ մը չունէին այնչափ երկար տաեն, մինչեւ օտար ոստիկանաց տակ անգամ չիրութիւն կ'ելլէր, արիւն կ'ըլլար, երկիրն կ'աւերուէր, գանձերն կու պակսէին։ Ամիրապետն՝ Մոթամէտ-Պիլլահ՝ որ 17 տարի իր իշխանութեան տաեն, և նոյնչափ այլ իր հինգ նախորդաց տաեն՝ վկայ էր նախարարաց նուիրակին ըսածներուն, և Աշոտոյ հաւատարմութեան և արդեանց դէմ կենալու բան չունէր, և ոչ ոք այլ կըրցաւ նախանձորդ կամ հակառակը ըլլալ. մեկ կողմանէ այլ տեսնելով որ արդէն իր կրօնակիցքն իրմէ կ'ապստամբին, նոր նոր տէրութիւններ կու կանգնեն, յօժար սրտիւ հաւանեցաւ Հայոց խընդրուածին։ Եւ որովհետև ստոնք հին տաեն իւրենց ազգապետը միշտ Թագաւոր կու ճանչնային, անուանեց հիմայ անոնց իշխանապետը Աշոտ Թագաւոր Հայոց, վրան Թողլով Վրաց կողմի վերատեսչութիւնն այլ։ Եւ ոչ միայն անունը խաւրեց՝ այլ և Թագ և ամենայն Թագաւորական նշաններ և զարդեր, հանդերձ ծանր ծանր արեւելեան ընծաներով և ընտիր արաբիկ ձիերով. զորոնք առնել տուաւ Ցիսէի՝ Շէխեայ որդւոյ, Ամդայ կողմնապետին, որ իր կողմանէ տանի տայ և Թագաւորեցնէ զԱշոտ. գիտնալով որ ասոր խոհեմութիւնն շատոնց զՑիսէ բարեկամ էր ըրեր իրեն։ Եւ յիրաւի Ցիսէ աննախանձ զուարթութեամբ գնաց պատուեց և պատկեց իր հին բարեկամ և նիզակակիցը. ինքն այլ անկէ ստոր դանելով՝ դարձաւ իր տեղը։ — Աշխարհական ամիրապետէն Թագը ընդունելէն ետև՝ կու մնար որ իր հայրենիքն և իր եկեղեցին այլ զինքը պատկեն։

Ո՞ր քաղաք, ո՞ր եկեղեցի էր արդեօք ուր պատկեցաւ Հայոց նոր Թագաւորն. Արազգաւոյք և Թէ Դուին. — կ'երևի Թէ այս յետինս, որ 500 տարիէ վեր Հայաստանի մայրաքաղաք ճանա-

չուէր, և մարզպանաց ու ոստիկանաց աթոռ էր. գեռ հոն էր Հայոց հայրապետանոցն այլ. և գեռ կանգուն էր Ս. Գրիգորի հոյակապ կաթուղիկէն (յինեալ Գ. Ներսէս կաթուղիկոսէ), որ յետ վեց եօթն տարուոյ պիտի կոլծանէր, և գուցէ կու սպասէր այս հանդիսիս այլ. որուն համար շատ նեղ և շատ սղտիկ կու գար, բայց գոնէ բառական՝ իշխանազանց և եպիսկոպոսաց և բազմաթիւ բազդաւորաց։ Այս եկեղեցիս չէր, բայց հաւանօրէն այս տեղս էր, ուր մեր հայրապետաց վսեմագոյնն՝ մեծն Սահակ՝ օրհներ օծեր էր Արշակունեաց վերջին թագաւորը, զդժբաղդն Արտաշէս. անշուշտ առաջին անգամն էր որ Հայոց սրբազան լեզուաւ և գրով թագաւորօրհնէք եղաւ. և տիսոս, առաջինն՝ վերջին այլ եղաւ... Արտաշիսի օծմանէն մինչև յԱշոտ գրեթէ 470 տարի անցեր էր. սա կանգնեց անոր կորացեալ գլուխը, և Սահակայ թագաւորաշնորհ շունչը՝ բառասուն կաթուղիկոսաց շրթունքէն սահելով՝ Գէորգայ բարեբաղդ բերանը իջաւ, իր քահանայապետութեան ծՌ տարին. « Կոչեցաւ ապա » անդ մեծ հայրապետն Գէորգ, և զհոգևոր օրհ- » նութեանցն գովութիւնս աստուածայինա՛ի վե- » րայ կատարեալ, փոխանակ օծման սրուակի » իւղոյն՝ պատակէ զնա թագաւոր՝ ի վերայ Ապա- » նաղեան ազին»։ Ի՞նչ կարգաւ, ինչ ծիսիւ, ինչ աղօթքով կամ օրհնութեամբ եղաւ այս պատակարգեաք Ս. Սահակայ շարագրած և հին Հայոց ձևով և գոչմամբ էր այս թագօրհնէքս, եթէ Գէորգ կաթուղիկոս նոր շարագրեց, կամ թէ Յունաց կայսերաց ծիսին հետևեցան. — ասոնք՝ Հայկակ, քեզ այլ, ինձ այլ փափագելի են՝ ի յայտնութիւն։ Մեր յետին Կիւլիկեցի թագաւորաց օծման գեղեցիկ հանդէսն և կարգն՝ հանգերձ օրհնութեամբքն, անծանօթ չէ մեզի. ան-

կէ զատ հանդիպած եմ ուրիշ թագաւոր-օրհնէ-
քի մ'այլ. աւելի կարճ և անզարդ, որ և աւելի
հին կ'երևի, և ոչ անյարմար այս դիպուածիս.
կարծեմ քեզի այլ անհաճոյ չըլլար լսելու այս
կարգը և աղօթքները։ Փութա ուրեմն 'ի Ռուին,
խառնուէ այն բաղդաւորաց հետ՝ որ եկեղեցւոյն
մէջ տեղ գտան Հայոց թագաւորութեան նորո-
գութիւնը տեսնելու, և անհամբեր աչք 'ի խո-
րանն կու սպասեն նորընտիր թագաւորին՝ որ դեռ
չերևիր, այլ գահն դրուած է, և շրջապ դին շա-
րուած Աշոտոյ պայծառ եղբարքն, որդիքն և թո-
ռունքն, երեանիւ չափ, թերևս և իր տիկին դըս-
տերքն հանդերձ հեզանազ օրիորդովք, իր ամեն
ազգատոհմն և խնամիք, և ամենայն իշխանք Հայ-
ոց և շատք 'ի Վրաց և յԱղուանից, նաև ամիրայք
և դրացիք, և դասք քահանայութեան՝ 'ի հայրա-
պետէն մինչև 'ի դպիրս։ Արդէն ճրագունք վա-
ռեալք, կանթեղք և ջահք փայլատակեն, և ար-
ծաթ և ոսկի բուրվառաց և խնկանոցաց անուշա-
հոտ ծուխն թեթև ամպերով կու բարձրանայ.
մեծ ակնկալութեամբ սրտեր կու թնդան. ծո-
վանման չչնկոց մը կու լսուի, երեկոյեան հովուն
խաղալն պէս լուութիւն մը կու տիրէ. դար-
ձեալ մեծ աղաղակ մը կու փրթի... Աչքա...
Աչքա. սուրբ թագաւոր... կեցցէ, կեցցէ, կու
հնչէ հազար օրհնեալ բերան, բիւր կորովաշունչ
կոկորդ հայկական. և խորանին ամպացեալ ծխոց
խնկոց ետևէն, ինչպէս ամպոց վերևէն Մասեաց
գագաթն, կ'երևի բարձր վսեմաշարժ զուարթու-
հայեաց արծաթափայլ գլուխ մը... մեծն Ա-
շոտ...։ Թող ծափեն դուքեն ձայնեն ցնծան սի-
րուն կորիճքն։ «Եւ զդեցուցանեն զթագաւորա-
» կան զհանդերձն. ուրոյն զքղամիդն և զթագն
» դնեն 'ի վերայ սուրբ սեղանոյն արծաթէ սկը-
» տեղք։ Անելով սաղմոս 'ի թիւ. Լուր Տէր աղօ-

» թիւ իմոց. և Ո յուսայ 'ի Տէր. Խոստովան ե-
» ղէց քեզ աւէր։ Եւ ելանէ հայրապետն և կայ
» առաջի սրբոյ սեղանոյն, կալով զչեռս նորա
» որ պատկելոցն է զնա։ Եւ յետ սաղմոսին սար-
» կաւագն քարոզէ ասելով. Խնդրեսցուք հաւա-
» տով. և եպիսկոպոսն ասէ զաղօթս. Որ թագա-
» ւորդ ես թագաւորաց Քրիստոս, և տէր տե-
» րանց, արարիչ ամենայն այսարածոց. փրկիչ
» աշխարհի, առուր մեզ զինդրուածս մեր, և կա-
» տարեա 'ի բարի զաղօթս մեր՝ զոր մատուցա-
» նեմք քեզ առաջի սրբոյ սեղանոյս. զի հատա-
» ռուն և անշարժ պահեսցես զուխտս սրբոյ ե-
» կեղեցւոյս, տալով զսա (զԱշոտ) մեզ՝ զոր ընտ-
» րեցեր և կոչեցեր Եպիսկոպոս 'ի Բագարանի, ի
» վերակացութիւն գոնս Խորգոմայ, առ 'ի հովուել
» խնամով, և պահեա 'ի թշնամեաց. զի զկամ-
» զիկն եկեղեցի բարձրացուցանել և պատկեալ
» փառաւք նորոգ պահեսցէ. և զեղջիւր հաւատոյս
» միրոյ անսասանելի և անշարժ ուղղութեամբ
» և արդարութեամբ վարեսցէ ընդ երկոյն ա-
» ւուրս. բարեխօսութեամբ սրբոյն Աստուա-
» ծածնիդ. զի դու ես փրկութի մեր և ապաւէն
» և օգնական. և քեզ վայելէ փառք իշխանութիւն։
« Եւ ապա ասէն կցորդ. Որպէս յետ աստուա-
» ծասէր թագաւորին, և այլն։ — Եւ ես խաղա-
» զութեան. և այլն։ Եպիսկոպոսն, Օրհնութիւն
» և փառք, և այլն։ Եւ եպիսկոպոսն առնէ զա-
» ջոյ ձեռանէ նորա և գարձուցանէ զերեսն թա-
» գաւորին առ ժողովուրդն, 'ի ծունկն անկեալ.
» և ասէն քահանայքն միաբան բարձր ձայնիւ ե-
» րիցս. Աստուածայնն և երկնաւոր շնորհ՝ հե-
» զեալ 'ի վերայ (Աշոտոյ), կոչեն յանթոռ թա-
» գաւորութեան սանս Խորգոմայ, օծանել ըստ
» նմանութեան Կոստանդիանոսի մեծ թագաւո-
» րին։ — Եւ ասասցեն, Ելիցի հղիցի. ամէն։

« Եւ ապա դարձուցանէ 'ի սեղանն. և այս կա-
» նոն կատարի. Սաղմոս կցորդ. Ի. Թագաւոր
» յուսացաւ 'ի Տէր։ Պօղոսի առաք. 'ի Տիմոթ.
» Ա. Թղթ. ընթերց. (Բ. 1-7). Եւ արդ աղաչեմ,
» և այլն։ Յովհան. առաք. ՅԱ. կաթուղ. Թղթ.
» ընթերց. (Բ. 20-27). Եւ դուք օծութիւն ու-
» նիք, և այլն։ — Ալէլուիա, ալէլուիա. Լուիցէ
» քեզ Տէր յաւուր անձկութեան, և այլն։ Սուրբ
» աւետարանս ըստ Ղուկասու (ԺԹ. 12-28).
» Ասէ Յիսուս, այր ոմն աղնուական, և այլն։ —
» Եւ սարկաւագն քարոզէ, Խնդրեսցուք հաւա-
» տով։ Եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Տէր Ա-
» տուած մեր, որ Թագաւորդ ես Թագաւորաց,
» որ 'ի ձեռն Սամուէլի մարգարէին ընտրեցեր
» զծառայն քո զԻսաւիթ, և օծեր զնա Թագա-
» ւոր ժողովրդեան քում Իսրայէլի. դու և այժմ,
» Տէր, լուր աղաչանաց մերոց անարժանիցս, և
» նայեաց 'ի սրբոյ բնակութենէդ քումմէ յերկ-
» նից 'ի հաւատարմական ծառայս քո (Անշոտ),
» զոր ընտրեցեր և հաճեցար յարուցանել Թա-
» գաւոր 'ի վերայ ազգի քո սրբոյ, զոր փրկեցեր
» պատուական արեամբ Միածնի Որդւոյ քո.
» օծանել զսա արժանաւորեա իւղով յնծութեաբ.
» զգեցո սմա զօրութիւն 'ի բարձանց. դիցես 'ի
» վերայ գլխոյ սորա պսակ 'ի քարէ պատուա-
» կանէ. շնորհեա սմա զերկայնութիւն աւուրց.
» տուր աջոյ սորա յաղթանակ փրկութեան. հաս-
» տատեա զսա յտեղոս արդարութեան. շրջա-
» փակեա զսա զլենու սուրբ Հոգւոյդ։ Հնազան-
» դեցո սմա զամենայն բարբարոսական ազգս։
» Սերմանեա 'ի սիրտ սորա զերկիւղ քո և զսո-
» ղութիւն կենակցական։ Հաստատեա զսա ան-
» բիծ հաւատով. և 'ի վեր երևեսցի սմա զզօրու-
» թիւն քո. պահեա 'ի պահպանութիւն սրբոյ
» քո կանխողիկէ առաքելական եկեղեցւոյ՝ ուղ-

» զափառ գաւանութեամբ. զի գառեսցի զժողո-
» վուրդս քո արդարութեամբ, և զաղքատս քո ի-
» րաւամբքզ. կեցուսցէ զորդիս անանկաց. և ժա-
» ռանգորդ լիցի արքայութեանդ։ Քանզի քո է
» զօրութիւն և փառք, յաւիտեանս. ամէն։

» Ապա առնու եպիսկոպոսն ղՏղամիդն 'ի սեղա-
» նոյն, և դիցէ՝ և ասացէ քահանայիցն զի արկ-
» ցեն զնովաւ. և 'ի շուրջ առնուլն նորա զայն՝
» եպիսկոպոսն ասէ. Խաղաղութիւն ամենեցուն.
» և դնէ զաջն 'ի վերայ գլխոյ թագաւորին և ասէ.
» Քեզ միայնոյ թագաւորիդ յաւիտենից՝ որ 'ի
» վերայ երկրի զթագաւորութիւն սորա հաստա-
» տեցեր, որ խոնարհեցոյց զպարանոց իւր ընդ
» մեզ. և արդ մեք ծառայք քո խնդրեմք 'ի քէն՝
» Աստուած ամենայնի, պահեա զսա ընդ հովա-
» նեաւ քով աջովդ, և զօրացո զսորա թագաւո-
» րութիւն, զհաճոյս քո առնել յամենայն ժամ.
» ծագեա յաւուրս սորա արդարութիւն, բա-
» զում խաղաղութիւն ժողովրդեան. հանդար-
» տութեամբ սորա՝ խաղաղական ապահովական
» կենցաղաւ բնակեսցուք ամենայն բարեպաշ-
» տութեամբ. զի դու ես թագաւոր խաղաղու-
» թեան, Քրիստոս Աստուած մեր. և քեզ վայելէ
» փառք, իշխանութիւն. և այլն։

» Ապա առնու հայրապետն զմեռոնն, և օծա-
» նէ զգլագաթն և զնակատն, ասելով. Օրհնեսցի,
» օծցի և սրբեսցի թագաւորս այս՝ յանուն Հօր
» և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ զայս երիցս
» ասէ եպիսկոպոսն։ Ժողովուրդքն ասեն, ամէն։
» Եւ ապա ասի. Տէր, կեցո՛ զթագաւորն և լուր
» մեզ։ Ապա առնու եպիսկոպոսն երկոքին ձե-
» ռաքն զթագն 'ի սեղանոյն, և պատկէ զնա և ա-
» սէ. Օրհնեսցի, օծցի և սրբեսցի թագս և թա-
» գաւորս այս, յանուն Հօր, և այլն։ Եւ ժողո-
» վուրդն զնոյն ասեն. Տէր կեցո՛ զթագաւորն և

» լուր մեզ։ Եւ ասէ, Օրհնութիւն և փառք. և
» այլն։

» Եւ նոյն ժամային մոռանեն 'ի ճաշու ժամն, և
» պատարագ մատչի. և զԹագաւորն առնին 'ի
» սեղանն. 'ի ձախակողմն կանգնեսցի. և յետ պա-
» տարագին հաղորդեն զԹագաւորն. և պատա-
» րագին գիրքն զԹագաւորացն կարդան։

» Բայց Թագաւորն զգոյշ կացցէ յամենայն
» ճանապարհսն Աստուծոյ, երկիւղիւ և սրբու-
» թեամբ »։

Կրնանք արդեօք հիմայ սրբազան պատկառա-
նոք, հոս յարմարցընել գերագոյն Երգոց խօսքը
և փոխանակելով ընդ Սողոմոնի՝ ըսել. « Ելէք և
» հայեցարուք, դստերք Այրարատայ, յարքայ
» Աշոտ, 'ի պսակն՝ որով պսակեաց զնա մայր
» իւր, յաւուր փեսայութեան իւրոյ և յաւուր
» ուրախութեան սրտի իւրոյ »։ Կրնանք ար-
դեօք նոյնպէս շարունակել. « Ահա գահոյք Աշո-
» տոյ. վաթսուն հազար սպառազէնք շուրջ զնո-
» վաւ 'ի քաջացն Թորգոմազանց. ամենեքեան
» սուսերաւորք և աղեղնաւորք՝ հմուտք պատե-
» րազմի, այր իւրաքանչիւր սուր յազդեր յար-
» հաւրաց գիշերոյ »։ և կապարձք 'ի Թիկունս
վառեալք 'ի ճառագայթից տուրընչեան։ Կրնանք
գարձեալ աւելցընել յարմարցընել, մեր պատմը-
չին խօսքէն խրախոյս առած, Թէ և « Գահ սու-
» րակ արար իւր արքայ Աշոտ 'ի փայտից Բա-
» սենու [1] »։ և այլն. վասն զի ինչպէս յամենայնի
վայելուչ և բարեկարգ էր Աշոտ, Թագաւորու-
Թիւնն այլ արժանապէս վայելչացուց մեր նախնի
Թագաւորաց և ազգին պերճասիրութեան դամ-
մաս. « Այնուհետև բազում և երևելի կարգս

1 Բասենի գաւառն Ամփոյտ ամուսանեցաւ հին ատեն.
բոլոր լեռներն ինչուան հիմայ անտառոտ են։

» յօրիներ յաշխարհի տէրութեան իւրոյ, կ'ըսէ
» Յովհ. կաթուղ., յօրինուածս սանց, ազգաց,
» քաղաքաց, շինից, դաստակերտաց, և հարիւ
» հաւասար ընդ իւրաքանչիւրոցն կատարեր
» կարգս լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն
» դաշտականաց. և զամենայն տափարակ անգիս՝
» ագարակս և գոմս դներ, և զմարմանդս՝ յայ-
» գիս և 'ի բուրաստանս զարդարեր. և զամենայն
» ինչ զոր ինչ օրէն է թագաւորութեան և որ
» ինչ 'ի թագաւորութեան և որ շուրջ զթագա-
» ւորութեամբ՝ ոչ ինչ իմիք կասեցուցանէր. և
» գրեթէ հարստագոյն և խոհեմագոյն քան զա-
» մենայն թագաւորութիւս գտանիւր »։ Իր փառ-
քէն աւելի ազգին օգուտը փնտռելը՝ յայտնի էր
ամենուն. բայց ազգն զինքը պատուեց, ինքն այլ
իր փառքովն զազգը աւելի պատուեց. նուիրե-
լով այս ամեն վայելչութիւն և փառքը՝ ոչ իր ան-
ձին հաճոյից և փափկութեան, այլ 'ի պերճու-
թիւն թագաւորին և ազգին Հայոց. ասոնք բար-
ձրացուցին զինքն իբրև զարեւ 'ի վերայ հայրե-
նեաց, պէտք էր որ ինքն այլ ճառագայթէ անոնց
վրայ զուարթ և պայծառ լուսով։

Այս լոյսս, այս փառքս ծագեցաւ յամին 887, գարնանային կամ ամառնային եղանակին, յո-
լովմ այրարատեան հովուաց և բլրոց գեղեցկու-
թեան խառնուեցաւ Հայոց համաշխարհական ու-
բախութեան հանդէսն. որ արդարև շատ մեծա-
փայլ և պայծառ եղաւ բոլոր իշխանազանց և ե-
կեղեցւոյ գլխաւորաց ու բազմախումբ ժողովրդ-
գեան ներկայութեամբ և պատրաստութեամբք.
բայց պայծառութիւնն շատ աւելի այլ սրտա-
շարժ էր։ Վասն զի այն ատեն միւսազիք իրենց
յոլս տինդ հարիւր տարի առաջ նախնիքը և անոնց
փառաւոր օրերը աւելի լաւ կու ճանչնային՝ քան
մենք մեզմէ ասոնց լոյս տինդ դարերը. — անոնք

դեռ նախարարաց, ազատաց և քաջաց սերունդք և տոհմք էին, և դեռ իրենց սիրագլուխ նախա-հաց գաստակերտներուն մէջ բնակէին. անոնց յիշատակները կու տեսնէին, արձանագրութիւն-ները կարդային, ազգաբանութիւններն գիտէին. անոնց գործածած անօթները և զէնքերը դեռ գտուէին իրենց մէջ. դեռ նոյն Հայկազանց և Արշակունեաց գեղինը կու կոխէին, և նոյն օդը ծը-ծէին. — անոնք դեռ հարազատ հայախօսք էին. — թէ և բազմավէր բազմասպի՝ Հայաստանեայց մարմնոյն դեռ ամբողջ էր. գլուխն չէր երևէր, բայց երբ սիրան դեռ կ'առնուր կու տար, այնպի-սի մարմնոյ մը՝ դժուար չէր գլուխը գտնել կանգ-նել, որ հինգդարեան հարուածներով կորացեր ուսերէն վար կախուեր էր դէպ 'ի կուրծքն. և երբ ամենայն անդամոց մէջ բարեխառն ջերմու-թիւնն ծաւալեցաւ ու սիրան մեծապէս թնդաց, Հառագայթազարդ գլուխն այլ դարձեալ բար-ձրացաւ, դարձեալ եղաւ Հայաստան հանդէս հիւսիսանոյ վեհգոյն. Կ.Պոլսոյ ու Բաղտատայ, (այն միայն երկու տիեզերական աթոռոց) մէջ՝ մէկ թագաւորական գահ մ'այլ կանգնեցաւ. մինչեւ այնքան մեծ տարածութեան մէջ ամեն գահ կործանած մնացին. և այս տաճին կանգ-նող գահն ու թագն՝ եղաւ Հայոցն։ Անգամ մ'այլ Հայք իրենց հին հասակակցաց առջև յա-ռաջադէմ գտուեցան. անգամ մ'այլ Կովկասէն-չուան յԱպտառաժն Արարիա, Պոնտոսէն ինչուան 'ի ծոցն Պարսից՝ ամենայն հին և նոր ժողովուրդք ողջունեցին զԱյրարատ թագակապ՝ 'ի Բագրա-տունին Մեծն Աշոտ։

Ի սկզբան վարուցս Աշոտոյ ըսի և դարձեալ կ'ըսեմ, շատ քիչ կարիճ և առաքինի մարդ գլ-տուած է՝ որ այսքան արդեամբք ծանրացեալ և հասակաւ հասուցեալ՝ հրաւիրեալ ըլլայ 'ի

թագաւորութիւն. ոչ մեր ազգին պատմութիւնն, և ոչ թերևս օտարաց յայսմ՝ Աշոտոյ համեմատ մը գանեն. և եթէ սրբազան զարմանք մը բերէ զոնին սոյն 'ի գլուխ 12 տարեկան Սողոմոնի, սրբազան և սիրելի սիրանք ըլլայ ինձ և քեզ, Հայկակ, Բոգ այս ոսկի խառնեալ յարծաթ ալիս գրեթէ 70ամեան գլխոյ ալքային Աշոտոյ։ Կարծեմ ոչ ոք յաննախանձ զգաստից, որ ազգէ այլ ըլլայ, կերնայ ուրանալ մեր Բագրատունեաց փառքը, և մեզի ընկած պարծանքը։

Այս յիշատակիս հետ անգամ մ՝այլ յիշենք այս հայրենեաց հօր երախտագէտ ոգեւոց մեծագով և աղնուախոհ մտածութիւնը, որ անոր բազմամեայ անձնանուէր խնամոց արտաքին ցոյց փոխարինի տալ մտածեցին և յաջողեցան՝ զթագն Հայոց միագլխութեան. և թերևս յետ աւուրց Ս. Տրդատայ՝ այս առաջին անգամ միասիրտ և միաբերան իշխանք զանազան աշխարհաց և գաւառաց Հայոց՝ կանչեցին և գրեցին Ապօտածոր կամ Ապօտածոգոմ Բագատոր մէջ. և նա գրեց իր հրովարտակաց և պարգևագրաց տակ ոսկի կընքոյն քով՝ Աղբ Բագրատունի Բագատոր Հայոց[1]։ Բայց աւելի քան զայս ոսկի կնիքներն և պատկերներն, աւելի քան Ցունաց կայսրէն զրկած թագն և երեքկրկին ոսկէկնիքն[2], աւելի քան զայն հա-

1 Ցանուն Աշոտոյ գրուածք գեռ ծանօթ չէ մեզի, բայց կան մեան գեռ իր որդւոյն Սմբատայ ստորագրութիւնն այս օրինակաւ գրուած յամի 906. և մեծամեծ իշխանաց Սիւնեաց և Արծրունեաց ստորագրութիւնքն՝ կոչելով զնա Բագատոր մէջ։

2 Վասն զի կայսրն բաց յամբրապետէն ուրիշ ամենայն արևմտեան և արևելեան թագաւորաց և իշխանաց և սրբազան Հայրապետին՝ միակ կամ կրկին ոսկի գրամալոփ կնքով կու խուրեր թուղթ. միայն մեր թագաւորաց՝ առանցքն մեծ եռապատիկ կնիք կու դներ։

բուստ ընծաներն՝ զոր Թագաւորն ընդունեցաւ, և զոր կրկնապատիկ տուաւ և զրկեց մերձաւորաց և հեռաւորաց, աւելի քան զիշխանաց և ժողովրդոց իրեն ցուցած մեծարանքն և հպատակութիւնն, աւելի քան զզօրաց զինաշարժութիւնն, ռամկաց հանդէսն, աւելի քան զպատերազմական, քաղաքական և եկեղեցական փոխոց և երաժշտութեանց ձայնակցութիւնն, – քան զայս ամենեքն աւելի հաճոյական էր տեսնել զԱշոտ յարքունիսն Շիրակաւանի, 'ի մեջ բազմասերունդ ընտանեացն, եղբարց, որդւոց և թոռանց, փեսայից և հարսանց, հին Հայկազանց և Սբրայեցւոց ջոջգլուխնահապետի մը պէս. տեսանել զարի արքայն Աշոտ 'ի գահաւորակի իւրում, որոյ սիւնք արծաթիք, կոնքն ոսկի, ձեղուն ծիրանի և մեջ նորա ականակապ, տարածեալ սէրն (բանուածք բազմականին) 'ի գաւերացն Թորգոմայ. – տեսանել այն հայրական և որդեկան գորովն ու խանդաղատանքը, կուրիճներուն թափ թափ և շուտ շուտ շարժիլը, փափուկներուն հնչիկ նազելը. և այդ կայտառ ու պայծառ թիլթեռնանման թռռնիկներուն վեր վեր ցատքտելն, պապուն վիզը պլլուելն, ու թեթև թաթիկներով՝ թագին գեռ իրենց անծանօթ ծանրութիւնը կշռելը, և մատիկնին մեկ մը անոր զարգերուն մեջ մեկ մը անկէ փայլուն աչեաց մեջ խաղցընելն։ Աստուածասէր և ընտանեասէր տանուտէր նահապետ մը թագաւորական փառաց պերճացեալ, արդարև այս է գոհարակապ ոսկի մատանին։ Երանի՜... այնպիսի մատանին 'ի մատն հագնողին՝ թէ պագնողին։

ԺԸ

Աչքոս չորս տարուոյ չափ[1] միայն թագով փա-
ռաւորեցաւ կամ փառաւորեց զՀայաստան. թե-
լեա այսչափ կարճ ժամանակին և զբազմանց շա-
տութիւնն բաւական չէր նորահաստատ թագա-
ւորութեան և նորէն միաբանեալ ազգին ամեն
հարկաւոր կարգերը դնելու և հաստատելու. սա-
կայն Աչքոս ոչ միայն զկարելին ըրաւ, այլ և շա-
տանց անկարելին այլ։ Մնացեալ պատմչաց կարճ
յիշատակներն մեզի կ'իմացընեն, որ բոլոր ժա-
մանակն անցուց, մէկ մը թագաւորավայել կար-
գաք և շինութեամբք, ինչպէս քիչ մ'առաջ իմա-
ցուց մեզի Յովհ. կաթողիկոս. և ուրիշ մ'այլ[2]
կ'ըսէ. «Փափկացեալ և յղփացեալ ուրախու-
»թեամբ... քաջավայելչագոյնս զթագաւորու-
»թեանն կատարելագործեալ զժամանակն»։
Մէկ մ'այլ՝ արժանապէս 'ի շնորհակալութիւն
աստուածային խնամոց՝ որ այս յաջողութիւնը
տուաւ իրեն և ազգին Հայոց. որբազան աստճա-
ներ կանգնելով անոր, ինչպէս վկայէ իր վարքը
համառօտողաց մէկն[3]. «Պատեալ նա յերկուց
»թագաւորացն՝ եղև ճոխ թագաւոր. և արար
»խաղաղութիւն և շինութիւն աշխարհին Հայոց. շի-
»նեաց և բազում եկեղեցիս փառաւոր»։ Որչափ
մարդկան առջև բարձրացաւ և սիրացաւ, այն-
չափ աւելի զինքը խոնարհեցուց և ծառայեցուց

1 Թէ և ոմանք 'ի պատմչաց հինգ տարի կ'ըսեն թա-
գաւորութեանն, այլ սխալ է. բայց եթէ Փրիսասոի
թուականաւ 887էն սկսելով 891ի սկիզբն այլ հաշուեն,
հինգ տարի կ'ելլայ կարծելով։ բայց ամբողջ և ոչ չորս
տարի։

2 Թովմա Արծրունի։

3 Յայտնաւորք։

Աստուծոյ՝ զգաստ և խոհեմ թագաւորն. որ գիտէր իւրաքանչիւրին իրեն վայլածը տալ, թէ Աստուծոյ, թէ մարդկան և թէ իր անձին և ատաճանին։ — Երրորդ ընելիքն կամ գործն այլ էր՝ իր հին կամ սովորական զբաղմունքն. այսինքն արթնութեամբ դիտել բոլոր իր իշխանութեան և պաշտպանութեան տակ եղած աշխարհաց և գաւառաց հանդարտութիւնը, անուիրակոք կամ զօրք կամ անձամբ՝ կարգի և խաղաղութեան բնել խռովիչները և գրգռիչները. և յայսմ՝ ոչ թագին նայելով և ոչ ծերութեան, իր սպարապետ եղած տարիներուն պէս՝ ինչուան մահուն տարին այլ անդադար գործելու, շարժելու, անգէտ տեղ փութալու երթալու գալու հետ էր. իբրև երիտասարդ նահատակ ամեն վտանգի մէջ յառաջագէմ վազելով և միշտ յաղթող կամ փրկող դառնալով։ Քառասուն տարի ոչ ոք կրցաւ գլուխ քաշել կամ ազատիլ իր ամենահաս երակութենէն, և ոչ ոք վտանգիլ՝ իրեն ապաւինողներէն. միայն մահն կրցաւ զինքը դադրեցընել, այն այլ դարձեալ Ճամբու վրայ հանդիպեցաւ, անոր բարեկարգիչ արշաւանաց մէջ։ Որոնք որ հաակրցան խաղաղութեան օգուտը՝ անոնց վրայ կակուղ բազկաւ երկընյուց թագաւորական գաւազանը. իսկ որոնք դեռ խռովութիւն կամ բռնութիւն սիրէին, խմացուց անոնց որ գաւազանին հետ դեռ զէնք այլ կրնայ վերցընել իր քաջակորով ձեռքն. որոյ համար համառօտ գրութեամբ վկայէ ժամանակակիցն (Թովմաս), թէ մինչև 'ի մահն՝ « Զեռն նորա յամենասին, և ամենեցուն » ձեռք 'ի նա »։

Այս եռքի տարիներուս մէջ յիշուած գլխաւոր գիպուածքն և գործք Աշոտոյ՝ եղան մեկ մը հիւսիսային և կովկասեան կողմերը, մեկ մ'այլ իր անհանգարտ Արծրունիի փեսային հոգերը. որ վեր-

ջապէս իր անխոնջեմ շարժմանց զոհ եղաւ։ Ճար-
տարութիւն մը այս Հշմարտութիւնը կու խոստովանի
ծանր և զգուշաբան կաթուղիկոս պատմիչն. «Գրի-
» գոր՝ որ Դերենիկն անուանէր, և էր նա այր
» սէգ և զգաստ և սօս 'ի գնացս ոսից, և զօրա-
» ւոր արդեամբք և բանիւ. և անօրինէր միշտ յա-
» մենայն բարեձևութիւնս բերիլ։ Եւ վասն զի
» փեսայացեալ էր նա Աշոտոյ..., սակս այնորիկ
» հայրախնամ կամաք և խոհական սիրելու-
» թեամբ միշտ խրատ բարեաց նմա մատուցա-
» նէր որոյ. և յ'սկզբան անդ ընկալեալ հլու և
» զգօն մտաք՝ հաւանէր ընդունել, և յոտին զբո-
» լոր թշնամիս 'ի սագրելոյ կացուցանէր, և խա-
» զաղութեան և շինութեան պարապեալ՝ յապա-
» հովս 'ի բնակութեան իւրեանց պատրաստէր
» զհայրենի տերութիւնն իւր 'ի բոլոր հինից։ Բայց
» յետոյ 'ի կամս անձին զինչպիսութեան բերեալ,
» ոչ անասայր բանի խրատու աներոյ իւրոյ, որ-
» պէս յերկնէ և յեռանդն. և չլինէր նմա այն
» յաջողութիւն ինչ 'ի բարութիւնս»։

Ոչ թէ միայն բարւոյ յաջողութեան արգել եղաւ Դերենիկայ կամապաշտ զինչպիսութիւնն, այլ և չարի պատճառ և անգարմանն չարի։ Վասն յիշեցինք իր քեռորդին Հասանիկը բռնելը և արձակելը. երկուքն այլ խարդախ Ճամբաներ գացին, երբեմն իրարու գէմ, երբեմն իրարու կողմ. այս անգամ այլ (Աշոտոյ թագաւորութենէն քանի մ'ամիս եռքը) Դերենիկ արձակեց զՀասանիկ, որ անոր ձեռքով ուրիշ մը բռնէ։ Այս որոն էր Գագիկ Ապուսմրուան ըսուածն, որդի Վահանայ, մեծապատիւ արծրունի իշխան մը, որ հետ իր հօրն և Դերենիկայ և անոր հօրն՝ Բուզայէն բռնուած և գերի գացած էր, և խնամի էր իր մօրը, որով և թագաւորին. հիմայ Դերենիկ ասոր վրայ կասկածելով թէ Աշոտ կուրապաղա-

տին (Տարօնոյ) համախոհ էր, խոստացաւ Հասանկայ՝ իր Սևան բերդը և երկիրները յետ դարձընել, եթէ բռնէ և իրեն բերէ զԴաւիթ. վասն զի սա կասկածելով իրմէ՝ ամրացեր էր 'ի Ճահուկ բերդի. Կորդուաց աշխարհին կողմերը։ Հասան իբրև փախստական 'ի քեռւոյն՝ գնաց և խաբեց զԴաւիթ, և հոս այլ իր առջի հնարքը բանեցընելով, կեղծ հիւանդութիւնը, ապահովցուց իր հիւրընկալը. և անոր քնացած ատեն՝ բռնեց և երկաթի շղթաներով բերաւ առ Դերենիկ. սա այլ խաւրեց 'ի Վան, պահել 'ի բերդին. իր տիկնոջն այլ յանձնեց, (որ ոյն ատեն 'ի Վան էր), զգուշանալ որ չփախչի բանտեալն։ Այս բանս 'ի հարկէ մեր Թագաւորին անհաճոյ էր. բայց ահաճութիւնն աւելի գրգռել կու ջանար այն ոխակալ Սմբատին, որ նախ զԴերենիկ դլխապուրեց ինքն իր գլխուն գործելու և անելիքը չհարցնելու, և զԱպլփառ Կայսիկն այլ նորէն շարժել ուզեց, նոյնպէս զուրիներն այլ. յետոյ խորամանկութեամբ մէկ կողմէն առ Աշոտ գրեց Դերենկայ վրայօք՝ որպէս թէ ապստամբօրէն ուզածը կ'ընէ և կ'արհամարհէ զԹագաւորը. մէկ այլ կողմէն ձայն հանել ատուաւ թէ Աշոտ Թագաւոր Դերենկայ նեղացեր է և կ'ուզէ բռնել զնա։

Դերենիկ զամենքն այլ արհամարհելով՝ աշնան վերջերը (887) ելաւ երթալու 'ի Մառական աւանն, որ Սրասխ գետոյ մօտերն է, Վասպուրական աշխարհին հիւսիսային կողմերը, Ճուաշ գաւառին մէջ, և հին ատենէն 'ի վեր՝ այն աշխարհին տեարց ձմերանոցն էր, խորադիր և տաքուկ տեղ մ'ըլլալով։ Շիտակ և մեծ ճամբով երթալու համար պէտք էր անցնիլ Հերայ գաւառէն. այս երկիրս որ հիմայ Խոյ կ'ըսուի և Պարսից իշխանութեան տակ է, հին ատեն մեր Պարսկահայոց առաջին գաւառն էր, բայց աշխարհագրական գրիչք

տեսլի Վասպուրականի մաս կըրնար ըլլալ, և այնպէս այլ եղած էր. այս պատմութեան առեն և աւելի առաջ՝ արաբացի կողմնակալ մը կու տիրէր հոս, բայց Ապահունեաց և Խլաթայ իշխանաց պէս՝ Աշոտոյ իշխանութեան տակ. երկրին մերձաւորութեամբն՝ կերպով մը Դերենիկ այլ իրաւունք ունէր անոր վրայ։ Կողմնակալն՝ որ Ապլ-փերս անուաներ՝ գիտնալով անոր միտքը, միանգամայն վախնալով 'ի Թագաւորէն, երկուքին այլ հպատակութիւն և բարեկամութիւն կու ցուցընէր. իսկ հիմայ անշուշտ Յմենիկէն սիրտ առած՝ խարդախութեամբ անզգամիցաւ։ Իր վրայ այլ կասկածողք կային, և իմացուցին Դերենիկոյ որ զգոյշ կենայ ճամբան. ոմանք այլ կ'ըսէին որ Թագաւորն պիտի բռնէ զինքը. այս բանէս կըրնար սպահով ըլլալ, բայց ոչ նոյնպէս այլազգիէն։ Դերենիկ սովորական յանդգնութեամբն յառաջ անցաւ, մտաւ Հերայ (Խոյի) գեղեցիկ դաշտավայրը և իջաւ 'ի գեղն Փեռոտակ, քաղաքին մօտ։ Քաղաքապետն իր պատրաստութիւններուն տեսնելէն ետև՝ հրաւիրեց զԴերենիկ 'ի քաղաքն. նա յանձն չառաւ հոն երթալու, բայց միայն ճամբուն վրայ տեսնուելու. և երբ ինքն երկրորդ օրն որսի ելեր էր, քովիններն նորէն ազդեցին իրեն որ հեռանայ անկէ. նորէն չլսեց։ Մէկ մ'այլ իմացաւին որ Ապլփերս կու գայ զինքը բարևելու. Դերենիկ տեսաւ անոր Թիկնապահ զօրաց գունդն՝ որ իրրև 'ի պատիւ իրեն դիմաց գային. մարտակեց, և « ճնմս առեալ սիգաքայլ երիվարաւն՝ եհատ... » միայն և առանձինն 'ի յառաջամէջ տեղւոջ». այնպէս տեղ մը որ երկու կողմէն այգիներ էին. մէջէն յորդասահ առու մը կ'անցնէր, և ոչ ոք կու համարձակեր անկէց անցնիլ. միայն Դերենիկ մէկ մ'այլ մարտակեց զձին և ճղքեց ջուրը. ցատքեց այն դին. մէկէն հոն շարուած այլազգի

զօրքն երկու բաժնուելով Թոզուցին որ մեջեր-
նէն անցնի կորիՀն. նա անխոհեմաբար մինակ
յառաջից, Ապլիէրս այլ դիմացն ելաւ, «և գիրկս
» զպարանոցաւն արկեալ՝ ասայ զյուգայեանն համ-
» բոյր»։ Այն ատեն զօրքն եռեւէն պատեցին զնա.
ոմանք ձիուն սանձը քաշեցին, ոմանք վրայի սու-
րը բռնեցին, ուրիշներն այլ սրով և նիզակաւ
կռնակէն զարկին, վար ձգեցին. ինկնալու ատեն
մթնցած աչուրներն ողորմուկ յեռ գարձուց՝ օգ-
նական պաշտպան փնտռելու. բայց իրեններն
ջրին այն դին էին, և շփոթելով ու վախնալով
փախան. միայն Ամատունեաց ցեղին գլխաւոր իշ-
խանն տիրասիրութեամբ բռնուեցաւ։ Քաղաքին
Հայ վաճառականքն գնեցին Դերենիկայ մարմինը,
և իշխանաց պատուով պատեցին. այն տեղի ե-
պիսկոպոսն Դաւիթ այլ արժանաւոր յուղար-
կաւորութիւն ըրաւ, և թաղեց եկեղեցւոյն մեջ.
ինչուան որ յետ ժամանակի՝ մեռելոյն անգրա-
նիկն եկաւ առաւ հօրը մարմինը և տարաւ հանգ-
չնցուց Արծրունեաց հին քնարանը, 'ի վանքն
Խաչի՝ որ 'ի Հադամակերտ Աղբակայ։ Բոլոր Վաս-
պուրական աշխարհն տասն ամիս սուգ ըրաւ Դե-
րենիկայ վրայ, որ իբրև 40ամեայ էր մեռած ա-
տեն. իսկ իւր անդրանիկն՝ հազիւ տասնամեայ։

Աշոտ Թագաւոր, որ այս միջոցիս Կովկասեանց
հոգով զբաղած էր՝ խաւրեց իր ժիր նուիրակ
Շապուհ ուրդին, որ իր համանուն Թոռը զԱշոտ
զանդրանիկն Դերենիկան՝ ժառանգեցնէ հօրը ա-
թոռոյն, և անոր մայրն այլ քաջալերէ, (Սոփի
տիկինը) որ երկանը մահուան վրայ շատ սրտա-
կտրեր էր. և հիմայ եղբայրը տեսնելով և զան-
դրանիկն այլ Արծրունեաց տէր դրուած՝ քաջա-
լերեցաւ. սկսաւ ոչ միայն մօր պէս՝ այլ և Թա-
գուհւոյ պէս խնամել որդիքը և զաշխարհը. հար-
ցուց հօրը՝ Ապուսմրուանին վրայ, և պատասուէր ա-

ռաւ որ արձրկեալ ու սիրով պատուէր, և որդւոցը խնամակալ կարգէ, ինչուան որ չափահաս ըլլան, և կարենան ինքնիրենուն կառավարել։ Յաջորդ տարւոյն (888) նոքերը Աշոտ Թագաւոր՝ Վրաց գործերը չակած ըլլալով, անձամբ եկաւ 'ի Վասպուրական, դուստրը (Սոփի) և Թոռները մխիթարելու հայրաբար. միանգամայն և խնամակալ Թագաւորի պէս նորէն հանդիսիւ հաստատեց զԱշոտ Թոռը 'ի տէրութեան Արծրունեաց. ա-նոր երկու եղբարցն այլ պատշաճ պատիւներ և իշխանութիւններ տուաւ. նոյնպէս զԱպումրուան այլ հաստատեց անոնց խնամակալութիւն և պաշ-պանութեան մէջ, կառավարութիւնն այլ յանձ-նելով Սոփի տիկնոջ, և ամեն բան կարգի դնելով դարձաւ իր տեղը։

Կովկասեանց կամ Վրաց շփոթութեան պատ-ճառն՝ մէկ մ'էր այն Ներսեհն՝ զոր նախ յիշե-ցինք. մէկ մ'այլ Ախիսազաց Թագաւորք՝ որ ի-րարմէ կու յափշտակէին Թագը։ Ախսոյիսի էր և Յովհաննէս Թագաւորն, որ զրկելով զԲագ-րատ՝ զորդի Դեմետրի Թագաւորի, իր որդին Ատրներսեհը Թագաւոր դրաւ մահուան առեղը (879). Բագարատ փախաւ 'ի Կ.Պոլիս, և քանի մը տարիէն գառնալով՝ իր կուսակցաց օգնութիւն ապաննեց զԱտրներսեհ և տեղն անցաւ (887). անոր այրին այլ առաւ 'ի կնութիւն, որ էր քոյր Ներսեհի. և զսա այլ կանչեց 'ի Յունաստանէ, և բաւական զօրք տալով՝ անոր ուղարկեց պէս Թո-ղուց որ կոխէ Վրաց երկիրը և խլէ անոր երի-տասարդ իշխողէն, որ էր անուանին Ատրներսեհ (որդի Դաւթի), և իր հայրենիքը ժառանգեր էր մեր Աշոտոյ խնամակալութեամբ. մինչդեռ սա այս միջոցիս նոր Թագաւորեր և քաղաքական կարգադրութեանց զբաղեր էր։ Ատրներսեհ ի-րեն օգնական գտաւ զԽպարիտ, նախահայր մեր

և անուանի առհմին Ուռոպելեանց, որ Թուեղաց գաւառին կուսիրէր. և զԳուրգէն՝ Տայոց մեկ մասին տիրող կուրապաղատն. մեր Թագաւորն այլ օգնական գունդ մը խաւրեց. որովք Աբրներ-անհ սիրտ առաւ իր հակառակորդին՝ Ներսեհի՝ դէմ ելլելու. Ախուլցիխէի կողմերը, Կուր գետոյն եզերքը հանդիպեցան իրարու, և սասարիկ պատերազմ եղաւ. որովհետև Ներսեհի և Ախխազաց հետ միացեր էին Ալանք կամ Օսք այլ-բայց վերջապէս անոնք յաղթուեցան. Ներսեհ բռնուեցաւ և սպանուեցաւ (888) յԱբրնեցա աւանի (յարևելակողմն Ախալցիխէի)։

Անկէ վերջը կ'երևի թէ Աշոտ Թագաւոր տն-ձամբ եկաւ այս կողմերս և օրինաւոր իշխանաց յանձնեց. անկէ մտնելով Կովկասայ լերանց մէջ՝ նուաճեց Վրաց Թշնամիները և Ներսեհի նիպա-կակիցները, զԱլանս և ուրիշ լեռնաբնակ ցեղեր. որոց համար կ'ըսէ կաթուղիկոս պատմիչն. «Զեռն » զհիւսիսական կողմամբն արկեալ, 'ի ծործորս » մեծի լերինն Կովկասու, որ 'ի հովիտս և 'ի գաչաս » երկայնագոգս բնակեալ էին ազգք, ընդ իւրեաւ » հնազանդեցուցանէր»։ Մեր օրերս անգամ » յայտնի է, թէ որչափ ոյժ և խելք պէտք էր Կովկասեան այն բնապարիսպ լերանց ազատ որ-դիքը սանձելու կամ ասպատակութենէ դադրե-ցընելու։

Աշոտ իր խնամոց յանձնուած երկրին հիւսի-սակողման մէջ ամրոցաշինութիւնը հանդարտեցընելէն ետ-պովանոր երկու ծայրերն այլ նուաճեց, որ կերաւ՝ մը սուրի դժուար էին։ Վասն զի արևելեան կողմը կ'իշխէին Ուռիացիք, որ են հին Հայոց 15 աշխարհաց մեկն, Աղուանից, Վրաց և Կովկա-սեանց սահմանակից. որոց նման իրենց երկիրն այլ լեռնոտ և ամուր ըլլալով, հոս կորիզ բայց և անկիրթ իշխանք իրենց ազատու թիւնը պահած

էին Հաղարացւոց բռնութեան առեն այլ։ Առանց մեծ իշխանն էր Սահակիանաց Կոն՝ որ եկաւ առ Բուղա, և նահատակուեցաւ ՝ի Բարելոն։ Այս կողմերուս հին Հայկազանց ժամանակէն տիրոզք Սեւուկ նահապետին անուամբ, այս առեններս այլ Սեւրդի անուամբ ծանօթ և ահարկու էին մերձաւորաց և Արաբացւոց, իրենց շինած կըռուկ սրոնքն։ Հիմայ Աշոտ «զելուզակուս մարդիկ Ուսի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ » նուաճէր, ՝ի բաց ՝ի նոցանէ հերքելով զաւա- » զակութիւնն մարդագաւութեան, և իբրև օրի- » նաւորս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջ- » նորդս և իշխանս նոցա կացուցանէր »։

Իսկ արևմտեան սահմանածայրն էր՝ Ապխազաց երկիրն կամ Եգերաց, որոց Թագաւորն՝ սահմանակից տիրապետաց մէջ ամենէն զօրաւորն էր, ինչպէս առաջ այլ յիշեցի, միանգամայն և ինքնագլուխ Թագաւոր ճանչցուած. հիմայ Բագարատ Ներսեհի կողմը բռնելով՝ Հայոց այլ Թշնամացեր էր. բայց նախ անոնց զէնքովը յաղթուելով, յետոյ Աշոտոյ մարդասիրութենէն, խոնարհեցաւ ՝ի հաշտութիւն և ՝ի գաշնակցութիւն, որդիաբար մեծարելու իրմէ մեծ Թագաւորը. ինչպէս վկայէ և վերոյիշեալ պատմիչն մեր. « Այլ և զԹագաւորն ևս Եգերացւոց ՝ի սէր » միաբանութեան ընդ իւր կապակցեալ՝ այնպէս » նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութե- » սակի գոլով մտերմաբար պաքատաւճար միշտ » նմա ՝ի ծառայութիւն բերէր »։

Այս գժուարին գործերը յաջողութեամբ լըմընցընելէն ետև էր որ Աշոտ Թագաւոր գնաց ՝ի Վասպուրական, իր Թոռանց ժառանգութիւնը և իշխանութիւնը կարգի գնելու։ Նոյնպիսի կարգաւորութիւն մ՚այլ չրաւ Սիւնեաց երկրին մէջ. վասն զի գրեթէ նոյն առեն մեռաւ Վասակ Իշ-

խանիկ՝ երկրին մեծ իշխանն. Աշոտ՝ անոր եղբայրը և իր անուանակից Աշոտը հաստատեց 'ի նահապետութիւն Սիւնեաց. և երկուքին որդւոց ժառանգութիւններն այլ որոշեց։ Այս Աշոտս այլ իր եղբօրը (Վասակայ) պէս հլու և հաւատարիմ եղաւ մեր թագաւորին, և յետոյ ասոր որդւոյն՝ Սմբատայ։ — Իսկ մեկայլ Սիսական Վասակն՝ փեսայն թագաւորին՝ շատոնց մեռեր էր երիտասարդ հասակաւ, և այրիացեալ տիկինն Սարիամ երեք կարիճ որդւովքն՝ Սեւանայ ծովուն ելզերքը կու ջէնցընէր վանքերով և եկեղեցիներով, թէ հօրն առեն և թէ իր եղբօրը՝ Սմբատայ՝ թագաւորութեան ժամանակ։

*Իսկ մեր թագաւորին միւս գուստրն Սոփի՝ այրին Դերենիկան՝ իրեն պէս երկարակեաց չեղաւ. երկանն չարաչար և ցաւագին մահն անբժշկելի վէրք բացեր էր սրտին մէջ. քսան ամէն (889) «և
» ինքն Սոփի անհամեմատն 'ի կանայս՝ ըստ նմա-
» նութեան ամուսնասէր տատրակի հրաժարեալ
» յամենայն վայելչութեանց կենցաղականացս,
» խանդակաթ լինելով, ոչ ժուժեալ սրտին նե-
» ղութեան ... փոխի յաշխարհէս. խաղաղու-
» թեամբ ննջեալ ընդ հարս իւր. թողեալ զման-
» կունսն տղայս և անկատարս հասակաւ». որք մեծ ցաւով և սգով տարին մարմինը հանգուցին Դերենիկայ քով։ Շահասէր իշխանք և զօրաւորք կու փափագէին խաբել որբացեալ իշխանորդիքը. «այլ ոչ իշխէին յերկիւղէ մեծին Աշոտոյ թա-
» գաւորին Հայոց[1]». որ իր կորիւն թոռները առաջուընէ աւելի հայրաբար խնամեց, ինչպէս իր բնիկ իշխանական աշխարհն և ուրիշ պաշտպանեալ աշխարհներն այլ շէնցընելով, գեռ տարի ու կէս, մինչև իր վախճանն. որ կենացն համեմատ եղաւ արժանաւոր և փառաւոր։

1 Թովմա Արծրունի։

ԺԹ

Աշոտոյ հին նախահաւն և նախօրինակն իշխանութեան, առաջին սուրբ և ասնելի Թագաւորն Դաւիթ մարգարէ, մարգուս կենաց կարողութեամբ վայելելի սովորական չափն ըստ 70 տարի. ինքն այլ նոյն տարին չանցաւ. իր առաջին քրիստոնեայ սրբոյկաց Թագաւորն պայազատն՝ Աշոտ այլ գրեթէ նոյն շրջանը բոլորեց և կնքեց, 71 տարին. 'ի վերջ 890 Թուականին Փրիստոսի, կամ Թերեւս 'ի 1 փետրուարի 891ին. վասն զի այս օրուանս կու զուգակցի մարերի 20ն (յորում անուր յիշատակն գրուած է) 81,Թ Թուականին Հայոց, յորում մահն նշանակի։ — Թէպէտ և կենաց վերջին երկու տարիներուն մանաւոր գիպուած մը չիպատմուիր, բայց՝ ինչպէս նախ յիշեցինք՝ Աշոտ անդադար էր հարկաւոր գործոց մէջ. որոց հաղորդ և ընկեր էին չորս կարիճ, չափահաս և բարեկիրթ որդիքն։ Անդրանիկ Սմբատն, զոր Իշխանաց-իշխան անուաներ էր, այն զօրաք Գուգարաց կողմերն էր, դարձեալ Վրաստանոյ մէջ ծագած շփոթութիւն մը խաղաղցընելու, կամ ապստամբները նուաճելու համար, ինչպէս կ'ըսէ ժամանակակիցն Ցովհ. կաթողիկոս, և ուրիշ բան չաւելցըներ. իսկ Վրաց պատմիչն յիշէ, որ նոյն ատեն Գուրգէն կուրապաղատ՝ մեր Թագաւորին քեռայրն՝ իր Տայոց Փալմախ իշխանանիստը և Արտանուշ մեծ քաղաքը Թողլով, գնաց բնակելու Շաւշէթի և Արտահանու կողմերը, (որ Գուգարաց արևմտեան գաւառներն են, և) որոց վրայ առաջ ուրիշ իշխան կար, և շատոնց Վրաց իշխանապետին պաշտպանութեան տակ ընկած էին։ Հիմայ այս բանս տհաճութեան և կռուի պատճառ եղաւ Ատրներսեհի՝ Վրաց գըլ-

իւաւորին և Գուրգենի մէջ. ինչուան պատերազմի ելան Ալոտանուշայ դաշտին մէջ. Գուրգէն յաղթուեցաւ և վիրաւորեցաւ. և վերջը նոյն վիրաց ցաւով մեռաւ (891)։ Թուի թէ այս կամ ասկէ պատճառած գիպուածի համար էր հոն ղրկուած Սմբատ. մինչդեռ հայրն գուցէ ուրիշ գործ մը շտկելու համար ձմեռ ատեն ճամբայ ելեր էր իր բնաշխարհին մէջ, երբ վրանծանը հիւանդութիւն եկաւ. և չկարենալով աւելի առաջ երթալ կամ յետ դառնալ, դադրեցաւ ի Գարսպատ ըսուած ապառաժոտ բարձրահայեաց սարատափ տեղ մը. որուն աշխարհագրական գիրքն անծանօթ է ինծի, և կարծեմ յԱյրարատ դաւառի։

Այն Գարսպատ գահաւանդն եղաւ Աշոտոյ կենաց սպառիչ սահմանագարն. և անոր բարձրութենէն դարձուց աչուքները յետս՝ իր նօթանաբ. նամակ կենաց ընթացից վրայ, և ի՛ վեր՝ հանգերձեալ կենաց անսպառութեան վրայ։ Մարդոյ, և մեծիշխան մարդոյ արժանավայել էր կորած ընթացքն, կըրնար անվախ նայիլ և ըսել. «Զբնթացան կատարեցի». հայրենեաց, եկեղեցւոյ և ընկերակցաց համար էին իր երկայն աշխատանքներն և մրցանքն. կըրնար այլ ըսել. «Զբարուղք պատերազմն պատերազմեցայ». բարեաբեր և քաջահաւատ հոգին կըրնար յուսալ արդարութեան երկնաւոր պսակին, անկէ՝ որ հոս տուաւ իրեն երկրաւոր պսակը. զոր հիմայ վար դնելով ընդ մէջ հանդերձեալ կենաց արշալուսոյն և մահուան ստուերներուն, հաւատարիմ քրիստոնէի զգաստութեամբ պատրաստեց զհոգին այն մեծ փոփոխութեան։ Մինչդեռ որդիքն և սիրելիքն իրեն առողջութեան և հանգստեան խնամք կումատակարարէին, ինքն ամենէն քաջահոգ՝ բերել տուաւ զքահանայապետն Հայոց, և միջնորդ կեցուց վերջին անգամ ընդ Աստուած. և ընդ ինքն-

վեհմ գլուխն՝ անթագ խոնարհեցաւ խորին խոնարհութեամբ մարդկային բնութեան և մաց ակարութեանը, և ընդունեցաւ Աստուծոյ օծելոյն ձեռքէն և բերանէն զինիք և զաւետիս թողութեան և հաշտութեան. ընդունեցաւ մարդացեալ Անմահին երկրպագելի և փրկարար մարմին և արիւնը. գոհացաւ զԱստուծոյ՝ որ առաւել քան զիմացն և զծերանին՝ արժանացուց զինքն այս սուրբ և և անեման խորհրդոց, զոր ոչ ճանչցան և ոչ ճանաչեն կարծեցեալ գիտունք աշխարհի և փիլիսոփայք։

Որդւոց և մերձաւորաց ժառանգութենէն աւելի իր պաշտած հեզ Գրիգորասին ժառանգակիցները հոգաց, — ազգականները և կարօտեալները. ոչ միայն գեռ շունչն վրան եղած ատեն բաժնել սաւ լեցուն գանձեր ոսկւոյ և արծաթոյ, այլ և յանձնեց կաթուղիկոսին շատ ստակ և ըզգակ, ոչխարաց և նախրաց բազմութիւն, մի և գրատ, որ առատապէս բաշխէ եկեղեցեաց և վանորէից և որու որ արժան համարի, և ամեն տեղ իր հոգւոյն համար աղօթք և պատարագ ըսել տայ։ — Հոգւոյն պէտքն լաւ հոգալով, զաւակաց և պայազատացն այլ հարկաւոր խրատ և պատուէրները տալով, ամենի աքանչելի օրինակաւն քան վսեմական խօսքովն, իբրև ամեն բան թուռվ և կարգով շարելով և շարժելով, ինչպէս որ բոլոր կենաց գործերն այլ կարգաւորեր էր, իբրև յեսին կանոնաւոր և սահմանեալ գործ մը՝ կատարեց անչափոթ զգաստութեամբ և վայելչութեամբ զմեռնիլն այլ... զոր գրեթէ ամենայն պատմչք խոր զգացմամբ կ՝իմաստնանն. « Եւ այսպէս ապա » զպիտառացեալ պէտս արտաքնոցս (սատանա» ծըս՝) ի մոլորութիւն նորոգման ներքին մար» գոյն անհնարաբար կենաց ուցանէր։ Յետ որոյ » բարուք ծերութեամբ ըստ բուսոյ բարեգործաց

» բարուց՝ հանգեաւ 'ի Քրիստոս[1] »։ — « Յետ
» զամենայն ինչ ըստ Աստուծոյ հաստատելոյ՝
» փոխի 'ի կարգ սուրբ թագաւորաց[2] »։ — « Չի
» էր այր քաջագոյն և հեզ և անարատ[3] »։ — Ալեռ-
» ռեալ վախճանեցաւ աստուածպաշտութեամբ
» և լի հաւատով... և փոխեցաւ յանանց թագա-
» ւորութիւնն երկնից[4] »։ — Փոխի յաշխարհս
» 'ի բարիոք ծերութեան... քաջավայելչագոյնս
» զթագաւորութեանն կատարելագործեալ ժա-
» մանակն[5] »։

Մեծին Աշոտոյ (որ հիմայ ոմանց առիւծ մը կ'երևէր 'ի քուն ծանրութեան, ոմանց սիրելի և ալևոր հայր մը ընտանեաց մէջ նահապետօրէն վախճանած, ոմանց գեռ թագաւոր 'ի մտածման հարկաւոր խորհրդոց, և ամենայն խոհական ճանչցողաց՝ արդարակորով և մաքրակենցաղ մարդ մը վախճանեալ սրբութեամբ) մեծահանդէս եղաւ և յաղարկաւորութիւնն. ինչպէս մեր հին թագաւորաց մէջ յիշուի միայն Տրդատայ և Բ Արտաշիսի։ Երախտագէտ որդիքն և հպատակք՝ ուզեցին անոր արժանեաց և պատուոյն համեմատել նաև ոգոյ հանգէսն և կազմուածքն. « ոսկեհուռ հանդերձիւք և սակեզօծ վառիւք զգաստաղան զարդարեալ »։ զոր Քարապատէն վերուցին տարին 'ի Բագարան, որ թագաւորանիստ քաղաք էր եղած, միանգամայն և յետին հանդիսատարան ոմանց 'ի Բագրատունի թագաւորաց, և նախ մեր Աշոտոյ, որ հաւանօրէն առաջուց հոն պատրաստեր էր իրեն հանգստեան մատուռն և քնարանը։ Բոլոր ճամբան այս երկու յիշեալ տեղեաց մէջ՝ (որուն երկայնութիւնը չեմք գիտեր),

1 ՅՀ. կոթ։
2 Ցամ. Անեցի։
3 Առաքել։
4 Յայտնութիւն։
5 Թոմ. Ուռհայ։

հանդիսաբար յուղարկաւորութի՛ն եղաւ. Գէորգ կաթուղիկոս՝ եկեղեցական գաւակցութեամբ և պաշտօնէիւք և հոգևոր երգք՝ առջևէն երթալով. « և խումբք զօրաց զինուք և զարդուք, ընտրա- » նեք և նշանակօք շուրջ պաշտպանեալք ». իսկ գագաղաց եռևէն և անմիջապէս մտէն՝ կ'երթա- ին իբրև սգաղլուխք՝ երեք թագաւորորդիքն, Շապուհ, Սահակ և Դաւիթ, (վասն զի երէցն Սմբատ չկրցաւ հանիլ 'ի Գուգարաց կողմէն), և թագաւորին մերձաւոր ազգականքն և բարե- կամք և պաշտօնեայք. ասոնցմէ վերջը, ըստ հին սովորութեան Հայոց, սգաւոր և սգաշարժ կու- սանք և լացմայլք, երաժիշտք և ողբերգակք, թալգմանք և վկայք քաղաքական և բնական սգոյ ցաւոց ընտանեացն, հայրենեացն և բոլոր պաշ- պանեալ ազգաց. և այլ եռևանց « բազմութիւն » ռամկաց և անռամկաց ». Յետին հանդէսներն այլ կատարելով 'ի Բագարան, « ասպա կազմեալ » տապան թագաւորական՝ եդին զնա 'ի քնարա- » նի հարց իւրոց ». Իսկ յիշատակը՝ ինչպէս 'ի սկզբան պատմութեանն ըսի, ասուածընթեր սրբոց հետ խառնեցին յեկեղեցիս Հայաստա- նեայց, 'ի պատիւ նորա և 'ի փառս ամենախնամն Աստուծոյ.

Ի.

Աշոտոյ հանգստարանին և յիշատակին մնաք բարով չըսած, թերևս յետին բարև մ՝ այլ տալ վայելէ անոնց՝ որ իր պատմութեան և գործոց մէջ ստէպ կամ մեծապէս հանդիսացան. արդէն կենաց օրէնքն՝ անոնց մէկ մասը յառաջ քան զԱշոտ վերուցեր ծածկեր էր աշխարհքիս տեսա- րանէն. — Վասիլ կայսրն հինգ տարի առաջ մեռեր էր, և որդին Լևոն խմաստասէր թագակցեր Աշո-

տոյ. – բազմաքրտանք պատերազմաց Փոտ գրեթէ Աշոտոյ հետ կատարեց կեանքը, (891)։ Աշոտէն ընտրեալ և զԱշոտ թագաւոր օրհնող կաթուղիկոսն Գէորգ, անոր անդրանիկ Սմբատն այլ օրհնեց, և անոր հետ առաջապետաց Աֆշին բռնաւոր կուսակալին ասպատակութեանց առեն, ինչուան կապուեցաւ և բանտեցաւ և ազատեցաւ միջնորդութեամբ Հոմամոյ՝ Աղուանից իշխանապետին, որ և իրրև զատ ազգի գլուխ՝ յետ Ֆադրատունեաց՝ առաջին թագաւոր եղաւ. Գէորգ եօթն տարի յետ Աշոտոյ վախճանեցաւ (897)։ Տեղը գրեթէ հարկ էր որ դրուի աշխարհածանօթ և մեծահռչակ ճգնաւորն Սևանայ և ծանօթն Աշոտոյ՝ Մոսէս, որ և իր անուանակից և գործակից (Ս. Մեսրովպայ-Մաշտոցի) նման՝ միայն վեց եօթն ամիս Հայոց հայրապետական աթոռը նըստելով մեռաւ նոյն տարին (897). և յաջորդ ունեցաւ իր ուղղակուն և ուշակերտը՝ Յովհաննէս Պոփ-ղէս, որ մեր այս պատմութեան այլ գլխաւոր աղբերաց մէկն է։

Իսկ յիշխանաց և 'ի մերձաւորաց Աշոտոյ՝ իր եղբայրն Սպարապետն Աբասնախ քիչ մը դժուարացաւ եղբօրորդւոյն հնազանդելու, և հակառակեցաւ թէ անոր և թէ Վրաց կուրապաղատին՝ Աարներսեհի. յետոյ քիչ մ՝ այլ իր կալուածներն ընդարձակելով Վանանդայ և Փուգարաց կողմերը՝ հանդարտեցաւ. և ինչպէս կ'երևի՝ քիչ տարիէ վախճանեցաւ։ Իսկ Աարներսեհ Վրաց համար եղաւ ինչ որ Հայոց՝ իր բարերարն մեծն Աշոտ, ինքն այլ թագաւորական պատուոյ հասաւ, և երկայն ատեն իշխելով իր աշխարհը շէնցուց և զօրացուց։

Աշոտոյ թոռներէն, Սիսական իշխանքն՝ ինչպէս իրեն՝ նոյնպէս և Սմբատայ միշտ հաւատարիմ և հլու եղան, և ասոր պէս շատ նեղութիւն քաշե-

ցին Ադիլիի և մանուանգ անոր եղբօր Նուսուֆի բռնաբար ասպատակութեանց առեն. իրենց բարեպաշտ և սիրելի մայրը, Մարիամ անկինը՝ իրենց աշխարհին խնամակալ և պաշտելի անձի պէս հետերնին տանելով տեղէ տեղ բերդէ բերդ, և այն տարագիր տեղափոխութեանց մէջ մեռնելէն ետև այլ, նոյնպէս մարմինը հետերնին տարին, ինչուան որ բռնաւորն կորաւ, երկիրն խաղաղեցաւ, և գարձան, ու Մարիամայ մարմինը հանգչեցուցին անոր ձեռակերտ եկեղեցւոյ մը մէջ։ — Արծրունի Թոռունքն Աշոտոյ՝ իրենց հօր (Դերենիկան) պէս վաւաշուն և անհանգարտ եղան. բայց անգրանիկն Աշոտ աւելի հաւատարիմ եղաւ Սմբատայ, և երիտասարդ վախճանեցաւ (29 տարուան), յաջորդն՝ իր եղբայրն Գագիկ՝ Արծրունեաց աշխարհաջէն և փառաւորիչ գիւղաշէն կոչանալուի՝ բայց իր երկիրը ապահովելու համար՝ Յուսֆայ (Նուսուֆ) հետ առանձին գաշինք գնելով և անկէ Թագ առնելով, իր քեռիէն (Սմբատայ) զատուեցաւ, և ասով մեղադրելի է։ Միայն հոս յիշենք որ Սմբատայ պատերազմին առեն ընդ Ահմատայ որդւոյ Յիսէի՝ վատութիւն և մատնութիւն ընող ու Թագաւորին յաղթուելու պատճառ եղող Գագիկն՝ սա չէ, այլ Ապուսմրուանն, որ շատ անգամ յիշուեցաւ պատմութեան մէջ. և որ այս յիշեալ գիպուածէն քիչ վերջը՝ ապաստուեցաւ, որովհետև Արծրունեաց իշխանութիւնը կ'ուզէր ձեռք առնուլ։

Աշոտայ որդիքներէն, Սահակ՝ իրմէ վերջը չի յիշուիր. Շապուհ՝ Հայոց սպարապետ եղաւ և Տերունց տէր. շատ շինութիւններ ըրաւ իր սիրելի քրոջ՝ Մարիամայ՝ երկիրներուն սահմանները. բայց ինքն այլ միւս եղբայրն այլ Դաւիթ՝ գեռ տարիքնին չատած մնան և շատ սուգ պատճառեցին Սմբատայ։

Սա 34 տարի թագաւորեց՝ հօրը շատ կատարելութիւններն ունենալը և անոր արժանի պայազատ ըլլալով. բայց անոր նահապետական հեղինակութիւնը չէր կրնար ունենալ իր պաշտպանութեան տակ եղած իշխանաց վրայ, որք Աշոտոյ որդիք սեպուհէին, իսկ իրեն՝ եղբարք հաւասարք. և քիչ մ' իրենք իրենցմէ, քիչ մ'այլ 'ի Ցուսփայ և յօտարաց գրգռեալ՝ սկսան հեռանալ միութենէն, իւրաքանչիւր իր երկիրը կամ գլուխը հոգալով։ Սակայն Սմբատայ ամեն ջանքն չյաջողեցան, և վերջապէս յետ շատ առաքինի գործոց և աշխատանաց, իր խորամանկ երդմնազանց անգութ թշնամւոյն՝ Ցուսփայ՝ անմեռաւոր եղաւ. գերագոյն առաքինութեամբ, իր հպատակները ազատելու համար, և անկէց այլ գերագոյն առաքինութեամբ մը մարտիրոսական քառամեայ ջանաց համբերութեամբ՝ արեամբ նահատակուեցաւ 'ի վերայ հայրենեաց և սուրբ հաւատոցն (914). և իր պապուն նման Թոգրուլեանց, և այլ փառաւոր անուամբ և իրաւ նահատակ կոչուեցաւ, և նշանագրեցաւ 'ի Ցայսմաւուրս և 'ի Հայագիրն՝ յութ մայիսի։

Այսպէսեաց հայր և որդի Մեծն Աշոտ, այսպէս ապրեցաւ, գերազանց քան զանձնէ և քան զչաս յիշխանաց և թագաւորաց՝ մեծագործութեամբ, քաջութեամբ, բարեպաշտութեամբ, խոհեմութեամբ, միանգամայն և յաջողութեամբ և փառաւ և սիրով ժամանակակցացն և ապագայից։ Այսպէս գիտցաւ յարմարել խլՃին, պատւոյ, ժամանակին և հայրենեաց և ընկերաց օգտին։ Այսպէս ազգայարոյց և ազգակեցոյց անմեռ եղաւ, արժանի երախտագիտութեան, զարմանաց և փառաց՝ աւելի քան մինչև հիմայ իրեն ընծայուածն. արժանի Հայոց նախաշար անուանց դասակցութեան, արժանի դիւցամեծար դրուատեաց և կրկնափայլ անմահութեան։

Ո՛ւշադիր երիջանիկ և նախանձելի պիտի գրեմ զքեզ, Հայկակ, եթէ օր մը կամ գիշեր մը, պայծառ արեւ մը կամ ախրախառն լուսին մը լուսանան քեզի՝ ի Բագարան, Ախուրեան գետոյն պզտոր պտուտից և անարձագանգ կարկաջանաց քով. այն համասփիւռ ջարդ ու բուրդ քարուցիր աւերակաց վրայ, որոնք միջոցէ առեն անգամ սեւ ու սուգ կ'երևին, մեծ հնոցէ մը խանգրած միոտած աղիւաններու նման. որոց դիմաց քանի մը ժամ հեռու Անի՝ Թագաւորաց քաղաքն՝ դեռ պարիսպներով և եկեղեցեաքն կիսականգուն կայ.— Բագարան՝ երբեմն չաստուածոց բնակարան, յետոյ Բագրատունեաց արքայարան և քնարան՝ գեանի հաւասար է. քարերն աւազ ու մոխիր դարձած, մանրած Թոռմած. միայն բերդի նշանակ մը կ'երևի քիչ մը բարձր, ծեր ու մէջքը կորացեալ պահապանի նման մաշած աշտարակով մը. չորս հինգ եկեղեցեաց պատերու մասունք կան քովերը, մէկ երկու արձանագիր, որոց հնագոյնն իսկ մեր Աշոտի մահուանէն դար մը վերջը փորագրած է. եկեղեցեաց մէկին մէջ գերեզման մը կայ, զոր Ս. Գէորգի նշխարաց հանգստարան կ'ըսեն մատաքնակ ժողովուրդն, և ուխտի կ'երթան ու խնդրուածքնին կ'ընդունին. բայց մէկայլոց քով այլ կան հնացեալ լուռ գերեզմաններ, միակ կանգուն չէնք Բագարանի, որք և ծածկեն զմեծագոյնն աւերակաց, զանցեալ ազգս մեր նախահարց։ Այն սևացեալ շիրմաց մէկը կ'ուզեմ որ համբուրես, վրան գտնելով և չորս դի քարէ քար Թուփէ Թուփ սլլիք սլլիք հնչեցընելով զանուն ՄԵԾՆ ԱՇՈՏ ԹԱԳԱՒՈՐ։

ԺԷ

ՍԲԳԱՐ ԴՊԻՐ

ՀԱՑ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթէ մտածութիւնը բերնով բացատրելն, այսինքն խօսիլն, աստուածատուր և բնաձիր պարգև մը ջրլսար մարդուս, անշուշտ այն հնարող և աւանդող մարդն՝ գերագոյն մարդ պէտք էր սեպուիլ, և յամենայն ազգաց և ժամանակաց պաշտելի և պատուելի ըլլալ։ Անկէ ետև պատուելի և երախտելի համարելու է զիսօքը մնայուն ընոյզը՝ նիւթական կերպով մը, որ է գիր։ և իրաւամբ այլ մեծ և աստուածական պաշտօն ընծայած են նախնիք իւրաքանչիւր ազգաց՝ իրենց մէջ գիր և գպրութիւն հնարողաց. որպիսի էր կամ կու կարծուի մեր հին նախնեաց մէջ՝ Տիր՝ հայրն և աստուած դպրութեանց, որ Ցունաց և Եգիպտացւոց Եռամեծ Հերմեսի հաւասարի և համեմատի. իսկ քրիստոնէութեան առնն մեր նոր գրոց հեղինակն՝ Ս. Մեսրովպ ամենուն յայտնի է թէ ինչպէս երախտագիտութեամբ և փառաբանութեամբ ճանչցուած և պաշտուած է յազգէս՝ յեկեղեցիս և յուսումնարանս։ — Եւ եթէ յիտ այս մեծարդիւն գրագիտ մարդկան՝ պատուոյ և երախտաց կարգը՝ մէկու մը տալու ենք, անշուշտ այն մէկն է՝ գրութիւնը շուտ և շատ ծաւալել հնարողն,

որ է Տոգիէն։ Այս այլ յայտ է, թէ Եւրոպացիք՝ յառաջագէմքն 'ի գրականութեան, ինչ պատիւ և շնորհակալութիւն կ'ընծայեն Կուդդէմպէրկի, որ իրենց մէջ համարուի հեղինակ տպագրութեան, թէպէտ և Զինք յամենայնի հնապանծք (և շատ բանի մէջ իրաւամբ), այս գիւտս այլ իրենց սեփականեն. բայց ընդհանուր աշխարհս չորս դար է՝ որ այս մեծ պարգևս կուվայելէ, Գրաշպուրկի գերմանացւոյ մը երկայնամիտ հանճարովը։

Մեր Հայոց Կուդդէմպէրկն ովեղած է, այսինքն առաջին անգամ հայերէն գրեր ձուլող ձևող և գիրք տպող, գեռ ոչ բոլորովին բացայայտ խնդիր մ' է. զոր արդէն լսած ես [1], Հայկակ, և գիտես որ ամբողջ հայերէն գիրք տպագրելէն առաջ՝ քանի մը եւրոպէացի բանասէրաց գրոց մէջ ծՁ դարուն կիսէն առաջ ալ երևցած են հայերէն այբուբենք կամ քանի մ'երես բան, որ միայն նախընծայ անհարթ փորձ մը կրնան սեպուիլ տպագրութեան. իսկ ամբողջ տպագրեալ հայերէն գիրք մը, թուի թէ Կուդդէմպէրկի գիւտէն հազիւ դար մը եաև եղած է, թէպէտ և գեռ անծանօթ է տպագրութեան տարին և տեղն և հրատարակողը։

Տեսած եմ գիրք մը, որուն համար թէ և չեմ կրնար ըսել բացարձակ առաջին տպագրութիւն, այլ ծանօթ տպագրութեանց նկատմամբ կրնայ ըսուիլ առաջին, կամ ամենէն հին ծանուցեալ տպագիրք, երեք դարէ աւելի հին. որոյ տպագրութեան տեղւոյն և անձին չյիշատակուիլն (գոնէ հիմայ գտուած օրինակաց մէջ) գուցէ խորհրդով և զգուշութեամբ եղած ըլլայ. որով հետև առաջնութեան և հնութեան, նաև հրատարակման անարժան գիրք մ'է, և ձախ ձեռքի

1 Բազմավէպ 1850 տպն, երես 230։

մը լսրհնած ընծայ կրնայ սեպուիլ. գիշերուան ծնունդ քան առաջեան. և եթէ ներելի է մեր հեթանոս հարց կամ Պարսից լեզուովը խօսիլ, խաւարասէր Ահրմէն մ'է որ կ'աճապարէ՝ ի գուրս գալ նախ քան զանուշահոտն և լուսաւոր Որմիզդ, որպէս զի յափշտակէ մեռաց վրայ տիրապետութիւնը. սակայն լոյսն և բարին թէ և քիչ մը յետոյ գայ՝ կու յաղթէ չարին և խաւարին [1]։

Արդ մեզի ծանօթ և հասարակօրէն հռչակեալ առաջին հայերէն լուսաշնորհ և լուսածնունդ տպագրութիւնն՝ եղած է յամի 1565, ամբողջ երեքհարիւրամեան շրջան մ'առաջ, որով և չորրորդ դարագլուխ է այս տարիս [2], արժանի յիշատակաց և ոգեկոչի (գոնէ) վասն տպագրաց ազգիս, ըստ սովորութեան եւրոպեայց, որք չեն զանց առնուր իրենց պատմական, կրօնական և ուսումնական երևելի յիշատակաց դարադարձը տօնախմբել։

Եկեղեցիք ասկէ 300 տարի առաջ, մանենք մտօք ԺԶ դարուն կէսը, քննենք զերեսս աշխարհի և զնորս հայրենեաց մերոց։ — Ի՞նչ նորութիւն և

1 Այս գիրքս է Աղիարդ՝ կիսէն ուելին, փաս մասն բժշկարան. թէ զարդագլուխ թէ հասարակ գրերուն ձևն, թէ ձեռքով գրուած քանի մը բառերն՝ ցուցընեն հնութիւնը. զոր և ուելի հաստատ անվարժ ձեռքի գրուած մ'ալ իմ օրինակիս մէջ. «Դ ԲԻՎԼԻՈ ՌԱ», որ է 1532. 13 տարի յառաջ քան զԱրգտաբեան տպագրութիւնն։ Գիրքն 24 թերթ է ուիթանալ, 16 հարիւրարդալափ երկայնութեամբ, և փայն թերթից թիւն ունի հայերէն այբբենով և ոչ իւրաքանչիւր երեսաց. վերջին իկին վրայ տպագրած է ըստ հին եւրոպական տպագրաց Ա, Բ, և այլն, մինչև ԻԴ, և կարմրագիծ լատինատառ նշանակ մը որ կ'երևի տպագրատանը, և կըրնայ կարծուիլ որ գիրքն տպուած ըլլայ ինչուան ժԵ դարուն վերջերը։

2 1865։

սկիզբն նորութեանց Եւրոպիա. ինչ յուզմունք, այլայլութիւնք, յեղափոխութիւնք, վէճք, քննութիւնք, ժողովք, կռիւք, միաբանութիւնք և հերձուածք՝ վասն հաւատոց, նորաղանգ վարդապետութեանց, և բողոքարկու պահանջմանց։ Պատմագէտ, փիլիսոփայ և աստուածագէտ պէտք է ըլլալ չափով մը, այս մեծ՝ և Եւրոպայի համար հանրական կերպարանափոխութիւնը և ծովածաւալ ծածանումը նկատելու համար. — տեսարան մը՝ որ Թերևս նմանը չէ ունեցած կրթուած և զարգացած ազգաց մէջ. որոյ վերջին պատկերը կ'ըլլայ Եկեղեցւոյ տիեզերական վերջին սինհոդոսը (Տրիդենտեան)։

Պահ մը գիտելով զայս, դառնանք յարևելս, 'ի մայրն արևելեայ աշխարհաց, 'ի բուն մեր հայրենիս՝ 'ի Հայաստան... Ի՞նչ խորութիւն խաւարի և լռութեան. ինչպէս աննշան եղեր է այն ընդարձակ և բազմաբնակ աշխարհն, որ խսկզբան բոլոր երկրիս վրայ առաջին նշանն էր, և երկար և կերպակերպ յեղափոխութեամբք գրեթէ բոլոր հին և միջին ժամանակաց մէջ պատմաքննութեան մառադրութիւնը կրնար գրաւել, նաև իրեն պատերազմաց և արեանց ասպարէզ բացուած առանն. երբ դեռ դիականց և աւերակաց մէջ ալ գտուէին և փայլէին քիչ կամ շատ կենդանի նշխարք Հայութեան. շունչ մը հայ հոգւոյ, փայլ մը հայ հանճարոյ, գործ մը հայ ձեռին... Իսկ հիմայ այս (ԺԶ) դարուս մէջ՝ յետ արիւնակոխ աւերասփիւռ արշաւանաց Լենկթիմուրի, և պատերազմաց Շահռուխի, Ագ և Փարա-Փոյունլու տոհմից, յետ տիրապետութեան Շահ Իսմայէլի 'ի Պարսս, և Օսմանեանց զօրանալով յարևմտից յարևելս աշխարհակալելու, — հիմայ՝ թէ և քիչ մը հանդարտ էր Հայոց երկիրն 'ի վրդովմանց կռուոյ և հակառակութեան, սակայն ազգին ինք-

նակացութիւնն գրեթէ լապատ ջնջած կամ ճրնշուած, դանդաղամած անշարժութեան մէջ էր։

Թերևս Հայութեան հիգագոյն գարն է ԺԵ-ԺԶ դարուց միջոցն. ոչ եկեղեցական յիշատակելի գէպք մը (յետ փոխագրութեան կամ բաժանման կաթողիկոսական աթոռոյ 'ի Սիս և Էջմիածին), ոչ ազգային քաղաքական երևոյթ մը. և ոչ այլ նշոյլք բանասիրութեան կամ գրականութեան, որ թերևս քան զայլ նշանս՝ երկարատև և յայտնագոյն ցոյց է կենդանութեան մեր ազգին։ Այո, մատենագրութեան մասամբ այլ, որչափ որ ծանօթ է ինձի, մեր աղքատագոյն ժամանակն է այս. յետ գեղեցիկ փորձոյ և ջանից մեր գրասիրաց ԺԴ դարուն, (որ թերևս հարստագոյն է քան զամենայն դարս գրականութեան մերոյ, եթէ ոչ և ընտրելագոյն որպէս իրմէ առջինը՝ ԺՌ), գեռ ԺԴ դարուն մէջ այլ գտուէին հեռաւորագ նոցա, որոց գրուածքն ցուցընեն հայկական իսկութիւն մը. և գեռ ԺԵ դարն ալ մինչև 'ի կէսն ունի քանի մը Գրիգոր և Առաքել. Թովմաս մը, Մկրտիչ Նազաշ մը, Ամիրտոլվաթ մը, որք քիչ շատ ջանացած են առաջին դարուց հայ քերդողութեան, պատմութեան և բնագիտութեան մուզայից պարտէզները մշակել կիսահարթ գլչով մը։ Իսկ ասոնցմէ ետև յիշեալ դարուս մէջ՝ և ոչ անոնց հաւասարող մը կ'երևի, և ոչ հայերէն գրական լեզուի յստակութիւն, և ոչ անոր մշակութիւն գրելով ու կարդալով. որոց դիւրութեան հնարքներն այլ նուազեր էին յետ աւերմանց և սասրմանց վերոյլիշեալ բռնաւորաց։

Գրեթէ նորանշան գործ մը կամ անձ մը պէտք էր այս ընտրը դարմանելու և ուծագոյն ընտրէ պահելու զնայս. և եթէ գտուէր այսպիսի մէկն, կարծեմ անտարակոյս և անդանգաղ՝ մեզի այլ պէտք էր ճանչնալ զնա մեծ և յաւերժայիշատ.

սակ բարերար մ՝ազգային. մեկ մը յայն ընտրեալ անձանց, որոց անուններն արժան է որ Հայկական երախտեաց տաճարին մէջ առաջին տողին վրայ գրուին։

Սղաւ, երևցաւ արդեաք այսպիսի անձ մը. պարգևեցաւ Հայաստանի այսպիսի այցելու մը. այնպիսի ճարտարագէտ և հանճարաշնար մը, 'ի միջոց ժամանակին՝ որ յետ վարժապետացն Սիւնեաց վանորէից և նախ քան զՄխիթար Սեբաստացին։ — Այնքան թանձր է ժամանակին մը թուլութիւնն կամ լռութիւնն, որ այս բանս այլ ընդհատ և ընդ աղօտ կ'երևի. սակայն հիմայ մեզի այսչափս այլ բաւական է ճանչնալու որ յիրաւի եղած է Հայոց ցանկալի այցելութիւն մը, Տոգրուլիանն, և երևցեր է ասոր համար եռանգուն, հնարագէտ, անմնանուէր բարերար մը, ԱՐԴԱՐ ԴՊԻՐ։

Այս գիւտին կամ բարեացնախաշարժ սկզբնաւորութիւնն ի՞նչպէս եղած ըլլալն այլ մեզի գեռ յայտնի չէ. բայց խորհրդաւոր և ոչ աննշան կերպ մը կ'երևի։ Ի կէս ԺԶ դարու (յամի 1549) Սահակիանոս Սալմասացի կաթողիկոս՝ կու գայ 'ի Հռովմ [1], (մին յառաջին կաթողիկոսաց Էջմիածնի՝ որ յետ Ս. Լուսաւորչին գայ այս կաթուղիկէ եկեղեցւոյ աթոռը). մեծ մտերմութիւն կու ցուցնէ և կու տեսնէ հոն, և զնոյն կու հաւատէ իր ընտրած աթոռակցին՝ Միքայէլի. իբրև ժառանգութիւն մը թողլով ասոր՝ յաջորդութեան հետ՝ զնոյն մտերմութիւն. զոր և սա կ'ուզէ արժարժել յետ տասն և աւելի տարիներու, երբ ժամանակին դիպուածներէն սոսկուած, Վաղարշապատու աթոռը թողեր, եկեր նստեր էր 'ի Փոքր Ասիա, 'ի հռչակաւորն Սեբաստիա. հոն,

1 Բայնալի, ԺԴ, 374։

ուր իրմէ 500 տարի առաջ մեծանուն Գեորգ Գեռագարձն նստաւ և հանգեաւ։

Քաղաքս է ինձ այս քաղաքիս յիշատակն. որ հին ատեն Ի Հայոց մայրաքաղաք ըլլալէն, և երբեմն ('ի ԺԱ դարու) Ուռանի և Վանայ տեղ Արծրունի Թագաւորաց աթոռ ըլլալէն ունի մեծ, (թէ և ոչ ըստ արժանւոյն հռչակեալ) յիշատակներ և երախտիք ունի առ ազգս, կամ մասնաւոր նախախնամութեան ձիրքեր, զոր յարմար է հարկանցի յիշել այս առթով։ Քրիստոնէութեան առաջին հալածանաց դարուց մէջ շատ սուրբ նահատակներ ընծայեց Սեբաստիա, որոց անշուշտ մէկ մասն այլ Հայազգի էին. շատ օտար տեղացի առաքինիք այլ՝ հոս (իբրև յիշխանանիստ քաղաք Հռոմայեցւոց) գտուեցան և նահատակեցան։ — Ո՞վ կրնայ Սեբաստիոյ անուան հետ չը յիշել Քառասուն Մանչունսն, « որք » 'ի Սեբաստիոյ ծովուն զծովածուփ կենցաղոյս » լուծին զվտանգ [1] »։ Երբ հալածանքն՝ դեռ ընդհանուր եկեղեցւոյ համար չդադրած՝ 'ի Հայս գաղրեցաւ, Դր. Լուսաւորչի մը տիեզերական նշանաւորութեամբ և Տրդատայ մը համաշխարհական հաւատոմն 'ի Քրիստոս, մեր առաջին հայրապետն 'ի Կեսարիոյ սուրբ օծութեամբ գառնալուն առեն, « մնայր ժամանակս ինչ 'ի « Սեբաստիա, հաւատքեալ զդասս կրօնաւորացն [2] »։ Կրնամք ըսել թէ նորընծայ քրիստոնէահաւատ Հայութեան առաջին գաստիարակաց մեծ մասն՝ 'ի Սեբաստիոյ ընծայեցան. և չեմ անիրաւիր ըսելու այլ թէ թերևս անկէ 1600 տարի ետև, յետին քաջանչան քարերար և նորոգիչ մը հոգևոր և մտաւոր հանճարոյ ազգիս՝ 'ի նոյն 'ի Սեբաստիոյ ծագեցաւ, Մխիթար Աբբայն։ Այս Սեբա-

1 Շարական։ 2 Զենոբ։

սաթոյ երկու մեծաձիր լուսաւորիչ և լուսաւորագ հրեշտակութեանց մէջ, իրաւացի կու համարիմ դասել զհնգինակն հայ տպագրութեան՝ Արգարոր թէ և հայրենեաց մերձաւոր մեծ քաղաքէ մ'էր, յԵւդոկիոյ (Փոքրագ), այլ ասկէ ('ի Սեբաստիոյ) ելաւ 'ի հրեշտակութիւն, և իր յիշատակաց գործը կատարեց։ Եթէ Եւդոկիացիք ուզեն վիճիլ այս պարծանաց համար՝ ես հաճութեամբ հաւանիմ այդպիսի վիճի մը։

Աբգարու դպիր իր քաղաքին մէջ առաջուց այլ վկայուած էր խելքն և ճարտարութեամբ, և անկէ այլ առաջ ազնուական ծննդեամբն. թէ և վաղուց վերցուած էր Հայոց պայազատական ցեղակարգութիւնն, բայց դեռ հիմակուընէ աւելի գտուէին և ճանչուէին հին պայազատաց շառաւեղքն։ Աբգարու ծնունդն մեզմէ երեք և կէս դարու չափ կը յառաջէ. իսկ անկէ վեր մինչև 'ի վերջին Թագաժառանգս Կիւլիկեան իշխանազանց՝ հազիւ գար և կէս է. անշուշտ այն ատեն, այսինքն 'ի կէս ԺԶ դարու դեռ յայտնապէս տեսնուէին մեր յետին Թագաւորական հարստութեան ցրուեալ և ցանեալ շառաւեղքն, ոչ միայն 'ի Կիւլիկիա, այլ Թերևս այլ աւելի յօտար հայաբնակ քաղաքներ. ատոնցմէ մէկն էր մեր Աբգարն այլ. Թէպէտ և որ ճշդէ առաջ եկած ըլլալն չէ յայտ։ Իր ազնիւ և ատհմիկ մարդ ըլլալն՝ արդէն կու վկայէ Մելքայէլ կաթողիկոս իր Թղթոցն. բայց անկէ աւելին կու գտնեմք իր որդւոյն վրայ եղած յիշատակքն, որ և իլլեն ուղղկիչ և գործակից էր. և անուամբն իսկ յայտնէր մեծատոհմութիւնը, Սուլանշահ կոչուելով. զոր և Լատինացիք Թուի Թէ 'ի նոյն նշանակ կոչեցին Մուրգանդոնիոյ (Մարկոս-Անտոնիոս)։ Գոնէ ասոր մայրն, Աբգարու կինն, պէտք էր Թագաւորական շառաւիղէ ըլլալ. վասն զի Մաղաքիա Դպիր ժամանակագիր

կ'ըսէ ասոր համար, «իւր (որդւոյն) թագաւորեալ
» Անտոնինոս Սուլթանչա սարկաւագին»։ Եւ յա-
մին 1583 Հռոմայ մէջ գտուող Հայկազունք՝ նոյն
Սուլթանչային առաջնորդութեամբ, որ իրենց ի-
խան կամ վերակացու անուանեալ էր 'ի Պապէն,
և Յովհ. Տէրզնցի տպագրող երիցուն ձեռնարկու-
թեամբ՝ առ Դաւիթ պատրիարք Սրուսաղէմի
գրած թղթերնուն մէջ՝ կ'անուանեն զնա՝ «Մեր
» Հայոց իշխանն տրտաչ-ոէն 'ի Հ-ոայ (Հայկ) պա-
» ռն Սուլթանչան»... և դարձեալ, «ալիքսաղինն
» պարոն Սուլթանչ(ա՛հ)ին»։ — Քիչ տարի վերջը
(1600) Տէր Բարթուղիմէոս վարդապետ մը որ
հոն 'ի Հռոմ Հայոց եկեղեցւոյն հովուապետ
դրուեր էր, զինքն կ'անուանէ 'ի յիշատակարանս՝
Աբգարայ ոդին, և մեր Լեւոն Ե թագաւորին մեկ
գտուած պարգևագրին վաւերականութիւնը վը-
կայելով կու գրէ ներքևը. «Նա Տէր Բարդողի-
» մէոս Աբգարայի, այս թագաւորին տէրմնէ, դատաս-
» տանմ զոր գրնալէ»։ — Աւելի որոշ կու գրէ ու-
րիշ ժամանակագիր մը անցեալ դարուն, նոր ա-
նուն մ'այլ յայտնելով Աբգարու. «Պարոն Սե-
» ֆէր Աբգարենց, 'ի զարմէ թագաւորացն Հայոց,
» եկեալ 'ի Հռոմ դեսպան Հայաստանեայց[1]»,
և այլն։ Արդ ասոնք կարծեմ բաւական ցուցը-
նեն թէ Ալեքսիոս Իւրբինեան թագաւորաց ցե-
զէն իջած էր Աբգարեան տոհմը, ուսկից էր մեր
Դպիրն, և Սուլթանչահ և Տէր Բարդուղիմէոսն.
իսկ 'ի Հայկայ անուանելն զպայազատն՝ գուցէ
ամէն հայ թագաւոր Հայկայ յաջորդ սեպուելոյն
է։ — Եթէ ցեղին ազնուականութիւնն աւելորդ
է, կամ մասնաւոր փառք մը չաւելցըներ բարքով
անեղան մարդու մը, արդէն գործովը նշանաւոր
եղողին՝ կըրնայ նոր և աւելի փայլք տալ. ուրեմն

1 Ստեփանոս Ռիօշքեան 'ի Լեհս։

թէ ասոր համար դարկ էր մեզի զայս գիտնալ, թէ մեր ազգային պատմութեանց տեղեկութեան համար։ Դանք դիմայ Արգարու ուրիշ առաւելութեանց վրայ։

Ինքն զինքն Դոդիէ կ'անուանէ, որ թէ եկեղեցական կարգի փոքր աստիճաններ ունենալն կրնայ յայտնել, և թէ գրոց և գրչութեան աշակերտին. բայց կ'երևի թէ աւելի ճարտարութեան արուեստից եռեռեռ էր՝ քան պարզ գրականութեան. սակայն յամենայնի ճարտար ճարպիկ մարդ մը ճանաչուած։ Արգարու յաջողութեանց ինքնին վրկայ է Միքայէլ կաթուղիկոս առ Պիոս Դ գրած թղթերուն, որոց մէկն միայն լատիներէն հասած է մեր ձեռքը։ Ցեռ հաստատելու իր նուիրակին պատուաւոր և պատուարժան անձն ըլլալը, կ'իմացընէ նաև անոր կերպ կերպ ճարտարութիւններն այլ. և նախ հնարագիտութիւնն 'ի գրել և կարդալ ծածուկ. և խորհրդաբար գրուածներ, ինչպէս էր ինքնին կաթողիկոսին առջի գրածն այլ և ուրիշ գրելիքն այլ, զոր բաց յԱրգարու չէր կրնար ուրիշ մը կարդալ։ Դարձեալ կ'իմացընէ՝ որ յերկուց ձեռաց այլ հաւասար յաջող էր Արգար, ինչ որ աջովը կրնար՝ զնոյն նաև ձախովն կարող էր ընելու։ Ուրիշ աւելի բարձրագոյն յաջողութեան և ճարտարութեան մ'այլ վկայէ կաթուղիկոսն, որ ինծմէ այլ բարձր կամ անհասկանալի մնայ առ ժամս [1]։ Այս թուղթս գրած է Միքայէլ կաթուղիկոս յամին 1863, (ապրիլ 1) յիշեցընելու և ուռուցելու համար որ անկէ առաջ նախընթաց տարին (1862 մայիսի 20) երկու երկար գիր գրեր և յանձներ էր առ Արգար, գլուխ գնելով զնա իր պատգամաւորաց առ

1 Այսպէս կ'ըսե 'ի լատիներէն թղթին. Scit superiora elementa prisca, nisi tantum ipse, qui ea etiam docebit.

Ս. Պապն. մէկ թուղթն ընծայական կամ յանձնարարական էր նոյն Աբգարու համար առ Պապն, որոյ ձեռքով ընծայ կու խաւրէր առ քահանայապետն՝ օրհնեալ մեռոն անուշահոտ, թանկ խաչ մը և նշխարք սրբոց. իսկ միւս թուղթն որ բուն այս դեսպանութեան նպատակն պիտի յայտնէր, դեռ յերևան չէ եկած։ Բայց անտարակոյս է որ մասամբ հաւատոյ դաւանութեան և միաբանութեան վրայօք էր. մանաւանդ որ այն տարիները Տրիտենդեան տիեզերական ժողովը կ'ըլլար, անհաւանական չէ որ Հայաստան ալ հեռուստ համաձայնած ըլլայ ընդհանրական եկեղեցւոյ հետ՝ այս անգամ այլ։ Թղթոյն մէկ նպատակն այլ՝ (որ առ այժմ հոս մեզի աւելի հետաքննելի է) թուի թէ այն գործոյն համար էր, որոյ ձեռք զարկաւ Աբգար, և որոյ համար այսօր այլ մեզմէ կու հոչակուի։

Արդ այս թղթերով և ընծաներով, հետն առած իր Սուրդանչահ որդին, Աղեքսանդր անուամբ քահանայ մը, և թերևս ուրիշ անձեր այլ, եկաւ Աբգար 'ի Սեբաստիոյ երթալ 'ի Հռոմ. ուր շատ ուշ հասաւ, յամին 1564. որ թուի թէ ոչ միայն Հռոմբու արգելանաց համար ըլլայ, որովհետև կաթուղիկոսն լուր և պատասխան չառնելով վերոյիշեալ դիրն այլ գրեր և հասուցեր էր առ Պապն (1563). այլ գուցէ Աբգար լսեր էր Սրբազանին մեծ և կարևոր գրաղանքը, որ ամենայն ջանքով և շուտով յառաջ տանելով կ'ուզէր կնքել Տրիդենտեան յերկարեալ ժողովը, ինչպէս որ յաջողեցաւ այլ ընելու, և մեծ գոհութեամբ հանգչելով յաթոռն սուրբ՝ կ'ըսէր. Արդ արձակեա Տեր զծառայս քո։ Բայց գործ մ'այլ կայ եղեր իրեն տեսնելու՝ մեր հայրենեաց նկատմամբ. և այս էր գործն Աբգարու։

Հասաւ սա 'ի Հռովմ յամին 1564, և մատոյց

առ Պիոս Դ բերած թղթերն և ընծայքը. և իմացաւ որ կաթողիկոսն նոր թուղթ այլ գրեր է, յորում գարձեալ կ'ազաչէ զՍ. Պապն՝ որ մեծարանաց ընդունի զԱբգար և գեսպանօրէն պատուէ զնա. ցուցընել տալով անոր՝ ինչ որ սրբութեանց և արուեստից հրաշալի տեսնելիք կան 'ի Հռովմ, և յետոյ պապական թղթով և նուիրակով յետ գարձընէ։ Անշուշտ այս խնդիրքս գոհարար կերպով կատարեցան։ Պիոս հաճութիւն ընդունելով Միքայելի առաջին թուղթը, և իբրև յաւելուած մը սեպելով իր եկեղեցւոյ պայծառութեան աշխատանաց և փափագին, աւելի երկար և պարզ գաւանութիւն մ'ուղեց յԱբգարայ՝ Հայոց եկեղեցւոյն վարդապետութեան վերայօք։ Աբգար կատարեց Պապին խնդիրը՝ իր ճանչցածը բացատրելով չափաւորապէս։ Այս բանիս համար անկէ առաջ եղածը թողունք պրպտել մեր եկեղեցական պատմութեան, որ մութ մնացած է այս տեղ. բայց այսչափս հարկ է ըսել, որ տարւոյ մը չափ Աբգարու մնալովն 'ի Հռովմ՝ երկու կողմանէ այլ քննութիւն և հաւանութիւն եղած պիտի ըլլայ. որովհետև Աբգար ընտանութեամբ խնդիրքներ ըրած և առած է 'ի Պապէն, ինչպէս ինքնին նշան կու տայ իր առաջին տպած գրոց մէջ. և զի իր Գրմտէ ոդին, ինչպէս ինքն կ'անուանէ, հոն թողուց որ սովրի լաւ իտալ և լատին լեզու, և որ 20 տարի վերջն այլ յիշուի հոն 'ի Հռոմ. ուր և արգէն հոն գտուած Հայոց՝ վերակացու և իշխան գրուեցաւ 'ի յաջորդաց Պիոսի, ընդունելով ապագին համար սեփական հիւրատուն մը, և եկեղեցի մը՝ Ս. Մարիամ Եգիպտացւոյ, փոխանակ հին տան և եկեղեցւոյն (Ս. Աստուածածին և Ս. Լուսաւորիչ) որ մեզմէ վեց տար այլ յառաջ յիշուին 'ի Հռովմ՝ մօտ 'ի մեծն եկեղեցեաց՝ 'ի Ս. Պետրոս։

Հոգևորական գործը լմընցընելով, կամ անոր հետ մէկտեղ՝ սկսաւ Աբգար իր մեծահաչակ ուսումնական գործը, այսինքն է հայերէն տպագրութիւնը։ Այս լուսաւոր ծննդեան երկունքն կամ խորհրդածութիւնն՝ արդեօք Աբգար իր հայրենի երկրէն և կաթողիկոսին հաւանութեամբ հնար բերեր էր, թէ 'ի Հռոմ գալով միոքն արծարծեցաւ, մեզի յայտնի ըսած չէ. բայց ինչպէս առաջ այլ ըսի՝ կ'երևի թէ արդէն այս փափագովս եկած էր Աբգար 'ի Հռոմ, և թերևս կաթողիկոսին մթին խօսքերն՝ ասոր այլ ակնարկն։ Իսկ այս ամենայայտնի է որ ծանօթ հայ տպագրութեան երկունքն եղաւ 'ի Հռոմ, ծնունդն 'ի Վենետիկ։ Հայն իր լուսաւոր կենաց նախնական և գլխաւոր օժանդակները՝ միշտ մեծ և հրաշալի կերպով մ'ընդունած կարծէ և պարծի. այսպէս՝ սուրբ հաւատքը, առումարը և գիրը. այսպէս այլ իր տպագրութիւնն նախախնամական և արտաքին կերպարանք մը կ'առնու Աբգարու ձեռքով կամ ձեռնարարութեամբ. որ յիրաւի արժանի է մատդրութեան անունց՝ որ պատմութեան, և մանաւանդ մատուոր պատմութեան մէջ՝ ասառուածային աջը կու տեսնեն նախացուցակ։

Կարդա՛ մեր առաջին ծանօթ տպագրեալ գրոց (Սաղմոսին) առաջին յիշատակը. «Ի թվականիս Հայոց ՌԴԴ (1568) ամին ես Թորխաթցի Աբգար » Ի՛ալիրս, խնդրեցի զայս նոր գիրս 'ի Հռոմ 'ի Պետ » րոս (Պիոս) փափուն. և երևս հրամանն չինելու. » բարեխաւսութեամբ այս կարտինալացս և այս » եպիսկոպոսիս. և իմ գրչամբս Սուլտանշա որ. » գուոյս »։ Յիշած կարտինալներն են երեք, և եպիսկոպոս մը, որոց կերպարանքն և անունն ձեռացուցեր է փորագրեալ փոքր պատկերի մը մէջ գրքին մէկ կէս երեսին վրայ, որոյ տակն այլ տպագրած է յիշատակարանը. պատկերին մէջ տե-

ղը բազմեցընելով զՊիոս Դ եռակարգեան խուրդը. ձախ ձեռքը պետրոսեան բանալիքն, աջովն այլ օրհնելով նորընծայ հայ գրերը՝ զոր Աբգար 'ի ծունկ իջած ներկայացընէ Պապին. և որդին Սուլտանշա յոտք կեցած՝ իբրև հօրը թարգման՝ խնդրէ օրհնութիւն և հրաման մոցընելու և ծաւալելու 'ի Հայս՝ այս մատաքացութեան կարևոր հնարքը։ Այն կէս թաթաչափ փոքրիկ, խոշորագիծ պատկերին մէջ այնչափ բան և իմաստ բովանդակելն՝ յիրաւի ցուցընէ Աբգարու գովելի հնարագիտութիւնը և մեծցընող ու փառաւորող ձեռքն ու միտքն.—ինչո՞ւ չըսենք թէ նաև սիրտն ու հոգին։

Պատկերին ցուցած եօթն անձանց մէջ՝ յետ Աբգարու և որդւոյն՝ մեզի և հասարակաց համար նշանաւոր անձն՝ 'ի հարկէ հոն բազմեալն և գլխաւորն եկեղեցւոյ՝ Պիսան է, որ իր կենաց և շատոնց բազմալի ու մեծ ու գժար գործը գեռ նոր վճարած (Տրիդ. ժողովը), և իր անմահութեան յիշատակին նախափայլ ճառագայթներովը՝ մնացած քանի մ'ամսական կենաց նշոյլը ծածկելու միջոցին մէջ՝ այս մեր հայերէն տպագրութեան սկզբնաւորութիւնը օրհնելով կամ օրթաշանելով՝ յիրաւի կ'առնու և կու տայ վսեմական կերպ և իմաստ մը։ — Ոչ պակաս վեհ և աւելի սիրելի է հասարակաց՝ մէկ ուրիշ անձ մ'այլ՝ կարմինալական ձևովն անմիջապէս Պապին քովն կեցած. որ և նոյն իսկ սրբազանին քեռորդին էր, գեռ ան տասն 26 տարուան, բայց որդէն արքեպիսկոպոս Միլանու, և ծիրանաւոր պալատական Հռոմայ, ազնուականն ծննդեամբ և ազնուագոյնն մահուամբ Ս. Կարոլոս Պորրոմէոս. որ գեռ սրբութեանը պէս՝ բազմակերպ մարդասէր բարերարութեամբքն՝ ծանօթ և հռչակեալ է ընդ ամենայն Իտալիա և բոլոր բարեպաշտ Եւրոպէ։

Ապացոյցի անձի մը՝ մեր հայերէն տպագրութեան իբրև պաշտպան կամ կնքահայր գտուելն, կու յիշեցընէ՝ ինչպէս ինծի՝ անշուշտ քեզ այլ, Հայկակ, Յովնակին եկեղեցւոյ կամ անոր նման անձի մը յիշատակը՝ մեր հայերէն գրոց կամ թարգմանութեան գիւտին նկատմամբ։ — Ի մեծ գրատան Միլանու կայ օրինակ մը մեր տպագրոց անգրանկին՝ Աբգարու սաղմոսին, որ և մի միայն հոն գտուի (ըստ իմ գիտութեանս). և այն օրինակն է՝ զոր անշուշտ մեր Աբգարն ընծայեր է առ սուրբ Միրանաւորն, և նա այլ թողեր է գրատանը. — եռապատիկ ցանկալի՛ յիշատակ և գերքոյկ, որ կրնայ կենդանի արձան մը սեպուիլ այս ըստ ծներուս աբգարեան նորընծայ տպագրութեամբ, և պաշտելի նշխար մը այն գործոյն, զոր ոչ միայն Աբգար՝ այլ և նախախնամութիւնն, (հոս պէտք է զայս խոստովանիլ), արդարև կերպով մը օրհնաշանել ուզեր են։

Աբգար այսչափով գոհ չըլլալով կ'ուզէ աւելի փառաւորութիւն մ'այլ ընծայել իր հայկական տպագրութեան ծագման. ոչ միայն եկեղեցական այլ և քաղաքական հովանաւորութիւն մը կու ձգէ վրան. — ժամանակին նշանաւոր և յայտնեալ ծանօթագոյն եղած տէրութեան մը պաշտպանութեան տակ, Վենետկոյ հասարակապետութեան։ Վերոյիշեալ պատկերին գիմաց՝ նոյն լատինով կու ներկայացընէ ուրիշ մը. հանդիսական դահլիճ մը. Վենետկոյ պաշտպան Ս. Նշան Ս. Մարկոսեան ոսկեթեւ առիւծն՝ վերակարդեալ 'ի վերայ արքունի գահուն, ուր բազմի այն առենուան դուքսն Հերոնիմոս՝ իր հանդիսի հագուստովն. երկու կողմն իրեք իրեք աւենակալ նստին իրենց լայն լոգիկներով պատած, որպէս թէ կարևոր խնդիր մ'ընեն նաւախուռմբ մ'արձակելու և իրենց առիւծագլուխ գրօշները թռցընելու Ցոնիականի կամ

Ադրիականի կղզւոյ մը վրայ... բայց մեր Ճարտարապետուն Աբգար՝ անունց մատադրութիւնը կու գարձընէ իր նորաձոյլ հայկական տառից վրայ։ — Կու ներկայանայ գահուն աստիճանաց վրայ, ինքն այլ իր լայն վերարկուաւն, զնոյն խնդիրն ընելովինչ որ ըրաւ Պապին։ Մերունի և մօրուանի առենակալաց և դքսին ծովային աչքերն՝ սուր սուր կու սեւեռին Աբգարէն աւելի (որոյ աղջն և ձեւն չատոնց իրենց ծանօթ են), ոնոր ցուցած և անծանօթ գծած ձեւերուն վրայ, և թերևս կարծեն թէ անոնք նոր մոգական բանալիք մ՝այլ ըլլան իրենց՝ արևելքի ճամբաներն աւելի բանալու։ Այս պատկերին ներքև կու գրէ Աբգար. «Եւ ե-» կեալ ի գեղեցիկ Նաւայհանկի(ս)ա մայրաքա-» ղաքն, որ կոչի Վանատիկ, 'ի թագաւորութեանն» Երեւելմոն Փուռին։ Եւ շինեցաք զայս նոր գիրս, » և զաս փոքր Մեկնիչս սաղմոսացս»։ Հաս այլ տարբերոյն թուականն նշանակելով դքսին պատուանդանին վրայ, այսպէս M. D. L. X. V. որ է 1565։ — Առով յայտնի կ'ընէ Աբգար, որ 'ի Հռոմ երկնեալ հայկական տառերը՝ ձուլեց ծնաւ 'ի Վենետիկ. և մեկէն ձեռք զարկաւ անոնց նախընծայ զուգաւորութեամբ՝ բազմացընելու այն գիրքը, որ և կ'ըսուի թէ նախ քան զայլ սուրբ Գիրս հայերէն թարգմանուած է, Սաղմոս. զոր թերևս վերնագրացը համար՝ Մէրիլ սաղմոսաց կ'անուանէ։

Ցետ այս անդրանիկ տպագրութեան ուրիշ գրոց ծնունդք այլ եղան 'ի Վենետիկ.—չեմ գիտեր. հաւանական է որ Աբգար ուրախութեամբ լցուած իր փորձին և յաջողութեանը վրայ, իբր յաղթանակաւ և աւարաւ նաւեց փութացաւ 'ի մեծ քաղաքն (Կ. Պօլիս), որ այն առենէն մինչև հիմայ ազգերնուս մեծագոյն բարգաւաճանաց ժողովարանն և կեդրոնն եղած է. ուր և բոլոր Օս-

մանեան տէրութեան մէջ ազգը ներկայացընող կու ճանաչուէր՝ հիմկու պէս՝ Պատրիարքն Հայոց։ Ասոր այլ ներկայացուց Աբգար, յառաջ քան թէ կաթուղիկոսին, իր գիւղը և անոր երախայրիքը. և շուտով տպագրատուն մը հաստատելով, և անշուշտ առաջին տպագրատուն Կոստանդիանու և Օսմանեան տիրզերական մայրաքաղաքին մէջ՝ տպագրեց յամի 1567, գրականութեան առաջին հարկաւոր գիրքը, Քէրոխանարիան. որոյ համար կ'ըսէ մեր յետին դարուց ժամանակագիրն (Մաղաքիա) այլ մեծաբանութեամբ և այլաբանութեամբ. « Ի հայրապետութեանն Հայոց » տէր Միքայելի ԻԱ ամի կաթուղիկոսութեանն, » 'ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս, յերկրորդ » ամի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան » Սէլիմի, և 'ի չորրորդ ամի պատրիարգութեան » տէր Յակոբ բարձունապետի Կոստանդնուպօլ » սոյ, առ ոտս Յովանէս Եպիսկոպոսին, ընդ հո- » վանեաւ սուրբ Նիկողայոս Եկեղեցւոյն Հայոց, » եղև սքանչելի, այսինքն գոմոյ գիր. և տպեցաւ » քէոր քէրոխանարիան տպագրոց, ձեռամբ անարժան » ինքագիր դպրի և մերս Յոհաննին »։ Հոս բնիկ անունը լռելով Ինքգիր դպիր կ'անուանէ զԱբգար, գուցէ այսպէս կոչելով մեր հիմայ գրագիր ը�ծը. իսկ Յոհաննի անուամբ, որ Մովսէս մարգարէին աներոջ անունն է, կ'ուզէ նշանակել, թէ անոր պէս այլ Աբգար ճամբայ ցրցուց իր ազգին գլխաւորին՝ զազգը դիւրաւ կառավարելու կամ գատելու։— Բայց հեռաւեալ տարին՝ աւելի պարզ և յայտնի կու խօսի տարբերգիրն. « Ոչ (1568-9) » 'ի Կոստանդնուպօլիս նոր ստամբայ գիր սահ- » մանեցին, 'ի հայրապետութեան տեառն Մի- » քայէլին Էջմիածնի, և 'ի պատրիարգութեան » Կոստանդնուպօլսոյ տէր Յակոբին, ընդ հովա- » նեաւ սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն. ձեռամբ

» Խորվիրապցի Աստուածատուր Աբեղայի, արհեստագործ
» ծուլթեամբ Աբգար դպրի, և իւր Անառանինոս
» Սուլթանչա սարկաւագին, որոյ գրովքն ապեալ
» Տնաղոյց» յառաջ բերին »։ Այս ասնացոյցս ես
չեմ տեսեր, բայց ձեռքս հասեր են անոր ընկե-
րակից և ժամանակակից ուրիշ եկեղեցական գիր-
քեր, մասամբք, այսինքն ժամագիրք, Պատարագա-
մատոյց, Սաղմոս. որոց սկիզբն և վերջն պակսի,
բայց գիշերային ժամու վերնագրէն յառաջ ե-
րեսի մը սկիզբը յայտնապէս կայ. (տպա) «գրե-
» ցաւ Աղաւթ մատուցս թվին. ՌԺԷ ապրիլ. ԻԷ»։
որ է 1569ին ապրիլը։

Սաղմոս, Տնաղոյց, ժամագիրք, Պատարա-
գամատոյց, Մաշտոց, կու պահանջին զԱստուա-
բանն այլ, որոյ անգրանիկ աբգարեան ապագրու-
թիւն գեռ յայտնուած կամ յիշուած չէ. բայց
գրեթէ անտարակոյս կ'երևի, ընցընելու եկեղե-
ցական գրոց առաջին գաղը։ Փերականութիւնն
այլ հիմն և սկիզբն կ'ըլլայ մեր նախնեաց խրա-
տական և գիտնական գրոց, միանգամայն և գրպ-
ղոցական գրոց. որոց կարդը կամ ծնունդը փնտը-
ռել, թէ դժար և թէ աւելորդ կու սեպեմ հոս։
Բաւական ըլլայ քեզ, Հայկակ, Ճանչնալն զԱբ-
գար՝ ինչպէս հեղինակ հայերէն տպագրութեան,
նոյնպէս այլ սկզբնաւոր հրատարակման թէ հա-
գևոր թէ մտաւոր գրոց մերոց։ Այսչափս այլ՝
որ թերևս Աբգարու վաստակոց մէկ փոքր մասն
է, շատ ըլլայ մեզի իր մեծ մտածութիւնը, աշխա-
տանքը, ջանքը, փորձը և յաջողութիւնը յաղթող
և փառաւոր ցուցընելու։ Եւ եթէ մեր նախ չի-
շեալ մթին ժամանակաց լռութիւնն կու ծածկէ
մեզմէ իր վաստակոց ուրիշ մեծ կամ փոքր մա-
սերն այլ, կամ իր ծովայածուկ և նոր կղզի գտնող
նաւորդի մը պէս յաղթողակերպ գաբձն յետքաղ
մամեայ պանդխտութեանն՝ առ կաթուղիկոսն Մի

քայլել և 'ի հայրենիս իւր, կամ իր վերջին կենաց դիպուածքը, (որոյ առջինէն՝ կամ բոլորէն այլ հազիւ վեց կամ եօթն տարւոյ յիշատակ միայն աւանդեր է, (գոնէ իմ հիմայ գտածս).— այսչափս, կ'ըսեմ, առ այժմ բաւական սեպեմք հանաչելու զԱՒԳՈՒ դպիրն՝ մեր ազգային բարերարաց և մեծագործաց և մեծ շնորհակալեաց արժանաւորաց՝ մէկ մը։

Փոքունք հիմայ մեր բազմացեալ տպագիրողաց և տպագրապետաց մտաց և սրտին զգացման՝ հուշակելու զյիշատակ իրենց առաջնորդին, 'ի Զ·ՐՐ·ՐԴ Գ·Ր·Մ·Գ գ·գ·գ·Ր·Ռ·Ն·Ե·Ն Հ·Յ·Ց·. մեր կողմէն փափագելով որ այսպիսի ջանքով, հանդիսաւորութեամբ և սրբազնութեամբ մը սկսեալ կամ շնորհեալ արուեստն՝ առ ազգս մեր, հիմայ յաճախութեամբ գրոց և տառից և մասնոց՝ ջանարգուի խորթ ծննդեամբք. այսինքն հրատարակութեամբ այնպիսի գրուածոց՝ որ կրնան քշգձել և փհացընել սչխարհքիս հնագոյն ազգի մը պատկառելի նահապետական պատուոյ քօղը, որ և ազգիս պանծալի և ազնուագոյն մնացեալ շնորհաց մէկն է։

ՑԱՆԿ

Ա. Նախաբան առ Հայկակ . . 1
Բ. Բնախօսութիւն Հայ. աշխարհի 21
Գ. Հայկայ շրջան 76
Դ. Յանուարի 6 'ի Հայ. . . . 105
Ե. Զապել 120
Զ. Գերեդարձ Գ Լեւոնի 162
Է. Սկիզբն տարուոյ և մարդկութեան 'ի Հայս. 183
Ը. Բագրեւանդայ կռիւն . . . 197
Թ. Ս. Թէոդորոս ՍալՀունի . . 216
Ժ. Կարմիրն Վարդան 239
ԺԱ. Ստեփանոս Սիւնեցի և Սահակդուխտ 270
ԺԲ. Տօնք Նաւասարդի 293
ԺԳ. Ս. Սահակ Պարթեւ . . . 311
ԺԴ. Հոգէփայլ սայլք հայոց . . 333
ԺԵ. Շուշան–Վարդենի 373
ԺԶ. Աշոտ Ա. և Հայաստան հազար տարի առաջ 403
ԺԷ. Արգար գսպիր. հայ տպագրութիւն . 518